



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ
CASSATION COURT
OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄՈՒԹՅՈՒՆ
ASSOCIATION OF JUDGES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ISSN 1829 - 0744

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ



Հրատարակիչներ՝
ՀՀ Վճռաբեկ դատարան,
«Դատական իշխանություն» ամսագրի խմբագրություն

ԴԱՏԱԿԱՆ ԻՃԽԱՆՈՒԹՅՈՒՆ СУДЕБНАЯ ВЛАСТЬ JUDICIAL POWER

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ SCIENTIFIC - METHODOLOGICAL JOURNAL

7-9/313-315 2025
ՀՌԻԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ

Գիտական խմբագրական խորհուրդ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Լիլիթ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ - ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Արման Դիլանյան - ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Համլետ Ասատրյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Հովսեփ Բեդկյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ,

Արթուր Դավթյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Երվանդ Խունդկարյան - ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Սերժիկ Ավետիսյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ելիզավետա Դանիելյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Լիանա Հակոբյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Ռուզաննա Հակոբյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Նորա Կարապետյան - ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Գոռ Թորոսյան - ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Արշակ Վարդանյան - ՀՀ դատավորների միության անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Սերգեյ Առաքելյան - ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Արմեն Հայկյանց - ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Վահե Հովհաննիսյան - ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Բորիս Գավրիլով - ՌԴ ներքին գործերի նախարարության Կառավարման ակադեմիայի հանցագործությունների քննության մարմինների կառավարման ամբիոնի պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, ՌԴ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Անատոլի Կուստով - ՌԴ վաստակավոր իրավաբան, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Գլխավոր խմբագիր՝

ՀՀ վաստակավոր իրավաբան, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վահե Ենգիբարյան**

«Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիրը 2014 թվականից ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրոյթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

Հրատարակվում է

Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ:

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«ՀՀ դատավորների միություն» հասարակական կազմակերպություն Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 <http://www.ajra.am>

«Դատական իշխանություն» Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 Հեռ. 56-99-89

Էլ. հասցե՝ judge@netsys.am ISSI 1829-0744

Հանձնվել է տպագրության՝ 01.10.2025 Ֆորմատը՝ 70x100 1/8 Տպաքանակը՝ 60 Ծավալը՝ 15.875 պայմ. մամուլ Գրանցման վկայական՝ 01Մ000023 Տրված է՝ 07.11.2001 թ.

Տպագրված է «ԲՈՓԻ ՓՐԻՆՐ» ՍՊԸ-ում: ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/
ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА**

Արմեն Հայկյանց, Տարիել Բարսեղյան
Իրավունքի սկզբունքներ. հասկացությունը, համակարգը և գործառույթները 3

Վլադիմիր Հովսեփյան
Ազգային Դատաստանագրքի ստեղծման առաջին փորձը 17

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CIVIL LAW/ГРАЖДАНСКОЕ ПРАВО

Արփինե Հովհաննիսյան, Մարիամ Այվազյան
Վերարտադրման իրավունքի մեկնաբանության առանձնահատկությունները թվային դարաշրջանում26

Մանե Մարկոսյան
Ընդերքօգտագործման հարաբերությունների պայմանագրային կարգավորման առանձնահատկությունները. ընդերքօգտագործման պայմանագիրը՝ որպես քաղաքացիաիրավական պայմանագիր36

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/
ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС**

Մարիամ Մանուկյան
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի հայեցողությունն իր լիազորությունները կիրառելիս (մաս 3)
«ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից նոր փաստ կամ փաստական հանգամանք հաստատելու առանձնահատկություններն ու բովանդակությունը»..... 51

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

Վիրաբ Համբարձումյան
Ձեռքի շրջանառության միջազգային իրավական կարգավորումները մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համատեքստում.....64

Գևորգ Իսրայելյան
Համակարգչային հափշտակության իրավաբանական կազմի օբյեկտիվ հատկանիշների նկարագիրը և քրեաբանական նշանակությունը..... 86

Վարազդատի Սուքիասյան, Ադելինա Սարգսյան
Իրավունքի սկզբունքների կիրառելիությունը միջազգային քրեական դատարանների որոշումներում.....94

Ованес Баяндурян
Правопреемство юридических лиц в уголовном судопроизводстве:
необходимость законодательной регламентации 105

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

Հայկուշ Հարոյան

Համաձայնեցման վարույթի՝ որպէս դատաքննության հատուկ կարգի կիրառման պայմանները ՀՀ քրեական դատավարությունում127

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ/CRIMINALISTICS/КРИМИНАЛИСТИКА

Սուրեն Բաղինյան

Պետական դավաճանության հանցավոր մեխանիզմի տիպային մոդելները 135

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

Սերգեյ Ղազինյան

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց հայտնաբերումը և ուղղորդումը՝ որպէս մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք.....151

Մարտին Մանուկյան

Արևմտաեվրոպական պառլամենտարիզմի զարգացման պրակտիկան (մաս II) 163

ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Վճռաբեկ դատարանի որոշումներ..... 179

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/
ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА

<https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-3>

ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑ
Պրոֆեսոր, իր. գիտ. դոկտոր
ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵԴՅԱՆ
ԵՊՀ ասպիրանտ

ARMEN HAYKYANTS
Professor, Doctor of Legal Sciences
TARIEL BARSEGHYAN
YSU PhD Student

АРМЕН АЙКЯНЦ
Профессор, доктор юридических наук
ТАРИЕЛЬ БАРСЕГЯН
Аспирант ЕГУ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ.
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

PRINCIPLES OF LAW:
CONCEPT, SYSTEM, AND FUNCTIONS

ПРИНЦИПЫ ПРАВА: ПОНЯТИЕ, СИСТЕМА И ФУНКЦИИ

Ներածություն

Իրավունքի սկզբունքները, որպես ինստիտուտ, ուսումնասիրվել են բոլոր ժամանակներում, սակայն դրանց վերաբերյալ յուրաքանչյուր նոր ուսումնասիրություն գիտական նորույթ ունի, քանի որ իրավունքի սկզբունքները բարդ երևույթ են, սերտորեն կապված են ժամանակաշրջանի իրավաընկալումների հետ, արտահայտում են ժամանակաշրջանի արժեհամակարգը, որոնց փոփոխման պայմաններում իրավունքի սկզբունքների նկատմամբ պատկերացումները ևս կրում են համապատասխան փոփոխություններ: Այս համոզմունքով էլ սույն աշխատանքում կփորձենք ուրվագծել սկզբունքների հասկացությունը, համակարգը և ընդգծել գործառույթները:

Հիմնական հետազոտություն

1. Իրավունքի սկզբունքների վերաբերյալ բոլոր գիտական դիտարկումները սկսվում են

դրանց եզրութաբանական վերլուծությամբ:

«Սկզբունք»-ը լատիներենում հայտնի էր «principium» անվամբ, որի ամենավաղ կիրառումը հայտնի էր դեռևս 1500-ականների կեսերին՝ կրոնական տեսաբան Ռոջեր Հաթչինսոնի աշխատանքում: «Principium» եզրույթը Ռոջեր Հաթչինսոնը կիրառել է կրոնի համատեքստում՝ գրելով. «Հայրը principium է, «սկզբունք» կամ «սկիզբ»¹: Ակնհայտ է, որ «սկզբունք»-ն այստեղ դիտարկվում է որպես «սկիզբ», և թեև կիրառվում էր կրոնական խնդիրներից ելնելով, սակայն սկզբունքի ընկալումը որպես սկիզբ, անկասկած, ունի նաև ընդհանուր ճանաչողական և արժեքաբանական նշանակություն:

Զորդան Դացին նշում էր, որ «Սկզբունք բառի լեզվական իմաստը, որպես գոյական, կլինի հիմնական ճշմարտություն. համապարփակ օրենք կամ դոկտրինա, որից բխում են մյուսները, կամ որոնց վրա հիմնված են մյուսները՝ ընդհանուր ճշմարտություն, տարրական առաջարկ, մաքսիմ(առավելագույն), աքսիոմա, պոստուլատ, բարոյական կամ էթիկական չափանիշների հավաքականություն կամ դատողություններ»²:

Անդրադառնալով «սկզբունք»-ի եզրութաբանական մեկնաբանմանը՝ Գ. Դանկվարտը համարում է, որ «սկզբունք» և «հիմք» բառերը նույն երևույթն արտահայտող երկու համարժեք բառեր են: Գ. Դանկվարտի գրում է. ««Սկզբունք» կամ «Հիմք» բառերն ունեն չորս տարբեր նշանակություններ: Առաջին նշանակությամբ՝ դրանք կեցության հիմքերն են կամ, այսպես կոչված, պատճառներ. այսպիսի նշանակություն ունի «հիմք» բառն այն պարագայում, երբ խոսքն անօրգանական բնության փոփոխությունների մասին: Երկրորդ նշանակությամբ՝ դրանք գոյության հիմքերն են, երբ տարածության և ժամանակի մեջ խոսվում է հարաբերությունների մասին: Երրորդը նշանակությամբ՝ ճանաչողության կամ իմացության հիմքերն են, որպիսիք վերաբերում են տրամաբանական հիմնավորումներին և դրանցից բխող եզրահանգումներին: Վերջապես, չորրորդ նշանակությամբ՝ այդպիսիք մարդկային գործողությունների հիմքերն են կամ նպատակները: Այսպիսով՝ առկա են սկզբունքների կամ հիմքերի չորս դրսևորումներ՝ ֆիզիկական, մաթեմատիկական, տրամաբանական և էթիկական³»:

Գ. Դանկվարտը շարունակում է. «Իրավաբանական նորմը կամ վարքագծի կանոնը բխում է մարդկային (ժողովրդի կամ օրենսդրի) կամքից, այսպիսով՝ իրավաբանական նորմը կամ ողջ իրավունքը, որպես իրավաբանական նորմերի ամբողջություն, կարելի է բնութագրել մեկ բառով՝ «գործողություն»: Իրավունքի սկզբունքն այս պարագայում իրավունքի մոտիվացիան է՝ նպատակը, հետևաբար ասել, թե որն է իրավունքի սկզբունքը, նույնն է, թե ասել՝ որն է իրավունքի մոտիվը կամ նպատակը: Այդ նպատակները կամ էգոիստական բնույթ ունեն, կամ բարոյական. վերջիններս կարելի է բնութագրել, որպես «հանրային բարիք» կամ «salus publica»⁴:

Փիլիսոփայության մեջ սկզբունքների ներքո ընդունված է հասկանալ համակարգի հիմքը. այն իրենից ներկայացնում է ընդհանրական հասկացություն, որը տարածվում է ճանաչողության համապատասխան ոլորտի վրա և կառուցում-ամբողջացնում է այդ ոլորտը⁵:

Ս. Ա. Մոսինը գրում է, որ «սկզբունքը ելակետային հիմք է, ուղենիշային գաղափար է, պահանջ է, որը բնութագրվում է ոչ թե վերացականությամբ, այլ այնպիսի համընդհանրականու-

¹ Roger Hutchinson, THE IMAGE OF GOD, Works (1842), Edited by John Bruce, Cambridge: Parker Society, Chapter 28. How there is but one God only: the divinity of Christ, and the all-doing Comforter, notwithstanding this unity.

² Jordan DACI, Legal Principles, Legal Values and Legal Norms: are they the same or different?, European School of Law and Governance, Prishtina, Kosovo, Universum University, Prishtina, Kosovo, էջ 113:

³ Տնն Դ. *Данкварт*, Принципы гражданского права, Москва, 2015, էջ 1:

⁴ Տնն նույն տեղում, էջ 1-2:

⁵ Տնն *Краткая философская энциклопедия*. М. 1994, էջ 363:

թյամբ, որը համապատասխան ոլորտին հաղորդում է մշտականություն և կայունություն: Որևէ երևույթի մոտենալ սկզբունքի դիրքերից, նշանակում է՝ այդ երևույթը դիտել համընդհանուր նշանակության և արժևորման դիրքերից»⁶:

Թեև մոտեցումների բազմազանությանը, բոլոր բնորոշումների մեջ ընդհանուրն այն է, որ սկզբունքները դիտվում են երկու հիմնական ասպեկտներով՝ որպես «սկզբնահիմք» և որպես «էութենական նշանակություն (գլխավորություն)»: Այս երկու ասպեկտներով՝ սկզբունքները դառնում են համակարգաշեն, համակարգաստեղծ երևույթներ:

Սկզբունքները ոչ թե հասկացություններ են, այլ կատեգորիաներ են, այսինքն՝ «հասկացությունների մեկնաբանման հասկացություններ» են:

Վերոնշյալ մոտեցումներով հանդերձ՝ պետք է ասել, որ իրավունքի սկզբունքների հասկացությունը, դրանց էությունը, դասակարգումը և համակարգը ներկայացնելը շատ բարդ է, սակայն դրանով հանդերձ չափազանց արդիական է ժամանակակից իրավագիտության համար:

Դեռևս 20-րդ դարի սկզբին ռուս հայտնի իրավագետ Ն. Ն Ալեքսենը նշում էր. «Չափազանց դժվար է ձևակերպել իրավունքի ընդհանուր սկզբունքները: Դոգմատիկ իրավագիտությունը տրոհվել է մի քանի առանձին, միևնույն ժամանակ բավական ինքնուրույն ոլորտների, որոնք միմյանց հետ կապված չեն ընդհանուր գաղափարներով և միավորված չեն ընդհանուր համակարգով: Յուրաքանչյուր իրավաբանական ոլորտ ունի իր ընդհանուր մասը, իր ընդհանուր դրույթները: Իրավագիտական այդ առանձին ոլորտների տեղային պահանջմունքներն առաջ են բերում տրամաբանական սահմանումների բազմաթվություն, ինչի արդյունքում տուժում է իրավագիտական համակարգայնությունը և միասնականությունը»⁷:

Անդրադառնալով իրավունքի սկզբունքների հասկացությանը՝ ռուս իրավագետ Մ. Ի. Բայտինը նշում է, որ «սկզբունքների հասկացության վերաբերյալ իրավական հայացքները կապված են իրավունքի ընկալման երկու ասպեկտների հետ՝ **լայն և նեղ** (նորմատիվային): **Լայն ասպեկտով**՝ իրավունք ասելով հասկանում ենք ինչպես իրավանորմերը, այնպես էլ իրավական մյուս երևույթները՝ իրավագիտակցություն, իրավահարաբերություններ, սուբյեկտիվ իրավունքներ և իրավաբանական մատերիայի այլ բաղադրիչներ: Այստեղից էլ ձևավորվում է իրավունքի սկզբունքների լայն ընկալումը: **Նեղ ասպեկտով**՝ իրավունք ասելով հասկանում ենք օրենքները և իրավունքի մյուս աղբյուրները: Այս պարագայում իրավագետները համարում են, որ իրավունքի սկզբունքները չեն կարող դուրս գտնվել իրավանորմերից»⁸:

Ռուս իրավագետ Դ. Ա. Սմիրնովը նշում է, որ «կան իրավագետներ, ովքեր սկզբունքների հասկացությունը չեն կապում դրանց պարտադիր օրենսդրական ամրագրման կամ իրավական այլ միջնորդավորումների հետ: Իրավագետների երրորդ խումբը կարծում է, որ իրավունքի սկզբունքները համարվում են իրավաբանական գիտությունների կատեգորիաներ, որոնք սահմանում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտությունը, ձևերն ու եղանակները: Իրավունքի սկզբունքները, համաձայն երրորդ խումբ իրավագետների, ունեն դոկտրինալ բնույթ»⁹: Իրավունքի սկզբունքների դոկտրինալ բնույթի կողմնակիցները համարում են, որ իրավունքի սկզբունքները կրում են բացառապես դոկտրինալ բնույթ և օժտված չեն իմպերատիվությամբ¹⁰:

⁶ Տե՛ս *Мосин А.С.*, Презумпции и принципы в конституционном праве Российской Федерации. М. 2009, էջ 16:

⁷ Տե՛ս *Алексеев Н.Н.*, Общее учение о праве. Симферополь. 1919, էջ 6-11:

⁸ Տե՛ս *Байтин М.И.*, Вопросы общей теории государства и права. Саратов, 2006, էջ106-107:

⁹ Տե՛ս *Смирнов О.В.*, Основные принципы советского трудового права. М. 1997, էջ 13:

¹⁰ Տե՛ս *Юдельсон К.С.*, Советский гражданский процесс. М., 1956. էջ 32; *Морейн И.Б.*, Перевод на другую работу. М., 1965, էջ 14:

Որքան էլ ուշագրավ են դոկտրինալ տեսության թեզիսները, մեր իրավական համակարգում այդպիսիք ընդունելի չեն թեկուզ հենց այն պատճառով, որ ՀՀ Սահմանադրության իրավակարգավորումները ՀՀ ողջ իրավական համակարգի համար ունեն նորմ-սկզբունքների կարգավիճակ, ուղենիշային են, հիմնարար նշանակություն ունեն ճյուղային օրենսդրության կառուցման համար, այդքանով բացառում են սկզբունքների իրավական բնույթի վերաբերյալ դոկտրինալ մոտեցումը, որի բնութագրիչներից մեկն էլ այն էր, որ իրավունքի սկզբունքներն իմպերատիվ բնույթ չունեն: Ավելին, իրավունքի այն ճյուղերը, որոնք թույլ են տալիս իրավունքի անալոգիա կատարել, սահմանում են, որ իրավունքի անալոգիան պետք է իրականացվի իրավունքի տվյալ ճյուղի սկզբունքների վրա. այս պարագայում սկզբունքները չեն կարողանա լրացնել իրավական բացը, եթե օժտված չլինեն իմպերատիվությամբ:

Վերադառնալով լայն ասպեկտով իրավունքի ընկալմանը և այդ շրջանակում սկզբունքների դիտարկմանը՝ մեջբերենք Ռ. Զ. Լիվշիցի տեսակետը, որ «Սկզբունքը ելակետային ուղղորդող հիմքն է: Սկզբունքը նախևառաջ գաղափար է, բայց հենց միայն գաղափար չէ: Սկզբունքները հանգում են ոչ միայն գաղափարին, այլև ներառում են իրավանորմերը, սոցիալական հարաբերությունները, այդ գաղափարները ձեռք են բերում նորմատիվային և իրավակիրառական բովանդակություն»¹¹: Շատ այլ տեսաբաններ, պաշտպանելով Ռ. Զ. Լիվշիցի տեսակետը, կամ լայնացնում, կամ նեղացնում են այն: Օրինակ, Օ. Ե. Սուրկովը նշում է, որ «Իրավունքի սկզբունքներն այն հիմնական գաղափարներն են, որոնք ցույց են տալիս իրավունքի էությունականությունը, նշանակությունը, օրինաչափությունները, զարգացման միտումները, և որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտացոլված են իրավանորմերում կամ իրավակիրառողների գիտակցությունում»¹²: Հետաքրքիր միտում է նկատվում ռուսական իրավագիտության շրջանակներում, երբ իրավունքի սկզբունքները դիտարկվում են որպես գաղափարներ, որոնք զարգացում են ստանում հատկապես նաև դոկտրինալ աշխատանքներում, թեկուզև այդպիսիք դեռևս նորմատիվ-իրավական ամրագրում չեն ստանում: Դա հատկապես ակնհայտ է դառնում մուսուլմանական իրավունքի սկզբունքների մասին խոսելիս: Այսպես, Լ. Ռ. Սյուկիյանեն գրում է. «Մուսուլմանական իրավունքը համարվում է իրավաբանների կողմից ստեղծված իրավունքի հիանալի օրինակ: Իրավունքի գիտությունն է համարվում իրական օրենսդիրը, երբ իրավագետների ստեղծագործած գրքերն են ստանում օրենքի ուժ: Մուսուլմանական իրավունքի սկզբունքները համարվում են մուսուլման իրավագետների աշխատանքի արդյունքը, նրանց գաղափարները: Մուսուլման իրավագետները բազմիցս են նշել, որ մուսուլմանական իրավունքի սկզբունքները սահմանված չեն Ղուրանում (Սուրք գրքում), այդպիսիք են մուսուլման իրավագետների կողմից իրավունքի աղբյուրների մեկնաբանման և կոնկրետ պրակտիկ օրինակների վերլուծության արդյունք»¹³:

Իրավունքի սկզբունքները փոքր-ինչ նեղ դիրքերից են դիտարկվում առանձին իրավագետներ: Ն. Մ. Վագինան կարծում է, որ «իրենց բնույթով՝ սկզբունքները հիմնարար նշանակության գաղափարներ են, որոնք ամրագրված են իրավունքի տարբեր ֆորմալ աղբյուրներում, ինչպես նաև եթե նման ամրագրում չունեն, ապա ընդհանուր կայուն ճանաչում ունեն իրավաբանական պրակտիկայում և իրավահարաբերություններում»¹⁴:

Մեզ արդեն հայտնի՝ իրավունքի լայն ընկալման դեմ տեսակետ է հայտնում Վ. Ն. Կուդրյավցևը՝ նշելով հետևյալը. «Արհեստավարժ իրավաբանին պետք է բնութագրական լի-

¹¹ Տե՛ս *Лившиц Р.З.*, Теория права. М., 1994, էջ 195:

¹² Տե՛ս *Ведяхин В.М., Сурков О.Е.*, Факторы формирования и реализации принципов права. Самара, 2005, էջ 26:

¹³ Տե՛ս *Сюкияйнен Л.Р.*, Мусульманское право. Вопросы теории и практики. М., 1986, էջ 73:

¹⁴ Տե՛ս *Вагина Н.М.*, Принципы публичного права: автореф. Дисс. ... канд.юрид.наук. Казань, 2004, էջ 10:

նի հստակ դիրորոշումն առ այն, որ ոչ մի համոզմունք կամ գաղափար չի կարող դիտարկվել որպես իրավանորմ, եթե այն արտահայտված չէ սահմանված կարգով ընդունված իրավական ակտով»¹⁵: Ի զարգացումն նշված տեսակետի՝ Դ. Ա. Սմիրնովը գրում է. «Լայն մեկնաբանման պարագայում քաղաքակիրթ հանրության առջև ծառայած խնդիրների լուծման համար շատ դժվար է կողմնորոշել իրավապահ և իրավակիրառ մարմիններին, քաղաքացիներին ու հասարակական միավորումներին, քանի որ դա պահանջում է հատուկ իրավական պատրաստություն և իրավաբանական բնույթի գիտելիքներ: Իրավունքի և սկզբունքների լայն ընկալման պարագայում կարող են խախտվել իրավունքի հստակությունը և որոշակիությունը: Իրավունքի և սկզբունքների լայն մեկնաբանումը հասանելի է միայն բարձր իրավագիտակցություն և իրավաբանական կրթություն ունեցող սակավաթիվ շրջանակների: Այս պարագայում նորմատիվ մոտեցումն առավել ընդունելի է համարվում հանրության լայն շրջանակների նվազ իրավագիտակցության և իրավական ոչ խորը գիտելիքների պարագայում»¹⁶:

Իրավունքի նեղ կամ որ նույնն է՝ նորմատիվ ընկալման կողմնակիցների համար իրավունքի սկզբունքների հարցը քննարկելիս չափանիշ է իրավական ակտերում դրանց ամրագրումը: Այս մոտեցման կողմնակիցները կարող են տարբեր սահմանումներ տալ, սակայն բոլորը միակարծիք են մեկ հարցում, որ իրավունքի սկզբունքները պետք է արտացոլվեն նորմատիվ աղբյուրներում, այսինքն՝ ունենան արտահայտման նույն ձևը: Հեղինակների այդ շարքից կարող ենք վկայակոչել Մ. Ի. Բայտինին¹⁷, Ռ. Մ. Ռեուֆին¹⁸, Դ. Ա. Լիպինսկուն¹⁹, Ս. Ս. Ալեքսենին: Հատկապես ուշագրավ է Ս. Ս. Ալեքսենի մոտեցումը, որն իրավունքի սկզբունքը դիտարկում է որպես գաղափար և միևնույն ժամանակ այն հանգեցնում է իրավունքի նորմին. «Գոյություն ունենալով իրավանորմերի տեսքով՝ իրավունքի սկզբունքները բնութագրական են իրավական ողջ մատերիային, իրավական կարգավորման ողջ մեխանիզմին: Այդպիսիք դրսևորվում են և իրավաբանական պրակտիկայում, և իրավագիտակցության մեջ, և իրավակիրառ ակտերում: Սկզբունքները կարող են լինել և իրավանորմեր, և գաղափար-նորմեր, որոնք կարող են դրված լինել իրավանորմերի մի ամբողջ զանգվածի հիմքում: Այդպիսիք անհրաժեշտ է հասկանալ, հայտնաբերել, վեր հանել»²⁰: Ըստ էության, իրավանորմերը և իրավունքի սկզբունքները համընկնում են, հնարավոր չէ հեռանալ նորմատիվությունից, միևնույն ժամանակ չարաշահել փիլիսոփայությունը և գաղափարախոսությունը: Իրավական մատերիայի մյուս ձևերը՝ իրավահարաբերությունները, իրավագիտակցությունը և այլք, չեն կարող բովանդակել իրավունքի սկզբունքներ, այդպիսիք կարող են հանդես գալ միայն իրավանորմերի տեսքով:

Լիովին համամիտ ենք իրավագետների այն շրջանակի հետ, որոնք բերում են մի ամբողջ շարք հիմնավորումներ, թե ինչու պետք է իրավունքի սկզբունքներն արտահայտվեն իրավանորմերի տեսքով, այսինքն՝ կրեն նորմատիվ բնույթ.

- *Իրավունքի սկզբունքները կազմում են կորորդինարային համակարգ, որի շրջանակում գործում է օրենսդիրը՝ վարքագծի կանոններ սահմանելիս: Կորորդինարային այդ համակարգը թույլ է տալիս զերծ մնալ կամայական որոշումներից, իրավական հակասականությունից և անորոշությունից:*

- *Իրավակիրառ շրջանակները կմնան կարգապահության սահմաններում և իրավունքի*

¹⁵ Տե՛ս Կудряцев В.Н., О правопонимании и законности //Государство и право. 1994, No 3, էջ 6:

¹⁶ Տե՛ս Смирнов Д.А., О, понятии принципов права / Общество и право. 2012, No 4, էջ 31:

¹⁷ Տե՛ս Байтин М.И., Сущность права. М., 2005, էջ 148:

¹⁸ Տե՛ս Реуф В.М., Специально-юридические принципы права. Автореф. дис. ... канд.юрид.наук. Волгоград, էջ 7-8:

¹⁹ Տե՛ս Липинский Д.А., Принципы права //Теория государства и права. Отв.ред. А.В. Малько. М., 2006, էջ 127-128:

²⁰ Տե՛ս Алексеев С.С., Государство и право. Начальный курс. М., 1994, էջ 76-77:

անալոգիա կիրառելիս չեն հենվի իրենց սուբյեկտիվիստական տրամադրությունների վրա:

- Արտահայտվելով նորմատիվ ակտերում՝ իրավունքի սկզբունքներն իրենց որոշակիությամբ ավելի արդյունավետորեն կնպաստեն հանրության իրավագիտակցության բարձրացմանը, իրավական կրթությանը և դաստիարակությանը:

- Իրավունքի սկզբունքները կկողմնորոշեն իրակիրառ մարմիններին ճիշտ մեկնաբանել օրենքները և դրանց հիման վրա կատարել հիմնավորված գործողություններ:

- Իրավունքի սկզբունքներ բովանդակող իրավանորմերի ուսումնասիրությունը կարող է նպաստել օրենսդրության մշտական կատարելագործման:

Ամփոփելով իրավունքի սկզբունքների հասկացութային քննարկումները՝ ցանկանում են նշել, որ իրավունքի սկզբունքներն իրավունքի նորմերով ամրագրված հիմնարար պահանջներն են, որոնք համապատասխանում են հանրության բարոյական, քաղաքական, տնտեսական և արժեքաբանական պահանջներին, որպիսիք ուղղորդում են իրավունքի արարման և կիրառման գործընթացները:

Իրավունքի գիտության մեջ կարծիքներ են հնչել, որ բավական չէ, երբ օրենսդրությամբ ամրագրվում է իրավունքի սկզբունքների շրջանակը, հենց իրավունքի սկզբունքի հասկացությունը նախևառաջ պետք է ստանա օրենսդրական ամրագրում, որից հստակ կերևա, թե օրենսդրական որ նորմերն են համարվում սկզբունք-նորմեր, և որոնք որպես այդպիսին չեն հանդիսանում²¹: Սակայն իրավագետների մի ստվար շրջանակ, որոնց հետ համակարծիք ենք նաև մենք, կարծում է, որ իրավունքի սկզբունքի նման բարդ փիլիսոփայական-իրավական կատեգորիան օրենսդրորեն ամրագրելը նպատակահարմար չէ, որ դա կարող է ավելի շատ հարցեր առաջ բերել, քան թե հարցեր կարգավորել²²: Ի վերջո, ընդունենք, որ ոչ միայն կոնկրետ իրավանորմեր կարող են վկայել իրավունքի սկզբունքների մասին, այլև իրավանորմերի մի ողջ զանգված կարող է վկայել դրանց մասին. այս պարագայում ակնդետ անհիմաստ է դառնում իրավունքի սկզբունքի հասկացության օրենսդրական ամրագրումը :

2. Իրավունքի սկզբունքներն իրավունքի արարումը և կիրառումն ուղղորդում են ոչ թե միմյանցից մեկուսի, այլ իրենց ողջ համակարգով՝ ձևավորելով որոշակի կոորդինացիա, որի շրջանակներում գործում են օրենսդրական նորմերը: Իրավունքի սկզբունքները հանդես են գալիս մեկը մյուսի համար և՛ որպես պատճառ, և՛ որպես հետևանք, հանդես են գալիս մեկը մյուսի համար գոյության նախապայման և գործելու խթան: Սա նշանակում է, որ իրավունքի սկզբունքները հանդես են գալիս կուռ համակարգով, որտեղ իրավունքի յուրաքանչյուր սկզբունք արժևորվում է հենց շնորհիվ այն բանի, որ մյուս սկզբունքների հետ միասին գտնվում է մեկ միասնական համակարգի մեջ և այդ համակարգի անքակտելի բաղադրիչն է: Սկզբունքն ինքը հենց համակարգ ձևավորող հիմնադրույթ է, հետևաբար սկզբունքների պարագայում աներկբա է համակարգի ֆենոմենի պարզաբանումը: «Համակարգ»-ը փոխառված է հին հունական «system» բառից, ինչը նշանակում է «ամբողջություն», «մասերից բաղկացած», «ամրակցում»: Փիլիսոփայական ասպեկտով՝ համակարգը նշանակում է «տարրերի ամբողջություն, որոնք կապված են միմյանց հետ և կազմում են մեկ միասնական ամբողջություն, որտեղ տարրերից յուրաքանչյուրը և՛ ինքնավարություն ունի, և՛ միևնույն ժամանակ գտնվում է մյուս տարրերի հետ փոխկապակցման մեջ ու չի կարող գոյություն ունենալ առանց վերջինների»²³: Համակարգերի բաղադրիչ տարրերը միասին գեներացնում են այնպիսի ին-

²¹ Տե՛ս *Мартынчик Е.Г., Маржинян Ю.И.*, Принципы уголовного процесса и правосудия: эволюция понятия, соотношение и совершенствование законодательных регламентаций //Российский судья. 2001. No 2, էջ 30:

²² Տե՛ս *Проценко В.П.*, Принципы уголовного процесса и критерии их систематизации. Краснодар. 2006, էջ 18:

²³ Տե՛ս *Философский энциклопедический словарь / гл.ред. Л.Ф. Ильичев, П.Н. Федосеев, С.М. Ковалев, В.Г. Панов.*

տեգրացիոն հատկանիշներ, որպիսիք չի կարող գեներացնել այդ տարրերից յուրաքանչյուրն առանձին վերցրած: Այստեղ տեղին է հիշատակել Արիստոտելի հայտնի ձևակերպումը, որ «Ամբողջն ավելին է, քան նրա տարրերի պարզ գումարը»²⁴: Իրավունքի յուրաքանչյուր կոնկրետ սկզբունքի իրավական դերի և նշանակության մասին խոսելիս չենք կարող այդպիսիք չդիտարկել մյուս սկզբունքների հետ ինտեգրացիոն ակտիվ կապերի տիրույթում: Համակարգային մոտեցման պարագայում շեշտը դրվում է նրա ոչ թե կոնկրետ տարրերի վրա, այլ այդ տարրերի փոխադարձ կապերի և առնչությունների վրա՝ ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական ուղղություններով: Իրավունքի սկզբունքների համակարգը, սակայն, չի կարելի պատկերացնել քարացած կամ ստատիկ՝ անշարժ վիճակում: Այդ համակարգը փոփոխությունների և զարգացումների անվերջ դինամիկայի մեջ է գտնվում, ինչը հնարավոր է միայն այն դեպքում, երբ համակարգն ունի համապատասխան կառուցվածք: Փիլիսոփայական ասպեկտով՝ «կառուցվածք (structura)» նշանակում է՝ կարգ, դիրք, դասավորվածություն: Յուրաքանչյուր համակարգի համապատասխան կառուցվածքից է կախված տվյալ համակարգի կայունությունը, ամբողջականությունը, կենսունակությունը: Կառուցվածքի շնորհիվ է, որ բարդ կազմավորումներն ունակ են դառնում վերածվելու համակարգի և պահպանելու իրենց համակարգային հատկանիշները²⁵: Իհարկե, համակարգի համեմատությամբ՝ կառուցվածքն ունի կարևոր, սակայն երկրորդական նշանակություն: Համակարգի հետապնդած խնդիրներն են պայմանավորում կառուցվածքային ձևավորումը, և ոչ թե հակառակը:

Համակարգային մոտեցում ցուցաբերելով իրավունքին՝ պետք է ասել, որ այն իրենից ներկայացնում է «բուրգ», որը բաղկացած է կառուցվածքային նորմերից, որոնք համախմբված են իրավունքի առանձին ինստիտուտներում, որոնք ձևավորում են իրավունքի ճյուղեր, իսկ վերջիններս էլ առավել մասշտաբային ինքնավար կազմավորումներ, և որոնք էլ ամբողջացնում են պետության միասնական իրավական համակարգը²⁶:

Իրավունքի սկզբունքների համակարգն ունի բազում տարեր, ասել է թե՛ բազում սկզբունքներ, որոնք միմյանց հանդեպ ունեն որոշակի հարաբերակցություն, և դա պայմանավորված է իրենց և բովանդակությամբ, և համընդհանրության աստիճանով:

Իրավունքի սկզբունքների բազմազանությունն առաջ է բերում դրանց որոշակի դասակարգման անհրաժեշտություն: Ընդ որում, իրավունքի գիտության մեջ առաջարկվում են դասակարգման ամենատարբեր չափանիշներ: Ս. Ս. Ալեքսենը տարբերում էր ընդհանուր-սոցիալական և հատուկ-իրավաբանական բնույթի իրավունքի սկզբունքներ²⁷: Վ. Ն. Կարտաշովն առաջարկում էր իրավունքի սկզբունքները դասակարգել ըստ հասարակական կյանքի ոլորտների և այդ հիմքով տարբերում էր իրավունքի սկզբունքներ, որոնք կարգավորում էին տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ հարաբերությունները²⁸:

Դ. Ա. Սմիրնովը, քննարկելով իրավունքի սկզբունքների տեսակները, գալիս է այն համոզման, որ թեև իրավունքի տարբեր ճյուղեր ունեն իրենց ներհատուկ ճյուղային սկզբունքները, սակայն ճյուղային սկզբունքներից մեկը կամ մի քանիսը կարող են ընդհանրական լինել և վերաբերելի լինել նաև իրավունքի մյուս ճյուղերին: Դա նշանակում է, որ կան իրավունքի ընդհանուր սկզբունքներ և իրավունքի հատուկ սկզբունքներ: Երբ ճյուղային օրենսդրությամբ

Մ., 1983, էջ 427:

²⁴ https://lib.ru/POEEAST/ARISTOTEL/metaphiz.txt_with-big-pictures.html

²⁵ Տե՛ս *Аверьянов А.И.*, Системное познание мира. М., 1985, էջ 51:

²⁶ Տե՛ս *Явич Л.С.*, Общая теория права. Л., 1967, էջ 126:

²⁷ Տե՛ս *Алексеев С.С.*, Общая теория права. 2008, էջ 76:

²⁸ Տե՛ս *Карташов В.Н.*, Теория правовой системы общества. М., 2018, էջ 88:

նախատեսված իրավունքի սկզբունքը վերաբերելի է իրավունքի մի քանի ոլորտների, անկախ ճյուղային օրենսդրական ամրագրումից՝ իրավունքի տվյալ սկզբունքը պետք է համարել իրավունքի ընդհանուր սկզբունք²⁹:

Իրավունքի սկզբունքների հաջորդ դասակարգման համար հիմք կարող է դիտարկվել այն աղբյուրը, որով այդպիսիք ամրագրվում և ներկայացվում են հանրությանը: Իրավունքի սկզբունքները կարող են ամրագրվել նորմատիվ-իրավական ակտերով, պաշտոնական բնույթ կրող պարզաբանումներով, մեթոդական բնույթի ուղեցույցներով, իրավագիտական (դոկտրինալ) մեկնաբանություններով և այլն: Այստեղ ողջ խնդիրն իրավունքի սկզբունքների հեղինակության մեջ է, թե նմանատիպ աղբյուրներում արտացոլված սկզբունքներն ինչպես կհարաբերեն միմյանց՝ ելնելով այն աղբյուրից, որով ամրագրված են: Կասկածից վեր է, որ այստեղ կարող է սկզբունքների միջև մրցակցություն սկսվել, նույնիսկ բախումներ (կոլիզիաներ) կարող են առաջ գալ:

Մեր գնահատմամբ՝ սկզբունքները չեն կարող լինել միմյանց հակոտնյա, այդպիսիք միշտ լրացնում և ամբողջացնում են միմյանց, սկզբունքներն իրենց էությամբ՝ ընդհանրական գաղափարներ են, որոնք միշտ հարաբերվում են նմանատիպ ընդհանրական գաղափարների հետ: Նույնիսկ երբ սկզբունքներից մեկն ավելի լայն ընդհանրություն ունի, քան մյուսը, այդպիսիք կարող են դիտարկվել ընդհանուր և հատուկ սկզբունքներ, որոնք միմյանց հանդեպ միշտ փոխլրացնող են, ոչ թե փոխբացառող:

Վ. Ն. Կարտաշովն առանձնացնում է իրավունքի երեք խումբ սկզբունքներ՝ **պոզիտիվ իրավունքի սկզբունքներ, գործնական-կիրառական բնույթի սկզբունքներ և դոկտրինալ սկզբունքներ**³⁰: Նա նշում է, որ պոզիտիվ իրավունքի սկզբունքները ելակետային նորմատիվ-իրավական պահանջներն են (իմպերատիվ և ենթաիմպերատիվ բնույթի), որոնք նշանակալի չափով ունեն հիմնայնություն, կայունություն և ամրագրված են նորմատիվ իրավական ակտերով և իրավունքի այլ ձևերով: Գործնական-կիրառական սկզբունքները ծագում են պրակտիկ գործունեության ընթացքում՝ իրավաբանական հիմնարար նշանակության հարցերով: Վ. Ն. Կարտաշովը նման բնույթի սկզբունքներից նշում է համակարգայնությունը, իրավական կայունությունը, իրավանորմերի միասնական ընկալումը և պարզաբանումը և այլն³¹:

Նույն հեղինակը դոկտրինալ սկզբունքների ներքո հասկանում է այն ելակետային իրավաբանական գաղափարները, որոնք առաջ են քաշվել և ձևակերպվել իրավաբան-գիտնականների կողմից, որ այդ գաղափարները կազմում են իրավագիտակցության մասը, հանդիսանում են հիմնավոր ուղենիշեր և փաստարկներ իրավաստեղծ, իրավակիրառ, իրավահամակարգիչ, իրավամեկնաբանողական գործունեության համար³²:

Առանձին հեղինակներ դիտարկում են այսպես կոչված՝ սուբորդինացիոն (ուղղահայաց) և կոորդինացիոն (հորիզոնական) սկզբունքներ: Համարում են, որ իրավունքի սկզբունքների միջև սուբորդինացիոն հարաբերություններն ունեն բովանդակային բնույթ: Համարվում է, որ սկզբունքներն ունեն բովանդակային տարբեր ծավալներ, ունեն հասարակական հարաբերությունների նկատմամբ կիրառության տարբեր աշխարհագրություն, որոշ սկզբունքներ կարող են վերաբերելի լինել գրեթե բոլոր ոլորտներին, իսկ որոշ սկզբունքներ էլ կարող են լի-

²⁹ Տե՛ս *Смирнов Д.А.*, Принципы российского налогового права: понятие, формирование, реализация. М., 2011, էջ 50:

³⁰ Տե՛ս *Карташов В.Н.*, Принципы прав: понятие, структура, функции. Юридические записки Ярославского госуниверситета им. П.Г. Демидова. Выпуск No 10, 2006, էջ 3:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 3:

³² Տե՛ս նույն տեղում, էջ 4:

նել ավելի կոնկրետ, վերաբերելի լինեն մեկ կամ մի քանի դեպքերի: Այս առավել ընդհանրական սկզբունքները դիտարկվում են հիերարխիկ ավելի բարձր դիրքում, քան բովանդակային առավել նեղ ծավալ ունեցող սկզբունքները: Օրինակ, արդարության սկզբունքը բնութագրական է բոլոր ոլորտներին, քանզի դա հենց իրավունքի էությունն ամենուրեք, իսկ հավասարության սկզբունքն ունի կոնկրետ դրսևորումներ՝ սեռերի հավասարություն, ազգերի հավասարություն, ռասայական հավասարություն, կրոնական հավասարություն և այլն: Նշված երկու սկզբունքները միմյանց հանդեպ գտնվում են սուբորդինացիոն հարթությունում:

Կորդդինացիոն (հորիզոնական) սկզբունքների տարբերակման հարցում չափանիշներն պարզ չեն, առաջ է գալիս մեթոդոլոգիական կոնֆլիկտ, թե ինչպես պետք է հարաբերեն իրավունքի սկզբունքները, որոնք բովանդակային ծավալով միմյանց չեն զիջում: Այս խնդիրը քիչ է ուսումնասիրված իրավունքի գիտության մեջ: Կարծես՝ այս կամ այն հորիզոնական սկզբունքին տրվող նախապատվությունը կախված է լինելու գործի կոնկրետ հանգամանքներից, ճյուղային օրենսդրության նպատակներից և խնդիրներից: Որպես իրավունքի հորիզոնական սկզբունքների օրինակներ կարող են լինել քաղաքացիական դատավարությունում բանավոր կամ գրավոր ընթացակարգերով գործի քննության սկզբունքները, դատավարության դիսպոզիտիվության և դատավորի դատավարական ակտիվության սկզբունքները: Նման օրինակներ կարող են լինել նաև քաղաքացիական իրավունքում պայմանագրի ազատության և կամքի ինքնավարության սկզբունքները, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման և մասնավոր գործերին միջամտելու անթույլատրելիության սկզբունքները:

Իրավունքի սկզբունքների համակարգը չի կարող սահմանափակվել միայն նշված դասակարգումներով: Դասակարգումը և դասակարգման հիմքեր առանձնացնելը գիտական-տրամաբանական գործընթաց է, որը կարող է իրավունքի գիտության զարգացմանը զուգընթաց նորանոր մոտեցումներ առաջարկել:

3. Իրավունքի սկզբունքների վերաբերյալ մեր դիտարկումները կեզրափակենք իրավունքի սկզբունքների գործառույթների շուրջ վերլուծությամբ:

Սկզբունքների գործառույթները ցույց են տալիս, թե ինչին են ծառայում սկզբունքները, և այդ գործառույթները բխում են հենց սկզբունքների սոցիալական և իրավաբանական բնույթից: Այդ բնույթից ելնելով էլ մենք սկզբունքների գործառույթները բաժանում են երկու խմբի՝ **սոցիալական և իրավաբանական:**

Սկզբունքների սոցիալական գործառույթները մեզ տպավորություն են հաղորդում իրավունքի բնույթի և բովանդակության վերաբերյալ, թե ինչպիսի արժեքներ և գաղափարներ են դրված իրավունքի հիմքում: Հակիրճ ներկայացնենք իրավունքի սկզբունքների սոցիալական գործառույթներից առավել նշանակալի դրսևորումները:

Սոցիալական ուղղվածություն ունի իրավունքի սկզբունքների ճանաչողական գործառույթը: Այս գործառույթն առավել, քան որևէ այլ իրավական երևույթ, կարող է լիարժեք և ամբողջական պատկերացում հաղորդել իրավունքի բնույթի և բովանդակության մասին: Համարվում է, որ սկզբունքները յուրօրինակ իրավական կատեգորիաներ, որոնց պրիզմայով են անցնում իրավունքի պատմական և արժեքաբանական, համակարգային ու կառուցվածքային զարգացումները. իրավունքի զարգացումը հենց սկզբունքների զարգացում է, և ճանաչելով սկզբունքների էությունը, այդքանով մեզ համար պարզ է դառնում հենց իրավունքի էությունը³³: Իրավունքի էությունը կարող է բացահայտվել հսկայական քանակի իրավանորմեր ու-

³³ Տե՛ս *Դավիժ Ք.*, Основные правовые системы современности. М. Прогресс. 1967, էջ 154-163, 181-192, 313-319, 342-343:

սումնասիրելով և ճանաչելով, սակայն մեկ սկզբունքի ուսումնասիրումը և ճանաչումն արդեն իսկ փոխարինում է այդ իրավանորմերի բազմաքանակ զանգվածին: Երբ մենք ցանկանում են հենց սկզբից ճանաչել իրավունքի, նրա առանձին ճյուղերի կամ ինստիտուտների բնույթը կոնցեպտուալ մակարդակով, բավական է ճանաչենք դրանց հիմքում դրված իրավունքի սկզբունքները: Գերմանացի հայտնի իրավագետ Բ. Ֆ. Վինդշեյդը հստակ նշում էր. «Իրավունքի սկզբունքները ցույց են տալիս իրավունքի էությունը»³⁴: Դ.Ա.Կովալևն ավելացնում է. «Իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են իրավունքի էությունը և բխում են արդարության և ազատության գաղափարներից»³⁵: Սկզբունքները ճանաչելով՝ մենք ձեռք ենք բերում իրավունքի և նրա առանձին ոլորտների նկատմամբ կայուն և հարաբերականորեն անփոփոխ պատկերացումներ, քանի որ առանձին նորմեր կարող են փոփոխվել, սակայն իրավունքի սկզբունքներն անփոփոխ են: Միայն դարակազմիկ, արմատական հասարակական-տնտեսական փոփոխությունները կարող են հանգեցնել իրավունքի սկզբունքների փոփոխության, սակայն նման փոփոխություններ տեղի են ունենում հազարամյակների կամ մի քանի հարյուրամյակների կտրվածքով:

Սոցիալական ուղղվածություն ունի իրավունքի սկզբունքների արժեքաբանական գործառույթը: Հայտնի է, որ սկզբունքներն ունեն արժեքաբանական (աքսիոլոգիական) բնույթ, հանդիսանում են հասարակության բարոյական արժեքների կրողներ: Սկզբունքների հիմքում դրված սոցիալական արժեքներն ուժեղագույն խթանիչ են հենց այդ սկզբունքների իրացման համար: Սակայն պետք է ասել, որ սոցիալական արժեքներն այն աստիճան միասնական համակարգ չեն կազմում և ունիվերսալ չեն, որքան սկզբունքներն են, որոնք կրում են հենց նույն այդ արժեքները: Այսինքն՝ սկզբունքները հանդիսանում են հանրության արժեքների լավագույն «տանող հրթիռները», որոնք սոցիալ-բարոյական արժեքներն իրավանորմերի միջոցով կարողանում են տեղ հասցնել և սոցիալական օղակներին իրավական մեթոդներով պարտադրել դրանց կատարման: Սկզբունքների արժեքաբանական գործառույթն իր մեջ նաև որոշակի գաղափարական բաղադրիչ ունի, որի միջոցով կարողանում է ծրագրավորել օրենսդրին, արդարացնել վարքագծի կանոնների սահմանումը և ապահովում է հանրային ինտեգրումը միասնական կանոնների շուրջ: Սկզբունքներն իրենց արժեքաբանական գործառույթով հիմնականում ուղղորդում են օրենսդրին, սակայն քիչ չեն նաև դեպքերը, երբ այդ գործառույթն ուղղորդում է նաև արդարադատական համակարգին, որն իր որոշումները կառուցում է սկզբունքներով ամրագրված արժեքների հաշվառմամբ: Մասնավորապես, նմանատիպ արժեքներ կարող են հանդիսանալ օրենքի արդարությունը և կանխատեսելիությունը, որոնք միասին ապահովում են իրավունքի և օրենքի լավագույն ներդաշնակությունը:

Սոցիալական ուղղվածություն իրավունքի սկզբունքների համակարգային գործառույթը: Սկզբունքներն իրենց էությամբ հենց համակարգային-ինտեգրացիոն կատեգորիաներ են, որոնք իրավանորմերը կառուցում են որոշակի տրամաբանությամբ, որոշակի հաջորդականությամբ, որոշակի գաղափարի կամ արժեքի շուրջ: Կարելի է վստահորեն ասել, որ համակարգային գործառույթն ուղղակիորեն հենվում է նախորդ երկու՝ ճանաչողական և արժեքաբանական գործառույթների վրա: Իրավունքի սկզբունքները համակարգային գործառույթով ինտեգրում են ոչ միայն ներպետական, այլև օտարերկրյա և միջազգային իրավունքի նորմերը, հանդես են գալիս տարբեր իրավական համակարգերի միջև որպես յուրօրինակ կամուրջ-

³⁴ См *Виндшейд С.В.*, Учебник пандектного права. Том 1, Общая часть. /перевод с немецкого, под ред. С.В.Пахмана/. Изд. А. Гиероглифова и И.Никифорова. С-Петербург. 1874, էջ 54:

³⁵ См *Захаров А.Л.*, Принципы права: коллективная монография. – Самара, 2010.

ներ³⁶: Օրինակ՝ արդարության, հավասարության սկզբունքները միավորում և միասնականացնում են տարբեր երկրների իրավական համակարգերն այն բանի շնորհիվ, որ տարբեր երկրների իրավական համակարգեր նախատեսում են այդ սկզբունքներին համապատասխան վարքագծի կանոններ, և արդյունքում ստացվում է, որ տարբեր իրավական համակարգեր հայտնվում են «միևնույն կլոր սեղանի շուրջ»: Համակարգային գործառույթով՝ իրավունքի սկզբունքներն ապահովում են «իրավունքի իրավահաջորդությունը», երբ օրենսդրական փոփոխությունների պարագայում որքան էլ փոփոխվում են կոնկրետ իրավանորմերը, նրանք շարունակում են մնալ միևնույն համակարգայնության շրջանակներում, միևնույն արժեքների ծիրում:

Սոցիալական ուղղվածություն ունի իրավունքի սկզբունքների մեկնաբանման գործառույթը: Միանգամից նշենք, որ իրավունքի սկզբունքների այս գործառույթը կիրառվում է գործնական-կիրառական գործունեության, այլ ոչ թե օրենսդիր գործունեության շրջանակներում: Այս գործառույթն իր մեջ, սակայն, ունի «օրենսդիր պոտենցիա», դա տեղի է ունենում ստեղծագործական մոտեցման շնորհիվ, երբ իրավակիրառողը, ելնելով սկզբունքով ամրագրված սոցիալ-բարոյական արժեքի էությունից, իրավանորմը մեկնաբանում է այնպես, որ լրացնում է օրենսդրական չկարգավորման կամ ոչ լրիվ կարգավորման բացը՝ այդքանով «հրամցնելով» վարքագծի քվազիկանոն: Ստատուտային իրավական համակարգի երկրներում, որտեղ իրավունքի աղբյուրը միայն և բացառապես ստատուտն (օրենքն) է, իրավակիրառողը չի կարող մեկնաբանման արդյունքում բոլորովին նոր նորմ սահմանել, սակայն ելնելով իրավունքի սկզբունքներում ամրագրված արժեքներից՝ գեներացվում է «միևնույն մատերիայի» նորմ, որը գնահատվում է որպես գործող «նորմի շարունակություն»: Բնականաբար կարևորը հասարակական հարաբերությունների արդյունավետ իրավական կարգավորումն է, որը կարելի է ապահովել մեկնաբանման գործառույթի շրջանակներում՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի իրավական գնահատական կտանք նոր ծնված վարքագծային կանոնին:

Իրավունքի սկզբունքների՝ իրավաբանական ուղղվածություն ունեցող գործառույթներին մենք անվանում են նորմատիվ գործառույթներ, որոնք բացահայտում են սկզբունքների իրավաբանական դերը, իսկ այդ դերը կայանում է սկզբունքների **կարգավորիչ և պահպանիչ** դերակատարումներով:

Չկա իրավունքի գործողության որևէ ոլորտ, որտեղ իրավունքի սկզբունքները դերակատարում չունենան: Իրավունքի սկզբունքները գործում են ինչպես ինքնուրույն, այնպես էլ տարբեր իրավանորմերի զուգակցությամբ: Հատկապես վերջին պարագայում իրավունքի սկզբունքներն անփոխարինելի դեր են խաղում տարբեր իրավանորմերի միջև հակասությունները և տարընկալումները հարթելու ուղղությամբ: Իսկ երբ ընդհանրապես բացակայում են իրավանորմեր, որոնց զուգակցությամբ՝ իրավունքի սկզբունքները կարող են կարգավորել հասարակական հարաբերությունները, ապա իրավունքի սկզբունքներն իրենք են նախաձեռնությունը վերցնում իրենց ձեռքը և կարգավորում հասարակական հարաբերությունները: Եվ դա հնարավոր է միայն, երբ իրավունքի սկզբունքներն ունեն նորմատիվ բնույթ:

Իրավունքի սկզբունքների նորմատիվ գործառույթների մասին է վկայում այն, որ իրավունքի սկզբունքներն ուղղորդում են իրավական կարգավորման գործընթացները և այդպիսիք դնում որոշակի շրջանակների մեջ: Այս պարագայում՝ իրավունքի սկզբունքներն օրենսդիր և այլ պետական մարմինների համար հանդես են գալիս որպես ուղեցույց, կարմիր թել, որով

³⁶ Տե՛ս Jakob A., Re-defining Principles as «Important Rules». A Critique of Robert Alexy//On the Nature of Legal Principles, էջ 157:

վերջիններս պետք է առաջնորդվեն վարքագծի կանոններ սահմանելիս: Դա նշանակում է, որ իրավունքի սկզբունքները նաև պետական մարմինների իրավասության շրջանակներ են սահմանում: Նորմատիվ գործառույթի իրականացման համար իրավունքի սկզբունքներն ունեն բարձր մակարդակի վերացականություն և ճկունություն, բայց այդ՝ հատկություններն իրավունքի սկզբունքները դարձնում են հարաբերական, այլ ոչ թե բացարձակ: Յուրաքանչյուր կոնկրետ կիրառման պարագայում իրավունքի սկզբունքների հիման վրա վարքագծի կանոններ սահմանելու ձգտումներում օրենսդիրը և պետական մյուս մարմինները ելնում են հանրության և պետության առջև ծառայած նպատակներից: Եվ իրավունքի սկզբունքների ճկունությունը թույլ է տալիս «այդ նպատակը տեղավորել» իրավունքի սկզբունքի վերացականության մեջ: Հաջորդ պահին երբ փոխվում են հանրության և պետության նպատակները, այդպիսիք ևս տեղավորվում են մեզ հայտնի վերացականության մեջ:

Եզրակացություն

Իրավունքի սկզբունքների վերացականությունը և ճկունությունը թույլ են տալիս հաղթահարելու նաև իրավունքի սկզբունքների միջև ծագող հակադրությունները, և թե դրանցից որին կտրվի նախապատվությունը, կրկին պայմանավորված է տվյալ շրջափուլում հանրության և պետության առջև ծառայած խնդիրներից: Օրինակ, երբ պետության և հանրության շահերը պահանջում են գնալ ազգայնացման, և առաջ է գալիս հակադրություն սեփականության անձեռնմխելիության և պետական ու հանրային անվտանգության ապահովման սկզբունքների միջև (տես՝ ՀՀ քաղ.օր. 3-րդ հոդված), ապա պետությունը կարող է նախապատվությունը տալ պետական և հանրային անվտանգության ապահովման սկզբունքին, որովհետև հենց դա է պահանջում հետապնդած գերնպատակը: Կամ՝ երբ հակադրվում են խոսքի ազատության և դավանանքի ու կրոնական հանգումունքների ազատության սկզբունքները, պետությունն իր որդեգրած քաղաքականության նպատակներից ելնելով՝ կարող է նախապատվությունը տալ կամ առաջին, կամ երկրորդ սկզբունքին:

Հատուկ ցանկանում ենք նաև շեշտել, որ իրավունքի սկզբունքների նորմատիվ գործառույթն իր ողջ կարողությամբ գործում է ոչ միայն վարքագծի կանոններ սահմանելիս՝ իրավաստեղծ գործունեության շրջանակներում, այլև հենց այդ վարքագծի կանոնները կիրառելիս՝ իրավակիրառ գործունեության շրջանակներում:

Ամփոփելով իրավունքի սկզբունքների հասկացության, համակարգի և գործառույթների վերաբերյալ մեր դիտարկումները՝ ցանկանում ենք նշել, որ այդպիսիք իրենց նկարագիրը պահպանում են հասարակական հարաբերությունների ճյուղային կամ ոլորտային իրավական կարգավորումներում, թեև առանձին ոլորտներ հանդես են բերում իրենց բնութագրական առանձնահատկությունները: Իրավունքի սկզբունքների համակարգի և գործառույթների ոլորտային առանձնահատկություններին կանդրադառնանք մեր հետագա ուսումնասիրություններում և հրապարակումներում:

Ամփոփագիր: Գիտական հոդվածում նպատակ է դրվել բազմակողմանիորեն վերլուծել իրավունքի սկզբունքների տեսական-մեթոդաբանական հիմքերը, դրանց համակարգային բնույթը և գործառույթային նշանակությունը իրավունքի ներքին կառուցվածքում: Իրավունքի սկզբունքը դիտարկվել է ոչ միայն որպես նորմատիվ ուղղորդող գաղափար, այլ նաև որպես իրավական մշակույթի արժեքաբանական արտահայտություն:

Հոդվածում իրավունքի սկզբունքները ներկայացվում են որպես ինքնուրույն իրավաբանական երևույթ-

ներ, որոնք ձևավորում են նորմատիվ կառուցվածքի հիմքը և նպաստում են իրավական որոշակիության, կանխատեսելիության և իրավական քաղաքականության համակարգայնացմանը: Համահեղինակներն առանձնացնում են իրավունքի սկզբունքների կարգավորիչ և պահպանիչ գործառնությունները, վերլուծում դրանց դերը՝ ինչպես իրավունքի ստեղծման և կիրառման գործընթացներում, այնպես էլ՝ իրավունքի հանրային և մասնավոր ճյուղերում:

Հոդվածում առկա է նաև վերլուծություն՝ բացահայտելու համար սկզբունքների համընդհանուր բնույթը և իրավակարգավորման ազգային առանձնահատկությունները:

Annotation. This scientific article aims to conduct a comprehensive analysis of the theoretical and methodological foundations of legal principles, their systemic nature, and functional significance within the structure of law. The principle of law is examined not only as a normative guiding idea but also as an axiological expression of legal culture.

The article presents legal principles as autonomous legal phenomena that constitute the foundation of the normative structure and contribute to legal certainty, predictability, and the systematization of legal policy. The co-authors highlight the regulatory and protective functions of legal principles, analyzing their role both in the processes of law-making and law enforcement, as well as within the domains of public and private law.

A comparative analysis is also provided to identify the universal nature of legal principles and their role in the context of national legal regulation.

Аннотация. Настоящая научная статья ставит своей целью провести всесторонний анализ теоретико-методологических оснований принципов права, их системного характера и функционального значения в структуре права. Принцип права рассматривается не только как нормативно-руководящая идея, но и как аксиологическое выражение правовой культуры.

В статье принципы права представлены как самостоятельные юридические явления, формирующие основу нормативной структуры и способствующие правовой определённости, предсказуемости и систематизации правовой политики. Авторы акцентируют внимание на регулятивной и охранительной функциях принципов права, анализируя их значение как в процессе правотворчества и правоприменения, так и в рамках публичного и частного права.

Также представлено сравнительное исследование с целью выявления универсального характера принципов права и их роли в контексте особенностей национального правового регулирования.

Բանալի բառեր – իրավունքի սկզբունք, գործառնություն, համակարգ, արժեքաբանական, նորմատիվ, դրոշմաբանական, հասկացություն, կարգավորիչ, պահպանիչ, սոցիալական, հանրային, բաղադրիչ:

Keywords: principle of law, function, system, axiological, normative, doctrinal, concept, regulatory, protective, social, public, component.

Ключевые слова: принцип права, функция, система, ценностный, нормативный, доктринальный, понятие, регулятор, охранительный, социальный, общественный, компонент.

Օգտագործված գրականության ցանկ

1. Аверьянов А.И., Системное познание мира. М., 1985.
2. Алексеев Н.Н., Общее учение о праве. Симферополь. 1919.
3. Алексеев С.С., Государство и право. Начальный курс. М., 1994.
4. Алексеев С.С., Общая теория права. 2008.
5. Байтин М.И., Вопросы общей теории государства и права. Саратов 2006.

6. Байтин М.И., Сущность права. М., 2005.
7. Вагина Н.М., Принципы публичного права: автореф. Дисс. ... канд.юрид.наук. Казань. 2004.
8. Виндшейд, Учебник пандектного права. Том 1, Общая часть. /перевод с немецкого, под ред. С.В.Пахмана/. Изд. А.Гиероглифова и И.Никифорова. С-Петербург. 1874.
9. Данкварт Г., Принципы гражданского права, Москва, 2015.
10. Давид Р., Основные правовые системы современности. М., Прогресс. 1967.
11. Захаров А.Л., Принципы права: коллективная монография. – Самара, 2010.
12. Карташов В.Н., Принципы прав: понятие, структура, функции. Юридические записки Ярославского госуниверситета им. П.Г. Демидова. Выпуск No 10. 2006.
13. Карташов В.Н., Теория правовой системы общества. М., 2018.
14. Краткая философская энциклопедия. М., 1994.
15. Кудрявцев В.Н., О правопонимании и законности //Государство и право. 1994. No 3.
16. Липинский Д.А., Принципы права //Теория государства и права. Отв.ред. А.В.Малько. М., 2006.
17. Мартынич Е.Г., Маржинян Ю.И. Принципы уголовного процесса и правосудия: эволюция понятия, соотношение и совершенствование законодательных регламентаций //Российский судья. 2001. No 2.
18. Мосин А.С., Презумпции и принципы в конституционном праве Российской Федерации. М., 2009.
19. Проценко В.П., Принципы уголовного процесса и критерии их систематизации. Краснодар. 2006.
20. Реуф В.М. Специально-юридические принципы права. Автореф. Дис. ... канд.юрид.наук. Волгоград.
21. Смирнов Д. А., О, понятии принципов права / Общество и право. 2012. No 4.
22. Смирнов Д.А., Принципы российского налогового права: понятие, формирование, реализация. М., 2011.
23. Смирнов О.В., Основные принципы советского трудового права. М., 1999.
24. Сюкияйнен Л.Р., Мусульманское право. Вопросы теории и практики. М., 1986.
25. Философский энциклопедический словарь / гл.ред. Л.Ф Ильичев, П.Н.Федосеев, С.М. Ковалев, В.Г. Панов. М., 1983.
26. Юдельсон К.С., Советский гражданский процесс. М. 1956. էջ 32; Морейн И.Б. Перевод на другую работу. М., 1965.
27. Явич Л.С., Общая теория права. Л., 1967.
28. Jakob A., Re-defining Principles as «Important Rules». A Critique of Robert Alexy//On the Nature of Legal Principles.
29. Jordan DACI, Legal Principles, Legal Values and Legal Norms:are they the same or different?, European School of Law and Governance, Prishtina, Kosovo, Universum University, Prishtina, Kosovo, էջ 113:
30. Roger Hutchinson, THE IMAGE OF GOD, Works (1842), Edited by John Bruce, Cambridge: Parker Society, Chapter 28. How there is but one God only: the divinity of Christ, and the all-doing Comforter, notwithstanding this unity.
31. https://lib.ru/POEEAST/ARISTOTEL/metaphiz.txt_with-big-pictures.html

Հայկյանց Ա. - պրոֆեսոր, իր. գիտ. դոկտոր, էլիասցե՝ haykyants@yahoo.com:

Բարսեղյան Տ. - ԵՊՀ ասպիրանտ, էլիասցե՝ tarielbarseghyan3@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 18.07.2025 թ., տրվել է գրախոսության 18.07.2025 թ., երաշխավորվել է ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ողջենտ, իր. գիտ. թեկնածու Շ. Ղուկասյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2025 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-17>

ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ
*Գիտությունների ազգային ակադեմիայի, փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ*

VLADIMIR HOVSEPYAN
*Applicant of the Institute of Philosophy, Sociology and
Law of the National Academy of Sciences*

ВЛАДИМИР ОВСЕПЯН
*Соискатель Института философии, социологии и
права Национальной академии наук*

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ

THE FIRST ATTEMPT TO CREATE A NATIONAL JUDICIAL CODE

ПЕРВАЯ ПОПЫТКА СОЗДАНИЯ НАЦИОНАЛЬНОГО СУДЕБНИКА

Ներածություն

Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցին, որը նաև հայտնի իրավագետ էր, իր աթոռակալության տարիներին (717-728) կարողացավ մեկ ժողովածուի մեջ հավաքել գոյություն ունեցող եկեղեցական կանոնները՝ կազմելով «Կանոնագիրք Հայոց» եկեղեցական իրավունքի ժողովածուն: Հայոց Կանոնագիրքը մշտապես լրացվել է, և եթե Օձնեցու ժամանակ այն կազմված էր 24 կանոնախմբից, ապա XVII դարում՝ դրանց թիվը հասավ 98-ի, որոնց մեջ էին մտնում նաև Վաչագան արքայի կանոնական Սահմանադրությունը և Պարտավի եկեղեցական ժողովի կանոնները¹: Իսկ դա նշանակում է, որ հայ իրավական միտքը և իրավունքը մշտապես գործել են նաև Հայոց Արևելից կողմերում:

«Հայոց Կանոնագիրք»-ը համընդհանուր ճանաչում գտած իրավագիտական խոշոր աշխատություն է, որի որոշ դրույթներ մինչև XX դարի 20-ական թվականները կիրառվել են Հայաստանում և հայ գաղութներում: Այն կարգավորել է ոչ միայն եկեղեցական, այլև քրեական, քաղաքացիական, ամուսնաընտանեկան բնագավառների բազմաբնույթ հարաբերություններ:

Հիմնական հետազոտություն

Չնայած Բագրատունյաց թագավորության կործանումից հետո հայ ժողովուրդը տևական ժամանակով զրկվեց պետականությունից, սակայն հայ իրավունքի հետագա զարգացման տեսանկյունից չկորցրեց իր պետական մտածողությունը: Նման պայմաններում հայ ժողո-

¹ Կանոնագիրք Հայոց, հատոր Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 14-19:

վուրդը Հայոց Կանոնագրքից ավելի խոշոր փաստաթղթի կարիք էր զգում: Արդեն XII դարում ծնվում և իրականանում է ազգային օրենսգիրք ստեղծելու գաղափարը: Հենց այդ դարում աննախադեպ վերելք է ապրում հայ իրավագիտակցությունը և ստեղծված քաղաքական և սոցիալական պայմանները սուր կերպով թելադրում էին վճռական քայլ կատարել՝ «հորինելով հայկական օրենսգիրք, որի անհրաժեշտությունը զգացվում էր վաղուց ու անորոշ արտահայտումներով դեգերում էր տիրապետող հասարակական դասակարգերի գիտակցության մեջ»²: Իսկ այդ վճռական քայլը կատարողը և հայ ազգային առաջին օրենսգրքի հեղինակը Դավիթ Ալավկա որդին էր, որի ծննդավայրը հյուսիսային Արցախն է:

Դավիթ Ալավկա որդու ժամանակակիցների տեղեկությունների համաձայն՝ Դավիթը եղել է զարգացած անձնավորություն, տիրապետել է մի քանի լեզուների, նույնիսկ համազգային նշանակություն ունեցող որոշ հարցերում Հայոց կաթողիկոսը հաշվի է առել նրա կարծիքը: Նա ունեցել է վարդապետի կոչում, իսկ վարդապետներն աստվածաբանական բարձր գիտելիքներ ունեցող օրենքների բարձր գիտական և մեկնաբանողներ են եղել (ժամանակակից իմաստով՝ գիտության դոկտորներ): Մեծ է եղել վարդապետների ծառայությունը հատկապես հայ իրավունքի զարգացման մեջ: Իրավաստեղծ բնագավառում նրանք նույն դերն են կատարել ինչ-որ Հռոմի իրավաբանները:

Դավիթ Ալավկա որդու «Կանոնական օրենսդրություն» գրվածքը, հայ և համաշխարհային իրավական մտքի խոշոր հուշարձաններից մեկն է համարվում: Այդ աշխատությունը հայ մատենագրության մեջ ծանոթ է նաև իբրև «Հարցումն պէսպէս խոստովանութեան բանից և պատահմանց եկելոց» կամ «Վասն պէսպէս հարցմունք խոստովանութեանց խրատք զգուշացուցիչք» վերնագրերով: Աշխատության վերաբերյալ սկզբնական կարծիքները ոչ դրական են եղել (Մ. Չամչյանց, Հ. Տաշյան և այլն), ըստ որոնց՝ Դավթի կանոնները գրված են «խառնիխուռն ոճով»³ կամ «մեծ մասամբ խենթական բաներ են»⁴: Սակայն XX դարում կարծիքները փոխվել են: Պրոֆեսոր Խաչիկ Սամուելյանը նշել է, որ «Հայաստանում որոշ կիրառում ունեցած Դավթի այդ ժողովածուն պետք է դասել ազգային դատաստանագրքերի շարքին, իբրև կողիֆիկացիոն աշխատանքի մի փորձ, թեև կատարված անհատական ձեռներեցությամբ»⁵: Դրական կարծիք է հայտնել նաև իրավունքի մյուս խոշոր մասնագետ Ալ. Սուքիասյանը՝ նշելով, որ Դավթի Դատաստանագիրքն առաջին հայկական օրենսգիրքն է, որը պարունակում է ինչպես եկեղեցական կանոններ, այնպես էլ աշխարհիկ օրենքներ⁶: Նկատի ունենալով Դավթի ժողովածուի գործնական կիրառական նշանակությունը՝ Մանուկ Աբեղյանն այդ աշխատությունը ևս դասում է հայկական դատաստանագրքերի թվին, համարելով այդ երկն իր տեսակով մի նոր բան մեր հին գրականության մեջ, «և այդ նորն էլ ծնունդ է նոր մտավոր հոսանքի»⁷:

Անշուշտ, Դավթի աշխատանքը շուրջ 1000 տարվա հեռավորությունից այլ կերպ չես կարող անվանել: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ Հայոց առաջին դատաստանագիրքը դեռևս որևէ մեկի կողմից լուրջ ուսումնասիրության առարկա չի դարձել, և յուրաքանչյուր հետազոտող այդ աշխատությանն անդրադարձել է այնքանով, որքանով որ այն առնչվել է իր կողմից ուսումնասիրվող առարկային: Մենք, բնավ, միտք չունենք մեր աշխատանքում իրա-

² Խաչիկ Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատոր 1, 1939, Երևան, էջ 74, 75:

³ Միքայել Չամչյանց, Հայոց պատմություն, հատոր Գ, Երևան, 1984, էջ 41:

⁴ Տաշյան Հակոբոս, Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 656:

⁵ Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմությունը, հ. 1-ին, Երևան, 1939, էջ 75:

⁶ Ալեքսեյ Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Երևան, 1978, էջ 227:

⁷ Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ (XI-XIX դդ. 30-ական թթ.) Երևան, 1946, էջ 62-64, 148:

վական տեսակետից լրջագույնս ուսումնասիրելու այդ հուշարձանի բոլոր կողմերը, որը հասկանալի պատճառներով հնարավոր չի լինի, ուստի կջանանք ցույց տալ Ալավկա որդու այն առաջադեմ մտքերն ու գաղափարները, որոնք նորություն էին միջնադարյան հայ իրավունքի համար, և որոնք, նույնիսկ ներկա պայմաններում, իրենց արդիականությունը չեն կորցրել:

Դավթի աշխատությունը, որի ամենահին ձեռագիրը վերագրվում է XII-XIII դարերին, առաջին անգամ գրաբար լույս է տեսել «Էջմիածին» ամսագրում⁸, իսկ անգլերեն թարգմանությամբ՝ 1961 թվականին Բելգիայում հրատարակվել է հայտնի հայագետ Չարլզ Դուուսթի կողմից⁹: Մենք օգտվել ենք այն ընդօրինակություն-աշխարհաբար թարգմանությունից, որը զետեղված է Ռուբեն Ավագյանի «Հայ իրավական մտքի գանձարան» աշխատության առաջին հատորում:¹⁰

Դատաստանագիրքը բաղկացած է առաջաբանից և 97 հոդվածից: Առաջաբանում, խոսելով իր աշխատության նշանակության մասին, Դավթ Ալավկա որդին տարանջատում է դնում հոգևոր և հանրային կառավարման միջև: Դավթի աշխատանքի բազմաթիվ հոդվածներից նկատելի է, որ այն գրված է հարց ու պատասխանի ձևով: Հարցումները տրված են եղել ինչ-որ հոգևորականի կողմից, որոնց էլ հեղինակն ուղղակիորեն պատասխանել է: Ըստ պատմիչ Կիրակոս Գանձակեցու՝ Դավթն աշխատությունը գրել է «Արքայություն» անունով մի քահանայի խնդրանքով՝ 10 ենթադրաբար ավարտելով 1130 թվականին:

Դատաստանագրքի հոդվածները կարելի է բաժանել 3 խմբի՝

ա) բարոյականության և մաքրության հարցերը կարգավորող կանոններ,

բ) եկեղեցական կանոններ,

գ) աշխարհիկ՝ քրեական, քաղաքացիական, ամուսնաընտանեկան և աշխատանքային հարաբերություններ կարգավորող կանոններ:

Իր հերթին քրեական բնույթի կանոններն իրենց տեսակային հատկանիշներով կարելի է բաժանել 3 ենթախմբի՝

1) կրոնական հանցագործություններ,

2) անձի դեմ ուղղված հանցագործություններ,

3) գույքային հանցագործություններ:

Առաջին խմբի կանոնները (1-15-րդ, 31-րդ, 33-րդ, 38-րդ, 46-րդ, 49-րդ, 54-րդ, 55-րդ, 64-րդ, 65-րդ, 67-րդ, 78-րդ, 94-րդ հոդվածներ) վերաբերում են հայ հասարակության տարբեր խավերի միջև եղած հարաբերություններին. նրանց կենցաղի, սովորույթների, բարոյականության, մաքրակեցության, բժշկության, կենսաբանության և այլ հարցերի: Նշված հոդվածներում Ալավկա որդին բացասաբար է վերաբերվում բոլոր այն մնասական երևույթներին, որոնք հասարակության բարիքներին չեն ծառայում:

Եկեղեցական բնույթի կանոնները (21-32-րդ, 34-36-րդ, 47-րդ, 50-րդ, 66-րդ, 68-րդ, 69-րդ, 73-րդ, 84-րդ հոդվածներ) հիմնականում վերաբերում են մկրտության, Սուրբ խորհրդի, հաղորդության, պատարագ մատուցելու, պահեցողության և համանման այլ հարցերի:

Քրեական բնույթի կանոններից կրոնական հանցագործությունների (21-րդ, 35-րդ, 53-րդ, 80-րդ, 81-րդ, 83-րդ, 95-րդ հոդվածներ) կարգավորման առարկա են հանդիսացել անհավատներին մկրտելու, մեռածներին վարձով թաղելու կամ անթաղ թողնելու, կախարհության և զանազան հմայությունների, աստվածահայիոյության, հակաքրիստոնեական աղանդներին հարելու, այլադավանների հետ առնչվելու և այլ բնագավառներում ծագած իրավահարաբե-

⁸ Ա. Արրահամյան, Դավթ Ալավկա որդու կանոնները, «Էջմիածին» ամսագիր, 1952, N9-12, 1953 N1-3

⁹ Dowsett C.J.F., The penitential of David of Ganjak, edited text and translation, Louvain, 1961.

¹⁰ Ռուբեն Ավագյան, Իրավական մտքի գանձարան, հատոր 1, Երևան, 2001, էջ 192-244:

րությունները:

Պատմական բոլոր ժամանակաշրջաններում անձի դեմ ուղղված հանցագործությունները միշտ էլ գտնվել են պատմաբանների, փիլիսոփաների, իրավաբանների, օրենսդիրների ուշադրության կենտրոնում, որովհետև նման բնույթի հանցագործությունների տեսակարար կշիռը և հասարակական վտանգը միշտ մեծ է եղել: Այդ հանցագործություններից ամենաճանրը սպանություններն են, որոնք միշտ էլ հետապնդվել և պատժվել են:

Դավիթ Ալավկա որդին, Դատաստանագրքի 1-ին հոդվածում ժխտելով չարի գաղափարը, ազդարարում է, որ Աստված բարու նախատիպն է, սակայն «Ադամի մեղք գործելուց հետո որոշ բաներ մերժվեցին, որոշ բաներ ընդունվեցին»: Այդ ենթատեքստում Դավիթը յուրովի տալիս է հանցագործության հասկացությունը, ըստ որի՝ այն ի վերուստ առաջացած երևույթ է և պայմանավորված է որոշակի գործողությամբ և պատճառներով (հարբեցողություն, նենգություն, քսություն, վրեժխնդրություն, կեղեքում, ազահություն, հափշտակություն, կեղծիք, շնություն և այլն): Դատաստանագրքի հոդվածներից նկատելի է, որ Դավիթ Ալավկա որդին հստակորեն տարանջատել է հանցագործության տարրերը՝ մասնավորապես, հանցագործության սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: Հանրահայտ է, որ հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը մեղքն է, որը դրսևորվում է դիտավորությամբ կամ անզգուշությամբ: Արարքում մեղքի բացակայությունը վկայում է հանցագործության բացակայության մասին: Հենց այդ խնդրին է նվիրված 59-րդ հոդվածը: Դավիթը հստակորեն տարբերակում է դնում անզգույշ և դիտավորյալ կերպով մահ առաջացնելու հետևանքների միջև: Նա նույնիսկ նախատեսում է դիտավորյալ սպանության մի քանի հանցակազմ և ակնարկում, որ միայն հանցավոր արարքի և հետևանքի միջև պատճառական կապի դեպքում անձը կարող է պատասխանատվության ենթարկվել: Դիտավորյալ սպանությունների առանձին տեսակների մասին խոսվում է Դատաստանագրքի 48-րդ, 57-րդ, 58-րդ հոդվածներում: Ընդ որում, նշված հոդվածներից յուրաքանչյուրը պարունակում է մի քանի հանցակազմ: Առավել մեծ հետաքրքրություն ունի 48-րդ հոդվածն այն առումով, երբ հեղինակը, արժարծելով հանցակցության ինստիտուտի գաղափարը, առաջ է քաշում նաև կատարողի հետ մեկտեղ հանցակիցների պատասխանատվության հարցը: Դիտավորյալ սպանության վերաբերյալ հոդվածներով սահմանված պատիժների վերլուծությունը ցույց է տալիս, որ, որքան իր բնույթով ծանր և վտանգավոր է սպանությունը, այնքան Ալավկա որդին խստացնում է դրա պատժելիությունը և ընդհակառակը¹¹:

«Չկա մեղք, չկա նաև պատասխանատվություն» սկզբունքն Ալավկա որդին արտացոլել է 42 և 43-րդ հոդվածներում, որոնց իմաստը հուշում է մեզ, որ այնտեղ, որտեղ գործողության կամ անգործունեության և հանցավոր հետևանքի միջև չկա պատճառական կապ, չի կարող լինել ո՛չ քրեական պատասխանատվություն, ո՛չ էլ պատիժ:

Բազմաթիվ փաստեր կան, երբ հին և միջնադարյան օրենսդրություններում հանցագործության սուբյեկտ են ճանաչել նաև կենդանիներին և առարկաներին: Սակայն այլ ձևով է հարցը լուծում Դավթի Դատաստանագրքի 96-րդ հոդվածը. «Եթե պատահի, որ ծառից մարդն ընկնի կամ ծառից պարանով կախվի՝ ծառերին չպետք է մեղք դնել, քանի որ անշունչ և անզգա առարկաներ են, մահվան ոչ մի պատճառ չեն ներկայացնում (նրա հետ) ինչ որ պատահեց... Իսկ եթե եկեղեցուց քար ընկնի մարդու վրա և մարդը մեռնի. եկեղեցին մեղք չունի. ինչպես կամենում է Տերը, թո՛ղ անխափան պատարագ մատուցեն»:

Դատաստանագրքի կանոններից դիտելի է, որ Դավիթ Ալավկա որդու մոտ կրոնական

¹¹ Ա. Թ. Թովմասյան, Հին և միջնադարյան քրեական իրավունք, Երևան, 1977, էջ 120-189 (Ալավկա որդու աշխատության քրեական բնույթի նորմերը պատմահամեմատական մեթոդով հիմնականում լուսաբանված են Ա. Թովմասյանի նշված մենագրության մեջ):

ըմբռնումներն ավելի խորն են ընդգծված եղել: Այլ կերպ լինել չէր կարող, քանի որ Դավիթը, հանդիսանալով կրոնական գործիչ (կոչումով՝ վարդապետ) և իր դարաշրջանի հարազատ զավակը, իր աշխատությունը գրելիս՝ հիմնականում պետք է ղեկավարվեր աստվածաբանական հավատքի հիմքերով: Եթե նույնիսկ Դատաստանագիրքը ձևականորեն բաժանենք կրոնական և աշխարհական մասերի, միևնույն է, նրա աշխարհական մասը ևս կրում է կրոնական հավատալիքների և հայացքների ազդեցությունը:

Հարկ է նշել, որ ազգի հարատևման շրջանակում Ալավկա որդին նախատեսել է մի շարք նորմեր, որոնք շրջափում, ամրագրում են երեխայի պաշտպանության շահերը: Որդեծնության սերմը ոչնչացնողները հավասարեցվել են մարդասպաններին, հողի կնոջ վիժումը և աբորտը դիտվում էին որպես ծանր հանցագործություններ: Դավիթը տարբեր բնույթի պատիժներ է սահմանում այն հակաբնական սեռական արարքների համար, որոնք վերաբերում են ամուսնական սրբապղծություններին, սեռական կրքերը խաթարված ձևով բավարարելուն և այլն:

Մարդկային հասարակության պատմության ողջ ընթացքում բազմաթիվ իրավական նորմեր են ընդունվել՝ սեփականությունը հանցավոր ոտնձգություններից պաշտպանելու համար: Նման ոտնձգություն կատարողների նկատմամբ պատիժները միշտ էլ խիստ են եղել: Նույն մոտեցումն է ցուցաբերել Դավիթ Ալավկա որդին, որի աշխատության 41-րդ հոդվածից նկատելի է, որ գողին ենթարկել են մահապատժի՝ կախաղան հանելու միջոցով:

Ինչպես Հին Կտակարանին, այնպես էլ քրիստոնեությանը խորթ է եղել վաշխառությամբ զբաղվելը և այն համարվել է որպես անվայել, որպես ոչ մարդասիրական, ոչ օրինավոր արարք: Հասարակության մեջ գործել է ուրիշին տրված դրամական միջոցները նույնությամբ վերադարձնելու սկզբունքը, իսկ ավել ստացողները պարտավոր են եղել այդ գումարները հանձնել աղքատանոցներին: Օրենքով սահմանված տոկոսից բարձր վերցված փողը՝ շահը, կոչվել է վաշխ, առնողը՝ վաշխառու: Դավիթը վաշխառությամբ զբաղվելը բարձրացրել է քրեորեն պատժելի աստիճանի, նրանց հավասարեցրել գողերի հետ և վերջիններիս նկատմամբ նշանակվող պատիժները տարածել վաշխառուների նկատմամբ: Դավթի Դատաստանագրքով նախատեսված է հատուկ կանոն՝ ուղղված «վարձկանների», օրավարձով աշխատողների և նրանց տերերի միջև եղած հարաբերությունների կարգավորմանը (43-րդ հոդված): Տերը (ներկայիս իմաստով՝ գործատուն) աշխատողին չպետք է ուղարկի վտանգավոր աշխատանքի, իսկ ուղարկելու և ճանապարհին փորձանք կամ մահ պատահելու դեպքում՝ պատասխանատվություն է կրում: Եթե տերը զգուշացնում է վտանգի մասին, սակայն աշխատողը կարիքից ստիպված կատարում է աշխատանքը և նրան մահվան ելքով փորձանք է պատահում, ապա տերն ազատվում է պատասխանատվությունից: Եթե աշխատողն է զգուշացնում կատարվելիք աշխատանքում սպասվող վտանգի մասին, սակայն տերը միջոցներ չի ձեռնարկում և աշխատողը մահանում է, ապա տերը «նրա արյանը պարտական է»: Վերջապես, եթե աշխատողը «ամենայն ճշտությամբ» հայտնում է սպասվելիք մահվան փորձանքի մասին, սակայն տերը «հրամայում է գործը կատարել», ապա աշխատողին մահվան փորձանք պատահելու դեպքում՝ «նրա արյանը պարտական է»:

Աշխատանքային և քրեական իրավահարաբերությունները կարգավորող վերոնշյալ նորմից նաև նկատելի է, որ Դավիթը, տարանջատելով դիտավորյալ և անզգույշ սպանությունները, միաժամանակ հստակորեն առաջ է քաշում պատահարի ինստիտուտը՝ բացառելով քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Ա. Թովմասյանը, լուսաբանելով Ալավկա որդու աշխատության մի շարք հոդվածներ, մասնավորապես 35-րդ և 98-րդ (պետք է լինեն 97-րդ - Վ.Լ.) հոդվածները, եզրահանգել է, «որ պատմական այդ շրջանում, այսինքն XI-XII դարերում Աղվանից աշխարհում (Հայաղվանքում

- Վ. Հ.) բնակվող հայերի մեջ լայնորեն տարածված են եղել կաշառքն ու դրան առնչվող մյուս հանցագործությունները»¹²: Այդ հարցում մենք համամիտ չենք Ա. Թովմասյանի հետ: Նախ, Ալավկա որդին, բացի 35-րդ և 97-րդ հոդվածներից, «կաշառք» եզրույթի մասին խոսում է նաև 41-րդ, 45-րդ, 92-րդ հոդվածներում: Իսկ 35-րդ հոդվածից կարելի է միայն ենթադրել, որ մանուկներին վարձով ուսուցանող, կամ մեռածներին վարձով թաղող, կամ մեռածին անթաղ թողնող հոգևորականները (կամ աշխարհականը) պետք է պատասխանատվություն կրեն: Համանման միտք է շոշափում նաև 92-րդ հոդվածը: Իսկ Դատաստանագրքի 97-րդ հոդվածի վերնա•իրը՝ «Չար առաջնորդների և քահանաների մասին», մեզ կարող է միայն հուշել, թե ինչի մասին է գնալու խոսքը: Հենց միայն այդ հոդվածից նկատելի է, որ Դավիթը մի կըքոտ հայրենասեր է եղել և ինչպես Քերթողահայր Խորենացին,¹³ մտրակել, խարազանել է իր ժամանակի իրականության բացասական երևույթները, սակայն ոչ հոռետեսության դիրքերից: Այս առումով Դավիթը, ճիշտ ներկայացնելով ժամանակի բարքերն ու սովորույթները, ավելի է բարձրացնում իր աշխատության պատմագրական արժեքը:

Հանցավորի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվել ինչպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող, այնպես էլ ծանրացնող հանգամանքները: Պատժի հարցում Դավիթն ավելի խիստ է եղել հանցագործությունը հարբած վիճակում կատարած անձանց նկատմամբ, որոնց մասին հատուկ շեշտում է կատարել՝ «հարբեցողն ու գազանը մեկ են»: Դատաստանագրքի 39-րդ հոդվածը պատժում էր այն հորը, որն իրեն գինարբուքի տալով, մոռացության էր մատնում երեխային, և նա, առանց հսկողության մնալով, գետում խեղդվում էր, իսկ 82-րդ հոդվածի հանցակազմերից մեկն էլ՝ հարբած վիճակում աստվածահայիոյությունն է, որի սուբյեկտների նկատմամբ որպես պատիժ նշանակվել է մինչև վախճանվելը՝ «ջերմեռանդ ապաշխարություն»:

Դատաստանագիրքն ավելի խիստ պատիժներ է սահմանել սանձարձակ, անզգամ կանանց նկատմամբ և պատժի նշանակման հարցում վկայակոչել մծղնեականների համար նախատեսված պատիժները: Իսկ մծղնեականները, ըստ Դավթի, Պավլիկյաններն են, որոնք իրենց արտաթորանքները խառնել են կերակրին և խմիչքներին ու որպես դեղ օգտագործել:

Դատելով Դատաստանագրքի հոդվածների սանկցիաներից՝ կարելի է նշել, որ Ալավկա որդին նախատեսել է պատժի հետևյալ տեսակները՝ Սուրբ հաղորդությունից զրկում, պատարագելու իրավունքից զրկում, կնքահայր դառնալուց զրկում, հոգեզավակ դառնալուց զրկում, կարգալույծ անել, աղվեսադրոշմ դնել, ապաշխարություն, ջլահատություն (ջլերի հատում), ուրկանոց (բորոտանոց) ուղարկել, բանադրանք (եկեղեցական նզովք, անեծք), հետին թոշակից զրկում (զրկել վերջին մխիթարությունից) կամ դրա հակառակը (արժանանալ վերջին մխիթարությանը), փնասի հատուցում, մահապատիժ և այլն: Որոշ հոդվածներում նշվում է, որ հանցագործը պետք է պատժվի: Սրանք, այսպես կոչված, անորոշ սանկցիաներ են, որոնք ֆեոդալական քրեական իրավունքին ընդհանրապես հատուկ պատժատեսակներ են եղել պատմական անցած ժամանակներում:

Դատաստանագրքի մի շարք հոդվածներից կարելի է մակաբերել, որ Ալավկա որդին տարանջատել է հոգևոր (4-րդ, 8-րդ, 9-րդ, 21-րդ, 38-րդ և այլն) և աշխարհիկ (49-րդ, 50-րդ, 52-րդ և այլն) դատարանների ինստիտուտը: Վերջիններիս ընդդատյա են եղել առաջին հերթին այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնց համար մահապատիժ է նախատեսվել:

Դավիթը երբեմն վկայակոչում է այլ նորմեր՝ օգտագործելով «Սուրբ վարդապետների կա-

¹² Ա. Թ. Թովմասյան, Հին և միջնադարյան քրեական իրավունք, էջ 282:

¹³ Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ս. Տ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 319:

նոնական որոշումները», «Կանոնական հրամանը» եզրույթները: Անվիճելի է, որ, բացի Դատաստանագրքից, երկրամասում դատարանները ղեկավարվել են նաև Հայոց Կանոնագրքի դրույթներով:

Բոլոր հետազոտողները միահամուռ են, որ Դավթի աշխատությամբ առաջնորդվել են բազում տարիներ, մինչև անգամ Մխիթար Գոշի Դատաստանագրքի հրապարակ գալուց հետո: Եվ դա բացատրվում է նրանով, որ նրա ստեղծած գործը սերտորեն կապված է եղել ժամանակաշրջանի իրականության հետ և կանոնները շարադրված են եղել դյուրըմբռնելի ձևով:

Եզրակացություն

Պետականության բացակայության պայմաններում հայ ժողովրդի պետական իրավագիտակցությունը երբեք չի մարել: Միջնադարյան հայ իրավունքի վերաբերյալ արժեքավոր տվյալներ արտացոլված են իրավագիտական աղբյուրներում, եկեղեցական ժողովների կանոններում, վիմագիր արձանագրություններում և ազգային դատաստանագրքերում: VIII դարի 10-ական թվականներին Ամենայն Հայոց Կաթողիկոս Հովհան Օձնեցու կազմած եկեղեցական իրավունքի առաջին ժողովածուն՝ «Կանոնագիրք Հայոց»-ը, նպատակ ուներ պահպանել Հայոց եկեղեցու ազգային դիմագիծը և պետականության բացակայության պայմաններում դիմակայել օտար ուժերի համաձուլարար քաղաքականությանը: Իսկ Ալավկա որդու աշխատությունը դարձավ ազգային դատաստանագրքի ստեղծման առաջին փորձը, որտեղ եկեղեցաիրավական կանոնների հետ միասին համակարգվեցին նաև քաղաքացիական, ամուսնական, ընտանեկան և քրեական իրավահարաբերությունները: Հայերեն իրավական բառապաշարով գրված Ալավկա որդու «Կանոնական օրինադրությունը» արժանի տեղ է զբաղեցնում համաշխարհային իրավական մտքի գանձարանում և հետագայում ծառայել է որպես աղբյուր թե՛ Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս:

Ամփոփագիր: Բագրատունյաց թագավորության վերացումից հետո, XII դարի 1-ին կեսերին, քաղաքական տեսակետից Հայոց Արևելից կողմն ավելի անկախ էր, որն էլ թելադրեց ազգային օրենսդրություն ունենալու անհրաժեշտությունը: Այդ գործն առաջին անգամ իր վրա վերցրեց Դավթի Ալավկա որդին, ստեղծելով իրավական մտքի մի խոշոր հուշարձան, որը, չնայած ժամանակին պետական իշխանությունների կողմից պաշտոնապես հաստատված չի եղել, սակայն կիրառվել է հայ համայնքներում, ինչպես եկեղեցականների, այնպես էլ համայնքի պաշտոնյաների կողմից տարբեր բնույթի իրավական հարցեր կարգավորելու համար:

Դավթի կանոնների պատմական նշանակությունն այն է, որ հայ իրականության մեջ օրենսդրության կողիֆիկացիայի առաջին փորձը կատարվեց, որում քաղաքացիական, քրեական, աշխատանքային իրավահարաբերությունների և հոգևոր կյանքի բնագավառներում ծագած հարցերի վերաբերյալ ժամանակի համար առաջադիմական մի շարք լուծումներ տրվեցին:

Հենց միայն այն հանգամանքը, որ Ալավկա որդու մահից (1140) 44 տարի հետո Մ. Գոշը ձեռնամուխ եղավ իր հոշակավոր Դատաստանագիրքը գրելուն, որի մի շարք կանոններ բառացիորեն քաղված են Դավթի Դատաստանագրքից. ոչ միայն վկայում է, որ նա ձեռքի տակ ունեցել է Դավթի գրվածքը, այլև այն, որ աշխատությունը պետք է գործածության մեջ լիներ Հայոց աշխարհում, մասնավորապես, նրա Արևելից կողմերում՝ Արցախում և Ուտիքում:

Annotation. After the abolition of the Bagratid kingdom in the first half of the 12th century, the eastern edge of Armenia became more independent politically, which dictated the need to create national legislation. The first to undertake this task was David's son Alavki, who created a major monument of legal thought, which, although not officially approved by the state authorities of the time, was used in Armenian communities by both the clergy and

community officials to regulate various legal issues.

The historical significance of David's Rules lies in the fact that the first attempt at codification of legislation in Armenian reality was made, in which a number of progressive solutions for the time were given to issues arising in the fields of civil, criminal, labor relations and spiritual life.

The very fact that 44 years after the death of David's son Alavka (1140), M. Gosh began writing his famous "Code of Laws", a number of provisions of which were literally borrowed from David's "Code of Laws", proves not only that he had David's works at hand, but also that this work was to be used within Armenia, in particular in its eastern region - in Artsakh and Utik.

Аннотация. После упразднения царства Багратидов, в первой половине XII века, восточный край Армении стал более самостоятельным в политическом отношении, что диктовало необходимость создания национального законодательства. Первым за эту задачу взялся сын Давида Алавки, создав крупный памятник юридической мысли, который, хотя и не был официально одобрен государственными властями того времени, использовался в армянских общинах как духовенством, так и общинными должностными лицами для регулирования различных правовых вопросов.

Историческое значение канонов Давида заключается в том, что в армянской действительности была предпринята первая попытка кодификации законодательства, в которой был дан ряд прогрессивных для того времени решений вопросов, возникавших в сфере гражданских, уголовных, трудовых правоотношений и духовной жизни.

Сам факт, что спустя 44 года после смерти сына Давида Алавки (1140 г.) М. Гош начал писать свой знаменитый «Судебник», ряд положений которого дословно заимствован из «Свода законов» Давида, доказывает не только то, что у него под рукой были сочинения Давида, но и то, что этот труд должен был использоваться в пределах Армении, в частности, в его восточном крае – в Арцахе и Утике.

Բանալի բառեր - Կանոնագիրք Հայոց, կրոնավոր, անհավատ, հանցակազմ, հանցագործություն, դատարան, եկեղեցական պատիժներ, կախաղան, մկրտություն:

Keywords: law, Armenian canon law, religious, infidel, composition of crime, crime, court, church punishments, gallows, baptism.

Ключевые слова: Армянское каноническое право, религиозный, неверный, состав преступления, преступление, суд, церковные наказания, виселица, крещение.

Գրականություն/References/Литература

1. Կանոնագիրք Հայոց, հատոր Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 14-19:
2. Խաչիկ Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատոր 1, 1939, Երևան, էջ 74, 75:
3. Միքայել Չամչյանց, Հայոց պատմություն, հատոր Գ, Երևան, 1984, էջ 41:
4. Տաշյան Հակոբոս, Յուզակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 656:
5. Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմությունը, հ. 1-ին, Երևան, 1939, էջ 75:
6. Ալեքսեյ Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Երևան, 1978, էջ 227:
7. Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ (XI-XIX դդ. 30-ական թթ.) Երևան, 1946, էջ 62-64, 148:
8. Ա. Արրահամյան, Դավիթ Ավակա որդու կանոնները, «Էջմիածին» ամսագիր, 1952, N9-12, 1953 N1-3:

9. Dowsett C.J.F., The penitential of David of Ganjak, edited text and translation, Louvain, 1961.
10. Ռուբեն Ավագյան, Իրավական մտքի գանձարան, հատոր 1, Երևան, 2001, էջ 192-244:
11. Ա. Թ. Թովմասյան, Հին և միջնադարյան քրեական իրավունք, Երևան, 1977, էջ 120-189 (Ավավկա որդու աշխատության քրեական բնույթի նորմերը պատմահամեմատական մեթոդով հիմնականում լուսաբանված են Ա. Թովմասյանի նշված մենագրության մեջ):
12. Ա. Թ. Թովմասյան, Հին և միջնադարյան քրեական իրավունք, էջ 282:
13. Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ս. Տ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 319:

Հովսեփյան Վ. - Գիտությունների ազգային ակադեմիայի, փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, էլիասցե՝ vladimirhovsepyan1953@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 16.06.2025 թ., տրվել է գրախոսության 16.06.2025 թ., երաշխավորվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Ղազանչյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2025 թ.:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CIVIL LAW/ГРАЖДАНСКОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-26>

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*
ՄԱՐԻԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ
իրավագիտության մագիստրոս

ARPINE HOVHANNISYAN

*Lecturer at the Chair of Civil Law of
YSU Faculty of Law, PhD,
Associate Professor*
MARIAM AYVAZYAN
LLM

АРПИНЕ ОГАНЕСЯН

*Преподаватель кафедры гражданского права
юридического факультета ЕГУ,
кандидат юридических наук, доцент*
МАРИАМ АЙВАЗЯН
Магистр права

**ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՎԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ**

**PECULIARITIES OF THE INTERPRETATION OF THE REPRODUCTION
RIGHT IN THE DIGITAL AGE**

**ОСОБЕННОСТИ ИНТЕРПРЕТАЦИИ ПРАВА НА ВОСПРОИЗВЕДЕНИЕ В
ЦИФРОВУЮ ЭПОХУ**

Ներածություն

Վերարտադրման իրավունքը հեղինակային և հարակից իրավունքների համակարգի ամենահիմնարար և առանցքային իրավունքներից է: Այն հեղինակային և հարակից իրավունքների միջուկը կամ սիրտն է¹:

¹ *Stu Pila, Justine, and Paul Torremans. European intellectual property law. Oxford University Press, USA, 2019, էջ 279:*

Թվային դարաշրջանի զարգացումներն էականորեն վերափոխել են վերարտադրման իրավունքի կիրառման ու մեկնաբանման եղանակները: Տեխնոլոգիական նորագույն միջոցները հնարավորություն են տալիս հեղինակային իրավունքի օբյեկտների և կատարումների ամրագրումները վերարտադրելու տարաբնույթ ձևաչափերով և եղանակներով՝ երբեմն ընդամենը մի քանի վայրկյանում ստեղծելով գրեթե անսահման քանակությամբ օրինակներ:

Այս նոր իրողություններն առաջացնում են մի շարք գործնական հարցեր, այդ թվում՝ արդյոք, օրինակ, որևէ կայքէջում սիրելի կատարողի տեսահոլովակի դիտումը կարող է համարվել վերարտադրման իրավունքի խախտում, թե ոչ: Այս տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում քննարկելու վերարտադրման իրավունքի սահմաններն ու կիրառելիության շրջանակները:

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել վերարտադրման իրավունքի մեկնաբանման առանձնահատկությունները՝ անդրադառնալով թվային դարաշրջանի առաջադրած մարտահրավերներին:

Հիմնական հետազոտություն

Վերարտադրումը երկի կամ հարակից իրավունքի օբյեկտի այն եղանակով ամրագրումն է, որը թույլ է տալիս ընկալել աշխատանքը կամ հարակից իրավունքների օբյեկտը և դրա հիման վրա վերարտադրել այն և հաղորդել հանրությանը²:

Այս իրավունքի էությունը վերհանելու համար կարևոր է դիտարկել դրա վերաբերյալ կոնվենցիոն կարգավորումները և դրանց մեկնաբանություններում առկա դիրքորոշումները: Այսպես՝ գրական և գեղարվեստական երկերի պահպանության մասին Բեռնի կոնվենցիայի 9-րդ հոդվածն ամրագրում է, որ հեղինակներն ունեն բացառիկ իրավունք թույլատրել իրենց երկերի վերարտադրությունը ցանկացած միջոցներով և ցանկացած եղանակով: Ըստ կոնվենցիայի մեկնաբանության՝ այս բնորոշումից կարելի հանգել, որ գործողությունը վերարտադրում բնորոշելու համար կարևոր չեն վերարտադրման մեթոդը, եղանակը կամ ձևը, արդյոք երկի կրկնօրինակն ընկալվում է ուղղակիորեն, թե որևէ սարքավորման միջոցով, արդյոք աշխատանքն ամրագրված է շոշափելի նյութական կրիչում, թե ոչ, արդյոք վերարտադրությունն իրականացվել է ուղղակիորեն, օրինակ՝ շոշափելի նյութական կրիչից, թե ոչ անուղղակի, օրինակ՝ ուղիղ հեռարձակման պարագայում³:

Ավելին, կոնվենցիայի բացատրական մեկնաբանությունները հատուկ ընդգծում են, որ վերարտադրման իրավունքը չի ընդգրկում հրապարակային կատարման իրավունքը: Միևնույն ժամանակ հստակորեն ընդգծվում է, որ վերարտադրման իրավունքը կիրառելի է այն բոլոր գործընթացների և մեխանիզմների նկատմամբ, որոնք թեև դեռևս հայտնագործված չեն, բայց կարող են հետագայում կիրառվել երկերի վերարտադրման համար⁴: Ինչը նշանակում է՝ ի սկզբանե կոնվենցիան միտված էր ապագային՝ գիտատեխնիկական բոլոր հնարավոր զարգացումների հաշվառմամբ:

Ինչ վերաբերում է կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին Հռոմի կոնվենցիային (այսուհետ՝

² Տե՛ս World Intellectual Property Organization. Guide to the copyright and related rights treaties administered by WIPO: And glossary of copyright and related rights and terms. WIPO, 2003, էջ 307:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս World Intellectual Property Organization. Guide to the Bern Convention for the Protection of Literary and Artistic Works (Paris Act, 1971), Geneva (1978) էջ 54-55:

Հռոմի Կոնվենցիա), ապա այն ամրագրում է վերարտադրման հասկացությունը: Այսպես՝ կոնվենցիայի 3-րդ հոդվածը սահմանում է, որ վերարտադրություն նշանակում է՝ ամրագրման մեկ կամ ավելի օրինակների պատրաստումը: Ինքնին այս հասկացությունը բավական չէ վերարտադրման հասկանալու համար ու այս առումով որոշակիորեն օգնում է կոնվենցիայի 10-րդ հոդվածը, որ անդրադառնում է ուղղակի կամ անուղղակի վերարտադրմանը:

Իր հերթին, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Կատարումների և հնչյունագրերի մասին պայմանագիրը (այսուհետ՝ Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը), թեև չի ամրագրում վերարտադրման հասկացությունը, սակայն, ըստ պայմանագրի, Բեռնի կոնվենցիայում ամրագրված վերարտադրման դրույթը և դրա մեկնաբանությունը *mutadis mutandis* վերաբերում է պայմանագրով ամրագրված վերարտադրման իրավունքի նկատմամբ, ինչը նշանակում է, որ վերագրյալ մեկնաբանությունները կիրառելի են նաև կատարումների վերարտադրության համար⁵: Ավելին պայմանագիրը հատուկ ընդգծում է, որ վերարտադրման իրավունքի վերաբերյալ կարգավորումները լիովին կիրառելի են թվային միջավայրում, ինչը նշանակում է, որ կատարման պահպանումը թվային կրիչներում, համակարգիչներում իրենից ներկայացնում է վերարտադրում պայմանագրի իմաստով⁶:

Այս ոլորտում հաջորդ կոնվենցիան՝ «Տեսալսողական կատարումների մասին» Պեկինի պայմանագրի (այսուհետ՝ Պեկինի պայմանագիր) 7-րդ հոդվածը սահմանում է, որ կատարողներն օգտվում են բացառիկ իրավունքից՝ թույլատրելու տեսալսողական ամրագրումներում ամրագրված իրենց կատարումների ուղղակի կամ անուղղակի, ցանկացած եղանակով ու ձևով վերարտադրություն:

Առաջին հայացքից վերարտադրման իրավունքը թվում է պարզ ընկալելի և հեշտությամբ մեկնաբանման ենթակա իրավունք, սակայն թվային դարաշրջանում իրավիճակը այլ է: Հայկական իրավական պրակտիկան թվային միջավայրում վերարտադրման իրավունքին գրեթե անդրադարձ չի կատարել, այդ իսկ պատճառով այս իրավունքի առանձնահատկությունները վեր հանելու համար անհրաժեշտ է դիտարկել կարգավորումները և մեկնաբանությունները Հայաստանից դուրս:

Այսպես՝ Եվրոպական խորհրդարանի և Հանձնաժողովի 2001 թվականի մայիսի 22-ի «Տեղեկատվական հասարակությունում Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքի որոշակի ասպեկտների ներդաշնակեցման վերաբերյալ» 2001/29/EC դիրեկտիվը (այսուհետ՝ Դիրեկտիվ) սահմանում է հատուկ բացառություններ վերարտադրման իրավունքից⁷: Դիրեկտիվի 5-րդ հոդվածը սահմանում է բացառություն վերարտադրման ժամանակավոր դեպքերի համար, որի ներքո հասկացվում են.

Երկերի և կատարումների ամրագրման վերարտադրության կարճատև կամ հազվադեպ՝ ժամանակավոր գործողությունները, որոնք ինքնուրույն տնտեսական նշանակություն չունեն և տեխնոլոգիական գործընթացի անքակտելի և էական մասն են կազմում, որոնց միակ նպատակն է՝

- 1) միջնորդի միջոցով երրորդ անձանց միջև ցանցում ստեղծագործության տարածումը.
- 2) աշխատանքի օրինական օգտագործումը:

⁵ Տե՛ս World Intellectual Property Organization. Guide to the copyright and related rights treaties administered by WIPO: And glossary of copyright and related rights and terms. WIPO, 2003, էջ 308:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 245:

⁷ Տե՛ս Directive 2001/29/EC of the European Parliament and of the Council of 22 May 2001 on the harmonisation of certain aspects of copyright and related rights in the information society:

Վերագրյալ կարգավորման լույսի ներքո շատ կարևոր է վերհանել, թե ինչ են իրենից ներկայացնում վերարտադրության կարճատև կամ հազվադեպ՝ ժամանակավոր գործողություններ: Այս դրույթի մեկնաբանման համար հատկապես կարևոր նշանակություն ունեցան Արդարադատության Եվրոպական դատարանի «Infopaq International A/S v Danske Dagblades Forening (Infopaq II)», «Football Association Premier League and Others v QC Leisure and Others Karen Murphy v Media Protection Services Ltd» և «Public Relations Consultants Association Ltd v Newspaper Licensing Agency Ltd (PRC)» գործերը⁸: Այս գործերի շրջանակում դատարանը հստակորեն ամրագրեց, որ նշված բացառությունը պետք է մեկնաբանվի հստակորեն՝ մի կողմից իրավական որոշակիության, մյուս կողմից նոր տեխնոլոգիաների զարգացման հաշվառմամբ՝ երաշխավորելով արդարացի հավասարակշռություն իրավատերերի և այն օգտատերերի շահերի միջև, որոնք ցանկանում են օգտվել նոր տեխնոլոգիաների ընձեռնած հնարավորություններից⁹:

Ինֆոփաքը մեդիա մոնիթորինգ իրականացնող ծառայություն էր, որ մոնիթորինգի էր ենթարկում լրահոսը և ընտրված հոդվածների քաղվածքները ուղարկում իր հաճախորդներին էլեկտրոնային փոստի միջոցով: Քաղվածքները կազմվում էին տվյալների հավաքագրման գործընթացի միջոցով (data capture process), որը ներառում էր թերթերի ֆիզիկական օրինակների սքանավորումը թվային ֆայլեր կերտելու համար, որոնք այնուհետ ենթարկվում էին այնպիսի կարգավորումների, որպեսզի հնարավոր լիներ որոնել կանխորոշված բառերը: Որոնման արդյունքում անհրաժեշտ համապատասխանությունը հայտնաբերելիս տեղեկությունները՝ ներառյալ հրապարկման ամսաթիվը, հրապարակման էջը, որոնման բառին նախորդող և հաջորդող հինգ բառերը (ընդհանուր քանակությամբ տասնմեկ բառ) գեներացվում էին, տպվում էր համապատասխան էջը և այն ուղարկվում էր հաճախորդներին: Այս գործի շրջանակում Դանիայի լրագրողների պրոֆեսիոնալ միությունը (Danske Dagblades Forening), տեղեկանալով ստեղծված իրավիճակի մասին, դիմեց Ինֆոփաքին: Ի պատասխան՝ Ինֆոփաքը հայտնեց, որ թեև իրավատերերի կողմից չկան համապատասխան թույլտվությունները, սակայն կատարված գործողությունները լիովին իրավաչափ են¹⁰: Նշված գործը հասավ ընդհուպ մինչև Դանիայի Գերագույն դատարան, որը գործի լուծման համար ստիպված էր 13 հարց ուղղել Արդարադատության Եվրոպական դատարանին, որոնց մեծ մասը հանգում էր ժամանակավոր վերարտադրության մեկնաբանմանը:

Այս գործը շրջանակում, դատարանը ընդգծեց, որ վերարտադրությունը կարող դիտարկվել որպես ժամանակավոր, եթե դրա տևողությունը սահմանափակված է այնքանով, որքանով անհրաժեշտ է տեխնոլոգիական գործընթացը պատշաճ ավարտելու համար, այդ գործընթացը պետք է ավտոմատացված լինի այնպես, որ այն ավարտելուց հետո՝ առանց մարդու միջամտության, ավտոմատ կերպով ջնջի այդ վերարտադրությունը¹¹: Նշված գործի շրջանակում Դատարանը, հաշվի առնելով, որ վերարտադրությունը վերջին փուլը տեղի էր ունեցել համակարգչային տեխնոլոգիաներից դուրս, քանի որ քաղվածքները տպվել էին թղթի վրա և դրանց ոչնչացումը լիովին կախված էր գործընթացում ընդգրկված անհատների կամքից,

⁸ S'eu Pila, Justine, and Paul Torremans. European intellectual property law. Oxford University Press, USA, 2019, էջ 284:

⁹ S'eu նույն տեղում:

¹⁰ S'eu Alexander, I., 2009. The concept of reproduction and the “temporary and transient” exception. The Cambridge Law Journal, 68(3), 521:

¹¹ S'eu Judgment of the Court (Fourth Chamber) of 16 July 2009, Infopaq International A/S v Danske Dagblades Forening, para 64, <https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/?uri=CELEX:62008CJ0005>

եկավ այն եզրահանգման, որ վերարտադրումը ժամանակավոր բնույթ չի կրել¹²:

Իր հերթին FAPL-ի գործը¹³ սկիզբ էր առել Անգլիայում և վերաբերում էր Պրեմիեր Լիգայի ֆուտբոլային մրցաշարերի հեռարձակմանը, որոնք իրենց մեջ ներառում էին նաև որոշակի մտավոր սեփականության օբյեկտներ (Պրեմիեր Լիգայի օրհներգը և լոգո): Այս օբյեկտների նկատմամբ իրավատերը Պրեմիեր Լիգայի Ֆուտբոլային Ասոցիացիան էր (FAPL), որի միասնական լիցենզիայի հիման վրա թույլատրում էր մրցաշարերի հեռուստատեսային հեռարձակումը ԵՄ տարածքում: Լիցենզիոն վճարներից խուսափելու համար, Մեծ Բրիտանիայում մի շարք ռեստորատորներ օգտագործում էին ապակողավորման սարքավորումներ, որպեսզի կարողանան ստանալ հեռարձակումները այլ պետություններից, այդ թվում՝ Հունաստանից: Դրանից հետո նրանք ցուցադրում էին հեռարձակումները իրենց փաբերում և ռեստորաններում: Այս գործի շրջանակում Արդարադատության Եվրոպական դատարանը, ի թիվս այլոց, պետք է անդրադառնար հեղինակային իրավունքի հնարավոր խախտումներին: Հեղինակային իրավունքը խախտումը քննարկվում էր երկու դիտանկյունից, արդյոք հեռարձակված աշխատանքների ցուցադրումն իր մեջ ընդգրկում է վերարտադրությունը, եթե այո, ապա արդյոք նման վերարտադրությունը ընդգրկվում է Դիրեկտիվի 5-րդ հոդվածով նախատեսված ժամանակավոր վերարտադրության բացառության ներքո: Արդարադատության Եվրոպական դատարանն այն մոտեցմանն էր, որ հեռարձակման ցուցադրությունը իր մեջ ընդգրկում էր վերարտադրության երկու գործողություն: Առաջինը՝ ապակողավորման սարքավորումում աշխատանքների ժամանակավոր օրինակների ստեղծումը, երկրորդը՝ դրանց ցուցադրումը հեռուստատեսային էկրաններին՝ ապակողավորման սարքավորման միջոցով¹⁴: Դատարանը գտավ, որ կիրառելի է Դիրեկտիվի 5-րդ հոդվածով սահմանված բացառությունը, քանի որ, ըստ Դատարանի, նշված գործողությունները նպատակ ունեին միայն ապահովել հեռարձակման ստացումը և իրենց բնույթով ժամանակավոր բնույթ ունեին¹⁵:

Վերոգրյալ երկու գործերը բավական շատ քննարկումների առիթ հանդիսացան: Հատկապես շատ էր քննարկվում այն հանգամանքը, որ նշված գործերով այս կամ հանգամանքի փոփոխությունը կհանգեցնեք Արդարադատության Եվրոպական դատարանի այլ դիրքորոշման¹⁶: Ուստի այս գործերի ներքո հատկապես կարևոր է քննարկել Մեծ Բրիտանիայի Գերագույն դատարանի 2013 թվականի ապրիլի 13-ի «Public Relations Consultants Association Limited (Appellant) v The Newspaper Licensing Agency Limited and others» գործը: Նշված գործը վերաբերում էր կրկին մեդիա մոնիթորինգ իրականացնող ծառայությանը: «Մեյլթոթթի» ընկերությունների խումբը ստեղծել էր ծրագիր, որ տրամադրում էր թերթերի կայքերում հայտնվող բառերի օրական ինդեքսը: Ընթացակարգը հետևյալն էր. «Մեյլթոթթի» հաճախորդները տրամադրում էին որոնողական բառերը, որոնց հիման վրա ընկերությունը տրամադրում էր մշտադիտարկման զեկույց: Մշտադիտարկման զեկույցներն ուղարկվում էին հաճախորդներին էլեկտրոնային փոստով, սակայն միևնույն ժամանակ հասանելի էին ընկերության կայ-

¹² Sեն Pila, Justine, and Paul Torremans. *European intellectual property law*. Oxford University Press, USA, 2019, էջ 289-290:

¹³ Judgment in Cases C-403/08 and C-429/08 *Football Association Premier League and Others v QC Leisure and Others Karen Murphy v Media Protection Services Ltd*, <https://curia.europa.eu/juris/liste.jsf?num=C-403/08&language=en>

¹⁴ Sեն Pila, Justine, and Paul Torremans. *European intellectual property law*. Oxford University Press, USA, 2019, էջ 286:

¹⁵ Թեև Դատարանը այս գործի շրջանակում ամրագրեց, որ առկա է Դիրեկտիվով սահմանված բացառությունը վերարտադրության համար, այն հաստատեց հեղինակային իրավունքի խախտումը հեղինակային մեկ այլ զույգային իրավունքը՝ հանրությանը հաղորդելու իրավունքը:

¹⁶ Sեն Pila, Justine, and Paul Torremans. *European intellectual property law*. Oxford University Press, USA, 2019, էջ 286:

քում¹⁷: Այդ գործի շրջանակում հարցը հետևյալն էր, թե արդյոք հաճախորդները լիցենզիայի կարիք ունեին նման ծառայություններ ստանալու համար, եթե մշտադիտարկման զեկույցը հասանելի լիներ միայն ընկերության կայքում:

Մեծ Բրիտանիայի Գերագույն դատարանը մեծածավալ վերլուծություն էր կատարել՝ մեծ շեշտադրում կատարելով Ինֆոփաքի և ՖԱՊԼ-ի գործերին: Դատարանի մոտեցումն այն էր, որ վերջանական օգտագործողի կողմից (end user) ընկերություն կայքում համապատասխան տեղեկությունները դիտելը հեղինակային իրավունքի խախտում չէ: Ըստ Դատարանի էջերի՝ դիտակումը (browsing) իր բնույթով վերջնական օգտագործողի գործառույթ է: Այս գործողությունները ժամանակավոր վերարտադրության դեպքեր են, որոնք թույլ են տալիս դիտարկումը և ժամանակավոր օրինակների վերարտադրությունն օգտագործողի համակարգչի էկրանին և քեշում (cache): Ըստ դատարանի՝ օրինակները քեշում և համակարգչի էկրանին տեխնոլոգիական գործընթացի անբաժանելի մասն են, քանի որ դրանք ժամանակակից համակարգիչների առանցքային գործառույթներն են: Համացանցում դիտարկում կատարելու գործառույթը չի կարող արդյունավետ և ճշտորեն գործել առանց վերագրյալ վերարտադրության դեպքերի: Վերարտադրության արդյունքում ստեղծված օրինակները ժամանակի ընթացքում ավտոմատ կերպով ջնջվում են և կախված չեն մարդու միջամտությունից: Բացի դրանից՝ օրինակների ստեղծումը չունի ինքնուրույն տնտեսական արժեք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հաճախորդները տպում են կամ ներբեռնում են նյութը¹⁸: Հաշվի առնելով գործի կարևորությունը՝ Մեծ Բրիտանիայի Գերագույն Դատարանը դիմեց Արդարադատության Եվրոպական դատարան՝ պարզելու թե արդյոք վերագրյալ գործողությունները կարող են դիտարկվել որպես Դիրեկտիվի 5-րդ հոդվածով նախատեսված բացառություն, թե ոչ¹⁹:

Իր հերթին Արդարադատության Եվրոպական դատարանն ամրագրեց, որ օգտագործողի համակարգչի էկրանի օրինակները և համակարգչի կոշտ սկավառակում քեշի օրինակները, որոնք ստացվել էին վերջնական օգտագործողի կողմից կայքի դիտելու ընթացքում, Դիրեկտիվի կարգավորումների ներքո պետք է մեկնաբանել որպես ժամանակավոր կամ պատահական վերարտադրություն, որը կազմում է տեխնոլոգիական գործընթացի անքակտելի մաս, ինչը նշանակում է, որ գործում է Դիրեկտիվի 5-րդ հոդվածով նախատեսված բացառությունը և վերարտադրության համար հեղինակային իրավունքի իրավատերերի համաձայնությունը անհրաժեշտ չէ²⁰:

Վերագրյալ որոշումների լույսի ներքո, ամփոփելով վերարտադրության համար սահմանված բացառությունները, կարելի է հանգել նրան, որ Դիրեկտիվը սահմանում է վերարտադրության իրավունքի համար բացառություն հետևյալ դեպքերի համար:

- Վերարտադրությունը պետք է լինի տեխնոլոգիական գործընթացի անհրաժեշտ և անքակտելի մաս: Անհրաժեշտության ներքո պետք է հասկանալ, որ օրինակների ստեղծումը

¹⁷ S’eu Press Summary. Public Relations Consultants Association Limited (Appellant) v The Newspaper Licensing Agency Limited and Others (Respondents) [2013] UKSC 18, <https://www.supremecourt.uk/cases/docs/uksc-2011-0202-press-summary.pdf>:

¹⁸ S’eu Judgment Public Relations Consultants Association Limited (Appellant) v The Newspaper Licensing Agency Limited and others (Respondents), [2013] UKSC 18(April 2013), <https://www.supremecourt.uk/cases/docs/uksc-2011-0202-judgment.pdf>:

¹⁹ S’eu Press Summary. Public Relations Consultants Association Limited (Appellant) v The Newspaper Licensing Agency Limited and Others (Respondents) [2013] UKSC 18, <https://www.supremecourt.uk/cases/docs/uksc-2011-0202-press-summary.pdf>:

²⁰ S’eu Public Relations Consultants Association Ltd v Newspaper Licensing Agency Ltd and Others, C-360-13, (June 2014), <https://h2o.law.harvard.edu/collages/34139>:

թույլ է տալիս ապահովել գործառույթների արդյունավետ և ճշգրիտ իրականացումը²¹:

- Վերարտադրության ընթացքում ստեղծված օրինակները պետք է լինեն ժամանակավոր, որ մեկնաբանվում է այնպես, որ օրինակների ստեղծումը պետք է լինի դիպվածային և հազվադեպ, տեխնոլոգիական գործընթացի էական և անքակտելի մաս: Ինչը նշանակում է, որ հեղինակային իրավունքով պաշտպանվող օբյեկտի պահպանումը և ոչնչացումը պետք է լինի ավտոմատ և կախված չլինի մարդու հետագա միջամտությունից: Օրինակների պահպանումը պետք է լինի այնքան, որքան անհրաժեշտ է համապատասխան տեխնոլոգիական գործընթացը ավարտելու համար²²:

- Նշված բացառությունը վերաբերելի չէ միայն այն դեպքերի համար, երբ վերարտադրման օրինակները կատարվում են միջնորդների միջոցով՝ ցանցում նյութի փոխանցման համար: Այս բացառությունը վերաբերելի է նաև այն դեպքերի համար, երբ օրինակները պետք է փոխանցվեն այլ օգտագործողների ևս՝ պայմանով, որ նրան կողմից օգտագործումը իրավաչափ է²³:

- Միայն այն փաստը, որ բացակայում է իրավատերերի թույլտվությունը, օգտագործումը մեխանիկորեն չի դարձնում ոչ իրավաչափ²⁴:

- Օրինակների ստեղծումը չպետք է ունենա ինքնուրույն տնտեսական նշանակություն: Դա չի նշանակում, որ օրինակների ստեղծումը չպետք է ունենա որևէ առևտրային արժեք, այլ նշանակում է, որ չպետք է ունենա ինքնուրույն արժեք, այսինքն՝ ոչ մի արժեք՝ ի հավելում նրան, որը բխում է նյութը դիտելու կամ թվային եղանակով դրա փոխանցումից²⁵:

Եզրակացություն

Անդրադառնալով ՀՀ կարգավորումներին, պետք է նշել, որ ներկայիս «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ Օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է, որ առանց կատարողի համաձայնության և առանց վարձատրության թույլատրվում են ստեղծագործության վերարտադրման կարճատև կամ հազվադեպ՝ ժամանակավոր գործողությունները, որոնք ինքնուրույն տնտեսական նշանակություն չունեն, տեխնոլոգիական գործընթացի անքակտելի և էական մասն են հանդիսանում և որոնց նպատակն է՝

ա) միջնորդի միջոցով երրորդ կողմերի միջև ցանցում ստեղծագործության տարածման հնարավորության ընձեռումը.

բ) ստեղծագործության օրինական օգտագործման հնարավորության ընձեռումը:

Ակնհայտ է, որ նշված կարգավորումը համահունչ է ԵՄ Դիրեկտիվով ամրագրված մոտեցումներին և լիովին արտացոլում է Դիրեկտիվի եզրութաբանությունը: Թեպետ հայկական իրավակիրառ պրակտիկան առայժմ որևէ կերպ չի անդրադարձել ժամանակավոր վերարտադրության մեկնաբանության կանոններին, այնուամենայնիվ, կարծում ենք, որ ԵՄ-ի

²¹ Տե՛ս Judgment Public Relations Consultants Association Limited (Appellant) v The Newspaper Licensing Agency Limited and others (Respondents), [2013] UKSC 18(April 2013), <https://www.supremecourt.uk/cases/docs/uksc-2011-0202-judgment.pdf>:

²² Տե՛ս նույն տեղում:

²³ UK Supreme Court asks Europe's top court to decide fundamental issues around internet browsing https://www.feldfisher.com/en/insights/uk-supreme-court-asks-europes-top-court-to-decide-fundamental-issues-around-internet-browsing?utm_source=chatgpt.com.

²⁴ Տե՛ս Judgment Public Relations Consultants Association Limited (Appellant) v The Newspaper Licensing Agency Limited and others (Respondents), [2013] UKSC 18(April 2013), <https://www.supremecourt.uk/cases/docs/uksc-2011-0202-judgment.pdf>:

²⁵ Տե՛ս նույն տեղում:

իրավական պրակտիկան կարող է ծառայել որպես ուղեցույց նաև հայկական իրավակիրառ դաշտում՝ ժամանակակից վերարտադրության դեպքերի մեկնաբանության համար: Այս համատեքստում, հիմնական հետազոտությունում ներկայացված մեկնաբանության կանոնները կարող են լիարժեքորեն կիրառվել նաև հայկական իրավակիրառ պրակտիկայում:

Ամփոփագիր: Վերարտադրման իրավունքը հեղինակային և հարակից իրավունքների համակարգի ամենահիմնարկ և առանցքային իրավունքներից է:

Թվային դարաշրջանի տեխնոլոգիական զարգացումները զգալիորեն փոխակերպել են ինչպես վերարտադրման իրավունքի կիրառության, այնպես էլ դրա մեկնաբանության մոտեցումները: Ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս հեղինակային իրավունքի օբյեկտների և կատարումների ամրագրումները վերարտադրել բազմազան ձևաչափերով ու եղանակներով՝ հաճախ ընդամենը մի քանի վայրկյանում ստեղծելով գրեթե անսահմանափակ քանակությամբ օրինակներ:

Այս համատեքստում թվային միջավայրի մարտահրավերները հաշվի առնելով՝ հոդվածը նպատակ ունի վերլուծել վերարտադրման իրավունքից նախատեսված բացառությունները, այն է՝ վերարտադրման կարճատև և հազվադեպ գործողությունները, որոնց համար անհրաժեշտ չէ իրավատիրոջ համաձայնությունը: Հաշվի առնելով, որ հայաստանյան իրավակիրառ պրակտիկան որևէ կերպ չի մեկնաբանել վերարտադրման իրավունքի բացառությունները, հոդվածի վերլուծությունները հիմնված են Եվրոպական խորհրդարանի և Հանձնաժողովի 2001 թվականի մայիսի 22-ի՝ «Տեղեկատվական հասարակությունում հեղինակային իրավունքի և հարակից իրավունքի որոշակի ասպեկտների ներդաշնակեցման վերաբերյալ» 2001/29/EC Դիրեկտիվի, ինչպես նաև Արդարադատության Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի ուսումնասիրության վրա: Սա հատկապես կարևոր է այն հանգամանքի պայմաններում, որ ՀՀ օրենսդրությունը արտացոլում է վերարտադրման իրավունքի վերաբերյալ Դիրեկտիվի եզրութաբանությունը:

Հոդվածն առանձնացնում է կարճատև և հազվադեպ վերարտադրության մեկնաբանության Արդարադատության Եվրոպական դատարանի չափանիշները, որոնք կարող են կիրառելի լինել նաև հայկական իրավակիրառ պրակտիկայում՝ վերարտադրման իրավունքի արդիական մեկնաբանության նպատակով:

Annotation. The right of reproduction constitutes one of the most fundamental and central rights within the framework of copyright and related rights. Technological advancements in the digital age have significantly transformed both the practical application and interpretative approaches to this right. Contemporary technologies allow for the reproduction of copyright-protected works and performances in a wide array of formats and through various means—often enabling the creation of an almost unlimited number of copies within mere seconds.

In this context, and considering the challenges posed by the digital environment, the article seeks to analyze the exceptions to the right of reproduction, namely, the acts of temporary and transient reproduction that do not require authorization from the rights holder. Given the absence of any interpretative guidance on these exceptions within Armenian legal practice, the analysis relies on the provisions of Directive 2001/29/EC of the European Parliament and of the Council of 22 May 2001 on the harmonization of certain aspects of copyright and related rights in the information society, as well as on the case law of the Court of Justice of the European Union (CJEU). This approach is particularly relevant since Armenian legislation reflects the terminology and legal concepts set forth in the Directive with respect to the right of reproduction.

The article identifies and examines the interpretative criteria developed by the CJEU concerning temporary and transient acts of reproduction, which may serve as valuable guidance for the Armenian legal system in adopting a contemporary interpretation of the right of reproduction.

Аннотация. Право на воспроизведение является одним из основополагающих и ключевых прав в системе авторского и смежных прав.

Технологические преобразования цифровой эпохи существенно изменили как сферу применения, так и подходы к толкованию данного права. Современные технологии позволяют воспроизводить объекты авторского права и исполнения в самых различных форматах и способами, зачастую создавая практически неограниченное количество копий всего за несколько секунд.

В этом контексте и с учетом вызовов, обусловленных цифровой средой, настоящая статья направлена на анализ исключений из права на воспроизведение, а именно временных и эпизодических актов воспроизведения, которые не требуют согласия правообладателя. Учитывая, что в правоприменительной практике Республики Армения отсутствует какое-либо толкование указанных исключений, в статье рассматриваются положения Директивы 2001/29/ЕС Европейского парламента и Совета от 22 мая 2001 г. «О гармонизации некоторых аспектов авторского и смежных прав в информационном обществе», а также прецедентная практика Суда Европейского союза. Этот анализ особенно актуален в свете того, что законодательство Республики Армения воспроизводит терминологию и правовые концепции, содержащиеся в указанной Директиве, применительно к праву на воспроизведение.

В статье выделяются и подробно рассматриваются критерии, выработанные Судом Европейского союза при толковании временных и эпизодических актов воспроизведения. Эти критерии представляют собой ценный ориентир и могут быть использованы в правоприменительной практике Армении с целью обеспечения современного понимания права на воспроизведение.

Բանալի բառեր - հեղինակային իրավունք, հարակից իրավունքներ, կատարողներ, վերարտադրության իրավունք, բացառություններ:

Keywords: *copyright, related rights, performers, reproduction right, exceptions.*

Ключевые слова: *авторское право, смежные права, исполнители, право на воспроизведение, исключения.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Alexander, I., The Concept of Reproduction and the “Temporary and Transient” Exception, The Cambridge Law Journal, 68(3), 2009.
2. Aplin, Tanya F., ‘Reproduction’ and ‘Communication to the Public’ Rights in EU Copyright Law: FAPL v QC Leisure, King’s Law Journal, 22(1), 2011.
3. Bently, Lionel, Sherman, Brad, Gangjee, Dev, and Johnson, Phillip, Intellectual Property Law, Sixth Edition, 2022.
4. Infopaq International A/S v Danske Dagblades Forening, [2012] EUECJ C-302/10 (17 January 2012).
5. Judgment of the Court (Fourth Chamber), Infopaq International A/S v Danske Dagblades Forening (16 July 2009).
6. Judgment in Cases C-403/08 and C-429/08 Football Association Premier League and Others v QC Leisure and Others Karen Murphy v Media Protection Services Ltd, ECLI:EU:C:2011:631.
7. Judgment Public Relations Consultants Association Limited (Appellant) v The Newspaper Licensing Agency Limited and Others (Respondents), [2013] UKSC 18 (April 2013).
8. Pila, Justine, and Torremans, Paul, European Intellectual Property Law, Oxford University Press, USA, 2019.
9. Press Summary. Public Relations Consultants Association Limited (Appellant) v The Newspaper Licensing Agency Limited and Others (Respondents), [2013] UKSC 18.
10. Public Relations Consultants Association Ltd v Newspaper Licensing Agency Ltd, EU:C:2014:1195.

11. Rendas, Tito, Copyright, Technology and the CJEU: An Empirical Study, IIC – International Review of Intellectual Property and Competition Law, 49(2), 2018,

12. Rosati, Eleonora, Copyright at the CJEU: Back to the Start (of Copyright Protection), in H. Boshier and E. Rosati (eds.), Developments and Directions in Intellectual Property Law: 20 Years of The IPKat, Oxford University Press, 2023.

13. World Intellectual Property Organization, Guide to the Copyright and Related Rights Treaties Administered by WIPO: And Glossary of Copyright and Related Rights and Terms, WIPO, 2003, էջ 307.

Հովհաննիսյան Ա. - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, էլիասցե՝ arpinehov@gmail.com:

Այվազյան Մ. - Իրավագիտության մագիստրոս, էլիասցե՝ ayvazyan.mariam@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 07.08.2025 թ., տրվել է գրախոսության 07.08.2025 թ., երաշխավորվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Թավադյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2025 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-36>

ՄԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական*

MANE MARKOSYAN

*Ph.D. Student at the Chair of Civil Law,
Faculty of Law, YSU,
Prosecutor General's Office of the RA,
Adviser to the Prosecutor General of the RA*

МАНЕ МАРКОСЯН

*Аспирант кафедры гражданского права
юридического факультета ЕГУ,
Генеральная прокуратура РА,
Советник Генерального прокурора РА*

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**PECULIARITIES OF CONTRACTUAL REGULATION OF SUBSOIL USE
RELATIONS: THE SUBSOIL USE CONTRACT AS A CIVIL LAW
CONTRACT**

**ОСОБЕННОСТИ ДОГОВОРНОГО РЕГУЛИРОВАНИЯ ОТНОШЕНИЙ
НЕДРОПОЛЬЗОВАНИЯ: ДОГОВОР О НЕДРОПОЛЬЗОВАНИИ КАК
ГРАЖДАНСКО-ПРАВОВОЙ ДОГОВОР**

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության համար ընդերքօգտագործման ոլորտի զարգացումն ունի առանցքային նշանակություն¹. Ընդերքօգտագործման ոլորտը մեծ դեր ունի

¹ Տես Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (նախկինում՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով), «Հանքարդյունաբերության ոլորտում իրականացված ուսումնասիրության

ոչ միայն պետական բյուջե վճարված հարկերի և վճարների, այլև արտահանումից ստացվող եկամուտների, օտարերկրյա ուղղակի ներդրումների և աշխատատեղերի ստեղծման տեսանկյունից²:

Ընդերքօգտագործման հարաբերությունների սուբյեկտների տնտեսական գործունեության ազատության ապահովման գործում մեծ դեր ունի ընդերքօգտագործման հարաբերությունների պայմանագրային կարգավորումը:

Ընդերքօգտագործման հարաբերությունների պայմանագրային կարգավորման ինքնուրույն նշանակությունը ընդգծվել է թե՛ միջազգային, թե՛ ներպետական իրավաբանական գրականության մեջ³: Հայրենական գրականության մեջ ընդերքօգտագործման պայմանագրերի կնքումը դիտվել է որպես ՀՀ-ում բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունների պետական կառավարման առաջնահերթ գործառույթներից, ինչպես նաև առաջնայիններից մեկը պետության էկոլոգիական գործառույթի իրականացումն ապահովող մեխանիզմների համակարգում⁴: Ընդ որում, այս ոլորտում պայմանագրերի կնքման անհրաժեշտությունը պայմանավորվել է ընդերքօգտագործման թույլտվությամբ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար վիճահարույց հարաբերությունների շրջանակ կարգավորելու հնարավորության բացակայության հանգամանքով⁵:

Պետք է ընդգծել, որ ներպետական օրենսդրությամբ ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունների նորմատիվ կարգավորումը խիստ թերի է, ինչի պայմաններում գործնականում առաջանում են տարատեսակ վեճեր ընդերքօգտագործողի և պետության միջև⁶:

Այսպես, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի⁷ (այսուհետ՝ նաև «Օրենսգիրք») ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մեր հանրապետությունում ընդերքօգտագործման հարաբերությունների առավելագույն վարչաիրավական-թույլատվական կարգավորման պարագայում⁸ ընդերքօգտագործման պայմանագիրը՝ որպես ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման կառուցակարգ, ածանցված է վարչաիրավական կարգավորումներից և չի կատարում նշված հարաբերությունների կարգավորման ինքնուրույն գործառույթը: Ընդերքօգտագործման պայմանագրային կարգավորման դաշտում որոշ դեպքերում «ավելորդ» վարչարարությունը դառնում է նշված ոլորտում ներդրումային ցածր գրավ-

արդյունքները», էջ 4, <https://competition.am/hy/> (մուտք՝ 12.12.2025 թ.):

² Տես Համաշխարհային բանկ, Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում. Հայաստան, Եր.: Փրինթինգո, 2016, էջ 150, https://www.eiti.am/file_manager/Useful%20materials/StrategicArm.pdf (մուտք՝ 24.12.2025 թ.):

³ Տես *International Senior Lawyers Project, Open Oil, Revenue Watch Institute-Natural Resource Governance Institute, and Vale Columbia Center on Sustainable International Investment*, «Mining Contracts: How to Read and Understand Them» (2013). *Columbia Center on Sustainable Investment Books*. 7, էջ 8, https://scholarship.law.columbia.edu/sustainable_investment_books/7 (մուտք՝ 11.02.2025 թ.), տես նաև *Իսկոյան Ա. Բ., Գեղամյան Օ. Մ., Գրիգորյան Հ. Մ.*, Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունք. Ընդհանուր մաս, Երևան, «Հայրապետ» հրատ., էջեր 311-312:

⁴ Տես *Իսկոյան Ա. Բ., Գեղամյան Օ. Մ., Գրիգորյան Հ. Մ.*, նշված աշխատ., էջեր 311-312:

⁵ Տես նույն տեղը, էջ 322:

⁶ Տես ՀՀ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն, ԱՃԹՆ զեկույց (2016-2017 թթ.), 97-172 էջեր, https://eiti.org/sites/default/files/attachments/armenian_2016-2017_armenia_eiti_report.pdf (մուտք՝ 10.12.2024 թ.):

⁷ Տես ՀՀ ընդերքի մասին օրենսգրքը: Ընդունվել է՝ 28.11.2011: Ուժի մեջ է մտել՝ 01.01.2012: ՀՀՊՏ 2011.12.21/69(872) Հոդ.1661:

⁸ Տես *Թևանյան Ս.*, Կոնցեսիայի պայմանագրի իրավական կարգավորումը, Մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 34:

չության պատճառ⁹:

Այս ամենով հանդերձ ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունների օրենսդրական կարգավորման և ընդերքօգտագործման պայմանագրի՝ որպես քաղաքացիաիրավական պայմանագրի տեսագործնական ուսումնասիրություն ներպետական գրականության մեջ երբևէ չի իրականացվել:

Ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունների համալիր ուսումնասիրության անհրաժեշտությունը բխում է նաև ընդերքօգտագործման ոլորտում մեկնարկած համակարգային բարեփոխումներից, քանի որ ՀՀ-ում առաջին անգամ ընդունվեց Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը¹⁰: Ուստի, ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունների հետազոտությունը կարևոր է ընդերքօգտագործման ոլորտի օրենսդրությամբ սպասվող բարեփոխումներում նշված հարաբերությունների քաղաքացիաիրավական-պայմանագրային կարգավորման արդյունավետ կառուցակարգերի ներդրման և նորմատիվ հիմքի ստեղծման համար:

Սույն հոդվածի շրջանակում կկատարենք ընդերքօգտագործման պայմանագրի հասկացության, տեսակների, ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունների օրենսդրական կարգավորման հիմնախնդիրների, ընդերքօգտագործման պայմանագրի՝ որպես քաղաքացիաիրավական պայմանագրի տարրերի համապարփակ հետազոտություն:

Հիմնական հետազոտություն

«Ընդերքօգտագործման պայմանագիր» եզրույթը տարբեր պետություններում ունի ամենատարբեր անվանումները, որոնցից առավել տարածված են կոնցեսիոն (Կոլումբիա, Բրազիլիա), արտադրանքի բաժանման, ծառայությունների (ռիսկով կամ առանց ռիսկի) (Ռուսաստանի Դաշնություն, Ֆիլիպիններ) պայմանագրերը, ինչպես նաև կիրառվում են ներդրումային (Անգոլա), համատեղ ձեռնարկության (Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Տանզանիա, Չինաստան), ուսումնասիրության և շահագործման պայմանագրերը¹¹: Ընդերքօգտագործման պայմանագրի տարբեր անվանումները պայմանավորված են մի շարք հանգամանքներով. պետության տնտեսական, քաղաքական, իրավական համակարգերը, պետության աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները, ներդրումային միջավայրը, ընդերքօգտագործման նախագծերը¹²:

Մեր հանրապետությունում նախկինում «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի¹³ 3-րդ հոդվածը սահմանում էր կոնցեսիոն պայմանագրի հասկացությունը: 2012 թ. հունվարի 1-ից՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի ուժի մեջ մտնելուց

⁹ Տե՛ս ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը եւ դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվականը) հաստատելու մասին» N 730-Լ որոշումը, (11.05.2023) (12.05.2023), Հավելված N 1, էջ 22:

¹⁰ Տե՛ս ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվականը) հաստատելու մասին» N 730-Լ որոշումը, (11.05.2023) (12.05.2023):

¹¹ Տե՛ս *Flèche E. R.*, *The Mining Review 9th ed.*, (2020), Law Business Research Ltd; ISBN: 978-1-83862-481-1, էջեր 3, 28, 68, 90, 209:

¹² Տե՛ս *Kienzler D., Toledano P., Thomashausen S., Szoke-Burke S.*, *Natural Resource Contracts as a Tool for Managing the Mining Sector*, (2015), էջեր 17, 33, https://scholarship.law.columbia.edu/sustainable_investment_staffpubs/21 (մուտք՝ 10.01.2025 թ.):

¹³ Ընդունվել է 05.11.2002 թ.: Ուժի մեջ է մտել 01.04.2003: Ուժը կորցրել է 01.01.2012: Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2002.11.29/52(227) Հոդ. 1216:

հետո, կոնցեսիոն պայմանագրերի ռեժիմը ՀՀ-ում դադարեց գոյություն ունենալ: Թեև ենթադրվում էր, որ շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց օրենսդիրը նոր Օրենսգրքով պետք է առավել ուշադրության դարձներ ընդերքօգտագործման պայմանագրի հիման վրա ընդերքօգտագործման հարաբերությունների իրավական կարգավորմանը, սակայն Օրենսգրքով նախապատվությունը տրվեց ընդերքօգտագործման հարաբերությունների կարգավորման թույլատվական մեթոդին:

Գործող օրենսդրությամբ ընդերքօգտագործման պայմանագրի իրավական կարգավորման շրջանակը կազմում են ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը¹⁴, որը սահմանում է ընդերքօգտագործման պայմանագրի ընդհանուր իրավական համատեքստը՝ ընդերքօգտագործման պայմանագրի իրավական կարգավորման ընդհանուր նորմերը: Ընդ որում, ընդերքօգտագործման պայմանագրի նկատմամբ կիրառվող քաղաքացիաիրավական ընդհանուր նորմերն են թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պայմանագրերի և պարտավորությունների վերաբերյալ ընդհանուր դրույթները (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 22-30-րդ գլուխներ), թե՛ քաղաքացիական իրավունքի սկզբունքները (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդված): ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը սահմանում է ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունները կարգավորող հատուկ նորմերը: Օրենսգրքի համակարգային ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Օրենսգրքում ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունները կարգավորող ինքնուրույն գլուխ նախատեսված չէ. ընդերքօգտագործման իրավունքի ծագում ենթադրող պայմանագրերի վերաբերյալ դրույթները ցրված են Օրենսգրքի տարբեր գլուխներում:

Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ *ընդերքօգտագործման պայմանագիրը լիազոր մարմնի և ընդերքօգտագործողի միջև կնքված գրավոր համաձայնությունն է, որով սահմանվում են տվյալ ընդերքօգտագործման (երկրաբանական ուսումնասիրությունների կամ օգտակար հանածոների արդյունահանման) իրավունքի տրամադրման պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները*: Ընդերքօգտագործման պայմանագրի նշված սահմանումից կարելի է նկատել, որ այն ձևակերպված է խիստ ընդհանրական ձևով, դրանից միայն բխում է, որ ընդերքօգտագործման պայմանագիրը **կոնսենսուալ, երկկողմանի, գրավոր ձևով** կնքվող պայմանագիր է, սակայն նշված սահմանումը հնարավորություն չի տալիս բացահայտելու ընդերքօգտագործման պայմանագրի առարկան:

Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետից բխում է, որ «*ընդերքօգտագործման պայմանագիր*» ասելով օրենսդիրը նկատի է ունեցել միայն այն պայմանագրերը, որոնց կնքման արդյունքում **սուբյեկտի մոտ ծագում է ընդերքօգտագործման իրավունք** (Օրենսգրքում թվարկված և ընդերքօգտագործման իրավունքի ծագման համար հիմք հանդիսացող մնացած իրավաբանական փաստերի առկայության դեպքում), ինչը համահունչ է ընդերքօգտագործման պայմանագրի էության վերաբերյալ միջազգային ուղեցույցներում տեղ գտած մոտեցումներին¹⁵:

Ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող օրենսդրությամբ ընդերքօգտագործման իրավունքի ծագման համար հիմք հանդիսացող պայմանագրերն են՝ «**երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը**» (Օրենսգրքի 35-րդ հոդված¹⁶), «**օգտակար հանածո-**

¹⁴ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք: Ընդունվել է՝ 05.05.1998թ., Ուժի մեջ է մտել՝ 01.01.1999 թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

¹⁵ Տե՛ս *International Senior Lawyers Project et al.*, նշված աշխատ., էջ 13:

¹⁶ Երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը կնքվում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնության տրամադրման

ների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը» (Օրենսգրքի 41-րդ հոդված) և **«օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը»** (Օրենսգրքի 54-րդ հոդված): Նշված պայմանագրերի օրինակելի ձևերը¹⁷ հաստատված են ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշմամբ (այսուհետ՝ նաև «Օրինակելի ձևեր»)՝¹⁸, որում օգտագործվում են **«օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման պայմանագիր»**, **«օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման պայմանագիր»**, **«ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման պայմանագիր»** եզրույթները:

Հիմք ընդունելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը՝ կարելի է նշել, որ «ընդերքօգտագործման պայմանագիր» եզրույթը և վերը թվարկված եզրույթները՝ որպես ընդերքօգտագործման իրավունքի ծագում ենթադրող և այդ նպատակով կնքվող ընդերքօգտագործման պայմանագրի առանձին դրսևորումներ, ամբողջի և մասի հարաբերակցության մեջ են:

Օրենսգրքում ոչ միայն խիստ ընդհանրական ձևով է տրված «ընդերքօգտագործման պայմանագիր» եզրույթի սահմանումը, այլև նախատեսված չեն ընդերքօգտագործման պայմանագրի **«ընդհանուր դրույթները»**, որոնք բնորոշ են ընդերքօգտագործման իրավունքի տրամադրում ենթադրող բոլոր պայմանագրերին՝ անկախ դրանց առանձին տեսակների առանձնահատկություններից և հնարավորություն կտային ընդերքօգտագործման պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ դիտարկել որպես ինքնուրույն տեսակի պայմանագիր (**«sui generis»**), իսկ երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման պայմանագրերը՝ դրա ենթատեսակներ (ինչպես օրինակ՝ կապալի պայմանագիրը և դրա ենթատեսակները):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ «ընդերքօգտագործման պայմանագիր» եզրույթը օգտագործվում է որպես Օրենսգրքով ընդերքօգտագործման իրավունքի ծագման համար հիմք հանդիսացող բոլոր պայմանագրերի **հավաքական հասկացություն**, սակայն չունի ինքնուրույն նշանակություն, ուստի ընդերքօգտագործման պայմանագիր ասելով չի կարելի հասկանալ ինքնուրույն տեսակի պայմանագիր:

«Ընդերքօգտագործման պայմանագիր» հավաքական հասկացության ներքո պետք է հասկանալ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով սահմանված կարգով կնքվող՝ երկրաբանական ուսումնասիրության, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրերը (դրանց Օրինակելի ձևերը), որոնց կնքման նպատակը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումն է:

Նախանշված տեսանկյունից գտնում ենք, որ ընդերքօգտագործման ոլորտում ծագող

դեպքում: Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ երկրաբանական ուսումնասիրության իրավունքը ընդերքօգտագործման իրավունքի ենթատեսակ է:

¹⁷ Ընդերքօգտագործման ոլորտում օրինակելի պայմանագրերի կիրառման պրակտիկան տարածված է նաև այլ պետություններում (Model Mining Contracts), առավել մանրամասն տես՝ *Kienzler D., Toledano P., Thomashausen S., Szoke-Burke S.*, նշված աշխատ., էջեր 29-31, https://scholarship.law.columbia.edu/sustainable_investment_staffpubs/21 (մուտք՝ 10.01.2025 թ.):

¹⁸ Տես ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 22-ի «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 437-Ն որոշումը: Ընդունվել է 22.03.2012 թ.: Ուժի մեջ է մտել 20.04.2012թ.: ՀՀՊՏ 2012.04.19/20(894).1 Հոդ.463.3:

պայմանագրային հարաբերությունների օրենսդրական կարգավորման ճանապարհին առաջին քայլը պետք է լինի «ընդերքօգտագործման պայմանագիր» եզրույթի ներքո կնքվող բոլոր պայմանագրային հարաբերությունների համակարգային իրավական կարգավորմանը նվիրված առանձին գլուխ նախատեսելը: Ընդ որում, Օրենսգրքում ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունների կարգավորմանը նվիրված առանձին գլխում նախ պետք է նախատեսել ընդերքօգտագործման պայմանագրի ընդհանուր դրույթները, որոնք կսահմանեն ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի նկատմամբ կիրառելի ընդհանուր իրավական նորմերը՝ վերացարկվելով ընդերքօգտագործման պայմանագրի յուրաքանչյուր տեսակին բնորոշ առանձնահատկություններից: Այնուհետև, նախատեսել ընդերքօգտագործման յուրաքանչյուր տեսակի պայմանագրի ներքին առանձնահատկությունները:

Հարկ է նշել, որ ընդերքօգտագործման ոլորտում պայմանագրային հարաբերությունների միասնական կարգավորում նախատեսող առանձին գլուխներ պարունակում են նաև այլ պետությունների՝ ընդերքի ոլորտը կարգավորող օրենսդրությունները (օրինակ՝ Ղազախստան¹⁹): Ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունների միասնական օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունների համալիր իրավական կարգավորման անհրաժեշտությամբ, ինչպես նաև՝ կնքվող ընդերքօգտագործման պայմանագրերի բովանդակային, կնքման, լուծման կարգի առանձնահատկություններով:

Անդրադառնալով ընդերքօգտագործման պայմանագրի տարրերին, պետք է ընդգծել, որ ի տարբերություն դասական քաղաքացիաիրավական պայմանագրերի, ընդերքօգտագործման պայմանագրի դեպքում գործ ունենք բարդ և բազմաշերտ իրավահարաբերությունների հետ: Ընդերքօգտագործման պայմանագրի **սուբյեկտներից** մեկը միշտ ընդերքի բացառիկ սեփականատերն է՝ պետությունը, որն ունի երկակի դեր՝ կարող է լինել միաժամանակ քաղաքացիական և վարչական իրավունքի սուբյեկտ (ունիվերսալ իրավունակություն²⁰): Սակայն, եթե որպես վարչական իրավունքի սուբյեկտ պետությունը միակողմանի կամահայտնությամբ է որոշում հարաբերությունների բնույթը և բովանդակությունը, ապա ընդերքօգտագործման պայմանագիրը կողմերի համաձայնեցված կամքի դրսևորումն է, այս դեպքում կողմերն իրավահավասար են և ունեն գույքային ինքնուրույնություն: Իսկ պետությունը որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ սահմանափակված է ՀՀ Սահմանադրության²¹ 6-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքի սահմաններում իր սեփական գույքի իրավական ռեժիմը որոշելու հրամայականով: Այս տեսանկյունից գտնում ենք, որ պետության ունիվերսալ իրավունակությունը չի փոփոխում պետության մասնակցությամբ քաղաքացիաիրավական կարգավորման ենթակա հարաբերությունների բնույթը, ուստի համաձայն չենք այն հեղինակների դիրքորոշմանը (**Բ. Դ. Կյուկին, Ա. Վ. Դեմին, Դ. Վ. Խաուստով, Վ. Գ. Ռոզենֆելդ, Դ. Ն. Բախրախ, Ս.Ջ. Չիմանով**²²), որոնք գտնում են, որ ընդերքօգտագործման պայմանագիրը, պետության մասնակցության փաստով պայմանավորված, պետք է դիտարկել որպես վարչա-

¹⁹ Sեն Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017 No. 125-VI ZRK «About Subsoil and Subsurface Use» (as amended on 21.05.2024), Գլուխ 2 (Contractual Mode of Subsurface Use), https://online.zakon.kz/Document/?doc_id=106032025 թ.):

²⁰ Sեն *Բարսեղյան Տ. Կ.*, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս (չորրորդ հրատարակություն), Երևանի պետ. համալսարան, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2014, 171-172 էջեր:

²¹ Ընդունվել է 06.12.2015: Ուժի մեջ է մտել 22.12.2015: Sեն ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

²² Sեն *Савостьянов А. Г.*, Правовое регулирование предпринимательской деятельности в сфере недропользования, Москва 2011, 12.00.03., гражданское право; предпринимательское право; семейное право; международное частное право, էջ 82-83:

կան (հանրային), այլ ոչ թե քաղաքացիաիրավական պայմանագիր:

Ընդերքօգտագործման պայմանագրի մյուս սուբյեկտը՝ ընդերքօգտագործողը, այն իրավաբանական անձն է (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունները), որն ունի ընդերքօգտագործման իրավունք (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ և գլուխ 3, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մաս): Հատկանշական է, որ ի տարբերություն այլ պետությունների օրենսդրությունների, որտեղ ընդերքօգտագործման իրավունք կարող են ձեռք բերել և քաղաքացիները, և իրավաբանական անձինք²³, մեր օրենսդրությունն ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման հնարավորություն նախատեսել է միայն իրավաբանական անձանց համար:

Անդրադառնալով ընդերքօգտագործման պայմանագրերի **առարկային և օբյեկտին**²⁴ նշենք, որ ընդերքօգտագործման պայմանագրերի առարկան պետության և ընդերքօգտագործողի միջև իրականացվող համաձայնեցված գործողությունների ամբողջությունն է, որի նպատակն է ներգործել պայմանագրի օբյեկտի վրա և ապահովել պայմանագրի նպատակի իրականացումը, որը մի դեպքում՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունն է (օգտակար հանածոների արդյունահանման նպատակով կամ առանց դրա), իսկ մյուս դեպքում՝ օգտակար հանածոյի արդյունահանումը²⁴: Իսկ ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի օբյեկտը այն նյութական և ոչ նյութական բարիքներն են (օգտակար հանածո, երկրաբանական տեղեկություն և այլն), որոնք կողմերը ստանում են ընդերքօգտագործման պայմանագրերի առարկան կազմող համաձայնեցված գործողությունների կատարման արդյունքում²⁵:

Ընդերքօգտագործման պայմանագրի առարկայի և օբյեկտի քննարկման համատեքստում շատ կարևոր է նաև տարբերակել ընդերքօգտագործման պայմանագրերը և ընդերքօգտագործման ոլորտում կնքվող այլ տեսակի պայմանագրերը (գրավի, աշխատանքային, հողօգտագործման և այլն)²⁶, որոնք չեն ենթադրում ընդերքօգտագործման իրավունքի ծագում, դուրս են ընդերքօգտագործման պայմանագրի կարգավորման առարկայի շրջանակից, կնքվում են ընդերքօգտագործողի կողմից իր պարտավորությունների կատարմանը «օժանդակելու» նպատակով²⁷:

Ընդերքօգտագործման պայմանագրի բովանդակությունն են կազմում այն պայմանները, որոնց շուրջ համաձայնություն ձեռք բերելով կողմերը սահմանում են իրենց իրավունքները և պարտավորությունները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Նույն հոդվածում որպես պայմանագրի էական պայմաններ առանձնացվում են՝ 1) պայմանագրի առարկայի մասին պայմանները, 2) օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, 3) այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

Պետք է ընդգծել, որ ՀՀ օրենսդրությամբ ընդերքօգտագործման պայմանագրերի էական

²³ Տե՛ս *ICLG, The International Comparative Guide to: Mining Law 2018*, 5th edition, Global Legal Group, էջ 108, https://www.acc.com/sites/default/files/resources/vl/membersonly/Article/1470790_1.pdf (մուտք՝ 18.05.2025թ.):

²⁴ Տե՛ս *Неделько А.А.*, Гражданско-правовой договор добычи полезных ископаемых; Научный руководитель - к.ю.н., профессор И.В. Бакаева, Казань, 2015, էջ 94:

²⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 95:

²⁶ Ընդերքօգտագործման ոլորտում կնքվող այլ պայմանագրերի ուսումնասիրությունը և վերլուծությունը սույն հետազոտության շրջանակում ներառված չէ:

²⁷ Տե՛ս *International Senior Lawyers Project et al.*, նշված աշխատ, էջ 16:

պայմանները ուղղակիորեն սահմանված չեն, սակայն Օրենսգրքի 35-րդ, 41-րդ և 54-րդ հոդվածներում թվարկված են ընդերքօգտագործման յուրաքանչյուր տեսակի պայմանագրում՝ «նախատեսման ենթակա» պայմանները, իսկ Օրինակելի ձևերում՝ ընդերքօգտագործման պայմանագրի տվյալ տեսակի բովանդակությունը կազմող բոլոր պայմանները:

Նշված համատեքստում տեսագործնական կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե արդյոք Օրենսգրքի 35-րդ, 41-րդ և 54-րդ հոդվածներում, ինչպես նաև՝ Օրինակելի ձևերում սահմանված բոլոր պայմանները օրենսդրությամբ նախատեսված լինելու ուժով համարվում են ընդերքօգտագործման պայմանագրի էական պայմաններ:

Ինչպես գիտենք, օրենսդիրը պայմանագրի էական պայմանների համաձայնեցման հարցը կապում է պայմանագրի կնքման փաստի հետ. այդպիսի պայմաններից թեկուզ մեկի շուրջ կողմերի համաձայնության բացակայության իրավական հետևանքը պայմանագրի չկնքված լինելն է: Միաժամանակ, Օրենսգրքի 35-րդ, 41-րդ և 54-րդ հոդվածների բովանդակությունից բխում է, որ նշված պայմանները չեն կարող համարվել ընդերքօգտագործման պայմանագրերի «սովորական պայմաններ», քանի որ դրանց բովանդակությունը դիսպոզիտիվ չէ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի շրջանակում անդրադառնալով Օրենսգրքի 35-րդ, 41-րդ և 54-րդ հոդվածներում սահմանված պայմաններին՝ գտնում ենք, որ դրանցից որոշների նախատեսումը որպես ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի համար անհրաժեշտ պայմաններ արդարացված է: Այսպես, Օրենսգրքի՝ ընդերքօգտագործման պայմանագրերում նախատեսման ենթակա պայմանները սահմանող հոդվածների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի համար ընդհանուր են հետևյալ պայմանները՝ *աշխատանքի կատարման ժամկետները, պայմանագրի գործողության ժամկետը, տրամադրվող տեղամասի ծայրակետային կոորդինատները և այլն*: Նշված պայմանները սահմանված են նաև որպես թույլտվության մեջ նախատեսման ենթակա պայմաններ (Օրենսգրքի 37-րդ, 53-րդ հոդվածներ):

Նշենք, որ աշխատանքի կատարման ժամկետները, պայմանագրի գործողության ժամկետը, տրամադրվող տեղամասի ծայրակետային կոորդինատները որպես ընդերքօգտագործման պայմանագրերում կամ լիցենզիաներում պարտադիր նախատեսման ենթակա պայմաններ սահմանված են նաև օտարերկրյա պետությունների օրենսդրություններով²⁸: Ըստ էության, վերը նշված պայմանները պայմանագրի առարկան և օբյեկտը որոշակիացնող պայմաններն են: Այսպիսով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածը՝ գտնում ենք, որ Օրենսգրքում ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի համար սահմանված և պայմանագրի առարկան և օբյեկտը որոշակիացնող պայմանները (աշխատանքի կատարման ժամկետները, պայմանագրի գործողության ժամկետը, տրամադրվող տեղամասի ծայրակետային կոորդինատները) ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի համար էական պայմաններ են, ուստի դրանց՝ համաձայնեցված չլինելու դեպքում ընդերքօգտագործման պայմանագրերը պետք է համարել չկնքված:

Պետք է նկատել, որ Օրենսգրքի 35-րդ, 41-րդ և 54-րդ հոդվածներում ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի էական պայմանների ցանկն ունի ոչ միայն հստակեցման, այլև վերանայման անհրաժեշտություն: Այսպես, Օրենսգրքի 35-րդ հոդվածում որպես երկրաբանական ուսումնասիրության պայմանագրում նախատեսման ենթակա պայման է նշվում *«իրական շահառուի փոփոխության պետական գրանցումից հետո փոփոխության մասին լի-*

²⁸ S՜u Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017 No. 125-VI ZRK «About Subsoil and Subsurface Use» (as amended on 21.05.2024), հոդված 36, տե՛ս նաև Приказ Минприроды России от 29.09.2009 N 315 (ред. от 31.05.2016) https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_96376/ (մուտք՝ 06.03.2025 թ.):

ազոր մարմնին 14 օրվա ընթացքում տեղեկացնելու պարտականությունը»: Ստացվում է, որ այս պարտավորությունը պայմանագրում չնախատեսելու դեպքում այն պետք է համարվի չկնքված: Մինչդեռ, նշված պայմանը կողմերի միջև համաձայնեցված չլինելու դեպքում ընդերքօգտագործման պայմանագիրը չկնքված համարելը տրամաբանական չի լինի, քանի որ իրական շահառուի փոփոխություն պայմանագրի գործողության ընթացքում ընդերքօգտագործողի մոտ հնարավոր է երբևէ չլինի, իսկ պայմանագրում նախատեսված չլինելու դեպքում նշված պայմանը կարող է նախատեսվել պայմանագրի գործողության ընթացքում կամ կիրառվել Օրենսգրքում նշված պարտավորության նախատեսված լինելու ուժով: Ավելին, Օրենսգրքի 35-րդ հոդվածում երկրաբանական ուսումնասիրության պայմանագրում նախատեսման ենթակա նշված պայմանը բացակայում է Օրինակելի ձևի տեքստում (Հավելված N 3):

Ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի համար էական պայմաններ պետք է համարել նաև **ընդերքօգտագործման վճարների վերաբերյալ պայմանները** (Օրենսգրքի 35-րդ հոդվածում երկրաբանական ուսումնասիրության պայմանագրում նախատեսման ենթակա պայմանների շարքում թվարկված չեն), քանի որ դրանք ուղղակիորեն կապված են ընդերքօգտագործման պայմանագրի առարկայի հետ՝ հիմք ընդունելով ընդերքօգտագործման վճարվիության սկզբունքը՝ ընդերքօգտագործողը պայմանագրով նախատեսված աշխատանքները պարտավոր է կատարել իր հաշվին: Բացի այդ, ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի համար էական պայմաններ են նաև **երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ծավալի և տեսակների մասին** պայմանները²⁹:

Անդրադառնալով ընդերքօգտագործման յուրաքանչյուր պայմանագրին առանձնահատուկ էական պայմաններին՝ պետք է նկատել, որ Օրենսգրքի 35-րդ, 41-րդ և 54-րդ հոդվածներում պայմանագրի յուրաքանչյուր տեսակի համար նախատեսված են առանձին անհրաժեշտ պայմաններ: Այսպես, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագրի համար որպես նախատեսման ենթակա պայման, ի թիվս վերոնշյալ պայմանների, նախատեսվում են նաև **օգտակար հանածոների տեսակները**, որոնց ուսումնասիրությունը և հետագա արդյունահանումը թույլ են տրվում ընդերքօգտագործողին, իսկ օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համար՝ **այն օգտակար հանածոների և (կամ) ուղեկից բաղադրիչների անվանումները**, որոնց արդյունահանումը թույլ է տրվում ընդերքօգտագործողին:

Մեր կարծիքով, օգտակար հանածոների (դրանց ուղեկից բաղադրիչներ) անվանումները, տեսակները և դրանց մասին պայմանները (պաշարների քանակ ըստ կարգերի և այլն) պետք է համարել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրերի էական պայմաններ, քանի որ տվյալ պայմանագրերի նպատակը ուղղակիորեն կապված է օգտակար հանածոյի արդյունահանման հետ: Այսպիսով, գտնում ենք, որ նշված պայմանագրերում օգտակար հանածոյի մասին պայմանը կհամարվի համաձայնեցված, եթե թույլ կտա որոշել օգտակար հանածոյի անվանումը, տեսակը, ընդերքի տեղամասում հաստատված օգտակար հանածոյի պաշարների քանակը: Միաժամանակ, օգտակար հանածոյի մասին պայմանը չի կարող համարվել ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագրի էական պայման՝ հաշվի առնելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

²⁹ Տե՛ս Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017 No. 125-VI ZRK «About Subsoil and Subsurface Use» (as amended on 21.05.2024), հոդված 36:

տվյալ պայմանագրի բովանդակությունը կազմող աշխատանքների շրջանակը:

Ելնելով ողջ վերոգրյալից՝ գտնում ենք, որ Օրենսագրքով ընդերքօգտագործման պայմանագրերի էական պայմանների հստակեցման համատեքստում պետք է հաշվի առնել, որ չնայած որոշ էական պայմաններ (աշխատանքի նպատակը, աշխատանքի կատարման ժամկետները և այլն) ընդհանուր են ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի համար, սակայն, կախված ընդերքօգտագործման իրավունքի նպատակից և տեսակից, ընդերքօգտագործման պայմանագրերն ունեն տվյալ պայմանագրի համար էական համարվող առանձին պայմաններ:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում ընդերքօգտագործման պայմանագրերի Օրինակելի ձևերին, մեր կարծիքով, դրանք իրենց բնույթով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված օրինակելի պայմանագրեր են (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 443-րդ հոդված)³⁰, քանի որ Օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի³¹ ուժով ընդերքօգտագործման պայմանագիրը կարող է նաև «պարունակել կողմերի հարաբերությունները կարգավորող և օրենսդրությանը չհակասող այլ պայմաններ»:

Չնայած Օրենսգրքից ուղղակիորեն չի բխում, որ կնքվող ընդերքօգտագործման պայմանագրերի բովանդակությունը պարտադիր պետք է համապատասխանի Օրինակելի ձևերին³², մեր կարծիքով դա ենթադրվում է՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ մասը և 438-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին)»:

Բացի այդ, գործնականում ընդերքօգտագործման պայմանագրերի զգալի մասը պարզապես տառացի կրկնում է ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման հավելվածներով հաստատված ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերի բովանդակությունը: Ստացվում է, որ ընդերքօգտագործողի և պետության միջև ընդերքօգտագործման պայմանագրի պայմանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ գլխով սահմանված կարգով չեն համաձայնեցվում, այլ փոխարենը յուրաքանչյուր դեպքում ընդերքօգտագործողի կողմից ընդունվում են պետության կողմից միակողմանի կարգով հաստատված պայմանները:

Նշված համատեքստում գտնում ենք, որ Օրինակելի ձևերում նախատեսված բոլոր պայմանները ոչ թե ընդերքօգտագործման պայմանագրի էական պայմաններ են, այլ, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ մասը և 438-րդ հոդվածի 1-ին մասը, իմպերատիվ նորմեր են, որոնց պետք է համապատասխանի ընդերքօգտագործման պայմանագիրը: Հակառակ դեպքում կստացվի, որ ընդերքօգտագործման պայմանագրում Օրինակելի ձևերի, որոնցում շարադրված են ընդերքօգտագործման պայմանագրերի ողջ բովանդակությունը կազմող պայմանները, ցանկացած պայմանի չնախատեսումը ընդերքօգտագործման պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի հիմքով չկնքված

³⁰ Տե՛ս Բարսեղյան Տ. Կ., նշված աշխատ., էջ 447:

³¹ Հատկանշական է, որ Օրենսգրքով նախատեսվել է միայն օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման պայմանագրի պայմանները փոփոխելու հնարավորություն, իսկ երկրաբանական ուսումնասիրության պայմանագրերի պայմանները փոփոխելու հնարավորություն անհասկանալի պատճառներով նախատեսված չէ:

³² Օրենսգրքը հստակ չի արձանագրում, որ կնքվող ընդերքօգտագործման պայմանագրերը պարտադիր պետք է համապատասխանեն Օրինակելի ձևերին, ինչպես նաև չի արձանագրում, որ Օրինակելի ձևի փոփոխումն առաջ է բերում ընդերքօգտագործողի՝ պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրեր ստորագրելու պարտավորություն:

համարելու հիմք կհանդիսանա:

Ամփոփելով ողջ վերոգրյալը՝ պետք է ընդգծել, որ պետությունը ընդերքօգտագործման հարաբերությունների պայմանագրային կարգավորման դեպքում որդեգրել է ընդերքօգտագործման պայմանագրի պայմանները միակողմանի կարգով թելադրելու քաղաքականությունը՝ միաժամանակ չհստակեցնելով ընդերքօգտագործման պայմանագրի էական պայմանների շրջանակը: Հաշվի առնելով քաղաքացիական իրավունքում պայմանագրերի էական պայմանների բացառիկ գործառույթը, մեր կարծիքով, Օրենսգրքով անհրաժեշտ է վերանայել և համակարգել ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի համար ընդհանուր և ընդերքօգտագործման յուրաքանչյուր տեսակի պայմանագրին հատուկ էական պայմանները:

Եզրակացություն

Ամփոփելով սույն աշխատանքում կատարված հետազոտության արդյունքները՝ կատարել ենք մի շարք եզրահանգումներ, որոնցից առավել էականները հանգում են հետևյալին.

1) ՀՀ օրենսդրությամբ «*ընդերքօգտագործման պայմանագիր*» եզրույթն օգտագործվում է որպես ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով ընդերքօգտագործման իրավունքի ծագման համար հիմք հանդիսացող բոլոր պայմանագրերի **հավաքական հասկացություն**, սակայն չունի ինքնուրույն նշանակություն: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում «*ընդերքօգտագործման պայմանագիր*» հավաքական եզրույթի ներքո պետք է հասկանալ այն պայմանագրերը (երկրաբանական ուսումնասիրության պայմանագիր, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագիր, օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը), որոնց կնքման նպատակը սուբյեկտին ընդերքօգտագործման իրավունք տրամադրելն է: Ուստի, ներպետական օրենսդրական կարգավորումները թույլ չեն տալիս ընդերքօգտագործման պայմանագիրը համարել ինքնուրույն տեսակի («*sui generis*») պայմանագիր, իսկ երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման պայմանագրերը՝ դրա ենթատեսակներ (ինչպես օրինակ՝ կապալի պայմանագիրը և դրա ենթատեսակներ):

2) Ընդերքօգտագործման ոլորտում ծագող պայմանագրային հարաբերությունների նորմատիվ-իրավական կարգավորումը պետք է զարգանա ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունների միասնական կարգավորման ուղղությամբ՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով ընդերքօգտագործման պայմանագրերին նվիրված առանձին գլուխ նախատեսելու միջոցով: Ընդ որում, ընդերքօգտագործման պայմանագրային կարգավորման ունիֆիկացիան պետք է կատարվի՝ նախատեսելով ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի նկատմամբ կիրառելի ընդհանուր դրույթները և պայմանագրերից յուրաքանչյուրի ներքին առանձնահատկությունները սահմանող նորմերը:

3) ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում ընդերքօգտագործման պայմանագրերի էական պայմանները ուղղակիորեն սահմանված չեն. Օրենսգրքի 35-րդ, 41-րդ, 54-րդ հոդվածներում թվարկված են ընդերքօգտագործման պայմանագրերում նախատեսման ենթակա պայմանները: Ուստի այս տեսանկյունից առկա է Օրենսգրքով ընդերքօգտագործման պայմանագրերի էական պայմանների համակարգման անհրաժեշտություն:

4) ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 35-րդ, 41-րդ և 54-րդ հոդվածներում որպես ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերում նախատեսման ենթակա պայմաններ սահմանված՝ ընդերքօգտագործման պայմանագրի առարկան և օբյեկտը որոշակիացնող պայմանները (աշխատանքի կատարման ժամկետները, պայմանագրի գործողության ժամկետը, տրամադրվող տեղամասի ծայրակետային կոորդինատները) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդ-

վաճի իմաստով ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի համար էական պայմաններ են: Ուստի, եթե կողմերը նշված պայմանների շուրջ համաձայնություն ձեռք չեն բերել, ապա ընդերքօգտագործման պայմանագրերը պետք է համարել չկնքված:

Առաջարկում ենք Օրենսգրքով ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի համար որպես էական պայմաններ նախատեսել նաև ընդերքօգտագործման վճարների վերաբերյալ պայմանները, ինչպես նաև՝ երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ծավալի և տեսակների մասին պայմանները:

5) Չնայած ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերն ունեն ընդհանուր էական պայմաններ, ընդերքօգտագործման պայմանագրի յուրաքանչյուր տեսակ ունի հենց այդ տեսակի համար էական համարվող պայմաններ (օրինակ՝ օգտակար հանածոյի մասին պայմանը օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրերի դեպքում), ինչը պայմանավորված է ընդերքօգտագործման իրավունքի տարբեր տեսակներով և նպատակներով, կողմերի իրավահարաբերությունների բովանդակային առանձնահատկություններով:

Նախանշված տեսանկյունից առաջարկում ենք ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում ընդերքօգտագործման պայմանագրերի էական պայմանների համակարգումը կատարել՝ որպես ելակետ ընդունելով այն հանգամանքը, որ ընդերքօգտագործման պայմանագրերն ունեն ինչպես բոլոր պայմանագրերի համար ընդհանուր, այնպես էլ ընդերքօգտագործման պայմանագրի տվյալ տեսակին հատուկ էական պայմաններ:

6) ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման հավելվածներով հաստատված ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերում նախատեսված բոլոր պայմանները ընդերքօգտագործման պայմանագրի էական պայմաններ համարել չի կարելի. հակառակ դեպքում կիմաստագրվի քաղաքացիական իրավունքում էական պայմանների ինստիտուտի բացառիկ նշանակությունը և կստացվի, որ Օրինակելի ձևերի ցանկացած պայմանի չնախատեսման դեպքում ընդերքօգտագործման պայմանագրերը պետք է համարել չկնքված: Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ մասը և 438-րդ հոդվածի 1-ին մասը՝ գտնում ենք, որ Օրինակելի ձևերի բովանդակությունը կազմող պայմանները պետք է մեկնաբանել որպես իմպերատիվ նորմեր, որոնց պետք է համապատասխանի ընդերքօգտագործման պայմանագիրը:

Ամփոփագիր: Հեղինակը հոդվածում քննարկման առարկա է դարձրել ընդերքօգտագործման պայմանագրի հասկացությունը, ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունների օրենսդրական կարգավորման խնդիրները և առանձնահատկությունները՝ այս համատեքստում օրենսդրության զարգացման ուղղությունները, ինչպես նաև՝ ընդերքօգտագործման պայմանագրի տարրերը:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի ուսումնասիրության արդյունքում հեղինակը եկել է այն եզրահանգման, որ ներպետական իրավական կարգավորումների պարագայում «ընդերքօգտագործման պայմանագիր» եզրույթն օգտագործվում է որպես ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման նպատակով կնքվող բոլոր պայմանագրերի համար հավաքական հասկացություն և չունի ինքնուրույն նշանակություն:

Ընդերքօգտագործման պայմանագրերի էական պայմանների հետազոտության արդյունքում հեղինակն առանձնացրել է ընդերքօգտագործման բոլոր պայմանագրերի համար ընդհանուր էական պայմանները: Անդրադարձ է կատարվել է նաև օրենսդրությամբ ընդերքօգտագործման պայմանագրերի էական պայմանները համակարգելու, ինչպես նաև՝ ընդերքօգտագործման տվյալ տեսակի պայմանագրին հատուկ էական պայմաններ սահմանելու առանձնահատկություններին: Այնուհետև, հեղինակն անդրադարձել է ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման հավելվածներով հաստատված՝ ընդերքօգտա-

գործման պայմանագրերի բովանդակությունը կազմող պայմանների իրավական նշանակության հարցերին:

Հեղինակն առաջարկել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով ունիֆիկացնել ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում ընդերքօգտագործման ոլորտում կնքվող պայմանագրերին նվիրված առանձին գլուխ նախատեսելու միջոցով, ինչպես նաև համակարգել ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով ընդերքօգտագործման պայմանագրերի էական պայմանները՝ աշխատանքում կատարված վերլուծության համատեքստում:

Annotation. In the article, the author discussed the concept of a subsoil use contract, the legislative regulation issues and characteristics of contractual relations in subsoil use, directions for the development of legislation in this context, as well as the elements of a subsoil use contract.

As a result of studying the RA Subsoil Code, the author concluded that under the current domestic legal regulations, the term «subsoil use contract» is used as a collective concept for all contracts concluded for the purpose of granting the right to use subsoil and does not have an independent meaning.

Based on the study of the essential terms of subsoil use contracts, the author identified the common essential terms that apply to all such contracts. The peculiarities of systematizing the essential terms of subsoil use contracts by law, as well as defining essential terms specific to particular types of subsoil use contracts were also addressed. Furthermore, the author examined the legal significance of the terms comprising the content of subsoil use contracts, as approved by the annexes to the RA Government Decision No. 437-N of March 22, 2022.

The author proposed to unify the legal norms regulating contractual relations in the field of subsoil use under the RA Subsoil Code by including a separate chapter dedicated to contracts concluded in the subsoil use sector, and to systematize the essential terms of subsoil use contracts based on the analysis presented in the study.

Аннотация. Автор в статье рассмотрел понятие «договор недропользования», вопросы законодательного регулирования договорных отношений в сфере недропользования и их особенности, направления развития законодательства в данном контексте, а также элементы договора недропользования.

В результате изучения Кодекса Республики Армения «О недрах» автор пришёл к выводу, что в рамках действующего национального правового регулирования термин «договор недропользования» используется как собирательное понятие для всех договоров, заключаемых с целью предоставления права недропользования, и не имеет самостоятельного юридического значения.

На основании исследования существенных условий договоров недропользования автор выделял общие существенные условия, характерные для всех видов таких договоров. Кроме того, были рассмотрены особенности систематизации существенных условий договоров недропользования в законодательстве, а также определение существенных условий, характерных для отдельных видов договоров недропользования. Далее автор анализировал правовое значение условий, составляющих содержание договоров недропользования, утвержденных приложениями к постановлению Правительства Республики Армения № 437-Н от 22 марта 2022 г.

В данной статье автор предлагает унифицировать правовые нормы, регулирующие договорные отношения в сфере недропользования, в рамках Кодекса РА о недрах путем включения отдельной главы, посвященной договорам, заключаемым в сфере недропользования, а также систематизировать существенные условия договоров недропользования на основе анализа, представленного в работе.

Բանալի բառեր - ընդերքօգտագործման իրավունք, ընդերքօգտագործման պայմանագիր, քաղաքացիաիրավական պայմանագիր, երկրաբանական ուսումնասիրության պայմանագիր, օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիր, էական պայման, օրինակելի պայմանագիր:

Keywords: Subsoil use right, subsoil use contract, civil law contract, geological exploration contract, mineral extraction contract, essential term, model contract.

Ключевые слова: право недропользования, договор недропользования, гражданско-правовой договор, договор на геологическое изучение, договор на добычу полезных ископаемых, существенное условие, типовый контракт.

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն: Ընդունվել է 06.12.2015: Ուժի մեջ է մտել 22.12.2015: ՏԵՍ ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք: Ընդունվել է՝ 05.05.1998թ., Ուժի մեջ է մտել՝ 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
3. ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք: Ընդունվել է՝ 28.11.2011: Ուժի մեջ է մտել՝ 01.01.2012: ՀՀՊՏ 2011.12.21/69(872) Հոդ.1661:
4. ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 22-ի «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 437-Ն որոշումը: Ընդունվել է 22.03.2012թ.: Ուժի մեջ է մտել 20.04.2012թ.: ՀՀՊՏ 2012.04.19/20(894).1 Հոդ.463.3:
5. ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը եւ դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվականը) հաստատելու մասին» N 730-Լ որոշումը, (11.05.2023) (12.05.2023):
6. ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվականը) հաստատելու մասին» N 730-Լ որոշումը, (11.05.2023) (12.05.2023):
7. «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքը: Ընդունվել է 05.11.2002 թ.: Ուժի մեջ է մտել 01.04.2003: Ուժը կորցրել է 01.01.2012: Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2002.11.29/52(227) Հոդ. 1216:
8. Բարսեղյան Ս. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս (չորրորդ հրատարակչություն), Երևանի պետ. համալսարան, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2014, 560 էջ:
9. Թևանյան Ս. Վ., Կոնցեսիայի պայմանագրի իրավական կարգավորումը, Մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 180 էջ:
10. Իսկոյան Ա. Բ., Գեղամյան Օ. Մ., Գրիգորյան Հ. Ս., Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունք. Ընդհանուր մաս, Երևան, «Հայրապետ» հրատ., 415 էջ:
11. Համաշխարհային բանկ, Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում. Հայաստան, Եր.: Փրինթինֆո, 2016, 166 էջ, https://www.eiti.am/file_manager/Useful%20materials/StrategicArm.pdf (մուտք՝ 24.12.2025թ.):
12. ՀՀ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն, ԱԶԹՆ զեկույց (2016-2017 թթ.), 363 էջ, <https://eiti.org/sites/default/files/attachments/> (մուտք՝ 10.12.2024 թ.):
13. Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (նախկինում՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով), «Հանքարդյունաբերության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները», 81 էջ, <https://competition.am/hy/> (մուտք՝ 12.12.2025 թ.):
14. Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017 No. 125-VI ZRK «About Subsoil and Subsurface Use» (as amended on 21.05.2024), <https://online.zakon.kz/Document/> (մուտք՝ 06.03.2025 թ.):
15. Flèche E. R., The Mining Review 9th ed., (2020), Law Business Research Ltd; ISBN: 978-1-83862-481-1, 304 էջ:
16. ICLG, The International Comparative Guide to: Mining Law 2018, 5th edition, Published by Global Legal Group, 245 էջ, https://www.acc.com/sites/default/files/resources/vl/membersonly/Article/1470790_1.pdf (մուտք՝ 18.05.2025թ.):

17. International Senior Lawyers Project, Open Oil, Revenue Watch Institute-Natural Resource Governance Institute, and Vale Columbia Center on Sustainable International Investment, Mining Contracts: How to Read and Understand Them (2013). Columbia Center on Sustainable Investment Books. 7, 222 էջ, https://scholarship.law.columbia.edu/sustainable_investment_books/7 (մուտք՝ 11.02.2025թ.):

18. Kienzler D., Toledano P., Thomashausen S., Szoke-Burke S., Natural Resource Contracts as a Tool for Managing the Mining Sector, (2015), 69 էջ, https://scholarship.law.columbia.edu/sustainable_investment_staffpubs/21 (մուտք՝ 10.01.2025 թ.):

19. Савостьянов А.Г., Правовое регулирование предпринимательской деятельности в сфере недропользования, Москва 2011, 12.00.03., гражданское право; предпринимательское право; семейное право; международное частное право, 237 էջ:

20. Приказ Минприроды России от 29.09.2009 N 315 (ред. от 31.05.2016) https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_96376/ (մուտք՝ 06.03.2025 թ.):

Մարկոսյան Մ. - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական, էլիասցե՝ mane.markosyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 06.06.2025 թ., տրվել է գրախոսության 06.06.2025 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2025 թ.:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/
ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС**

<https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-51>

ՄԱՐԻԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ
*Իրավագիտության մագիստրոս,
«ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան»*

MARIAM MANUKYAN
*Master of Law,
Member of the RA Chamber of Advocates, Advocate*

МАРИАМ МАНУКЯН
*Магистр права,
Член палаты адвокатов РА, адвокат*

**ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻՐԱՌԵԼԻՍ
(ՄԱՍ 3)**

**«ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՈՐ
ՓԱՍՏ ԿԱՄ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ»**

**JURISDICTION OF THE RA CIVIL COURT OF APPEAL IN THE
EXERCISE OF ITS POWERS (PART 3).**

**“FEATURES AND CONTENT OF THE ESTABLISHMENT OF A NEW FACT
OR FACTUAL CIRCUMSTANCE BY THE RA CIVIL COURT OF APPEAL”**

**ЮРИСДИКЦИЯ ГРАЖДАНСКОГО АПЕЛЛЯЦИОННОГО СУДА РА
ПРИ ОСУЩЕСТВЛЕНИИ СВОИХ ПОЛНОМОЧИЙ (ЧАСТЬ 3).
«ОСОБЕННОСТИ И СОДЕРЖАНИЕ УСТАНОВЛЕНИЯ НОВОГО ФАКТА
ИЛИ ФАКТИЧЕСКОГО ОБСТОЯТЕЛЬСТВА АПЕЛЛЯЦИОННЫМ
ГРАЖДАНСКИМ СУДОМ РА»**

Ներածություն

Քաղաքացիական գործերի քննության և լուծման ընթացքում առաջին ատյանի դատա-
րանը նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման կամ սխալ կիրառման

արդյունքում կարող է թույլ տալ տարաբնույթ դատական սխալներ, որպիսի պայմաններում, արդար դատաքննության իրավունքի երաշխավորման տեսանկյունից, հատկապես կարևորվում է դատական ակտերի վերանայման գործուն կառուցակարգերի առկայությունը: Այդ կառուցակարգերի մեջ իր ուրույն տեղն է գրավում դատական ակտերի վերաքննության ինստիտուտը՝ հանդիսանալով անձի բողոքարկման իրավունքի իրացման գործուն երաշխիք:

Յուրաքանչյուր պետական մարմին իր առջև դրված խնդիրների լիարժեք իրականացման համար օրենսդրորեն օժտված է որոշակի լիազորություններով, որոնք առավելագույն արտահայտում են այդ մարմնի գործունեության հիմնական ուղղությունները: Վերաքննիչ դատարանի լիազորություններն առաջին հերթին պայմանավորված են վերջինիս առջև դրված խնդիրներով, որոնք դրսևորվում են ինչպես դատական համակարգի ընդհանուր գործառույթների իրականացմամբ, այնպես էլ՝ միայն վերաքննիչ ատյանի գործունեությանը բնորոշ առանձնահատկություններով:

Սույն գիտական աշխատությամբ փորձ է արվում բացահայտել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի լիազորությունների մեկի՝ նոր փաստ կամ փաստական հանգամանք հաստատելու լիազորության իրավական առանձնահատկությունները և կիրառման փաստական հնարավորությունը:

Մասնավորապես, առաջադրել ենք հետևյալ հարցադրումները՝

1. արդյո՞ք ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն ունի իրավական հնարավորություն սեփական հայեցողությամբ հաստատելու որևէ փաստ՝ անկախ Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցներից, կամ հաստատելու որևէ փաստական հանգամանք՝ անկախ Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները, եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ինչպես նաև, վերոգրյալ հարցի շրջանակում, փորձ ենք արել ներկայացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) հայեցողության շրջանակներն իր լիազորությունների ընտրության հարցում և պատասխանել հետևյալ հարցին՝

2. արդյո՞ք Վերաքննիչ դատարանն օրենսդրական պարտականություն չունի և/կամ չպետք է ունենա սեփական լիազորության ընտրությունը հիմնավորելու առումով:

Հիմնական հետազոտություն

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերի համաձայն¹

1. Վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանը՝

4) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում և փոփոխում է վճիռը՝ Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հաստատելով նոր փաստ կամ չհաստատված համարելով դատարանի հաստատած փաստը, եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում և փոփոխում է վճիռը, եթե Առաջին

¹ Տե՛ս Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 265:

² ՀՕ-110-Ն, Ընդունման ամսաթիվը՝ 09.02.2018, ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 09.04.2018, ինկորպորացիա՝ ԱԺ,23.12.2022

ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից՝ բողոքարկված և չբեկանված մասով վճիռը թողնելով անփոփոխ: Չբեկանված մասով վճիռը մտնում է օրինական ուժի մեջ:

Անդրադառնալով քննարկվող լիազորության նպատակին՝ նշենք, որ իրավաբանական գրականության մեջ ընդունված տեսակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանին նման լիազորություն տրամադրելու նպատակը դատական շրջապատույտների կանխումն է և դատական քննության՝ ողջամիտ ժամկետներում իրականացումը³:

Այսպես, վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով Վերաքննիչ դատարանը վերոգրյալ լիազորությունների ընտրության պարագայում նախ պետք է կիրառի վերաքննիչ բողոքն ամբողջությամբ կամ մասնակի բավարարելու լիազորությունը, որն անմիջականորեն կապված է և որից կախված է Վերաքննիչ դատարանի լիազորությունների մյուս բաղադրիչների կիրառությունը, այնուհետև **կամ** բեկանի **և փոփոխի** վճիռը **և Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա** հաստատի նոր փաստ կամ չհաստատված համարի դատարանի հաստատած փաստը, **կամ էլ՝** բեկանի **և փոփոխի** վճիռը, եթե Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ **և** բողոքարկված և չբեկանված մասով վճիռը թողնի անփոփոխ:

Ընդ որում, երբ Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ դատական ակտը բեկանելու հիմք առկա է, պետք է արդեն ընտրություն կատարի իր լիազորություններին համապատասխանաբար բեկանման որ լիազորությունն է կիրառելի, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ և 405-րդ հոդվածները (Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների լիազորությունների հոդվածներն են) նախատեսում են բեկանել և փոփոխելու, բեկանել և նոր քննության ուղարկելու, բեկանել և կարճելու լիազորություններ... և առանձնահատուկ փաստում ենք, որ օրենսդիրն օգտագործել է «և» համադասական շաղկապը, իսկ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում՝

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով:

Ստացվում է, որ Վերաքննիչ դատարանը նախ պետք է հիմնավորի՝ **ինչու է դատական ակտը ենթակա բեկանման**, ապա **ինչու է այն ենթակա, օրինակ, փոփոխման**, քանի որ այդ երկու լիազորությունները փոխկապակցված և միմյանցից կախված լիազորություններ են: Նույն կերպ, Վերաքննիչ դատարանը դատական ակտը բեկանելիս և փոփոխելիս կամ բեկանելիս և կարճելիս՝ արդյունավետության շահի առկայության վերաբերյալ հիմնավորումներ պետք է ներկայացնի:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի վերոգրյալ լիազորություններից՝ Վերաքննիչ

³ Տե՛ս Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննիչ դատարանի առարկայական լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, «Դատական իշխանություն», Երևան, 2012, թիվ 10(159), էջ 41: Նման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ իր 22.09.2009 թ. թիվ ՍԴՈ-832 որոշմամբ: Թե՛ն ՀՀ Սահմանադրական դատարանի հայտնած դիրքորոշումը վերաբերել է ՀՀ Վճռաբեկ դատարանի համանման լիազորությանը, սակայն այն կիրառելի է նաև Վերաքննիչ դատարանի դեպքում: Նույն դիրքորոշումն առկա է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 11.12.2007թ. թիվ ՍԴՈ-720 որոշման մեջ:

բողոքը բավարարելուն և վճիռը բեկանել, փոփոխելու և **Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա** նոր փաստ հաստատելու կամ դատարանի հաստատած փաստը չհաստատված համարելուն՝ պետք է արձանագրել, որ օրենսդիրը որոշակի չափանիշներ ներկայացնում է՝ այս լիազորության ընտրությունը դարձնելով առավել հիմնավոր, դրանք են՝

- Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցները,
- արդարադատության արդյունավետության շահը:

Այսինքն, սույն լիազորությունը Վերաքննիչ դատարանը կարող է կիրառել միայն, երբ առաջին ատյանի դատարանի **հետազոտած ապացույցները** դա թույլ են տալիս և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Ընդ որում՝ պետք է նկատել, որ օրենսդիրն օգտագործում է «հետազոտված» տերմինը, ոչ թե «բողոքարկվող դատական ակտի հիմքում ընկած» տերմինը, ինչը լիովին արդարացված ենք համարում, քանզի հնարավոր է, որ հենց այդ է պատճառը, որ դատարանը կոնկրետ ելքով վճիռ է կայացրել: Այսինքն, հնարավոր է, որ ինչ-որ ապացույց հետազոտվել է դատաքննության ընթացքում, բայց չի դրվել դատական ակտի հիմքում, ինչի արդյունքում էլ, ըստ բողոքաբեր կողմի, տեղի է ունեցել իրավունքի խախտում: Ուստի, սույն պարագայում արդարացիորեն ՀՀ Վերաքննիչ դատարանին տրված է «ազատություն» բոլոր հետազոտված ապացույցների ամբողջության մեջ որոշելու գործի ելքը:

Որպես սույն լիազորության կիրառման երաշխիք՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ ՔԴՕ) 379-րդ հոդվածի 7-րդ մասով արձանագրվում է, որ եթե Առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա չի հաստատել որևէ փաստ, որը պարտավոր էր հաստատել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, եթե վերաքննիչ բողոք բերած անձը վիճարկում է հետազոտված ապացույցների հիման վրա տվյալ փաստն առաջին ատյանի դատարանի կողմից չհաստատվելը, և եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է նման փաստ հաստատել:

Նշված դրույթը որոշակի էական պայմաններից է բաղկացած, մասնավորապես, որպեսզի Վերաքննիչ դատարանը իրավական հնարավորություն ունենա կիրառելու ՀՀ ՔԴՕ-ով 380-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, ոչ միայն անհրաժեշտ է հաշվի առնել առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցները և արդարադատության արդյունավետության շահը, այլև՝ վերաքննիչ բողոք բերած անձը պետք է վիճարկած լինի հետազոտված ապացույցների հիման վրա տվյալ փաստն առաջին ատյանի դատարանի կողմից չհաստատվելու հանգամանքը:

Ուստի, ամբողջացնելով հանգում ենք հետևյալին՝ ՀՀ Վերաքննիչ դատարանն իրավունք ունի կիրառել ՀՀ ՔԴՕ 380-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ներքոշարադրյալ պահանջների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. *Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների ամբողջությունը նման իրավական հնարավորություն է ընձեռում,*
2. *դա բխում է արդարադատության արդյունավետության շահից,*
3. *վերաքննիչ բողոք բերած անձը վիճարկում է հետազոտված ապացույցների հիման վրա տվյալ փաստն առաջին ատյանի դատարանի կողմից չհաստատվելը:*

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի վճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու և եթե Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ և եթե դա բխում է արդարադատության

արդյունավետության շահերից, ապա այն փոփոխելու՝ բողոքարկված և չբեկանված մասով վճիռը թողնելով անփոփոխ լիազորությանը, փաստում ենք, որ սույն դեպքում, կրկին, Վերաքննիչ դատարանն ունի որոշակի չափանիշներ լիազորությունն ընտրելիս՝

– եթե Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս,

– եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Նախորդ լիազորության դեպքում օրենսդիրը խոսում էր հետազոտված ապացույցների մասին, այս դեպքում՝ հաստատված փաստական հանգամանքներին է անդրադարձ կատարվում և դրան համապատասխան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է՝ Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս դատարանը սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի հաստատած փաստը, եթե դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

Վերոգրյալից նույնպես եզրակացնում ենք, որ միայն նշված երկու չափանիշները բավարար չեն, որպեսզի Վերաքննիչ դատարանն իրավունք ունենա կիրառելու իր քննարկվող լիազորությունը և պարտադիր է, որ վերաքննիչ բողոքում վիճարկված լինի նշած հանգամանքը: **Մասնավորապես, որպեսզի Վերաքննիչ դատարանը իրավունք ունենա կիրառելու ՀՀ ՔԴՕ 380-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, անհրաժեշտ է հետևյալ չափանիշների միաժամանակյա առկայությունը՝**

1. Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները նման հնարավորություն են տալիս,

2. դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից,

3. Վերաքննիչ բողոք ներկայացնող անձի կողմից բողոքում առաջին ատյանի կողմից հաստատված փաստական հանգամանքը վիճարկված լինելու փաստը,

4. Վերաքննիչ դատարանի եզրահանգումը, որ ստորադաս դատարանը տվյալ փաստի առումով սխալ է թույլ տվել:

Նման իրավակարգավորումների պարագայում առաջադրված հետևյալ հարցին՝ արդյո՞ք ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն ունի իրավական հնարավորություն սեփական հայեցողությամբ հաստատելու որևէ փաստ՝ անկախ Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցներից, կամ հաստատելու որևէ փաստական հանգամանք՝ անկախ Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները, եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, պետք է պատասխանել ոչ: Վերաքննիչ դատարանը որոշում է կայացնում ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների հիման վրա և իրավունք չունի միաժամանակ հաստատված համարել նոր փաստական հանգամանքներ՝ մասնակիորեն բեկանելով և փոփոխելով դատական ակտը⁴: Սակայն պետք է արձանագրել, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն ունի բավարար պրոֆեսիոնալիզմ և ներուժ անկախ առաջին ատյանի դատարանի կողմից կատարված

⁴ Տե՛ս Հովհաննիսյան Վ. Վ., Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 453

գործողությունների գործի ելքը որոշելու համար, ի դեպ, կարծում ենք, որ դա իրականում կբխի արդարադատության արդյունավետության շահից: Դա են վկայում նաև ՀՀ ՔԴՕ 379-րդ հոդվածի 1-ին և 2-րդ և ՔԴՕ 365-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված իրավակարգավորումներով, որոնց ուժով Վերաքննիչ դատարանը, ըստ մեզ, նոր փաստ է հաստատում, ընդ որում, դուրս գալով վերաքննիչ բողոքի սահմաններից և, գուցե, կոնկրետ գործով նաև անկախ ստորադաս դատարանի կողմից հետազոտված ապացույցներից և հաստատված փաստական տվյալներից: Ուստի, կարծում ենք, որ օրենսդիրը պետք է իրավական գործուն կառուցակարգերի միջոցով Վերաքննիչ դատարանին օժտի իրավական նման հնարավորություն:

Սույն համատեքստում շատ հետաքրքրական են ՀՀ ՔԴՕ 378-րդ հոդվածի իրավակարգավորումները, մասնավորապես՝ օրենսդիրը սահմանում է, որ Վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարան: Ընդգծենք, որ օրենսդիրն օգտագործել է «ներկայացվել են», ոչ թե՛ «հետազոտվել են» տերմինը, բայց սահմանում է բացառություն վերոգրյալ ընդհանուր կանոնից՝ սահմանելով, որ ապացույցն, այնուամենայնիվ, կարող է ընդունվել և բողոքի քննության համար էական նշանակություն ունենալ (նոր ներկայացված ապացույցը հետազոտվում է միայն գործի համար էական նշանակություն ունենալու համատեքստում), երբ գործին մասնակցող անձը վերաքննիչ բողոքում հիմնավորում է, որ վերաքննիչ դատարան ներկայացված նոր ապացույցն իր կամքից անկախ հանգամանքներում չի ներկայացվել առաջին ատյանի դատարան: Այս մասում էլ հատուկ պետք է ընդգծենք վերաքննիչ բողոքի կարևորության հանգամանքը, որին հետագայում կրկին անդրադարձ ենք կատարելու:

Վերոգրյալի համատեքստում ստացվում է մի իրավիճակ, որ Վերաքննիչ դատարանը նոր ապացույց է հետազոտում և ուստի, իրավական հնարավորություն կարող է ունենալ կիրառելու ՀՀ ՔԴՕ 381-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կամ 5-րդ կետերով սահմանված լիազորություններից մեկը՝ անկախ ստորադաս դատարանի հետազոտված ապացույցների և հաստատված փաստերի: Բայց, օրենսդիրը, հստակ կամք դրսևորելով այս առթիվ, ՀՀ ՔԴՕ 378-րդ հոդվածի 7-րդ մասով հստակ սահմանափակում է Վերաքննիչ դատարանի նման հայեցողությունը՝ սահմանելով, որ Վերաքննիչ դատարանը չի կարող կիրառել սույն օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված լիազորությունները՝ հիմնվելով վերաքննիչ դատարան ներկայացված նոր ապացույցների վրա:

Կարծում ենք, օրենսդրի նման մոտեցումը կապված է Վերաքննիչ դատարանի գործի քննության կարգի, ձևի, ընթացքի և մյուս առանձնահատկությունների հետ: Մասնավորապես՝ Առաջին ատյանի դատարանում իրականացվում է գործի առավել ընդարձակ քննություն. բազմաթիվ դատական նիստերով, կողմերի դատավեճերով և ապացույցներ կամ դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու հնարավորություններով: Նման իրավական լայն հնարավորություններ առկա չեն Վերաքննիչ դատարանում, ինչն էլ, հնարավոր է, խոչընդոտի արդարացի դատական ակտ կայացնելու գործընթացին:

Այս լիազորությունների մասով հարկ ենք համարում անդրադառնալ նաև Վերաքննիչ դատարանի որոշման բովանդակությանը: Այսպես, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության 381-րդ հոդվածի 2-րդ մասի և 5-րդ մասի 1-ին կետի ա-դ ենթակետերի, 2-րդ կետի ա-դ ենթակետերի և 4-րդ կետի՝

2. Վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված որոշումը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

5. Որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի՝

1) գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, այդ թվում՝

ա. այն փաստերը, որոնք հաստատել է առաջին ատյանի դատարանը, և վերաքննիչ բողոքում դրանք չեն վիճարկվել,

բ. այն փաստերը, որոնք հաստատել է առաջին ատյանի դատարանը, և վերաքննիչ բողոքում դրանք վիճարկվել են, սակայն վերաքննիչ դատարանը դրանց վերաբերյալ հանգել է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանը սխալ թույլ չի տվել՝ պատճառաբանելով նման եզրակացությունը և հղում կատարելով նման եզրակացության հիմքում ընկած ապացույցներին,

գ. այն փաստերը, որոնք հաստատել է առաջին ատյանի դատարանը, և վերաքննիչ բողոքում դրանք վիճարկվել են, և վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանը սխալ է թույլ տվել՝ պատճառաբանելով նման եզրակացությունը և հղում կատարելով նման եզրակացության հիմքում ընկած ապացույցներին: Նման դեպքերում վերաքննիչ դատարանը պետք է նշի, թե Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստի փոխարեն ինչ նոր փաստ է հաստատված համարում, կամ Առաջին ատյանի դատարանի հաստատած որ փաստը հաստատված չի համարվում՝ պատճառաբանելով նման եզրահանգումը և հղում կատարելով Առաջին ատյանի դատարանի հետազոտած համապատասխան ապացույցներին,

դ. այն փաստերը, որոնք չի հաստատել առաջին ատյանի դատարանը, և դրանք չհաստատելը վիճարկվել է վերաքննիչ բողոքում, և վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա դրանք համարել է հաստատված՝ հղում կատարելով վերաքննիչ բողոք բերած անձի համապատասխան դիրքորոշմանը և առաջին ատյանի դատարանի հետազոտած այն ապացույցներին, որոնք ընկած են փաստի հաստատման հիմքում.

2) եզրահանգում՝ վերաքննիչ բողոքի յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ, մասնավորապես պատասխանելով հետևյալ հարցերին.

ա. արդյոք հիմնավոր է վերաքննիչ բողոքի հիմքը՝ բողոքում տվյալ հիմքի վերաբերյալ նշված հիմնավորումների սահմաններում,

բ. եթե վերաքննիչ բողոքի հիմքը հիմնավոր չէ, ապա ինչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերին, Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքը հիմնավոր չէ,

գ. եթե վերաքննիչ բողոքի հիմքը հիմնավոր է, ապա ինչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերին, Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքը հիմնավոր է,

դ. բողոքը հիմնավոր լինելու դեպքում արդյոք վերաքննիչ բողոքում նշված՝ դատարանի

թույլ տված նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը հանդիսանում է դատական ակտի բեկանման հիմք, թե ոչ՝ պատճառաբանելով համապատասխան դիրքորոշումը:

4) սույն օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կամ 5-րդ կետով նախատեսված լիազորությունը կիրառելու դեպքում՝ արդարադատության արդյունավետության շահի առկայության վերաբերյալ հիմնավորումները:

Վերոգրյալ ամբողջն ուսումնասիրելիս հանգում ենք նաև այն հետևությանը, որ որոշման կայացման համար էական և առանցքային նշանակություն ունեն վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, վկայակոչված փաստերը, ինչպես նաև համապատասխան փաստերը վերաքննիչ բողոքում վիճարկված լինելու հանգամանքը: Տրամաբանական հարց է առաջնում. արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հայեցողությունը բացարձակ է լիազորություն ընտրելու հարցում, երբ այն, սահմանափակված է նաև վերաքննիչ բողոքի հիմք, հիմնավորումներով: Ավելի մանրամասն՝ արդյո՞ք Վերաքննիչ դատարանը կարող է կիրառել իր ցանկացած լիազորություն, եթե վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումներն այդ հնարավորությունը չեն տալիս: Պատասխանը միանշանակ և պարզ է, ընդ որում, եթե անգամ Վերաքննիչ դատարանը, ելնելով արդարադատության շահից, կայացնի որոշում, որով կվերանայվեն փաստեր և հանգամանքներ, որոնք վերաքննիչ բողոքում վկայակոչված և/կամ վիճարկված չեն, ապա ռեալ հնարավորություն է ստեղծվում պատասխանողի կողմից վճռաբեկության կարգով որոշումը բեկանելու: Ստացվում է, որ, եթե անգամ Վերաքննիչ դատարանը «մեծ ցանկություն» ունենա վճիռը բեկանելու և այն փոփոխելու լիազորություն կիրառելու օրինակ, չի ունենա դրա օրենսդրական հնարավորությունը, եթե վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները բավարար չլինեն կամ վերաքննիչ բողոքով վիճարկված չլինեն համապատասխան փաստերը:

Ուստի, սույն համատեքստում էական է դառնում արդեն վերաքննիչ բողոք կազմելու պրոֆեսիոնալիզմի անհրաժեշտությունը, որից ելնելով արդեն վերաքննիչ դատարանը անհրաժեշտ հայեցողության հնարավորություն կունենա լիազորության ընտրության հարցում: Անհրաժեշտ է, որ բողոքաբերը նախ վերաքննիչ դատարանին տա օրենսդրական հնարավորությունն իր համար նպաստավոր, բարենպաստ որոշում կայացնելու, իր համար նպաստավոր լիազորություն կիրառելու, այնուհետև պահանջի վերաքննիչ դատարանից՝ հիմնավորելու իր լիազորության ընտրությունը:

Ստացվում է, որ Վերաքննիչ դատարանը սեփական լիազորության ընտրությունը պետք է պատճառաբանի՝ ելնելով նաև վերաքննիչ բողոքի հիմք, հիմնավորումներից: Այսինքն, նշելով համապատասխան հիմքերն ու հիմնավորումները, օրենսդրական դրույթները, դրանց հիման վրա կատարված եզրահանգումները ու վերլուծությունը, պատճառաբանի՝ ինչո՞ւ է Վերաքննիչ դատարանը կիրառել կոնկրետ այդ լիազորությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանված լինելու պահանջը, ի թիվս այլոց, ենթադրում է նաև խնդրո առարկա հայեցողական լիազորությունից օգտվելիս արդարադատության արդյունավետության շահի առկայության հիմնավորումը՝ որպես այդ լիազորության կիրառման իրավաչափության երաշխիք: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում խնդրո առարկա լիազորությունն իրականացնելիս դրա կիրառման իրավաչափությունը կարող է ապահովվել, եթե Վճռաբեկ դատարանը հիմնավորում է արդարադատության արդյունավետության այն շահի առկայությունը, որը հիմք է հանդիսանում նշված լիազորությունից օգտվելու համար⁵:

⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից թիվ ՍԴՈ-832 գործով 2009թ. սեպտեմբերի 22-ին կայացված որոշումը:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունից բխում է, որ խիստ ճնշող մեծամասնություն կազմող դեպքերում Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով առաջին ատյանի դատարանի վճիռը, չի հիմնավորում արդարադատության արդյունավետության շահի առկայությունը: Վերաքննիչ դատարանի կողմից սովորաբար վկայակոչվող և ընդհանուր բնույթ ունեցող դատողությունները, մեր կարծիքով, չեն կարող դիտվել որպես արդարադատության արդյունավետության շահի առկայության հիմնավորումներ: Այսինքն, Վերաքննիչ դատարանը, ըստ էության, չի հիմնավորում՝ ինչու է իր կողմից ընտրվել կոնկրետ լիազորությունը, մինչդեռ օրենսդրորեն կարող էր և ըստ մեզ, պարտավոր էր, քանզի որոշակիորեն հստակ են այն «նախադրյալները»/«պայմանները», որոնց գոյության պայմաններում և որոնք հաշվի առնելով միայն Վերաքննիչ դատարանն իրավական հնարավորություն կունենա քննարկվող լիազորություններից որևէ մեկը կիրառելու:

Ի դեպ, «Արդարադատության արդյունավետության շահ» հասկացությունը բավարար չափով բացահայտված չէ, սակայն այն որոշակիորեն կարելի է կապել գործի քննության ողջամիտ ժամկետի գաղափարի և դատավարական խնայողության սկզբունքի հետ: ՔԴՕ-ն չի պարունակում որևէ նորմ դատավարական խնայողության սկզբունքի մասին: Ավելին, այդ սկզբունքի գոյությունը միանշանակ չի ընդունվում բոլոր դատավարագետների կողմից: Մենք համաձայն ենք այն հեղինակների հետ, ովքեր ընդունում են դատավարական խնայողության սկզբունքի գոյությունը և կարևոր նշանակություն են տալիս դրա պահպանմանը: Դատավարական միջոցների խնայողության սկզբունքն ապահովում է ուժերի ռացիոնալ օգտագործումը, արդարադատության ավելի արագ և արդյունավետ իրականացումը՝ ջանքերի նվազագույն գործադրմամբ⁶: Գերմանական քաղաքացիական դատավարության իրավունքում դատավարական խնայողության սկզբունքի էությունը նրանում է, որ այն պահանջում է խուսափել ոչ անհրաժեշտ քայլերից և դրա շնորհիվ տնտեսել դատավարական միջոցները⁷: Դատական խնայողության սկզբունքի առկայության և այն պահպանելու անհրաժեշտության մասին իր որոշումներից մեկում անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը⁸:

Ամեն դեպքում, կարող ենք եզրահանգել, որ ՀՀ ՔԴՕ 381-րդ հոդվածի վկայակոչված նորմերը կարող են մեկնաբանվել առավել լայն և նշանակել, որ Վերաքննիչ դատարանն իր լիազորությունների գերակշիռ մեծամասնությունը կիրառելիս պետք է նշի այն շարժառիթները/հիմքերը/նյութական և դատավարական նորմերի խախտումները, վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, որոնցից ելնելով/որոնցով պայմանավորված չի համաձայնել այդ ակտը կայացրած դատարանի հետևությունների հետ և կիրառում է բեկանման լիազորությունը՝ այդպիսով պատճառաբանելով /հիմնավորելով՝ ինչու՞ է կիրառում հենց ընտրված լիազորությունը և ինչու կիրառման ենթակա չեն մյուս լիազորությունները: Ի դեպ, կարծում ենք, որ ասվածը լիարժեքորեն տարածվում է դատարանի բոլոր լիազորությունների վրա: Ստացվում է, որ պետք է հիմնավորվի՝ ինչն է (ինչ շարժառիթներով է) Դատարանը ընտրում բեկանման լիազորությունը և ինչն է գործը բեկանելուց հետո ուղարկում նոր քննության և ոչ թե փոփոխում, ինչու է նոր քննության ուղարկում ամբողջ ծավալով և ոչ՝ որոշակի ծավալով: Չնայած վերոգրյալի արձանագրում ենք, որ սույն նորմը կարող է մեկնաբանվել նաև այլ կերպ, այն է՝ Վերաքննիչ դատարանը պետք է նշի այն շարժառիթները, որոնցով պայմանավորված համաձայն չէ դատական ակտը կայացրած դատարանի հետևությունների հետ, այսինքն միայն նշվի՝ ինչու է բեկանվում դատական ակտը և ոչ թե ինչու բեկանվում և փոփոխվում կամ բե-

⁶ Տե՛ս *Шакирьянов Р.В.*, Действие принципа процессуальной экономии в гражданском судопроизводстве, <http://justicemaker.ru/viewarticle.php?id=3&art=3784>:

⁷ Տե՛ս *Давтян А.Г.*, Гражданское процессуальное право Германии. - М.: Изд-во Городец-издат, 2000, էջ 49:

⁸ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 18.07.2014թ. որոշումը՝ թիվ ԱՐԱԴ/0209/02/13 քաղաքացիական գործով:

կանվում և ուղարկվում նոր քննության և այլն, ինչը, կարծում ենք, օրենսդրի տրամաբանությունից և արդարադատության շահից չի ելնում:

Եզրակացություն

Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների (բացառությամբ ՀՀ ՔԴՕ 365-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դեպքերի) սահմաններում, Առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա և հաստատած փաստական հանգամանքներն հիմք ընդունելով:

Ստացվում է, որ փաստը ոչ միայն պետք է վիճարկվի բողոքաբերի կողմից, ոչ միայն պետք է Վերաքննիչ դատարանը իրավական եզրահանգման գա, որ ստորադաս դատարանը սխալ եզրակացության է եղել տվյալ փաստի մասով, այլև ստորադաս դատարանի կողմից հետազոտված ապացույցները կամ հաստատված փաստական հանգամանքները պետք է իրավականորեն հնարավորություն ընձեռեն Վերաքննիչ դատարանին ընտրելու ՀՀ քաղ դատ օր-ի 380-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կամ 5-րդ կետերից մեկով սահմանված իր լիազորությունը՝ հաշվի առնելով արդարադատության արդյունավետության շահը:

Ուստի, ՀՀ Վերաքննիչ դատարանն իրավունք ունի կիրառելու ՀՀ ՔԴՕ 380-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ներքոշարադրյալ պահանջների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների ամբողջությունը նման իրավական հնարավորություն է ընձեռում,
2. դա բխում է արդարադատության արդյունավետության շահից,
3. վերաքննիչ բողոք բերած անձը վիճարկում է հետազոտված ապացույցների հիման վրա տվյալ փաստն Առաջին ատյանի դատարանի կողմից չհաստատվելը:

Իսկ ՀՀ ՔԴՕ 380-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը կիրառելու համար Վերաքննիչ դատարանին անհրաժեշտ է հետևյալ չափանիշների միաժամանակյա առկայությունը՝

1. Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները նման հնարավորություն են տալիս,
2. դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից,
3. Վերաքննիչ բողոք ներկայացնող անձի կողմից բողոքում Առաջին ատյանի կողմից հաստատված փաստական հանգամանքը վիճարկված լինելու փաստը,
4. Վերաքննիչ դատարանի եզրահանգումը, որ ստորադաս դատարանը տվյալ փաստի առումով սխալ է թույլ տվել:

Արդյունքում ստացվում է, որ Վերաքննիչ դատարանը էականորեն կաշկանդված է օրենսդրական հնարավորության համատեքստում՝ նշված լիազորությունը ընտրելու կապակցությամբ:

Համակարգային վերլուծության արդյունքում, կարող ենք եզրահանգել, որ օրենսդիրն, այնուամենայնիվ պատասխանել է այն հարցին, թե որ լիազորությունը, երբ պետք է կիրառել՝ սահմանափակելով վերաքննիչ դատարանի բացարձակ հայեցողությունը: Փաստում ենք, որ առկա են մեկնաբանման լայն և նեղ եղանակներ, հետևաբար կարծում ենք, որ առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով Վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշման բովանդակության վերաբերյալ սույն աշխատությունում վկայակոչված նորմերը պետք է լայն մեկնաբանել և դիտարկել նաև որպես լիազորության ընտրության հիմնավորելու/պատճառաբանելու պարտականություն:

Ամփոփագիր: Գիտական հետազոտության շրջանակներում փորձ է արվում բացահայտել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի լիազորությունների մեկի՝ նոր փաստ կամ փաստական հանգամանք հաստատելու լիազորության իրավական առանձնահատկությունները և կիրառման փաստական հնարավորությունը:

Մասնավորապես, քննարկելով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ սեփական հայեցողությամբ հաստատելու որևէ փաստ՝ անկախ Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցներից, կամ հաստատելու որևէ փաստական հանգամանք՝ անկախ առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները, իրավական հնարավորություն ունենալու հարցը, եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ինչպես նաև, վերոգրյալ հարցի շրջանակում, փորձ ենք արել ներկայացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) հայեցողության շրջանակներն իր լիազորությունների ընտրության հարցում:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է զարգացող իրավական պրակտիկայով, վերաքննիչ դատարանի լիազորությունների բազմազանությամբ և դրանց բովանդակության խրթինությամբ:

Սույն աշխատության հիմնական նպատակներն են՝

- Համակարգային վերլուծության արդյունքում վեր հանել ՀՀ վերաքննիչ դատարանի լիազորությունների ընտրության չափանիշներն ու դրանց առանձնահատկությունները,

- Իրականացնել իրավական վերլուծություն՝ բացահայտելով նոր փաստ կամ փաստական հանգամանք հաստատելու լիազորության իրավական առանձնահատկությունները և կիրառման փաստական հնարավորությունը,

- Արձանագրել վերաքննիչ բողոքի դերն ու նշանակությունը, ներկայացված պահանջի կարևորությունն ու դրանից բխող վերաքննիչ դատարանի հնարավորությունը սեփական լիազորությունն ընտրելու առումով:

- Մանրամասն վերլուծել վերաքննիչ դատարանի կողմից ստորադաս դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա նոր փաստ հաստատելու կամ դատարանի հաստատած փաստը չհաստատված համարելու, ինչպես նաև առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքների օրենսդրական ձևակերպումների բնույթն ու բովանդակությունը:

- ՀՀ Օրենսդրության կոնկրետ հոդվածների լայն և նեղ մեկնաբանությունների ներկայացումը, դրանց բացահայտումն ու հիմնավորումը:

- Իրավական անորոշության հաղթահարմանն ուղղված մեկնաբանությունների վերհանումն ու հիմնավորումը:

- «Արդարադատության արդյունավետության շահ» օրենսդրական ձևակերպման բովանդակության ներկայացումն ու դրա առկայությունը «պարտադրող» լիազորություն ընտրելիս՝ հիմնավորման անհրաժեշտության ընդգծումը:

Գիտական աշխատության խնդիրներ են պատասխանել հետևյալ հարցերին՝

1. Արդյո՞ք ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն ունի իրավական հնարավորություն սեփական հայեցողությամբ հաստատելու որևէ փաստ՝ անկախ առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցներից, կամ հաստատելու որևէ փաստական հանգամանք՝ անկախ առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները, եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

2. Արդյո՞ք վերաքննիչ դատարանը օրենսդրական պարտականություն չունի և/կամ չպետք է ունենա սեփական լիազորության ընտրությունը հիմնավորելու առումով:

Annotation. Within the framework of the scientific research, an attempt is made to reveal the legal features and factual possibility of application of one of the powers of the RA Civil Court of Appeal - the power to establish a new fact or factual circumstance.

In particular, by discussing the issue of the legal possibility of the RA Civil Court of Appeal to establish any fact at its own discretion, regardless of the evidence examined by the court of first instance, or to establish any factual

circumstance, regardless of the factual circumstances established by the court of first instance, if this arises from the interests of the efficiency of justice. We have attempted to present the scope of discretion of the RA Civil Court of Appeal (hereinafter also referred to as the Court of Appeal) in the choice of its powers.

The relevance of the research is conditioned by the developing legal practice, the diversity of the powers of the Court of Appeal and the complexity of their content.

The main goals of this work are:

- As a result of a systematic analysis, to identify the criteria for choosing the powers of the RA Court of Appeal and their features,
- Conduct a legal analysis, identifying the legal specifics and factual possibility of application of the authority to establish a new fact or factual circumstance,
- Analyze in detail the nature and content of the legislative formulations of the Court of Appeal's determination of a new fact based on the evidence examined by the lower court or the determination of a fact established by the court as unestablished, as well as the factual circumstances established by the court of first instance.
- Presentation of broad and narrow interpretations of specific articles of the RA legislation, their disclosure and justification.
- Identification and justification of comments aimed at overcoming legal uncertainty.

Problems of the scientific paper answered the following questions:

1. Does the RA Civil Court of Appeal have the legal ability to establish any fact at its own discretion, regardless of the evidence examined by the court of first instance, or to establish any factual circumstance, regardless of the factual circumstances established by the court of first instance, if this arises from the interests of the efficiency of justice?

2. Shouldn't the RA Court of Appeals have a legislative duty to justify the choice of its powers to be exercised as a result of the examination of the appeal filed against the judgment defined by the RA Civil Procedure Code and/or does the RA Court of Appeals not currently have such a legislative duty?

Аннотация. В рамках научного исследования предпринята попытка раскрыть правовые особенности и фактическую возможность применения одного из полномочий Апелляционного гражданского суда РА – полномочия по установлению нового факта или фактического обстоятельства. В частности, путем обсуждения вопроса о правовой возможности Апелляционного гражданского суда РА устанавливать любой факт по своему усмотрению, независимо от доказательств, исследованных судом первой инстанции, или устанавливать любое фактическое обстоятельство, независимо от фактических обстоятельств, установленных судом первой инстанции, если это вытекает из интересов эффективности правосудия.

Актуальность данного исследования обусловлена развивающейся юридической практикой, многообразием полномочий Апелляционного суда и сложностью их содержания.

Основными целями данной работы являются:

- в результате системного анализа выявить критерии выбора полномочий Апелляционного суда РА и их особенности;
- провести правовой анализ, выявив правовую специфику и фактическую возможность применения полномочия по установлению нового факта или фактического обстоятельства;
- детально проанализировать сущность и содержание законодательных формулировок определения Апелляционным судом нового факта на основании доказательств, исследованных нижестоящим судом, или определения факта, установленного судом, как неустановленного, а также фактических обстоятельств, установленных судом первой инстанции;
- представление широких и узких толкований конкретных статей законодательства РА, их раскрытие и обоснование;
- выявление и обоснование замечаний, направленных на преодоление правовой неопределенности.

Задачи научной статьи ответили на следующие вопросы.

1. Имеет ли Апелляционный гражданский суд РА юридическую возможность устанавливать любой факт по своему усмотрению, независимо от доказательств, исследованных судом первой инстанции, или устанавливать любое фактическое обстоятельство, независимо от фактических обстоятельств, установленных судом первой инстанции, если это вытекает из интересов эффективности правосудия?

2. Не должен ли Апелляционный суд РА иметь законодательную обязанность обосновать выбор своих полномочий, которые будут реализованы в результате рассмотрения апелляции, поданной на решение, определенное Гражданским процессуальным кодексом РА, и/или Апелляционный суд РА в настоящее время не имеет такой законодательной обязанности?

Բանալի բառեր - Վերաքննիչ դատարան, լիազորություն, նոր փաստ, նոր փաստական հանգամանք, հետազոտված ապացույցներ, գնահատման չափանիշներ, հիմնավորվածություն:

Keywords: Court of Appeal, authority, new fact, new factual circumstance, examined evidence, evaluation criteria, justification.

Ключевые слова: Апелляционный суд, орган, новый факт, новые фактические обстоятельства, исследованные доказательства, критерии оценки, обоснование.

Օգտագործված գրականության ցանկ

Նորմատիվ-իրավական

1. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք,
2. ՀՀ Սահմանադրական դատարանի 22.09.2009 թ. թիվ ՍԴՈ-832 որոշում,
3. ՀՀ Սահմանադրական դատարանի 11.12.2007 թ. թիվ ՍԴՈ-720 որոշում,
4. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԱԴԱԴ/0209/02/13 քաղաքացիական գործով 18.07.2014թ. որոշում:

Տեսական գրականություն

5. Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր.: ԵՊՀ հրատ., 2013:
6. Шакирьянов Р.В., Действие принципа процессуальной экономии в гражданском судопроизводстве:
7. Давтян А.Г., Гражданское процессуальное право Германии. - М.: Изд-во Городец-издат, 2000:

Ինտերնետային աղբյուրներ

1. www.arlis.am
2. www.datalex.am

Մանուկյան Մ. - Իրավագիտության մագիստրոս, ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, էլիասցե՝ MariamManukyan.Law@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 24.06.2025 թ., տրվել է գրախոսության 24.06.2025 թ., երաշխավորվել է ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, Հայաստանի ֆրանսիական համալսարանի դասախոս, իրավագիտության թեկնածու Գ. Թորոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2025 թ.:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-64>

ՎԻՐԱԲ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի
ամբիոնի դասախոս*

VIRAB HAMBARDZUMAYN

*Lecturer at Yerevan State University,
Chair of Criminal Law*

ВИРАБ АМБАРЦУМЯН

*Преподаватель кафедры уголовного права
Ереванского Государственного Университета*

**ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**INTERNATIONAL LEGAL REGULATION OF ARMS
CIRCULATION IN THE CONTEXT OF THE PROTECTION OF
FUNDAMENTAL HUMAN RIGHTS**

**МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ОБОРОТА
ОРУЖИЯ В КОНТЕКСТЕ ЗАЩИТЫ ОСНОВНЫХ ПРАВ ЧЕЛОВЕКА**

Ներածություն

Թեև զենքը կարևոր նշանակություն ունի իրավակարգի պահպանման, մարդու իրավունքների պաշտպանության և անվտանգության ապահովման գործընթացում, սակայն հաճախ այն օգտագործվում է նաև մարդու իրավունքների խախտման նպատակով:

Այն փաստը, որ հրազենը բռնի արարքներ և հանցանքներ կատարելու հիմնական գործիքն է, լայն ճանաչում է ձեռք բերել¹: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն իր զեկույցում այն ընդհուպ անվանել է «զանգվածային ոչնչացման զենք»²:

¹ Տե՛ս United Nations General Assembly, A/HRC/14/24/Add.7, Human Rights Council Fourteenth session Agenda item 3 Promotion and protection of all human rights, civil, political, economic, social and cultural rights, including the right to development: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://docs.un.org/en/A/HRC/14/24/Add.7> (վերջին մուտք՝ 27.02.2025թ.):

² Տե՛ս United Nations General Assembly, A/54/2000, We the peoples: the role of the United Nations in the twenty-first century. Report of the secretary-General, կետ 238: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://treaties.un.org/doc/source/>

Մարդու իրավունքների միջազգային իրավունքին համապատասխան՝ պետությունները պարտավոր են պատշաճ կերպով պաշտպանել մարդու իրավունքները, ինչը ենթադրում է պետության՝ մասնավոր անձանց կողմից մարդու իրավունքների իրացման գործընթացը խաթարող գործունեությունը կանխելու և կասեցնելու պարտավորության առկայություն: Մասնավորապես, ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» մասնակից պետությունների վրա դրված ընդհանուր իրավական պարտավորության վերաբերյալ թիվ 31 (2004 թ.) դիտարկմամբ նշել է, որ այդ պարտավորություններն ամբողջությամբ կկատարվեն միայն այն դեպքում, եթե անձինք դաշնագրով նախատեսված իրավունքների խախտումից պաշտպանված լինեն ոչ միայն պետության ներկայացուցիչների, այլ նաև մասնավոր անձանց կամ ոչ պետական կազմավորումների կողմից կատարվող գործողություններից, որոնք վնաս են պատճառում դաշնագրով նախատեսված իրավունքների իրականացմանն այնքանով, որքանով դրանք կարող են կիրառվել մասնավոր անձանց կամ ոչ պետական կազմավորումների միջև հարաբերություններում³:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան) նշել է, որ որոշ հստակ սահմանված հանգամանքներում «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի» (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 2-րդ հոդվածը իշխանությունների համար սահմանում է գործնական բնույթի կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտավորություն՝ միտված այն անհատի պաշտպանությանը, ում կյանքը վտանգված է այլ անձանց հանցավոր գործողություններից⁴:

Դատարանի տեսանկյունից բավարար է, որ դիմումատուն հիմնավորի, որ իշխանությունները չեն ձեռնարկել իրենցից ողջամտորեն ակնկալվող անհրաժեշտ միջոցներ կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգը կանխելու համար, որի մասին նրանք իմացել են կամ պետք է իմանային⁵:

Վերջիվերջո, պետության՝ կյանքի իրավունքը երաշխավորելու պոզիտիվ պարտականությունը լայն իմաստով իր մեջ ներառում է մարդու արժանապատիվ գոյությունը երաշխավորող պայմանների հասանելիություն⁶:

Ձենքի շրջանառության միջազգային իրավական կարգավորումների ուսումնասիրությունը և վերլուծությունն ավելի է կարևորվում արդի ժամանակներում, երբ Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ է դրվել «Ձենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքը⁷, որով զգալիորեն մեղմացվել են քաղաքացիական զենքի ձեռքբերման և տիրապետման կանոնները: Այս հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել գնահատել նոր իրավակարգավորումների համապատասխանությունը միջազգային ստանդարտներին:

Սույն հոդվածի շրջանակում մարդու հիմնարար իրավունքների երաշխավորման համատեքստում ուսումնասիրվել են քաղաքացիական զենքի շրջանառության միջազգային իրա-

A_54_2000-Eng.pdf (վերջին մուտք՝ 27.02.2025թ.):

³ Տե՛ս Замечание общего порядка № 31 [80] Характер общего юридического обязательства, налагаемого на государства-участники Пакта, CCPR/C/21/Rev.1/Add.13: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://hrlibrary.umn.edu/russian/gencomm/Rhrcom31.html> (վերջին մուտք՝ 02.01.2025 թ.):

⁴ Տե՛ս «Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության», § 115, «Բրանկո Թոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի», § 50: Տե՛ս նաև Inter-American Court of Human Rights, Velásquez-Rodríguez v. Honduras, § 172:

⁵ Տե՛ս «Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության», § 116:

⁶ Տե՛ս Inter-American Court of Human Rights, Case of the “Street Children” (Villagrán-Morales et al.) v. Guatemala, § 144:

⁷ Տե՛ս ՀՀ օրենքը զենքի շրջանառության կարգավորման մասին: Ընդունվել է 05.10.2022 թ., ուժի մեջ է մտել 28.04.2023 թ., ՀՕ-368-Ն: Գործում է:

վական կարգավորումները, դրանց լույսի ներքո գնահատվել են ոլորտին վերաբերելի ներպետական կանոնակարգերը և ներկայացվել են ներպետական օրենսդրության լավարկման ուղղված մի շարք առաջարկներ:

Հիմնական հետազոտություն

Քաղաքացիական զենքի շրջանառության միջազգային ստանդարտները

Արդի աշխարհում մշակվել և ընդունվել է քաղաքացիական զենքի շրջանառությունը կանոնակարգող տարածաշրջանային համաձայնագրերի և փաստաթղթերի լայն շրջանակ, որոնք կոչված են զենքի ապօրինի շրջանառության դեմ պայքարի գործընթացում աջակցել ազգային ջանքերին: Մասնավորապես, Աֆրիկայում մշակվել է «Ապօրինի հրազենի և թեթև սպառազինության տարածման, փոխանցման և շրջանառության խնդրի վերաբերյալ աֆրիկյան երկրների ընդհանուր դիրքորոշման մասին Բամաքյան հռչակագիրը» (2000 թ.)⁸, իսկ ամերիկյան մայրցամաքում՝ «Անդյան պլանը», որը միտված է կանխելու, կասեցնելու և վերացնելու հրազենի և թեթև սպառազինության ապօրինի շրջանառությունն իր բոլոր ասպեկտներով (2003թ.)⁹: Եվրոպական միության կողմից ընդունվել է զենքի ձեռքբերման և տիրապետման վերահսկողության մասին թիվ 91/477/EEC հրահանգը (1991թ.)¹⁰ և նշված հրահանգում փոփոխություններ կատարելու մասին թիվ 2008/51/EC հրահանգը¹¹, Իսաղաղ օվկիանոսի հարավային տարածաշրջանում՝ «Ձենքի վերահսկման ընդհանուր մոտեցման իրավական սկզբունքների շրջանակը», որը հայտնի է նաև որպես «Նադիի սկզբունքների շրջանակ» անվամբ (2000թ.)¹²:

Միաժամանակ, մի շարք տարածաշրջաններում մշակվել են ոլորտը կանոնակարգող տիպային օրենքներ: Օրինակ՝ «Ձենքի, զինամթերքի, պայթուցիկ և վտանգավոր նյութերի մասին արաբական երկրների մոդելային օրենքը» (2002 թ.)¹³, ինչպես նաև ԱՊՀ «Ձենքի մասին մոդելային օրենքը» (1997 թ.)¹⁴:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ ՄԱԿ-ի մարդու իրավունքների մարմիններն ու մեխանիզմները նույնպես ուսումնասիրել և սահմանել են մասնավոր անձանց կողմից հրազենի կիրառման հետագա հետևանքները՝ մարդու իրավունքների պաշտպանության, ներառյալ

⁸ Տե՛ս Bamako Declaration on an African Common Position on the Illicit Proliferation, Circulation and Trafficking of Small Arms and Light Weapon: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.peaceau.org/uploads/bamako-declaration.pdf> (վերջին մուտք՝ 03.05.2025 թ.):

⁹ Տե՛ս Andean Plan to Prevent, Combat and Eradicate Illicit Trade in Small Arms and Light Weapons in all its Aspects: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.sipri.org/sites/default/files/research/disarmament/dualuse/pdf-archive-att/pdfs/can-andean-plan-to-prevent-combat-and-eradicate-illicit-trade-in-small-arms-and-light-weapons-in-all-its-aspects-english.pdf> (վերջին մուտք՝ 03.05.2025 թ.):

¹⁰ Տե՛ս Council Directive 91/477/EEC of 18 June 1991 on control of the acquisition and possession of weapons: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://eur-lex.europa.eu/eli/dir/1991/477/oj> (վերջին մուտք՝ 06.01.2025 թ.):

¹¹ Տե՛ս Directive 2008/51/EC of the European Parliament and of the Council of 21 May 2008 amending Council Directive 91/477/EEC on control of the acquisition and possession of weapons: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://eur-lex.europa.eu/eli/dir/2008/51/oj> (վերջին մուտք՝ 03.05.2025 թ.):

¹² Տե՛ս Philip Alpers and Conon Twyford, Small Arms in the Pacific, 2003: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.smallarmssurvey.org/sites/default/files/resources/SAS-OP08-Pacific.pdf> (վերջին մուտք՝ 06.01.2025 թ.):

¹³ Տե՛ս Arab Model Law on Weapons, Ammunitions, Explosives and Hazardous Material Tunisia 2002: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.sipri.org/sites/default/files/research/disarmament/dualuse/pdf-archive-att/pdfs/arab-league-model-law-on-weapons-ammunitions-explosives-and-hazardous-material.pdf> (վերջին մուտք՝ 03.05.2025 թ.):

¹⁴ Տե՛ս Модельный закон об оружии: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=30968 (վերջին մուտք՝ 03.05.2025 թ.):

այդ գործընթացում պետության պոզիտիվ պարտավորության տեսանկյունից:

Այս առումով ուշագրավ է այն, որ դեռևս 2002 թվականին ՄԱԿ-ի մարդու իրավունքների խրախուսման և պաշտպանության ենթահանձնաժողովի կողմից նշանակվել է հատուկ զեկուցող՝ հրազենի և թեթև սպառազինության կիրառմամբ մարդու իրավունքների խախտումների կանխարգելման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություն իրականացնելու համար¹⁵, որը հետագայում հիմք հանդիսացավ հրազենի կիրառմամբ մարդու իրավունքների խախտումների կանխարգելման սկզբունքների նախագծի (այսուհետ նաև՝ Նախագիծ) մշակման համար: Նախագիծը հավանության արժանացավ ենթահանձնաժողովի կողմից և ներառվեց 2006/22 բանաձևի հավելվածում¹⁶:

Նախագծում դիտարկվել են պետությունների պարտավորությունները, որոնք միտված են կանխել մասնավոր անձանց կողմից մարդու իրավունքների խախտումները: Ըստ էության, Նախագծում ընդգծվում է մասնավոր անձանց կողմից հրազենին հասանելիությունը արդյունավետ կերպով կարգավորելու անհրաժեշտությունը՝ մարդու կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքների պաշտպանության նպատակով: Մասնավորապես, հատուկ զեկուցողը դիտարկել է կոնկրետ դեպքեր, երբ հրազենը ծառայում է մարդու իրավունքների խախտման միջոց կամ ծանրացուցիչ հանգամանք¹⁷, երբ զենք պահելը, գործադրելը¹⁸, ինչպես նաև դրա տարածումը¹⁹ հանդիսանում են բռնություն և գենդերային խտրականություն առաջացնող և խթանող գործոններ²⁰: Հատուկ զեկուցողն անդրադարձել է նաև հրազենի՝ ընտանեկան հարաբերությունների վրա հնարավոր ազդեցության հարցին: Ըստ վերջինիս՝ զենքի մշակույթը, որն առաջին հայացքից գենդերային հիմք չունի, իր հետքն է թողնում նաև գենդերային բռնության վրա²¹:

Ասվածի վերաբերյալ հարկ է անդրադառնալ նաև բռնության դեմ պայքարի քաղաքականության կենտրոնի (The Violence Policy Center) զեկույցին, ըստ որի՝ 2018-2021 թվականների ընթացքում հրազենը հանդիսացել է ամենատարածված զենքը, որն օգտագործվել է տղամարդկանց կողմից կանանց սպանելու համար և այն առավել հաճախ օգտագործվել է ընտանեկան բռնություն հանդիսացող սպանության դեպքերում (65%)՝ համեմատած կանանց

¹⁵ Տե՛ս E/CN.4/Sub.2/2002/3: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://docs.un.org/en/E/CN.4/Sub.2/2002/39> (վերջին մուտք՝ 10.05.2025 թ.), E/CN.4/Sub.2/2003/29: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://digitallibrary.un.org/record/499535?ln=ru&v=pdf> (վերջին մուտք՝ 03.05.2025 թ.),

E/CN.4/Sub.2/2004/37/Add.1: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://documents.un.org/doc/undoc/gen/g04/146/29/pdf/g0414629.pdf> (վերջին մուտք՝ 03.05.2025 թ.), A/HRC/Sub.1/58/27: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://docs.un.org/en/A/HRC/Sub.1/58/27/Add.1> (վերջին մուտք՝ 03.05.2025 թ.):

¹⁶ Տե՛ս A/HRC/2/2 A/HRC/Sub.1/58/36 11.09. 2006, Report of the Sub-Commission on the Promotion and Protection of Human Rights on its Fifty-Eighth Session Geneva: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.right-docs.org/doc/a-hrc-2-2/> (վերջին մուտք՝ 08.01.2025 թ.):

¹⁷ Տե՛ս A/HRC/17/26/Add.5, կետ 10: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://docs.un.org/en/A/HRC/17/26/Add.5> (վերջին մուտք՝ 27.02.2025 թ.) և A/HRC/20/16 կետ 68: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://docs.un.org/en/A/HRC/20/16> (վերջին մուտք՝ 27.02.2025 թ.):

¹⁸ Տե՛ս E/CN.4/2005/72/Add.2, կետ 80: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://docs.un.org/en/E/CN.4/2005/72/Add.2> (վերջին մուտք՝ 27.02.2025 թ.):

¹⁹ Տե՛ս E/CN.4/2005/72/Add.3, կետ 10: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://docs.un.org/en/E/CN.4/2005/72/Add.3> (վերջին մուտք՝ 27.02.2025 թ.):

²⁰ Տե՛ս A/HRC/29/27/Add.1, կետ 30: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://docs.un.org/en/A/HRC/29/27/Add.1> (վերջին մուտք՝ 27.02.2025 թ.):

²¹ Տե՛ս E/CN.4/1999/68/Add.2, կետ 48: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://docs.un.org/en/E/CN.4/1999/68/Add.2> (վերջին մուտք՝ 27.02.2025 թ.):

սպանությունների այլ դեպքերի հետ (57%)²²:

Համաձայն մեկ այլ զեկույցի՝ իրենց ամուսինների կամ զուգընկերների կողմից հրազենով սպանված կանանց թիվը գրեթե չորս անգամ ավելին է անձանոթ տղամարդկանց կողմից բոլոր տեսակի զենքերի կիրառմամբ սպանված կանանց թվաքանակի համեմատ:²³ **Սա ցույց է տալիս նաև բռնությունից տուժած ընտանիքներում հրազենի հասանելիության նվազեցման կարևորությունը**²⁴: Բացի հրազենի կիրառմամբ կատարված կենցաղային սպանություններից՝ կանայք տառապում են նաև «զենքի թշնամական ցուցադրումից»՝ որպես ընտանեկան բռնության (IPV²⁵) ձև, որտեղ բռնարար զուգընկերն սպառնում է զենք կիրառել զոհի դեմ:

Վերը նշված դեպքերում, որպես կանանց նկատմամբ գործադրվող բռնության անպատժելիությունը դադարեցնելու միջոցներ, հատուկ զեկուցողը խորհուրդ է տվել կարգավորել հրազենի կիրառումը և քրեական պատասխանատվություն սահմանել դրա ոչ իրավաչափ գործադրման համար: Դրա հետ մեկտեղ, ըստ վերջինիս՝ **ընտանեկան բռնության զոհերի իրավական պաշտպանության միջոցները պետք է ներառեն՝**

➤ **զենքի նկատմամբ վերահսկողության խստացում, այն է՝ զենք ձեռք բերելու հավակնող անձի նախնական ստուգման համակարգի ներդրում՝ գրանցելով բոլոր այն տվյալները, որոնք որոշում են հրազեն ձեռք բերելու համար անձի համապատասխանությունը,**

➤ **թույլտվության պարբերական վերանայում՝ դրա սեփականատիրոջ համապատասխանությունը հավաստելու նպատակով,**

➤ **ընտանեկան բռնության դեպքերում ոստիկանության աշխատակիցների կողմից զենքի ուղղակի առգրավման պրակտիկայի ներդրում, ներառյալ՝ ընտանեկան կոնֆլիկտի մասին առաջին ծանուցումից հետո զենքի առգրավման հնարավորությունը,**

➤ **ինչպես նաև հրազենի ապօրինի առևտրի և դրա հափշտակության փաստի մասին իրավասու մարմնին չհաղորդելու համար քրեական պատասխանատվության սահմանում**²⁶:

Բացի դրանից՝ հարկ է ընդգծել, որ 2015 թվականից ի վեր ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կողմից պատրաստվում և հրապարակվում են քաղաքացիական անձանց կողմից հրազենի ձեռքբերման, տիրապետման և օգտագործման արդյունավետ կարգավորման եղանակների վերաբերյալ զեկույցներ:

Այդ զեկույցները պատրաստվում են Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետությունների, հաստատությունների, միջազգային կազմակերպությունների, ազգային իրավապաշտպան և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ, հիմնված են ստանդարտ հարցաշարի վրա և միտված են մշակել այն կանոնակարգերը, որոնք կարող են նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև բացահայտել լավա-

²² Տե՛ս Violence Policy Center, When Men Murder Women: An Analysis of 2022 Homicide Data. Washington, DC, 2024, էջ 1: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://vpc.org/studies/wmmw2024.pdf> (վերջին մուտք՝ 05.01.2025 թ.):

²³ Տե՛ս Violence Policy Center, When Men Murder Women: An Analysis of 2008 Homicide Data. Washington, DC, 2010, էջ 7: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.vpc.org/studies/wmmw2010.pdf> (վերջին մուտք՝ 05.01.2025 թ.):

²⁴ Տե՛ս Paulozzi LJ, Saltzman LE, Thompson MP, Holmgreen P. Surveillance for Homicide Among Intimate Partners — United States, 1981-1998. MMWR CDC Surveill Summ. 2001 Oct 12;50(3): էջեր 1-15:

²⁵ Domestic Violence կամ Intimate Partner Violence.

²⁶ Տե՛ս General Assembly, A/HRC/17/26/Add.5, Report of the Special Rapporteur on violence against Women, its causes and consequences, Ms. Rashida Manjoo: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://docs.un.org/en/A/HRC/17/26/Add.5> (վերջին մուտք՝ 10.05.2025 թ.):

գույն փորձը, որը կարող է ուղեցույց հանդիսանալ պետությունների համար զենքի շրջանառության ազգային կանոնակարգերի մշակման գործընթացում:

Հիշյալ զեկույցների ուսումնասիրության արդյունքում մեր կողմից առանձնացվել են պետություններին հասցեագրված առավել կարևոր առաջարկներն ու միջոցառումները, որոնք միտված են մարդու իրավունքների պաշտպանության նպատակով արդյունավետ կերպով կարգավորել քաղաքացիական անձանց կողմից հրազենին հասանելիությունը: Մասնավորապես, այդ զեկույցներում պետությունների համար սահմանվում է պարտավորություն՝

➤ ապահովել, որ քաղաքացիական անձանց կողմից հրազենի ձեռքբերումը, պահպանումը և օգտագործումը սահմանող **կանոնակարգերը ներառեն համապատասխան միջոցներ, որոնք ուղղված են կանխելու անօրինական գործունեությունը, այդ թվում՝ հրազենի անօրինական շրջանառությունը**²⁷,

➤ կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու զուգահեռ, զինված բռնության զոհերին տրամադրել պաշտպանության և փոխհատուցման արդյունավետ միջոցներ, ներառյալ նրանց ռեաբիլիտացիայի հնարավորությունն ապահովելու համար պատշաճ բժշկական օգնության հասանելիությունը: Պետությունները հատկապես պետք է պաշտպանեն կանանց և երեխաներին, ովքեր տառապում են ինչպես օրինական, այնպես էլ ապօրինի հրազեն կրելու վսասակար հետևանքներից²⁸,

➤ պետության իրավասության ներքո գտնվող բոլոր անձանց և կազմակերպությունների կողմից հրազենի պահպանման օրինականության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նպատակով այդ ոլորտում ընդունել թույլտվությունների, գրանցման, մոնիտորինգի, թույլտվությունների վերանայման և պարտադիր վերապատրաստման վերաբերյալ համապատասխան օրենքներ, կանոնակարգեր և վարչական ընթացակարգեր²⁹,

➤ ներդնել թույլտվությունների համակարգ, որը նախատեսում է **զենք ձեռք բերելու հավակնող անձի քրեական անցյալի բացակայության վերաբերյալ հստակ չափանիշների սահմանում**, ինչպես նաև անձի հոգեկան առողջության վիճակի վերաբերյալ պահանջներ: Դա նպատակ է հետապնդում հրազենին հասանելիությունից զրկել այն անձանց, ովքեր հնարավոր վտանգ են ներկայացնում դրա չարաշահման տեսանկյունից³⁰,

➤ հրազենի ապօրինի օգտագործման, պահման, շրջանառության կամ միջազգային չարտոնված փոխանցման հետ կապված իրավախախտումների համար **սահմանել քրեական և (կամ) վարչական պատիժներ**³¹,

➤ պարբերաբար ուսումնասիրել, վերահսկել և ներառել զեկույցներում զինված բռնության և հրազենի տարածման ծավալների, ներառյալ ապօրինի կերպով զենք պահելու վերաբերյալ տեղեկատվությունը: Թեև դրա համար առաջնային պատասխանատվությունը դրված է պետական իշխանության մարմինների վրա, այնուամենայնիվ, այս առումով կարևոր դեր են խաղում Միավորված ազգերի կազմակերպությունը, դրա տարածաշրջանային մարմիններն

²⁷ Տե՛ս A/HRC/RES/50/12, Human rights and the regulation of civilian acquisition, possession and use of firearms. Report of the United Nations High Commissioner for Human Rights Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://digitallibrary.un.org/record/3985527?ln=en&v=pdf> (վերջին մուտք՝ 03.05.2025թ.)

²⁸ Տե՛ս A/HRC/32/21, Human rights and the regulation of civilian acquisition, possession and use of firearms. Report of the United Nations High Commissioner for Human Rights: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://docs.un.org/en/A/HRC/32/21> (վերջին մուտք՝ 27.02.2025 թ.):

²⁹ Տե՛ս նույն տեղում:

³⁰ Տե՛ս նույն տեղում:

³¹ Տե՛ս նույն տեղում:

ու մեխանիզմները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության անդամները, այդ թվում՝ իրավապաշտպանները³²,

➤ ընդունել օրենսդրություն, որը կսահմանի զենքի պոտենցիալ գնորդների և ստացողների նախնական ստուգման պահանջ, այն է՝ նախքան հրազենի վաճառքի կամ փոխանցման մասին գործարք կնքելը այդ անձանց մանրակրկիտ ուսումնասիրություն, որն առնվազն ենթադրում է նրանց քրեական անցյալի բացակայություն, **հատկապես, բռնությամբ զուգորդված հանցանքների** հետ կապված. բռնությամբ զուգորդված հանցանքներ կատարելու համար մեղադրանքի առաջադրման, նախկինում գենդերային, սեքսուալ, կենցաղային բռնության գործարքած լինելու, առողջական վիճակի, ներառյալ՝ նախկինում թմրամիջոցների կամ ալկոհոլի չարաշահման կամ հոգեկան առողջության խնդիրների առկայության վերաբերյալ հանգամանքների ստուգում, որը կարող է հանգեցնել անձի ինքնաձեռնասպան կամ այլ անձանց վնասելուն³³,

➤ ընդունել օրենսդրություն, որն ուղղված է բոլոր անձանց, հատկապես երեխաների պաշտպանությանը իրենց կամ ուրիշներին վնասելու հնարավորությունից և կսահմանի հրազենի ապահով և անվտանգ պայմաններում պահպանելու պահանջ³⁴,

➤ ապահովել՝ անհատապես և միմյանց հետ փոխկապակցված, հրազենի մասին օրենսդրության արդյունավետ կիրառումը, ներառյալ՝ զենքի ապօրինի առևտրի կանխարգելումը: Բացի այդ, պետությունները պետք է ապահովեն, որ զենքի մասին օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններին տրվեն բավարար լիազորություններ և ռեսուրսներ, ինչպես նաև անհրաժեշտ է մշակել քաղաքականություն, որը կապահովի համապատասխան մարմինների միջև արդյունավետ համակարգումը³⁵:

Ներպետական կանոնակարգերը

Զենքի շրջանառությունը, ինչպես նաև դրա հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են 2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունված «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք):

Մասնավորապես, Օրենքով ամրագրվել են զենքի շրջանառության ոլորտը կարգավորող ազգային կանոնակարգերը՝ սահմանելով ՀՀ-ում շրջանառության մեջ գտնվող զենքի տեսակները, զենքի շրջանառության վրա տարածվող սահմանափակումները, լիցենզավորմանը և թույլտվություններին ներկայացվող հիմնական պահանջները, լիցենզիաների գործողությունը դադարեցնելու, կասեցնելու, թույլտվություններն ուժը կորցրած ճանաչելու, զենքի նկատմամբ սեփականության իրավունքը դադարեցնելու, զենք և ռազմամթերք առգրավելու, վերցնելու և ոչնչացնելու դեպքերը:

Բացի դրանից՝ Օրենքով սահմանվել են զենք ձեռք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, այն ձեռք բերելու հավակնող անձին ներկայացվող պահանջները, ինչպես

³² Տե՛ս նույն տեղում:

³³ Տե՛ս A/HRC/42/21, Impact of civilian acquisition, possession and use of firearms on civil, political, economic, social and cultural rights. Report of the United Nations High Commissioner for Human Rights, կետ 63(b), հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://digitallibrary.un.org/record/3862513?v=pdf> (վերջին մուտք՝ 04.05.2025թ.):

³⁴ Տե՛ս նույն տեղում, կետ 63(c):

³⁵ Տե՛ս A/HRC/53/49, Impact of the civilian acquisition, possession and use of firearms, Report of the United Nations High Commissioner for Human Rights, կետ 55(e), հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://digitallibrary.un.org/record/4012464?ln=en&v=pdf> (վերջին մուտք՝ 04.05.2025թ.):

նաև ամրագրվել են զենքի շրջանառությունն ապահովող լիցենզավորվող և թույլտվությունների գործունեությանը, զենքով պարզևատրմանը, դրա վաճառքին, նվիրատվությանը, փոխանցմանը, ժառանգմանը, գործադրմանը, շրջանառության նկատմամբ վերահսկողությանը և հրաձգարանների գործունեությանը վերաբերող իրավակարգավորումներ:

Միաժամանակ, միջազգային փորձին համահունչ՝ ՀՀ ներպետական օրենսդրությամբ զենքի ապօրինի շրջանառության համար նախատեսված է քրեական, իսկ օրինական զենքի շրջանառության սահմանված կանոնները խախտելու համար՝ վարչական պատասխանատվություն:

Ոլորտին վերաբերելի ներպետական կանոնակարգերը գնահատելով վերը վկայակոչված միջազգային փաստաթղթերում ամրագրված չափանիշների, այդ թվում՝ անձի կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու պետության պոզիտիվ պարտավորությունների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ դրանք ընդհանուր առմամբ համահունչ են և չեն հակասում սահմանված պահանջներին:

Այնուհանդերձ, ներպետական օրենսդրության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հարկ է փաստել, որ ոլորտին վերաբերելի մի շարք առանցքային հարցեր մնացել են չկարգավորված կամ կարգավորվել են թերի:

Այս առումով թերևս առավել մտահոգիչ են թույլտվությունների վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավակարգավորումները: Բանն այն է, որ այս ոլորտում թերի կանոնակարգումները կարող են զենքին հասանելիություն ապահովել այնպիսի անձանց, որը հղի է անդառնալի հետևանքներով հասարակական անվտանգության, անձանց կյանքի, առողջության, ինչպես նաև պետական մարմինների և կազմակերպությունների բնականոն գործունեության համար:

Այսպես՝ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել են լիցենզիաների գործողությունը դադարեցնելու, կասեցնելու և թույլտվություններն ուժը կորցրած ճանաչելու հիմքերը, ըստ որի՝

«Լիցենզիաների գործողությունը դադարեցվում, կասեցվում և թույլտվություններն ուժը կորցրած են ճանաչվում օրենքով սահմանված կարգով, եթե՝

1) ֆիզիկական կամ իրավաբանական անձն իր ներկայացրած դիմումով կամովին հրաժարվել է լիցենզիայից կամ թույլտվությունից, կամ տվյալ իրավաբանական անձը լուծարվել է, կամ տվյալ զենքի սեփականատերը մահացել է.

2) ֆիզիկական կամ իրավաբանական անձը մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ խախտել է կամ չի կատարել սույն օրենքի կամ զենքի շրջանառությունը կանոնակարգող այլ իրավական ակտերի պահանջները կամ նախատեսված ժամկետում չի վերացրել համապատասխան խախտումները.

3) առաջացել են սույն օրենքով նախատեսված՝ լիցենզիաներ կամ թույլտվություններ ստանալու իրավունքը բացառող հանգամանքներ.

4) ֆիզիկական կամ իրավաբանական անձը կատարել է իր տնօրինության տակ գտնվող զենքի և դրա փամփուշների այնպիսի կառուցվածքային փոփոխություններ, որոնց հետևանքով փոխվել են դրանց ձգաբանական կամ տեխնիկական բնութագրերը.

5) զենքով պարզևատրումը կատարվել է օրենքով նախատեսված պարզևատրման պայմանների խախտումով.

6) ֆիզիկական անձը հաշվառվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում՝ կենցաղային ոլորտում պարբերաբար իրավախախտումներ թույլ տալու համար, կամ նրա

նկատմամբ կիրառվել է «Ընդհանրական և կենցաղային բռնության կանխարգելման ու ընդհանրական և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով սահմանված նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում.

7) ֆիզիկական անձը հաշվառվել է հոգեբուժական կամ թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում կամ ձեռք է բերել զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդություններ և վիճակներ.

8) ֆիզիկական անձը չի անցել սույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված բժշկական հետազոտությունը.

9) ֆիզիկական անձը մեկ տարվա ընթացքում երկու անգամ թույլ է տվել հասարակական կամ կառավարման սահմանված կարգի դեմ ուրնձգվող վարչական իրավախախտում.

10) ֆիզիկական անձը դատապարտվել է դիտավորյալ կամ զենքի օգտագործմամբ անզգուշությամբ կատարված հանցագործություն կատարելու համար, և դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ, կամ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով:»:

Օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսվել են զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալը բացառող հանգամանքները, համաձայն որի՝

«Չենք ձեռք բերելու թույլտվություն չի տրվում՝

1) զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդություններ և վիճակներ ունեցող անձանց (հիվանդությունների և վիճակների ցանկը սահմանում է Կառավարությունը).

2) դիտավորյալ հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց, որոնց դատվածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված չէ.

3) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 152-րդ, 308-313-րդ և 315-321-րդ հոդվածներով նախատեսված կամ հրազենի գործադրմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց՝ անկախ դատվածությունը օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից.

4) հանցագործություն կատարելու համար պատիժ կրող անձանց, բացառությամբ անզգուշությամբ կատարված հանցագործության համար ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ կրող անձանց, եթե անձը չի դատապարտվել զենքի օգտագործմամբ անզգուշությամբ կատարված հանցագործության համար.

5) այն անձանց, որոնց նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում դիտավորյալ կամ զենքի օգտագործմամբ անզգուշությամբ կատարված հանցագործություն կատարելու համար (մինչև ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը կամ արդարացման դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը).

6) դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց.

7) զենքի շրջանառության կանոնները մեկ տարվա ընթացքում կրկնակի խախտած անձանց.

8) դիմելու պահին մեկ տարվա ընթացքում կրկնակի հասարակական կամ կառավարման սահմանված կարգի դեմ ուրնձգվող վարչական իրավախախտում կատարած անձանց.

9) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում չհաշվառված անձանց.

10) այն անձանց, որոնց նկատմամբ կիրառվել է «Ընդհանրական և կենցաղային բռնության կանխարգելման ու ընդհանրական և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպա-

նության մասին» օրենքով սահմանված նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում.

11) սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված հավաստագիր չունեցող անձանց.

12) այն անձանց, որոնց վերաբերյալ առկա է Հայաստանի Հանրապետության անվտանգությանն սպառնալիք ներկայացնելու մասին հիմնավոր կասկած:»:

Վերը նշված իրավանորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ վերը վկայակոչված միջազգային չափանիշներին համահունչ ՀՀ օրենսդրությամբ ներդրվել է զենք ձեռք բերելու հավակնող անձի նախնական ստուգման և տրված թույլտվությունների վերանայման կառուցակարգ, որով սահմանվել են նաև զենք ձեռք բերելու հավակնող անձի քրեական անցյալի և առողջական վիճակի վերաբերյալ հստակ չափանիշներ, ինչպես նաև ընտանեկան բռնության զոհերի իրավական պաշտպանությունը երաշխավորելու նպատակով նախատեսվել են թույլտվությունների տրամադրումը բացառող կամ արդեն իսկ տրված թույլտվություններն ուժը կորցրած ճանաչելու առանձին հիմքեր:

Զենք ձեռք բերելու հավակնող անձի քրեական անցյալի նախնական ստուգման համատեքստում առանձին հիմքով բացառվել է նաև զենք ձեռք բերելու թույլտվություն տրամադրել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 152-րդ, 308-313-րդ և 315-321-րդ հոդվածներով նախատեսված կամ հրազենի գործադրմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց՝ անկախ դատվածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից (Օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետ):

Այսպիսով, գործող իրավակարգավորմամբ ՀՀ-ում, ի թիվս այլնի, զենք ձեռք բերելու թույլտվություն չի տրվում ՀՀ քրեական օրենսգրքի 152-րդ, 308-313-րդ և 315-321-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարելու համար դատապարտված անձին: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հիշյալ հանցակազմերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ դրանք ահաբեկչություն և ահաբեկչական բնույթի մեծամասամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ են:

Ընդունելի համարելով հիշյալ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարած անձին զենք ձեռք բերելու թույլտվություն չտրամադրելու քաղաքականությունը՝ այնուամենայնիվ, մեզ համար անընդունելի է ծանր կամ առանձնապես ծանր այլ հանցանքներ կատարած անձին զենքին հասանելիություն ապահովելու մոտեցումը՝ անկախ այդ անձի դատվածությունը վերացված կամ մարված լինելու հանգամանքից: Բանն այն է, որ գործող իրավակարգավորումների պայմաններում զենք ձեռք բերելու թույլտվություն կարող են ստանալ անձինք, ովքեր, օրինակ, նախկինում դատապարտվել են այնպիսի ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարելու համար, որոնք ուղղված են ինչպես անձի կյանքի (օրինակ՝ սպանության) կամ առողջության (օրինակ՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու), այնպես էլ այլ՝ սեփականության (օրինակ՝ ավագակության) կամ հասարակական անվտանգության (օրինակ՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու, ստանալու կամ պահպանելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու) դեմ: Կարծում ենք՝ նման իրավիճակը լուրջ սպառնալիք է պարունակում մարդու, հասարակության և պետության անվտանգության տեսանկյունից: Այս առումով, իհարկե, կարող է քննադատության արժանանալ առանց տարբերակման բոլոր ծանր և առանձնապես ծանր հանցանքներ կատարած անձանց զենքին հասանելիությունը բացառելու առաջարկը: Մասնավորապես, որպես հիմնավորում կարող է նշվել, որ որոշ խումբ ծանր կամ առանձնապես

Ծանր հանցանքներ կատարած անձինք՝ պայմանավորված կատարված հանցանքի բնույթով (օրինակ՝ հարկերը, տուրքերը կամ այլ վճարները առանձնապես խոշոր չափով չվճարելը կամ խոշոր չափերով փողերի վաճուճումը) այլ հանգամանքների բացակայության պայմաններում՝ զենքի չարաշահման տեսանկյունից կարող են նույնքան վտանգավոր չլինել, որքան վերը թվարկված հանցանքները կատարած անձինք: Այնուամենայնիվ, կարծում ենք՝ առաջարկվող մոտեցումը արդարացված է, քանի որ ծանր և առանձնապես ծանր հանցանքի վտանգավորությունն արդեն իսկ հաշվի է առնվել օրենսդրորեն դրանք դասակարգելիս և այն կատարած անձի համար քաղաքացիական հասարակությունում օրենսդրությամբ որոշակի անբարենպաստ հետևանքներ նախատեսելը համաչափ է և հիմնավոր: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ անձի կողմից նախկինում ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելը՝ որպես զենք ձեռք բերելու իրավունքը բացառող հանգամանք, ընդունելի պրակտիկա է ինչպես եվրոպական³⁶, այնպես էլ հետխորհրդային տարածաշրջանում³⁷:

Միաժամանակ, ասվածը չի բացառում զենքին հասանելիության սահմանափակումներ նախատեսել նաև ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց համար: Տվյալ դեպքում, կարծում ենք՝ արդեն իսկ անհրաժեշտ է օրենսդրորեն հաշվի առնել այդ հանցանքների բնույթը: Մասնավորապես, կարծում ենք՝ արդարացված չէ զենք ձեռք բերելու թույլտվություն տրամադրել այն անձանց, ովքեր նախկինում **կատարել են բռնությամբ զուգորդված** ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքներ: Հարկ է նշել, որ բռնությամբ զուգորդված հանցանքներ կատարելու հանգամանքը՝ որպես զենք ձեռք բերելու հավակնող անձի նախնական ստուգման համար ներկայացվող պահանջ, սահմանվել է նաև ՄԱԿ-ի գլխավոր հանձնակատարի կողմից պետություններին հասցեագրված վերը նշված առաջարկություններում: Այսպես՝ այդ առաջարկություններով պետությունների համար, ի թիվս այլնի, սահմանվել է պարտականություն ընդունել օրենսդրություն, որը կամրագրի զենքի պոտենցիալ գնորդների և ստացողների նախնական ստուգման պահանջ, այն է՝ նախքան հրազենի վաճառքի կամ փոխանցման մասին գործարք կնքելը այդ անձանց մանրակրկիտ ուսումնասիրություն, որն առնվազն ենթադրում է նրանց քրեական անցյալի բացակայություն, **հատկապես, բռնությամբ զուգորդված հանցանքների** հետ կապված³⁸: Միաժամանակ, կարծում ենք, որ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց զենքին հասանելիությունը սահմանափակելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն կատարված հանցանքի բնույթը, այլ նաև՝ կատարման պարբերականությունը: Այս չափանիշի նախատեսումը նպատակ է հետապնդում բացառել նախկինում մեկ անգամ բռնությամբ զուգորդված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձի նկատմամբ քննարկվող սահմանափակման տարածումը: Հակառակ դեպքում, կատարվի մի իրավիճակ, երբ ֆիզիկական ներգործության կամ առողջությանը թեթև վնաս պատճառելու համար մեկ անգամ դատապարտված³⁹ անձը ան-

³⁶ Տե՛ս Directive (EU) 2021/555 of the European Parliament and of the Council of 24 March 2021 on control of the acquisition and possession of weapons (codification), կետ 18: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32021L0555> (վերջին մուտք՝ 06.04.2025 թ.):

³⁷ Տե՛ս Федеральный закон «Об оружии» от 13.12.1996 N 150-ФЗ, Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_12679/bf02c10cdf4f0e8585bde194e0f1e786b56f897/ (վերջին մուտք՝ 06.04.2025թ.):

³⁸ Տե՛ս A/HRC/42/21, Impact of civilian acquisition, possession and use of firearms on civil, political, economic, social and cultural rights. Report of the United Nations High Commissioner for Human Rights, կետ 63(b), հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://digitallibrary.un.org/record/3862513?v=pdf> (վերջին մուտք՝ 04.05.2025թ.):

³⁹ Իհարկե, եթե դա չի կատարվել զենքի գործադրմամբ, քանի որ դա ինքնին թույլտվությունը մերժելու առանձին օրենսդրական հիմք է:

համաչափորեն կզրկվի քաղաքացիական զենք ձեռք բերելու հնարավորությունից: Միննույն ժամանակ, կարծում ենք՝ անձի կողմից նախկինում երկու կամ ավելի անգամ (պարբերաբար) բռնությամբ զուգորդված հանցանքներ կատարած լինելու հանգամանքը վկայում է տվյալ անձի՝ նորմայից շեղվող, հակասոցիալական վարքագծի և բռնություն գործադրելու հակումների մասին: Ընդ որում, կրիմինոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ զենքի առկայությունը և տեսքն արդիականացնում է ագրեսիվ պահանջմունքները, առավել նպաստում բռնության գործադրմանը⁴⁰ և տվյալ դեպքում զենքի առկայությունը կարող վերջինիս մղել բռնությամբ զուգորդված նոր հանցանք կատարելու, որը հղի է անդառնալի հետևանքներով հնարավոր զոհի համար:

Այս առումով թերևս բավականին խիստ մոտեցում է ցուցաբերվել ՌԴ ներպետական օրենսդրությամբ, որով բացառվել է զենք ձեռք բերելու թույլտվություն տրամադրել հանցանք կատարելու համար երկու կամ ավելի անգամ դատապարտված անձանց⁴¹: Հիշյալ ձևակերպումից պարզ է դառնում, որ նշված հիմքի առկայությունը հավաստելու համար բավական է միայն անձի՝ անկախ սուբյեկտիվ կողմի դրսևորման ձևից (դիտավորություն կամ անզգուշություն) ցանկացած հանցանքի համար երկու կամ ավելի անգամ դատապարտված լինելու հանգամանքը:

Բացի այդ, ինչպես նկատում ենք, Օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով նախատեսված իրավակարգավորմամբ զենք ձեռք բերելու թույլտվություն չի տրվում **հրազենի գործադրմամբ** դիտավորյալ հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց, իսկ հասարակական անվտանգության, անձանց կյանքի, առողջության, ինչպես նաև պետական մարմինների և կազմակերպությունների բնականոն գործունեության համար վտանգ ստեղծող զենքի մյուս տեսակներով (սառը, նետողական և այլն) կամ ռազմամթերքի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի գործադրմամբ դիտավորյալ հանցագործություն կատարած անձանց համար օրինական զենք ձեռք բերելու որևէ արգելք նախատեսված չէ: Ըստ էության, օրենսդրությամբ նման տարբերակված մոտեցում դրսևորելը որևէ կերպ չի կարող հիմնավորված լինել և չի բխում սույն ոլորտում ընդունելի կարգավորումների տրամաբանությունից:

Միաժամանակ, կարծում ենք՝ արդարացված չէ քննարկվող իրավակարգավորմամբ նախատեսված արգելքը բացառապես պայմանավորել անձի՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով **դատապարտված լինելու հանգամանքով**՝ չնախատեսելով սահմանափակում այն անձանց համար, որոնց նկատմամբ վերը նշված հանցանքներ կատարելու համար քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական հետապնդում չի հարուցվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի⁴² 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-14-րդ կետերով նախատեսված «ոչ ռեաբիլիտացնող» հիմքերով:

Ասվածի վերաբերյալ հարկ է ընդգծել, որ «ոչ ռեաբիլիտացնող» հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումը թեև չի կարող նույնացվել անձի մեղավորությունը հաստատող մեկ այլ դատավարական փաստաթղթի՝ դատավճռի հետ, այնուամենայնիվ, այդ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու համար արդարացի է:

⁴⁰ Տե՛ս Ա. Գաբուլյան, Կրիմինալոգիա (դասախոսություններ), Երևան 2011, էջեր 69-70:

⁴¹ Տե՛ս Федеральный закон «Об оружии» от 13.12.1996 N 150-ФЗ, հոդված 13, մաս 20, կետ 3.5: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_12679/ (վերջին մուտք՝ 28.04.2025թ.):

⁴² Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, ընդունվել է 30.06.2022 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ., ՀՕ-306-Ն: Գործում է:

րեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշման մեջ հսկող դատախազն արտահայտում է իր ենթադրությունն առ այն, որ անձը կատարել է իրեն մեղսագրվող հանցավոր արարքը: Ընդ որում, տվյալ դեպքում ենթադրյալ հանցանք կատարած անձը ևս ընդունում է իրեն մեղսագրվող արարքի կատարման հանգամանքը, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների համաձայն՝ ոչ արդարացնող հանգամանքների առկայությունը քրեական հետապնդումը բացառող չէ, եթե անձն առարկում է դրա դեմ այն հիմքով, որ չի կատարել իրեն մեղսագրվող արարքը (12-րդ հոդվածի 4-րդ մաս): Նմանօրինակ պայմաններում, մեր կարծիքով, «ոչ ռեաբիլիտացնող» հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումը զենքի շրջանառության կարգավորման ոլորտում անձի իրավունքների սահմանափակման տեսանկյունից կարող է առաջացնել նույն իրավական հետևանքները, ինչ վերջնական մեղադրական դատավճիռը և այդ հանգամանքը չի կարող դիտարկվել անհամաչափ միջամտություն անձի իրավունքների նկատմամբ:

Ընդ որում՝ հարկ է ընդգծել, որ «ոչ ռեաբիլիտացնող» հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելը Օրենքով նախատեսվել է թույլտվություններն ուժը կորցրած ճանաչելու ինքնուրույն հիմք (Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ), սակայն անհասկանալիորեն չի նախատեսվել որպես զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալու իրավունքը բացառող հանգամանք:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ զենքին հասանելիություն ապահովելու պետական նման քաղաքականությունը չի բխում վերը նշված միջազգային փաստաթղթերով սահմանված՝ թույլտվությունների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու և անձի կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու պետության ստանձնած պոզիտիվ պարտավորություններից, քանի որ նման թերի կանոնակարգումները կարող են զենքին հասանելիություն ապահովել այնպիսի անձանց, ովքեր վտանգ են ներկայացնում դրա չարաշահման տեսանկյունից: Հետևաբար, գործող իրավակարգավորումները պետք է վերանայվեն և վերածնակերպվեն անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության լույսի ներքո:

Մասնավորապես, հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք Օրենքի 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Ձեռք ձեռք բերելու թույլտվություն չի տրվում՝

(...)

3) եթե անձը դատապարտվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու համար՝ անկախ դատավածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից կամ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով.

3.1.) եթե անձը երկու կամ ավելի անգամ դատապարտվել է բռնությամբ զուգորդված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելու համար՝ անկախ դատավածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից կամ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով.

3.2.) եթե անձը դատապարտվել է զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի գործադրմամբ դիտարկողյալ հանցանք կատարելու համար՝ անկախ դատավա-

ծությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից կամ ԿԿ-ի անձի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով.»:

ՄԱԿ-ի վերը նշված փաստաթղթերի վերլուծությունից բխում է, որ զենքի հնարավոր չարաշահումներից անձի, հասարակության և պետության իրավական պաշտպանության միջոցները կարող են ներառել ինչպես քրեական, այնպես էլ վարչական պատասխանատվության միջոցներ⁴³:

Ինչպես վերը նշվեց, օրինական զենքի շրջանառության համար սահմանված կանոնները խախտելու համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն: Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով⁴⁴ նախատեսվել են առանձին զանցակազմեր, որոնց խախտումը կարող է հանգեցնել վարչաիրավական ներգործության միջոցների՝ վարչական տույժերի նշանակման:

Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով վարչական պատասխանատվություն է նախատեսված զենքի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների վաճառքի կարգը խախտելու (հոդված 160), բնակավայրերում և դրա համար չհատկացված տեղերում կամ սահմանված կարգի խախտումով զենքից կրակելու (հոդված 173), զենք ձեռք բերելու կամ վաճառելու կարգը (հոդված 190), զենքը կամ ռազմամթերքը պահելու, տեղափոխելու (փոխադրելու), կրելու կամ օգտագործելու (հոդված 191), զենքի գրանցման (վերագրանցման) ժամկետները կամ հաշվառման վերցնելու կանոնները խախտելու (հոդված 192), ինչպես նաև զենքը և ռազմամթերքն իրացնելուց խուսափելու (հոդված 193) և զենքի հարդարման վերաբերյալ սահմանված նորմերը խախտելու (հոդված 193.2) համար:

Այս համատեքստում հարկ է անդրադառնալ Զենքի շրջանառության կարգավորման մասին օրենքով սահմանված՝ զենքի շրջանառության վրա տարածվող մի շարք սահմանափակումների:

Այսպես.

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Արգելվում է՝

(...)

2) քաղաքացիական և ծառայողական զենքի վրա անադմուկ հրաձգության նպատակով կառուցված կամ արտադրված հարմարանքներ տեղադրելը.

3) զենք ուղարկել կամ առաքել փոստով կամ ուղեբեռով. (...):»:

Հիշյալ իրավանորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ ՀՀ-ում արգելվում է քաղաքացիական և ծառայողական զենքի վրա տեղադրել անադմուկ հրաձգության նպատակով կառուցված կամ արտադրված հարմարանքներ, ինչպես նաև զենք ուղարկել կամ առաքել փոստով կամ ուղեբեռով: Ընդ որում՝ դրանց բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ վերը նշված պահանջները վերաբերում են օրինական շրջանառության մեջ գտնվող զենքին:

⁴³ Տե՛ս A/HRC/32/21, Human rights and the regulation of civilian acquisition, possession and use of firearms. Report of the United Nations High Commissioner for Human Rights: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://docs.un.org/en/A/HRC/32/21> (վերջին մուտք՝ 27.02.2025թ.):

⁴⁴ Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը: Ընդունվել է 06.12.1985թ., ուժի մեջ է մտել 01.06.1986թ., գործում է:

Այնուհանդերձ, ոլորտին վերաբերելի իրավակարգավորումների ուսումնասիրության արդյունքում հնարավոր է փաստել, որ զենքի շրջանառության համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիշյալ պահանջների կատարումը երաշխավորված չէ պետական հարկադրանքի կիրառմամբ:

Այլ կերպ՝ զենքի շրջանառության վրա տարածվող վերը նշված սահմանափակումները խախտելու համար ՀՀ օրենսդրությամբ պատասխանատվություն նախատեսող նորմ առկա չէ և անձի համար չի առաջանում իրավական ներգործությամբ երաշխավորված անբարենպաստ հետևանքներ:

Կարծում ենք, հիշյալ իրավիճակը շտկելու նպատակով անհրաժեշտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը լրացնել զանցակազմերով, որոնցով վարչական պատասխանատվություն կնախատեսվի քաղաքացիական և ծառայողական զենքի վրա անադմուկ հրաձգության նպատակով կառուցված կամ արտադրված հարմարանքներ տեղադրելու, ինչպես նաև փոստով կամ ուղեբեռով զենք ուղարկելու կամ առաքելու համար: Հարկ է նկատել, որ համանման զանցկազմեր առկա են, օրինակ, Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում⁴⁵:

Բացի այդ, «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 25-րդ հոդվածի 8-րդ մասով զենքի սեփականատիրոջ համար սահմանվել է պարտականություն՝ զենքի կորսվելու, հափշտակվելու դեպքերում անհապաղ, բայց ոչ ուշ, քան կորստյան (կորսվելու, հափշտակվելու) փաստի մասին տեղեկանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, այդ մասին հայտնել Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:

Հարկ է նշել, որ օրենսդրորեն հիշյալ պահանջի ամրագրումն ինքնանպատակ չէ, քանի որ հափշտակված և կորսված զենքերը լուրջ վտանգ են ներկայացնում հասարակական անվտանգության համար: Քննարկվող թեմայի վերաբերյալ հրապարակված զեկույցներում նշվում է, որ հափշտակված զենքը հաճախ օգտագործվում է որպես հանցագործության գործիք: Օրինակ՝ Ամերիկյան առաջընթացի կենտրոնի (Center for American Progress) կողմից կատարված վերլուծության համաձայն՝ հափշտակված զենքերը հաճախ օգտագործվում են բռնի հանցագործություններ կատարելու համար⁴⁶:

Ըստ Գիֆորդս իրավական կենտրոնի (The Giffords Law Center) տվյալների՝ օրենքները, որոնք զենքի սեփականատերերից և դիլերներից պահանջում են իրավասու մարմնին հայտնել կորած կամ հափշտակված զենքերի մասին, կարող են զգալիորեն նպաստել կանխելու զենքի ապօրինի առևտուրը⁴⁷: Մեկ այլ վերլուծության համաձայն՝ ԱՄՆ-ի այն նահանգներում, որոնց օրենսդրությամբ պահանջվում է հայտնել կորած կամ հափշտակված զենքերի մասին, իրավապահ մարմինները կարողանում են ավելի արագ և արդյունավետ արձագանքել և հայտնաբերել դրանք⁴⁸:

Այսպիսով՝ սեփականատիրոջ համար զենքի կորսվելու, հափշտակվելու մասին անհապաղ իրավասու մարմնին հայտնելու պարտականության սահմանումն ունի իրավաչափ հիմք

⁴⁵ Տե՛ս «Кодекс Российской Федерации об административных правонарушениях» от 30.12.2001 N 195-ФЗ, հոդվածներ 20.9 և 20.12, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34661/432640dd2bce73a738db8af9042d038a67cce320/ (վերջին մուտք՝ 07.03.2025թ.):

⁴⁶ Տե՛ս Center for American Progress. (2017, July 25). Stolen guns in America. Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.americanprogress.org/article/stolen-guns-america/> (վերջին մուտք՝ 08.03.2025 թ.):

⁴⁷ Տե՛ս Giffords Law Center. (2023). Reporting lost & stolen guns. Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://giffords.org/lawcenter/gun-laws/policy-areas/owner-responsibilities/reporting-lost-stolen-guns/> (վերջին մուտք՝ 08.03.2025 թ.):

⁴⁸ Տե՛ս Everytown (n.d.). Report lost and stolen guns. Everytown For Gun Safety: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.everytown.org/solutions/report-lost-and-stolen-guns/#why-does-it-need-to-besolved> (վերջին մուտք՝ 08.03.2025 թ.):

և նպատակ է հետապնդում քրեական վարույթի շրջանակներում քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ «տաք հետքերով» հայտնաբերել օրինական շրջանառությունից դուրս եկած զենքը՝ այդ կերպ կանխելով վերջինի հետագա ապօրինի շրջանառությունը, դրա գործադրմամբ հանցանքների կատարումը, ինչպես նաև վերականգնել զենքի սեփականատիրոջ խախտված իրավունքները:

Այս համատեքստում հարկ է նաև ընդգծել, որ 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ, ԱՄՆ-ի տասնհինգ նահանգների, ինչպես նաև Կոլումբիայի շրջանի օրենսդրությամբ հրազենի սեփականատիրոջ համար նախատեսված է պարտականություն՝ իրավապահ մարմիններին հայտնել զենքի կորստյան կամ հափշտակության մասին: Այդ օրենքներով ֆիզիկական անձանցից մեծամասամբ պահանջվում է հայտնել բոլոր տեսակի հրազենների կորստյան կամ հափշտակության մասին, թեև օրենքները տարբերվում են սեփականատիրոջ կողմից այդ փաստի հայտնաբերելուց հետո իրավապահ մարմիններին հայտնելու համար սահմանված ժամանակահատվածի առումով⁴⁹: Ընդ որում, հատկանշական է այն հանգամանքը, որ ամերիկյան նահանգներում հիշյալ պարտականության չկատարումը զենքի սեփականատիրոջ համար կարող է առաջացնել վարչական կամ ընդհուպ քրեական պատասխանատվություն⁵⁰:

Այլ է իրավիճակը ՀՀ ներպետական օրենսդրությամբ: Չնայած ՀՀ օրենսդրությամբ ինչպես վերը նշվեց զենքի սեփականատիրոջ համար սահմանվել է պարտականություն՝ զենքի կորսվելու, հափշտակվելու դեպքերում անհապաղ, բայց ոչ ուշ, քան կորստյան (կորսվելու, հափշտակվելու) փաստի մասին տեղեկանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, այդ մասին հայտնել Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, այնուամենայնիվ, տվյալ դեպքում ևս նշված պարտականության չկատարումը զենքի սեփականատիրոջ համար չի առաջացնում որևէ անբարենպաստ իրավական հետևանք:

Կարծում ենք՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիշյալ պարտականության կատարումն ապահովելու նպատակով տվյալ դեպքում համաչափ կլինի սահմանել վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը լրացնելով զանցակազմով, որը վարչական պատասխանատվություն կնախատեսվի զենքի սեփականատիրոջ կողմից զենքի կորսվելու, հափշտակվելու դեպքերում անհապաղ, բայց ոչ ուշ, քան կորստյան (կորսվելու, հափշտակվելու) փաստի մասին տեղեկանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, այդ մասին իրավասու մարմին չհայտնելու համար:

Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքում եկել ենք մի շարք եզրակացությունների, որոնց հիմնականները հետևյալն են՝

1. Չենքի շրջանառությունը կանոնակարգող ներպետական իրավակարգավորումները գնահատելով միջազգային փաստաթղթերում ամրագրված չափանիշների, այդ թվում՝ անձի կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու պետության պոզիտիվ պարտավորությունների լույսի ներքո՝ հարկ է արձա-

⁴⁹ Տե՛ս RAND Corporation. (2023, January 10). The effects of lost or stolen firearm reporting requirements: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.rand.org/research/gun-policy/analysis/lost-or-stolenfirearms.html> (վերջին մուտք՝ 08.03.2025 թ.):

⁵⁰ Տե՛ս National Policing Institute. (2024). Keeping firearms out of the wrong hands Addressing theft and diversion through reporting of lost and stolen firearms. Arlington, Virginia: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.policinginstitute.org/wp-content/uploads/2024/04/NPI_FirearmTheftReport_Final424.pdf (վերջին մուտք՝ 09.03.2025 թ.):

նագրել, որ դրանք ընդհանուր առմամբ համահունչ են և չեն հակասում սահմանված ստանդարտներին:

2. Այնուհանդերձ, ներպետական օրենսդրության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հարկ է փաստել, որ ոլորտին վերաբերելի մի շարք առանցքային հարցեր մնացել են չկարգավորված կամ կարգավորվել են թերի:

Այս առումով թերևս առավել մտահոգիչ են թույլտվությունների վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավակարգավորումները: Ձենքին հասանելիություն ապահովելու ներպետական մի շարք իրավակարգավորումներ չեն բխում միջազգային փաստաթղթերով սահմանված՝ թույլտվությունների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու և անձի կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու պետության ստանձնած պոզիտիվ պարտավորություններից: Ստեղծված իրավիճակը մտահոգիչ է, քանի որ նման թերի կանոնակարգումները կարող են զենքին հասանելիություն ապահովել այնպիսի անձանց, որոնք վտանգ են ներկայացնում դրա չարաչափան տեսանկյունից, հետևաբար, գործող իրավակարգավորումները պետք է վերանայվեն և վերաձևակերպվեն անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության լույսի ներքո:

3. Մասնավորապես, անընդունելի է ծանր կամ առանձնապես ծանր այլ հանցանքներ կատարած անձին զենքին հասանելիություն ապահովելու մոտեցումը՝ անկախ այդ անձի դատվածությունը վերացված կամ մարված լինելու հանգամանքից: Բանն այն է, որ գործող իրավակարգավորումների պայմաններում զենք ձեռք բերելու թույլտվություն կարող են ստանալ անձիք, ովքեր նախկինում դատապարտվել են այնպիսի ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարելու համար, որոնք ուղղված են ինչպես անձի կյանքի (օրինակ՝ սպանության) կամ առողջության (օրինակ՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու), այնպես էլ այլ՝ սեփականության (օրինակ՝ ավազակության) կամ հասարակական անվտանգության (օրինակ՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու, ստանալու կամ պահպանելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ դեկավարելու) դեմ: Նման իրավիճակը սպառնալիք է պարունակում մարդու, հասարակության և պետության անվտանգության տեսանկյունից:

4. Անհրաժեշտ է զենքին հասանելիության սահմանափակումներ նախատեսել նաև բռնությամբ զուգորդված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց համար: Տվյալ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն կատարված հանցանքի բնույթը, այլ նաև՝ կատարման պարբերականությունը: Այս չափանիշի նախատեսումը նպատակ է հետապնդում բացառել նախկինում մեկ անգամ բռնությամբ զուգորդված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձի նկատմամբ քննարկվող սահմանափակման տարածումը: Միևնույն ժամանակ, անձի կողմից նախկինում երկու կամ ավելի անգամ (պարբերաբար) բռնությամբ զուգորդված հանցանքներ կատարած լինելու հանգամանքը վկայում է տվյալ անձի՝ նորմայից շեղվող, հակասոցիալական վարքագծի և բռնություն գործադրելու հակումների մասին:

5. Օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով նախատեսված իրավակարգավորման վերլուծությունից բխում է, որ ՀՀ-ում զենք ձեռք բերելու թույլտվություն չի տրվում հրազենի գործադրմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց, իսկ հասարակական անվտանգության, անձանց կյանքի, առողջության, ինչպես նաև պետական մարմինների և կազմակերպությունների բնականոն գործունեության համար վտանգ ստեղծող զենքի մյուս տեսակներով (սառը, նետողական և այլն) կամ ռազմամթերքի,

պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի գործադրմամբ դիտավորյալ հանցագործություն կատարած անձանց համար օրինական զենք ձեռք բերելու որևէ արգելք նախատեսված չէ: Նման տարբերակված մոտեցումը որևէ կերպ հիմնավորված չէ և չի բխում սույն ոլորտում ընդունելի կարգավորումների տրամաբանությունից:

6. Արդարացված չէ Օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արգելքը բացառապես պայմանավորել անձի՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով դատապարտված լինելու հանգամանքով՝ չնախատեսելով սահմանափակում այն անձանց համար, որոնց նկատմամբ վերը նշված հանցանքներ կատարելու համար քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական հետապնդում չի հարուցվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-14-րդ կետերով նախատեսված «ոչ ռեաբիլիտացնող» հիմքերով:

Կարծում ենք՝ «ոչ ռեաբիլիտացնող» հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելը կամ քրեական հետապնդում չհարուցելը զենքի շրջանառության կարգավորման ոլորտում անձի իրավունքների սահմանափակման տեսանկյունից կարող է առաջացնել նույն իրավական հետևանքները, ինչ վերջնական մեղադրական դատավճիռը և այդ հանգամանքը չի կարող դիտարկվել անհամաչափ միջամտություն անձի իրավունքների նկատմամբ:

7. Հիմք ընդունելով վերը նշվածը՝ առաջարկում ենք Օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Զենք ձեռք բերելու թույլտվություն չի տրվում՝

(...)

3) եթե անձը դատապարտվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու համար՝ անկախ դատվածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից կամ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով.

3.1.) եթե անձը երկու կամ ավելի անգամ դատապարտվել է բռնությամբ զուգորդված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելու համար՝ անկախ դատվածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից կամ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով.

3.2.) եթե անձը դատապարտվել է զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի գործադրմամբ դիտավորյալ հանցանք կատարելու համար՝ անկախ դատվածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից կամ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով.

(...) »:

8. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը լրացնել զանցակազմերով, որոնցով վարչական պատասխանատվություն կնախատեսվի քաղաքացիական և ծառայողական զենքի վրա անադմուկ հրաձգության նպատակով կառուցված կամ արտադրված հարմարանքներ տեղադրելու, փոստով կամ ուղեբեռով զենք ուղարկելու կամ առաքելու, ինչպես նաև զենքի սեփականատիրոջ կողմից զենքի կորսվելու, հափշտակվելու դեպքերում անհապաղ, բայց ոչ ուշ, քան կորստյան (կորսվելու, հափշտակվելու) փաստի մասին տեղեկանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, այդ մասին իրավասու մարմին չհայտնելու համար:

Ամփոփագիր: Թեև զենքը կարևոր դեր և նշանակություն ունի իրավակարգի պահպանման, մարդու իրավունքների պաշտպանության և անվտանգության ապահովման գործընթացում, սակայն հաճախ այն օգտագործվում է նաև մարդու իրավունքների խախտման նպատակով:

Մարդու իրավունքների միջազգային իրավունքին համապատասխան՝ պետությունները պարտավոր են պատշաճ կերպով պաշտպանել մարդու իրավունքները, ինչը ենթադրում է պետության՝ մասնավոր անձանց կողմից մարդու իրավունքների իրացման գործընթացը խաթարող գործունեությունը կանխելու և կասեցնելու պարտավորության առկայություն:

Չնայած զենքի շրջանառությունը կանոնակարգող ՀՀ ներպետական իրավակարգավորումները ընդհանուր առմամբ համահունչ են և չեն հակասում միջազգային փաստաթղթերում ամրագրված չափանիշներին, այնուամենայնիվ, ներպետական օրենսդրության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հարկ է փաստել, որ ոլորտին վերաբերելի մի շարք առանցքային հարցեր մնացել են չկարգավորված կամ կարգավորվել են թերի: Հենց այս հիմնախնդրի հետազոտմանն էլ նվիրված է սույն հոդվածը:

Հոդվածի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքներով առաջարկել ենք թույլտվությունների վերաբերյալ Չենքի շրջանառության կարգավորման մասին օրենքով նախատեսված իրավակարգավորումները վերաձևակերպել անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության լույսի ներքո, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը լրացնել զանցակազմերով, որոնցով վարչական պատասխանատվություն կնախատեսվի Օրենքով սահմանված՝ զենքի շրջանառության վրա տարածվող մի շարք սահմանափակումներ և արգելքներ խախտելու համար:

Annotation. Although weapons play an important role and are important in maintaining law and order, protecting human rights and ensuring security, they are often used to violate human rights.

In accordance with international human rights law, states are required to ensure the proper protection of human rights, which, among other things, implies the obligation to prevent and suppress actions by private individuals aimed at impeding the realization of these rights.

Despite the fact that the national legislation of the Republic of Armenia regulating arms trafficking generally complies with international standards and does not contradict the provisions of international documents, an analysis of the current legislation shows that a number of key issues remain unresolved or have not been fully resolved. This article is devoted to the study of these problems.

Based on the results of the study, it is proposed to revise the legal provisions concerning the licensing system provided for by the RA Law “On Regulation of Arms Trafficking”, taking into account the need for more effective protection of fundamental human rights. In addition, it is proposed to supplement the Code of Administrative Offences with new offences providing for administrative liability for violations of legally established restrictions and prohibitions on arms trafficking.

Аннотация. Хотя оружие играет важную роль и имеет особое значение в деле поддержания правопорядка, защиты прав человека и обеспечения безопасности, оно нередко используется и с целью нарушения прав человека.

В соответствии с международным правом в области прав человека, государства обязаны надлежащим образом обеспечивать защиту прав человека, что, в том числе, предполагает обязанность предотвращать и пресекать действия частных лиц, направленные на воспрепятствование реализации этих прав.

Несмотря на то, что национальное законодательство Республики Армения, регулирующее оборот оружия, в целом соответствует международным стандартам и не противоречит положениям международных документов, анализ действующего законодательства показывает, что ряд ключевых вопросов остается неурегулированными или урегулированы недостаточно полно. Настоящая статья посвящена исследованию именно этих проблем.

По результатам проведённого исследования предлагается пересмотреть правовые положения, касающиеся разрешительной системы, предусмотренные Законом РА «О регулировании оборота оружия»,

с учётом необходимости более эффективной защиты фундаментальных прав человека. Кроме того, предлагается дополнить Кодекс об административных правонарушениях новыми составами правонарушений, предусматривающими административную ответственность за нарушение установленных законом ограничений и запретов, касающихся оборота оружия.

Քանալի բաներ - զենքի շրջանառություն, միջազգային իրավական կարգավորումներ, ներպետական կանոնակարգերի գնահատում, մարդու հիմնարար իրավունքների պաշտպանություն, օրենսդրության լավարկում:

Keywords: Arms trafficking, international legal regulations, assessment of national regulations, protection of fundamental human rights, improvement of legislation.

Ключевые слова: оборот оружия, международные правовые регулирования, оценка национальных нормативных актов, защита основных прав человека, совершенствование законодательства.

Օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկ

I. Իրավական ակտեր

1. ՀՀ օրենքը զենքի շրջանառության կարգավորման մասին: Ընդունվել է 05.10.2022թ., ուժի մեջ է մտել 28.04.2023 թ., ՀՕ-368-Ն: Գործում է,
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 30.06.2022 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ., ՀՕ-306-Ն: Գործում է,
3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք: Ընդունվել է 06.12.1985թ., ուժի մեջ է մտել 01.06.1986 թ.: Գործում է,
4. A/HRC/17/26/Add.5, <https://docs.un.org/en/A/HRC/17/26/Add.5>,
5. A/HRC/2/2 A/HRC/Sub.1/58/36 11.09. 2006, Report of the Sub-Commission on the Promotion and Protection of Human Rights on its Fifty-Eighth Session Geneva, <https://www.right-docs.org/doc/a-hrc-2-2/>,
6. A/HRC/20/16, <https://docs.un.org/en/A/HRC/20/16>,
7. A/HRC/29/27/Add.1, <https://docs.un.org/en/A/HRC/29/27/Add.1>,
8. A/HRC/32/21, Human rights and the regulation of civilian acquisition, possession and use of firearms. Report of the United Nations High Commissioner for Human Rights, <https://docs.un.org/en/A/HRC/32/21>,
9. A/HRC/42/21, Impact of civilian acquisition, possession and use of firearms on civil, political, economic, social and cultural rights. Report of the United Nations High Commissioner for Human Rights, <https://digitallibrary.un.org/record/3862513?v=pdf>,
10. A/HRC/53/49, Impact of the civilian acquisition, possession and use of firearms, Report of the United Nations High Commissioner for Human Rights, <https://digitallibrary.un.org/record/4012464?ln=en&v=pdf>,
11. A/HRC/RES/50/12, Human rights and the regulation of civilian acquisition, possession and use of firearms. Report of the United Nations High Commissioner for Human Rights, <https://digitallibrary.un.org/record/3985527?ln=en&v=pdf>,
12. A/HRC/Sub.1/58/27, <https://docs.un.org/en/A/HRC/Sub.1/58/27/Add.1>,
13. Andean Plan to Prevent, Combat and Eradicate Illicit Trade in Small Arms and Light Weapons in all its Aspects, <https://www.sipri.org/sites/default/files/research/disarmament/dualuse/pdf-archive-att/pdfs/can-andean-plan-to-prevent-combat-and-eradicate-illicit-trade-in-small-arms-and-light-weapons-in-all-its-aspects-english.pdf>,
14. Arab Model Law on Weapons, Ammunitions, Explosives and Hazardous Material Tunisia 2002, <https://www.sipri.org/sites/default/files/research/disarmament/dualuse/pdf-archive-att/pdfs/arab-league-model-law-on-weapons-ammunitions-explosives-and-hazardous-material.pdf>,

15. Bamako Declaration on an African Common Position on the Illicit Proliferation, Circulation and Trafficking of Small Arms and Light Weapon, <https://www.peaceau.org/uploads/bamako-declaration.pdf>,
16. Center for American Progress. (2017, July 25). Stolen guns in America, <https://www.americanprogress.org/article/stolen-guns-america/>,
17. Council Directive 91/477/EEC of 18 June 1991 on control of the acquisition and possession of weapons, <https://eur-lex.europa.eu/eli/dir/1991/477/oj>,
18. Directive (EU) 2021/555 of the European Parliament and of the Council of 24 March 2021 on control of the acquisition and possession of weapons (codification), <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32021L0555>,
19. Directive 2008/51/EC of the European Parliament and of the Council of 21 May 2008 amending Council Directive 91/477/EEC on control of the acquisition and possession of weapons, <https://eur-lex.europa.eu/eli/dir/2008/51/oj>,
20. E/CN.4/1999/68/Add.2, <https://docs.un.org/en/E/CN.4/1999/68/Add.2>,
21. E/CN.4/2005/72/Add.2, <https://docs.un.org/en/E/CN.4/2005/72/Add.2>,
22. E/CN.4/Sub.2/2002/39, <https://docs.un.org/en/E/CN.4/Sub.2/2002/39>,
23. E/CN.4/Sub.2/2003/29, <https://digitallibrary.un.org/record/499535?ln=ru&v=pdf>,
24. E/CN.4/Sub.2/2004/37/Add.1, <https://documents.un.org/doc/undoc/gen/g04/146/29/pdf/g0414629.pdf>,
25. Everytown (n.d.). Report lost and stolen guns. Everytown For Gun Safety, <https://www.everytown.org/solutions/report-lost-and-stolen-guns/#why-does-it-need-to-besolved>,
26. General Assembly, A/HRC/17/26/Add.5, Report of the Special Rapporteur on violence against Women, its causes and consequences, Ms. Rashida Manjoo, <https://docs.un.org/en/A/HRC/17/26/Add.5>,
27. Giffords Law Center. (2023). Reporting lost & stolen guns, <https://giffords.org/lawcenter/gun-laws/policy-areas/owner-responsibilities/reporting-lost-stolen-guns/>,
28. National Policing Institute. (2024). Keeping firearms out of the wrong hands. Addressing theft and diversion through reporting of lost and stolen firearms. Arlington, Virginia, https://www.policinginstitute.org/wp-content/uploads/2024/04/NPI_FirearmTheftReport_Final424.pdf
29. RAND Corporation. (2023, January 10). The effects of lost or stolen firearm reporting requirements, <https://www.rand.org/research/gun-policy/analysis/lost-or-stolenfirearms.html>,
30. United Nations General Assembly, A/54/2000, We the peoples: the role of the United Nations in the twenty-first century. Report of the secretary-General, https://treaties.un.org/doc/source/A_54_2000-Eng.pdf,
31. United Nations General Assembly, A/HRC/14/24/Add.7, Human Rights Council Fourteenth session Agenda item 3 Promotion and protection of all human rights, civil, political, economic, social and cultural rights, including the right to development, <https://docs.un.org/en/A/HRC/14/24/Add.7> ,
32. Violence Policy Center, When Men Murder Women: An Analysis of 2008 Homicide Data. Washington, DC, 2010, <https://www.vpc.org/studies/wmmw2010.pdf>,
33. Violence Policy Center, When Men Murder Women: An Analysis of 2022 Homicide Data. Washington, DC, 2024, <https://vpc.org/studies/wmmw2024.pdf>,
34. “Кодекс Российской Федерации об административных правонарушениях” от 30.12.2001 N 195-ФЗ, https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34661/432640dd2bce73a738db8af9042d038a67cce320/.
35. Замечание общего порядка № 31 [80] Характер общего юридического обязательства, налагаемого на государства-участники Пакта, CCPR/C/21/Rev.1/Add.13, <http://hrlibrary.umn.edu/russian/gencomm/Rhrcom31.html>,
36. Модельный закон об оружии, https://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=30968,
37. Федеральный закон «Об оружии» РФ от 13.12.1996 N 150-ФЗ, https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_12679/,

II. Դատական ակտեր

38. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության» որոշում,

39. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Բրանկո Թոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի» որոշում,

40. Inter-American Court of Human Rights, Velásquez-Rodriguez v. Honduras,

41. Inter-American Court of Human Rights, Case of the “Street Children” (Villagrán-Morales et al.) v. Guatemala,

III. Գրականություն

42. Ա. Գաբուզյան, Կրիմինալոգիա (դասախոսություններ), Երևան 2011,

43. Philip Alpers and Conor Twyford, Small Arms in the Pacific, 2003, <https://www.smallarmssurvey.org/sites/default/files/resources/SAS-OP08-Pacific.pdf>,

44. Paulozzi LJ, Saltzman LE, Thompson MP, Holmgreen P. Surveillance for Homicide Among Intimate Partners — United States, 1981-1998. MMWR CDC Surveill Summ. 2001 Oct 12;50(3):

Համբարձումյան Վ. - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, էլիասցե՝ virab.hambardzumyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 12.06.2025 թ., տրվել է գրախոսության 12.06.2025 թ., երաշխավորվել է Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Առաքելյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2025 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-86>

ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

*Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական
հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ,
Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս*

GEVORG ISRAYELYAN

*Candidate of Law, Associate Professor,
Head of the Scientific Research Center of Applied problems in criminology of
National Bureau of Expertises of National Academy of
Sciences of the Republic of Armenia,
Lecturer of the Department of Law at
Eurasia International University*

ГЕВОРГ ИСРАЕЛЯН

*кандидат юридических наук, доцент,
Начальник Научно-исследовательского центра прикладных проблем
криминологии Национального бюро экспертиз
Национальной академии наук Республики Армения,
преподаватель кафедры правоведения
Международного университета «Евразия»*

**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ՕԲՅԵԿՏԻՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**CHARACTERISTICS AND CRIMINOLOGICAL SIGNIFICANCE OBJECTIVE
SIGNS OF THE LEGAL STRUCTURE OF THE COMPUTER THEFT**

**ХАРАКТЕРИСТИКА И КРИМИНОЛОГИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ
ОБЪЕКТИВНЫХ ПРИЗНАКОВ ЮРИДИЧЕСКОГО СОСТАВА
КОМПЬЮТЕРНОГО ХИЩЕНИЯ**

Ներածություն

Հայտնի է, որ իրավաբանական կազմը հանցանքի օրենսդրական կեցության ձևն է: Ուստի բոլոր հանցատեսակներին բնորոշ հակաիրավականության առաջնային քրեաբանա-

կան նշանակությունն օրենքի կանխարգելիչ ազդեցությունն է: Իրականության մեջ առանձին հանցատեսակների օբյեկտիվ հատկանիշների դրսևորման քրեաբանական նշանակությունը պայմանավորված է կանխարգելիչ միջոցառումների մարտավարության և առանձնահատկությունների որոշման հնարավորությամբ: Սա հատկապես վառ է արտահայտված համակարգչային հափշտակության պարագայում: Այն բնութագրվում է կատարման եղանակների, միջոցների և օբյեկտիվ այլ հատկանիշների առանձնահատկություններով, որոնցով տարբերվում է ոչ միայն հափշտակության մյուս տեսակներից, այլև համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործություններից: Դա հնարավորություն է տալիս որոշելու համակարգչային հափշտակությունների կանխարգելիչ միջոցառումների բնույթը: Բացի դրանից՝ համակարգչային հափշտակության առանձին օբյեկտիվ հատկանիշներն իրենց դրսևորումն են գտնում քրեաբանական կոնկրետ իրադրություններում, որոնց իմացությունը հիմնարար նշանակություն ունի վերոհիշյալ հանցատեսակի կանխարգելման կազմակերպման գործում:

Սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին արձանագրված համակարգչային հափշտակությունների բացասական քրեաբանական միտումների¹ հետ կապված արդյունավետ կանխարգելիչ միջոցների և մարտավարական հնարքների ընտրության անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակն է ներկայացնել համակարգչային հափշտակության իրավաբանական կազմի օբյեկտիվ հատկանիշների նկարագիրը և քրեաբանական նշանակությունը:

Հիմնական հետազոտություն

Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասը հռչակում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սեփականության պաշտպանության իրավական միջոցներից է քրեաիրավական պաշտպանությունը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 30-րդ գլուխը նախատեսում է հափշտակությունների տեսակները, իսկ 31-րդ գլուխը՝ սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունները:

Օրենսդիրը հանցավոր է ճանաչել համակարգչային հափշտակությունը՝ պատասխանատվություն սահմանելով Օրենսգրքի 257-րդ հոդվածով:

Նշված օրինադրույթի, ինչպես նաև Օրենսգրքի համապատասխան այլ կարգավորումների (օրինակ՝ Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետ և այլն) վերլուծության և մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքում բացահայտել ենք համակարգչային հափշտակության իրավաբանական կազմի օբյեկտիվ տարրերը բնութագրող հետևյալ հատկանիշները և դրանց քրեաբանական նշանակությունը.

1. Համակարգչային հափշտակության օբյեկտը և առարկան.

Համակարգչային հափշտակության առարկան ուրիշի գույքն է: Հայտնի է՝ առարկան այն իրն է, որը հանդես է գալիս շարժական կամ անշարժ գույքի ձևով և գտնվում է մեկ այլ անձի սեփականության ֆոնդում: Ըստ այդմ, հափշտակության առարկա չեն կարող լինել.

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդում, էջ 19 // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf, Հայաստանի Հանրապետության դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդում, էջեր 16-17 // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf, Հայաստանի Հանրապետության դատախազության 2024 թվականի գործունեության մասին հաղորդում, էջեր 8, 16 // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4340020891.pdf (վերջին մուտք՝ 07.04.2025 թ.):

1) բնական վիճակում գտնվող առարկաները, եթե բնությունից չեն անջատվել մարդու աշխատանքով և ներառվել հասարակական կյանքի որևէ ոլորտում, օրինակ՝ տնտեսության,

2) ոչ նյութական բնույթի արժեքները, գիտական աշխատությունները և մտավոր սեփականության այլ օբյեկտները,

3) սեփականատիրոջ տիրապետությունից հանված կամ տիրազուրկ գույքը²:

Ելնելով այն հանգամանքից, որ քննարկվող հանցանքի առարկան ուրիշի գույքն է, համակարգչային հափշտակության օբյեկտը սեփականության պաշտպանության հասարակական հարաբերություններն են:

Ակնբախ է, որ հանցագործության օբյեկտը և առարկան դասվում են այն օբյեկտիվ հատկանիշների թվին, որոնցով համակարգչային հափշտակությունը տարբերվում է համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործություններից: Ուստի իրավական պաշտպանության տակ գտնվող հարաբերությունների բնույթով և հանցավոր ոտնձգության առարկայով է որոշվում հիշատակված հանցատեսակների կանխարգելիչ միջոցառումների տարբերակվածությունը:

2. Համակարգչային հափշտակությունը՝ որպես արարք.

Համակարգչային հափշտակությունը դրսևորվում է ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելով:

Նշվածից ելնելով՝

1) Հանցավորը հափշտակությունը կարող է կատարել ինչպես հարստանալու, ինքնահաստատվելու³, այնպես էլ մեկ այլ անձի, օրինակ՝ մերձավորին նվիրելու համար:

2) Հափշտակությունը կատարվում է ապօրինի՝ առանց իրավական հիմքի, և անհատույց՝ համարժեք գույքով, ծառայությամբ կամ այլ ձևով չհատուցելով: Հակառակ պարագայում հափշտակությունը բացակայում է: Օրինակ՝ գործատուն աշխատողին չի փոխանցել աշխատավարձը, և աշխատողը համակարգչային տեխնիկայի միջոցով տիրել է աշխատավարձի չափով գումարի⁴:

Իրավաբանական և քրեաբանական նշանակություն ունեն հանցագործության փուլերը: Մասնավորապես, կարևոր է հափշտակության ավարտման պահը, որով էլ որոշվում է՝ հանցանքն ավարտված է, թե ոչ:

Իրավաբանական նշանակությունը դրսևորվում է արարքի ճիշտ որակմամբ: Մասնավորապես, հափշտակությունն ավարտված է համարվում, եթե հանցավորը գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել: Հակառակ դեպքում, օրինակ՝ երբ հանցավորը տվյալը մուտքագրելու պահին բռնվել է, հափշտակությունն ավարտված չի կարող համարվել: Ուստի նման դեպքերում առկա է հանցափորձ:

Քրեաբանական նշանակությունը կայանում է նրանում, որ հանցավոր գործունեության տարբեր փուլերում կանխարգելիչ միջոցառումները պետք է իրականացվեն տարբերակված: Այսպես, հանցանքի նախապատրաստության փուլում կարող են արդյունավետ լինել համոզման, իսկ հանցափորձի փուլում՝ հարկադրանքի միջոցները: Շարունակվող հանցանքի պարագայում, երբ կատարվել է միասնական դիտավորության մեջ ընդգրկված արարքների մի

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) / Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 345-346:

³ Տե՛ս *Шаповников А.А.*, Криминологическая характеристика личности киберпреступника // <https://cyberleninka.ru/article/n/kriminologicheskaya-harakteristika-lichnosti-kiberprestupnika-1/viewer> (վերջին մուտք՝ 07.04.2025թ.):

⁴ Տե՛ս *Իսրայելյան Գ. Վ.*, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Մեկնաբանություններ / Գ. Վ. Իսրայելյան: Եր.: Հեղ. հրատ., 2023, հատոր 2, էջ 130:

մասը, մյուս մասերի կանխարգելման գործում կիրառելի են ինչպես համոզման, այնպես էլ հարկադրանքի միջոցները:

3. Համակարգչային հափշտակության կատարման եղանակները.

Պարտադիր օբյեկտիվ հատկանիշ է հանցանքի կատարման եղանակը: Օրենքը նախատեսում է համակարգչային հափշտակության կատարման հետևյալ եղանակները՝

1) համակարգչային տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության՝

ա) մուտքագրելը՝ տվյալը ներմուծելը,

բ) փոփոխելը՝ սկզբնական տեսքը մոդիֆիկացնելը, ինչը դժվարություն է առաջացնում դրա օգտագործման համար,

գ) ոչնչացնելը՝ այնպիսի վիճակի հասցնելը, որն անհնար է դարձնում տվյալի նույնացումը կամ ըստ նպատակային նշանակության օգտագործումը,

դ) ուղեփակելը (մեկուսացնելը)՝ անհասանելի դարձնելը, ինչը հնարավորություն չի տալիս այն օգտագործել,

2) համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ որևէ այլ եղանակով ներգործելը, օրինակ՝ տվյալն աղավաղելը⁵:

Քրեական գործերի՝ մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները հավաստում են, որ հափշտակության ամենատարածված եղանակը համակարգչային տվյալը մուտքագրելն է:

Վերը թվարկված եղանակներով համակարգչային հափշտակությունը տարբերվում է հափշտակության մյուս տեսակներից, ինչը ևս պետք է հաշվի առնել կանխարգելիչ միջոցառումների ընտրության և մարտավարության որոշման գործընթացում:

Բացի դրանից՝ եղանակներն ունեն նաև քրեաբանական հետևյալ նշանակությունը. համակարգչային հափշտակության եղանակները յուրահատուկ դրսևորումներ են ունենում քրեաբանական տարբեր իրադրություններում, որոնց իմացությունը պետք է դրվի խնդրո առարկա հանցատեսակների հատուկ և զոհաբանական կանխարգելման կազմակերպման գործընթացի հիմքում:

Քրեական գործերի՝ մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են տվել բացահայտել համակարգչային հափշտակությունների կատարման հետևյալ եղանակները և դրանց դրսևորման քրեաբանական իրադրությունները.

1. Խաբեությունը.

Խաբեությունը դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելն է՝ կոնկրետ փաստերը ձևախեղելով, իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով, իրական մտադրության մասին լռելով կամ այնպիսի տեղեկություն չհաղորդելով, որն անձը պարտավոր էր հաղորդել (Օրենսգրքի հոդված 3, մաս 1, կետ 11):

Խաբեության միջոցով հանցավորը.

1) Հասանելիություն է ստանում տուժողի «Իդրամ» դրամապանակին, ինչը, որպես կանոն, կատարվում է ստորև նկարագրված լայն տարածում ունեցող եղանակով:

Հանցավորը, որը հաճախ քրեակատարողական հիմնարկի կալանավոր է, «Viber» և «WhatsApp» հավելվածներով զանգահարում է տարբեր անձանց՝ հայտնելով, թե իբր սխալմամբ գումար է փոխանցել նրանց «Իդրամ» դրամապանակներին և խնդրում տրամադրել

⁵ Տես *Իսրայելյան Գ. Վ.*, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Մեկնաբանություններ / Գ. Վ. Իսրայելյան: Եր.: Հեղ. իրատ., 2024, հատոր 3, էջեր 158-159:

նրանց հեռախոսահամարներին ստացված գաղտնաբառերը: Դրանք ձեռք բերելուց հետո նա հասանելիություն է ստանում տուժողների «Իդրամ» դրամապանակներին և, համապատասխան տվյալը մուտքագրելով, նրանց անունից կնքում է վարկային պայմանագրեր:

2) Հասանելիություն է ստանում տուժողի բանկային քարտի տվյալներին՝ հետևյալ եղանակներով.

ա) «WhatsApp» հավելվածի միջոցով կապ է հաստատում քաղաքացու հետ՝ «List.am» կայքում տեղադրված նրա հայտարարության տվյալներով: Գումար փոխանցելու պատրվակով հանցավորն ուղարկում է «Հայ Փոստի» հղում, որտեղ տուժողը լրացնում է իր բանկային քարտի տվյալները, ինչից հետո անհայտ անձը հափշտակում է քարտին առկա գումարը:

բ) «WhatsApp» հավելվածով կամ բանկի տարբերանշանով այլ բջջային հավելվածով կամ բանկի հեռախոսահամարով քաղաքացու հետ կապ հաստատած անձը ներկայանում է որպես տվյալ բանկի աշխատակից, հավելվածի անվտանգությունն ապահովելու պատրվակով խաբեությամբ տիրանում է տուժողի բանկային քարտի տվյալներին և հաշվեհամարից կանխկացնում գումար կամ առցանց վարկ ձևակերպում:

3) Հասանելիություն է ստանում տուժողի գումարին՝ հետևյալ եղանակներով.

ա) «Facebook» կամ «Instagram» սոցիալական կայքով ներկայանում է որևէ կազմակերպության, օրինակ՝ «Գազպրոմ» ընկերության մենեջեր կամ ֆինանսական խորհրդատու, ներդրումային կեղծ կայքերում ներդրում կատարելու և եկամուտը հետ փոխանցելու պատրվակով տուժողից պահանջում և փոխանցման միջոցով ստանում է գումար, սակայն փոխանցելուց հետո խաբեությամբ հափշտակում է այն:

բ) «Facebook.com» սոցիալական ցանցում, տուժողի՝ արտերկրում, որպես կանոն, ԱՄՆ-ում կամ ՌԴ-ում գտնվող ընկերոջ անունով և նկարներով ֆեյսբուքյան էջ է բացում ու խաբեությամբ տիրանում որպես օգնություն տուժողի կողմից «Թեյ-Սեյ» հավելվածով կամ այլ էլեկտրոնային եղանակով փոխանցված գումարին:

2. Վստահությունը չարաշահելը.

Վստահությունը չարաշահելը որոշակի վարքագծով, խոստումներով կամ հանցագործությունից տուժածի հետ ունեցած միջանձնային հարաբերություններն օգտագործելով՝ հանցավորի կամ այլ անձի ապագա վարքագծի կամ ապագայում սպասվող փաստերի կամ իրադարձությունների կապակցությամբ անձին դիտավորությամբ մոլորության մեջ գցելն է (Օրենսգրքի հոդված 3, մաս 1, կետ 12):

Վստահությունը չարաշահելու օրինակ կարող են ծառայել հետևյալ դեպքերը.

ա) Ա.-ն ու Բ.-ն գտնվել են փաստական ամուսնական հարաբերությունների մեջ: Բ.-ն վստահել է Ա.-ին քարտային հաշվի գաղտնաբառը, ով կատարել Բ.-ի դրամական միջոցների հափշտակություն և անհետացել:

բ) Պատիժը կրելու ընթացքում գումար հափշտակելու դիտավորությամբ քրեակատարողական հիմնարկից՝ իր կողմից ապօրինի օգտագործվող բջջային հեռախոսների միջոցով ստանալով համացանցի հասանելիություն՝ հանցավորը մուտք է գործում «Odnoklasniki.ru» կայք, որտեղ, բացելով անհատական էջ, ծանոթանում է տուժողի հետ, նրա հետ ստեղծում կեղծ մտերմիկ հարաբերություններ: Հետագայում, տուժողի վստահությունը չարաշահելու եղանակով՝ հանցավորը նրանից պահանջում է բանկային քարտի թվային տվյալները, որոնց միջոցով կատարում է դրամական միջոցների հափշտակություն⁶:

⁶ Տե՛ս *Իսրայելյան Գ.*, Համակարգչային հափշտակության ընդհանուր զոհաբանական կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, ապրիլ-հունիս 2024, 4-6 (298-300), էջ 44, *Իսրայելյան Գ.*, Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով

4. Համակարգչային հափշտակության միջոցները.

Պարտադիր օբյեկտիվ հատկանիշ է նաև հանցանքի կատարման միջոցը: Վերը նկարագրված գործողությունները կարող են կատարվել ինչպես համակարգչով, այնպես էլ սմարթֆոնով կամ ցանկացած հաշվողական տեխնիկայի օգտագործմամբ: Էլեկտրոնային կամ համակարգչային տեղեկատվությունը կարող է ներմուծվել ինչպես կոնկրետ սարքի, օրինակ՝ բանկոմատի, այնպես էլ համացանցի միջոցով, հափշտակությունները կարող են կատարվել տարբեր էլեկտրոնային հաշիվներից, այդ թվում՝ կարող է հափշտակվել կրիպտոարժույթ⁷: Այս հատկանիշի քրեաբանական նշանակությունն այն է, որ միջոցի տեսակով է պայմանավորված կանխարգելիչ միջոցառումների և մարտավարության տարբերակի ընտրությունը:

Եզրակացություն

Կատարված հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս ձևակերպելու հետևյալ եզրահանգումները.

1. Օբյեկտով և առարկայով համակարգչային հափշտակությունը տարբերվում է համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործություններից: Ուստի իրավական պաշտպանության տակ գտնվող հարաբերությունների բնույթով և հանցավոր ոտնձգության առարկայով է որոշվում թվարկված հանցատեսակների կանխարգելիչ միջոցառումների տարբերակվածությունը:

2. Հանցավոր գործունեության տարբեր փուլերում կանխարգելիչ միջոցառումները պետք է իրականացվեն տարբերակված: Այսպես, հանցանքի նախապատրաստության փուլում կարող են արդյունավետ լինել համոզման, իսկ հանցափորձի փուլում՝ հարկադրանքի միջոցները: Շարունակվող հանցանքի պարագայում, երբ կատարվել է միասնական դիտավորության մեջ ընդգրկված արարքների մի մասը, մյուս մասերի կանխարգելման գործում կիրառելի են ինչպես համոզման, այնպես էլ հարկադրանքի միջոցները:

3. Համակարգչային հափշտակությունը կարող է կատարվել օրենքով նկարագրված միայն իրեն բնորոշ եղանակներով: Համակարգչային հափշտակության ամենատարածված եղանակը համակարգչային տվյալը մուտքագրելն է:

Կատարման եղանակներով համակարգչային հափշտակությունը տարբերվում է հափշտակության մյուս տեսակներից, ինչը ևս պայմանավորում է կանխարգելիչ միջոցառումների առանձնահատկությունները: Բացի դրանից՝ եղանակներն ունեն նաև քրեաբանական հետևյալ նշանակությունը. համակարգչային հափշտակության եղանակները յուրահատուկ դրսևորումներ են ունենում քրեաբանական տարբեր իրադրություններում, որոնց իմացությունը պետք է դրվի համակարգչային հափշտակությունների հատուկ և զոհաբանական կանխարգելման կազմակերպման գործընթացի հիմքում:

4. Համակարգչային հափշտակությունը կատարվում է որոշակի միջոցներով՝ համակարգչով, սմարթֆոնով կամ ցանկացած հաշվողական տեխնիկայով: Այս օբյեկտիվ հատկանիշի քրեաբանական նշանակությունն այն է, որ միջոցի տեսակով է պայմանավորված կանխարգելիչ միջոցառումների և մարտավարության տարբերակի ընտրությունը:

կատարվող հափշտակությունների տիպային մեխանիզմները և կանխարգելման միջոցները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր 2024, 7-9 (301-303), էջեր 86-87:

⁷ Տես ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց / Ա. Գաբուզյան և այլք: ԵՄ, Երևան, 2022, // <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57> (վերջին մուտք՝ 07.04.2025թ.):

Ամփոփագիր: Իրականության մեջ առանձին հանցատեսակների օբյեկտիվ հատկանիշների դրսևորման քրեաբանական նշանակությունը պայմանավորված է կանխարգելիչ միջոցառումների մարտավարության և առանձնահատկությունների որոշման հնարավորությամբ: Սա հատկապես վառ է արտահայտված համակարգչային հափշտակության պարագայում:

Վերլուծելով օբյեկտը և առարկան՝ հեղինակը նշում է, որ այդ հատկանիշներով համակարգչային հափշտակությունը տարբերվում է համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործություններից, ուստի դրանցով է որոշվում թվարկված հանցատեսակների կանխարգելիչ միջոցառումների տարբերակվածությունը:

Անդրադառնալով հանցավոր գործունեության փուլերին՝ հեղինակը շեշտում է, որ հանցանքի նախապատրաստության փուլում կարող են արդյունավետ լինել համոզման, հանցափորձի փուլում՝ հարկադրանքի միջոցները, իսկ շարունակվող հանցանքի պարագայում, երբ կատարվել է միասնական դիտավորության մեջ ընդգրկված արարքների մի մասը, մյուս մասերի կանխարգելման գործում կիրառելի են ինչպես համոզման, այնպես էլ հարկադրանքի միջոցները:

Վերլուծելով համակարգչային հափշտակության եղանակները՝ հեղինակը հավաստում է, որ դրանցով խնդրո առարկա հանցանքը տարբերվում է հափշտակության մյուս տեսակներից, ինչն իր հերթին կանխարգելիչ միջոցների տարբերակված իրականացման հիմք է: Բացի դրանից՝ համակարգչային հափշտակության եղանակներն իրենց դրսևորումն են գտնում քրեաբանական կոնկրետ իրադրություններում, որոնք վերլուծվել են հեղինակի կողմից: Վերջինիս կարծիքով՝ նշված իրադրությունների իմացությունը պետք է դրվի վերոգրյալ հանցատեսակի կանխարգելման կազմակերպման հիմքում:

Բացահայտելով համակարգչային հափշտակության միջոցների նկարագիրը՝ հեղինակը նշում է, որ օբյեկտիվ այդ հատկանիշի տեսակով է պայմանավորված կանխարգելիչ միջոցառումների և մարտավարության տարբերակի ընտրությունը:

Annotation. The criminological significance of the manifestation in reality of objective signs of certain types of crimes is due to the possibility of determining tactics and features of preventive measures. This is especially pronounced in relation to computer theft.

Analyzing the object and predicate of the crime, the author notes that these signs distinguish computer theft from crimes against the security of a computer system and computer data, and therefore determine the differentiation of preventive measures for these types of crimes.

Turning to the stages of criminal activity, the author emphasizes that persuasion can be effective at the stage of preparation of a crime, coercion at the stage of an attempt, and in the case of an ongoing crime, when some of the acts included in the general intent have already been committed, both persuasion and coercion can be used to prevent the remaining episodes.

Analyzing the methods of committing computer theft, the author argues that the crime in question differs from other types of theft in the ways it is committed, which in turn is the basis for the differentiated implementation of preventive measures. In addition, the methods of computer theft find their manifestation in specific criminological situations, which were analyzed by the author. Knowledge of these situations should be the basis for organizing the prevention of this crime.

Revealing the characteristics of the means of computer theft, the author notes that the choice of preventive measures and tactics is determined by the type of means.

Аннотация. Криминологическое значение проявления в реальности объективных признаков отдельных видов преступлений обусловлено возможностью определения тактики и особенностей мер предупреждения. Особенно ярко это выражено относительно компьютерного хищения.

Анализируя объект и предмет преступления, автор отмечает, что данные признаки отличают компьютерное хищение от преступлений против безопасности компьютерной системы и компьютерных данных, а потому обуславливают дифференциацию профилактических мер перечисленных видов преступлений.

Обращаясь к стадиям преступной деятельности, автор подчеркивает, что убеждение может быть эффективным на стадии подготовки преступления, принуждение – на стадии покушения, а в случае продолжающегося преступления, когда некоторые из деяний, входящих в общий умысел, уже совершены, для предупреждения остальных эпизодов могут применяться меры как убеждения, так и принуждения.

Анализируя способы совершения компьютерного хищения, автор утверждает, что рассматриваемое преступление отличается от других видов хищений способами совершения, что в свою очередь является основанием для дифференцированного осуществления предупредительных мер. Кроме того, способы компьютерного хищения находят свое проявление в конкретных криминологических ситуациях, которые были проанализированы автором. По мнению автора, знание указанных ситуаций должно быть положено в основу организации предупреждения указанного преступления.

Раскрывая характеристику средств компьютерного хищения, автор отмечает, что выбор предупредительных мер и тактики определяется видом указанного объективного признака.

Բանալի բաներ - համակարգչային հափշտակություն, իրավաբանական կազմ, օբյեկտիվ հատկանիշներ, քրեաբանական նշանակություն:

Keywords: computer theft, legal structure, objective signs, criminological significance.

Ключевые слова: компьютерное хищение, юридический состав, объективные признаки, криминологическое значение.

Օգտագործված գրականության ցանկ

1. Իսրայելյան Գ., Համակարգչային հափշտակության ընդհանուր զոհաբանական կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, ապրիլ-հունիս 2024, 4-6 (298-300), էջեր 41-48:
2. Իսրայելյան Գ. Վ., Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Մեկնաբանություններ / Գ. Վ. Իսրայելյան: Եր.: Հեղ. հրատ., 2023: Հատոր 2. – 240 էջ:
3. Իսրայելյան Գ. Վ., Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Մեկնաբանություններ / Գ. Վ. Իսրայելյան: Եր.: Հեղ. հրատ., 2024: Հատոր 3. – 300 էջ:
4. Իսրայելյան Գ., Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով կատարվող հափշտակությունների տիպային մեխանիզմները և կանխարգելման միջոցները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր 2024, 7-9 (301-303), էջեր 85-91:
5. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) / Եր.: ԵՊՀ հրատ., 2012. – 1044 էջ:
6. ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց / Ա. Գաբրույան և այլք: ԵԽ, Երևան, 2022, // <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57>:
7. Шапошников А. А. Криминологическая характеристика личности киберпреступника // <https://cyberleninka.ru/article/n/kriminologicheskaya-harakteristika-lichnosti-kiberprestupnika-1/viewer>:

Իսրայելյան Գ. - ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, էլիասցե՝ gevorgisrayelyan79@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 22.05.2025 թ., տրվել է գրախոսության 22.05.2025թ., երաշխավորվել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Խեչոյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2025 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-94>

ՎԱՐԱԶԴԱՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

*ի.գ.թ., Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի
ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս
ԱՂԵԼԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ*

*ի.գ.թ., Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի
ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս*

VARAZDAT SUKIASYAN

*PhD in Law,
Lecturer at the Department of Criminal Law and Criminal Procedure
Law Institute of Law and Politics of the Russian-Armenian University*

ADELINA SARGSYAN

*PhD in Law,
Lecturer at the Department of Criminal Law and Criminal Procedure
Law Institute of Law and Politics of the Russian-Armenian University*

ВАРАЗДАТ СУКИАСЯН

*Кандидат юридических наук,
преподаватель кафедры уголовного права и
уголовно-процессуального права
Института права Российско-Армянского университета*

АДЕЛИНА САРГСЯН

*Кандидат юридических наук,
преподаватель кафедры уголовного права и
уголовно-процессуального права
Института права Российско-Армянского университета*

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ**

**APPLICABILITY OF PRINCIPLES OF LAW IN DECISIONS OF THE
INTERNATIONAL CRIMINAL COURTS**

**ПРИМЕНИМОСТЬ ПРИНЦИПОВ ПРАВА В РЕШЕНИЯХ
МЕЖДУНАРОДНЫХ УГОЛОВНЫХ СУДОВ**

*The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA
(Research project N° 25YR-5E005).*

Ներածություն

Միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները որոշումներ կայացնելիս, որոշ դեպքերում, հիմնվել են իրավունքի ընդհանուր սկզբունքների և ազգային իրավունքի սկզբունքների վրա:

«Քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքները» թվարկված են Միջազգային դատարանի կանոնադրության 38(1)(գ) հոդվածում որպես միջազգային իրավունքի երրորդ աղբյուր՝ պայմանագրերից և միջազգային սովորույթային իրավունքից հետո: Կանոնադրության 38(1) հոդվածը սահմանում է, որ «[Դ]ատարանը, որը պարտավոր է իրեն հանձնված վեճերը կարգավորել միջազգային իրավունքի հիման վրա, կիրառում է [...] քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքները»¹:

Երկար ժամանակ միջազգային դատարաններն ու տրիբունալներն իրավական բացերը լրացնելու, իրավական կանոնները մեկնաբանելու և իրավական հիմնավորումը ամրապնդելու համար, ազգային դատարանների նման, դիմել են իրավունքի ընդհանուր սկզբունքներին:

Մինչև PCIJ² Կանոնադրության ընդունումը, միջազգային իրավունքի կիրառելի կոնվենցիոնալ և սովորույթային կանոնների բացակայության պատճառով առաջացած բացերը լրացնելու համար վաղ շրջանի միջազգային արբիտրաժային դատարանները կիրառել են իրավունքի ընդհանուր սկզբունքները: PCIJ-ը և ICJ-ը նույնպես դիմել են իրավունքի ընդհանուր սկզբունքներին իրենց դատավճիռներում և խորհրդատվական կարծիքներում, ինչպես նախկինում արել են վաղ շրջանի միջազգային արբիտրաժային դատարանները: Այդ դեպքերում նրանք միշտ չէ, որ հստակեցնում էին, որ կիրառում են իրենց Կանոնադրության 38-րդ հոդվածի 3-րդ կետը/38-րդ հոդվածի 1(գ) կետը: ICJ-ն միայն մեկ անգամ է հղում կատարել 38-րդ հոդվածի 1(գ) կետին, և դա արել է՝ իրավունքի ընդհանուր սկզբունքի կիրառումը բացառելու, այլ ոչ թե կիրառելու համար:³ Ի տարբերություն դրա, առանձին և տարբեր կարծիքներում PCIJ-ի և ICJ-ի անդամները և ad hoc դատավորները հաճախ հղում են կատարել 38-րդ հոդվածի համապատասխան կետին:⁴

Միջազգային քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքները մի կողմ թողնելով՝ միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները հաճախ հաստատել են իրավունքի ընդհանուր սկզբունքների գոյությունը, բովանդակությունը և շրջանակը՝ հիմնվելով իրենց իսկ որոշումների վրա:

Հիմնական հետազոտություն

Որոշումներին հղում կատարելը որպես իրավունքի ընդհանուր սկզբունքի կիրառում:

Միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները դիմել են միջազգային իրավունքի կանոնների որոշման սովորական օժանդակ միջոցներին՝ կարգավորելու համար, ի թիվս այլնի, հետևյալ սկզբունքները. դատական մարմինների անաչառություն, nullum crimen

¹ Statute of the International Court of Justice, 24 Oct. 1945, 1491 u.n.t.s. 199, art. 38(1)(c):

² Միջազգային արդարադատության մշտական պալատ (անգլ.՝ Permanent Court of International Justice):

³ South West Africa, Second Phase, Judgment, ICJ Reports 1966, p. 47, § 88:

⁴ Lighthouses in Crete and Samos, Judgment, 1937, PCIJ, Series A/B, No. 71, Separate Opinion by Judge Séfériadès, էջեր. 137–138; International Status of South West Africa, Advisory Opinion, Separate Opinion by Sir McNair, ICJ Reports 1950, էջ. 148:

nulla poena sine lege (ոչ մի հանցանք, ոչ մի պատիժ առանց օրենքի), դատարաններն ունեն իրավունք ընդունելու հանրահայտ փաստեր, մեղադրյալի դատապարտումը պետք է տեղի ունենա մեղադրյալի ներկայությամբ, և բողոքարկում չի կարող լինել, եթե այն նախատեսված չէ օրենքով:

Հարկ է նկատել, որ իրավունքի ընդհանուր սկզբունքների գոյությունը, բովանդակությունը և շրջանակը որոշելու համար միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները հղում են կատարում իրենց սեփական որոշումներին: Այս իրողությունը չի նշանակում, որ միջազգային քրեական դատարաններն ավելի քիչ են կիրառում իրավունքի ընդհանուր սկզբունքները, սա նշանակում է, որ սեփական որոշումներին հղում կատարելով դատարաններն օգտագործում են միջազգային իրավունքի կանոնների և սկզբունքների որոշման օժանդակ միջոցները (subsidiary means of determination of rules and principles of international law):

Այսպես, օրինակ, երբ Սիերա Լեոնեի հատուկ դատարանը (SCSL) որոշեց մեղադրյալի՝ իր ներկայությամբ դատապարտվելու իրավունքի սահմանները՝ հղում կատարելով Ռուանդայի միջազգային քրեական տրիբունալի (ICTR) որոշումներին, փաստորեն այն կիրառեց իրավունքի ընդհանուր սկզբունք՝ մեկնաբանված ICTR-ի կողմից:

«Քաղաքակիրթ ազգերը»

Միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալներն իրենց որոշումներում հազվադեպ են օգտագործել **«քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներ»** արտահայտությունը: ՄԱԴ-ի Կանոնադրության 38-րդ հոդվածի 1-ին պարբերության ամբողջական ձևակերպման հղումը նպատակ ուներ պարզապես անհատականացնել տվյալ միջազգային իրավունքի աղբյուրը, և ոչ թե բացահայտել այն պետությունները, որոնց իրավական համակարգերը պետք է ուսումնասիրվեն իրավունքի ընդհանուր սկզբունքներ բխեցնելու համար: Այլ կերպ ասած, ոչ մի միջազգային քրեական դատարան կամ տրիբունալ չի ձևաօրենս, թե կան քաղաքակիրթ և ոչ քաղաքակիրթ կամ բարբարոս ազգեր, և որ միայն քաղաքակիրթ իրավական համակարգերը պետք է հաշվի առնվեն իրավունքի ընդհանուր սկզբունքների գոյությունը, բովանդակությունը և շրջանակը որոշելիս:

Միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները հղում են կատարել (i) «բոլոր ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին»⁵, (ii) «ազգերի համայնքի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին»⁶, (iii) «աշխարհի ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին»⁷, կամ (iv) «աշխարհի խոշորագույն իրավական համակարգերին ընդհանուր իրավունքի ընդհանուր սկզբունքներին»⁸: Նշված չորս արտահայտություններն իմաստային առումով տեղեկություն չեն տալիս այն ազգային իրավական համակարգերի մասին, որոնք պետք է ներառվեն ցանկացած համեմատական հետազոտության մեջ: Այդ իսկ պատճառով հարց է առաջանում, թե ինչ են նկատի ունենում միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները՝ ասելով «բոլոր ազգեր», «ազգերի համայնք», «աշխարհի ազգեր» կամ «աշխարհի խոշորագույն իրավական համակարգեր»: Ինչ արտահայտություն էլ որ օգտագործվի, ընդհանուր առմամբ միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները նկատի ունեն աշխարհի հիմնական իրավական ընտանիքները, այսինքն՝ ռոմանո-գերմանական և ընդհանուր իրավունքի ընտանիքները:

⁵ Prosecutor v. Erdemović, Sentencing Judgment, Case No. IT-96-22-T, T. Ch. I, 29 November 1996, § 26; Prosecutor v. Delalić et al., Judgment, Case No. IT-96-21-A, App. Ch., 20 February 2001, § 583:

⁶ Prosecutor v. Erdemović, Sentencing Judgment, Case No. IT-96-22-T, T. Ch. I, 29 November 1996, § 40:

⁷ Prosecutor v. Tadić, Judgment, Case No. IT-94-1-A, App. Ch., 15 July 1999, § 225:

⁸ Prosecutor v. Kupreskić et al., Judgment, Case No. IT-95-16-T, T. Ch. II, 14 January 2000, § 591:

Դատական պրակտիկայում եղել են դեպքեր, երբ հղում է կատարվել «այլ պետությունների քրեական իրավունքին»⁹, իսկ մեկ այլ դեպքում՝ «մարքսիստական իրավական համակարգերին»¹⁰: Հարկ է նկատել, որ մարքսիստական իրավական ընտանիքին հղում կատարելը ներկայումս բոլորովին տեղին չէ իրավունքի ընդհանուր սկզբունքներ բխեցնելու համար, քանի որ այդ ընտանիքն այլևս գոյություն չունի¹¹: Այն պետությունների քրեական օրենքները, որոնք այդ որոշման մեջ հղում են կատարվել որպես մարքսիստական իրավական ընտանիքի ներկայացուցիչներ (Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետությունը (ՀՍՖՀ) և Չինաստանը), նշվել են որպես ռոմանո-գերմանական իրավական ընտանիքի ներկայացուցիչներ:

Միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները երբեմն դժվարանում են որոշել, թե երկու հիմնական իրավական ընտանիքներից որին պետք է դասեն տվյալ ազգային իրավական համակարգը¹²: Սա գալիս է ապացուցելու այն, որ ազգային իրավական համակարգերն արդեն չեն հիմնվում բացառապես մեկ իրավական ընտանիքի մոտեցումների վրա: Հարց է առաջանում, թե արդյո՞ք ազգային իրավական համակարգերի դասակարգումը իրավական ընտանիքների մեջ տեղին է հատկապես քրեական իրավունքի առումով: Տպավորություն է ստեղծվում, որ ազգային իրավական համակարգերի դասակարգումը իրավական ընտանիքների մեջ որոշ չափով տեղին չէ քրեական իրավունքի առումով: Ազգային իրավական համակարգերի դասակարգումը իրավական ընտանիքների մեջ, մասնավորապես, վերաբերում է իրավունքի աղբյուրների տեսությանը¹³: Այսպիսով, ընդհանուր առմամբ, ռոմանո-գերմանական իրավական համակարգերում քրեական իրավունքը գտնվում էր օրենսգրքերում, մինչդեռ Ընդհանուր իրավունքի համակարգերում այն գտնվում էր դատական վճիռներում: Ներկայիս վիճակն ուրիշ է. օրինակ, Անգլիայում և Ուելսում՝ քրեական իրավունքի մեծ մասը գտնվում է օրենքներում (օրենսդրական հանցագործություններ), այլ ոչ թե դատական վճիռներում (ընդհանուր իրավունքի հանցագործություններ)¹⁴:

Ոչ ազգային իրավական համակարգերի դասակարգումը իրավական ընտանիքների մեջ, ոչ էլ քրեական դատավարությունների դասակարգումը ինկվիզիցիոն և մրցակցային մոդելների մեջ, հնարավորություն չեն ընձեռում նյութական և դատավարական քրեական իրավունքին վերաբերող ընդհանուր սկզբունքներ բխեցնելու համար: Այդուհանդերձ, միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները մեծապես հենվել են ազգային իրավական համակարգերի դասակարգման վրա:

Ազգային իրավունքի սկզբունքները և փոխադրումը

Ընդհանուր առմամբ, միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները կիրառում են իրավունքի ընդհանուր սկզբունքները, քանի որ նրանք ընդունում են անհատական քրեական պատասխանատվության հիմքերի միջև ազգային և միջազգային մակարդակների

⁹ Prosecutor v. Erdemović, Judgment, Joint Separate Opinion of Judge McDonald and Judge Vohrah, Case No. IT-96-22-A, App. Ch., 7 October 1997, § 61.

¹⁰ Prosecutor v. Tadić, Opinion and Judgment, Case No. IT-94-1-T, T. Ch. II, 7 May 1997, § 538.

¹¹ David, René and Jauffret-Spinozi, Camille, Les grands systèmes de droit contemporains, 11e édition, Paris, Dalloz, 2002, 553 pp. էջ. 19, § 20. Сырых, В. (2018). Marxist law theory and post-Soviet Russian philosophy (theory) of law. Hybris, 40(1), 212–236.

¹² Gradoni, Lorenzo, 'L'exploitation des principes généraux de droit dans la jurisprudence des Tribunaux internationaux pénaux ad hoc', in Fronza, Emanuela et Manacorda, Stefano (eds.), La justice pénale internationale dans les décisions des tribunaux ad hoc/Études des Law Clinics en droit pénal international, Dalloz, Paris, Giuffrè, Milano, 2003, էջ 17:

¹³ David, René and Jauffret-Spinozi, Camille, Les grands systèmes de droit contemporains, 11e édition, Paris, Dalloz, 2002, 553 pp. էջ. 51, § 38.

¹⁴ Ashworth, Andrew, Principles of Criminal Law, 4th edition, Oxford, Oxford University Press, 2003, էջ 6:

առկայությունը, ինչպես նաև ազգային և միջազգային քրեական դատավարությունների միջև անալոգիաների գոյությունը:

Ինչպես միջազգային, այնպես էլ ազգային քրեական իրավունքը նպատակ ունի կարգավորել հանցագործություն կատարելու կամ դրան մասնակցելու մեջ կասկածվող անձանց քրեական հետապնդումը և դատավարությունը, իսկ մեղավոր ճանաչվելու դեպքում՝ նրանց նկատմամբ համապատասխան պատիժ նշանակելը: Այլ կերպ ասած, միջազգային քրեական իրավունքը որպես քրեական իրավունք իր լեգիտիմությունն ստացել է ազգային քրեական իրավունքից վերցված պատժի նպատակներից՝ հատկապես հատուցումից և զսպումից (retribution and deterrence)¹⁵: Ակնհայտորեն, սա նյութական ազգային և միջազգային քրեական իրավունքի միջև հիմնարար անալոգիա է¹⁶: Հետևաբար, զարմանալի չէ, որ, ընդհանուր առմամբ, միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները (i) չեն հրաժարվել իրավունքի ընդհանուր սկզբունքները փոխադրելուց և կիրառելուց, և (ii) փոխադրել են որոշ սկզբունքներ ուղղակիորեն ազգային իրավունքից:

Նյութական քրեական իրավունքի առումով կան անալոգիաներ ազգային և միջազգային քրեական իրավունքի միջև, ի թիվս այնի, հետևյալ հարցերի վերաբերյալ.

(i) քրեական պատասխանատվության հիմքերը (ոչ մի քրեական պատասխանատվություն առանց անհատական մեղքի, քրեական մեղավորության հաստատումը պահանջում է հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերի վերլուծություն).

(ii) (ii) քրեական պատասխանատվությունը բացառող հիմքերը

(iii) (iii) ազատագրկման ժամկետի սահմանումը (համաչափությունը պատիժ նշանակելիս, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար ամենաձանր պատիժների կիրառումը) և

(iv) (iv) հանցագործությունների սահմանումը:

Դատավարական քրեական իրավունքին վերաբերող սկզբունքների կիրառումը՝ առանց դրանց բովանդակության որևէ փոփոխության, ցույց է տալիս, որ կան համապատասխան անալոգիաներ հետևյալ հարցերի վերաբերյալ.

(i) ապացույցներ (ապացուցման բեռը դրված է դատախազի վրա, in dubio pro reo՝ կասկածը իրավունքի մեղադրյալի, դատարաններն իրավունք ունեն հաստատված համարելու հանրահայտ փաստերը),

(ii) (ii) արդար դատաքննություն (անմեղության կանխավարկած, դատարանները պետք է հիմնվեն օրենքի վրա, մեղադրյալը չպետք է դատապարտվի առանց ներկայության) և

(iii) (iii) վերաքննիչ վարույթներ (բողոքարկում չի կարող լինել, եթե այն նախատեսված չէ Կանոնադրությամբ):

Դատավոր Կասսեզեի կարծիքով՝ «ազգային իրավունքում ամրագրված իրավական եզրույթները չպետք է մեխանիկորեն կիրառվեն միջազգային մակարդակում¹⁷»: Նրա կարծիքով՝

(i) միջազգային (քրեական) դատարաններն ու տրիբունալները պետք է ուսումնասիրեն միջազգային մակարդակում առկա բոլոր միջոցները՝ նախքան ազգային իրավունքին դիմելը.

(ii) (ii) միջազգային քրեական իրավունքը ռոմանո-գերմանական և ընդհանուր իրավունքի համակարգերի խառնուրդ է, ինչն այն դարձնում է յուրահատուկ, և այն ունի իրավական տրա-

¹⁵ Werle, Gerhard, Principles of International Criminal Law, The Hague, TMC Asser Press, 2005, էջ 485:

¹⁶ Gil y Gil, Alicia, Derecho penal internacional: especial consideración del delito de genocidio, Madrid, Tecnos, 1999, էջ 20:

¹⁷ Prosecutor v. Erdemović, Judgment, Separate and Dissenting Opinion of Judge Cassese, Case No. IT-96-22-A, App. Ch., 7 October 1997, § 2.

մաքանություն, որը էապես տարբերվում է այդ երկու իրավական ընտանիքներից, և

(iii)(iii) միջազգային դատավարությունները որոշ չափով տարբերվում են ազգային քրեական դատավարություններից¹⁸:

Ճիշտ է այն պնդումը, որ միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները պետք է դիտարկեն միջազգային իրավունքը՝ նախքան ազգայինին դիմելը: Մեր կարծիքով, միջազգային դատարանների ու տրիբունալների համար հիմնական ուսումնասիրության առարկա պետք է լինեն միջազգային իրավունքի առաջնային և երկրորդական աղբյուրները, այսինքն՝ միջազգային կոնվենցիաները, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի պարտադիր բանաձևերը և սովորության իրավունքը (ներառյալ միջազգային քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքները և միջազգային իրավունքի սկզբունքները): Այնուամենայնիվ, ռոմանո-գերմանական և ընդհանուր իրավունքի համակարգերի խառնուրդը բնորոշ չէ միայն միջազգային քրեական իրավունքին և միջազգային դատավարություններին: Ազգային քրեական դատավարությունները (տարբեր աստիճաններով) ամենուր հիբրիդային են. «մաքուր» քրեական դատավարությունները, եթե դրանք երբևէ գոյություն են ունեցել, անցյալում են, ոչ թե ներկայում¹⁹: Ավելին, ռոմանո-գերմանական և ընդհանուր իրավունքի տարրերի խառնուրդը պարտադիր չէ, որ կանխի իրավունքի ընդհանուր սկզբունքների կիրառումը, քանի որ, ըստ սահմանման, դրանք իրավական սկզբունքներ են, որոնք ընդհանուր են երկու իրավական ընտանիքների համար:

Ինչ վերաբերում է միջազգային դատավարությունների «առանձնահատկություններին», ապա հարկ է նկատել, որ ո՛չ Դատավոր Կասսեգեն, ո՛չ էլ Նախկին Հարավսլավիայի գործով միջազգային քրեական դատարանի պալատները, որոնք հավանություն են տվել նրա կարծիքին, չեն նշել, թե որոնք են այդ առանձնահատկությունները: Ընդհակառակը, հարկ է նշել, որ, ինչպես վերևում նշվեց, ազգային և միջազգային դատավարությունների բնույթն ըստ էության նույնն է:

Թեև ճիշտ է, որ ազգային իրավունքի սկզբունքների փոխադրումը միջազգային հարթություն չպետք է լինի մեխանիկական, այնուամենայնիվ ճիշտ է նաև, որ միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները հազվադեպ են մերժել ազգային իրավունքի սկզբունքների կիրառումը միջազգային քրեական իրավունքում՝ դրանց անհամատեղելիության պատճառով: Ավելին, երբ որոշ անհամատեղելիություն է առաջացել ազգային և միջազգային իրավունքի սկզբունքների միջև, տվյալ դատարանը կամ տրիբունալը ճշգրտել է քննարկվող իրավունքի ընդհանուր սկզբունքի բովանդակությունը՝ միջազգային իրավունքի առանձնահատկություններին համապատասխան և կիրառել այն տվյալ դեպքի նկատմամբ:

Չնայած վերոնշյալ դիտարկումներին, ազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների փոխադրումը միջազգային քրեական իրավունք ոչ միշտ է զերծ դժվարություններից: Նույնիսկ եթե Նախկին Հարավսլավիայի գործով միջազգային քրեական դատարանի նախազգուշացումներն մեխանիկական փոխադրումների դեմ երբեմն չափազանցված կամ սխալ են թվում, այնուամենայնիվ ճիշտ է, որ ազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների փոխադրումը միջազգային հարթություն պետք է իրականացվի զգուշությամբ: Իրականում, կարող են լինել փոխադրումը խոչընդոտող երկու տեսակի դժվարություններ, մասնավորապես՝ ազգային և միջազգային քրեական օրենքների միջև համանման կառույցների բացակայությունը և ազգային իրավական համակարգերի ու միջազգային իրավունքի կառուցվածքի և կիրարկման

¹⁸ Նույն տեղում՝ § 5:

¹⁹ Pastor, Daniel, 'El sistema penal internacional del Estatuto de Roma. Aproximaciones jurídicas críticas', in Baigún, David et al., Estudios sobre justicia penal. Homenaje al Profesor Julio B. J. Maier, Buenos Aires, Editores del Puerto, 2005, էջեր 702-707:

մեխանիզմների տարբերությունները:

Ի սկզբանե պետք է նշել, որ եթե առաջին դժվարությունն ավելի շատ արգելք է փոխադրման համար, ապա երկրորդը կարող է հաղթահարվել՝ տվյալ իրավունքի ընդհանուր սկզբունքի բովանդակությունը միջազգային հարթության առանձնահատկություններին հարմարեցնելու կամ համապատասխանեցնելու միջոցով: Խոչընդոտը կայանում է ազգային քրեական իրավունքի այն ոլորտում անալոգիաներ փնտրելու մեջ, որը չունի համարժեքը միջազգային քրեական իրավունքում, ինչպես, օրինակ, արտահանձնման իրավունքը: Օրինակ՝ *Mejacic*-ի և այլոց գործը՝ ICTY-ում²⁰: Այս գործով Վերաքննիչ պալատը հաստատեց Դատավարական պալատի եզրակացությունը, որ արտահանձնման ինստիտուտը կարգավորող սովորության իրավունքը չի կիրառվում մեղադրյալին ՆՀՄՔՏ փոխանցելու հարցում: Վերաքննիչ պալատի տված պատճառաբանությունն այն է, որ «նրանց փոխանցումը... պետության և Միջազգային տրիբունալի միջև համաձայնագրի արդյունք չէ»: ինչպես դա տեղի է ունենում մեկ պետությունից մյուսին արտահանձնման դեպքում: Վերաքննիչ պալատը փաստեց, որ «Միջազգային տրիբունալի հետ համագործակցելու պետությունների պարտավորությունը, բխում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության Գլուխ VII-ից: Համապատասխանաբար, պետությունը չի կարող պայմաններ պարտադրել մեղադրյալի փոխանցման վրա, կամ հղում կատարել մասնագիտության կամ իր քաղաքացիների չփոխանցման կանոնին»: Չնայած այն հանգամանքին, որ այս օրինակը վերաբերում է սովորության իրավունքի, այլ ոչ թե իրավունքի ընդհանուր սկզբունքների կիրառմանը, այն արդիական է այս ուսումնասիրության համար, քանի որ պարզ է դարձնում, որ ազգային քրեական իրավունքը միշտ չէ, որ միջազգային քրեական իրավունքի համար անալոգիաների աղբյուր է:

Միջազգային դատարանները, ներառյալ Միջազգային տրիբունալը, չեն կազմում կենտրոնական կառավարության դատական ճյուղը: Միջազգային հանրությունը հիմնականում բաղկացած է ինքնիշխան պետություններից. յուրաքանչյուրը խանդավառորեն պաշտպանում է իր ինքնիշխան հատկանիշներն ու արտոնությունները, յուրաքանչյուրը պնդում է իր իրավունքը՝ հավասարությանը, և պահանջում է բոլոր մյուս պետությունների կողմից լիակատար հարգանք իր ներպետական իրավասության նկատմամբ: Հետևաբար, ցանկացած միջազգային մարմին պետք է հաշվի առնի միջազգային հանրության այս հիմնական կառուցվածքը: Այս տարբեր գործոններից բխում է, որ միջազգային դատարանները պարտադիր չէ, որ ինքնիշխան պետությունների մարմինների նկատմամբ ունենան նույն լիազորությունները, որոնք ազգային դատարաններին տրվում են պետության վարչական, օրենսդրական և քաղաքական մարմինների նկատմամբ: Հետևաբար, ազգային իրավունքում գերակշռող իրավական ինստիտուտների, կառույցների կամ մոտեցումների փոխադրումը միջազգային հանրություն կարող է մեծ շփոթությունների և թյուրիմացությունների աղբյուր լինել:

Իրականում, միջազգային հասարակության ապակենտրոնացված կառուցվածքի երկու ասպեկտ կարող է խոչընդոտել իրավունքի ընդհանուր սկզբունքների փոխադրմանը միջազգային իրավունք: Դրանք են՝ միջազգային օրենսդիր մարմնի բացակայությունը և այն փաստը, որ միջազգային դատարաններն ու տրիբունալները կենտրոնական կառավարության դատական իշխանություն չեն:

Հաշվի առնելով միջազգային օրենսդիր մարմնի բացակայությունը՝ գոյություն չունի օրենսդրություն *stricto sensu* (նեղ իմաստով), այսինքն՝ օրենքներ, որոնք ուղղակիորեն պար-

²⁰ Prosecutor v. Mejacic et al., Decision on Joint Defence Appeal Against Decision on Referral under Rule 11bis, Case No.: IT-02-65-AR11bis.1, App. Ch., 27 April 2006.

տադիր են միջազգային իրավական բոլոր սուբյեկտների համար: Արդյունքում, օրենսդրության գաղափարի վրա հիմնված իրավունքի ընդհանուր սկզբունքները չեն կարող ավտոմատ կերպով կիրառվել միջազգային մակարդակում: Այնուամենայնիվ, չպետք է մանրուքից մեծ խնդիր ստեղծել, քանի որ միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները կարող են հարմարեցնել քննարկվող իրավունքի ընդհանուր սկզբունքը միջազգային հարթության այդ հատուկ առանձնահատկությանը: Օրենքի հիման վրա ստեղծված դատարանի սկզբունքը դրա լավագույն օրինակն է:

Եզրակացություն

Միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները հաստատել են իրավունքի ընդհանուր սկզբունքների գոյությունը, բովանդակությունը և շրջանակը՝ ոչ միայն դիմելով միջազգային իրավունքի նորմերի որոշման սովորական օժանդակ միջոցներին (այսինքն՝ միջազգային դատարանների և տրիբունալների որոշումներին հղում անելով), այլև դրանք անմիջապես բխեցնելով ազգային իրավական համակարգերից: Դրանց բխեցումը սովորաբար ներառել է երկու քայլ՝ մեկը՝ ուղղահայաց, մյուսը՝ հորիզոնական: Առաջին քայլը նպատակ ունի իրավական սկզբունքը վերացարկել ազգային իրավական նորմերից, երկրորդը՝ նպատակ ունի պարզել, թե արդյո՞ք բխեցված իրավական սկզբունքն ընդհանրապես ճանաչված է ազգերի կողմից:

Ինչ վերաբերում է իրավունքի ընդհանուր սկզբունքների փոխադրմանը (transposition) ազգային իրավական համակարգերից միջազգային իրավունք, ապա միջազգային քրեական դատարանների և տրիբունալների պրակտիկան ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ, փոխադրումն իրականացվել է առանց որևէ լրացուցիչ համապատասխանեցմամբ: Սակայն, երբ միջազգային իրավունքի առանձնահատկությունները խոչընդոտել են տվյալ ընդհանուր իրավունքի սկզբունքի անմիջական կիրառմանը միջազգային հարթությունում, շահագրգիռ միջազգային քրեական դատարանը կամ տրիբունալը ճշգրտել է սկզբունքը, որպեսզի այն համատեղելի դառնա միջազգային իրավունքի հետ և կիրառելի լինի տվյալ գործի նկատմամբ: Վերջապես, հարկ է նկատել, որ իրավունքի ընդհանուր սկզբունքները ոչ միայն միջազգային քրեական իրավունքի ձևական աղբյուր են, այլև նյութական աղբյուր՝ մեծ կարևորություն ունեցող միջազգային քրեական իրավունքի զարգացման համար: Այս պնդման ապացույցն այն փաստն է, որ միջազգային քրեական դատարանների և տրիբունալների կողմից կիրառված իրավունքի մի քանի ընդհանուր սկզբունքներ հետագայում վերածվել են միջազգային քրեական իրավունքի կոնվենցիոն և սովորութային նորմերի:

Ամփոփագիր: Սույն հոդվածում հանգամանորեն վերլուծվել է իրավունքի ընդհանուր սկզբունքների և ազգային իրավունքի սկզբունքների օգտագործման դեպքերը Միջազգային քրեական դատարանների ու տրիբունալների որոշումներում: Ցույց է տրվել այն դեպքերը, երբ Միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները հիմնվել են ազգային իրավունքի սկզբունքների վրա, այնուհետև այն դարձրել ընդհանուր իրավունքի սկզբունքներ: Առանձնակի ուշադրություն է դարձվել իրավական սկզբունքների փոխադրման փուլային գործընթացին:

Հոդվածը եզրահանգում է, որ Միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները հաստատել են իրավունքի ընդհանուր սկզբունքների գոյությունը, բովանդակությունը և շրջանակը՝ ոչ միայն դիմելով միջազգային իրավունքի նորմերի որոշման սովորական օժանդակ միջոցներին (այսինքն՝ միջազգային դատարանների և տրիբունալների որոշումներին հղում անելով), այլև դրանք անմիջապես բխեցրել են ազգային

իրավական համակարգերից:

Միջազգային քրեական իրավունքի բարդ իրավական բնույթը, դրա փոփոխվող բնույթը և զարգացման դինամիկ տեմպերը արդիականացնում են իրավունքի ընդհանուր սկզբունքների ուսումնասիրության կարևորությունն ու անհրաժեշտությունը, ազգային օրենսդրության մեջ դրանց կիրառելիությունը և դրանց հնարավորությունները, որոնք թույլ են տալիս լրացնել առկա բացերը:

Մեծ է Իրավունքի ընդհանուր սկզբունքների դերը միջազգային քրեական դատարանների և տրիբունալների միատեսակ պրակտիկայի ձևավորման, ինչպես նաև մեղադրյալների անօտարելի իրավունքների և ազատությունների պահպանման ապահովման գործում:

Հեղինակներն անդրադառնում են ազգային քրեական օրենսդրության մեջ Միջազգային քրեական իրավունքի դրույթների կիրառմանը և այս գործընթացի հնարավոր բարդություններին: Չնայած այն ճիշտ պնդմանը, որ ազգային իրավունքի սկզբունքների տեղափոխումը միջազգային հարթություն չպետք է լինի մեխանիկական, ճիշտ է նաև, որ Միջազգային քրեական դատարաններն ու տրիբունալները հազվադեպ են մերժել ազգային իրավունքի սկզբունքների կիրառումը միջազգային քրեական իրավունքում՝ դրանց անհամատեղելիության պատճառով: Չնայած վերը նշված դիտողություններին, ազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների տեղափոխումը միջազգային քրեական իրավունք միշտ չէ, որ զերծ է դժվարություններից: Նույնիսկ եթե նախկին Հարավսլավիայի գործով Միջազգային քրեական դատարանի նախազգուշացումները մեխանիկական փոխադրումների վերաբերյալ երբեմն չափազանցված կամ սխալ են թվում, Այնուամենայնիվ, ճիշտ է, որ ազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների փոխանցումը միջազգային հարթությանը պետք է իրականացվի զգուշությամբ:

Չափազանց կարևոր է Միջազգային քրեական դատարանների պրակտիկայի մշտական մոնիտորինգը, իրավունքի ընդհանուր սկզբունքների հետագա ուսումնասիրությունը, միջազգային հանցագործությունների դեմ պայքարում քրեական արդարադատության արդյունավետության բարձրացման նպատակով:

Annotation. This article has analyzed in detail the cases of the use of general principles of law and principles of national law in the decisions of international criminal courts and tribunals. It has shown the cases when international criminal courts and tribunals have based themselves on principles of national law and then turned them into principles of general law. Particular attention has been paid to the phased process of the transfer of legal principles.

The article concludes that international criminal courts and tribunals have confirmed the existence, content, and scope of general principles of law not only by resorting to the usual auxiliary means of determining the norms of international law (i.e., by referring to the decisions of international courts and tribunals) but also by deriving them directly from national legal systems.

The complex legal nature of international criminal law, its changing nature, and dynamic pace of development actualize the importance and necessity of studying general principles of law, their applicability in national legislation, and their possibilities to fill existing gaps. The role of general principles of law in the formation of uniform practice of international criminal courts and tribunals, as well as in ensuring respect for inalienable rights and free of charge: The authors address the application of the provisions of international criminal law in national criminal law and the possible difficulties of this process. Despite the correct statement that the transfer of the principles of national law to the international plane should not be mechanical, it is also true that international criminal courts and tribunals have rarely refused to apply the principles of national law to international criminal law due to their incompatibility. Even if the warnings of the International Criminal Court in the case of the former Yugoslavia on mechanical transportation sometimes seem exaggerated or erroneous, it is nevertheless true that the transfer of the general principles of national law to the international dimension should be carried out with caution. It is extremely important to constantly monitor the practice of international criminal courts and further study the general principles of law in order to increase the effectiveness of criminal justice in combating international crimes.

Аннотация. В настоящей статье подробно проанализированы случаи применения общих принципов права и принципов национального права в решениях международных уголовных судов и трибуналов. Продемонстрированы случаи, когда международные уголовные суды и трибуналы основывались на принципах национального права, затем превращая их в принципы общего права. Особое внимание было уделено поэтапному процессу передачи правовых принципов. В статье делается вывод, что международные уголовные суды и трибуналы установили существование, содержание и объем общих принципов права, не только прибегая к обычным вспомогательным средствам для определения норм международного права (т.е. ссылаясь на решения международных судов и трибуналов), но и непосредственно заимствуя их из национальных правовых систем.

Сложная правовая природа Международного уголовного права, его меняющийся характер и динамичные темпы развития актуализируют важность и необходимость изучения общих принципов права, их применимости в национальном законодательстве и их возможностей, позволяющих заполнить существующие пробелы. Велика роль общих принципов права в формировании единообразной практики международных уголовных судов и трибуналов, а также в обеспечении соблюдения неотъемлемых прав и свобод обвиняемых. Авторы обращаются к применению положений международного уголовного права в национальном уголовном праве и возможным сложностям этого процесса. Несмотря на правильное утверждение о том, что перенос принципов национального права в международную плоскость не должен быть механическим, верно и то, что международные уголовные суды и трибуналы редко отказывали в применении принципов национального права в Международном уголовном праве из-за их несовместимости, даже если предупреждения Международного уголовного суда по делу бывшей Югославии о механических перевозках иногда кажутся преувеличенными или ошибочными, тем не менее верно, что передача общих принципов национального права на международное измерение должна осуществляться с осторожностью. Чрезвычайно важен постоянный мониторинг практики международных уголовных судов, дальнейшее изучение общих принципов права с целью повышения эффективности уголовного правосудия в борьбе с международными преступлениями.

Բանալի բառեր - իրավունքի ընդհանուր սկզբունքներ, միջազգային քրեական իրավունք, անալոգիա, փոխադրում (տրանսպոզիցիա), դատական պրակտիկա, ազգային իրավական համակարգեր:

Keywords: *General principles of law, international criminal law, analogy, transposition, judicial practice, national legal systems.*

Ключевые слова: *общие принципы права, международное уголовное право, аналогия, транспозиция, судебная практика, национальные правовые системы.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Statute of the International Court of Justice, 24 Oct. 1945, 1491 u.n.t.s. 199, art. 38(1)(c).
2. South West Africa, Second Phase, Judgment, ICJ Reports 1966, p. 47, § 88.
3. Lighthouses in Crete and Samos, Judgment, 1937, PCIJ, Series A/B, No. 71, Separate Opinion by Judge Séfériades, էջեր 137–138; International Status of South West Africa, Advisory Opinion, Separate Opinion by Sir McNair, ICJ Reports 1950, էջ 148:
4. Prosecutor v. Erdemović, Sentencing Judgment, Case No. IT-96-22-T, T. Ch. I, 29 November 1996, § 26; Prosecutor v. Delalić et al., Judgment, Case No. IT-96-21-A, App. Ch., 20 February 2001, § 583.
5. Prosecutor v. Erdemović, Sentencing Judgment, Case No. IT-96-22-T, T. Ch. I, 29 November 1996, § 40.
6. Prosecutor v. Tadić, Judgment, Case No. IT-94-1-A, App. Ch., 15 July 1999, § 225.

7. Prosecutor v. Kupreskić et al., Judgment, Case No. IT-95-16-T, T. Ch. II, 14 January 2000, § 591.
8. Prosecutor v. Erdemović, Judgment, Joint Separate Opinion of Judge McDonald and Judge Vohrah, Case No. IT-96-22-A, App. Ch., 7 October 1997, § 61.
9. Prosecutor v. Tadić, Opinion and Judgment, Case No. IT-94-1-T, T. Ch. II, 7 May 1997, § 538.
10. David, René and Jauffret-Spinozi, Camille, Les grands systèmes de droit contemporains, 11e édition, Paris, Dalloz, 2002, 553 pp. էջ. 19, § 20. Сырых, В. (2018). Marxist law theory and post-Soviet Russian philosophy (theory) of law. Hybris, 40(1), 212–236.
11. Gradoni, Lorenzo, 'L'exploitation des principes généraux de droit dans la jurisprudence des Tribunaux internationaux pénaux ad hoc', in Fronza, Emanuela et Manacorda, Stefano (eds.), La justice pénale internationale dans les décisions des tribunaux ad hoc/Études des Law Clinics en droit pénal international, Dalloz, Paris, Giufrè, Milano, 2003, էջ. 17.
12. David, René and Jauffret-Spinozi, Camille, Les grands systèmes de droit contemporains, 11e édition, Paris, Dalloz, 2002, 553 pp. էջ 51, § 38.
13. Ashworth, Andrew, Principles of Criminal Law, 4th edition, Oxford, Oxford University Press, 2003, էջ 6:
14. Werle, Gerhard, Principles of International Criminal Law, The Hague, TMC Asser Press, 2005, էջ 485:
15. Gil y Gil, Alicia, Derecho penal internacional: especial consideración del delito de genocidio, Madrid, Tecnos, 1999, էջ 20:
16. Prosecutor v. Erdemović, Judgment, Separate and Dissenting Opinion of Judge Cassese, Case No. IT-96-22-A, App. Ch., 7 October 1997, § 2.
17. Pastor, Daniel, 'El sistema penal internacional del Estatuto de Roma. Aproximaciones jurídicas críticas', in Baigún, David et al., Estudios sobre justicia penal. Homenaje al Profesor Julio B. J. Maier, Buenos Aires, Editores del Puerto, 2005, էջեր 702-707.
18. Prosecutor v. Mejakic et al., Decision on Joint Defence Appeal Against Decision on Referral under Rule 11bis, Case No.: IT-02-65-AR11bis.1, App. Ch., 27 April 2006.

Սուքիասյան Վ. - ի.գ.թ., Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, էլիասցե՝ varazdatsukiasyan@gmail.com:

Սարգսյան Ա. - Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, ի.գ.թ., էլիասցե՝ adelina-sargsyan@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 25.06.2025 թ., տրվել է գրախոսության 25.06.2025 թ., երաշխավորվել ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, Ռուս-Հայկական համալսարանի պրոֆեսոր Ս. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2025 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-105>

ОВАНЕС БАЯНДУРЯН
*Член палаты адвокатов РА,
Аспирант кафедры уголовного права и уголовно процессуального
права Российско-Армянского университета*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ
*ՀՀ փաստաբանների պալատի անդամ,
Հայ-ռուսական համալսարանի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

HOVHANNES BAYANDURYAN
*Member of the Chamber of Advocates of the RA,
PhD Student at the Chair of Criminal Law and
Criminal Procedure Law of Armenian-Russian University*

ПРАВОПРЕЕМСТВО ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ: НЕОБХОДИМОСТЬ ЗАКОНОДАТЕЛЬНОЙ РЕГЛАМЕНТАЦИИ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՅ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

SUCCESSION OF LEGAL ENTITIES IN CRIMINAL PROCEEDINGS: THE NEED FOR LEGISLATIVE REGULATION

ВВЕДЕНИЕ

Нормативное закрепление процессуального статуса юридического лица в уголовном судопроизводстве стало важным шагом вперёд. В практике расследования экономических преступлений всё чаще наблюдается активное привлечение категории «юридическое лицо»: следственные органы признают коммерческие организации не только в качестве потерпевших, но и в качестве обвиняемых. Вместе с тем участие юридических лиц в уголовном процессе в случаях их реорганизации или ликвидации порождает серьёзные практические затруднения, особенно в аспекте процессуального правопреемства.

Одной из проблем, с которой сталкиваются правоприменители, является отсутствие в УПК Республики Армения положений, регулирующих ситуацию, связанную с реорганизацией

юридического лица, признанного потерпевшим или обвиняемым, т.е. вопрос процессуального правопреемства в таких случаях остается открытым. В настоящее время уголовно-процессуальный закон (пункт 30 статьи 6 УПК) предусматривает правопреемство лишь в двух ситуациях – в случае смерти потерпевшего физического лица и в случае смерти обвиняемого.

Учитывая современные экономические реалии, при которых юридические лица, наделённые правом участия в уголовном судопроизводстве в различных процессуальных статусах, по различным причинам нередко проходят через процедуры реорганизации, представляется необходимым урегулировать вопрос процессуального правопреемства и на уровне действующего УПК Республики Армения.

Правоприменительная практика, прежде всего судебная, по-разному трактует целый ряд вопросов, которые касаются самой процедуры уголовно-процессуального правопреемства.

В науке уголовно-процессуального права на сегодняшний день отсутствует комплексное диссертационное или монографическое исследование, посвященное уголовно-процессуальному правопреемству. Между тем, проблемы, связанные с правовой природой процессуального правопреемства в уголовном судопроизводстве, его местом в системе уголовно-процессуального права и ролью в динамике уголовно-процессуальных правоотношений, а также особенности процедуры процессуального правопреемства применительно к отдельным участникам уголовного судопроизводства в достаточной мере не изучены.

ОСНОВНОЕ ИСЛЕДОВАНИЕ

В юридической науке отсутствует единое понимание института правопреемства. Этот термин введен в юридический оборот главным образом в результате исследований в области гражданского права, в котором и существует институт правопреемства. Однако он широко применяется и в других отраслях права¹.

Правопреемство в наибольшей степени характерно для отраслей материального права (так называемое материальное правопреемство). Однако заслуживает внимания вопрос о допустимости и специфике правопреемства в рамках процессуального права – в гражданском, арбитражном, уголовном, административном и конституционном судопроизводствах.

Правопреемство как правовой институт реализуется как в материальном, так и в процессуальном праве. При этом процессуальное правопреемство, как правило, базируется на наличии соответствующего правопреемства в материальных правоотношениях, которые послужили основанием для возникновения процессуальных связей. Данная зависимость прослеживается и в сфере уголовного судопроизводства, поскольку уголовно-процессуальные правоотношения возникают на основе уголовно-правовых связей. Более того, действующее уголовно-процессуальное законодательство, как уже отмечалось, содержит ряд положений, прямо регулирующих вопросы правопреемства в рамках уголовного процесса.

Под правопреемством в общей теории права понимают переход права от одного лица к другому непосредственно в силу закона или соглашения².

Согласно авторскому определению Д.В. Носова, рассматривавшего вопрос с точки зрения

¹ Например, в таких отраслях, как конституционное (государственное), административное, финансовое, а также международное право (см.: *Крылова Ю.А.*, Проблемы правопреемства при реорганизации юридических лиц // Вестник Пермского университета. Юридические науки, 2009, Вып. 2, с. 103).

² Юридический энциклопедический словарь / Гл. ред. А.Я. Сухарев. М. Советская энциклопедия. 1984, с. 279; Юридический энциклопедический словарь / Гл. ред. О.Е. Кутафин. М., 2002, с. 386.

общей теории права, «под правопреемством следует понимать свойство правоотношений, представляющее собой не связанное с личностью субъекта правоотношения и не запрещенное законодательством изменение субъектного состава правоотношения, при котором в порядке производного приобретения субъективных прав и (или) юридических обязанностей происходит их переход от одного лица (правопредшественника) к другому лицу (правопреемнику) в отношении одного и того же объекта правоотношения»³.

Таким образом, в случае правопреемства само субъективное право не утрачивает своей юридической силы и не возникает заново, а сохраняется в непрерывном виде, переходя от одного субъекта к другому. При этом правовое отношение как таковое остается неизменным по своей структуре и содержанию; трансформации подвергается лишь персональный состав его участников – прежний субъект заменяется новым, который вступает в уже существующее правоотношение, приобретая в нём соответствующий правовой статус.

В зависимости от числа правоотношений, в которых происходит замена субъекта, в общей теории права разграничиваются универсальное и сингулярное правопреемство. Универсальное правопреемство (общее) предполагает замену субъекта во множестве правоотношений на основании одного юридического факта или совокупности таких фактов, за исключением тех случаев, когда правопреемство по объективным причинам невозможно. В рамках универсального правопреемства к правопреемнику переходят как все права, так и все обязанности правопредшественника. Подобный механизм характерен, например, для реорганизации юридических лиц, преобразования органов государственной власти, изменения административно-территориального устройства, смены стороны в трудовом правоотношении, а также при наследовании.

Сингулярное правопреемство (частное) характеризуется переходом прав и обязанностей в пределах одного или нескольких конкретных правоотношений и, как правило, осуществляется на основании отдельных юридических фактов. В отличие от универсального, при сингулярном правопреемстве замена субъекта происходит выборочно, не затрагивая все правовые связи правопредшественника. Типичными примерами сингулярного правопреемства являются уступка права требования (цессия), перевод долга, переход отдельных имущественных прав по договору или иным основаниям, не предполагающих полной правовой замены субъекта во всех его обязательствах и правах.

Учение о правопреемстве является неотъемлемым элементом правового регулирования гражданско-правовых отношений. Изменение правоотношения путем изменения его субъекта наиболее рельефно проявляется в гражданском праве. Смена субъектов в гражданских правоотношениях происходит достаточно часто: реорганизация юридических лиц, наследование, переход права собственности, цессии и др.

Что касается юридических лиц, то УПК не предусматривает возможности правопреемства юридических лиц в уголовном процессе. Между тем, данный вопрос актуален, поскольку за время расследования уголовного дела юридическое лицо может быть подвергнуто реорганизации или ликвидации. На практике сложилась неоднозначная практика, относительно действий участников уголовного судопроизводства при реорганизации и ликвидации юридического лица. Ряд правоприменителей в случае реорганизации и ликвидации не допускает правопреемства и продолжает судопроизводство при отсутствии потерпевшего; другие оставляют в процессе

³ Носов Д.В., Правопреемство: теоретико-правовое исследование: дис. ... канд. юрид. наук. М., 2011, с. 9.

представителя реорганизованного или ликвидированного юридического лица, невзирая на тот факт, что представляемого лица уже не существует; третьи привлекают к участию в процессе учредителей ликвидированного юридического лица; четвертые привлекают к участию в процессе правопреемников реорганизованного юридического лица.

Ввиду межотраслевого характера института правопреемства, а также отсутствия в Уголовно-процессуальном кодексе положений, прямо регулирующих правопреемство юридических лиц, на научном уровне встает необходимость осмысления возможности и допустимости имплементации норм гражданского правопреемства в уголовно-процессуальную сферу.

На протяжении десятилетий активно дискутируется возможность использования гражданского-процессуального правопреемства в уголовном процессе.

Сторонники идеи внедрения правопреемства юридических лиц в уголовный процесс (например, Л.Л. Кротова, И.Л. Петрухин, А.В. Наумов) исходят из необходимости адаптации уголовно-процессуальных механизмов к реальностям экономической и корпоративной жизни. Они указывают, что в условиях распространённости преступлений, совершаемых от имени или в интересах юридических лиц, отказ от правопреемства ведёт к фактическому уклонению от уголовной ответственности либо к утрате возможности возмещения ущерба потерпевшему. По их мнению, имплементация гражданско-правовых подходов может быть допустима в пределах, не нарушающих базовые принципы уголовного процесса⁴.

Так, Л.Л. Кротова подчёркивает, что правопреемство допустимо при сохранении экономической идентичности между предшествующим и последующим субъектом, особенно в случаях слияния или выделения, когда новая организация продолжает фактически ту же деятельность. И.Л. Петрухин акцентирует внимание на необходимости «процессуального инструментария» в части перехода обязательств по уголовно-правовому возмещению, а не переноса вины как таковой. А.В. Наумов выступает за осторожную гармонизацию норм, при которой гражданско-правовое правопреемство может быть применено к имущественным аспектам уголовного преследования.

Н.С. Рогов, напротив, предлагает закрепить в УПК возможность правопреемства реорганизованного юридического лица, аналогично процедуре правопреемства, установленной Гражданско-процессуальным кодексом РФ, расширив перечень субъектов, решающих вопрос о правопреемстве через включение в него лиц, осуществляющих предварительное расследование⁵.

В то же время критики такой позиции (например, Н.А. Лопашенко, В.М. Савицкий, С.В. Бородин) высказывают опасения по поводу размывания фундаментальных принципов уголовного судопроизводства. Они подчёркивают, что уголовная ответственность по своей природе является личной, индивидуализированной, и не может быть унаследована или передана, в отличие от гражданско-правовых обязательств. Н.А. Лопашенко утверждает, что внедрение правопреемства юридических лиц в уголовный процесс создает риск подмены виновности корпоративной преемственностью, что несовместимо с презумпцией невиновности.

⁴ Кротова Л.Л., Правопреемство юридических лиц в уголовном процессе: опыт и перспективы // Уголовное право. – 2012. – № 3. – С. 45–51.; Петрухин И.Л., Уголовная ответственность юридических лиц: за и против // Государство и право. – 2004. – № 6. – С. 67–74; Наумов А.В., Уголовное право: Общая часть. Курс лекций. – М.: Зерцало, 2005. – С. 258–265.

⁵ См.: Рогов Н.С., Участие юридических лиц в уголовном процессе в качестве потерпевшего // Евразийская адвокатура. – 2016. – № 4 (23). – С. 52–53.

С.В. Бородин, в свою очередь, обращает внимание на отсутствие в уголовно-процессуальном законодательстве четких процессуальных механизмов, обеспечивающих соблюдение прав преемника в статусе обвиняемого или иного участника процесса.⁶

Н.А. Власенко пишет о принципиальном отличии уголовного процессуального права от гражданского процессуального права, которое он видит в том, что «сама ... отрасль носит ярко выраженный публичный характер...»⁷[с. 36].

Считаем оправданным мнения тех ряд авторов, которые предлагают искать аналогию в других отраслях права, считая, что действующее уголовно-процессуальное законодательство не может решить все частные вопросы, которые возникают в процессе расследования преступлений⁸. Однако следует отдать должное внимание отраслевым особенностям. По-видимому, правопреемство в различных процессуальных отраслях права может иметь свои особенности. Известно, что нормы УПК РА носят императивный характер, что означает: можно поступать «только так и никак иначе», как закреплено в уголовно-процессуальном законе. Однако сама сущность правопреемства не должна изменяться в зависимости от отрасли права, которая оперирует этим понятием.

Другой проблемой, вызывающей научную дискуссию, является неопределённость в вопросе процессуального правопреемства потерпевшего — юридического лица в случае его ликвидации, а также установление круга лиц, имеющих право на вступление в уголовное судопроизводство в этом статусе — правопреемников, учредителей либо иных заинтересованных лиц.

Некоторые авторы считают, что указанная проблема может быть разрешена путем реализации концепции о переходе прав ликвидированного или реорганизованного юридического лица к другим лицам, т.е. при помощи реализации института процессуального правопреемства потерпевшего – юридического лица в уголовном судопроизводстве. Это позволит повысить эффективность защиты прав и интересов юридического лица в уголовном судопроизводстве; обеспечить возможность участия такого юридического лица в уголовно-процессуальных отношениях; возможность реализации им права заявлять ходатайства, участвовать в процессе доказывания, предъявлять гражданский иск, поддерживать заявленные требования и т.п.⁹

Относительно возможности правопреемства юридических лиц в случае их ликвидации среди ученых также нет единого мнения. Н.С. Рогов, возражает против правопреемства ликвидированного юридического лица, поскольку это противоречит ГПК¹⁰, и возможные правопреемники (учредители, директор) получают выплаты, на которые они не имеют права. Аналогичного мнения придерживается и И.В. Мисник, считая, что при ликвидации юридического

⁶ Лопашенко Н.А., Ответственность юридических лиц в уголовном праве России. – Волгоград: Изд-во Волгоградского государственного университета, 2003. – 264 с.; Савицкий В.М., Уголовное право. Общая часть. – М.: Юристъ, 2000. – 496 с.; Бородин С.В., Проблема правопреемства в уголовном судопроизводстве // Уголовное судопроизводство. – 2018. – № 4. – С. 38–42.

⁷ Власенко Н.А., Об аналогии в современном процессуальном праве // Рос. юстиция. 2005, №7, с. 32–36.

⁸ Даев В.Г., Современные проблемы гражданского иска в уголовном процессе. – Ленинград: Изд-во ЛГУ. – 1972. – С. 13; Мазалов А.Г., Гражданский иск в уголовном процессе. Изд. 2-е, испр. и доп. – Москва: Юрид. лит. – 1977. – С. 15.

⁹ Баловнева В.И., О представителе юридического лица в уголовном процессе; Комаров И.М. Общие вопросы участия юридического лица в уголовном судопроизводстве // Правовые проблемы укрепления российской государственности: сб. статей. – Томск. 2018. Ч. 75. – С. 13–19.

¹⁰ См.: Рогов Н.С., Участие юридических лиц в уголовном процессе в качестве потерпевшего // Евразийская адвокатура. 2016. № 4 (23).

лица, должно выноситься постановление о прекращении участия соответствующего юридического лица в качестве потерпевшего по уголовному делу¹¹.

С.Р. Зеленин предлагает допускать в производство по уголовному делу учредителей юридического лица в случае его ликвидации, поскольку то, что имущество юридического лица при ликвидации распределяется между его учредителями, свидетельствует о причиненном им вреде. При этом следует отметить, что С.Р. Зеленин ведет речь не обо всех юридических лицах, а о тех, имущество которых распределяется между учредителями. К таковым относятся юридические лица, учредители которых сохранили корпоративные права на имущество юридических лиц: хозяйственные товарищества, общества, партнерства, кооперативы и т.д. Учредители иных юридических лиц, которые сохранили вещные права на имущество юридических лиц (государственные предприятия, муниципальные унитарные предприятия, учреждения), а также которые не имеют никаких прав на имущество юридических лиц (фонды, религиозные организации и т.д.), на наш взгляд, не должны участвовать в уголовном процессе в случае ликвидации юридических лиц в связи с тем, что учредителем первой группы является государство, а учредители второй группы не имеют никаких прав на имущество учрежденных юридических лиц¹².

На практике вопрос о правопреемстве потерпевшего в уголовном судопроизводстве сопровождается рядом юридических и фактических трудностей, особенно в случаях ликвидации юридических лиц. По мнению А. Прошлякова, законные интересы ликвидированного юридического лица в уголовном судопроизводстве должны защищать и отстаивать следователь, дознаватель, прокурор¹³. Однако судебная практика складывается иным образом.

Например, есть практика, согласно которой права потерпевшего – ликвидированного юридического лица переходят к его учредителям. Тем не менее, предложенное решение проблемы правопреемства в уголовном судопроизводстве не во всех случаях оказывается реализуемым на практике. Так, если признание учредителей ликвидированного общества с ограниченной ответственностью потерпевшими по уголовному делу уже получило определенное распространение в судебной практике, то вопрос о возможности перехода полномочий потерпевшего от ликвидированного акционерного общества с широким кругом акционеров остаётся значительно более спорным и вызывает множество правовых и процедурных затруднений¹⁴.

Несмотря на сложности, возникающие при ликвидации юридического лица, представляется обоснованным предоставление его учредителям права участвовать в уголовном процессе в качестве потерпевших. Такая возможность должна быть обусловлена не только фактом распределения имущества ликвидированного юридического лица между его участниками, но и сущностной природой корпоративных прав, которые, по своей правовой природе, представляют собой особую форму имущественных интересов. Эти интересы связаны не с

¹¹ Мисник И.В., Участие потерпевших юридических лиц в уголовном судопроизводстве // Вестник Краснодарского ун-та МВД России. 2016. № 4 (34). – С. 40–43.

¹² Зеленин С.Р., Когда учредитель ликвидированного юридического лица, признанного потерпевшим, может остаться в процессе // Уголовный процесс. 2011. № 7.

¹³ Прошляков А.Д., О неотчуждаемости статуса юридического лица – потерпевшего по уголовному делу. – Российский юридический журнал. 2009. № 5(65). с. 206–208.

¹⁴ Бывшим акционерам акционерного общества переходят процессуальные права ликвидированного юридического лица – потерпевшего. Проблема видится лишь в том, что на практике трудно обеспечить их участие в уголовном судопроизводстве в силу того, что, как правило, их количество значительно.

конкретным активом, а с управлением и распоряжением общим корпоративным имуществом. В этом смысле корпоративные отношения отражают более сложную форму имущественной связи, чем обычная индивидуальная собственность, и, следовательно, заслуживают соответствующей процессуальной защиты даже после прекращения существования самого юридического лица.

В то же время следует принимать во внимание, что в ситуациях, когда подозреваемым или обвиняемым по уголовному делу является лицо, которое одновременно выступает учредителем (участником) юридического лица, признанного потерпевшим, например по делам о присвоении или растрате, такое лицо не может быть признано потерпевшим в порядке процессуального правопреемства после ликвидации юридического лица.

Одной из острых и до настоящего времени нерешённых проблем научной дискуссии выступает вопрос о допустимости и правовой природе процессуального правопреемства обвиняемого – юридического лица в уголовном судопроизводстве в случае его ликвидации и реорганизации.

Эта проблема затрагивает фундаментальные положения уголовного и уголовно-процессуального права: персональный характер уголовной ответственности, допустимость продолжения уголовного преследования после утраты правосубъектности обвиняемым юридическим лицом, а также процессуальные последствия для правопреемников, если таковые имеются.

В центре обсуждения – возможность переноса статуса обвиняемого на правопреемника ликвидированного юридического лица (например, при слиянии, преобразовании, выделении), с тем чтобы не допустить утраты уголовно-правового интереса государства и ухода от ответственности за совершённое преступление.

Вопрос о возможности уголовно-процессуального правопреемства обвиняемого юридического лица в случае его ликвидации является предметом острой научной дискуссии и не имеет однозначного решения. Преобладающая точка зрения в современной доктрине уголовного процесса и уголовного права сводится к тому, что уголовная ответственность носит строго персональный характер и не может быть предметом правопреемства по общему правилу. В связи с этим прекращение существования юридического лица влечёт прекращение уголовного преследования в отношении него.

Однако ряд исследователей предлагает расширительный и функциональный подход, обосновывая его следующими положениями:

1. Современные формы хозяйственной деятельности позволяют через механизмы реорганизации (слияния, присоединения, преобразования) сохранить деловую, управленческую и имущественную преемственность, что делает правопреемника фактически тождественным исходному субъекту преступления.

2. Цели уголовного судопроизводства (восстановление справедливости, предупреждение преступлений, защита прав потерпевших) требуют наличия механизма продолжения процесса даже после формального исчезновения юридического лица, особенно в случаях экономических и коррупционных преступлений.

3. Процессуальное правопреемство обвиняемого юридического лица может быть допустимо в ограниченных случаях, при наличии фактической, функциональной и имущественной преемственности, а также если правопреемник извлёк выгоду от преступной деятельности предшественника.

Отказ от признания возможности процессуального правопреемства юридического лица, обвиняемого в совершении преступления, позволяет злоупотреблять формами реорганизации для уклонения от ответственности. Необходимы законодательные новеллы, обеспечивающие продолжение уголовного преследования в случае объективной преемственности¹⁵.

Правоприменительная практика ЕСПЧ. Вопрос уголовно-процессуального правопреемства юридических лиц в практике Европейского суда по правам человека (ЕСПЧ) не урегулирован напрямую положениями Европейской конвенции о защите прав человека и основных свобод, однако на практике он затрагивается через применение статьи 6 Конвенции (право на справедливое судебное разбирательство), а также через вопросы допустимости привлечения юридических лиц к ответственности и соблюдения процессуальных гарантий при их реорганизации или ликвидации.

ЕСПЧ признаёт за юридическим лицом право обращаться с жалобой на нарушение прав, гарантированных Конвенцией (например, ст. 6, 7, 1 Протокола № 1), что означает, что компания может быть «жертвой» нарушения даже в уголовно-процессуальном контексте, если против неё велось уголовное преследование или были наложены меры уголовно-правового характера.

Правопреемство юридических лиц и продолжение производства ЕСПЧ в целом придерживается функционального подхода к вопросу правопреемства. Если компания подверглась слиянию, разделению или иной форме реорганизации, Суд допускает продолжение уголовного преследования в отношении правопреемника, если сохраняется юридическая и фактическая идентичность между прежним субъектом и новым. Такой подход соответствует цели недопущения ухода от ответственности путём корпоративных трансформаций.

ЕСПЧ последовательно исходит из того, что уголовная ответственность должна быть индивидуальной и персональной (см., например, дело *Vatsouras v. Greece*, 2009). Однако это не исключает возможности наложения санкций на юридическое лицо при соблюдении гарантий справедливого разбирательства, предусмотренных статьей 6 Конвенции. В этом контексте правопреемство юридических лиц в уголовном процессе оценивается через призму непрерывности субъекта ответственности.

В деле *Lisoskyu and Ukrainian Trade Union of Entrepreneurs v. Ukraine* (2021) ЕСПЧ отметил, что юридическое лицо может быть признано виновным и подвергнуто санкциям при условии соблюдения процессуальных гарантий. Если в процессе расследования или судебного разбирательства организация подверглась реорганизации, её правопреемник может быть привлечён к ответственности – при условии, что существует правовая и фактическая преемственность, аналогично подходу в гражданском праве.

В некоторых юрисдикциях прекращение существования юридического лица по формальным основаниям (например, его исключение из реестра) используется для избежания ответственности. ЕСПЧ критически относится к таким механизмам, указывая, что прекращение юридического лица не должно автоматически исключать уголовную ответственность, если государство сохраняет контроль над механизмом правопреемства (см. дело *Bendenoun v. France*, 1994).

Таким образом, уголовно-процессуальное правопреемство юридических лиц в контексте практики Европейского суда по правам человека представляет собой допустимый правовой

¹⁵ *Зеленин С.Р.*, Правопреемство в уголовном процессе: проблемы и перспективы.

механизм, при условии соблюдения как юридической, так и фактической преемственности между правопродшественником и правопреемником. Ключевым критерием легитимности такого правопреемства выступает соблюдение фундаментальных процессуальных гарантий, предусмотренных статьей 6 Европейской конвенции, включая право на справедливое судебное разбирательство. При этом ЕСПЧ настороженно относится к ситуациям, когда корпоративные преобразования используются для уклонения от уголовной ответственности, и допускает возможность возложения ответственности на нового субъекта при наличии объективной связи с действиями правопродшественника.

Правоприменительная практика зарубежных стран. Мировая практика по вопросу правопреемства уголовной ответственности юридических лиц неоднородна. Страны, в которых юридические лица являются полноправными субъектами уголовной ответственности (США, Франция), постепенно формируют подходы, допускающие функциональное правопреемство в целях предотвращения злоупотреблений.

Вместе с тем традиционный европейский подход (Великобритания, Германия) придерживается концепции персонификации ответственности, исключая её передачу при прекращении юридического лица.

Великобритания и Германия, действительно придерживаются традиционного персоналистского подхода к уголовной ответственности юридических лиц, что существенно влияет на вопрос её непередаваемости при правопреемстве.

Верховный Суд Нидерландов постановил, что в случае прекращения существования юридического лица нормы уголовного законодательства, предусмотренные для случаев прекращения существования (смерти) физических лиц, не распространяются на юридических лиц. Указанное постановление было вынесено по делу о мошенничестве юридического лица, которое самоликвидировалось, когда узнало, что в отношении его возбуждено уголовное дело. В решении Верховного Суда Нидерландов сказано, что даже ликвидированное юридическое лицо, если оно не объявило о своей ликвидации до начала уголовного преследования, может быть привлечено к уголовной ответственности¹⁶.

Это значит, что наказание может быть применено и в том случае, если юридического лица, совершившего преступление, уже не существует. Фактически имеет место правопреемство уголовной ответственности. При этом в Нидерландах считается, что в указанных случаях уголовная ответственность применяется именно к юридическому лицу, совершившему преступление, и «даже в случае, когда юридическое лицо передало свою деятельность, свой бизнес иному юридическому лицу, такое лицо может все равно, как и прежде, быть подвергнуто уголовной ответственности за инкриминируемый деликт»¹⁷.

В настоящее время нормы, предусматривающие возможность уголовной ответственности юридического лица после прекращения его деятельности (утраты правосубъектности), имеются в законодательстве уже многих государств. Соответствующие положения сформулированы где-то фрагментарно, в общем виде, где-то более детально.

¹⁶ См.: *Тарбагаев А.Н.*, Введение в уголовное право Нидерландов: основные институты Общей части: Учебное пособие. Красноярск, 2000, с. 30

¹⁷ *Шошин С.В., Рубцов Ф.С.*, Уголовная ответственность юридических лиц за экологические деликты: опыт иностранных государств // Правовые институты и методы охраны окружающей среды в России, странах СНГ и Европейского Союза: состояние и эффективность. Материалы III Международной научно-практической конференции / Отв. ред. Н.Т. Разгельдеев. Саратов, 2017, с. 135

В частности, этот вопрос получил разрешение в государствах, образовавшихся на территории бывшей Югославии. Например, в Республике Словения¹⁸ ст. 6 Закона об ответственности юридических лиц за уголовные преступления 1999 г.¹⁹ предусмотрено, что юридическое лицо прекратило свое существование до окончания уголовного разбирательства, уголовные санкции могут быть применены к юридическому лицу, являющемуся его правопреемником.

Аналогичная норма имеется и в законодательстве Республики Черногория. Согласно ст. 8 Закона об ответственности юридических лиц за уголовные преступления 2007 г. 12, в случае прекращения существования юридического лица до окончания проводимого в отношении него уголовного процесса к уголовной ответственности (в виде наложения штрафа, мер безопасности или изъятия материальной выгоды) может быть привлечено юридическое лицо, являющееся его правопреемником²⁰.

В Республике Сербия²¹ Законом об ответственности юридических лиц за уголовные преступления 2008 г. установлено, что юридическое лицо, которое после совершения уголовного преступления изменило организационно-правовую форму, имевшуюся на момент совершения преступления, несет ответственность за уголовное преступление на тех же условиях. Если юридическое лицо прекращает свое существование до окончания уголовного дела, к уголовной ответственности может быть привлечено юридическое лицо, являющееся его правопреемником. Если же юридическое лицо прекращает свое существование после завершения разбирательства, по итогам которого на него наложены санкции за уголовное преступление, они применяются к юридическому лицу, которое является его правопреемником (статья 6 Закона)²².

Законодательство частично признанной Республики Косово²³ также регламентирует этот вопрос подобным образом. Согласно ст. 6 Закона об ответственности юридических лиц за уголовные преступления 2011 г., если юридическое лицо прекратило свое существование до завершения рассмотрения уголовного дела, к уголовной ответственности может быть привлечено юридическое лицо-правопреемник; если юридическое лицо прекратило свое существование после вынесения приговора, предусмотренные приговором санкции применяются к юридическому лицу, являющемуся его правопреемником.²⁴

¹⁸ Об уголовной ответственности юридических лиц в этой стране см.: Федоров А.В. Уголовная ответственность юридических лиц по законодательству Республики Словения // Российский следователь. 2018. № 5, с. 75-80; Федоров А.В., Уголовная ответственность юридических лиц по законодательству Словении и Хорватии // Вестник Московской академии Следственного комитета Российской Федерации. 2018. № 2. С. 13-23

¹⁹ Zakon o odgovornosti pravnih oseb za kazniva dejanja (ZOPOKD) // ULRS - Uradni list Republike Slovenije. № 59/99, № 12/00, № 50/04, № 98/04, № 65/08, № 57/12

²⁰ Zakon o odgovornosti pravnih lica za krivična djela // Službeni list Crne Gore. № 2/07, № 13/07, № 73/10, № 30/12, № 39/16.

²¹ Об уголовной ответственности юридических лиц в Республике Сербия см.: Федоров А.В., Уголовная ответственность юридических лиц по законодательству Республики Сербия // Расследование преступлений: проблемы и пути их решения. 2015, № 4, с. 13-21; Федоров А.В., Уголовно-процессуальное производство по делам о преступлениях юридических лиц в Республике Сербия // Вестник Академии Следственного комитета Российской Федерации. 2015, № 4, с. 33-41.

²² Zakon o odgovornosti pravnih lica za krivična dela (Закон об ответственности юридических лиц за уголовные преступления) // Службени гласник Републике Србије. № 97/08.

²³ Об уголовной ответственности юридических лиц в частично признанной Республике Косово см.: Федоров А.В., Косовский вариант уголовной ответственности юридических лиц // Российский следователь. 2018, № 10, с. 75-80.

²⁴ Ligj për Përgjegjësinë e Personave Juridik për Vepra Penale (Zakon o odgovornostima pravnih lica za krivična dela) № 04/L-030// Gazeta Zyrtare e Republikës së Kosovës (Službeni list Republike Kosova) № 16/2011.

Более детально вопросы уголовной ответственности юридического лица после прекращения его деятельности регламентированы в румынском законодательстве.

В соответствии со ст. 151 Уголовного кодекса Румынии 2009 г.²⁵, вступившего в силу с 1 февраля 2014 г., в случае утраты правосубъектности юридическим лицом вследствие слияния, поглощения или разделения после совершения преступления уголовная ответственность наступает для:

- а) юридического лица, созданного в результате слияния;
- б) юридического лица, поглотившего совершившее преступление юридическое лицо;
- в) юридических лиц, которые были созданы путем разделения юридического лица, совершившего преступление, или которые приобрели доли из имущества такого разделенного лица.

При назначении наказания таким юридическим лицам учитывается стоимость имущества юридического лица, совершившего преступление, в составе имущества юридических лиц, вышеуказанных в пунктах «а» и «б», а также стоимость частей его имущества, переданная каждому юридическому лицу, участвующему в разделении соответствующего юридического лица.

Таким образом, в Румынии установлено, что слияние, поглощение или разделение юридического лица не освобождают от корпоративной уголовной ответственности, которая соразмерно применяется к правопреемнику.

В Королевстве Испания при установлении уголовной ответственности юридических лиц также урегулирован вопрос «правопреемства» ответственности, Органическим законом 5/2010 от 22 июня 2010 г.²⁶ новой частью 2 ст. 130 УК Испании предусмотрено, что преобразование, слияние, поглощение или разделение юридического лица не ведет к погашению его уголовной ответственности. Последняя переходит на компанию или компании, в которые юридическое лицо преобразуется, с которыми оно сливается или которым оно поглощается. В том числе ответственность переносится на компанию или компании, возникающие в результате разделения юридического лица. Судья или суд имеют право смягчить переход наказания на юридическое лицо в зависимости от степени связи первоначально виновного юридического лица с новым юридическим лицом. Анализ указанных норм показывает, что в результате внесенных в 2010 г. изменений в испанское законодательство создана нормативная база для привлечения юридических лиц к уголовной ответственности за преступления, позволяющая при определенных условиях обеспечить неотвратимость такой ответственности даже в случаях попыток уклониться от нее путем преобразования юридических лиц. Регулирование вопросов уголовной ответственности юридического лица после прекращения его деятельности необходимо для того, чтобы юридические лица не уклонялись от ответственности путем реорганизации.

В Эстонии Пенитенциарный кодекс Эстонской Республики²⁷ (далее ПК Эстонии) установил с 2002 г. корпоративную уголовную ответственность²⁸. В соответствии со ст.

²⁵ См.: Lege Codul penal al României nr. 286 din 17 iulie 2009 [Уголовный кодекс Румынии Закон от 17 июля 2009 г. № 286] // Monitorul Oficial al Românie. 2009. nr. 510.

²⁶ Ley Orgánica 5/2010, de 22 de junio, por la que se modifica la Ley Orgánica 10/1995, de 23 de noviembre, del Código Penal.

²⁷ Пенитенциарный кодекс Эстонской Республики принят 6 июня 2001 г., объявлен постановлением Президента Эстонской Республики от 26 июня 2001 г. № 1099, вступил в силу с 1 сентября 2002 г.

²⁸ Об уголовной ответственности юридических лиц в Эстонской Республике см.: Уголовное право. Общая часть. Преступление. Академический курс. В 10 т. Т. VII. Кн. I. Субъект преступления / под ред. Н.А. Лопашенко. М., 2016,

14 «Ответственность юридического лица» ПК Эстонии, юридическое лицо (legal person) несет в предусмотренных законом случаях ответственность за деяние, совершенное его органом или руководящим работником в интересах юридического лица. Согласно ст. 37 «Деликтоспособность юридического лица» ПК Эстонии деликтоспособным признается правоспособное юридическое лицо, т.е. нести уголовную ответственность за совершение наказуемых деяний могут только правоспособные юридические лица. При этом вопрос об уголовной ответственности юридического лица после прекращения его деятельности остался нормативно неурегулированным.

В УК Литвы такой нормы нет, но системное толкование положений литовского законодательства позволяет сделать однозначный вывод о возможности привлечения юридического лица к уголовной ответственности после прекращения его деятельности, когда ответственность переходит к правопреемнику юридического лица, прекратившего свою деятельность.²⁹ На это указано, в частности, в определении по уголовному делу расширенной коллегии в составе семи судей Отдела по уголовным делам и Отдела по гражданским делам Верховного суда Литвы от 30 декабря 2016 г. № 2К-7-304- 978/2016.

В числе рассмотренных расширенной коллегией был вопрос о том, может ли быть привлечено к уголовной ответственности юридическое лицо (политическая партия), которое прекратило свою деятельность (реорганизовано) в ходе уголовного процесса по делу о привлечении его к ответственности.

Расширенная коллегия указала, что реорганизация юридического лица в рассматриваемом случае не является препятствием для применения уголовной ответственности, в отличие от случая его ликвидации³⁰.

В Эстонии нет правопреемства уголовной ответственности юридических лиц. На это указывает не только отсутствие в ПК Эстонии норм о таком правопреемстве, но и положения Уголовно-процессуального кодекса Эстонии 58³¹ (УПК Эстонии). Так, в числе обстоятельств, исключающих производство по уголовному делу, в ст. 199 УПК Эстонии указано прекращение (ликвидация) подозреваемого или обвиняемого юридического лица. В этом случае, согласно ст. 199 УПК Эстонии, производство по уголовному делу не может быть начато.

Доктрина «преступной идентичности» в США. Современное корпоративное право США, особенно в части уголовной ответственности юридических лиц, сталкивается с вызовами, связанными с ответственностью правопреемников за преступления их предшественников, что приводит к разработке различных доктрин.

Традиционная юридическая модель, сложившаяся в судопроизводстве и корпоративной практике, предполагает автоматическое возложение ответственности на корпорации-преемники вне зависимости от содержания и характера реорганизации. В последние годы в американской правовой науке набирает популярность альтернативный подход – доктрина «преступной

с. 204-210.

²⁹ Уголовная ответственность юридических лиц в Литве: Федоров А.В., Вестник Московской академии Следственного комитета Российской Федерации.

³⁰ Об этом определении см.: Юрка Р., Куранка К., Интерпретация юридических знаний в качестве специальных знаний: диалектический подход // Криминалист первопечатный. 2017, № 15, с. 17; Законодательство и правоприменение по предмету Конвенции о криминальной ответственности за коррупцию в ЕС, СНГ и иных странах. Уголовная ответственность юридических лиц. Вильнюс, 2019, с. 56-57.

³¹ Kriminaalmenetluse seadustik. Принят 12 февраля 2003 г. (RT I, 2003, 27, 166).

идентичности» (criminal identity doctrine)³². Он предлагает более гибкую и справедливую основу для определения уголовной ответственности корпораций после реорганизации.

В действующем американском праве преобладает формальный (традиционный) подход, согласно которому любая компания, возникшая в результате слияния, поглощения или иной формы преобразования, автоматически наследует уголовную ответственность прежней корпорации³³. Такой подход игнорирует как реальные изменения внутри компаний, так и принятые ими меры по устранению внутренних причин правонарушений.

Традиционный подход исходит из того, что правопреемник всегда несёт ответственность за деяния своего предшественника. В контексте слияний, выделений и ликвидаций применяется логика гражданского права, согласно которой долги и обязательства одной корпорации переходят к другой³⁴. Такая логика была заимствована в уголовное право и усилилась, несмотря на то, что по сути аналогия между роспуском корпорации и смертью физического лица не учитывает возможности трансформации корпоративной структуры и намерения на реформу³⁵. Более того, это привело к тому, что компании, даже реорганизовавшиеся в целях соблюдения правовых стандартов, продолжают нести уголовное «клеймо» предшественников.

Доктрина «преступной идентичности» (criminal identity doctrine) представляет собой современный альтернативный подход к уголовной ответственности правопреемников юридических лиц. В отличие от традиционной (формалистской) модели, при которой корпорация-правопреемник автоматически наследует уголовную ответственность за преступления предшественника, независимо от характера и глубины реорганизации, новая доктрина предлагает совершенно иную концептуальную основу.

Суть доктрины «преступной идентичности» заключается в том, что правопреемник несёт уголовную ответственность за преступления своего предшественника только в том случае, если он унаследовал ключевые организационные черты, которые способствовали совершению преступления – так называемую «преступную идентичность» (criminal identity)³⁶. Эти черты могут включать: корпоративную культуру толерантности к нарушениям; отсутствие программ соответствия и внутреннего контроля; систему мотивации, поощряющую обход закона; прежнюю управленческую команду и организационную структуру.

Доктрина «преступной идентичности» опирается на материальный критерий:

³² На сегодняшний день доктрина «преступной идентичности» в США не получила официального законодательного закрепления и не применяется в судебной практике как основной стандарт. Тем не менее, она обсуждается в научной среде как перспективная альтернатива формалистскому подходу к уголовной ответственности правопреемников. Этот подход основан на нормах корпоративного права штатов (например, Delaware General Corporation Law § 259) и аналогии с гражданско-правовой ответственностью при слияниях и выделениях.

³³ *Wallach v. Van Riswick*, 92 U.S. 202, 208-09 (1875) (holding that forfeiture of property as punishment for a Civil War Confederate's treason did not extend to the Confederate's children who retained a future interest in the property).

³⁴ 8 Del. Laws § 259 (2018).

³⁵ *Okla. Nat. Gas Co. v. Oklahoma*, 273 U.S. 257, 259 (1927) (“It is well settled that at common law and in the federal jurisdiction a corporation which has been dissolved is as if it did not exist, and the result of the dissolution cannot be distinguished from the death of a natural person in its effect.”).

³⁶ *Laufer & Strudler*, *supra* note 34, at 1298-99 (2000) (“[V]icarious liability is an inferior rule for determining corporate responsibility . . . Prosecutors also have shied away from vicarious liability for the very same reasons expressed by courts and legislatures. In addition to recognizing compliance programs as evidence of due diligence, prosecutorial policies and guidelines increasingly acknowledge an organizational liability that is separate and apart from an imputed liability that accompanies vicarious fault.”); Geraldine Szott Moohr, *Of Bad Apples and Bad Trees: Considering Fault-Based Liability for the Complicit Corporation*, 44 AM. CRIM. L. REV. 1343, 1359 (2007) (“A second set of factors that support fault-based criminal liability relate to problematic issues raised by use of the respondeat superior doctrine.”).

преемственность ответственности должна быть обусловлена преемственностью криминогенных факторов, а не просто юридической оболочкой компании.

Переход к ответственности, основанной на «преступной идентичности», предлагает переосмысление самой природы ответственности правопреемника. Новый подход предлагает: только в случае унаследования организационных черт, способствовавших совершению преступления, правопреемник должен нести уголовную ответственность за деяния предшественника. Эти черты включают: слабую культуру соблюдения, отсутствие механизмов внутреннего контроля, толерантность к правонарушениям.

Преимущества подхода заключается, во-первых, в том, что он позволяет разграничивать добросовестных правопреемников, стремящихся к реформе, и те структуры, которые сохраняют преступный этос. Это делает наказание более справедливым с точки зрения ретрибутивной философии уголовного права³⁷. Во-вторых, подход стимулирует корпоративную реабилитацию, снижает мотивацию скрывать правонарушения, усиливает внутренний контроль и создаёт стимул для внедрения программ соответствия³⁸. В отличие от действующего традиционного режима, новый подход уменьшает системные искажения, когда компании предпочитают игнорировать или скрывать факты правонарушений из страха быть привлеченными к ответственности³⁹.

Подход к идентификации преемника наиболее очевидно сочетается с реабилитационной целью уголовного права. По мнению теоретиков реабилитации, уголовное право и наказание должны быть структурированы так, чтобы способствовать исправлению преступников. Согласно действующему законодательству об ответственности преемника, корпорации имеют определенный стимул для улучшения соответствия во время реорганизации; таким образом, преемники снижают вероятность будущих проступков и наказания за них. Проблема в том, что корпорации, как предшественники, так и преемники, имеют сильные сдерживающие факторы, чтобы сделать первый шаг к реформе – расследовать прошлые проступки и уязвимости в соблюдении требований.

Методология определения «преступной идентичности» состоит из двух этапов. Сначала следует определить, какие организационные характеристики были причинно ответственны за преступление предшественника. Затем устанавливается, унаследовал ли правопреемник эти черты. При положительном ответе — ответственность должна передаваться. В противном случае — нет.

Интеграция концепции идентичности в практику уголовного преследования предполагает предварительную оценку со стороны прокуроров. Они могли бы отказываться от обвинения, если бы пришли к выводу, что идентичность не унаследована. Однако полагаться исключительно на усмотрение прокуратуры рискованно, поскольку их решения являются сугубо дискреционными⁴⁰. Альтернативой может быть раннее обращение в суд первой инстанции, где стороны могли бы заявить о различии идентичности и ходатайствовать об

³⁷ Кант И., *Метафизика нравов*. Пер. с нем. Мэри Грегор. – М.: Академический проект, 2000. (§ 49 E), *Кант И., Философия права. Метафизика нравов. Часть первая. Учение о праве*. Пер. с нем. В. Хасте. – СПб.: Типография М. М. Стасюлевича, 1895, с. 196.

³⁸ John H. Matheson, *Successor Liability*, 96 MINN. L. REV. 371, 381 (2011) (“[C]orporations should not be able to avoid liability by simply changing their form or name.”).

³⁹ Chris William Sanchirico, *Detection Avoidance*, 81 N.Y.U. L. REV. 1331, 1361 (2006).

⁴⁰ U.S. Department of Justice, *Justice Manual*, § 9-28.100. URL: <https://www.justice.gov/jm/jm-9-28000-principles-federal-prosecution-business-organizations>

отклонении обвинений до начала судебного процесса.

Хотя базовый подход предполагает бинарную модель (идентичен – не идентичен), существуют и иные предложения: например, оценка степени идентичности, аналогично тому, как это делается в деликтном праве⁴¹. Такой подход обеспечит более гибкую и справедливую систему наказаний. Например, при частичном совпадении организационных структур возможно установление пропорциональной ответственности.

Некоторые критики утверждают, что модель идентичности может позволить корпорациям уйти от ответственности путём преднамеренного реформирования после совершения преступления. Однако эта критика преувеличена. Если реформирование будет поверхностным или частичным, то суд установит факт сохранения идентичности, и правопреемник будет нести ответственность. В то же время, добросовестная реформа, устраняющая глубинные организационные причины нарушения, должна быть вознаграждена снятием ответственности, поскольку она снижает вероятность повторения преступления⁴².

Еще одной альтернативной доктриной считается Доктрина *de facto merger* (де-факто слияния) – это юридическая концепция, согласно которой, даже если с формальной точки зрения сделка между двумя компаниями оформлена как покупка активов, она по существу рассматривается как слияние, если налицо определённые признаки. В таком случае компания-покупатель может унаследовать ответственность, включая уголовную, за действия компании-продавца.

Хотя доктрина де-факто слияния возникла в гражданском и корпоративном праве (в основном при рассмотрении дел о гражданской ответственности за вред), она влияет и на уголовно-правовую сферу.

Если суды признают, что имела место де-факто консолидация бизнеса, правопреемник может быть привлечён к уголовной ответственности, особенно в случае экономических и коррупционных преступлений.

Суды США обычно смотрят на следующие факторы: 1. Продолжение бизнеса (покупатель продолжает ту же деятельность, что и продавец); 2. Продолжение управления (ключевые управленцы и сотрудники остаются на местах); 3. Та же клиентская база, активы, бренд (всё или почти всё перешло покупателю); 4. *Передача обязательств* (покупатель, хотя формально не обязан, принимает на себя долги и обязательства продавца); 5. Прекращение существования продавца (продавец прекращает деятельность после сделки).

Одним из примеров использования доктрины стало дело *Shannon v. Samuel Langston Co.*, 379 F. Supp. 797 (W.D. Mich. 1974), когда суд постановил, что хотя сделка была оформлена как продажа активов, по существу она являлась слиянием, и покупатель унаследовал ответственность за причинённый вред.

Доктрина *de facto merger* основывается на фактическом продолжении бизнеса вне зависимости от целей реорганизации (доктрина *de facto merger* ориентирована на формальные признаки слияния компаний), тогда как доктрина преступной идентичности требует наличия у правопреемника унаследованных криминогенных признаков, способствовавших совершению преступления (доктрина преступной идентичности требует содержательной оценки: перенесена ли сама преступная сущность бизнеса).

⁴¹ Keith A. Ketterling, A Proposal for the Proper Use of Punitive Damages Against a Successor, 11 J. CORP. L. 765, 784 (1986).

⁴² Miriam H. Baer, *Too Vast to Succeed*, 114 MICH. L. REV. 1109, 1119 (2016); Sanchirico, *supra* note 86, at 1361.

Изучение зарубежного опыта нормативного определения порядка уголовной ответственности юридического лица после прекращения его деятельности (утраты правосубъектности) и практики применения этих норм представляет интерес для разработки соответствующих законов в уголовном законодательстве Армении.

Подобные решения позволяют избежать правовых лазеек, когда корпорации, используя ликвидацию или слияние, стремятся уйти от ответственности за правонарушения. Кроме того, они способствуют укреплению принципа неотвратимости наказания, в том числе в сфере корпоративной преступности.

Таким образом, анализ зарубежных моделей показывает целесообразность разработки нормативного механизма, обеспечивающего возможность привлечения к уголовной ответственности правопреемника или иного связанного субъекта после утраты первоначальным юридическим лицом статуса. При этом требуется четкое определение критериев правопреемства, а также процедурные гарантии для защиты прав всех участников процесса.

Основу таких подходов составляет признание принципа правопреемства в уголовно-правовом контексте, что позволяет сохранить правовую преемственность обязательств и санкций. Основой для внедрения института в уголовно-процессуальное законодательство также служит специфика природы уголовной ответственности юридических лиц: юридическое лицо не является субъектом уголовной ответственности в традиционном смысле этого понятия, а рассматривается как субъект, к которому могут быть применены меры уголовно-правового воздействия не за собственное совершение преступления, а за его причастность к преступной деятельности, при этом такие меры закрепляются в Уголовном кодексе Республики Армения.

Таким образом, этим закон устанавливает ответственность юридических лиц в широком её понимании, которым охватывается применение к юридическим лицам иных мер уголовно-правового характера⁴³.

Современное развитие уголовного права в ряде зарубежных юрисдикций демонстрирует устойчивую тенденцию к признанию правопреемства уголовной ответственности юридических лиц. Такая эволюция обусловлена необходимостью устранения правовых пробелов, которые позволяют организациям уходить от ответственности путём ликвидации, слияния или иного преобразования корпоративной структуры. Отказ от учета преемственности субъектов в подобных случаях фактически подрывает принцип неотвратимости наказания, дестимулирует добросовестное корпоративное поведение и создает угрозу системной безнаказанности в корпоративной сфере.

Европейский суд по правам человека (ЕСПЧ) и правоприменительная практика зарубежных стран признают допустимость уголовно-процессуального правопреемства при наличии юридической и фактической идентичности между прежним субъектом и правопреемником. При этом акцент делается на необходимости соблюдения процессуальных гарантий, установленных статьей 6 Европейской конвенции. Так, в решениях ЕСПЧ подчеркивается недопустимость использования реорганизации для ухода от ответственности, что подтверждает легитимность

⁴³ Б.В. Волженкиным, отмечал: «Целесообразно различать субъект преступления и субъект уголовной ответственности. Преступление как общественно опасное противоправное и виновное деяние может совершить только физическое лицо, обладающее сознанием и волей... А вот нести уголовную ответственность за такие деяния могут не только физические, но, при определенных условиях, и юридические лица. Следовательно, задача состоит в том, чтобы определить условия, при которых юридическое лицо будет нести уголовную ответственность за преступление, совершенное физическим лицом, и наряду с физическим лицом» (Волженкин Б.В., Уголовная ответственность юридических лиц. СПб, 1998, с. 25-26.)

концепции правопреемства как средства обеспечения справедливости и эффективности уголовного преследования.

ЗАКЛЮЧЕНИЕ

Учитывая общую направленность уголовной политики Республики Армения на укрепление правовых механизмов борьбы с экономическими и коррупционными преступлениями, внедрение института правопреемства уголовно ответственного юридического лица представляется оправданным. Его реализация позволит:

- устранить практику формального избегания ответственности через корпоративные преобразования;
- обеспечить преемственность санкций при реорганизации субъектов хозяйствования;
- расширить возможности государства по компенсации ущерба и изъятию преступных доходов;
- стимулировать профилактическую деятельность самих компаний через развитие внутреннего контроля и комплаенс-систем.

Таким образом, внедрение института правопреемства уголовной ответственности юридических лиц является не только допустимым, но и необходимым элементом современной уголовно-правовой системы, обеспечивающим баланс между формальной правосубъектностью и материальной справедливостью. Это соответствует как международным стандартам, так и внутренним задачам эффективной уголовной юстиции в условиях глобализации экономической преступности.

Однако при этом следует учитывать ряд существенных обстоятельств, имеющих правовое значение:

1. Цель реорганизации необходимо установить, не была ли реорганизация предпринята исключительно с целью уклонения от уголовной ответственности.
2. Участие виновных физических лиц важно определить, входят ли лица, совершившие преступное деяние, в состав участников нового юридического лица, а также какова их роль в его управлении.
3. Преемство имущества и выгоды анализируется, перешло ли новому субъекту имущество прежнего юридического лица и была ли извлечена выгода из совершенного уголовного правонарушения.
4. Осведомленность других участников реорганизации необходимо оценить, могли ли и должны ли были иные юридические лица, участвующие в процессе реорганизации, знать о преступной деятельности своего партнера по объединению.
5. Характер последующей хозяйственной деятельности следует исследовать, были ли в новом юридическом лице созданы условия, способствующие продолжению преступной деятельности теми же физическими лицами под новым формальным прикрытием.

Таким образом, правопреемство при реорганизации юридического лица не препятствует привлечению нового субъекта к уголовной ответственности, но требует комплексной правовой оценки описанных факторов.

В этой связи следует отметить имеющееся авторское предложение о содержании статьи «Уголовная ответственность юридического лица при его реорганизации или ликвидации», которой предлагается дополнить УК РА:

- «1. При реорганизации юридического лица, совершившего преступление,*

предусмотренное настоящим Кодексом, в форме слияния, присоединения, разделения, выделения, преобразования, к уголовной ответственности за совершенное преступление привлекается одно или несколько организаций-правопреемников реорганизованного юридического лица.

2. Правопреемник несёт уголовную ответственность за деяния реорганизованного юридического лица при наличии одного из следующих условий:

2.1. Если он унаследовал ключевые структурные, управленческие или функциональные признаки, способствовавшие совершению преступления (преступную идентичность);

2.2. Если ему было известно или он должен был знать о совершении преступления до завершения реорганизации;

2.3. Если реорганизация имела своей целью уклонение от уголовной ответственности.

3. Исполнение наказания или иных мер уголовно-правового характера возлагается решением суда в полном объеме или в части на одно или несколько организаций-правопреемников соразмерно доле приобретенного ими в результате правопреемства имущества и степени участия в продолжающейся деятельности.

4. При добровольной ликвидации организации, совершившей преступление, исполнение наказания или иных мер уголовно-правового характера решением суда может быть возложено в полном объеме или в части на физических или юридических лиц, к которым перешло имущество ликвидированной организации после удовлетворения всех требований кредиторов.

5. Исполнение наказания или иных мер уголовно-правового характера физическим или юридическим лицом, к которым перешло имущество ликвидируемой организации, осуществляется в случае, если ликвидация такой организации осуществляется с целью избежать исполнения наказания и иных мер уголовно-правового характера либо эти лица были осведомлены или должны были быть осведомлены о совершенном ликвидированной организацией преступлении» .

Предлагаем соответствующие положения взаимно связанного дополнения к Уголовно-процессуальному кодексу Республики Армения (УПК РА), который обеспечит реализацию положений статьи УК РА «Об уголовной ответственности юридического лица при его реорганизации или ликвидации».

«Статья X. Уголовное производство при реорганизации юридического лица

1. В случае реорганизации юридического лица, в отношении которого возбуждено уголовное дело либо ведётся предварительное расследование, уголовное производство может быть продолжено в отношении его правопреемника (одного или нескольких), если имеются основания полагать, что:

– правопреемник унаследовал ключевые структурные, управленческие или функциональные признаки, способствовавшие совершению преступления;

– правопреемнику было известно или он должен был знать о преступлении, совершенном реорганизованным юридическим лицом;

– реорганизация была направлена на уклонение от уголовной ответственности.

2. При рассмотрении вопроса о возбуждении уголовного дела или продолжении уголовного преследования в отношении правопреемника, следователь или прокурор обязан установить: структуру правопреемства; характер связи между действиями предшественника и структурой правопреемника; осведомленность правопреемника о

действиях предшественника.

3. В случае, если юридическое лицо ликвидировано до завершения расследования, уголовное производство может быть продолжено в отношении его правопреемника либо иного лица, получившего имущество ликвидированной организации, при условии, что имеются основания полагать: ликвидация была использована как средство для уклонения от уголовной ответственности.

4. Для установления оснований, предусмотренных частями 1 и 2 настоящей статьи, следователь обязан истребовать и проанализировать:

- документы, подтверждающие факт и форму реорганизации;
- информацию о составе имущества, распределённого в результате реорганизации;
- сведения о составе органов управления, структуре и функциональных связях до и после преобразования.

5. Постановление о продолжении уголовного преследования в отношении правопреемника выносится следователем со согласия прокурора либо непосредственно прокурором, подлежит мотивировке и может быть обжаловано в судебном порядке.»

Предлагаемая модель уголовно-правового правопреемства основывается на следующих положениях:

Материальный критерий преемственности – уголовная ответственность возможна только в случаях, когда правопреемник унаследовал ключевые структурные, управленческие или функциональные элементы (так называемая «преступная идентичность»);

Принцип добросовестности – ответственность исключается при наличии добросовестной реорганизации, направленной на реформу и устранение причин правонарушения;

Соразмерность ответственности – санкции могут быть распределены между несколькими правопреемниками в зависимости от объема переданного имущества;

Процессуальные гарантии – защита прав правопреемника обеспечивается через соблюдение принципов справедливого разбирательства, включая уведомление, право на защиту, судебный контроль.

Таким образом, предложенные проектные нормы направлены на достижение баланса между интересами уголовной политики и корпоративной реабилитации, предотвращая злоупотребления со стороны юридических лиц и обеспечивая реализацию принципа неотвратимости ответственности в условиях трансформации субъекта преступления.

Аннотация. Настоящая статья посвящена комплексному анализу проблемы процессуального правопреемства юридических лиц в уголовном судопроизводстве, особенно в контексте их реорганизации или ликвидации. В условиях отсутствия четкого регулирования этого института в УПК Республики Армения, автор рассматривает доктринальные подходы, правоприменительную практику и зарубежный опыт, включая позицию Европейского суда по правам человека и законодательство США, Испании, Румынии и других государств. Основное внимание уделено обоснованию возможности и необходимости внедрения в армянское уголовно-процессуальное законодательство института процессуального правопреемства юридического лица, включая обвиняемого, с учетом критериев юридической и фактической идентичности, а также добросовестности реорганизации. В статье предлагаются проектные нормы, обеспечивающие баланс между принципом индивидуальной уголовной ответственности и эффективностью уголовного преследования, что особенно актуально в борьбе с экономической и корпоративной преступностью.

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է իրավաբանական անձանց քրեադատավարական իրավահաջորդության խնդրի համապարփակ վերլուծությանը, մասնավորապես՝ դրանց վերակազմակերպման կամ լուծարման համատեքստում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում այս ինստիտուտի հստակ կարգավորման բացակայության պայմաններում հեղինակը քննության է առնում դոկտրինալ մոտեցումները, իրավապահ պրակտիկան և օտարերկրյա փորձը, ներառյալ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը և ԱՄՆ-ի, Իսպանիայի, Ռումինիայի և այլ արտասահմանյան երկրների օրենսդրությունը:

Հիմնական ուշադրությունը դարձվում է իրավաբանական անձի, այդ թվում՝ մեղադրյալի, դատավարական իրավահաջորդության ինստիտուտը ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունում ներմուծելու հնարավորության և անհրաժեշտության հիմնավորմանը՝ հաշվի առնելով իրավական և փաստացի նույնականության չափանիշները, ինչպես նաև վերակազմակերպման բարեխղճությունը: Հոդվածում առաջարկվում են նախագծային կանոնակարգումներ, որոնք ապահովում են անհատական քրեական պատասխանատվության սկզբունքի և քրեական հետապնդման արդյունավետության միջև հավասարակշռություն, ինչը հատկապես արդիական է տնտեսական և կորպորատիվ հանցագործությունների դեմ պայքարում:

Annotation. The article is devoted to a comprehensive analysis of the problem of procedural succession of legal entities in criminal proceedings, especially in the context of their reorganization or liquidation. In the absence of clear regulation of this institution in the Criminal Procedure Code of the Republic of Armenia, the author examines doctrinal approaches, law enforcement practice and foreign experience, including the position of the European Court of Human Rights and the legislation of the United States, Spain, Romania and other countries. The main attention is paid to the substantiation of the possibility and necessity of introducing the institution of procedural succession of a legal entity, including the accused, into the Armenian criminal procedure legislation, taking into account the criteria of legal and factual identity, as well as the good faith of the reorganization. The article proposes draft norms that ensure a balance between the principle of individual criminal liability and the effectiveness of criminal prosecution, which is especially important in the fight against economic and corporate crime.

Ключевые слова: уголовная ответственность юридических лиц, правопреемство в уголовном процессе, реорганизация юридических лиц, ликвидация юридического лица, процессуальное правопреемство, преступная идентичность.

Բանալի բաներ - իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն, իրավահաջորդություն քրեական դատավարությունում, իրավաբանական անձանց վերակազմակերպում, իրավաբանական անձի լուծարում, դատավարական իրավահաջորդություն, քրեական ինքնություն:

Keywords: criminal liability of legal entities, succession in criminal proceedings, reorganization of legal entities, liquidation of a legal entity, procedural succession, criminal identity.

Список использованной литературы

1. Баловнева В.И., О представителе юридического лица в уголовном процессе
2. Комаров И.М., Общие вопросы участия юридического лица в уголовном судопроизводстве // Правовые проблемы укрепления российской государственности: сб. статей. Томск, 2018, ч. 75, с. 13–19.
3. Власенко Н.А., Об аналогии в современном процессуальном праве // Рос. юстиция. 2005, No7, с. 32–36.
4. Даев В.Г., Современные проблемы гражданского иска в уголовном процессе. Ленинград: Изд-во ЛГУ, 1972, с. 13.

5. Зеленин С. Р., Когда учредитель ликвидированного юридического лица, признанного потерпевшим, может остаться в процессе // Уголовный процесс. 2011, No 7.
6. Кант И., Метафизика нравов. Пер. с нем. Мэри Грегор. — М.: Академический проект, 2000. (§ 49 E),
7. Кант И., Философия права. Метафизика нравов. Часть первая. Учение о праве. Пер. с нем. В. Хасте. — СПб.: Типография М. М. Стасюлевича, 1895, с. 196.
8. Кротова Л.Л., Правопреемство юридических лиц в уголовном процессе: опыт и перспективы // Уголовное право, 2012, № 3.
9. Крылова Ю.А., Проблемы правопреемства при реорганизации юридических лиц // Вестник Пермского университета. Юридические науки. 2009, Вып. 2, с. 103.
10. Лопашенко Н.А., Ответственность юридических лиц в уголовном праве России. – Волгоград: Изд-во Волгоградского государственного университета, 2003. – 264 с.
11. Мазалов А.Г., Гражданский иск в уголовном процессе. Изд. 2-е, испр. и доп. Москва: Юрид. лит., 1977, с. 15.
12. Мисник И.В., Участие потерпевших юридических лиц в уголовном судопроизводстве // Вестник Краснодарского ун-та МВД России. 2016. No 4 (34), с. 40–43.
13. Наумов А.В., Уголовное право: Общая часть. Курс лекций. – М.: Зерцало, 2005, с. 258–265.
14. Носов Д.В., Правопреемство: теоретико-правовое исследование: дис. ... канд. юрид. наук. М., 2011, с. 9.
15. Об уголовной ответственности юридических лиц в частично признанной Республике Косово см.: Федоров А.В. Косовский вариант уголовной ответственности юридических лиц // Российский следователь. 2018, № 10, с. 75-80.
16. Петрухин И.Л., Уголовная ответственность юридических лиц: за и против // Государство и право. – 2004, № 6, с. 67–74.
17. Прошляков А.Д., О неотчуждаемости статуса юридического лица – потерпевшего по уголовному делу. – Российский юридический журнал, 2009, No 5(65), с. 206–208.
18. Рогов Н.С., Участие юридических лиц в уголовном процессе в качестве потерпевшего // Евразийская адвокатура. 2016, No 4 (23).
19. Савицкий В.М., Уголовное право. Общая часть. – М.: Юрист, 2000, 496 с., Бородин С.В. Проблема правопреемства в уголовном судопроизводстве // Уголовное судопроизводство, 2018, № 4, с. 38–42.
20. Тарбагаев А.Н., Введение в уголовное право Нидерландов: основные институты Общей части: Учебное пособие. Красноярск, 2000, с. 30.
21. Федоров А.В., Уголовная ответственность юридических лиц по законодательству Республики Словения // Российский следователь. 2018, № 5, с. 75-80.
22. Федоров А.В., Уголовная ответственность юридических лиц по законодательству Словении и Хорватии // Вестник Московской академии Следственного комитета Российской Федерации. 2018, № 2, с. 13-23.
23. Шошин С.В., Рубцов Ф.С., Уголовная ответственность юридических лиц за экологические деликты: опыт иностранных государств // Правовые институты и методы охраны окружающей среды в России, странах СНГ и Европейского Союза: состояние и эффективность. Материалы III Международной научно-практической конференции / Отв. ред. Н.Т. Разгельдеев. Саратов, 2017, с. 135.
24. Юридический энциклопедический словарь / Гл. ред. А.Я. Сухарев. М. Советская энциклопедия. 1984. С. 279; Юридический энциклопедический словарь / Гл. ред. О.Е. Кутафин. М., 2002, с. 386.
25. Юрка Р., Курапка К., Интерпретация юридических знаний в качестве специальных знаний: диалектический подход // Криминалист первопечатный. 2017, No 15, с. 17; Законодательство и правоприменение по предмету Конвенции о криминальной ответственности за коррупцию в ЕС, СНГ и иных странах. Уголовная ответственность юридических лиц. Вильнюс, 2019, с. 56-57.

26. Chris William Sanchirico, Detection Avoidance, 81 N.Y.U. L. REV. 1331, 1361 (2006).
27. John H. Matheson, Successor Liability, 96 MINN. L. REV. 371, 381 (2011)
28. Keith A. Ketterling, A Proposal for the Proper Use of Punitive Damages Against a Successor, 11 J. CORP. L. 765, 784 (1986).
29. Ley Orgánica 5/2010, de 22 de junio, por la que se modifica la Ley Orgánica 10/1995, de 23 de noviembre, del Código Penal
30. Miriam H. Baer, Too Vast to Succeed, 114 MICH. L. REV. 1109, 1119 (2016); Sanchirico, supra note 86, at 1361.
31. Okla. Nat. Gas Co. v. Oklahoma, 273 U.S. 257, 259 (1927)
32. U.S. Department of Justice, Justice Manual, § 9-28.100. URL: <https://www.justice.gov/jm/jm-9-28000-principles-federal-prosecution-business-organizations>
33. Wallach v. Van Riswick, 92 U.S. 202, 208-09 (1875)

Բаяндурյան Օ. - Член палаты адвокатов РА, аспирант кафедры уголовного права и уголовно процессуального права Российско-Армянского университета, эл. почта: hovhannes.bayanduryan@rau.am.

Статья представлена в редакцию 15.07.2025 г., отправлена на рецензию 15.07.2025 г., рецензенты: профессор кафедры уголовного права и уголовно-процессуального права, д.ю.н., заслуженный профессор РАУ С. Цагикян, принята к публикации: 01.10.2025.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

<https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-127>

ՀԱՅԿՈՒՇ ՀԱՐՈՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ,
ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավորի օգնական*

HAYKUSH HAROYAN

*PhD Candidate at the Chair of Criminal Procedure and Criminalistics,
Faculty of Law, Yerevan State University,
Judicial assistant at the Anti-Corruption Court of the Republic of Armenia*

АЙКУШ АРОЯН

*Соискатель кафедры уголовного процесса и криминалистики юридического факультета Ереванского государственного университета,
Помощник судьи в Антикоррупционном суде РА*

**ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**THE CONDITIONS FOR APPLYING THE SPECIAL
PROCEDURE OF THE AGREEMENT PROCEDURE IN
CRIMINAL PROCEEDINGS OF THE REPUBLIC OF ARMENIA**

**УСЛОВИЯ ПРИМЕНЕНИЯ ПРОЦЕДУРЫ СОГЛАШЕНИЯ КАК ОСОБОГО
ПОРЯДКА СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА В УГОЛОВНОМ
СУДОПРОИЗВОДСТВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Ներածություն

Թեմայի արդիականությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ արդի ժամանակներում դատաքննության հատուկ ընթացակարգերը լայն քննարկման առարկա են դարձել իրավաբանների համար: Ընդ որում՝ այն պայմանավորված է մի կողմից՝ այդ ընթացակարգերի՝ օր օրի ավելի լայն կիրառություն ստանալու հանգամանքով, մյուս կողմից՝ այդ ինստիտուտները կարգավորող իրավական նորմերի և ընթացակարգերի՝ օրենքում առկա թերություններով և դրանց լուծման ուղիների փնտրման հանգամանքով, ինչը շատ կարևոր

տեսական և գործնական նշանակություն ունի դատաքննության նշված տեսակների զարգացման և արդյունավետության բարձրացման համար:

Սույն հոդվածում ներդրվել են այնպիսի գաղափարներ, որոնք մեր կարծիքով պետք է կյանքի կոչվեն, քանի որ դատաքննության ընթացակարգի պարզեցումը պետք է արվի այնպես, որ պարզեցման հետ մեկտեղ չկորչի ինքը՝ քրեական դատավարությունը:

Սույն աշխատանքում մեր առջև դրված խնդիր է պարզաբանել որոշ հիմնահարցեր, և նպատակ ենք հետապնդում այդ ճանապարհով որոշակի լուծումներ առաջարկել՝ նպաստելով իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը:

Հոդվածում քննարկվում են համաձայնեցման վարույթի հետ կապված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են համաձայնեցման վարույթի կիրառման պայմանները, կիրառման այլ պայմաններ նախատեսելը, ինչպես նաև այլ ընթացակարգային հարցեր:

Նշյալ հարցերի շրջանակն էլ կազմում է սույն աշխատանքի առարկան, որի մեթոդաբանական հիմքն են կազմում այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են անալիզը, սինթեզը, ինդուկցիան, դեդուկցիան, ձևական-տրամաբանականը:

Հիմնական հետազոտություն

Այսպես՝ սույն հոդվածում հարկ է անդրադառնալ պրակտիկայում վերջին ժամանակներում լայն կիրառում ստացած այն խնդրին, թե արդյո՞ք մի քանի մեղադրյալների վերաբերյալ քննվող քրեական վարույթի ընթացքում համաձայնեցման վարույթով դատաքննության հատուկ կարգ կիրառելու դեմ մեղադրյալներից մեկի առարկության դեպքում կարող է քրեական վարույթից մաս անջատվել և անջատված մասով կիրառվել համաձայնեցման վարույթ:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված է ինչպես քրեական վարույթները միացնելու, այնպես էլ դրանք անջատելու հնարավորություն:

Ընդ որում՝ քրեական վարույթի միացումը կամ անջատումը պայմանավորված է քրեական գործի փաստական կամ իրավական հանգամանքներով:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը սահմանում է, որ հնարավոր է քրեական վարույթից անջատել վարույթ, եթե դա թելադրված է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությամբ և չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա:

Վերը նշված նորմն ամրագրված է նույն օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն որի՝ մեկից ավելի անձանց կողմից մեկ կամ ավելի ենթադրյալ հանցանքներ կատարելու կապակցությամբ իրականացվող վարույթից կարող է անջատվել նոր վարույթ, եթե դա թելադրված է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությամբ և չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա:

Վերը նշված հոդվածի բովանդակությունից բխում է, որ դատական վարույթից նոր վարույթ անջատելիս նախատեսված են, ըստ էության, պարտադիր պայմաններ:

Այսպես՝ դատական վարույթից կարող է անջատվել նոր վարույթ, եթե՝

1. տվյալ վարույթն իրականացվում է մեկից ավելի անձանց կողմից մեկ կամ ավելի ենթադրյալ հանցանքներ կատարելու կապակցությամբ,
2. վարույթի անջատումը պայմանավորված է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությամբ,
3. վարույթի անջատումը չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա:

Անդրադառնալով արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտության թե-

լադրանքով նոր վարույթ անջատելու հանգամանքին՝ գտնում ենք, որ «արդարադատության շահ» եզրույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով բացահայտված չէ, սակայն այն, ըստ էության, ի թիվս այլնի, նշված հոդվածի իմաստով հիմնված է վարույթի քննության ողջամիտ ժամկետի և «դատավարական խնայողության» սկզբունքի վրա, որոնք էլ իրենց հերթին անձի արդար դատաքննության իրավունքի առանցքային բաղադրիչներից են և միտված են հնարավորինս սեղմ ժամկետում գործի քննությունն ապահովելուն և անձի իրավունքների ու օրինական շահերի առնչությամբ իրավական վեճը հանգուցալուծելուն և վերջնական դատական ակտ կայացնելուն:

Քրեական վարույթի քննության ողջամիտ ժամկետը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համատեքստում, ենթադրում է, որ դատաքննությունը պետք է ավարտվի ողջամիտ ժամկետում: Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է իր իրավասության սահմաններում դրսևորել պատշաճ ջանասիրություն՝ վարույթը ողջամիտ ժամկետում ավարտելու համար, իսկ ինչ վերաբերում է «դատավարական խնայողության» սկզբունքին, ապա այն ենթադրում է դատավարական միջոցների և ռեսուրսների ռացիոնալ օգտագործում, արդարադատության ավելի արագ և արդյունավետ իրականացում՝ նվազագույն ջանքերի գործադրմամբ:

Մեկնաբանելով անձի՝ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ի թիվս այլնի, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատարանն իրազեկ է այն դժվարություններին, որոնք ձգձգում են գործերի քննությունն ազգային դատարանների կողմից և որոնք պայմանավորված են բազմապիսի հանգամանքներով: Այնուամենայնիվ, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը պահանջում է, որ գործերը քննության առնվեն ողջամիտ ժամկետում. Եվրոպական կոնվենցիան ընդգծում է առանց այնպիսի ձգձգումների արդարադատություն իրականացնելու կարևորությունը, որոնք կարող են վարկաբեկել դրա արդյունավետությունն ու ճշմարտացիությունը,

- քրեական գործերով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակն է ապահովել, որ անձինք մեղադրված չլինեն չափազանց երկար, և որոշվի մեղադրանքի հիմնավորվածությունը,

- վարույթի տևողության ողջամտությունը որոշվում է գործի այն հանգամանքների լույսի ներքո, որոնք պահանջում են ընդհանուր գնահատում,

- որոշելիս, թե արդյո՞ք քրեական վարույթի տևողությունը ողջամիտ է եղել, թե ոչ, պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են գործի բարդությունը, դիմումատուի վարքագիծը, իրավասու մարմինների վարքագիծը, դիմումատուի համար ողջամիտ ժամկետի չափապանման հետևանքները:

Գործի բարդությունը կարող է բխել, օրինակ, մեղադրանքների թվից, վարույթում ներգրավված անձանց թվից, ինչպիսիք են մեղադրյալներն ու վկաները, կամ գործի միջազգային մասշտաբից: Չնայած նրան, որ գործը կարող է որոշակի բարդության լինել, չեն կարող չպարզաբանված անգործության երկար ժամանակահատվածները համարվել «ողջամիտ»: Դիմումատուի վարքագիծն օբյեկտիվ փաստ է համարվում, որը չի կարող վերագրվել Պատասխանող պետությանը, և որը պետք է հաշվի առնել՝ որոշելիս, թե արդյո՞ք վարույթի տևողությունը գերազանցում է ողջամիտ ժամկետը, թե ոչ:

Վերոգրյալ իրավադրույթների և մեջբերված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ գտնում ենք, որ ողջամիտ ժամկետում դատաքննության սկզբունքը մարդու հիմնարար իրավունքներից է: Ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի երաշխավորումն ապա-

հովում է հնարավորինս սեղմ ժամկետում գործի քննությունն ապահովելուն, ինչպես նաև սոցիալական արդարության վերականգնմանը, նպաստում հանցագործությունների կանխմանը և խափանմանը, հանցավոր ոտնձգություններին արդյունավետորեն հակազդելու պետության կարողությունների նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանը:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ ներպետական և միջազգային իրավական փաստաթղթերի համեմատական ուսումնասիրությունից հետևում է, որ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը կրող սուբյեկտների շրջանակը տարբեր է:

Մասնավորապես՝ եթե Եվրոպական կոնվենցիան որպես նշված իրավունքի կրող է համարում այն անձին, ում քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների կապակցությամբ առկա է վեճ, կամ նրան առաջադրված է մեղադրանք, ապա ՀՀ Սահմանադրությունը, «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը և ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, նշված իրավունքը կրող հատուկ սուբյեկտների շրջանակ չեն առանձնացնում:

Այլ կերպ՝ ներպետական օրենսդրությամբ ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք օգտվում է արդար դատաքննության, այդ թվում՝ ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունքից:

Այսպիսով՝ գործի քննության ողջամտությունը որոշելիս յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքների վերլուծությամբ հաշվի են առնվում գործի բարդությունը, շահագրգիռ անձի վարքագիծը, գործի տևական քննության հետևանքները շահագրգիռ անձի համար, գործը հնարավորինս սեղմ ժամկետում քննության առնելու նպատակով իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումները և դրանց արդյունավետությունը, գործի քննության ընդհանուր տևողությունը:

Գտնում ենք, որ գործը ողջամիտ ժամկետներում քննելու և լուծելու դատավարական հնարավորություններից մեկն էլ նոր վարույթ անջատելն է:

Պրակտիկայում քրեական վարույթից նոր վարույթ անջատելը վերջին ժամանակներում իրատեսական է համարվում՝ պայմանավորված նրանով, որ առկա է համաձայնեցման վարույթով դատաքննության հատուկ կարգ կիրառելու մեղադրյալի միջնորդությունը, սակայն նշված կարգը չի կարող կիրառվել, քանի որ մյուս մեղադրյալն առարկում է դրա դեմ:

Այդ իսկ պատճառով՝ դատարանները քրեական վարույթից անջատում են նոր վարույթ և կիրառում են համաձայնեցման վարույթով դատաքննության հատուկ կարգ:

Նման մոտեցումը, մեր կարծիքով, թեկուզև ունի իր դրական կողմերը, սակայն հակասում է նույն օրենսգրքի այն դրույթին, որը սահմանում է, որ համաձայնեցման վարույթ չի կարող կիրառվել, եթե մեղադրյալներից մեկն առարկում է դրա դեմ:

Կարծում ենք, որ թեև օրենսդիրը նախատեսել է դատաքննության հատուկ և ընդհանուր կարգեր, սակայն այն չի կարող կիրառվել այն աստիճան, որ հանգեցնի օրենքի տառացի մեկնաբանության:

Այսպես՝ գտնում ենք, որ թեպետև այն ունի իր դրական կողմերը, օրինակ՝ գործի քննությունը ողջամիտ ժամկետում ավարտելը, մեղադրյալի իրավունքներն իրացնելը, շահագրգիռ անձանց պաշտպանելը երկարատև անորոշ իրավական վիճակից, արդարադատության իրականացումն առանց ձգձգումների ապահովելը, և այլն, սակայն միաժամանակ, այն կիրառելը մեր կարծիքով օրենսդրության իմաստով իրավաչափ չէ, քանի որ նույն հատկանիշներով է բնութագրվում նաև համաձայնեցման վարույթի ինստիտուտը և դրանով իսկ արդեն սահմանում դատաքննության հատուկ կարգ կիրառելու արգելք:

Մեր դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ եթե քրեական վարույթ անջատելու և նոր քրեական վարույթով համաձայնեցման վարույթով դատաքննության հա-

տուկ կարգ կիրառելու արգելքը սահմանված չէ քրեական վարույթի միացումը կամ անջատումը սահմանող և կարգավորող իրավանորմերով, ապա այդպիսի պահանջ նախատեսված է համաձայնեցման վարույթի ինստիտուտը կարգավորող իրավանորմերով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ համաձայնեցման վարույթ չի կարող կիրառվել, եթե վարույթում ներգրավված մի քանի մեղադրյալից առնվազն մեկն առարկում է համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ:

Ինչպես ակնհայտորեն բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի պահանջներից՝ վարույթի անջատումը, որպես կանոն, պայմանավորված է արդարադատության շահով, և նշված նորմը կիրառելի է, եթե այն բացասաբար չի անդրադառնա վարույթի արդարացիության վրա:

Մինչդեռ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածը հստակորեն սահմանում է համաձայնեցման վարույթի կիրառումը բացառող հանգամանք, այն է՝ համաձայնեցման վարույթ չի կարող կիրառվել, եթե վարույթում ներգրավված անձանցից որևէ մեկն առարկում է համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ:

Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի պահանջն արդեն իսկ անհնարին է դարձնում անջատված քրեական վարույթով համաձայնեցման վարույթ կիրառելու հնարավորությունը:

Ասվածի հետ կապված՝ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի ապրիլի 24-ի թիվ ՍԴԱՌ-73 որոշմամբ, համաձայն որի՝ համաձայնեցման վարույթ կիրառելու մասով օրենսդրի կամքը հստակ է, այն է՝ վարույթում ներգրավված մի քանի մեղադրյալներից առնվազն մեկի առարկությունն ինքնին բացառում է համաձայնեցման վարույթ կիրառելու հնարավորությունը¹:

Ընդ որում՝ վերոգրյալ կանոնից որևէ բացառություն կամ դատավորի հայեցողություն օրենսդիրը չի նախատեսում:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված իմպերատիվ պահանջն ինքնին բացառում է դրա հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ընդհանուր կանոնի կիրառությունը:

Այսինքն՝ դատարանն իրավասու չէ վարույթն անջատել և անջատված վարույթով կիրառել համաձայնեցման վարույթ, քանի որ այն ուղղակիորեն հակասում է նույն օրենսգրքի 458-րդ հոդվածի պահանջներին:

Հակառակ դեպքում՝ ստացվում է այնպիսի իրավիճակ, երբ դեռ քրեական վարույթից մաս չանջատած՝ դատարանն արդեն իսկ կանխորոշում է գործի ելքը, ուստի մեր կարծիքով այն ազդում և վտանգում է վարույթի հետագա արդարացիությունը՝ դրանով իսկ վտանգելով դատարանի ներքին անկախությունը:

Այսինքն՝ օրենսդրությամբ ամրագրված նորմով սահմանված արգելքը հնարավոր չէ շրջանցել այլ ինստիտուտի կիրառումը գործադրելով:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը սահմանել հետևյալ ձևակերպմամբ՝ «8. Եթե համաձայնեցման վարույթով դատաքննության հարուկ կարգ կիրառելու հանգամանքով պայմանավորված՝ քրեական վարույթից անջարկվել է նոր վարույթ և միաժամանակ հա-

¹ Տես ՀՀ քրեական օրենսգրքը՝ ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին, ՀՕ-199-Ն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=204754>, (վերջին մուտքը՝ 01.05.2025 թ.):

մաճայնեցման վարույթ կիրառելու հարցը քննարկվում է անջատված վարույթով»:

Հարկ ենք համարում անդրադարձ կատարել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածով նախատեսված հետևյալ կարգավորմանը.

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1.2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքով անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից սույն օրենսգրքի 133-154-րդ, 188-րդ հոդվածներով, 196-րդ հոդվածի 2-րդ մասով, 308-րդ, 419-րդ, 420-րդ, 425-րդ հոդվածներով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 450-րդ, 522-րդ, 523-րդ հոդվածներով, 549-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 550-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հանցանքներ կատարելու, ինչպես նաև այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որի համար նախատեսված է նաև ցմահ ազատազրկում:

Ստացվում է, որ ՀՀ քրեական օրենսգիրքը, նախատեսելով գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու մեխանիզմները, սահմանել է նաև այն հանցանքների շարքը, որոնց դեպքում անձը չի կարող գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվել: Մասնավորապես, ի թիվս այլնի, այդպիսիք են համարվում խաղաղության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը, ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքով պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը և այլն²:

Այսինքն՝ նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքում առկա հանցանքները դասակարգվում են ըստ հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի, և հաշվի առնելով, որ դրանցով պայմանավորվում է նաև անձի հանրային վտանգավորության աստիճանը, քանի որ հանցանքի բնույթը փոխկապակցված է անձի վտանգավորության մակարդակի հետ՝ նույն օրենսգիրքը նախատեսում է որոշակի հանցանքներ, որոնց դեպքում գործուն զղջալու ինստիտուտը, ըստ էության, կորցնում է իր նպատակային նշանակությունը:

Նշված կանոնը, մեր կարծիքով, պետք է կիրառել նաև համաձայնեցման վարույթի պարագայում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը սահմանել հետևյալ ձևակերպմամբ՝ «9. Եթե անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ, 138-145-րդ, 148-րդ, 151-րդ, 153-րդ, 188-րդ հոդվածներով, 196-րդ հոդվածի 2-րդ մասով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 450-րդ, 522-րդ, 523-րդ հոդվածներով, 549-րդ հոդվածի 2-րդ մասով, 550-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հանցանքներ կատարելու համար»:

Եզրակացություն

Համաձայնեցման վարույթի ինստիտուտի գործող կառուցակարգերի և իրավանորմերի և տեսական գրականության ուսումնասիրության արդյունքում առաջարկում ենք՝

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը սահմանել հետևյալ ձևակերպմամբ՝ «8. Եթե համաձայնեցման վարույթով դատաքննության հատուկ կարգ կիրառելու հանգամանքով պայմանավորված՝ քրեական վարույթից անջատվել

² Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք՝ ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին, ՀՕ-199-Ն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=204754>, (վերջին մուտքը՝ 01.05.2025 թ.):

է նոր վարույթ և միաժամանակ համաձայնեցման վարույթ կիրառելու հարցը քննարկվում է անջատված վարույթով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը սահմանել հետևյալ ձևակերպմամբ՝ «9. Եթե անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ, 138-145-րդ, 148-րդ, 151-րդ, 153-րդ, 188-րդ հոդվածներով, 196-րդ հոդվածի 2-րդ մասով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 450-րդ, 522-րդ, 523-րդ հոդվածներով, 549-րդ հոդվածի 2-րդ մասով, 550-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հանցանքներ կատարելու համար»:

Ամփոփագիր: Հոդվածի նպատակն է վերլուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համաձայնեցման վարույթի՝ որպես դատաքննության հատուկ կարգի կիրառման պայմանները կարգավորող իրավական նորմերի հետ կապված մի շարք հարցեր: Աշխատանքի կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ դրանում վեր են հանվում և հետազոտվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 458-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված համաձայնեցման վարույթի՝ որպես դատաքննության հատուկ կարգի կիրառման պայմանները կարգավորող իրավանորմերի, կառուցակարգերի առկա թերությունները և խնդրահարույց հարցերը, ինչպես նաև կատարվում են եզրակացություններ և առաջարկություններ:

Այս առումով հոդվածն արդիական է, քանի որ տրվող եզրակացությունները և առաջարկությունները կարող են տեսական աղբյուր հանդիսանալ «Համաձայնեցման վարույթ» ինստիտուտի վերաբերյալ:

Հոդվածում քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են համաձայնեցման վարույթը բացառող այլ հանգամանքներ սահմանելը, մասնավորապես՝ կոնկրետ հանցատեսակների համար համաձայնեցման վարույթով դատաքննության հատուկ կարգ կիրառելու բացառություններ սահմանելը, քրեական վարույթից անջատված նոր վարույթով համաձայնեցման վարույթ կիրառելն արգելելը, և այլն:

Annotation. The aim of the article is to analyze a number of issues related to the legal norms regulating the conditions for applying the plea bargaining procedure as a special trial procedure, as provided by the Criminal Procedure Code of the Republic of Armenia.

The practical significance of the work lies in the fact that it identifies and examines the existing shortcomings and problematic aspects of the legal norms and mechanisms regulating the conditions for applying the plea bargaining procedure as a special trial procedure, as provided by part 2 of Article 458 of the Criminal Procedure Code of Armenia. The article also formulates relevant conclusions and proposals.

In this context, the article is relevant, as the conclusions and proposals made can serve as a theoretical source for further study of the “plea bargaining procedure” institution.

The article discusses issues such as the establishment of additional circumstances excluding the application of the plea bargaining procedure, in particular, determining exceptions for applying the special trial procedure to specific types of crimes, prohibiting the use of the plea bargaining procedure in new proceedings separated from the main criminal case, and other similar provisions.

Аннотация. Цель статьи — проанализировать ряд вопросов, связанных с правовыми нормами, регулируемыми условия применения процедуры соглашения как особого порядка судебного разбирательства, предусмотренной Уголовно-процессуальным кодексом Республики Армения.

Практическая значимость работы заключается в том, что в ней выявляются и исследуются существующие недостатки и проблемные аспекты правовых норм и механизмов, регулирующих условия применения процедуры соглашения как особого порядка судебного разбирательства, предусмотренные частью 2 статьи 458 УПК РА. Также формулируются соответствующие выводы и предложения.

В этом контексте статья является актуальной, поскольку сделанные в ней выводы и предложения могут

служить теоретическим источником для дальнейшего изучения института «процедуры соглашения».

В статье рассматриваются такие вопросы, как установление дополнительных обстоятельств, исключающих применение процедуры соглашения, в частности, определение исключений для применения особого порядка судебного разбирательства по конкретным видам преступлений, запрет на применение процедуры соглашения в рамках нового производства, выделенного из основного уголовного дела, и другие подобные положения.

Բանալի բառեր – դատաքննության հատուկ կարգ, համաձայնեցման վարույթ, գործուն զղջալ, ողջամիտ ժամկետ, վարույթի անջատում, հանցարեսակ:

Keywords: *special procedure of trial or special trial procedure, plea bargaining procedure, active remorse, reasonable time or reasonable timeframe, severance of proceedings or separation of the case, type of crime or category of offense.*

Ключевые слова: *особый порядок судебного разбирательства, процедура соглашения, активное раскаяние, разумный срок, выделение производства, вид преступления.*

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք՝ ընդունված 2021 թվականի հունիսի 30-ին, ՀՕ-306-Ն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=205057> (վերջին մուտք՝ 01.05.2025 թ.)
2. ՀՀ քրեական օրենսգիրք՝ ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին, ՀՕ-199-Ն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=204754>, (վերջին մուտքը՝ 01.05.2025 թ.)
3. ՀՀ Սահմանադրական դատարանի 2024 թվականի ապրիլի 26-ի որոշում, https://concourt.am/decision/decisions/662f8aaf6980e_sdav-73.pdf, (վերջին մուտք՝ 01.05.2025 թ.)

Հարոյան Հ. – ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավորի օգնական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ, էլիասցե՝ haykush.a.haroyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 11.05.2025 թ., տրվել է գրախոսության 11.05.2025 թ., երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ենգիբարյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2025 թ.:

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ/CRIMINALISTICS/КРИМИНАЛИСТИКА

<https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-135>

ՍՈՒՐԵՆ ԲԱԴԻՆՅԱՆ
*ԵՊՀ քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի հայրորդ*

SUREN BAGHINYAN
*PhD student of the Criminal Procedure and
Criminalistics Department of Yerevan State University*

СУРЕН БАГИНЯН
*Соискатель кафедры уголовного
процесса и криминалистики ЕГУ*

**ՊԵՏԱԿԱՆ ԴՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱՎՈՐ ՄԵԽԱՆԻԶՄԻ
ՏԻՊԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ**

TYPOLOGIES OF CRIMINAL MECHANISMS IN TREASON

**ТИПОВЫЕ МОДЕЛИ ПРЕСТУПНОГО МЕХАНИЗМА
ГОСУДАРСТВЕННОЙ ИЗМЕНЫ**

Ներածություն

Ընդհանուր առմամբ հանցագործությունների բնութագիրն իրենից ներկայացնում է գիտության այնպիսի ճյուղերի տվյալների ընդհանրություն, ինչպիսիք են քրեական իրավունքը, կրիմինոլոգիան, սոցիոլոգիան և այլն: Դրա ամբողջական նկարագիրը կազմվում է ոչ միայն կրիմինալիստիկական տվյալների ընդհանրացման, այլ նաև գիտության նշված ճյուղերի տվյալների համատեղման միջոցով: Ուստի ցանկացած հանցագործության կրիմինալիստիկական բնութագիրն ամբողջական ներկայացնելու համար նախևառաջ անհրաժեշտ է բացահայտել դրա դրսևորման կրիմինալիստիկական մեխանիզմը, դրա կառուցվածքն ու տարրերը:

Այս իմաստով հարկ է նկատի ունենալ, որ հանցագործության կրիմինալիստիկական մեխանիզմը հասկացությունը նույնական չէ դրա քրեաիրավական բնութագրի հետ: Ի տարբերություն քրեական իրավունքում և կրիմինոլոգիայում տվյալ հասկացության մեկնաբանության, երբ հանցավոր դեպքի մեխանիզմը սահմանափակվում է միայն հակաիրավական գործողություններով (վարքագծով), որը կազմում է հանցագործության օբյեկտիվ կողմը, կրիմինալիստիկայում այն առավել լայն մեկնաբանություն ունի, ընդգրկում է ավելի լայն տարրեր, քան դրա քրեաիրավական բնութագիրը:

Ավելին, որոշ գիտնականներ էլ հանցագործությունների քննության գիտական մեթոդիկաների ձևավորման համար առաջարկում են օգտագործել հանցավոր իրադարձության տիպային մոդելները: Մասնավորապես Ա. Մ. Կուստովը այդ տեսակետը հիմնավորում է նրանով, որ չնայած հանցագործության կրիմինալիստիկական բնութագրի և հանցագործության մեխանիզմի միջև առկա են որոշակի նմանություններ, այնուամենայնիվ դրանք նույնական չեն, քանի որ հանցագործության կրիմինալիստիկական բնութագիրը հանցագործության մեխանիզմի օրինաչափությունները չի դիտարկում որպես դինամիկ համակարգ, դրանում ընդգրկված չեն հանցակիցների, տուժողի և հանցագործության մյուս մասնակիցների միջև առկա հարաբերությունների դինամիկային վերաբերող տվյալները¹:

Համանման կարծիք են արտահայտել նաև Ն. Վ. Մատուշկինան և Վ. Գ. Նայմուշինը՝ նշելով, որ ի տարբերություն հանցագործության կրիմինալիստիկական բնութագրի, որը հատվածաբար է արտահայտում հանցավոր գործունեության առանձին կողմերը, հանցագործության կրիմինալիստիկական մոդելն իրենից ներկայացնում է հանցագործության առաջացման և զարգացման համակարգային արտահայտություն, որը հնարավորություն է տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել այդ գործունեության և դրա զարգացման մասին²:

Անշուշտ, հանցագործության մեխանիզմի շարժընթացը գործի քննության համար կրիմինալիստիկական և դատավարական մեծ նշանակություն ունի, սակայն հանցագործության կրիմինալիստիկական բնութագիրը հանցագործությունների քննության մեթոդիկայի համար առանցքային ու անփոխարինելի դեր ունի:

Հանցավոր մեխանիզմի մոդելների տիպականացումը թույլ է տալիս բացահայտել այնպիսի օրինաչափություններ, որոնք բնորոշ են ինչպես դրա դրսևորմանը, այնպես էլ՝ դրա քննությանը: Այլ կերպ՝ տիպային յուրաքանչյուր մոդելին բնորոշ է դրա քննության որոշակի ծրագիր, գործողությունների հստակ ալգորիթմ, որոնք պայմանավորում են դրանց արդյունավետ ու կազմակերպված քննությունը:

Հիմնական հետազոտություն

Որոշ գիտնականների կարծիքով՝ «հանցագործության մեխանիզմ» հասկացության մեջ կարող են ներառվել միայն հանցակազմի առանձին տարրեր: Այսպես, Ի. Ա. Վոզգրինը նշված հասկացության սահմանման մեջ առանձնացնում է միայն հանցանքի կատարման եղանակը, հանցագործի և տուժողին բնութագրող առանձնահատկությունները³:

Այսպես, Գ. Մ. Մերեթուկովը հանցագործության մեխանիզմը սահմանում է որպես սուբյեկտի հանցավոր գործունեության կրիմինալիստիկական նշանակություն ունեցող տարրերի կայուն, դինամիկ և փոխկապակցված համակարգ, որոնք պայմանավորում են կրիմինալիստիկական նշանակություն ունեցող տեղեկատվության առաջացումը և հնարավորություն են տալիս քննիչին բացահայտելու երևույթի բնույթն ու էությունը⁴:

¹ S՜նս Կустов А. М., Криминалистическая или социально-правовая характеристика преступлений как ориентир в борьбе с преступностью// Роль и значение деятельности Р. С. Белкина в становлении современной криминалистики: Материалы международной научной конференции. М., 2002, էջ 12:

² S՜նս Матушкина Н. В., Криминалистическая модель преступной деятельности по уклонению от уплаты налогов и ее использование в целях выявления и раскрытия преступлений этого вида: Дисс... канд. юрид. наук. Ижевск, 1999, էջ 9; Наймушин В. Г., Криминалистическая модель преступной деятельности в сфере наркобизнеса и ее использование в деятельности по выявлению и раскрытию преступлений: Автореф. дисс ... канд. юрид. наук. Ижевск, 1999, էջ 12:

³ S՜նս Возгрин И. А., Общие положения методики расследования отдельных видов преступлений. Л., 1976, էջ 43:

⁴ S՜նս Меретуков Г. М., Криминалистические проблемы борьбы с наркобизнесом организованных преступных групп. М., 1995, էջ 19:

Եթե հանցագործությունը դիտարկենք իբրև կրիմինալիստիկական գիտական և գործնական ուսումնասիրության մեկ ամբողջական հասկացություն, ապա այն իրենից ներկայացնում է ոչ միայն ոտնձգության առարկայի միջոցով հանցագործի և նրան շրջապատող միջավայրի փոխազդեցություն, այլև հանցագործության այս կամ այն գործիքի միջոցով տուժողի փոխազդեցություն՝ հանցագործի և միջավայրի վրա: Միաժամանակ առկա է նաև տուժողի միջոցով հանցագործի և միջավայրի վրա հանցավոր դեպքի այլ մասնակիցների փոխազդեցությունը: Փոխազդեցության այս բոլոր տեսակները շրջակա միջավայրում առաջացնում են նյութական փոփոխություններ, իսկ հանցավոր դեպքի մասնակիցների գիտակցության մեջ՝ մտավոր հետևանքներ, որոնք կարևոր նշանակություն ունեն քրեական գործով ճշմարտության բացահայտման համար: Նշված տարրերը ներառվում են նյութերի գոյության բոլոր մակարդակներում՝ ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, հոգեֆիզիկական և սոցիալական:

Անշուշտ, հանցանքի կատարման ժամանակ տեղի են ունենում անձանց, օբյեկտների ու երևույթների տարաբնույթ փոխազդեցություններ, որոնց հետևանքով ի հայտ են գալիս ապացուցողական և այլ տեղեկատվական աղբյուրներ: Այդ փոխազդեցությունների ճնշող մեծամասնությունը ունենում է բավականին բարդ կառուցվածք:

Կարելի է ասել, որ հանցագործության մեխանիզմն իրենից ներկայացնում է փոխազդեցությունների հաջորդական շարք, որի արդյունքում առաջանում են հետք-արտացոլանքներ, որոնք կրիմինալիստիկական կարևոր նշանակություն ունեցող տեղեկատվություն են պարունակում բուն հանցագործության և դրա մասնակիցների վերաբերյալ: Յուրաքանչյուր առանձին փոխգործողություն իր մեջ այլ փոխգործողության ընթացքի առկայություն է ենթադրում կամ հանդիսանում է վերջինի ձևավորողը, որի արդյունքում ամբողջ համակարգը կայուն և դինամիկ բնույթ է ստանում:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ հանցագործության մեխանիզմի ներքո կարելի է հասկանալ հանցագործության մասնակիցների, ինչպես նաև նրանց և նյութական աշխարհի միջև ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի փոխազդեցության համակարգը, որն ուղեկցվում է համապատասխան գործիքների, միջոցների և իրադրության առանձին տարրերի օգտագործմամբ: Հանցագործության մեխանիզմն օրինաչափորեն ապահովում է հանցագործության, դրա մասնակիցների և հետևանքների վերաբերյալ կրիմինալիստիկական կարևոր նշանակություն ունեցող տեղեկատվության գոյացումը⁵:

Հատկանշական է, որ հանցագործության տիպային մոդելներն առանձնացվում են՝ հիմք ընդունելով հանցագործության մեխանիզմի կառուցվածքի տարրերը: Նույնը վերաբերում է պետական դավաճանության դրսևորման հանցավոր մեխանիզմի տիպային մոդելներին, որոնք հնարավորություն են տալիս բացահայտել այս տեսակ հանցագործությունների քննության հնարավոր քննչական իրադրություններն ու օրինաչափությունները:

Ընդ որում, հարկ է նշել, որ ինչպես ցանկացած տեսակի հանցագործության, այնպես էլ պետական դավաճանության դրսևորման հանցավոր մեխանիզմի տիպերի առանձնացման համար հիմք կարող են ընդունվել ոչ թե հանցագործության մեխանիզմի ոչ թե բոլոր, առանձին տարրեր:

Հանցագործության մեխանիզմի հիմնական տարրեր կարելի է համարել.

- հանցագործության սուբյեկտի (հանցագործի, հանցավոր խմբի, նախնական համաձայնությամբ հանցավոր խմբի, կազմակերպված հանցավոր խմբի) գործունեությունը (առա-

⁵ Ենգիբարյան Վ. Գ., Հանցագործությունների քննության մեթոդիկա, Կրիմինալիստիկական մեթոդիկա, Բուհական դասագիրք, Երևան, Թասկ ՍՊԸ, 2017, էջ 30:

վել հազվադեպ՝ առանձին գործողություններն ու վարքագիծը),

- տուժողի գործողությունների և այլ վարքագծի համակարգը (համակցությունը),
- հանցանքի կատարման հետ անուղղակի կապված անձանց գործողությունները և այլ վարքագծի համակարգը (համակցությունը),
- հանցագործության մասնակիցների կողմից օգտագործվող՝ հանցավոր իրադրության առանձին տարրերը, հանցավոր ոտնձգության առարկան:

Հանցագործության մեխանիզմի նշված բաղադրիչները գտնվում են անընդհատ շարժման և զարգացման գործընթացում, որոնց վերաբերյալ տվյալները կարելի է օգտագործել որոշակի հանցագործության քննության և բացահայտման նպատակներով:

Սակայն հարկ է նշել, որ հանցագործության մեխանիզմի կառուցվածքի վերաբերյալ նույնպես մասնագիտական գրականության մեջ միասնական մոտեցում առկա չէ:

Այսպես, Վ. Վ. Կլոչկովը և Վ. Ա. Օբրազցովն ընդգծել են հանցագործության մեխանիզմի փոխազդող (փոխկապակցված) հետևյալ բաղադրիչները.

- ա) հանցանք կատարող անձը (հանցագործը),
- բ) հանցագործի վարքագիծը,
- գ) շրջակա միջավայրի տարրերը⁶:

Զ. Ի. Կիրսանովն ավելի համակարգված է ներկայացնում հանցագործության մեխանիզմի տարրերը: Նրա կարծիքով, դրանցից հիմնականները համարվում են. նպատակաուղղված վարքագծով (գործողություններով) հանցավոր ոտնձգությունն իրականացնող անձը (անձինք), հանցանքի կատարման եղանակը (նախապատրաստում, կատարում և քողարկում), տուժողը, նրա վարքագիծը, հանցավոր ոտնձգության առարկան, հանցագործության գործիքները, միջոցները և հանցավոր նպատակներով օգտագործվող այլ առարկաները (օրինակ՝ հանցագործության գործիքներ պատրաստելու համար նախատեսված գործիքները), հանցագործությանն անուղղակիորեն առնչվող անձինք (օրինակ՝ հանցագործության գործիքների և միջոցների ձեռքբերմանը կամ քողարկմանն առանց դիտավորության օգնություն ցուցաբերած անձինք), նյութական պայմանները (միջավայր), որում նախապատրաստվել, կատարվել է հանցանքը, կամ միջոցներ են ձեռնարկվել դրա քողարկման համար⁷:

Ռ. Ս. Բելկինը հանցագործության մեխանիզմի տարրերից առանձնացրել է հանցագործության սուբյեկտին, հանցագործության սուբյեկտի վերաբերմունքն իր գործողությունների, դրանց հետևանքների և հանցակիցների նկատմամբ, ոտնձգության առարկան, հանցագործության կատարման եղանակը, հանցագործության հետևանքը, հանցագործության հանգամանքները (տեղը, ժամանակը և այլն), դեպքի ականա մասնակիցների վարքագիծն ու գործողությունները, հանցավոր գործունեությանը նպաստող կամ խոչընդոտող հանգամանքները, գործողությունների (հանցանքի կատարման եղանակի) և հանցագործության հետևանքի, դեպքի մասնակիցների և այլնի միջև առկա կապերն ու փոխհարաբերությունը⁸:

Սակայն հարկ է նկատի ունենալ, որ հանցագործության մեխանիզմը զուտ մեղավոր անձի՝ շրջակա միջավայրի նկատմամբ իր գործողությունների և վարքագծի փոխազդեցության ընթացքը չէ: Այս առումով ուշագրավ է, որ Ռ. Ս. Բելկինը, Զ. Ի. Կիրսանովը, Վ. Յա. Կոլդինը, Յու. Գ. Կորոլսովը և այլ հեղինակներ հանցագործության մեխանիզմի կառուցված-

⁶ Տե՛ս *Образцов В. А.*, Проблемы раскрытия преступлений против здоровья населения, связанных с пищевыми отравлениями: Автореф. дисс.... канд. юр. наук. М., 1976, էջեր 47-48:

⁷ Տե՛ս *Кирсанов З. И.*, Криминалистические учения о механизме преступления и его отражении. Лекция. М., 1994, էջ 4:

⁸ Տե՛ս *Белкин Р. С.*, Общая теория советской криминалистики. Саратов 1986, էջ 41:

քում ներառում են *հանցավոր իրադրությունը*: Կրիմինալիստիկայի գիտության մեջ իրադրություն ասելով՝ հասկացվում է անձանց, առարկաների, երևույթների, որևէ գործունեություն կատարելու համար նպաստավոր այլ գործոնների որոշակի համակցություն: Մասնավորապես հանցավոր իրադրությունը բաղկացած է տարբեր նյութական օբյեկտների, երևույթների, գործընթացների, վիճակի և հարաբերությունների համակցությունից, որոնք համապատասխան պայմաններ են ստեղծում որոշակի գործողությունների կատարման համար կամ խոչընդոտում են դրանց կատարումը: Բոլոր այս գործողությունները կատարվում են որոշակի պայմաններում՝ նյութական պայմաններ, ժամանակ, լուսավորություն, բնական կլիմայական գործոններ, արտադրական գործունեություն, կենցաղ, շրջապատող անձինք⁹:

Հանցագործության մեխանիզմի կառուցվածքում հանցավոր իրադրության տարրերը կարող են էական նշանակություն ունենալ: Վերջիններն ունակ են էական ազդեցություն գործել հանցավորի գործողությունների և վարքագծի վրա, ընդհուպ՝ հանցագործության բնույթի փոփոխության վրա: Հնարավոր է նաև իրադրության ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը հանցագործի գիտակցության վրա: Ընդհանուր առմամբ հանցավոր իրադրությունը բնութագրում է այն պայմանները, որոնցում գործել են հանցագործության բոլոր մասնակիցները:

Հանցագործը հանցանքի կատարմանը և քղարկմանն ուղղված գործողություններում կամ տուժողը հանցագործին հակազդելուն ուղղված գործողություններում հաճախ նպատակին հասնելու համար հանցավոր իրադրության տարրեր են օգտագործում: Օրինակ՝ հանցագործը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի օրենքով սահմանված կարգով ստանա պետական գաղտնիքին առնչվելու թույլտվություն՝ հետազայում դրանց տիրանալու և պատվիրատուին փոխանցելու նպատակով, համացանցի կամ սոցիալական հարթակների միջոցով կապ է հաստատում և վստահություն ձեռքբերում իրեն հետաքրքրող տեղեկությունների կամ փաստաթղթերի տիրապետող անձի կամ անձանց մոտ՝ հետազայում իր հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու նպատակով և այլն:

Կարծում ենք, որ հանցագործության կատարման իրադրությունը միանգամայն լայն ու բազմաշերտ է, ուստի հանցագործության մեխանիզմի կառուցվածքում նպատակահարմար չէ այն որպես այդպիսին ընդգրկել, առավել ևս՝ հանցավոր մեխանիզմի տիպականացման նպատակով:

Այս տեսանկյունից համակարծիք ենք պրոֆեսոր Վ. Գ. Ենգիբարյանի արտահայտած այն տեսակետին, որ ոչ թե իրադրությունը՝ ընդհանուր առմամբ, այլ հանցագործության ուղղակի կամ անուղղակի մասնակիցների կողմից օգտագործված դրա առանձին տարրերը կարող են մտնել հանցագործության մեխանիզմի կառուցվածքի մեջ¹⁰:

Ընդ որում, պետական դավաճանության կատարման եղանակի առանձնահատուկ բնույթով պայմանավորված՝ վերջինիս դրսևորման մեխանիզմին առավել բնորոշ է հանցավոր իրադրության տարրերը, հատկապես հանցավոր մտադրության իրականացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու տեսանկյունից: Հատկանշական է, որ պետական դավաճանության պարագայում այն կարող է ընդգրկել նաև հանցավոր մտադրությունը անձի մոտ գեներացնելու փուլից մինչև դրա ավարտը:

Վերոգրյալը հիմք ընդունելով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ-ում վերջին տարիներին բացահայտված պետական դավաճանության դեպքերը, կարող ենք առանձնացնել պետա-

⁹ Տե՛ս Криминалистика: Учеб. для вузов / Под ред. Р. С. Белкина, 2-е издание, переработанное и дополненное. М., Изд. «Норма», 2006, էջ 503:

¹⁰ Ենգիբարյան Վ. Գ., Հանցագործությունների քննության մեթոդիկա, Կրիմինալիստիկական մեթոդիկա, Բուհական դասագիրք, Երևան, Թասկ ՍՊԸ, 2017, էջ 36:

կան դատավաճառության մեխանիզմի տիպային մոդելներ, որոնք իրենց բովանդակությամբ ու գործնական բնույթով պայմանավորված՝ նպատակաուղղված են դրանց քննության օրինաչափությունների բացահայտմանը, դրանց պլանաչափ կազմակերպմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Ըստ այդմ՝ պետական դավաճանության մեխանիզմի տիպային մոդելները նպատակահարմար է առանձնացնել՝ հիմք ընդունելով հանցավոր մեխանիզմի կառուցվածքի հետևյալ տարրերը.

1. *պետական դավաճանությունը կատարող սուբյեկտը,*
2. *պետական դավաճանությունը կատարող սուբյեկտի վարքագիծը,*
3. *պետական դավաճանությունը կատարման իրադրությունը կամ դրա կատարման համար պայմանների ստեղծումը:*

Այսպիսով, վերջին տարիներին բացահայտված պետական դավաճանության դեպքերի, ինչպես նաև քննչական պրակտիկայի վերլուծության արդյունքում կարող ենք առանձնացնել պետական դավաճանության կրիմինալիստիկական մեխանիզմի հետևյալ տիպային մոդելները:

Տիպային մոդել № 1. Պետական դավաճանությունը կատարվում է պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ անմիջականորեն առնչություն ունեցող անձի կողմից:

Տվյալ դեպքում հանցագործությունը կատարող սուբյեկտը զբաղեցրած պաշտոնի, դիրքի կամ ծառայության բնույթից ելնելով՝ օրենքով սահմանված կարգով իրավունք ունի առնչվելու պետական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ: Ընդ որում, նշանակություն չունի զբաղեցրած պաշտոնի, դիրքի աստիճանը, բավական է, որպեսզի տվյալ անձը «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ունենա պետական գաղտնիքի հետ առնչվելու համապատասխան աստիճանի թույլտվություն:

Այսպես, բացահայտված պետական դավաճանության մի դեպքով ՀՀ ազգային անվտանգության ծառայության հակահետախուզության դեպարտամենտի կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական արդյունավետ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ քաղաքացին, հանդիսանալով զինծառայող, ծառայության բերումով տիրապետել է պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների:

Նկարագրված պայմաններում վերջինս «ok.ru» սոցիալական ցանցի միջոցով ծանոթանալով օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցչի հետ, հավաքագրվել է նրա կողմից, որից հետո նամակագրության միջոցով նրան է հանձնել պետական և ծառայողական գաղտնիք կազմող, ռազմական բնույթի տեղեկություն հանդիսացող՝ զորամասի նշանակության, դրա կազմում ընդգրկված ստորաբաժանումների տեսակի, իրենց ստորաբաժանման պահպանության ներքո գտնվող մարտական դիրքի տեղակայման վայրի, մարտական դիրքերի կահավորվածության, մարտական հերթապահություն իրականացնելու հետ կապված այլ տվյալներ, ինչպես նաև զորամասի հրամանատարական կազմի անհատական և ծառայողական տվյալները, լուսանկարել և ուղարկել է զորամասի շինությունները, մարտական դիրքերը, վաշտի անվանական ժամանակը, մարտական դիրքի կրակային քարտը, զինվորական գրքույկը՝ այդ կերպ լրտեսության եղանակով կատարելով պետական դավաճանություն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության և արտաքին անվտանգության, որոնց դիմաց որպես վարձատրություն բանկային փոխանցումների միջոցով ստացել է գումարներ¹¹:

¹¹ Մանրամասն տե՛ս <https://www.sns.am/hy/news/view/719>

Ուշագրավ է նաև պետական դավաճանության մեկ այլ դեպք, երբ անձը հանդիսացել է պետական գաղտնիք կազմող տեղեկությունների տիրապետողը:

Մասնավորապես, ՀՀ ազգային անվտանգության ծառայության ռազմական հակահետախուզության դեպարտամենտի կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական արդյունավետ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ քաղաքացին, հանդիսանալով զինծառայող, ծառայության բերումով տիրապետել է ուսումնական կենտրոն հանդիսացող N զորամասի հրամանատարական կազմի, սպառազինության, ռազմական տեխնիկայի և զինծառայողների թվաքանակի, ինչպես նաև ՀՀ ՊՆ որոշ ստորաբաժանումների տեղակայման վայրերի վերաբերյալ տեղեկությունների:

Նկարագրված պայմաններում վերջինս «ok.ru» սոցիալական ցանցի միջոցով ծանոթանալով օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցչի հետ, հավաքագրվել է նրա կողմից, որից հետո 2.000.000 ՀՀ դրամ վարձատրություն ստանալու խոստման դիմաց նկարելու և «Վոթսափ» հավելվածով ուղարկելու, ինչպես նաև նույն հավելվածով պարբերաբար տեսազանգեր կատարելու ու հաղորդագրություններ ուղարկելու միջոցով հավաքել և օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցչին է փոխանցել իրենց զորամասի շենքերի և շինությունների, սպառազինության, ռազմական զրահատեխնիկաների, մարտական ու տրանսպորտային մեքենաների քանակի և տեսակների, ուսումնական կենտրոնում զորավարժություններ իրականացնող հետախուզական և այլ ստորաբաժանումների քանակի ու սպառազինության, անցկացվող պարապմունքների նպատակների վերաբերյալ տվյալներ, լուսանկարներ¹²:

Տիպային մոդել № 2. Պետական դավաճանությունը կատարվում է պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ անմիջականորեն առնչություն չունեցող անձի կողմից:

Ի տարբերություն նախորդ մոդելի, տվյալ դեպքում պետական դավաճանություն կատարող անձը թեև չունի օրենքով սահմանված կարգով պետական գաղտնիքի հետ առնչվելու թույլտվություն, այնուամենայնիվ միջնորդվորված կերպով, տարբեր եղանակներով հասանելիություն է ձեռք բերում այդպիսի տվյալների:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կողմից ձեռք են բերվել բավարար տվյալներ այն մասին, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացի Մ.Ս.-ն, 2015 թ. ընթացքում արտագնա աշխատանքի նպատակով գտնվելով Թուրքիայի Հանրապետության Ստամբուլ քաղաքում, հայտնվելով այդ երկրում գործունեություն ծավալած ադրբեջանական հետախուզական ծառայությունների տեսադաշտում և հավաքագրվելով վերջիններիս աշխատակիցների կողմից, Հայաստան վերադառնալուց հետո՝ 2019 թ. ընթացքում առաջարկ է ստացել գումարի դիմաց Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության արտաքին անվտանգության, զինված ուժերի, սպառազինությունների մասին տեղեկություններ ձեռք բերելու կամ արդեն իսկ իրեն հասանելի դարձած տեղեկատվությունը փոխանցելու վերաբերյալ, այդ թվում՝ բանակի անձնակազմի, զենքի, զինամթերքի, զինտեխնիկայի քանակի և տեսակի, զորամասերի և դրանց հրամանատարական կազմի, պաշտպանական շրջանների, ինժեներական կառույցների, սարքավորումների, իսկ վերջին շրջանում՝ նաև մարդկային կորուստների և այլնի վերաբերյալ, որն ընդունելով՝ լրտեսության եղանակով իրականացրել է տրված առաջադրանքները և դրա դիմաց որպես վարձատրություն ստացել տարբեր չափերի գումարներ, այդ կերպ՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության անվտանգության:

¹² Մանրամասն տե՛ս <https://www.sns.am/hy/news/view/717>

տանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության և արտաքին անվտանգության, թշնամական գործունեություն իրականացնելու համար օտարերկրյա հատուկ ծառայություններին ցուցաբերել է օգնություն:

Ընդ որում, որոշակի առաջադրանքներ կատարելու համար Մ.Ս.-ն, շարունակելով իր հանցավոր մտադրության իրականացումը, կրկնակի բժշկական հետազոտության միջոցով վերացրել է զինվորական ծառայությանը խոչընդոտող սահմանափակումները, միջոցներ է ձեռնարկել ծառայության անցնելու ՀՀ զինված ուժերում՝ այդ եղանակով կրկին տեղեկություններ հավաքագրելու և թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ պետությանը փոխանցելու նպատակով, ինչը սակայն նրան չի հաջողվել, քանի որ պատկան մարմինների կողմից մերժվել է նրան աշխատանքի ընդունելու դիմումը:¹³

Տիպային մոդել N° 3. Պեպական դավաճանությունը կատարվում է զինվորական ծառայության մեջ գտնվող անձի կողմից, սակայն այն չի դրսևորվում որպես թշնամու կողմն անցելը:

Տիպային այս մոդելի առանձնահատկությունը հատուկ սուբյեկտի ծառայության կամ աշխատանքի բնույթով պայմանավորված պետական դավաճանությունն ընդգրկող ոլորտն է, այն է՝ զինված ուժերը, ՀՀ պաշտպանությունն ու անվտանգությունը:

Մասնավորապես.

ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում լրտեսության և պետական դավաճանության հատկանիշներով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում ՀՀ ԱԱԾ ռազմական հակահետախուզության և մարզային ստորաբաժանումների աշխատակիցների, ինչպես նաև քննչական խմբում ընդգրկված քննիչների կատարած քննչական գործողությունների և զուգահեռ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում անհերքելի ապացույցներ են ձեռք բերվել առ այն, որ օտարերկրյա հատուկ ծառայությունների աշխատակիցները Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծել են գործակալական ցանց, որի կազմում ներգրավվել են զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում ծառայող անձանց:

Ընդ որում, իրենց գործունեությունն անխոչընդոտ իրականացնելու և բացահայտվելու ռիսկերը նվազեցնելու նպատակով լրտեսական գործունեություն իրականացրած անձինք սոցիալական ցանցերում ստեղծել են իգական սեռի ներկայացուցիչների տվյալներով բացված կեղծ անհատական էջեր՝ հայուհիների տվյալներով և լուսանկարներով: Դրանից հետո հայերեն լեզվին ազատորեն տիրապետող օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցիչները ծանոթություններ են հաստատել ՀՀ զինված ուժերում տարբեր պաշտոններ զբաղեցնող անձանց հետ՝ հնարավորություն ունենալով համացանցային ծանոթությունները վերածել մտերիմ հարաբերությունների, իսկ այնուհետ նաև՝ առաջարկել գումարի դիմաց համագործակցել իրենց հետ և տրամադրել ռազմական բնագավառին վերաբերող տեղեկություններ, մասնավորապես՝ ՀՀ զինված ուժերի տարբեր զորամասերի տեղակայման վայրերի, անձնակազմի, զենքի, զինամթերքի, զինտեխնիկայի քանակի և տեսակի, զորամասերի և դրանց հրամանատարական կազմի, պաշտպանական շրջանների, ինժեներական կառույցների, սարքավորումների և այլնի վերաբերյալ:

Նշված եղանակով լրտեսական գործունեություն իրականացրած անձինք գործակալական ցանցում ներգրավվել են շուրջ երկու տասնյակ ՀՀ քաղաքացիների, որոնք ՀՀ զինված ուժերում զբաղեցրել են տարբեր պաշտոններ և ի պաշտոնե հնարավորություն են ունեցել առնչվելու պետական ու ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների և փաստաթղթերի հետ:

¹³ Մանրամասն տես <https://www.sns.am/hy/news/view/497>

Հիշյալ զինճառայողները տվել են իրենց համաձայնությունը և գումարի դիմաց բջջային տարբեր հավելվածների միջոցով օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցիչներին մաս-մաս փոխանցել են ճառայության բերումով իրենց հասանելի դարձած կամ օտարերկրյա հատուկ ծառայության ներկայացուցիչների պահանջով հավաքած ռազմական կամ այլ բնույթի տեղեկությունները՝ ի փասս Հայաստանի Հանրապետության կատարել դավաճանական գործողություններ¹⁴:

Ներկայացնենք այս տիպային մոդելի մեկ այլ դրսևորում. Այսպես,

ՀՀ ազգային անվտանգության ծառայության ռազմական հակահետախուզության դեպարտամենտի ճառայողների մշակած և ձեռնարկած ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ քաղաքացի, ՊՆ N զորամասի կոչումով կապիտան սպան 2021 թվականի սկզբից հայտնվել է օտարերկրյա հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում և հավաքագրվել նրանց կողմից:

Այնուհետև, ծառայության նշանակվելով ՀՀ ՊՆ մեկ այլ զորամասում՝ որպես զորամասի ծառայություններից մեկի պետ, ծառայության ընթացքում օտարերկրյա հատուկ ծառայություններից հաղորդագրությունների միջոցով ստանալով համագործակցությունը շարունակելու վերաբերյալ առաջարկություն և ընդունելով այն, պարտավորվել է վարձատրության դիմաց հավաքել և օտարերկրյա հատուկ ծառայություններին հանձնել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, տարածքային անձեռնմխելիությանը և արտաքին անվտանգությանն ի փասս օգտագործելու համար ռազմական բնագավառի պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ, որպիսի պայմաններում իր հանցավոր գործունեությունն իրագործելով՝ 2021 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում հավաքել և իր կողմից օգտագործվող տարբեր բջջային հավելվածների միջոցով օտարերկրյա հատուկ ծառայության ներկայացուցիչն է հանձնել պետական և ծառայողական գաղտնիք կազմող ռազմական բնագավառի տեղեկություններ, մասնավորապես՝ իրենց ստորաբաժանման պահպանության ներքո գտնվող սպառազինության, զինատեսակների, քանակի, մարտական դիրքի տեղակայման վայրի վերաբերյալ տեղեկություններ և այլ տվյալներ՝ լուսանկարներով ցուցադրել է սպառազինությունը և զինատեսակների քանակը, այդ թվում՝ Հնդկաստանից ձեռք բերված ռազմական տեխնիկայի վերաբերյալ, որոնց դիմաց որպես վարձատրություն՝ օտարերկրյա հատուկ ծառայության ներկայացուցիչ 2 անգամ տարբեր օրերի ընթացքում ստացել է գումար և բջջային հեռախոս՝ այդ կերպ կատարելով պետական դավաճանություն՝ ի փասս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության և արտաքին անվտանգության:

Տիպային մոդել N° 4. Պետական դավաճանությունը կատարվում է օտարերկրյա պետության հատուկ ծառայությունների կամ միջազգային կազմակերպության կամ դրանց ներկայացուցիչ հետ պարբերաբար հաղորդակցվելով փարբեր եղանակներով:

Ընդ որում, տվյալ դեպքում նշանակություն չունի է վերջիններս հաղորդակցվում են անմիջականորեն՝ առանց միջնորդի, թե միջնորդավորված

Հատկանշական է, որ անկախ հաղորդակցության ընտրված ձևից՝ այն որպես կանոն կրում է պարբերաբար բնույթ: Ընդ որում, հանդիպումները որպես կանոն տեղի են ունենում երկրի տարածքից դուրս:

Այսպես.

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում հարուցված և քննվող քրեական գործի նախաքննությամբ իրականացված

¹⁴ Մանրամասն տե՛ս <https://www.sns.am/hy/news/view/679>

քննչական ու այլ դատավարական գործողությունների և դրանց զուգահեռ հակահետախուզության դեպարտամենտի ծառայողների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական համալիր միջոցառումների արդյունքում ձեռք են բերվել բավարար փաստական տվյալներ այն մասին, որ «Անբասիր ծառայության համար», «Մարտական գործողություններին մասնակցելու համար» մեղալներով, կրծքանշաններով, պատվոգրերով, կառավարական պարգևով պարգևատրված նախկին զինվորականը, իր հետ ընկերական հարաբերությունների մեջ գտնվող և Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող մեկ այլ անձի հետ, աշխատանք փնտրելու պատրվակով մեկնել են Թուրքիայի Հանրապետություն և այնտեղ հայտնվել Ադրբեջանի հատուկ ծառայությունների տեսադաշտում՝ նրանցից ընդունելով նյութական օգուտներ ստանալու դիմաց հավաքագրվելու և ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության և արտաքին անվտանգության գործելու առաջարկը:

Այդ պահից սկսած՝ վերը նշված անձինք, միավորվելով պետական դավաճանություն կատարելու միևնույն նպատակի շուրջ, միմյանց միջև ձևավորել են կայուն կապ, անխախտ, փոխադարձ համաձայնություն, երկարատև և մանրակրկիտ կերպով նախապատրաստել են հանցագործության կատարումը, կատարել դերերի, ակնկալվող եկամուտների բաշխում, պլանավորել հանցագործության քողարկման եղանակները, կապի միջոցները, փոխանցման ենթակա տեղեկատվության ծավալը, նշանակությունը՝ ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից ստանալով համապատասխան հրահանգավորումներ և ցուցումներ:

Կատարված նախապատրաստական գործողություններից հետո Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայության աշխատակիցների ուղեկցությամբ հիշյալ անձինք Թուրքիայից մեկնել են մեկ այլ երկիր՝ այնտեղ Ադրբեջանի հատուկ ծառայությունների բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ հանդիպելու, բանավոր կերպով ձեռք բերված համաձայնությունը փաստաթղթավորելու և կոնկրետ հանձնարարականներ ստանալու համար:

Երրորդ երկրում գտնվող Ադրբեջանի դեսպանատան տարածքում հիշյալ անձինք ստորագրել են հավաքագրման համաձայնագրեր՝ առ այն, որ տալիս են իրենց ստորագրություններն ու համաձայնությունը թշնամու կողմն անցնելու և ի վնաս Հայաստանի Հանրապետության գործելու վերաբերյալ, որից հետո հատուկ ծառայությունների աշխատակիցներից ստացել են համապատասխան ծածկանուններ և կանխավճարների տեսքով գումարներ:

Հնարավորինս գաղտնի գործելու և քողարկված եղանակով օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ կապ հաստատելու նպատակով, կազմակերպված խմբի անդամները հատուկ ծառայությունների աշխատակիցներին տվել են իրենց կողմից օգտագործվող թուրքական հեռախոսահամարները և դրանցով գրանցված ինտերնետային հավելվածների նույնականացման վերաբերյալ տեղեկությունները:

Այնուհետև, հիշյալ անձինք պարբերաբար կապ են պահպանել Ադրբեջանի հատուկ ծառայությունների աշխատակիցների հետ, նրանցից ստացել կոնկրետ հանձնարարականներ և ցուցումներ, որոնց շրջանակում լուսանկարել և տեսանկարահանել են ՀՀ ՊՆ զորամասերը, այնտեղ տեղակայված զինտեխնիկան, պարզել զորամասի զինծառայողների քանակը, զորամասի հրամանատարական կազմի անձնական տվյալները, ուսումնական գումարտակների, ինչպես նաև Հայաստանի և Արցախի Հանրապետությունների հակաօդային պաշտպանության համակարգերի տեղակայումները, հատուկ և կարևորագույն օբյեկտների շրջակայքում տեղակայված հակաօդային պաշտպանության միջոցների առկայության վերաբերյալ տվյալները, լուսանկարել և տեսանկարահանել են նաև պետական և ռազմավարական նշանակություն ունեցող հատուկ և կարևորագույն օբյեկտները՝ ջրամբարները, հիդրոէլեկտրակայանները, ստրատեգիական բարձունքները, պատերազմական գործողությունների ժամանակ

պատասպարվելու համար նախատեսված ապաստարանները, զորքերի, զինտեխնիկայի քանակն ու տեղաշարժը, որոնք բջջային հավելվածներով ուղարկել են ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցներին՝ այդ ընթացքում ակտիվացնելով ինտերնետ հասանելիությունը և այդ կերպ հնարավորություն տալով տեղորոշելու հատուկ պահպանվող օբյեկտների տեղակայումների հստակ կոորդինատները¹⁵:

Մեկ այլ դեպքում քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված անձը, գտնվելով Վրաստանի Հանրապետության տարածքում, հայտնվել է այդ երկրում գործունեություն ծավալած ադրբեջանական հետախուզական ծառայությունների տեսադաշտում և հավաքագրվելով այդ հետախուզական ծառայությունների աշխատակիցների կողմից՝ ստացել է կոնկրետ առաջադրանքներ՝ Արցախի և Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության, զինված ուժերի, սպառազինությունների մասին տեղեկություններ ձեռք բերելու կամ ծառայության բերումով արդեն իսկ իրեն հասանելի դարձած տեղեկատվությունը փոխանցելու վերաբերյալ, այդ թվում՝ բանակի անձնակազմի, զենքի, զինամթերքի, զինտեխնիկայի քանակի և տեսակի, զորամասերի և դրանց հրամանատարական կազմի, պաշտպանական շրջանների, ինժեներական կառույցների և սարքավորումների և այլնի վերաբերյալ՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության՝ կատարել լրտեսություն:

Դրանից հետո, հիշյալ անձը ձեռնամուխ է եղել այդպիսի տեղեկություններ հավաքելուն, մասնավորապես՝ երկար տարիներ ծառայության մեջ գտնվելով ՀՀ զինված ուժերում, ի պաշտոնն ունենալով պետական և ծառայողական գաղտնիքներին առնչվելու թույլտվություն, կրելով դրանց արտահոսքի համար պատասխանատվություն և գիտակցելով, որ այդ տեղեկությունների արտահոսքի դեպքում վնաս կպատճառի երկրի անվտանգությանը, հավաքել և իր մոտ է պահել մարտական տեխնիկայի, սպառազինության, այդ թվում՝ տանկերի, մարտկոցների, ուժեղացման միջոցների, առաջնահերթ խոցվող օբյեկտների, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայող, պահեստազորում հաշվառված անձանց և այլնի վերաբերյալ ծառայողական և պետական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև, օգտագործելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և Արցախի սպայական անձնակազմի շրջանում իր ունեցած հարաբերությունները, պարբերաբար հանդիպումներ է ունեցել վերջինների հետ և հետաքրքրություններ ցուցաբերել ստորաբաժանումների կողմից իրականացվող կոնկրետ գործողությունների և այլնի վերաբերյալ, հավաքել տվյալներ, որից հետո՝ պարբերաբար Հայաստանի Հանրապետությունից մեկնել է Վրաստանի Հանրապետություն և ինչպես Ադրբեջանի դեսպանատան տարածքում, այնպես էլ դրանից դուրս հանդիպումներ և բազմաթիվ հեռախոսազրույցներ է ունեցել ադրբեջանական հետախուզական ծառայությունների աշխատակիցների հետ և նրանց մաս-մաս հանձնել կամ հայտնել է իրեն հայտնի դարձած և իր կողմից հավաքագրված պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները, ինչպես նաև թշնամական գործունեություն իրականացնելու համար ցուցաբերել է այլ օգնություն՝ կատարելով թշնամական երկրի հետախուզական ծառայությունների առաջադրանքները՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության և արտաքին անվտանգության՝ այդ ամբողջ ընթացքում փորձելով հնարավորինս գաղտնի պահել իր անձը, հետախուզական ծառայությունների հետ ունեցած կոնտակտային հեռախոսահամարները¹⁶:

Տիպային մոդել № 5. Պետական դավաճանությունը կարարող անձը հանցանքը կարա-

¹⁵ Մանրաման տե՛ս <https://www.sns.am/hy/news/view/602>

¹⁶ Մանրամասն տե՛ս <https://www.sns.am/hy/news/view/460>

րելու համար օտարերկրյա պետության հատուկ ծառայությունների կամ միջազգային կազմակերպության կամ դրանց ներկայացուցչի կողմից ստանում է վարձարություն տարբեր եղանակներով:

Հատկանշական է, որ պետական դավաճանություն կատարող սուբյեկտը՝ որպես խրախուսում կարող է ակնկալել նյութական շահ, դրամային, գույքային և այլ տեսքով: Սակայն հնարավոր են դեպքեր, երբ վերջինս պարզապես հանցավոր արարքն իրականացնի առանց նյութական շահ ստանալու, դառնալ սպառնալիքի, խաբեության զոհ: Ընդ որում, վերջինս հատկապես դրսևորվում է համացանցի միջոցով ծանոթություն հաստատելու դեպքերում, երբ վերջինիս վստահությունը ձեռքբերելով՝ հատուկ ծառայության աշխատակիցները, որոնք ներկայանում են հակառակ սեռի ներկայացուցիչներ, ունենում են ինտիմ խոսակցություններ, կորզում են այդ բնույթի լուսանկարներ ու տեսանյութեր, ապա դրանց հրապարակման սպառնալիքի ներքո պահանջում են կատարել գործողություններ, հավաքել տեղեկություններ և այլն, որոնք նախատեսված են պետական դավաճանության հանցակազմով:

Այսպես, ՀՀ ԱԱԾ ռազմական հակահետախուզության և քննչական դեպարտամենտների աշխատակիցների ձեռնարկած ծավալուն օպերատիվ-հետախուզական ու համակցված քրեադատավարական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ քաղաքացին, ով հանդիսացել է զինծառայող, կոչումով սպա, հավաքագրվել է օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից, տվել է իր գրավոր համաձայնությունն այդ կապակցությամբ և ստացել է համապատասխան ծածկանուն՝ պարտավորվելով հատուկ ծառայությունների առաջադրանքով հավաքել, նրանց հանձնել պետական ու ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ, որից հետո օտարերկրյա հատուկ ծառայությունների առաջադրանքով հավաքել ու ընդհանուր 1.400 ԱՄՆ դոլար վարձատրության դիմաց վերջիններիս է հանձնել արտերկրում ռազմական ակադեմիան ավարտած համակուրսեցիների, ծառայության N զորամասի հրամանատարական կազմի, հրթիռահրետանային վարչության ղեկավար անձնակազմի, «էքսպո-ռազմական» ցուցահանդեսին մեկնած սպայական կազմի կենսորոշիչ տվյալները, բջջային հեռախոսահամարները՝ տրամադրելով նաև իր ծառայության N զորամասի N դիվիզիոնի զինծառայողների հաստիքացուցակը, ինչպես նաև նույն զորամասում առկա հրթիռային համակարգի թվաքանակի, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված 44-օրյա պատերազմի ընթացքում զինտեխնիկայի կորստի, հրթիռահրետանային համազարկերի գտնվելու վայրերի, զորավարժության վայրերի, կիրառված զինտեխնիկայի, զորավարժությանը մասնակից ղեկավար սպայական կազմի վերաբերյալ տվյալներ:

Բացի դրանից՝ նույն զինծառայողը, 44-օրյա պատերազմի ժամանակ, զբաղեցնելով հրթիռային N համակարգի մարտկոցի հրամանատարի տեղակալի պաշտոնը, մարտական առաջադրանք կատարելիս արդյունավետ և նպատակային խոցումներ չի կատարել, տևական ժամանակ միջոցներ չի ձեռնարկել հրթիռ արձակող զինտեխնիկան քողարկելու ուղղությամբ, որի հետևանքով հակառակորդի կողմից թիրախավորվել և անօդաչու թռչող սարքի միջոցով խոցվել է այն՝ հանգեցնելով զինտեխնիկայի անվերադարձ կորստի:

Միաժամանակ պարզվել է, որ հիշյալ զինծառայողը պատերազմի ավարտից հետո շարունակել է համագործակցությունն օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում վարձատրության դիմաց տրամադրել է նաև ներմուծված սպառազինության և զինտեխնիկայի քանակի ու տեսակի վերաբերյալ տվյալներ:

Պարզվել է նաև, որ նույն զինծառայողը, ունենալով գաղտնիության թույլտվության համապատասխան աստիճան, 8.000 ԱՄՆ դոլար վարձատրության դիմաց փոխանցելու նպատակով հավաքել է N զորամասի գաղտնի դրոշմագրով մարտական քարտեզներ, սակայն բա-

ցահայտվել է ՀՀ ԱԱԾ-ի կողմից՝ չկարողանալով իր հանցավոր գործունեությունն ավարտին հասցնել¹⁷:

Եզրակացություն

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ պետական դավաճանության հանցավոր մեխանիզմին, թեև բնորոշ է դրա կատարման կոնսպիրատիվ բնույթը, այնուամենայնիվ դրա դրսևորման մոդելների տիպային առանձնացումը հնարավորություն է տալիս բացահայտելու այնպիսի օրինաչափություններ, որոնք նպաստում են այս տեսակ քրեական վարույթներով ապացուցման գործընթացի պլանաչափ ու կազմակերպված իրականացմանը:

Պետական դավաճանության հանցավոր մեխանիզմների մոդելների տիպականացումը, բացի վերը նշված գործնական նպատակներից, ունի նաև այլ նշանակություն. այն նպաստում է դրանց կատարմանն ուղղված պատճառների և պայմանների բացահայտմանը, ռիսկերի գնահատմանը, ինչպես նաև արդյունավետ կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը՝ ապահովելով նման դեպքերի կանխում և նախականիտում:

Ամփոփագիր: Հեղինակը, վերլուծելով կրիմինալիստիկական գրականության տարբեր աղբյուրներ ու քննչական պրակտիկայի վերջին տարիների զարգացումները, բացահայտել է պետական դավաճանության դրսևորման մեխանիզմի տիպային մոդելները և հիմնավորել դրանց գործնական նշանակությունը քննության արդյունավետության բարձրացման համար:

Հանցագործության կրիմինալիստիկական բնութագիրը ամբողջականորեն ներկայացնելու համար անհրաժեշտ է նախ բացահայտել դրա դրսևորման մեխանիզմը, նրա կառուցվածքն ու տարրերը: Կրիմինալիստիկայում «հանցագործության մեխանիզմ» հասկացությունը ավելի լայն է, քան քրեաիրավական բնութագիրը. այն ընդգրկում է ոչ միայն հակաիրավական գործողությունները, այլև դրանց զարգացման դինամիկան, հանցագործության մասնակիցների փոխհարաբերությունները և գործընթացի ամբողջական համակարգային պատկերը:

Հանցագործության մեխանիզմն իրենից ներկայացնում է փոխազդեցությունների հաջորդական շարք, որի արդյունքում առաջանում են հետք-արտացոլանքներ, որոնք կրիմինալիստիկական կարևոր նշանակություն ունեցող տեղեկատվություն են պարունակում բուն հանցագործության և դրա մասնակիցների վերաբերյալ: Յուրաքանչյուր առանձին փոխգործողություն իր մեջ այլ փոխգործողության ընթացքի առկայություն է ենթադրում կամ հանդիսանում է վերջինի ձևավորողը, որի արդյունքում ամբողջ համակարգը կայուն և դինամիկ բնույթ է ստանում:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ հանցագործության մեխանիզմի ներքո կարելի է հասկանալ հանցագործության մասնակիցների, ինչպես նաև նրանց և նյութական աշխարհի միջև ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի փոխազդեցության համակարգը, որն ուղեկցվում է համապատասխան գործիքների, միջոցների և իրադրության առանձին տարրերի օգտագործմամբ:

Գիտական մոտեցումներում առաջարկվում է կիրառել հանցավոր իրադարձության տիպային մոդելներ, որոնք ապահովում են քննության ավելի ամբողջական ու համակարգային պատկեր: Տեսարանները նշում են, որ քրեաիրավական բնութագիրը միայն մասնակիորեն է արտացոլում հանցավոր գործունեության կողմերը, մինչդեռ մոդելավորումը թույլ է տալիս բացահայտել զարգացման օրինաչափություններն ու կառուցել քննության համակարգային մեթոդաբանություն:

Հատկանշական է, որ հանցագործության տիպային մոդելներն առանձնացվում են՝ հիմք ընդունելով հանցագործության մեխանիզմի կառուցվածքի տարրերը: Նույնը վերաբերում է պետական դավաճանության

¹⁷ Մանրամասն տե՛ս <https://www.sns.am/hy/news/view/690>

դրսևորման հանցավոր մեխանիզմի տիպային մոդելներին, որոնք հնարավորություն են տալիս բացահայտել այս տեսակ հանցագործությունների քննության հնարավոր քննչական իրադրություններն ու օրինաչափությունները:

Այսպիսով, պետական դավաճանության մեխանիզմի մոդելների տիպականացումը հնարավորություն է տալիս մշակել քննության հստակ ծրագիր և գործողությունների ալգորիթմ, ինչն էլ ապահովում է քննության արդյունավետությունը և կազմակերպվածությունը:

Annotation. The author, analyzing various sources of criminalistics literature and recent developments in investigative practice, has identified the typical models of the mechanism of treason and substantiated their practical significance for increasing the effectiveness of investigations.

To fully present the criminalistic characteristics of a crime, it is first necessary to reveal the mechanism of its manifestation, its structure, and its elements. In criminalistics, the concept of a “crime mechanism” is broader than its criminal-legal definition. It includes not only the illegal actions but also the dynamics of their development, the relationships among the crime participants, and a complete systemic picture of the process.

The crime mechanism is a sequence of interactions that result in the creation of trace reflections, which contain information of significant criminalistic value about the crime itself and its participants. Each individual interaction implies the presence of another interaction’s course or is a formative element of the latter, as a result of which the entire system acquires a stable and dynamic nature.

Based on the above, the crime mechanism can be understood as a system of both direct and indirect interactions between the crime participants, as well as between them and the material world, which is accompanied by the use of corresponding tools, means, and individual elements of the situation.

Scientific approaches propose using typical models of a criminal event, which provide a more complete and systemic picture of the investigation. Theorists note that a criminal-legal characteristic only partially reflects the aspects of criminal activity, while modeling allows for revealing developmental regularities and building a systemic methodology for the investigation.

It is notable that typical models of a crime are distinguished based on the elements of the crime mechanism’s structure. The same applies to the typical models of the criminal mechanism of treason, which make it possible to reveal the possible investigative situations and regularities in the investigation of this type of crime.

Thus, the typification of the models of the treason mechanism makes it possible to develop a clear plan of investigation and an algorithm of actions, which in turn ensures the effectiveness and organization of the investigation.

Аннотация. Автор данной статьи, анализируя различные источники криминалистической литературы и развития следственной практики последних лет, выявил типовые модели механизма проявления государственной измены и обосновал их практическое значение для повышения эффективности расследования.

Чтобы представить полную криминалистическую характеристику преступления, необходимо сначала раскрыть механизм его проявления, его структуру и элементы. В криминалистике понятие «механизм преступления» шире, чем уголовно-правовая характеристика: оно охватывает не только противоправные действия, но и динамику их развития, взаимоотношения участников преступления и полную системную картину процесса.

Механизм преступления представляет собой последовательность взаимодействий, в результате которых возникают следы-отражения, содержащие важную с криминалистической точки зрения информацию о самом преступлении и его участниках. Каждое отдельное взаимодействие предполагает наличие в себе другого процесса взаимодействия или является тем процессом, который формирует последний, в результате чего вся система приобретает устойчивый и динамичный характер.

Исходя из вышеизложенного, под механизмом преступления можно понимать совокупность как прямого,

так и косвенного взаимодействия между участниками преступления, а также между ними и материальным имуществом, которое сопровождается использованием соответствующих инструментов, средств и отдельных элементов обстановки.

Научный подход предлагает использовать типовые модели преступного события, которые обеспечивают более полную и системную картину расследования. Теоретики отмечают, что уголовно-правовая характеристика лишь частично отражает аспекты преступной деятельности, в то время как моделирование позволяет выявить закономерности развития и построить системную методологию расследования.

Примечательно, что типовые модели преступности выделяются на основе элементов структуры механизма преступности. То же самое относится и к типичным моделям преступного механизма проявления государственной измены, которые позволяют выявить возможные следственные ситуации и закономерности расследования преступлений такого рода.

Таким образом, типизация моделей механизма государственной измены позволяет разработать четкую программу расследования и алгоритм действий, что обеспечивает эффективность и организованность расследования преступления.

Բանալի բառեր - պեղական դավաճանություն, քրեական վարույթ, նախաքննություն, կրիմինալիստիկա, պեղական գաղտնիք, մեխանիզմ, տիպային մոդել:

Keywords: treason, criminal proceedings, preliminary investigation, criminalistics, state secret, mechanism, typical model.

Ключевые слова: государственная измена, уголовное производство, предварительное следствие, криминализм, государственная тайна, механизм, типовая модель.

Օգտագործված գրականության ցանկ

1. Ենգիբարյան Վ. Գ., Հանցագործությունների քննության մեթոդիկա, Կրիմինալիստիկական մեթոդիկա, Բուհական դասագիրք, Երևան, Թասկ ՍՊԸ, 2017, էջ 30:
2. Белкин Р.С., Общая теория советской криминалистики. Саратов 1986, էջ 41:
3. Возгрин И.А., Общие положения методики расследования отдельных видов преступлений. Л., 1976, էջ 43:
4. Кирсанов З.И., Криминалистические учения о механизме преступления и его отражении. Лекция. М., 1994, էջ 4:
5. Криминалистика: Учеб. для вузов / Под ред. Р. С. Белкина, 2-е издание, переработанное и дополненное. М., Изд. «Норма», 2006, էջ 503:
6. Кустов А.М., Криминалистическая или социально-правовая характеристика преступлений как ориентир в борьбе с преступностью// Роль и значение деятельности Р. С. Белкина в становлении современной криминалистики: Материалы международной научной конференции. М., 2002, էջ 12.
7. Матушкина Н.В., Криминалистическая модель преступной деятельности по уклонению от уплаты налогов и ее использование в целях выявления и раскрытия преступлений этого вида: Дисс... канд. юрид. наук. Ижевск, 1999, էջ 9; Наймушин В.Г., Криминалистическая модель преступной деятельности в сфере наркобизнеса и ее использование в деятельности по выявлению и раскрытию преступлений: Автореф. дисс ... канд. юрид. наук., Ижевск, 1999, էջ 12.
8. Меретуков Г.М., Криминалистические проблемы борьбы с наркобизнесом организованных преступных групп. М., 1995, էջ 19:
9. Образцов В.А., Проблемы раскрытия преступлений против здоровья населения, связанных с пище-

выми отравлениями: Автореф. дисс.... канд. юр. наук. М., 1976, էջեր 47-48:

10. <https://www.sns.am/hy/news/view/690>
11. <https://www.sns.am/hy/news/view/460>
12. <https://www.sns.am/hy/news/view/602>
13. <https://www.sns.am/hy/news/view/679>
14. <https://www.sns.am/hy/news/view/497>
15. <https://www.sns.am/hy/news/view/717>
16. <https://www.sns.am/hy/news/view/719>

Բաղինյան Ս. - ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ, էլիասցե՝ sbaghinyan777@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 24.08.2025 թ., տրվել է գրախոսության 24.08.2025 թ., երաշխավորվել է ՀՀ վաստակավոր իրավաբան, Երևանի պետական համալսարանի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ենգիբարյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2025 թ.:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-151>

ՍԵՐԳԵՅ ՂԱԶԻՆՅԱՆ

*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի և
Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) դասախոս,
ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ,
<https://orcid.org/0000-0003-2796-1322>*

SERGEY GHAZINYAN

*Lecturer at the Chair of European and International Law,
Yerevan State University (YSU), and the American University of Armenia (AUA)
Expert at the YSU Center for European Studies*

СЕРГЕЙ КАЗИНЯН

*Преподаватель кафедры европейского и международного права
Ереванского государственного университета (ЕГУ) и
Американского университета Армении (АУА),
Эксперт Центра европейских исследований ЕГУ*

**ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻԲԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ
ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ**

**THE NATIONAL REFERRAL MECHANISM OF PERSONS SUBJECTED TO
TRAFFICKING AND EXPLOITATION IN HUMAN BEINGS AS A GUARANTEE
OF THE PROTECTION OF HUMAN RIGHTS**

**НАЦИОНАЛЬНЫЙ МЕХАНИЗМ ПЕРЕНАПРАВЛЕНИЯ ЛИЦ,
ПОДВЕРГНУТЫХ ТОРГОВЛЕ ЛЮДЬМИ И ЭКСПЛУАТАЦИИ
КАК ГАРАНТ ЗАЩИТЫ ПРАВ ЧЕЛОВЕКА**

Ներածություն

Աշխարհում մարդկանց թրաֆիքինգը՝ որպես ժամանակակից ստրկության ձև, հաշվի առնելով դրա լատենտայնությունը, դժվար է բացահայտել¹: Մարդկանց թրաֆիքինգը և շա-

¹ Բեյլզ, Ք., Հեսթեթ, Օ., & Սիլվերման, Բ. Վ. (2015 թ.): Ժամանակակից ստրկությունը Միացյալ Թագավորությունում. քանի՞ զոհ: Կարևորություն, 12(3), 16–21: https://www.researchgate.net/publication/280972981_Modern_slavery_in_the_UK_How_many_victims:

հազործումը Հայաստանի համար ևս շարունակում է մնալ մարդու իրավունքների մարտահրավեր, որը սրվում է տարածաշրջանային անկայունության, միգրացիոն հոսքերի, սոցիալ-տնտեսական խնդիրների և ոչ ֆորմալ տնտեսության պատճառով:

Դրան հակազդելու նպատակով կիրառվում է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց ուղղորդման կարգը, որը միտված է ապահովելու անհապաղ հայտնաբերում և նույնացում, ինչպես նաև աջակցության և պաշտպանության տրամադրում՝ կանոնակարգված եղանակով: Հայաստանի իրավական կառուցակարգերը փաստում են պետության հանձնառությունը՝ կատարելու մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նկատմամբ ներպետական օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, առաջին հերթին՝ նրանց հայտնաբերման միջոցով:

Հիմնական հետազոտություն

Հայաստանի կողմից մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարն ունի իրավական և քաղաքական հստակ հիմքեր՝ ձևավորված միջազգային պարտավորությունների հաշվառմամբ: Պետությունը վավերացրել է ոլորտի միջազգային և տարածաշրջանային հիմնական փաստաթղթերը, այդ թվում՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (ԵԽ թրաֆիքինգի դեմ պայքարի կոնվենցիա, 2005 թվականի մայիսի 16)², որը Հայաստանը վավերացրել է 2008 թվականին, Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիան (2000 թվականի նոյեմբերի 15) և դրա լրացուցիչ արձանագրությունը՝ Մարդկանց, մասնավորապես կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, արգելման և պատժի մասին (Պալերմոյի արձանագրություն)³, ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) մի շարք կոնվենցիաներ, այդ թվում՝ Հարկադիր աշխատանքի մասին թիվ 29 կոնվենցիան (1930 թվականի հունիսի 28), Հարկադիր աշխատանքի վերացման մասին թիվ 105 կոնվենցիան (1957 թվականի հունիսի 25), Միգրանտ աշխատողների մասին թիվ 143 կոնվենցիան (Լրացուցիչ դրույթներ) (1975 թվականի հունիսի 24) և Երեխաների աշխատանքի արգելված ձևերի մասին թիվ 182 կոնվենցիան (1999 թվականի հունիսի 17)⁴:

Նշված միջազգային պայմանագրերով անդամ պետությունները պարտավորություն են ստանձնում ոչ միայն իրականացնել քրեական հետապնդում մարդկանց թրաֆիքինգ և շահագործում կատարած անձանց նկատմամբ, այլև նույնացնել, աջակցել և պաշտպանել այդ հանցանքի զոհերին, դիտարկելով այն՝ որպես մարդու իրավունքների խնդիր և անձի համար երաշխավորելով այդ ծառայությունների հասանելիությունն անկախ իրավապահ մարմինների հետ համագործակցությունից: Այդուամենայնիվ, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց աջակցության և պաշտպանության համար հիմնարար նախապայման է նրանց արդյունավետ հայտնաբերումը և ուղղորդումը⁵ (Գրեգուլյան և այլք, 2020 թ.):

Ներպետական մակարդակում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված

² Եվրոպայի խորհրդի: (2005թ.): Եվրոպայի խորհրդի կոնվենցիա՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին: Վարչակազմ, 16.V.2005: <https://rm.coe.int/168008371d>:

³ ՄԱԿ-ի Անդրազգային հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիա և դրա լրացուցիչ արձանագրությունները: <https://www.unodc.org/unodc/en/organized-crime/intro/UNTOC.html>:

⁴ Աշխատանքի միջազգային կազմակերպություն: *ԱՄԿ-ի կոնվենցիաներ*: https://normlex.ilo.org/dyn/nrmlx_en/f?p=NORMLEXPUB:12000:0::NO:

⁵ Հեղինակային խումբ (Գրեգուլյան և այլք): (2020թ.): Հետազոտություն՝ անդամ պետությունների ազգային և միջպետական ուղղորդման մեխանիզմների աշխատանքը վերանայելու վերաբերյալ: Լյուքսեմբուրգ: <https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/d5542e9c-0e92-11eb-bc07-01aa75ed71a1/language-en>:

անձանց ուղղորդման կարգն ամրագրված է «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք)⁶, ենթաօրենսդրական և գերատեսչական ակտերով: Օրենքը զոհերի նույնացումը, ուղղորդումը, աջակցությունը և պաշտպանությունը կարգավորող հիմնական իրավական ակտն է: Այն սահմանում է, որ ուղղորդում է համարվում Օրենքով նախատեսված նպատակներով անձի և համապատասխան պետական, տեղական ինքնակառավարման մարմնի, հասարակական կամ այլ կազմակերպության միջև կապի ստեղծումը և (կամ) այդ անձի շահերին առնչվող խնդիրների լուծումը համապատասխան պետական, տեղական ինքնակառավարման մարմին, հասարակական կամ այլ կազմակերպություն փոխանցելը:

Օրենքից զատ, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց ուղղորդման ընթացակարգերը կարգավորվում են Կառավարության առանձին որոշումներով, որոնք ֆրագմենտացված են և որոշ դեպքերում ոչ արդիական: Մասնավորապես, ՀՀ կառավարության «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին» 2008 թվականի նոյեմբերի 20-ի N 1385-Ա որոշումն ընդունվել է օրենքի ընդունումից առաջ և փոփոխության է ենթարկվել միայն 2010 թվականին⁷: Գտնում ենք, որ այն չի արտացոլում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման, աջակցության և պաշտպանության վերաբերյալ Օրենքով ամրագրված մոտեցումները և ընթացակարգային երաշխիքները:

Թեև օրենքը հիմնականում կարգավորում է ուղղորդման հետ կապված հարաբերությունները, նշված որոշումը շարունակում է գործել, որը կառավարությանը կլիազորեր ընդունել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց ուղղորդման կարգ: Մեր դիտարկմամբ, այս բացթողումը ստեղծում է իրավական որոշակիության խնդիր և ենթաօրենսդրական մակարդակում օրենքից բխող կարգավորումների հստակեցման, մասնավորեցման և գործնական հնարավոր խոչընդոտների լուծման անհրաժեշտություն:

Զուգահեռ, ՀՀ կառավարության «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին, զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աջակցության տրամադրման կարգը, չափերը, ինչպես նաև աջակցության և պաշտպանության նպատակով հատուկ կատեգորիայի երեխա զոհերի ուղղորդման ընթացակարգը սահմանելու մասին» 2016 թվականի մայիսի 5-ի N 492-Ն որոշմամբ ամրագրվում են ուղղորդման ընթացակարգ հատուկ կատեգորիայի զոհ երեխաների վերաբերյալ⁸: Այնուամենայնիվ, այս մոտեցումը հանգեցնում է նորմատիվ թերի կարգավորման, քանի որ Օրենքով սահմանված հատուկ կատեգորիայի այլ զոհերի՝ անօգնական վիճակում գտնվող անձանց համար ուղղորդման ընթացակարգերը կարգավորված չեն:

Նշված խնդիրների լուծման նպատակով, կարծում ենք, գործող իրավական կարգավորումները պետք է վերանայվեն երեք փոխկապակցված ուղղություններով: Նախ, Օրենքը պետք է լրացվի՝ ներառելով հստակ լիազորող նորմ, որը Կառավարությանը հնարավորու-

⁶ ՀՀ օրենք «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին»: Ընդունվել է 17.12.2014: <https://www.arlis.am/hy/acts/198719/latest>:

⁷ ՀՀ կառավարության որոշում N 1385-Ա «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին», 20.11.2008: <https://www.arlis.am/hy/acts/56984/latest>:

⁸ ՀՀ կառավարության որոշում N 492-Ն «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին, զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին աջակցության տրամադրման կարգը, չափերը, ինչպես նաև հատուկ կատեգորիայի երեխաների ուղղորդման ընթացակարգը սահմանելու մասին», 05.05.2016: <https://www.arlis.am/hy/acts/151133/latest>:

թյուն կտա ընդունելու մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց ազգային ուղղորդման համապարփակ կարգ սահմանող որոշում՝ փոփոխություններ կատարելով «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին» 2008 թվականի նոյեմբերի 20-ի N 1385-Ա որոշման մեջ:

Երկրորդ, Օրենքում ներկայում գործող որոշ, մասնավորապես՝ պետական մարմինների և գործընկեր ՀԿ-ների հայտնաբերման և ուղղորդման գործընթացում դերն ու պարտականությունները մանրամասն նկարագրող դրույթները հնարավոր է տեղափոխել լրամշակված N 1385-Ա որոշում: Արդյունքում, Օրենքով կամրագրվեն մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց իրավունքները և իրավասու մարմինների պարտականությունները, իսկ գործառնական ընթացակարգերը կսահմանվեն Կառավարության մեկ միասնական որոշմամբ:

Վերջապես, «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին» 2008 թվականի նոյեմբերի 20-ի N 1385-Ա որոշման համապարփակ վերանայման շրջանակում, Կառավարության «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աջակցության տրամադրման կարգը, չափերը, ինչպես նաև աջակցության և պաշտպանության նպատակով հատուկ կատեգորիայի երեխա զոհերի ուղղորդման ընթացակարգը սահմանելու մասին» 2016 թվականի մայիսի 5-ի N 492-Ն որոշմամբ ներկայում ամրագրված երեխաների համար նախատեսված ուղղորդման դրույթները պետք է տեղափոխվեն ազգային ուղղորդման միասնական կարգը սահմանող որոշում: Ավելին, այդ որոշմամբ կարևոր է նաև սահմանել հատուկ կատեգորիայի մյուս զոհերին՝ անօգնական վիճակում գտնվող անձանց հայտնաբերման և ուղղորդման առանձնահատկությունները:

Միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) «Ազգային ուղղորդման մեխանիզմների ձեռնարկին» համապատասխան⁹, «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին» 2008 թվականի նոյեմբերի 20-ի N 1385-Ա վերանայված որոշումը պետք է սահմանի հայտնաբերման և ուղղորդման մանդատներ «առաջնագծի» բոլոր դերակատարների համար, որոնց տեսադաշտում կարող է հայտնվեն մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձինք: Այն պետք է ամրագրի ուղղորդման գործնական ընթացակարգեր, հաստատությանը և դրա գործառույթներին հատուկ ցուցիչներ ընդունելու պարտադիրություն, համաձայնության և գաղտնիության պահանջների պահպանման անհրաժեշտություն: Որոշումը պետք է նաև կարգավորի շարունակական վերապարաստումների խնդիրը և ներառի մշտադիտարկման և հաշվետվողականության վերաբերյալ կարգավորումներ:

Գործող ֆրագմենտացված իրավական գործիքները համախմբելով և գործառնական ուղեցույցը՝ ազգային ուղղորդման կարգը Կառավարության համապատասխան որոշմամբ ընդունելով, կարծում ենք Հայաստանը կարող է բարձրացնել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց հայտնաբերման և ուղղորդման արդյունավետությունը, ինչպես նաև ընթացակարգերի մատչելիությունն ու որոշակիությունը, ապահովել անհապաղ

⁹ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, (2022 թ.): Ազգային ուղղորդման մեխանիզմներ՝ համատեղելով ջանքերը մարդկանց թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանության համար, (2-րդ հրատարակություն): <https://www.osce.org/odihhr/510690>:

աջակցություն և պաշտպանություն:

Հայաստանում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց ուղղորդման կարգը բաժանվում է երեք հիմնական փուլի՝ հայտնաբերում, նախանույնացում և նույնացում: Մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց հայտնաբերումը ազգային ուղղորդման կարգի կամ մեխանիզմի մուտքի կետն է, սակայն այն մնում է դրա ամենաթերի կարգավորված և գործնականում խնդրահարույց բաղադրիչը:

Միջազգային չափանիշները հստակ ընդգծում են, որ մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց վաղ հայտնաբերումը պետության պարտավորությունն է և չպետք է սահմանափակվի իրավապահ կամ սոցիալական պաշտպանության մարմիններով: Եվրոպայի խորհրդի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կոնվենցիան պահանջում է, որ անդամ պետությունները ձեռնարկեն միջոցներ, որոնք հնարավորություն կտան ուրվագծել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց հետ առնչվող մասնագետների լայն շրջանակ, ընդգրկելով՝ աշխատանքի տեսուչներին, առողջապահության, կրթության ոլորտի մասնագետներին և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին¹⁰: Կոնվենցիայի բացատրական զեկույցը պարզաբանում է, որ այս պարտավորությունը ենթադրում է հայտնաբերման և ուղղորդման պարտավորության հստակ սահմանում և կարողությունների զարգացում¹¹:

Եվրոպայի խորհրդի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կոնվենցիայի մշտադիտարկումն իրականացող մարմնի՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետների խմբի (ԳՐԵՏԱ) դիտարկումները վերահաստատել են, որ պետություններն ունեն պոզիտիվ պարտավորություն նախաձեռնողաբար հայտնաբերելու մարդկանց թրաֆիքինգի զոհերին, հատկապես խոցելի խմբերի շրջանում, ինչպիսիք են միգրանտ աշխատողները, երեխաները և ոչ ֆորմալ աշխատանքային հարաբերություններում գտնվող անձինք¹²:

Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) «Մարդկանց թրաֆիքինգի զոհերի ազգային ուղղորդման մեխանիզմներ. թերություններ և ապագա զարգացում» զեկույցն (2017թ.) ընդգծում է, որ արդյունավետ ազգային ուղղորդման մեխանիզմները պահանջում են վաղ հայտնաբերման և ուղղորդման հստակ պարտավորություն, որը հիմնված է պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների միջև համագործակցության վրա: Ավելին, ստանդարտ գործառնական ընթացակարգերի («Standard Operating Procedures») մշակումը կարող է նպաստել ուղղորդման մեխանիզմների որոշակիության ու արդյունավետության ապահովմանը: Այդ ընթացակարգերն կարգավորում են հիմնական գործընթացները, ինչպիսիք են նախնական ստուգումը, տեղեկության փոխանակումը, տեղափոխումը, ծառայությունների հասանելիությունը, տվյալների պաշտպանությունը և հաշվետվողականությունը¹³:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ազգային ուղղորդման կարգի վերաբերյալ ձեռնարկը (2022 թ.) նույնպես ընդգծում է, որ անհապաղ հայտնաբերման պահանջը պետք է ներառվի «առաջնագծի» բո-

¹⁰ Եվրոպայի խորհուրդ, (2005 թ.), Եվրոպայի խորհրդի կոնվենցիա՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին, հոդված 10: Վարչակազմ, 16.V.2005: <https://rm.coe.int/168008371d>:

¹¹ Եվրոպայի խորհուրդ, (2005թ.), Մեկնաբանող զեկույց՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վերաբերյալ, պարբ. 128–137: Վարչակազմ, 16.V.2005, <https://rm.coe.int/16800d3812>:

¹² ԳՐԵՏԱ-ի զեկույց՝ Հայաստանի կողմից Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ՝ երրորդ փուլ, պարբ. 170–175, <https://rm.coe.int/greta-third-evaluation-report-on-armenia/1680a6b4ba>:

¹³ Միգրացիայի միջազգային կազմակերպություն, (2017 թ.), Զոհերի ազգային ուղղորդման մեխանիզմներ՝ բացթողումներ և հետագա զարգացումներ, ԺՆՆ, https://publications.iom.int/system/files/pdf/national_referral_mechanisms.pdf:

լոր ոլորտներում: Այն խրախուսում է պետություններին ընդունել հաստատությանը հատուկ գործառույթներ, համապատասխան ցուցիչներ և ուղղորդման ընթացակարգեր: Կարևոր է ընդգծել, որ իրավասու մարմինների համար անհրաժեշտ է իրականացնել կանոնավոր և թիրախային վերապատրաստումներ¹⁴:

Օրենքի 13-րդ հոդվածով սահմանվում է, որ միջազգային, հասարակական կազմակերպությունները, զանգվածային լրատվության միջոցները, քաղաքացիական հասարակությունը, բոլոր նրանք, ովքեր շահագրգռված են մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հակազդմամբ, կանխարգելմամբ, մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց աջակցությամբ, պաշտպանությամբ և հասարակությանը նրանց սոցիալական վերահիմնադրմամբ, իրավունք ունեն փոխանցելու իրավասու որևէ մարմնի իրենց հայտնի տեղեկատվությունը՝ թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց, ինչպես նաև նրանց առնչվող ենթադրյալ հանցագործության դեպքերի մասին:

Ինչ վերաբերում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ապա դրանք յուրաքանչյուր այն կասկածի դեպքում, որ իրենց գործառույթներից բխող շփման տիրույթում հայտնված անձը հնարավոր է ենթարկված լինի մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման, անձի վերաբերյալ տեղեկությունը սեղմ ժամկետում փոխանցում են կամ անձի գրավոր համաձայնության առկայության պարագայում նրան ուղղորդում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Հայաստանի վերաբերյալ իր երրորդ գնահատման զեկույցում ԳՐԵՏՍՄ-ն նշել է մի քանի համակարգային թերություններ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց վաղ հայտնաբերման առումով, այդ թվում՝ արձանագրելով անբավարար նախաձեռնողականություն, ֆրագմենտացված ինստիտուցիոնալ ներգրավվածություն և գործառնական որոշակիության բացակայություն: Ընդունելով Օրենքում ուրվագծված նույնացման փուլային ընթացակարգը՝ ԳՐԵՏՍՄ-ն մտահոգություն է հայտնել, որ Հայաստանի իշխանությունները մեծապես ապավինում են թրաֆիքինգի զոհերի ինքնանույնացմանը, այլ ոչ դեպքերը հայտնաբերելու համար համակարգված և նախաձեռնողական միջոցներ ձեռնարկելուն:

Չնայած ընդունվել են իրավապահ մարմինների, աշխատանքի տեսուչների և «առաջնագծի» այլ դերակատարների համար մշակված ցուցիչներ պարունակող ձեռնարկներ, ԳՐԵՏՍՄ-ն արձանագրել է այս գործիքների վերաբերյալ սահմանափակ իրազեկվածություն: ԳՐԵՏՍՄ-ն եզրակացրել է, որ անհրաժեշտ են հետագա քայլեր՝ ազգային ուղղորդման կարգը վերանայելու, վաղ հայտնաբերումը բարելավելու և մասնագետներին վերապատրաստելու առումով¹⁵:

Հայտնաբերման փուլի վերաբերյալ ընդհանուր դիտարկումներից զատ, կարևոր է անդրադառնալ նաև առանձին դերակատարների: Պետք է նախ նշել, որ հայտնաբերումը երեք իրավասու մարմինների՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Ոստիկանության և գործընկեր ՀԿ-ների բացառիկ գործառույթը չէ, չնայած նրանք օրենքով լիազորված են իրականացնել նախանույնացում: Գործնականում հայտնաբերումը հաճախ նաև իրականացվում է այլ դերակատարների կողմից, հաշվի առնելով խոցելի բնակչության հետ կամ ռիսկային միջավայրերում դրանց աշխատանքը: Այդ թվում են Առողջապահական և աշ-

¹⁴ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, (2022 թ.), Ազգային ուղղորդման մեխանիզմներ՝ համատեղելով ջանքերը մարդկանց թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանության համար, (2-րդ հրատարակություն), էջեր 25–36, <https://www.osce.org/odihr/510690>:

¹⁵ ԳՐԵՏՍՄ-ի զեկույց՝ Հայաստանի կողմից Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ՝ երրորդ փուլ: <https://rm.coe.int/greta-third-evaluation-report-on-armenia/1680a6b4ba>:

խատանքի տեսչական մարմինը (ԱԱՏՄ), Միասնական սոցիալական ծառայությունը, Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը, Սահմանապահ զորքերը, և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Առողջապահության նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները:

Չնայած այս լայն ինստիտուցիոնալ շրջանակին, մեր դիտարկմամբ, հստակ սահմանված մանդատների, ներդաշնակեցված ընթացակարգերի և տարբեր ոլորտներում կանոնավոր վերապատրաստման բացակայությունը լրջորեն խոչընդոտում է վաղ հայտնաբերմանը: Օրինակ՝ ԱԱՏՄ-ն այն կարևոր մարմիններից մեկն է, որն ունի աշխատանքային պայմանները, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հնարավոր ռիսկերը ստուգելու ուղղակի գործառույթ: Այնուամենայնիվ, ինչպես ընդգծվել է ԳԲԵՏԱ-ի կողմից, դրա մանդատը բավարար չափով չի համապատասխանում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի նպատակներին: Չնայած ԱԱՏՄ-ի լիազորությունների ընդլայնմանը, և ներքին ցուցիչների ընդունմանը (Հրաման թիվ 6-Լ, 2021 թվականի դեկտեմբերի 17-ի), խնդրահարույց են չհայտարարված այցեր իրականացնելու արգելքը և այլ սահմանափակումներ¹⁶:

«Առաջնագծի» դերակատարներից շատերը չունեն նման ներքին կարգավորումներ: Դրանց մեծամասնությունը չեն ստանում քննարկվող թեմայի վերաբերյալ կանոնավոր վերապատրաստում: ՄՄԿ-ի ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ ուղեցույցի համաձայն՝ այս համակարգային թերությունները լուծելու համար կարևոր է դիտարկել հայտնաբերման և ուղղորդման վերաբերյալ հաստատությունների համար հատուկ ընթացակարգերի, այդ թվում՝ համապատասխան ցուցիչների ընդունումը, ինչպես նաև վերապատրաստման պարտադիրությունը¹⁷:

Հաջորդ՝ նախանույնացման փուլը հստակ կարգավորվում է Օրենքով: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց պաշտոնական նույնացմանը նախորդում է նախանույնացման փուլը, որն իրականացնում են իրավասու մարմինները: Այս փուլում անձը ստանում է «հավանական զոհի» կարգավիճակ, որը թույլ է տալիս նրան ստանալ նախնական աջակցություն և պաշտպանություն նույնիսկ մինչև պաշտոնական ճանաչումը: Իրավասու մարմինները պարտավոր են հավաքել և ստուգել տեղեկությունը, հայտնաբերել հնարավոր դեպքերը տարբեր աղբյուրներից և անհապաղ փոխանցել Նույնացման հանձնաժողովին: Նախանույնացումը սկսվում է հայտնաբերմամբ ու փոխանցմամբ և ներառում է անձի ինքնության, հանգամանքների և շահագործման վերաբերյալ բավարար տվյալների հավաքում: Իրավասու մարմինը հայտնաբերված անձին ընդունելիս նրա վերաբերյալ տեղեկությունը ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում բանավոր, այնուհետև գրավոր հայտնում է Նույնացման հանձնաժողովի նախագահին:

Հայաստանում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց պաշտոնական նույնացումը այս գործընթացի վերջին փուլն է: Հայտնաբերումից և իրավասու մարմնի կողմից նախանույնացումից հետո դեպքերը ներկայացվում են Նույնացման հանձնաժողովին, որը ստեղծվել է Օրենքով: Դրա գործունեությունը կարգավորվում է ՀՀ կառավարության N 1200-Ն որոշմամբ¹⁸:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Միգրացիայի միջազգային կազմակերպություն, (2017թ.), Չոհերի ազգային ուղղորդման մեխանիզմներ՝ բացթողումներ և հետագա զարգացումներ, պարբ. 7.7, ժնև, https://publications.iom.int/system/files/pdf/national_referral_mechanisms.pdf:

¹⁸ ՀՀ կառավարության որոշում N 1200-Ն «Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի աշխատակարգը, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման

Այն միակ մարմինն է, որը լիազորված է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձին ճանաչելու որպես զոհ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության N 1534-Ն որոշմամբ հաստատված ցուցիչները¹⁹: Նույնացումից հետո անձը ստանում է Հայաստանի օրենսդրությամբ երաշխավորված իրավունքների և ծառայությունների ամբողջ շրջանակի հասանելիություն, ներառյալ կացարանի, բժշկական օգնության, իրավաբանական օգնության, կրթության, զբաղվածության և փոխհատուցման հասանելիություն: Ուստի, այս փուլն անձի իրավունքների տեսանկյունից ունի հիմնարար նշանակություն:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի իրավունքահեն և զոհակենտրոն մոտեցումն ապահովելու առումով կարևոր է դրա արդյունավետ և անկախ մարմնի կողմից իրականացվող մշտադիտարկումը²⁰: Այն պետք է լինի մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգի անբաժան մաս: Միջազգային չափանիշները մշտապես շեշտում են, որ ուղղորդման կարգերը պետք է ենթարկվեն պարբերական գնահատման՝ դրանց արդյունավետությունը գնահատելու համար: Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կոնվենցիան խրախուսում է մասնակից պետություններին քննարկել ազգային զեկուցողների կամ այլ անկախ մեխանիզմների նշանակման հարցը՝ պետական հաստատությունների գործունեությունը վերահսկելու և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի օրենսդրության, այդ թվում՝ ազգային ուղղորդման կարգի կիրառումը գնահատելու համար²¹: Բացատրական զեկուցյր լրացուցիչ պարզաբանում է, որ նման մեխանիզմները պետք է ունենան անկախ գնահատում իրականացնելու, առաջարկություններ ներկայացնելու և օրենսդիր մարմինն պարբերաբար հաշվետվություններ ներկայացնելու կարողություն²²:

ՄՄԿ-ի ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ ուղեցույցը նույնպես ընդգծում է շարունակական մշտադիտարկման և գնահատման անհրաժեշտությունը, ներառյալ՝ համագործակցության մակարդակը և կայունությունը²³: Նմանապես, ԵԱՀԿ ձեռնարկը խորհուրդ է տալիս պետություններին ստեղծել մշտադիտարկման մարմին, որը լիազորված կլինի վերանայել ուղղորդման կարգի որակը, հաշվետվողականությունը և կատարողականը, ինչպես նաև ապահովել բողոքարկման մեխանիզմներին հասանելիություն²⁴:

Ներկայում Հայաստանը չունի ազգային ուղղորդման կարգի արդյունավետությունը գնահատելու մասնագիտացված մեխանիզմ: Չնայած Մարդու իրավունքների պաշտպանն ունի

զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհուրդ ներկայացվող հաշվետվության ձևը սահմանելու մասին», 15.10.2015, <https://www.arlis.am/hy/acts/155061/latest>:

¹⁹ ՀՀ կառավարության որոշում N 1534-Ն «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից անձին որպես զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչելու ցուցիչները հաստատելու մասին», 06.10.2022, <https://www.arlis.am/hy/acts/169215/latest>:

²⁰ Ղազինյան Ս. (2023), Ազգային մշտադիտարկման մեխանիզմները՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի զարգացման միջոց, Պետություն և իրավունք, 2(101), 54–65, <https://journals.yso.am/index.php/state-and-law/article/view/11789/9331>:

²¹ Եվրոպայի խորհուրդ, (2005 թ.), Եվրոպայի խորհրդի կոնվենցիա՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին, հոդված 29, մաս 4, Վարշավա, 16.V.2005, <https://rm.coe.int/168008371d>:

²² Եվրոպայի խորհուրդ, (2005 թ.), մեկնաբանող զեկույց՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վերաբերյալ, պարբ. 298, Վարշավա, 16.V.2005, <https://rm.coe.int/16800d3812>:

²³ Միգրացիայի միջազգային կազմակերպություն, (2017 թ.), Ձեռքի ազգային ուղղորդման մեխանիզմներ՝ բացթողումներ և հետագա զարգացումներ, պարբ. 7.6, Ժնև, https://publications.iom.int/system/files/pdf/national_referral_mechanisms.pdf:

²⁴ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, (2022 թ.), Ազգային ուղղորդման մեխանիզմներ՝ համատեղելով ջանքերը մարդկանց թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանության համար, (2-րդ հրատարակություն), էջեր 32 և 34, <https://www.osce.org/odihr/510690>:

իրավունքների պաշտպանության լայն սահմանադրական մանդատ, այն չի ծառայում որպես մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և մասնավորապես՝ ազգային ուղղորդման կարգի մշտադիտարկման մասնագիտացված մարմին: Ինչպես նշել է ԳՐԵՏԱ-ն իր երրորդ գնահատման զեկույցում, Հայաստանը չի նշանակել ազգային զեկուցող կամ համարժեք մարմին՝ թրաֆիքինգի դեմ պայքարի մշտադիտարկման հստակ սահմանված մանդատով²⁵:

Մեր կարծիքով, այս բացը խոչընդոտում է ազգային ուղղորդման կարգի խնդիրները համակարգված կերպով բացահայտելու, ուղղորդումների արդյունավետությունը գնահատելու, ինչպես նաև բարելավման համար առաջարկություններ ձևակերպելու հնարավորությանը: Ուստի, անհրաժեշտ է քննարկել Հայաստանում ոլորտի, այդ թվում՝ ազգային ուղղորդման կարգի անկախ և մասնագիտացված մշտադիտարկման մեխանիզմի ստեղծելու կամ Մարդու իրավունքների պաշտպանին օրենքով կոնկրետ գործառույթ վերապահելու հարցը:

Եզրակացություն

Հայաստանը վերջին տասնամյակում զարգացրել է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման օրենսդրական հիմքերը՝ ընդունելով ոլորտային օրենք, ստեղծելով Նույնացման հանձնաժողով և զարգացնելով համագործակցությունը միջազգային ու քաղաքացիական հասարակության դերակատարների հետ: Այնուամենայնիվ, գործող ուղղորդման կարգը մասնատված է, իրավական առումով թերի և գործնականում հազվադեպ կիրառվող: Կառավարության գործող որոշումները չեն համապատասխանում 2014 թ. օրենքով ներդրված կառուցվածքին և ընթացակարգերին, ինչի հետևանքով բացակայում է համընդհանուր կիրառելի գործիքակազմ:

Անհրաժեշտ է փոխարինել գործող կարգավորումները Կառավարության նոր, համապարփակ որոշմամբ, որը կկարգավորի բոլոր փուլերը՝ հայտնաբերումը և ուղղորդումը՝ հստակեցնելով ներգրավված բոլոր մարմինների մանդատները, գործընթացները և փոխգործակցության կանոնները: «Առաջնագծի» մարմինների դերը պետք է ամրապնդվի համապատասխան ցուցիչներով, վերապատրաստումներով և ընթացակարգերով՝ ապահովելով վաղ հայտնաբերման արդյունավետություն:

Ուղղորդման կարգի բարեփոխումները պետք է ընթանան իրավունքահեն և զոհակենտրոն մոտեցման սկզբունքներին համահունչ՝ ձևավորելով մեխանիզմ, որը ապահովում է զոհերի իրավունքների պաշտպանության երաշխիքներ, աջակցություն և պաշտպանություն: Հարկավոր է ներդնել նաև անկախ և մասնագիտացված մշտադիտարկման մեխանիզմ՝ կարողությամբ հետևելու համակարգի իրականացմանը, բացահայտելու թերությունները և խթանելու պետության իրավունքահեն արձագանքի կայուն զարգացումը:

Ամփոփագիր: Ազգային ուղղորդման կարգերը կամ մեխանիզմները («National Referral Mechanism») մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի իրավունքահեն և զոհակենտրոն քաղաքականության անկյունաքարերից են, որոնք մշակված են համակարգված ընթացակարգերի միջոցով զոհերի նույնացման, պաշտպանության և աջակցության ապահովման համար: Հիմնվելով մարդու իրավունքների միջազգային չափանիշների վրա՝ դրանք իրավական պարտավորությունները վերածում են գործնական քայլերի՝ սահմանելով իրավասու մարմինների դերը և ուղղորդման եղանակները: Ուղղորդման կարգերի վերաբերյալ իրավական

²⁵ Եվրոպայի խորհուրդ, (2023 թ.), ԳՐԵՏԱ-ի զեկույց՝ Հայաստանի կողմից Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ՝ երրորդ փուլ, պարբ. 21, <https://rm.coe.int/greta-2023-08-fgr-arm-third-eval-report-en/1680ac0c44>:

կարգավորումների և գործնականում դրանց կիրառման ուսումնասիրությունը կարևոր է մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց նույնացման արդյունավետության գնահատման համար:

Սույն հոդվածն ուսումնասիրում է Հայաստանում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց ուղղորդման կարգը, այդ թվում՝ օրենսդրական կարգավորումները և գործնական խնդիրները: Հետազոտությունը վերաբերում է Հայաստանի ուղղորդման կարգի երեք հիմնական ընթացակարգային փուլերին՝ հայտնաբերում, նախանույնացում և նույնացում:

Արդյունքներն ընդգծում են ոլորտում նշանակալի ձեռքբերումներ, այդ թվում՝ ոլորտային օրենքի ընդունումը, հստակ մանդատներով իրավասու մարմինների ստեղծումը, ինչպես նաև իրավունքահեն և զոհակենտրոն առաջնահերթությունը: Այնուամենայնիվ, շարունակական թերությունները խաթարում են համակարգի արդյունավետ աշխատանքը՝ անհապաղ և արդյունավետ պաշտպանելու զոհերին: Մասնավորապես, հայտնաբերման փուլը մնում է ամենախնդրահարույցը՝ «առաջնագծի» դերակատարների համար անորոշ մանդատներով, ստանդարտ գործառնական ընթացակարգերի բացակայությամբ, անբավարար վերապատրաստմամբ և ֆրագմենտացված համակարգմամբ:

Հոդվածն արտացոլում է Հայաստանի փորձի և զոհակենտրոն ու իրավունքահեն մոտեցումների վերաբերյալ միջազգային չափանիշների համեմատական վերլուծությունը՝ պնդելով, որ ազգային ուղղորդման մեխանիզմները պահանջում են ոչ միայն իրավական երաշխիքներ, այլև իրավասու մարմինների կարողությունների կայուն զարգացում, ներդաշնակեցված ներքին ընթացակարգեր և բոլոր ոլորտների նախաձեռնողական ներգրավվածություն: Հոդվածը ներկայացնում է օրենսդրական և գործնական առաջարկություններ, որոնք ուղղված են Հայաստանի ազգային ուղղորդման կարգի արդյունավետության, մատչելիության և հաշվետվողականության բարձրացմանը:

Annotation. National referral procedures or mechanisms (“National Referral Mechanisms”) are cornerstones of a human rights-based and victim-centered anti-trafficking policy, designed through systematic procedures to ensure the identification, protection, and assistance of victims. Based on international human rights standards, they translate legal obligations into practical steps by defining the roles of competent authorities and referral pathways. Studying the legal regulations and the practical application of referral procedures is crucial for assessing the protection of and the effectiveness for persons subjected to trafficking.

This article examines the referral pathways for persons subjected to trafficking and exploitation in Armenia, including legislative regulations and practical challenges. The study focuses on the three main procedural stages of the referral mechanism: detection, pre-identification, and identification.

The findings highlight significant achievements in the field, including the adoption of a dedicated law, the establishment of competent bodies with clear mandates, and the prioritisation of a human rights-based and victim-centred approach. Nevertheless, persistent shortcomings undermine the system’s effective operation to promptly and adequately protect victims. In particular, the detection phase remains the most problematic, with frontline actors having ambiguous mandates, lacking standard operating procedures, insufficient training, and fragmented coordination.

The article provides a comparative analysis of Armenia’s experience against international standards on victim-centered and human rights-based approaches, arguing that national referral mechanisms require not only legal guarantees but also sustained capacity-building of competent bodies, harmonized internal procedures, and proactive engagement from all sectors. The article offers legislative and practical recommendations aimed at improving the effectiveness, accessibility, and accountability of Armenia’s national referral mechanism.

Аннотация. Национальные процедуры, или механизмы направления («National Referral Mechanisms») являются краеугольным камнем политики по борьбе с торговлей людьми, основанной на правах человека и ориентированной на жертву. Они разработаны посредством систематизированных процедур для обеспечения выявления, защиты и оказания помощи жертвам. Опираясь на международные стандарты в области прав человека, такие механизмы превращают правовые обязательства в практические меры, определяя роли

компетентных органов и пути направления. Изучение правового регулирования и практического применения процедур направления имеет ключевое значение для оценки уровня защиты лиц, подвергшихся торговле людьми, и эффективности системы в целом.

В данной статье рассматривается процедура направления лиц, подвергшихся торговле людьми и эксплуатации в Армении, включая законодательные нормы и практические проблемы. Исследование охватывает три основных процедурных этапа механизма направления: выявление, предварительное установление статуса и формальное установление статуса.

Результаты исследования подчеркивают значительные достижения в данной сфере, включая принятие специального закона, создание компетентных органов с четкими мандатами, а также приоритетность подхода, основанного на правах человека и ориентированного на жертву. Тем не менее, сохраняющиеся недостатки подрывают эффективную работу системы по обеспечению своевременной и адекватной защиты жертв. В частности, этап выявления остается наиболее проблематичным: роли «передовых» акторов остаются неясными, отсутствуют стандартные операционные процедуры, обучение недостаточно, а координация фрагментирована.

Статья представляет собой сравнительный анализ армянского опыта в контексте международных стандартов, касающихся подходов, ориентированных на жертву и права человека. В ней утверждается, что национальные механизмы направления требуют не только правовых гарантий, но и устойчивого развития потенциала компетентных органов, гармонизированных внутренних процедур и проактивного участия всех секторов. В статье предлагаются законодательные и практические рекомендации, направленные на повышение эффективности, доступности и подотчетности национального механизма направления в Армении.

Բանալի բառեր - մարդիկ թրաֆիքինգի և շահագործում զոհեր, ազգային ուղղորդման մեխանիզմ, մարդու իրավունքներ, հայտնաբերում, նույնացում, զոհակենտրոն մոտեցում, պաշտպանություն, աջակցություն, Հայաստան, միջազգային չափանիշներ:

Keywords: victims of trafficking and exploitation, national referral mechanism, human rights, detection, identification, victim-centered approach, protection, assistance, Armenia, international standards.

Ключевые слова: жертвы торговли людьми и эксплуатации, национальный механизм направления, права человека, выявление, установление статуса, подход, ориентированный на жертву, защита, помощь, Армения, международные стандарты.

Օգտագործված գրականության ցանկ

1. Եվրոպայի խորհուրդ, (2005թ.), Եվրոպայի խորհրդի կոնվենցիա՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին, Վարշավա, 16.V.2005, <https://rm.coe.int/168008371d>
2. ՄԱԿ-ի Անդրազգային հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիա և դրա լրացուցիչ արձանագրությունները, <https://www.unodc.org/unodc/en/organized-crime/intro/UNTOC.html>
3. Աշխատանքի միջազգային կազմակերպություն, ԱՄԿ-ի կոնվենցիաներ, https://normlex.ilo.org/dyn/normlex_en/f?p=NORMLEXPUB:12000:0::NO
4. Եվրոպայի խորհուրդ, (2005 թ.), Մեկնաբանող զեկույց՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վերաբերյալ, Վարշավա, 16.V.2005, <https://rm.coe.int/16800d3812>
5. Եվրոպայի խորհուրդ, (2023թ.), ԳՐԵՏԱ-ի զեկույց՝ Հայաստանի կողմից Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ՝ երրորդ փուլ, <https://rm.coe.int/greta-third-evaluation-report-on-armenia/1680a6b4ba>
6. Միգրացիայի միջազգային կազմակերպություն, (2017 թ.), Զոհերի ազգային ուղղորդման մեխա-

նիզմներ՝ բացթողումներ և հետագա զարգացումներ, Ժնև, https://publications.iom.int/system/files/pdf/national_referral_mechanisms.pdf

7. ՄՄԿ, Ուղեցույց՝ ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ՝ խոցելի միգրանտների և մարդկանց թրաֆիքինգի զոհերի պաշտպանության համար, <https://publications.iom.int/books/iom-guidance-referral-mechanisms>

8. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, (2022 թ.), Ազգային ուղղորդման մեխանիզմներ՝ համատեղելով ջանքերը մարդկանց թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանության համար, (2-րդ հրատարակություն), <https://www.osce.org/odihr/510690>

9. Հեղինակային խումբ (Գրեգուլսկա և այլք), (2020 թ.), Հեղափոխություն՝ անդամ պետությունների ազգային և միջպետական ուղղորդման մեխանիզմների աշխատանքը վերանայելու վերաբերյալ, Լյուքսեմբուրգ, <https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/d5542e9c-0e92-11eb-bc07-01aa75ed71a1/language-en>

10. Բեյլզ, Ք., Հեսթեր, Օ., & Սիլվերման, Բ. Վ. (2015 թ.), Ժամանակակից ստրկությունը Միացյալ Թագավորությունում. քանի՞ զոհ: Կարևորություն, 12(3), 16–21: https://www.researchgate.net/publication/280972981_Modern_slavery_in_the_UK_How_many_victims

11. Ղազինյան, Ս. (2023), Ազգային մշտադիտարկման մեխանիզմները՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի զարգացման միջոց: Պետություն և իրավունք, 2(101), 54–65, <https://journals.yzu.am/index.php/state-and-law/article/view/11789/9331>

12. ՀՀ օրենք «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին», Ընդունվել է 17.12.2014, <https://www.arlis.am/hy/acts/198719/latest>

13. ՀՀ կառավարության որոշում N 1385-Ա «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին», 20.11.2008, <https://www.arlis.am/hy/acts/56984/latest>

14. ՀՀ կառավարության որոշում N 492-Ն «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին, զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին աջակցության տրամադրման կարգը, չափերը, ինչպես նաև հատուկ կատեգորիայի երեխաների ուղղորդման ընթացակարգը սահմանելու մասին», 05.05.2016, <https://www.arlis.am/hy/acts/151133/latest>

15. ՀՀ կառավարության որոշում N 1534-Ն «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից անձին որպես զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչելու ցուցիչները հաստատելու մասին», 06.10.2022, <https://www.arlis.am/hy/acts/169215/latest>

16. ՀՀ կառավարության որոշում N 1200-Ն «Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի աշխատակարգը, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհուրդ ներկայացվող հաշվետվության ձևը սահմանելու մասին», 15.10.2015, <https://www.arlis.am/hy/acts/155061/latest>

Ղազինյան Ս. - ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի և Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) դասախոս, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն, էլիասցե՝ sergey.ghazinyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 28.07.2025 թ., տրվել է գրախոսության 28.07.2025 թ., երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ Ա. Ասատրյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2025 թ.:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-163>

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
հանրային պաշտպանի գրասենյակի մոնիթորինգի
պատրասխանատու, Երևանի «Գլաձոր» համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

MARTIN MANUKYAN

*Responsible for monitoring the work of the Office of the
Public Defender of the Chamber of Advocates of the Republic of Armenia,
Lecturer at the Department of Jurisprudence of the Yerevan University “Gladzor,”
Candidate of Legal Sciences*

МАРТИН МАНУКЯН

*Ответственный за мониторинг работы
Аппарата Народного Защитника
Палаты адвокатов Республики Армения,
преподаватель кафедры юриспруденции
Ереванского университета «Гладзор»,
кандидат юридических наук*

**ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՆ (մաս II)**

**THE PRACTICE OF DEVELOPMENT OF WESTERN EUROPEAN
PARLIAMENTARISM (part II)**

**ПРАКТИКА РАЗВИТИЯ ЗАПАДНОЕВРОПЕЙСКОГО
ПАРЛАМЕНТАРИЗМА (часть II)**

Սկիզբը նախորդ համարում

Ներածություն

Արևմտաեվրոպական պառլամենտարիզմի հիմնական մոդելների և դրանց զարգացման պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ համակարգերում իշխանության կառուցվածքն ունի իր յուրահատկությունները: Պառլամենտարիզմը համընդհանուր կերպով հենվում

է սահմանադրական այն դրույթների վրա, որոնք ամրագրում են իշխանությունների տարանջատման սկզբունքը, զսպումների և հակակշիռների մեխանիզմները, տարատեսակ քաղաքական կուսակցությունների գործունեության ազատությունը բնակչության բարձր իրավաքաղաքական մշակույթը: Պառլամենտը խորհրդանշում և իրականացնում է ազգ-պետության, կամ որ նույնն է, ազգապետության քաղաքական ներկայացուցչությունը, ընդունում է պետության գլխի երդումը, ինքնիշխան ժողովրդի կողմից արտահայտում է վստահությունը կառավարությանը և նրան հանձնում լիազորությունները այլն: Հոդվածի հեղինակը կարծում է, որ հենց ներկայացուցչական ու գործադիր իշխանությունների միջև փոխհարաբերությունների առանձնահատկություններն են դրված սույն հոդվածում ներկայացված պառլամենտների (խորհրդարանների) դասակարգման հիմքում:

Հիմնական հետազոտություն

... Խորհրդարանական պրակտիկայում կիրառվում է ելույթ ունենալու համար պատգամավորների դիմումների երկու ձև՝ ըստ նախնական գրանցման և անմիջականորեն նախագահին դիմելով: Խորհրդականների մեծ մասում նախագահին ունի դիսկրեցիոն (սեփական հայեցողությամբ որոշելու) լիազորություն այդ հարցում: Դա բացատրվում է նրանով, որ նախագահը, նիստերը վարելով անկողնակալ ձևով, կարող է ապահովել առավել պատրաստված պատգամավորների ելույթները և որոշ չափով կանխել կրկնությունները՝ նույն դիրքորոշման արտահայտման դեպքում: Սակայն գործնականում նման կարգը հաճախ հանգեցնում է կամայականության, ինչպես նաև անհատ պատգամավորների ու խմբակցությունների իրավունքների խախտման: Այստեղ որոշակի երաշխիք է դառնում «աջ ձեռքի» կանոնը կիրառելը: Բազմաթիվ խորհրդարաններում նախագահը ոչ թե պարզապես առաջնորդվում է պատգամավորների ցուցակով ինչպես, օրինակ, **Ֆրանսիայում**, այլ խոսքի հնարավորություն է տալիս՝ ըստ գրանցման հաջորդականության: Գրանցված չլինելու դեպքում նախագահը, ինչպես ԱՄՆ կոնգրեսի սենատում, խոսքը տալիս է այն պատգամավորին, որն առաջինն է դիմել իրեն:

Էական երաշխիքների թվին պետք է դասել նաև խմբակցություններում քննարկումների ժամանակաբաշխում կատարելը: **ԱՄՆ** կոնգրեսի ներկայացուցիչների պալատում, **Կանադայի** խորհրդարանում քննարկումների ժամանակը բաշխվում է խմբակցությունների միջև հավասարապես: **Գերմանիայում**, **Ֆրանսիայում**, **Նիդեռլանդներում** խմբակցությունների միջև քննարկումների ժամանակը բաշխվում է ըստ խորհրդարանում նրանց ներկայացվածության աստիճանի:

Քննարկումները ժողովրդավարական եղանակով անցկացնելու և խորհրդարանի արդյունավետ աշխատանքն ապահովելու նպատակով, դրանց հնարավորին մեծ թվով պատգամավորների ներգրավելու կարևորությամբ հանդերձ՝ հարկավոր են նաև կանոններ, որոնք կերաշխավորեն խորհրդարանում օրինագիծը հստակ և հնարավորին արագ անցկացնելը:

Որպես կանոն՝ պատգամավորները, ի տարբերություն զեկուցողների, չեն կարող ելույթ ունենալ մեկ անգամից ավելի մեկ ընթերցման ընթացքում: Թեպետ կան նաև բացառություններ: Այսպես, **Բելգիայում**, **Նիդեռլանդներում**, **Նորվեգիայում** թույլատրվում է երկու ելույթ: Բավականին խիստ է սահմանվում նաև պատգամավորների ելույթների ժամանակաչափը: Օրինագծերի վերաբերյալ քննարկումներում **Դանիայի**, **Իսպանիայի** և **Շվեյցարիայի** խորհրդարաններում ելույթներին հատկացվում է 10 րոպե, **Կանադայում**՝ 20 րոպե, **Բելգիայում**՝ 30 րոպե: Որոշ խորհրդարաններում (**Շվեդիա**, **Իտալիա**) ելույթների ժամանակաչափը սահմանվում է ընտրովի՝ ըստ օրինագծի բարդության: Այսպես, **Իտալիայում** պատգամավորն

օժտված է 5-45 րոպե, բացառիկ դեպքերում՝ մինչև 90 րոպե ելույթ ունենալու իրավունքով:

Մի շարք խորհրդարաններում ելույթին հատկացվող ժամանակը չի սահմանափակվում, ինչը հնարավորություն է տալիս խոյահարելու օրենքի ընդունումը: Դրա վառ օրինակը «Ֆլիբուստերության» փորձն է **ԱՄՆ սենատում**: Սենատորը չի կարող զրկվել ձայնից, եթե չի խախտել կանոնակարգը: Իսկ քննարկումների ընթացքը կարելի է ընդհատել միայն հատուկ, բավականին խրթին ընթացակարգով: Քննարկումներն ընդհատելու վերաբերյալ խնդրագիրը պետք է գրվի առնվազն 16 սենատորի անունից: Այն քվեարկության է դրվում մեկ օրացուցային օր հետո: Որոշում ընդունելու համար անհրաժեշտ է ներկա գտնվող սենատորների առնվազն 3/5-րդի համաձայնությունը: Եթե առաջարկությունը չի ընդունվում, քննարկումներին հատկացված ժամանակը մնում է անսահմանափակ, և օրինագիծը շարունակում է մնալ օրակարգում, մի կողմ է մղվում այլ հարցերի քննարկումը: Իսկ եթե քննարկումները դադարեցնելու վերաբերյալ որոշումն ընդունվում է, օրինագծի վերաբերյալ յուրաքանչյուր ելույթի հատկացվում է մեկ ժամ: Ժամանակը բաշխվում է հավասարապես մեծամասնության և փոքրամասնության կուսակցությունների միջև: **100 ժամը լրանալիս** քննարկումներն ու մտքերի փոխանակումը դադարեցվում է, և օրինագիծը դրվում է քվեարկության:

Բացի «Ֆլիբուստերությունից» խորհրդարանական պրակտիկայում կիրառվում են օրինագծերը վիժեցնելու այլ միջոցներ: Դրանց թվում են՝ քննարկումները որոշակի ժամկետով կամ ինչ-որ պայմաններ բավարարելու համար անհրաժեշտ ժամկետով **հետաձգելու առաջարկությունները**, օրակարգերը փոփոխելու կամ օրինագիծը խորհրդարանի կամ պալատի հանձնաժողով (կոմիտե) հետ ուղարկելու առաջարկությունները: Այս թվարկումը կարելի է դեռևս շարունակել:

Երկրորդական կամ «անվիճահարույց» օրինագիծ քննարկելիս կամ օրենքն անհետաձգելիորեն ընդունելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է օրինագծերն անցկացնելու պարզեցված կամ արագացված կարգը:

Պարզեցնելու ձևերից մեկը օրինագիծը խորհրդարանի կամ պալատի հանձնաժողովներում քննարկելուց հրաժարվելն է: Նույնքան լայնորեն տարածված է քննարկումներից հրաժարվելու գործելակերպը, իսկ առարկությունների դեպքում՝ դրանք անցկացնելուն հատկացված ժամանակը կրճատելը: Բազմաթիվ խորհրդարաններում քննարկումները կարող են դադարեցվել **«գիյոտինի»** մեթոդով: Օրինագծի քննարկման համար սահմանված ժամանակը սպառվելուն պես, դրա առանձին հոդվածների ու փոփոխությունների քննարկումը ինքնստիճանի դադարեցվում է, և օրինագիծը դրվում է քվեարկության; Բավականին արդյունավետ է նաև «բանավեճեր կազմակերպելու» մեթոդը: **Ֆրանսիայում**՝ նախագահների ժողովը, **Գերմանիայում**՝ ավագների խորհուրդը մանրամասն սահմանում է քննարկումներ անցկացնելու կարգը, կառավարությունից և խորհրդարանական խմբակցություններից զեկուցողների ելույթների ժամանակահատվածը: Գոյություն ունեն նաև օրենսդրական գործընթացը պարզեցնելու այլ ձևեր: Այսպես, **ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի և Հնդկաստանի** խորհրդարաններում օրինագծի «ընթերցումը» կարող է սահմանափակվել միայն դրա անվանումը հրապարակելով, ինչը թույլ է տալիս օրենսդիրներին՝ լսելով հանձնաժողովի կամ կոմիտեի կարճ զեկույցը, անցնել օրինագծի քվեարկությանը:

Քվեարկությունը: Քվեարկություն անցկացնելու համար, որով ավարտվում է օրինագծերի քննարկումը, անհրաժեշտ է քվորում, որը երաշխավորվում է անհրաժեշտ թվով պատգամավորների ներկայությունը: Խորհրդարանների մեծ մասում քվորումը ձևավորվում է պալատի անդամների բացարձակ մեծամասնությամբ (50 տոկոս գումարած 1 պատգամավոր): **Ավստրիայում և Հունաստանում** քվորումը ձևավորվում է պալատի պատգամավորների թվի

1/3-ով: Նույն ժամանակ **Մեծ Բրիտանիայում** Համայնքների պալատը չունի քվորումի վերաբերյալ խիստ կանոններ, քվեարկությունն անցկացվում է պալատի **40 անդամի**, իսկ Լորդերի պալատում՝ նույնիսկ **3 անդամի** ներկայության դեպքում¹:

Յուրաքանչյուր խորհրդարանում կիրառվում են քվեարկության տարբեր ձևեր՝ ձայնով, ձեռք բարձրացնելով, անվանական, առանձին-առանձին, քվեաթերթիկներով և էլեկտրոնային միջոցների օգնությամբ: Քվեարկության ձևի ընտրությունը, եթե չկան որոշակի ցուցումներ այս մասին արձանագրության մեջ կամ կանոնակարգում, կախված է գլխավորապես օրինագծի կարևորությունից: Ոչ առաջնային օրինագծերը քվեարկվում են, որպես կանոն, ձայնով կամ ձեռք բարձրացնելով: Կարևոր հարցեր ընդգրկող կամ պատգամավորների կողմից բավականաչափ աջակցության չարժանացած օրինագծերը քվեարկության են դրվում ձայների ճշգրիտ հաշվարկ ապահովող ձևերով: Վերջիններիս շարքին են պատկանում անվանական, քվեաթերթիկներով, առանձին-առանձին քվեարկությունները:

ԱՄՆ-ում, Գերմանիայում առանձին-առանձին քվեարկություն կիրառվում է առավելապես այն դեպքերում, երբ կասկածներ են ծագում ձայնով կամ ձեռք բարձրացնելով քվեարկելիս հաշվարկների ճշտության վերաբերյալ: Այսպես, ԱՄՆ-ում առանձին-առանձին քվեարկությունը իրականացվում է օրինագծին կողմ կամ դեմ քվեարկողների հերթով, առանձին-առանձին ոտքի կանգնելով: **Գերմանիայում** պատգամավորները նիստերի դահլիճ են մտնում երեք դռներով, որոնց վրա փակցված են «կողմ», «դեմ» և «ձեռնպահ»: Առաջին դեպքում ձայների հաշվարկը իրականացնում են հաշվիչները՝ նշանակված պալատի անդամների թվից, իսկ երկրորդ դեպքում՝ պալատի քարտուղարները:

Քվեաթերթիկներով քվեարկությունը, որն ապահովում է պատգամավորների կամատարտահայտության գաղտնիությունը, խորհրդարանական առօրյայում կիրառվում է հազվադեպ: Եզակի բացառություններից է **Իտալիայի** պատգամավորների պալատի գործելակարգը, որտեղ քվեաթերթիկներով քվեարկություն պետք է իրականացվի 20 պատգամավորի պահանջով:

Քվեարկության առավել տարածված ձևն անվանական է, որի դեպքում ընթերցվում են ցուցակները, և յուրաքանչյուր պատգամավոր, իր անունը հնչելիս, պետք է պատասխանի «կողմ», «դեմ» կամ «ձեռնպահ» (ԱՄՆ-ում միայն «կողմ» և «դեմ»): Պատգամավորների պատասխանները գրանցվում և հրապարակվում են խորհրդարանական պաշտոնական հրատարակություններում: Անվանական քվեարկություն կիրառվում է խորհրդարանում սահմանադրական փոփոխություններ քննարկելիս, մի շարք խորհրդարաններում՝ ֆինանսական օրինագծեր հաստատելիս, ինչպես նաև պատգամավորների որոշակի մասի պահանջով (օրինակ՝ ԱՄՆ Կոնգրեսում պալատի անդամների 1/5-րդի):

Պատգամավորները անձամբ պետք է իրացնեն ձայնի իրենց իրավունքը: Միայն **Ֆրանսիայում, Լյուքսեմբուրգում** և որոշ այլ երկրներում թույլատրվում է քվեարկել լիազորագրով: Նույնքան եզակի բացառություն է «փոխադարձաբար հրաժարվելը» քվեարկությունից: Դա կիրառվում է **Կանադայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի** խորհրդարաններում այն դեպքում, երբ որևէ պատգամավոր այս կամ այն պատճառով չի կարող մասնակցել քվեարկությանը: Խորհրդարանում կամ պալատում հաստատված ուժերի հարաբերակցությունը չխախտելու համար նա կարող է պայմանավորվել ընդդիմադիր խմբակցության որևէ պատգամավորի հետ՝ փոխադարձաբար հրաժարվելու քվեարկությանը մասնակցելուց:

Օրինագծերն ընդունելու համար անհրաժեշտ է պատգամավորների ընդհանուր թվի ձայ-

¹ Ավելի հանգամանորեն տե՛ս, *Крылова Н.С.*, Британский парламент // Очерки парламентского права. М., 1993.

ների մեծամասնությունը, կամ, որ ավելի հաճախ է պատահում, պահանջվում է քվեարկությանը մասնակցած պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Սահմանադրական փոփոխություն, իսկ որոշ խորհրդարաններում ֆինանսական օրինագծեր ընդունելու համար պահանջվում է պալատի անդամների ձայների 2/3-րդը կամ 3/5-րդը:

Ձայները հավասար կիսվելիս վճռորոշ ձայնի իրավունք է ստանում պալատի նախագահը: **ԱՄՆ-ում** փոխնախագահը, որը Սահմանադրությամբ սենատի նախագահն է, քվեարկությանը մասնակցում է միայն այն դեպքում, երբ սենատորների ձայները կիսվում են հավասարապես: **Ֆինլանդիայում** և **Շվեդիայում** նման դեպքերում կատարվում է վիճակահանություն: **Նիդեռլանդներում** անցկացվում է կրկնակի քվեարկություն և ձայների հավասարությունը պահպանվելիս օրինագիծը մերժվում է:

Օրինագիծը ձայների անհրաժեշտ մեծամասնությամբ ընդունելով՝ ավարտվում է պալատում դրա անցկացման ընթացակարգը, իսկ երկպալատ խորհրդարանի դեպքում սկիզբ է դրվում հետագա քննարկմանը մյուս պալատում, որտեղ այն պետք է անցնի օրենսդրական գործընթացի նույն փուլերը և հավանության արժանանա նույն խմբագրությամբ: Քանի որ վերին պալատն անդրադառնում է ստորին պալատի կողմից արդեն ընդունված օրենքին, ապա սովորաբար շեշտը դրվում է դրա իրավական փորձաքննության, ինչպես նաև տարածաշրջանային շահերի արտահայտման վրա: Ընդ որում, ինչպես վկայում է խորհրդարանական փորձը, օրինագծերը հաճախ ենթարկվում են էական փոփոխությունների ու լրացումների, ինչն անհրաժեշտ է դարձնում դրանց տեքստերը պալատների միջև համաձայնեցնելը: Օրինագիծը պետք է ընդունվի նույնական ձևով: Պալատներից մեկում դրա մերժումը, կախված պալատների իրավական կարգավիճակից և նրանց փոխհարաբերությունների բնույթից, կարող է հանգեցնել հետևյալ միջոցների կիրառմանը. 1. մի շարք խորհրդարաններում որոշ օրինագծեր չեն փոխանցվում մյուս պալատին: Օրինակ՝ **Ավստրիայում** և **Գերմանիայում** բյուջեները քննարկվում են միայն ստորին պալատներում: **Իռլանդիայում**, եթե Սենատն օրինագծի վերաբերյալ որոշում չի կայացնում 180 օրվա ընթացքում (ֆինանսական օրինագծի դեպքում՝ 21 օր)՝ համարվում է ամբողջապես խորհրդարանի կողմից ընդունված:

2. Դասական միջոց է օրինագծի հաջորդաբար քննարկումը, որի ժամանակ այն փոխանցվում է պալատից պալատ պատճառաբանված եզրակացությամբ և որոշումների տարբերակներով, մինչև որ դրա տեքստը վերջնականորեն համաձայնեցվի: Այս միջոցը, որն ավանդում է «մաքոք», կիրառվում է **Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Մեքսիկայի, Շվեյցարիայի** խորհրդարաններում:

3. Մյուս միջոցը համաձայնեցման հանձնաժողովների ու կոմիտեների ստեղծումն է, որոնք ձևավորում են պալատները հավասարազորության հիմքերով՝ հավասար իրավունքներով և պատգամավորների հավասար թվով: Որպես կանոն՝ դրանք ստեղծվում են այն դեպքերում, երբ պալատների միջև առաջին տարբերակով համաձայնություն ձեռք չի բերվել: Բայց մի շարք խորհրդարաններում (**ԱՄՆ, Իսպանիա**) համաձայնեցման կոմիտեներին դիմելը օրինագծերը համաձայնեցնելու միակ ձևն է:

4. Ամենից քիչ տարածված ձևերից է պալատների համատեղ նիստեր անցկացնելը (**Նորվեգիա, Իսլանդիա**), քանի որ համարվում է, որ այդ դեպքում մեծ թվաքանակով պալատը կունենա առավելություն: Մասնավորապես, այնպիսի պատկեր է **Նորվեգիայի** խորհրդարանում, որտեղ ստորին պալատի եռակի թվային գերակշռության պայմաններում օրինագծերն ընդունվում են համատեղ նիստում ձայների 2/3-ով:

Պալատների օրենսդրական լիազորությունների հարցը յուրատեսակ լուծում է ստացել **Գերմանիայում**: Այստեղ կառավարության առաջարկած օրինագիծը նաև ներկայացվում է

Բունդեսրատ, ապա քննարկումից հետո փոխանցվում Բունդեստագ, որը հավանություն տալուց հետո անմիջապես հետ է ուղարկվում այն Բունդեսրատ: Վերջինս կարող է պահանջել երեք շաբաթվա ընթացքում հրավիրել համատեղ հանձնաժողով: Եթե հանձնաժողովը փոփոխություններ կատարի օրինագծում, ապա այն կրկին պետք է արժանանա Բունդեստագի հավանությանը: Եթե Բունդեսրատին չի բավարարում ընդունված որոշումը, և եթե խոսքն իր համաձայնությունը չպահանջող օրինագծի մասին է, ապա իրավունք ունի սրան հաջորդող երկու շաբաթվա ընթացքում բողոք ներկայացնել Բունդեստագի ընդունած օրենքի դեմ: Բունդեստագը կարող է մերժել այդ բողոքը, որը ձայների պարզ մեծամասնությամբ, եթե այն ընդունվել է Բունդեսրատում նման մեծամասնությամբ, կամ՝ ձայների որակյալ (2/3-րդի) մեծամասնությամբ, եթե այն նույն կերպ է ընդունվել Բունդեսրատում: Այդ բոլոր ընթացակարգային կանոնները, որոնք նպատակ ունեն ապահովելու օրենքի կշռադատված ու մտածված լինելը, գործնականում կարող են հանգեցնել բարդ քաղաքական իրավիճակի այն դեպքում, եթե Բունդեստագի ընդդիմադիր կուսակցությունները Բունդեսրատում ստանան ձայների 2/3-րդը, քանի որ իշխող կուսիցիան Բունդեստագում որակյալ մեծամասնություն չի կազմում: Դա կարող է հանգեցնել Գերմանական խորհրդարանի օրենսդրական գործունեության դադարեցմանը:

Օրինագիծը, որը նույն տեսքով չի հաստատվում կամ մերժվում է պալատներից մեկի կողմից աշխարհի բազմաթիվ խորհրդարաններում (**ԱՄՆ, Շվեյցարիա**) համարվում է չընդունված:

Նման հնարավորությունը բացառելու համար մի շարք երկրների սահմանադրություններ սահմանափակում են պալատներից մեկի հնարավորությունները: **Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ճապոնիայում, Ֆրանսիայում** ստորին պալատների որոշումները համարվում են մեծ ուժ ունեցող: **Մեծ Բրիտանիայում**, օրինակ Համայնքների պալատի հավանությանն արժանացած օրինագիծը, կարող է, ի հեճուկս Լորդերի պալատի առարկությունների, ուժի մեջ մտնել: **Գերմանիայում**, եթե օրինագիծը չպետք է պարտադիր համաձայնեցվի վերին պալատի հետ, Բունդեստագը կարող է ընդունել օրենքը ձայների բացարձակ մեծամասնությամբ:

Վետոյի իրավունքը կիրառվում է հիմնականում նախագահական և կիսանախագահական հանրապետություններում և համարվում է օրենսդրական գործընթացի ինքնուրույն փուլ:

Դասական օրինակ է **ԱՄՆ** նախագահի **վետոյի իրավունքը**: Նախագահը մերժում է օրինագիծն ամբողջապես՝ իր առարկություններով վերադարձնելով այն պալատին, որից ստացել է: Վետոն հաղթահարելու համար պալատներից յուրաքանչյուրը (սկզբում այն մեկը, որի վերադարձվել է օրինագիծը) պետք է կրկին ընդունի անվանապես՝ գրանցելով պալատի մատյանում, այն ձայների 2/3-րդով: Այդ դեպքում քվեարկությունը տեղի է ունենում անվանապես՝ գրանցելով պալատի մատյանում, այն, թե պալատի յուրաքանչյուր անդամ ինչպես է քվեարկել: Բարեհաջող քվեարկության դեպքում օրինագիծն ուժի մեջ է մտնում առանց նախագահի վավերացման: Այն ուժի մեջ է մտնում այն դեպքում, երբ Նախագահը տասն օրվա ընթացքում (չհաշված կիրակի օրերը) իրեն եզրակացությունը չի տալիս, եթե միայն այդ ընթացքում Կոնգրեսը չի ընդհատում նստաշրջանը: Վերջին դեպքում («գրպանային վետո») օրինագիծը փաստացի մերժվում է և ենթակա չէ վերանայման՝ նշված կարգով²:

Սովորական օրենքներից զատ՝ խորհրդարանները կարող են ընդունել նաև այլ ակտեր: **ԱՄՆ-ում** այդպիսիք են, օրինակ, պալատների համատեղ կամ համընկնող բանաձևերը: Դրանց առանձնահատկությունն այն է, որ նշյալ ակտերը ուժի մեջ մտնելու համար անհրա-

² *Баренбойм Д.*, Вето президента США. – Советское государство и право. Москва, 1977, с. 78.

Ժեշտ չէ նախագահի հավանությունը (այսինքն՝ նախագահը չի կարող կիրառել հետաձգվող վետո): **Ֆրանսիայում** հավանություն տալու հատուկ կարգ է սահմանված հիմնարար օրենքների համար, որոնք ընդունվում են Սահմանադրության անմիջական թելադրանքով և լրացնում են այն: **Մեծ Բրիտանիայում** և մի շարք այլ երկրներում էական տարբերություն կա ֆինանսական և ոչ ֆինանսական օրինագծերի միջև և այլն:

Հենց խորհրդարանն է օժտված երկրի Հիմնական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու իրավունքով, որի համար, սովորաբար, պետք է ստանալ ձայների որակյալ մեծամասնությունը երկու պալատներում: Երբեմն նախատեսվում է նաև սահմանադրությունը փոփոխելու ավելի բարդ կարգ: Այսպես, **Ֆրանսիայում** 1958 թվականից գործող Սահմանադրության մեջ, որն արդեն թվով 15-րդն է, փոփոխություններ կատարվել են կամ խորհրդարանական կոնգրեսների օգնությամբ, որոնց ժամանակ միավորվել են Սենատի և Ազգային ժողովի անդամների կամ համազգային հանրաքվեների ընթացքում՝ կազմակերպված հանրապետության նախագահի նախաձեռնությամբ: Պետք է նկատել, որ խորհրդարանն արձակելու և հանրաքվե նշանակելու իրավունքները Ֆրանսիայի հինգերորդ հանրապետության նախագահի համար ժողովրդին ուղիղ դիմելու և նրա հետ ուղիղ կապ հաստատելու միջոցներ են:

Այսպիսով, արևմտաեվրոպական խորհրդարանների ինքնուրույնության աստիճանն իրենց գլխավոր՝ օրենսդրական գործառույթն իրականացնելիս հարաբերականորեն մեծ չէ, և հակառակը՝ մեծ է գործադիր իշխանության ազդեցությունը՝ օրինագիծը նախաձեռնելու և անցկացնելու գործընթացում: Միայն ԱՄՆ-ում օրենսդրության ոլորտում գոյություն չունի ակնհայտ գերակշռություն հոգուտ նախագահի և նրա վարչակազմի: Սակայն, այստեղ էլ մշակվել են Կոնգրեսի և կոնգրեսականների վրա ճնշում բանեցնելու արդյունավետ ձևեր, որոնք երկրորդ համաշխարհայինից հետո ավելի ու ավելի լայնորեն են կիրառում Արևմտյան Եվրոպայի երկրները:

Խոսքը լոբբիստական կազմակերպությունների մասին է, որոնք ապահովում են այս կամ այն «շահագրգիռ խմբին» ձեռնտու օրինագծերն ու որոշումները նախապատրաստելն ու Կոնգրեսում «անցկացնելը»³:

Հասարակական շահերի ներկայացուցչությունը ժողովրդավարական համակարգերի բարեհաջող գործառույթյան կարևորագույն գործոններից է: Սակայն, շահերի ներքին ներգրավվածությունը քաղաքական գործընթացին տարբեր է, թերևս առավել մեծ ծավալների է հասել ԱՄՆ-ում: Հենց ամերիկյան քաղաքական պրակտիկայում 200 տարի առաջ սաղմնավորվեց ու ձևավորվեց շահերի ներկայացուցչության հատուկ ձևը՝ **լոբբիզմը**: Ըստ սահմանման՝ լոբբիզմը որոշումների կայացման և, համապատասխանաբար, այդ գործընթացին անմիջականորեն մասնակից անձանց վրա ազդելու գործունեություն է: Լոբբիստական գործունեությունն այն մեխանիզմներից է, որոնց օգնությամբ շահերի խմբերը մասնակցում են քաղաքական որոշումներ կայացնելուն և գործնականում իրացնում են իրենց շահերը, նպատակներն ու խնդիրները, քանի որ նման խմբերի պատվերն էլ հենց կատարում է լոբբիստը կամ լոբբիստական խումբը:

Լոբբիստը կարող է լինել շահերի խմբի անդամ կամ էլ գործել վարձատրության դիմաց որպես նման խմբի գործակալ: Լոբբիստներն իրենք իրենց հաճախ անվանում են ներկայացուցիչներ, խորհրդատուներ, գործակալներ կամ հանրային կապերի ոլորտի մասնագետներ: 20-րդ դարում ի հայտ եկան լոբբիստական հանրույթներ՝ լոբբիստական ընկերություններ, որոնք ամբողջովին ներգրավված էին իրենց հաճախորդների շահերը «գլուխ բերելու» գործունեու-

³ Любимов А.П., Лоббизм как конституционно-правовой институт, М., 1998, с. 23-25.

թյան մեջ: Լոբբիստական գործառույթներ իրականացնում են բազմաթիվ իրավաբանական և փաստաբանական գրասենյակներ: Նման ընկերություններն աշխատում են պայմանագրով տարբեր ձեռնարկությունների, արհմիությունների և այլ հաստատությունների հետ՝ ստանձնելով քաղաքական իշխանության մակարդակում նրանց շահերն արդյունավետորեն պաշտպանելու պարտավորություն: Առավել խոշոր լոբբիստական ընկերությունները կարող են ունենալ միաժամանակ մինչև 50 այցելու, որպիսին կարող են լինել ինչպես անհատները, այնպես էլ ձեռնարկություններն ու անգամ պետությունները: Քաղաքական ոլորտում եռանդուն գործունեություն ծավալող լոբբիստական կազմակերպությունները ներկայացնում են առաջին հերթին մեծ բիզնեսի և արհմիությունների շահերը: **Ամերիկացիներն առաջինն են, որ փորձեցին լոբբիստական գործունեության վերահսկողությունը դնել իրավական հիմքերի վրա:** 1946 թ. սկսեց գործել Կոնգրեսի վերակազմավորման մասին դաշնային օրենքը, որի երրորդ բաժինը կարգավորում էր լոբբիստական գործընթացը և որոշակի պահանջներ էր ներկայացնում պրոֆեսիոնալ լոբբիստներին: Այդ օրենքը, որը ներառում էր լոբբիզմն օրենսդիր մարմնում, գործեց շուրջ կես դար, սակայն, դրա գործունեությունը չէր տարածվում իշխանության գործադիր մարմինների լոբբիզմի և անուղղակի լոբբիզմի ոլորտի վրա: Լոբբիզմի մասին առաջին օրենքի ոչ լիարժեք մշակվածությունն ազդեց գործառույթյան անարդյունավետության վրա: Պահանջվեց գրեթե կեսդարյա լարված աշխատանք ու պայքար Կոնգրեսում, այն լոբբիստական գործունեության ծավալման մասին նոր օրենքով փոխարինելու համար: 1995 թ. դեկտեմբերին նախագահի ստորագրելուց հետո օրենքն ուժի մեջ մտավ: Այն տարբերվում է առավել մանրագնի մշակվածությամբ, լոբբիստների և այն անձանց, ում հետ նրանք կապեր են հաստատում, կանոնակարգման վերաբերյալ հստակ պահանջներով, գրանցման փաստաթղթերի և հաշվետվությունների նկատմամբ, պատասխանատու անձանց կողմից մշտական վերահսկողությամբ, և, որպես պարտադիր պայման, հանրությանը լոբբիստների գործունեությանը ծանոթացնելով՝ նրանց հաշվետվությունները հրապարակելու միջոցով: Օրենքը տարածվում է բացառապես պրոֆեսիոնալ լոբբիստների վրա, այսինքն՝ նրանց, ովքեր վարձատրվում են կատարած աշխատանքի համար: Օրենքն այդպիսին չի համարում նրանց, ովքեր գործում են հասարակական հիմունքներով, ուստի, այնտեղ նշվում են լոբբիստական գործունեությունից ստացվող եկամուտների նվազագույն չափերը և կատարվող ծախսերը, որոնցից պակաս լինելու դեպքում այդ անձինք չեն համարվում լոբբիստներ և նրանց համար պարտադիր չեն գրանցման ընթացակարգն ու իրենց գործունեության վերահսկողությունը: Լոբբին, ինչպես վերը նշեցինք, այնքան մեծ ազդեցություն ունի ներկայացուցչական մարմնի աշխատանքի վրա, որ **երբեմն այն անվանում են ամերիկյան Կոնգրեսի «երրորդ պալատ»:**

Ժամանակակից աշխարհում լոբբիզմը դարձել է ժողովրդավարական քաղաքական գործընթացի պարտադիր հատկանիշը, սակայն, դրա դրսևորվելը տարբեր երկրներում, դրա դրսևորումները, կախված են այս կամ այն ժողովրդի տնտեսական, սոցիալական ու քաղաքական կյանքի պատմականորեն ձևավորված բազմաթիվ հանգամանքներից:

Ֆրանսիայում լոբբիստներին ուղղակիորեն գործել թույլ չտալու, այսինքն՝ օրենսդիր ու գործադիր իշխանությունների ներկայացուցիչների, անվանի քաղաքական գործիչների վրա անմիջականորեն չազդելու համար ստեղծվել են համապատասխան պետական կառույցներ՝ պետության և քաղաքացիական հասարակության ընդերքում ձևավորված խմբերի շահերը կարգավորելու նպատակով: Նմանօրինակ կառույցներից է Տնտեսական և սոցիալական խորհուրդը, որի վրա դրված են խորհրդատվական գործառույթներ: Խորհրդի կազմում ընդգրկված են արհմիությունների, մասնավոր արդյունաբերական բիզնեսի, պետական ձեռնարկությունների, գյուղատնտեսական արտադրողների, ինչպես նաև կոոպերատիվ կազմա-

կերպությունների, արհեստավորների, սոցիալական գործունեության ոլորտի ներկայացուցիչներ: Ավելի քան երկու հարյուր մարդ, որոնց մի մասին նշանակում է կառավարությունը, մյուսներին ընտրում են շահագրգիռ կազմակերպությունները: Տեղերը համամասնորեն բաժանված են ըստ ներկայացված կազմակերպական շահերի նշանակության: Այսպես, ամենից շատ տեղերն ունեն արհմիությունները՝ 69, մասնավոր ձեռնարկություններին հատկացված է 27 տեղ, գյուղատնտեսական արտադրողներին՝ 25: Մյուսները ներկայացված են ավելի համեստ: Ֆրանսիայի կառավարությունը հատուկ 40 տեղ է հատկացրել առավել անվանի գիտնականներին և հասարակական-քաղաքական գործիչներին, որոնք հարգված են մշակույթի աշխատողների շրջանում: Խորհրդում քննարկվում են բոլոր օրինագծերն ու օրենսդրական առաջարկությունները, որոնց վերաբերյալ այն տալիս է փորձագիտական եզրակացություններ: Կառուցվածքային առումով խորհուրդը բաղկացած է ինը բաժանմունքներից, որոնք քննարկում են սոցիալական բնույթի, զբաղվածության, տարածաշրջանների, տնտեսության, կենսամակարդակի, ֆինանսների, արտաքին կապերի, արտադրական գործունեության, գիտական հետազոտությունների ու տեխնոլոգիաների, արդյունաբերական համալիրի զարգացման վերաբերյալ որոշակի խնդիրներ, ինչպես նաև ընդհանուր տնտեսական և իրավիճակային հարցեր: Յուրաքանչյուր բաժանմունք պատրաստում է վերլուծական հաշվետվություններ, փորձագիտական եզրակացություններ, որոնք ներկայացվում են խորհրդի ղեկավար մարմինների՝ բյուրոյի քննարկմանը: Համաձայն Սահմանադրության՝ խորհուրդը իրավունք ունի Սենատ և Ազգային ժողով ուղարկելու իր ներկայացուցչին՝ երկրի վերաբերյալ կարևոր այս կամ այն հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու: Տնտեսական և սոցիալական խորհրդի յուրատեսակ կարգավիճակը, որը կապող օղակի գործառույթ է կատարում քաղաքացիական հասարակության շահագրգիռ խմբերի և պետական իշխանության մարմինների միջև, թույլ է տալիս նրան կարգավորել հասարակության մեջ առաջացող ինչպես մասնավոր խմբային շահերի, այնպես էլ հանրային բնույթի պահանջմունքների հոսքերը:

Կենտրոնական խորհրդակցական մարմնից բացի՝ Ֆրանսիայում օրինականացվել է այսպես կոչված «հետազոտական խմբերի» մի ամբողջ ցանց, որոնք գործում են պաշտոնական հիմունքներով, օրինակ՝ ինֆորմատիկայի և ազատությունների ազգային հանձնաժողովը, Վիճակագրության ազգային խորհուրդը, սպառազինությունների ինքնարժեքով արտադրության կոմիտեն: Նրանք պատվիրակում են օրենսդիր մարմինների ներկայացուցիչներին կապ հաստատելու համապատասխան խորհրդարանական մշտական հանձնաժողովների և այդ կազմակերպությունների միջև՝ օրենսդրական գործընթացում համագործակցելու նպատակով:

Խմբային շահերը ներկայացնելու և իրացնելու պատկերն այլ է **Գերմանիայում**: Այդ երկրի Սահմանադրությունը, հռչակելով միավորումների, ընկերությունների և կոալիցիաների ազատությունը, դրանց օժտել է համապատասխան խնդրանքներով ու դիմումներով պետական իշխանության մարմինների դիմելու իրավունքով, այսինքն՝ պետության օրենսդիր և գործադիր մարմինների վրա ազատորեն ազդելու հնարավորությամբ: Պետական կառույցների ներկայացուցիչները համագործակցում են խմբային շահեր ներկայացնող անձանց հետ Բունդեստագի և դաշնային կառավարության այսպես կոչված «գործունեության կարգի» շրջանակում: «Դաշնային նախարարությունների միասնական կարգը», որն իրավունք է տալիս օրինագծերի մշակման աշխատանքներում ներգրավելու արտագերատեսչական փորձագետների, խորհրդականների, «շահագրգիռ արհմիութենական շրջանակների» այլ ներկայացուցիչներին: Դաշնային նախարարություններին առընթեր գործում են խորհրդակցական խորհուրդներ, կոմիտեներ, հանձնաժողովներ, որոնք ապահովում են շահագրգիռ խմբերի ներկայացուցիչների մասնակցությունը օրինագծերի պատրաստման աշխատանքներին: Ընդ որում,

շահագրգիռ խմբերն իրենք կարող են նախաձեռնել այս կամ այն օրինագիծը: **Գերմանական Բունդեստագի համար պարտադիր է հերթական օրինագծի քննարկմանը հրավիրել բոլոր կազմակերպություններին, ում շահերն այդ օրինագիծը շոշափում է:**

Գերմանիայի քաղաքական կյանքի ինքնատիպությունն այն է, որ բարձրագույն օրենսդիր մարմնի պատգամավորները կարող են ազատորեն, առանց որևէ սահմանափակման զբաղվել լրբբիստական գործունեությամբ կամ շփման մեջ մտնել լրբբիստների հետ: Պատգամավորից պահանջվում է լոկ հայտարարել շահագրգիռ կազմակերպությունների հետ իր կապերի մասին: Պատգամավորների գործողությունների հարաբերական ազատությունը այդ ուղղությամբ հանգեցնում է միջին վիճակագրական հետևյալ պատկերին. Բունդեստագի յուրաքանչյուր պատգամավորին 20 արտաքին լրբբիստ: Եթե Գերմանական օրենսդրությունն արգելում է պետական պաշտոնյաներին ստանալու ցանկացած տիպի «կողմնակի» վարձատրություն, ապա պատգամավորների և կուսակցական գործիչների համար օրենքը դիտում է նման գործողությունը որպես նվիրատվություն և հարկում է այն: Պատգամավորից պահանջվում է պաշտոնապես ձևակերպել իրեն տրված ցանկացած նվիրատվություն; Նման գործողությունը կարելի է համարել օրենսդիրի կաշառում, որը օրենքով չի արգելվում: Պատգամավորների գործողությունները բացառապես պատգամավորական լիազորություններով սահմանափակելու փորձերը հաջողության չեն հասել: Պատգամավորի գործունեության ազատությունը հնարավորություն է ընձեռում նրանց համատեղելու իրենց օրենսդրական անմիջական պարտականությունները որևէ և նույնիսկ մի քանի ձեռնարկատիրական կառույցներում: Օրինակ, պատգամավոր Օտտո Լամբուորֆին (2000-2004), որը 9 դիտորդական խորհրդի անդամ էր և պաշտոններ ուներ 10 տարբեր միավորումների վարչություններում ու հիմնադրամների հոգաբարձուների խորհուրդներում, միաժամանակ Գերմանիայում ներկայացնում էր ճապոնական NTT հեռահաղորդակցային կորպորացիայի շահերը:

Լոբբիզմի նմանօրինակ հարաբերականորեն ազատ դրսևորումը ծնում է դրա հանդեպ քննադատական վերաբերմունք գերմանական հասարակության կողմից: Բուն «լոբբիզմ» եզրույթն ընդունվում է բնակչության կողմից բացասաբար: Մի շարք հայտնի գերմանական քաղաքական գործիչներ ու քաղաքագետներ պնդում են, որ ընդունվի լրբբիստական գործունեությունը սահմանափակող և կանոնակարգող հատուկ օրենք՝ առաջին հերթին երկրի խորհրդարանում:

Լոբբիստական գործունեության փորձը ցույց է տալիս, որ ամենահզոր լոբբիստը եղել և կա բիզնեսը: Դրա ազդեցությունը կարող է դուրս գալ ազգային սահմաններից և դրսևորվել «վերազգային» մակարդակում: Լոբբիզմի վերաբերյալ գոյություն ունեցող օրենսդրությունները, որպես կանոն, առանձնակի ուշադրություն են հատկացնում արտասահմանյան լրբբիստների կամ արտասահմանյան ընկերության շահերը ներկայացնող լրբբիստների գործունեությանը: Դա արվում է, առաջին հերթին, ազգային տնտեսական շահերը պաշտպանելու համար: Եվրոպայում դա անելը հետզհետե ավելի դժվար է դառնում՝ հաշվի առնելով եվրոպական տնտեսական ինտեգրվածության բարձր աստիճանը: Համատեղությամբ օրենքների գերակայությունը ազգայինների նկատմամբ ստիպում է բիզնես շահագրգիռ խմբերին լոբբիզմի ենթարկել եվրոպական կառույցները՝ դրանց օգնությամբ այս կամ այն երկրում գործող օրենսդրությունը հոգուտ իրենց շահերի փոփոխելու նպատակով: Ինտեգրացիոն գործընթացների մշտական դինամիկ զարգացումը և Եվրոպական տնտեսական հանրակցության վերազգային մարմինների իրավասության շրջանակների ընդլայնումը նպաստում է լոբբիզմի բուռն առաջընթացին Եվրոպական մակարդակում: Այսպես, ըստ պաշտոնական տվյալների, 2021-2022 թթ. Բրյուսելում աշխատում էր շուրջ 3000 լոբբիստական կազմակերպություն և ակտիվ լոբ-

բիստական գործունեության մեջ ներգրավված էր 10000 լոբբիստ: Ընդ որում՝ առևտրային շահերի խմբերը հարյուրապատիկ գերազանցում էին հասարակական շահերի խմբերին: Գործերի նման վիճակը ստիպում է ԵՄ պաշտոնական մարմիններին միջոցներ ձեռնարկել՝ կանոնակարգելու իրենց հարաբերությունները շահագրգիռ խմբերի և կազմակերպությունների հետ: Այդ նպատակով ԵՄ-ի շրջանակում ստեղծվել է հատուկ խորհրդակցական մարմին՝ **Տնտեսական և սոցիալական կոմիտե**, որը պետք է կազմակերպի հանդիպումներ՝ գործարարների, վարձու աշխատողների և զանազան շահերի խմբերի շահերին առընչվող հարցերը քննարկելու համար: «Եվրալոբբիստները» թիրախավորում են նախևառաջ այն կառույցները, որոնցով «անցնում» են համապատասխան օրինագծերը, որոնք խորհրդակցությունների արդյունքներով դառնում են հրահանգներ, այսինքն՝ ԵՄ-ի պաշտոնական նորմատիվ ակտեր: Նախքան օրենքի ուժ կստանա օրինագիծը քննարկման է դրվում Եվրախորհրդարանում, Եվրոպայի խորհրդում, մշտական ներկայացուցիչների կոմիտեում և, այսպես կոչված՝ հատուկ կոմիտեներում: Օրինաստեղծ գործընթացում կարևոր դեր է հատկացվում Եվրահանձնաժողովին, որը սկզբնական փուլում հրապարակում է նախագծերը և հենց ինքն էլ պետք է համագործակցության հրավիրի շահագրգիռ անձանց դրա վրա աշխատելու համար: ԵՄ կառույցների վրա ավելի արդյունավետ ներգործելու համար շահագրգիռ խմբերը նաև ձգտում են կազմակերպվել եվրոպական «ազգային» մակարդակում: Այդ ուղղությամբ առավել հաջող են գործում գործարար շրջանակները: Հիմնադրվել է Եվրոպայի արդյունաբերողների և գործատուների համադաշնությունների միությունը, գործում են արդյունաբերության և տնտեսության տարբեր ճյուղերին առընչվող միավորումներ, դրանց շարքին կարելի է դասել Քիմիական արդյունաբերության եվրոպական խորհուրդը, ինչպես նաև բանկերի Եվրոպական ասոցիացիան: Ձևավորվում և գործում են բիզնեսի ոչ պաշտոնական կառույցներ, ինչպես օրինակ՝ «Արդյունաբերողների եվրոպական կլոր սեղանը», որը գործում է ակումբների սկզբունքով, որի անդամների ցանկում նշված է Եվրոպայի խոշորագույն ընկերությունների տերերի և կառավարիչների 45 անուն:

Կյանքը ցույց է տալիս, որ խորհրդակցականներին լոբբիզմի ենթարկելու փորձը ունի ինչպես բացասական (ընտրողների աչքից թաքուն պատգամավորի կախվածությունը շահերի խմբերից, կոռուպցիա և այլն), այնպես էլ դրական հետևանքներ:

Հանրապետական կառավարմամբ մի շարք երկրներում խորհրդարանականները մասնակցում են պետության ղեկավարի ընտրությանը (**ԳԴՀ, Ֆրանսիա**): Խորհրդարանական մեծամասնության հիմքի վրա ֆորմալ առումով ձևավորվում է կառավարությունը: ԱՄՆ-ում, որտեղ կառավարությունը ձևավորողը նախագահն է, Սենատը մասնակցում է տարբեր պետական պաշտոնների նշանակման գործընթացին: Նախագահական և նախագահական-խորհրդարանական հանրապետություններում խորհրդարանն օժտված է իմպիչմենտի իրավունքով, այսինքն՝ իրավունք ունի պատասխանատվության կանչելու և դատական կարգով քննելու բարձրաստիճան պաշտոնատար անձանց, այդ թվում՝ նաև նախագահի կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերը (պետական դավաճանություն, կաշառակերություն և այլ ծանր հանցանքներ ու արարքներ): Ընդ որում, երկու պալատներն էլ օժտված են այդ իրավունքով: Ներկայացուցիչների պալատն իմպիչմենտ իրականացնելու բացառիկ առանձնաշնորհ ունի, իսկ դատական նիստերը տեղի են ունենում Սենատում ԱՄՆ Գերագույն դատարանի գերագույն դատավորի նախագահությամբ: Մեղադրանքը պետք է արժանանա Սենատի ներկա անդամների երկու երրորդի հավանությանը: Սկսած 1787 թվականից՝ յոթ դաշնային դատավորներ են պաշտոնանկ արվել այդ ընթացակարգի կիրառման արդյունքում: 1868 թվականին իմպիչմենտ էր սպառնում ԱՄՆ նախագահ Էնդրյու Ջեքսոնին, սա-

կայն Սենատն ընդամենը մեկ ծայնի առավելությամբ դեմ քվեարկեց: 1974 թվականին ԱՄՆ ներկայացուցիչների պալատի դատական կոմիտեն համաձայնություն տվեց երեք հոդվածներով իմպիչմենտի ընթացակարգ սկսելու նախագահ Ռ. Նիքսոնի նկատմամբ՝ իշխանությունը չարաշահելու, հետաքննությանը հակադրվելու և Կոնգրեսի հանդեպ անհարգալից լինելու մեղադրանքներով: Նախքան ներկայացուցիչների պալատում այդ որոշումը քվեարկության դնելը նախագահ Նիքսոնը հրաժարական տվեց: Վերջին անգամ ԱՄՆ Կոնգրեսի կողմից իմպիչմենտի ընթացակարգ գործնականում իրականացվել է 1998-99 թթ. նախագահ Քլինթոնի նկատմամբ:

Խորհրդարանական վերահսկողության անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն այն բանով, որ նման վերահսկողությունը զսպումների ու հակակշիռների համակարգի տարր է՝ իշխանության իրականացման համակարգում այլ այն բանով, որ հատկապես խորհրդարանի այդ գործառույթն իրացնելով՝ **ժողովուրդը, որպես իշխանության միակ աղբյուր և կրող, կարող է վերահսկել իր կողմից իշխանական լիազորություններով օժտված իշխանության մարմիններին**: Նման վերահսկողություն իրականացվում է անուղղակիորեն՝ ժողովրդի ներկայացուցիչների՝ պատգամավորների միջոցով: Կառավարության գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալը և գործադիր իշխանության գործունեությունը վերահսկելու ամենատարածված ձևերն են՝ ա) կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները քննարկելը, բ) խորհրդարանականների գրավոր և բանավոր հարցերը, գ) հարցապնդումները, դ) վերահսկիչ և քննիչ հանձնաժողովները, ինչպես նաև խորհրդարանի այլ հատուկ մարմիններ ստեղծելն և դրանց գործունեությունը և խորհրդարանի կամ դրա պալատների կողմից հատուկ պաշտոնատար անձանց նշանակելը, ե) կառավարության խորհրդարանական պատասխանատվության ինստիտուտը:

Աշխարհի երկրների մեծ մասում խորհրդարաններում որոշակի ժամանակ է հատկացվում խորհրդարանականների հարցերին կառավարության անդամների բանավոր պատասխանների համար (այսպես կոչված «կառավարության ժամ»): **Անգլիայի** խորհրդարանում բանավոր հարցումներին տրվում են նախնական ծանուցմամբ՝ 48 ժամ առաջ, հատուկ դրա համար սահմանված «հարցումների ժամանակահատվածում»: Բացի դրանից՝ խորհրդարանի յուրաքանչյուր անդամ ունի լրացուցիչ հարցման իրավունք առանց նախնական ծանուցման: Վարչապետին հարցեր են տրվում ավանդաբար ձևավորված կանոններով. այսպես, ընդդիմության ղեկավարը կարող է նրան ուղղել երեք- չորս հարց՝ առանց նախնական ծանուցման: Խորհրդարանականներն անձամբ, անհապաղ ծանուցմամբ բանավոր հարցեր ուղղելու թույլտվություն տալիս է խորհրդարանի խոսնակը՝ հաշվի առնելով դրանց անհետաձգելիությունը: Նախարարի պատասխանը հարցին չի կարող ուղեկցվել ցանկացած տիպի քննարկմամբ կամ քվեարկությամբ:

Նախարարներին գրավոր հարցումները կարող են տրվել ցանկացած ժամանակ: Գրավոր հարցումը ենթադրում է նաև կառավարության գրավոր պատասխան ստանալը, ինչի համար սահմանվում է որոշակի ժամկետ: **Հարցն ու պատասխանը կարող են հրապարակվել խորհրդարանի պաշտոնական տեղեկագրում**:

Հարցապնդումը նախատեսում է ոչ միայն հարցապնդման պատասխանը ստանալը, այլև քննարկումներ կազմակերպելը, որոնք կարող են ավարտվել հարց բարձրացնելով և կառավարությանը վստահություն հայտնելու հարցը քվեարկության դնելով: Հենց դա է պատճառը, որ որոշ երկրներում հարցապնդումը կառավարության ջանքերով վերացվել է (**Ֆրանսիա**): Ֆորմալ առումով խորհրդարանական հարցումները հիմնական միջոցներն են, որոնց օգնությամբ օրենսդրական իշխանության ներկայացուցիչները կարող են հաշվետվություն պահան-

ջել նախարարներից և ստուգել նրանց աշխատանքը: Գործնականում հարցումների ընթացակարգը նախնական ծանուցման եղանակով և դրանց քանակը սահմանափակելով կարգավորելը հանգեցնում է քննարկումների կրճատմանը կամ քաղաքական ներկայացումների, որը խաղարկում են իշխող կուսակցության ներկայացուցիչները:

Արևմտաեվրոպական երկրներում բավականաչափ հազվադեպ երևույթ է մշտապես գործող, կամ ժամանակավոր, հատուկ ստեղծված հանձնաժողովների կողմից վերահսկիչ կամ քննչական գործառույթներ իրականացնելը: Սակայն, **Իտալիայում** խորհրդարանական հետաքննությունները հաճախ մեծ գլխացավանք են դառնում իշխող շրջանակների համար: Սյուպես, լուրջ արձագանք գտավ հատուկ հանձնաժողովների գործունեությունը՝ նվիրված գործադրության ու չքավորության հարցերի, տրեստների գործունեության և հատկապես մաֆիայի հանցագործությունների հետաքննությունը: «Անշուշտ, որոշ հանձնաժողովների ստեղծումը կառավարության համար լուր ժամանակ ձգելու կամ հարցի լուծումը հետաձգելու հնարավորություն էր,- նշել է Կ. խոլոդկովսկին: Եվ չնայած հանձնաժողովների աշխատանքների ձգձգումներին, չի կարելի թերագնահատել դրանց նշանակությունը: Նրանց գործունեության արդյունքում հաճախ հանրության սեփականությունն էր դառնում ավելի ամբողջական ու հավաստի պատկերը, քան, այն, ինչ մատուցում էր մամուլը: Մաֆիայի հանցագործությունների հետաքննության հարցերով հանձնաժողովի աշխատանքի վերաբերյալ բոլոր քննադատական կարծիքներով հանդերձ՝ հենց նա մեծապես նախապատրաստեց հասարակական կարծիքը ի պաշտպանություն այն վճռական հակամաֆիական միջոցների, որոնք կիրառվեցին 2000-ական թվականներին»⁴:

Իր հերթին **ԱՄՆ-ում**, որտեղ բացակայում են վերահսկողության այլևայլ ձևերը և գործադիր իշխանությունը կրողի խորհրդարանական պատասխանատվությունը, դրանք զգալի չափով փոխհատուցվում են տարբեր կոմիտեների ակտիվությամբ, որոնց շրջանակում, մասնավորապես, տեղի է ունենում նախագահի աշխատակազմի և Կոնգրեսի դիրքորոշումների համաձայնեցում: Հանձնաժողովների վերահսկիչ-քննչական գործունեությունը առաջին հերթին նպատակ ունի կանխելու կամ խանգարելու պետական ապարատի այնպիսի գործողությունները, որոնք կարող են վնաս պատճառել հասարակության շահերին:

«Այն չափով, «ինչ չափով որ զանգվածային լրատվության էլեկտրոնային միջոցները (**ԱՄՆ-ում**) ենթարկվում են պետական կարգավորման՝ դրանց կողմից որոշակի հաճախականություններ օգտագործելու առումով, դրանք ենթարկվում մեն միայն երկկողմ հանձնաժողովներին, որոնք նշանակվում են սահմանված ժամկետով և պատասխանատու են ոչ թե նախագահի, այլ Կոնգրեսի և դատական իշխանությունների առջև»⁵», - նշում է Ռ. Նոյշտադտը:

Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատում գոյություն ունի այսպես կոչված սոցիալական կոմիտեների համակարգ, որոնցից յուրաքանչյուրը նախարարություններից որևէ մեկի նկատմամբ իրականացնում է վերահսկողական գործառույթներ: Արդյունքում՝ կառավարության ամբողջ վարչաբյուրոկրատական ապարատը գտնվում է խորհրդարանականների մշտական վերահսկողության ներքո, և վերլուծաբաններից շատերի կարծիքով՝ **դա է բրիտանական քաղաքացիական ծառայության կոռումպացվածության ցածր աստիճանի պատճառը՝ մի կողմից և օրինապաշտության բարձր աստիճանի պատճառը՝ մյուս կողմից:**

Մի շարք եվրոպական երկրներում ստեղծվել և գործում է վարչակազմի հարցերով խորհրդարանական լիազորի՝ **օմբուդսմենի** ինստիտուտը: **Շվեդիայում** այն գործում է 1908 թվա-

⁴ Холодковский К.Г., Парламент первой республики: Положительный и отрицательный опыт..., с. 153.

⁵ Нойштадт П., Президентская власть и мышление президенты, М., 1977, с. 12.

կանից: Դա Ռիկստագի իրավաբանական լիազոր ներկայացուցիչն է, որը կոչված է հետևելու բոլոր մակարդակների պաշտոնատար անձանց գործողությունների օրինականությանը՝ հետաքննելով և կանխելով իշխանությունը չարաշահելու և օրենքը խախտելու դեպքերը: Նա օժտված է պաշտոնյաներին կարգապահական պատասխանատվության կանչելու իրավունքով՝ պարիտետային սկզբունքով ձևավորված հանձնաժողովներում (մինչև 1974 թվականը օմբուդսմենը իրավունք ուներ նաև քրեական պատասխանատվության կանչելու, ներկայում այն միայն վարչակազմի վերահսկիչ մարմին է): Խորհրդարանական չորս օմբուդսմեններն ընտրվում են չորս տարի ժամկետով (նրանցից մեկը գլխավորն է): Ցանկացած քաղաքացի, որը կարծում է, որ իր իրավունքները խախտվել են պաշտոնյաների կողմից, կարող է բողոք ներկայացնել օմբուդսմենին: Տարվա ընթացքում ստացվում է նմանօրինակ մինչև 3000 բողոք: Դրա գրեթե մեկ երրորդն արագորեն ճանաչվում է անհիմն: Բողոքի մեծ մասն ուղղված է բյուրոկրատիկ դեմ:

1967 թ. օմբուդսմենի (արդարադատության հարցերով խորհրդարանական լիազորի) ինստիտուտը հիմնադրվեց **Մեծ Բրիտանիայի** խորհրդարանում: Սակայն այդ ինստիտուտի հնարավորությունները այստեղ զգալիորեն սահմանափակվեցին: Լիազոր ներկայացուցիչը նշանակվում է ոչ թե խորհրդարանի, այլ միապետի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ: Նրա նախաձեռնությամբ հետաքննություններ սկսելու հնարավորությունը գործնականում բացառված է, իսկ Համայնքների պալատի պատրաստած հաշվետվությունները չեն քննարկվում: Այսպիսով, բրիտանական պրակտիկան ընթացավ օմբուդսմենի լիազորությունները կրճատելու ճանապարհով, որի վերահսկողությունը, դրանից զատ, չի տարածվում վարչական ապարատի օղակներից շատերի վրա:

Եզրակացություն

Արևմտաեվրոպական պետությունների մեծ մասը դասվում է խորհրդարանական կառավարման մոդելին:

Նախագահական և խորհրդարանական մոդելները համադրելիս կարելի է արձանագրել հետևյալ սկզբունքային տարբերությունները.

1. ԱՄՆ նախագահական համակարգում նախագահն ու Կոնգրեսի կազմն ընտրվում են առանձին ընտրություններով, մինչդեռ, խորհրդարանական կառավարման պայմաններում ընտրությունները միաժամանակ լուծում են խորհրդարանի և կառավարության ձևավորման հարցը, ինչպես նաև տարբեր կոալիցիաների ստեղծման հնարավորություն են ընձեռում,

2. Խորհրդարանական կառավարման դեպքում խորհրդարանն է նշանակում կառավարությունը, և ինքն էլ կարող է ցրել այն: Ամերիկյան Կոնգրեսը, սակայն, չունի կառավարությունը ցրելու լիազորություն: Այն չի կարող պաշտոնանկ անել նախագահին՝ Կոնգրեսում քաղաքական տարակարծությունների կամ մեծամասնության փոփոխության պատճառով: Միայն բացառիկ դեպքերում, երբ նախագահը մեղադրվում է հանցագործության մեջ, ներկայացուցչական մարմինը կարող է նրա առնչությամբ բողոք ներկայացնել Սենատ, և վերջինս կարող է զրկել նրան նախագահի պաշտոնից՝ ձայների երկու երրորդով,

3. և հակառակը, **ԱՄՆ նախագահը** չի տիրապետում կարևորագույն կարգավորիչ միջոցների՝ Կոնգրեսի հետ հարաբերություններում: Նա չի կարող արձակել կոնգրեսը, ինչպես օրինակ՝ Մեծ Բրիտանիայի վարչապետը Համայնքների պալատը, և նշանակել նոր ընտրություններ,

4. և եթե **Մեծ Բրիտանիայում**՝ դասական խորհրդարանական կառավարմամբ երկրում, վարչապետը Համայնքների պալատի անդամ է, ապա ԱՄՆ Սահմանադրությունը բացառում է

գործադիր պաշտոնի և պատգամավորական մանդատի համատեղումը: Նախագահն ու նրա կառավարության անդամները չեն կարող ընդգրկվել Կոնգրեսում (դրանով հանդերձ, փոխ-նախագահը միաժամանակ Սենատի նախագահն է),

5. խորհրդարանական կառավարման ժամանակ գոյություն ունի առանձին գործադիր իշխանություն: Պետական ներկայացուցչական խնդիրներն իրականացնում է նախագահը կամ միապետը, իսկ իրական կառավարական իշխանությունը պատկանում է կառավարության ղեկավարին՝ վարչապետին կամ կանցլերին: ԱՄՆ-ում ընդհակառակը՝ նախագահը միավորում է պետության գլխի և կառավարության ղեկավարի գործառույթները,

6. ԱՄՆ նախագահը ֆորմալ առումով (բայց ոչ սահմանադրական տիրույթում) զուրկ է օրենսդրական նախաձեռնության հնարավորությունից: Նա միայն իրավունք ունի վետո դնելու Կոնգրեսի որոշումների վրա: Նախագահի վետոն կարող է հաղթահարվել ձայների երկու երրորդով: Խորհրդարանական կառավարման դեպքում կառավարությունն ունի օրենսդրական նախաձեռնության հնարավորություն, և այն ունի վետոյի լիակատար իրավունք (օրինակ՝ Մեծ Բրիտանիայում կամ ԳԴՀ-ում) ներկայացված օրենքների նկատմամբ:

Շարունակելի.....

Ամփոփագիր: Արևմտաեվրոպական պառլամենտարիզմի հիմնական մոդելների և դրանց զարգացման պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում իշխանության կառուցվածքն ունի իր յուրահատկությունները: Պառլամենտարիզմը համընդհանուր կերպով հենվում է սահմանադրական այն դրույթների վրա, որոնք ամրագրում են իշխանությունների տարանջատման սկզբունքը, զսպումների և հակակշիռների մեխանիզմները, տարատեսակ քաղաքական կուսակցությունների գործունեության ազատությունը, բնակչության բարձրիրավաքաղաքական մշակույթը: Պառլամենտը խորհրդանշում և իրականացնում է ազգ-պետության, կամ որ նույնն է, ազգապետության քաղաքական ներկայացուցչությունը, ընդունում է պետության գլխի երդումը, ինքնիշխան ժողովրդի կողմից արտահայտում է վստահություն կառավարությանը և այլն: Հոդվածի հեղինակը գտնում է, որ հենց ներկայացուցչական ու գործադիր իշխանությունների միջև փոխհարաբերությունների առանձնահատկություններն են դրված սույն հոդվածում ներկայացված՝ պառլամենտների (խորհրդարանների) դասակարգման հիմքում:

Annotation. Analysis of the main models of Western European parliamentarism and the practice of their development shows that the structure of power in them has its own characteristics; parliamentarism is generally based on constitutional provisions that enshrine the principle of separation of powers, mechanisms of checks and balances, freedom of activity of various political parties, and high legal and political culture of the population. Parliament symbolizes and implements the political representation of the national state, or what is the same, the nation-state; accepts the oath of the head of state; expresses confidence in the government on behalf of the sovereign people; etc. The author of the article believes that it is the specifics of the relationship between the representative and executive powers that form the basis of the classification of parliaments presented in this article.

Аннотация. Анализ основных моделей западноевропейского парламентаризма и практики их развития показывает, что структура власти в них имеет свои особенности; парламентаризм в целом базируется на конституционных положениях, закрепляющих принцип разделения властей, механизмы сдержек и противовесов, свободу деятельности различных политических партий, высокую правовую и политическую культуру населения. Парламент символизирует и реализует политическое представительство национального государства или, что то же самое, нации-государства, принимает присягу главы государства, выражает доверие правительству от имени суверенного народа и т.д. Автор статьи полагает, что именно особенности

взаимоотношений представительной и исполнительной власти положены в основу представленной в данной статье классификации парламентов.

Քանալի բառեր - պետություն, Սահմանադրություն, քաղաքական կուսակցություններ, խորհրդարան, պառլամենտարիզմ, ժողովրդավարություն, պարզամավորներ, օմբուդսմեն, գործադիր իշխանություն, վետո, օրենսդրական նախաձեռնություն:

Keywords: Constitution, political parties, parliament, parliamentarism, democracy, deputies, ombudsman, executive power, veto, legislative initiative.

Ключевые слова: государство, Конституция, политические партии, парламент, парламентаризм, демократия, депутаты, омбудсмен, исполнительная власть, veto, законодательная инициатива.

Օգտագործված գրականության ցանկ

1. Крылова Н.С., Британский парламент // Очерки парламентского права. М., 1993.
2. Баренбойм Д., Вето президента США. - Советское государство и право. Москва, 1977.
3. Любимов А.П., Лоббизм как конституционно-правовой институт. М., 1998.
4. Холодковский К.Г., Парламент первой республики: Положительный и отрицательный опыт.
5. Нойштадт П., Президентская власть и мышление президенты. М., 1977.

Մանուկյան Մ. - Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի մոնիտորինգի պատասխանատու, Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, էլիասցե՝ martin_manukyan_1955@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 03.04.2025 թ., տրվել է գրախոսության 03.04.2025 թ., երաշխավորվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի եւ իրավունքի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2025 թ.:

ԵԴ/36794/02/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2025 թվականի հունիսի 26-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Սրբուհի Խարբությանի հայցի ընդդեմ Մուշեղ Դավթյանի՝ անշարժ գույքի նկատմամբ համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու և այդ գույքից բաժին առանձնացնելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.03.2023 թվականի որոշման դեմ Մուշեղ Դավթյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սրբուհի Խարբությանը պահանջել է ճանաչել իր համատեղ սեփականության իրավունքը Երևանի Նոր Արեշի 34-րդ փողոցի թիվ 34 տան նկատմամբ և այդ տնից առանձնացնել իրեն պատկանող 1/2-րդ բաժինը, իսկ այն առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության ու պատասխանող Մուշեղ Դավթյանի կողմից իրեն պատկանող բաժնի շուկայական արժեքը վճարելուց հրաժարվելու դեպքում այդ տունը վաճառել հրապարակային սակարկություններով և ստացված գումարը բաշխել իրենց միջև՝ իրենց բաժիններին համաչափ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 29.09.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ ճանաչվել է Սրբուհի Խարբությանի համատեղ սեփականության իրավունքը Երևանի Նոր Արեշի 34-րդ փողոցի թիվ 34 տան նկատմամբ, ինչպես նաև վճռվել է Երևանի Նոր Արեշի 34-րդ փողոցի թիվ 34 տունը վաճառել հրապարակային սակարկություններով և վաճառքից առաջացած գումարը բաշխել Սրբուհի Խարբությանի ու Մուշեղ Դավթյանի միջև՝ յուրաքանչյուրին իր 1/2-րդ բաժնին համապատասխան. Մուշեղ Դավթյանից հոգուտ Սրբուհի Խարբությանի բռնագանձվել է 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.03.2023 թվականի որոշմամբ Մուշեղ Դավթյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 29.09.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Մուշեղ Դավթյանը (ներկայացուցիչ Հրանտ Կարապետյան):
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սրբուհի Խարբությանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-59րդ և 62-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր ստացված գույքը հանդիսանում է նրա միանձնյա սեփականությունը, և այդ գույքի իրացման արդյունքում գոյացած միջոցների հաշվին այլ գույք ձեռք բերելու պարագայում տեղի է ունենում նվեր ստացված գույքի փոխակերպում մեկ այլ գույքով, որի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի կարող ծագել ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության իրավունք: Այլ կերպ ասած, եթե միանձնյա սեփականության օտարման արդյունքում գոյացած դրամական միջոցները՝ որպես նվեր ստացված անշարժ գույքի համարժեքային օբյեկտ, չեն հանդիսացել ամուսինների համատեղ սեփականությունը, ապա բացառապես այդ միջոցներով ձեռք բերված գույքը ևս պետք է դիտարկվի որպես դրանց համարժեք փոխակերպման արդյունք՝ կրկին միանձնյա սեփականություն:

Ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ վիճելի գույքը ձեռք է բերվել բացառապես որպես նվեր ստացված գույքի օտարումից գոյացած միջոցներով, նշված իրավական հարցը նրանք քննարկման առարկա չեն դարձրել: Ավելին՝ գործի համար նշանակություն չունեցող են համարվել և չեն գնահատվել իր կողմից ներկայացված այն ապացույցները, որոնցով հիմնավորվել է, որ վեճի առարկա անշարժ գույքը ձեռք է բերել միայն այդ միջոցներով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.03.2023 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

2.1. Սրբուհի Խարբությանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Վերաքննիչ դատարանը կայացրել է օրինական ու հիմնավորված դատական ակտ:

Վիճելի անշարժ գույքը հանդիսանում է համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռքբերված գույք և չի դասվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված բացառությունների շարքին, քանի որ այն ձեռք է բերվել գրանցված ամուսնության ընթացքում հատուցելի պայմանագրի արդյունքում, այսինքն՝ չի հանդիսանում նվեր կամ ժառանգություն ստացած գույք: Մուշեղ Դավթյանի փաստարկն առ այն, որ ինքը սեփականության իրավունքով՝ միայն իրեն պատկանող 32.680.000 ՀՀ դրամի մի մասը՝ 21.400.000 ՀՀ դրամը, փոխակերպել է վիճելի անշարժ գույքով, որի արդյունքում, ըստ էության, նոր գույք ձեռք չի բերել, որևէ նշանակություն չունի սույն քաղաքացիական գործի լուծման համար, քանի որ վիճելի անշարժ գույքը ձեռք է բերվել համատեղ ամուսնության ընթացքում, որպիսի պայմաններում նշանակություն չունի այն հանգամանքը, թե արդյոք գույքը ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Մուշեղ Դավթյանը և Սրբուհի Խարբուլյանն ամուսնացել են 22.08.2000 թվականին **(հատոր 1-ին, գ. թ. 24)**.

2) 19.07.2008 թվականին կնքված անշարժ գույքի (բնակելի տուն) նվիրատվության պայմանագրով Բորիս Դավիդյանը Մուշեղ Դավթյանին է նվիրել Երևանի Դավիթ Բեկի փողոցի թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույքը, իսկ Մուշեղ Դավթյանը որպես նվեր է ընդունել այն: Նշված պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով **(հատոր 1-ին, գ. թ. 50)**.

3) 02.03.2010 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Մուշեղ Դավթյանը վաճառել է, իսկ Լարիսա Նիկոյանը որպես սեփականություն ձեռք է բերել Երևանի Էրեբունի համայնքի Դավիթ-Բեկի փողոցի թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույքը: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ նշված անշարժ գույքի վաճառքի գինը կազմել է 32.680.000 ՀՀ դրամ: Նշված պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով **(հատոր 1-ին, գ. թ. 48)**.

4) 18.03.2010 թվականին կնքված անշարժ գույքի (բնակելի տուն, հող, նկուղ) առուվաճառքի պայմանագրով Ռոբերտ Կարապետյանը և Սիլվա Հակոբյանը վաճառել են, իսկ Մուշեղ Դավթյանը որպես սեփականություն ձեռք է բերել Երևանի Նոր Արեշի 34-րդ փողոցի թիվ 34 հասցեում գտնվող անշարժ գույքը: Կողմերի համաձայնությամբ նշված անշարժ գույքի վաճառքի գինը կազմել է 21.400.000 ՀՀ դրամ: Նշված պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով, իսկ այդ պայմանագրից բխող իրավունքը գրանցվել է, որի հիման վրա Մուշեղ Դավթյանին 22.03.2010 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2426338 վկայականը **(հատոր 1-ին, գ. թ. 44-47)**.

5) Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունու անձնագրային բաժանմունքի կողմից 25.11.2021 թվականին տրված թիվ 8/7 6259 տեղեկանքի համաձայն՝ Սրբուհի Խարբուլյանին 19.09.1998 թվականին տրվել է ՀՀ քաղաքացու անձնագիր, որը ազգանվան փոփոխման կապակցությամբ փոխանակվել է և 15.09.2000 թվականին վերջինիս ՀՀ քաղաքացու անձնագիր է տրվել Սրբուհի Դավթյան անձնական տվյալներով: 05.03.2021 թվականին ամուսնալուծության վկայականի հիմքով, ազգանվան փոփոխման կապակցությամբ, վերջինիս ՀՀ քաղաքացու անձնագիր է տրվել Սրբուհի Խարբուլյան անձնական տվյալներով **(հատոր 2-րդ, գ. թ. 64)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի հոդվածի 1-ին և 2-րդ կետերի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները, անհրաժեշտ է համարում անդրադառնալ ամուսիններից մեկին անձնական սեփականության իրավունքով պատկանող գույքը (այսուհետ՝ «անձնական գույք») ամուսնության ընթացքում օտարելու

արդյունքում ստացված դրամական միջոցների, ինչպես նաև այդ միջոցներով ամուսնության ընթացքում ձեռք բերված այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման առանձնահատկություններին:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անհատական օգտագործման գույքը (հագուստը, կոշիկը և այլն), բացառությամբ թանկարժեք իրերի և պերճանքի առարկաների, եթե նույնիսկ այն ձեռք է բերվել ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին, համարվում է այն ամուսնու սեփականությունը, որն այդ գույքն օգտագործել է:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով ավելացրել են այդ գույքի արժեքը (հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն), եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև կնքված պայմանագրով:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքը որպես ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրություն է համարում ՀՀ քաղաքացիական օրենսգրքը՝ միաժամանակ չբացառելով այդ հարաբերությունների կարգավորումն ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված համապատասխան իրավակարգավորմամբ օրենսդիրը նախատեսել է, որ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով: Միևնույն ժամանակ օրենսդիրը կարգավորել է նաև մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի ունեցած գույքի, ինչպես նաև **ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր** կամ ժառանգություն **ստացած գույքի պարկանելիության հարցը**՝ սահմանելով, որ այդպիսի գույքը հանդիսանում է միայն տվյալ ամուսնու սեփականությունը: Նշված գույքի շարքին դասվում է նաև անհատական օգտագործման այն գույքը (հագուստը, կոշիկը և այլն), որն օգտագործվում է տվյալ ամուսնու կողմից, բացառությամբ թանկարժեք իրերի և պերճանքի առարկաների, եթե նույնիսկ այն ձեռք է բերվել ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին:

Բացի այդ, օրենսդիրը չի բացառել նաև այնպիսի դեպքը, երբ որոշակի հանգամանքների առկայության պայմաններում ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել ամուսինների համատեղ սեփականությունը: Այդպիսին դեպք է, օրինակ, այն իրավիճակը, երբ պարզվում է, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով

ավելացրել են ամուսիններից մեկին սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքը (հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն), եթե ամուսինների միջև կնքված պայմանագրով դրա հետ կապված այլ բան չի նախատեսվել:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ամուսինների համատեղ սեփականության հարցին, մասնավորապես արձանագրել է, որ ամուսինների միջև համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե այն որ ամուսինն է ձեռք բերել, ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված, միևնույնն է, հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը՝ բացի ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքի (*տես Ռաֆայել Աբազյանը և Անժիկ Երիցյանն ընդդեմ Ռուբեն Աբազյանի ու մյուսների թիվ 3-415(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201րդ հոդվածի իմաստով բացառությունների թվին է դասել նաև անհատույց սեփականաշնորհման հիմքով ձեռք բերված գույքը (*տես Գարիկ Կուրդիյանն ընդդեմ Թագուհի Կուրդիյանի և մյուսների թիվ 3-506 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը, Ռուզաննա Ծափուրյանն ընդդեմ Գևորգ Թաթոսյանի և մյուսների թիվ ԵԱԲԴ/2304/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2009 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ ամուսնության ընթացքում ամուսիններից մեկին սեփականության իրավունքով պատկանող գույքը կարող է ճանաչվել ամուսինների համատեղ սեփականության իրավունքը հետևյալ վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին ներդրումներ կատարելը.

բ) գույքի արժեքի նշանակալի չափով ավելանալը.

գ) կատարված ներդրման և արժեքի ավելացման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը (*տես Ռուզաննա Խաչիկյանն ընդդեմ Անդրե Զելոյանի թիվ 3-422(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.06.2008 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ բացահայտելով նշված պայմաններից առաջինի բովանդակությունը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին ներդրումները կարող են դրսևորվել դրամական միջոցներ տրամադրելով, գույքի արժեքի նշանակալի չափով ավելացմանը հանգեցնող բնեղեն միջոցներ տրամադրելով, ինչպես նաև սեփականության իրավունքի ճանաչման պահանջ ներկայացնող ամուսնու անձնական աշխատանքի միջոցով, որի արդյունքում առկա դրամական կամ այլ ռեսուրսների հետ միասին իրականացվել է հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն:

Անդրադառնալով գույքի արժեքի նշանակալի չափով ավելացմանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գույքի արժեքի նշանակալի չափով ավելանալը կարող է դրսևորվել գույքի վրա կատարված որոշակի փոփոխություններով, որոնք ավելացնում են գույքի որակական (շահագործման, սպառողական և այլ) հատկանիշները և, հետևաբար, նաև գույքի արժեքը:

Օրենսդիրն ընդհանուր կերպով թվարկում է այն գործողությունները, որոնք կարող են հանգեցնել գույքի արժեքի նշանակալի չափով ավելացմանը: Դրանք դրսևորվում են

հիմնական վերանորոգման, վերակառուցման, վերասարքավորման ձևերով, որոնք, սակայն, սպառիչ չեն:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ պայմանի ապահովման համար անհրաժեշտ է որոշել գույքի շուկայական արժեքը՝ մինչև ներդրումները կատարելը և դրանից հետո:

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նաև հավելել, որ գույքի արժեքի ավելացումը պետք է լինի նշանակալի, ինչը յուրաքանչյուր գործով գնահատման ենթակա հանգամանք է:

Անդրադառնալով կատարված ներդրման և արժեքի նշանակալի ավելացման միջև պատճառահետևանքային կապի առկայության պայմանին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն վերը նշված երկու պայմանների տրամաբանական շարունակությունն է, ուստի միայն վերը նշված երկու պայմանների առկայությունից հետո դատարանը պետք է քննարկի պատճառահետևանքային կապի առկայությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ներկայացված հայցի հիմքի շրջանակներում յուրաքանչյուր գործով դատարանները պետք է քննարկման առարկա դարձնեն ամուսիններից մեկի ներդրման առկայությունը, դրա արդյունքում գույքի արժեքի նշանակալի չափով ավելացումը կամ ամուսինների ընդհանուր գույքի հաշվին ներդրման առկայությունը և դրա արդյունքում գույքի արժեքի նշանակալի չափով ավելացումը (*տես Լուսինե Ասլանյանն ընդդեմ Գագիկ Ասլանյանի թիվ ԿԴԴ/0415/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև ամուսիններից մեկի կողմից նրանց ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքն օտարելու արդյունքում ստացված դրամական միջոցների նկատմամբ ամուսինների համատեղ սեփականության իրավունք ունենալու հարցին: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դրամը՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես՝ մի դեպքում այն կարող է հանդիսանալ քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնուրույն, մեկ այլ դեպքում՝ որպես այդ հարաբերությունների համարժեքային (էկվիվալենտային) օբյեկտ: Ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքային զանգվածի կազմում դրամական միջոցները կարող են ներգրավվել՝

- ուղղակիորեն, օրինակ՝ որպես ամուսիններից մեկի աշխատավարձ, հոնորար, շահաբաժին կամ այլ եկամուտ:

- անուղղակիորեն՝ որպես այդ գույքային զանգվածի կազմի մեջ մտնող մեկ այլ գույքի համարժեք, օրինակ՝ ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի վաճառքից ստացված դրամական միջոցները:

Վերջինիս պարագայում, ըստ էության, տեղի է ունենում ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող **մի գույքի փոխակերպում մեկ այլ գույքով** (*տես Սամվել Մելիքյանն ընդդեմ Առլեթ Ավաքյանի թիվ ԵԿԴ/1418/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած վերը նշված դիրքորոշումները և նպատակ ունենալով զարգացնելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածը, անհրաժեշտ է համարում անդրադառնալ ամուսիններից մեկի անձնական գույքն ամուսնության ընթացքում օտարելու արդյունքում ստացած միջոցների հաշվին ձեռք բերված նոր գույքի նկատմամբ ամուսինների սեփականության իրավունքի ծագման հարցին:

Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 80-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ նույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան պատկանող գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: (...):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ: Քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝

քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: (...):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցները միասին տիրապետում և օգտագործում են ընդհանուր գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ, անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Մինչև 23.05.2020 թվականը գործած խմբագրությամբ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ չի թույլատրվում սեփականատիրոջ գույքը հարկադրաբար վերցնել կամ առգրավել, բացի այն դեպքերից, երբ օրենքով նախատեսված հիմքերով՝

1) պարտավորությունների համար գույքի վրա տարածվում է բռնագանձում (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 281-րդ հոդված)։

2) օտարվում է այն գույքը, որն օրենքի ուժով չի կարող պատկանել տվյալ անձին (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 282-րդ հոդված)։

3) սեփականությունն օտարվում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդված)։

4) վերցվում են անտնտեսվար պահվող մշակութային արժեքները (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 284-րդ հոդված)։

5) կատարվում է ռեկվիզիցիա (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 285-րդ հոդված)։

6) կատարվում է բռնագրավում (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 288-րդ հոդված)։

7) իրավաբանական անձը դատարանի վճռով վերակազմակերպվում կամ լուծարվում է (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ և 67-րդ հոդվածներ)։

8) գույքն օտարվում է՝ նույն օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ կետով, 208-րդ և 220-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում:

Նկատի ունենալով այն, որ անձնական գույքի փոխակերպումն ընդհանուր համատեղ սեփականության ենթադրում է գույքի սեփականատիրոջ՝ օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու հիմնարար իրավունքի էական սահմանափակում այն իմաստով, որ **նման փոխակերպումից հետո գույքի սեփականատերը գրկվում է տվյալ գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավագործությունները բացառապես իր հայեցողությամբ իրականացնելու**

հնարավորությունից, գույքը տիրապետելու և օգտագործելու իրավագործություններն օրենքի ուժով իրականացնում է համատեղ սեփականության մյուս մասնակցի հետ միասին, իսկ տնօրինման իրավագործությունը՝ նրա համաձայնությամբ, ինչպես նաև ընդհանուր սեփականության մասնակիցը ձեռք է բերում ընդհանուր գույքում իր բաժինը որոշելուց հետո այն բաժանելու կամ ընդհանուր գույքից իր բաժինն առանձնացնելու իրավունք՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի անձնական գույքն ընդհանուր սեփականության փոխակերպվելու հնարավորության հարցին անդրադառնալ սեփականության իրավունքի անձեռնմխելիության, այդ իրավունքի սահմանափակման նպատակի իրավաչափության, համարժեքության ու սեփականության իրավունքի ապահովման շարունակականության տեսանկյունից:

Նախ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, ինչպես նշվեց վերը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է ամուսինների անձնական գույքը համատեղ սեփականության փոխակերպելու միայն մեկ հիմք՝ սահմանելով, որ ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով ավելացրել են այդ գույքի արժեքը (հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն), եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև կնքված պայմանագրով:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սեփականության անձեռնմխելիության սկզբունքը, սեփականագրկման հետ չկապված հիմքերով սեփականության իրավունքի դադարման դեպքում սեփականության իրավունքի շարունակականությունն ապահովելու սահմանադրաիրավական անհրաժեշտությունը, որն արձանագրվել է Սահմանադրական դատարանի 18.04.2006 թվականի թիվ ՍԴՈ-630 և 13.07.2010 թվականի թիվ ՍԴՈ-903 որոշումներով, հարկ է համարում դրսևորել անհրաժեշտ հետևողականություն և փաստել, որ **ամուսնու անձնական սեփականություն հանդիսացող գույքի օտարման պարագայում ևս կարող է տեղի ունենալ սեփականություն հանդիսացող մի գույքի (օտարվող անձնական գույքի) փոխակերպում մեկ այլ գույքով (դրամական միջոցների կամ այլ գույքի), ընդ որում՝ առանց սեփականության իրավունքի բնույթի փոփոխության, այն է՝ անձնական սեփականությունն ընդհանուր համատեղ սեփականության փոխակերպվելու,** եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև համաձայնությամբ:

Սահմանադրական դատարանը 31.01.2017 թվականի ՍԴՈ-1340 և 14.09.2021 թվականի ՍԴՈ-1609 որոշումներով իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ Սահմանադրության 60րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերում ամրագրված դրույթները կազմում են սեփականության իրավունքի հիմնական բովանդակությունը՝ ամրագրելով այն իրավագործությունները, որոնցից յուրաքանչյուր ոք անարգել պետք է կարողանա օգտվել սեփականության հիմնական իրավունքն իրականացնելիս, այսինքն՝ անձը պետք է առանց որևէ խոչընդոտի կարողանա իրականացնել *սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու իրավունքը, օգտագործելու իրավունքը, տնօրինելու, ինչպես նաև ժառանգելու իրավունքը:* Միևնույն ժամանակ, սահմանադիրը որոշակի դեպքերում և նպատակներով պայմանավորված՝ սեփականության իրավունքին միջամտությունը համարել է ընդունելի: Մասնավորապես՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն, ըստ որի՝

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, որից բխում է, որ օրենքը պետք է բավարարի իրավական օրենքին ներկայացվող՝ Սահմանադրական

դատարանի որոշումներում բազմիցս արտացոլված, պահանջները,

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել **հանրության շահերի** կամ **այլոց** հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով,

- սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի **որոշակիության և համաչափության** սահմանադրական սկզբունքներին ու չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ նշված պայմանների առկայությունն անհրաժեշտ է իրավունքն իրավաչափորեն սահմանափակելու համար:

Դիտարկելով ամուսնու անձնական սեփականություն համարվող գույքն ընդհանուր համատեղ սեփականության փոխակերպումը որպես միջամտություն սեփականության իրավունքին և Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված սահմանադրական դրույթի իմաստով այդ իրավունքի սահմանափակում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենքով ուղղակիորեն ու որոշակիորեն չնախատեսված հիմքով անձնական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումն անհարկի և անհամամասն միջամտություն է սեփականության սահմանադրական իրավունքին, ինչը, իր հերթին, հակասում է հիմնական իրավունքների ու ազատությունների վերաբերյալ սահմանադրական դրույթների էության անխախտելիության սահմանադրական պահանջին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ԵԿԴ/1418/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումից ուղղակիորեն բխում է, որ **ընդհանուր գույքի** օտարման արդյունքում գույքի նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը փոխակերպվում է դրամական միջոցների նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի. **նման փոխակերպման արդյունքում փոփոխվում է միայն սեփականության իրավունքի օբյեկտը, իսկ սեփականության իրավունքի մասնակիցները մնում են անփոփոխ:** Հետևում է նաև, որ, հաշվի առնելով դրամի, որպես սեփականության օբյեկտի համարժեք լինելու առանձնահատկությունը, անձնական գույքը դրա դրամային համարժեքի, իսկ վերջինս, իր հերթին, այլ գույքի վերածվելու պարագայում իրավունքի փոխակերպված օբյեկտի (համապատասխանաբար՝ դրամական միջոցների և դրանց հաշվին ձեռք բերված այլ գույքի) նկատմամբ ևս ծագում է անձնական, այլ ոչ ընդհանուր համատեղ սեփականության իրավունք՝ անկախ նշված փաստն ամուսնության ընթացքում տեղի ունեցած լինելու իրողությունից, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանի վերը ներկայացված դիրքորոշման տրամաբանությամբ տեղի է ունենում «գույքի նկատմամբ անձնական սեփականության իրավունքի» փոխակերպում դրա համարժեքի՝ դրամական միջոցների նկատմամբ անձնական սեփականության իրավունքի, իսկ ապա՝ դրամական միջոցների նկատմամբ անձնական սեփականության իրավունքի փոխակերպում այլ անձնական գույքի:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին ընդգծել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ կետի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ ամուսինների անձնական գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն միայն այն պարագայում, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարված ներդրումների հաշվին նշանակալի չափով ավելացրել է այդ գույքի արժեքը (հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն), եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև կնքված պայմանագրով:

Քանի որ բացառապես անձնական գույքի կամ նման գույքի օտարումից ստացված դրամական միջոցների հաշվին ամուսնության ընթացքում նոր գույքի ձեռքբերման ժամանակ ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական միջոցների հաշվին որևէ ներդրում չի կատարվում, նոր գույքի ձեռքբերման արդյունքում ամուսիններին պատկանող ընդհանուր որևէ գույքի (կամ ամբողջ գույքային զանգվածի) արժեքի ավելացում տեղի չի ունենում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում, Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված սահմանադրական դրույթի իմաստով, անձնական գույքի հարկադիր փոխակերպումն ընդհանուր գույքի իրավաչափ նպատակ հետապնդել չի կարող՝ պայմանավորված պաշտպանության ենթակա շահի (իրավունքի) բացակայությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի դրույթն ամբողջականանում է նույն հոդվածի այլ դրույթների, Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 78-րդ ու 80-րդ հոդվածների հետ օրգանական փոխկապակցվածության համատեքստում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետում օգտագործված «ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերված գույք» հասկացության ցանկացած իրավաընկալում չի կարող շրջանցել սահմանադրական պահանջները, սեփականության անձեռնմխելիության, իրավունքի անարգել իրականացման, մասնավոր գործերին կամայական միջամտության անթույլատրելիության քաղաքացիաիրավական սկզբունքները և անտեսել Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթն այն մասին, որ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով: Հակառակ մոտեցումը չի երաշխավորում իրավական պետության չափանիշներին համարժեք արդարացի հավասարակշռություն անձի սեփականության իրավունքի և այլոց իրավունքների (շահերի) միջև՝ հակասելով սեփականության հիմնական իրավունքի բուն էությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամուսինների անձնական գույքի օտարման արդյունքում ստացված միջոցների հաշվին ամուսնության ընթացքում ձեռք բերված այլ գույքի նկատմամբ ամուսնու սեփականության իրավունքը ճանաչելու, այդպիսի գույքն ամուսինների համատեղ սեփականության կազմից հանելու, այդ գույքի պատկանելությանն առնչվող ցանկացած այլ պահանջ ներկայացված լինելու դեպքում դատարանը, որպես ելակետ ընդունելով *ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքն ամուսինների ընդհանուր համապետ սեփականություն հանդիսանալու կանխավարկածը*, գործով, ամուսիններից մեկի կողմից համապատասխան առարկություն կամ պահանջ ներկայացնելու պարագայում, պետք է պարզի առնվազն հետևյալ փաստական հանգամանքները.

1) ամուսիններից ու՛մ կողմից և երբ է ձեռք բերվել այն գույքը, որի օտարման արդյունքում ստացված միջոցների հաշվին ձեռք է բերվել այլ գույք,

2) ինչպիսի՞ հիմքով է ձեռք բերվել այն գույքը, որի օտարման արդյունքում ստացված միջոցների հաշվին ձեռք է բերվել այլ գույք,

3) երբ է օտարվել ամուսնու անձնական գույքը և ինչպիսի՞ հատուցում է կատարվել այդ գույքի օտարման գործարքով (որքանի գումար է վճարվել, ինչպիսի՞ գույք է տրամադրվել),

4) օտարումից հետո երբ է ձեռք բերվել նոր գույքը,

5) արդյո՞ք ամուսնության ընթացքում նոր գույքը ձեռք է բերվել հենց այն միջոցների հաշվին, որոնք ստացվել են անձնական գույքի օտարման արդյունքում,

6) ամուսինների միջև առկա է արդյո՞ք ամուսիններից մեկի անձնական գույքի իրացման արդյունքում ստացված միջոցները խնայելու, օգտագործելու կամ տնօրինելու, կամ այդ

միջոցների կամ նաև այդ միջոցների հաշվին ձեռք բերված այլ գույքի իրավական ռեժիմը որոշելու մասին կամ որևէ այլ վերաբերելի համաձայնություն:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ամուսինների անձնական գույքի օտարման արդյունքում ամուսնության ընթացքում ստացված միջոցների առկայության, ինչպես նաև ամուսնության ընթացքում հենց այդ միջոցների հաշվին այլ գույք ձեռք բերելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է գործին մասնակցող այն անձը, որը վկայակոչում է նոր գույքն իր անձնական դրամական միջոցների կամ անձնական գույքի օտարման արդյունքում ստացած միջոցների հաշվին ձեռք բերելու փաստը: Նշված փաստը գործով բոլոր ապացույցների հետազոտումից և գնահատումից հետո վիճելի մնալու դեպքում վեճը լուծելիս դատարանը պետք է ղեկավարվի ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքն ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսանալու կանխավարկածով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60րդ հոդվածի 6րդ մասի իմաստով նշված փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները դնելով այն ապացուցելու պարտականություն կրող կողմի վրա:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքն ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսանալու կանխավարկածը պետք է գործի նաև նոտարական ու այլ գործարքներ կատարելիս, ինչպես նաև գույքի քաղաքացիական շրջանառության այլ դեպքերում, քանի որ ամուսինը, որը ցանկանում է միանձնյա սեփականատեր հանդես գալ պետք է օրենքով սահմանված կարգով հոգ տանի նման իրավունքի պատշաճ ձևակերպման (փաստաթղթավորման) մասին, որը, իր հերթին, նրան հիմք կտա գույքը տնօրինելու իրավունքն իրացնելիս այլ անձանց մոտ ներկայանալ որպես գույքի միանձնյա սեփականատեր:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մուշեղ Դավթյանը և Սրբուհի Խարբուլյանն ամուսնացել են 22.08.2000 թվականին:

Ամուսնության ընթացքում՝ 19.07.2008 թվականին կնքված նվիրատվության պայմանագրով Մուշեղ Դավթյանը Բորիս Դավիդյանից որպես նվեր է ընդունել Երևանի Դավիթ Բեկի փողոցի թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույքը:

Վերը նշված անշարժ գույքը 02.03.2010 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Մուշեղ Դավթյանը վաճառել է Լարիսա Նիկոյանին: Պայմանագրի գինը կազմել է 32.680.000 ՀՀ դրամ:

18.03.2010 թվականին կնքված առուվաճառքի պայմանագրով Մուշեղ Դավթյանը Ռոբերտ Կարապետյանից և Սիլվա Հակոբյանից 21.400.000 ՀՀ դրամով գնել է Երևանի Նոր Արեշի 34-րդ փողոցի թիվ 34 հասցեում գտնվող անշարժ գույքը: Նշված պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով, իսկ այդ պայմանագրից բխող իրավունքը գրանցվել է, որի հիման վրա Մուշեղ Դավթյանին 22.03.2010 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2426338 վկայականը:

Այժմ դիմելով Դատարան՝ Սրբուհի Խարբուլյանը պահանջել է ճանաչել իր համատեղ սեփականության իրավունքը Երևանի Նոր Արեշի 34-րդ փողոցի թիվ 34 տան նկատմամբ և այդ տնից առանձնացնել իրեն պատկանող 1/2-րդ բաժինը, իսկ այն առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության ու պատասխանող Մուշեղ Դավթյանի կողմից իրեն պատկանող բաժնի շուկայական արժեքը վճարելուց հրաժարվելու դեպքում այդ տունը

վաճառել հրապարակային սակարկություններով և ստացված գումարը բաշխել իրենց միջև՝ իրենց բաժիններին համաչափ:

Առարկելով ներկայացված հայցի դեմ՝ Մուշեղ Դավթյանը վկայակոչել է այն փաստը, որ վիճելի անշարժ գույքն իր կողմից ձեռք է բերվել նվիրատվության պայմանագրով որպես նվեր ստացած և հետևապես միայն իրեն պատկանող անշարժ գույքն օտարելու արդյունքում ստացած դրամական միջոցների հաշվին՝ վերջիններիս մի մասը, ըստ էության, փոխակերպելով մեկ այլ անշարժ գույքի, որի նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունք ծագել չի կարող:

Դատարանի 29.09.2022 թվականի **վճռով Սրբուհի Խարբությանի հայցը բավարարվել է այն պատճառաբանությամբ, որ՝**

- «ՀՀ, քաղաք Երևան, Նոր Արեշ 34 փողոց, 34 փուն հասցեում գտնվող անշարժ գույքը Մուշեղ Բորիսի Դավթյանը ձեռք է բերել իր և Սրբուհի Հարությունի Դավթյանի գրանցված ամուսնության ընթացքում՝ 18.10.2010թ.-ին՝ առուվաճառքի պայմանագիր կնքելու միջոցով, այսինքն՝ հատուցելի գործարքով:

Միաժամանակ Դատարանը փաստում է, որ ՀՀ, քաղաք Երևան, Նոր Արեշ 34 փողոց, 34 փուն հասցեում գտնվող անշարժ գույքն ընդգրկված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված բացառությունների շարքում, քանի որ նշված անշարժ գույքը, ինչպես վերը նշվեց, ձեռք է բերվել կողմերի գրանցված ամուսնության ընթացքում՝ հատուցելի գործարքի միջոցով, այսինքն՝ չի հանդիսանում ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույք»,

- «(...) վիճելի անշարժ գույքը ձեռք է բերվել կողմերի ամուսնության ընթացքում, որպիսի պայմաններում նշանակություն չունի այն փաստը, թե այն ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով»:

Վերաքննիչ դատարանի 23.03.2023 թվականի որոշմամբ Մուշեղ Դավթյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 29.09.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ թողնելու մասին՝ այն պատճառաբանությամբ, որ՝

- «Բողոքաբերը, վաճառելով անձնապես իրեն պատկանող անշարժ գույքը և համարել ամուսնական կյանքի ընթացքում իրեն պատկանող դրամական միջոցներով ձեռք բերելով նոր գույք, ըստ էության, դադարեցրել է իր սեփականության իրավունքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով միայն իրեն պատկանող գույքի նկատմամբ և ձեռք է բերել նոր գույք, որի նկատմամբ արդեն իսկ տարածվում է ամուսինների համարել սեփականության ռեժիմը, քանի որ նոր ձեռք բերված գույքն այլևս չի հանդիսանում մինչև ամուսնությունն իրեն պատկանած գույք և (կամ) ամուսնության ընթացքում նվեր և (կամ) ժառանգություն ստացած գույք, իսկ գույքի ձեռքբերման նպատակով իր անձնական միջոցներն օգտագործած լինելու, ինչպես նաև կատարված գործարքների արդյունքում Բողոքաբերի գույքային դրության բարելավում տեղի չունենալու հանգամանքներն ինքնին հիմք չեն նոր գույքը ամուսինների համարել սեփականության ռեժիմից դուրս մղելու համար»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ գնահատման առարկա չեն դարձրել Մուշեղ Դավթյանի առարկությունն առ այն, որ վեճի առարկա անշարժ գույքը ձեռք է բերվել միայն իրեն պատկանող գույքի իրացման արդյունքում գոյացած միջոցների հաշվին, որպիսի պայմաններում տեղի է ունեցել անձնական սեփականություն հանդիսացող դրամական միջոցների փոխակերպում անշարժ գույքի նկատմամբ նույնպիսի

իրավունքի: Դատարանը գործի լուծման համար նշանակություն ունեցող և ապացուցման կարիք ունեցող փաստերի կազմում չի ներառել Մուշեղ Դավթյանի կողմից վիճելի անշարժ գույքն անձնական սեփականություն հանդիսացող գույքի օտարման արդյունքում գոյացած դրամական միջոցների հաշվին ձեռք բերված լինելու փաստը, վերջինիս վրա չի դրել այն ապացուցելու պարտականությունը, ավելին՝ նշված փաստը համարվել է գործի համար նշանակություն չունեցող, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ սույն գործով գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը ճիշտ չի որոշվել, մասնավորապես՝ չի կարևորվել վիճելի անշարժ գույքը Մուշեղ Դավթյանի անձնական սեփականություն հանդիսացող գույքի օտարման արդյունքում գոյացած դրամական միջոցների հաշվին ձեռք բերված լինելու փաստը, նրա վրա չի դրվել տվյալ փաստն ապացուցելու պարտականություն, նշված մասով չի կատարվել գործի պատշաճ քննություն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի 23.03.2023 թվականի որոշումը բեկանելու և գործը համապատասխան մասով նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հաշվի առնելով նաև սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Միաժամանակ, նկատի ունենալով այն, որ ստորադաս դատարանների հաստատած փաստական հանգամանքները չեն տալիս դատական ակտը բեկանելու արդյունքում այն փոփոխելու հնարավորություն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի 23.03.2023 թվականի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Ընդ որում, գործի նոր քննությունը պետք է իրականացվի՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված վերը նշված դիրքորոշումները:

Վերոգրյալ պատճառաբանություններով միաժամանակ հերքվում են վճռաբեկ բողոքի պատրասխանի հիմնավորումները:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ

կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն և գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.03.2023 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԵԴ/36794/02/19 քաղաքացիական գործով 2025 թվականի հունիսի 26-ի կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

02.07.2024 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2025 թվականի հունիսի 26-ին գրավոր ընթացակարգով քննելով Մուշեղ Դավթյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.03.2023 թվականի որոշման դեմ՝ ըստ Սրբուհի Խարբությանի հայցի ընդդեմ Մուշեղ Դավթյանի՝ անշարժ գույքի նկատմամբ համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու և այդ գույքից բաժին առանձնացնելու պահանջների մասին, հանգել է այն հետևության, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.03.2023 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Էդ. Սեդրակյանս և Ն. Հովսեփյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը:

Հատուկ կարծիքի պատճառաբանությունները և եզրահանգումները.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ ամուսինների միջև կնքված համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում, ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե այն **որ ամուսինն է ձեռք բերել, ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված, միևնույն է, հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը՝** բացի ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքի (*տե՛ս ըստ Բաժնայել Աբազյանի և Անժիկ Երիցյանի հայցի ընդդեմ Ռուբեն Աբազյանի և «Կենտրոն» նույնաբանական*

տարածքի նույնի, երրորդ անձ Սիրանուշ Աբազյանի՝ թիվ 3-415 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումն ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքն ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսանալու և այդ հարցում առկա բացառությունների վերաբերյալ հավելել է, որ օրենսդիրը, նախատեսելով «գույք» հավաքական եզրույթը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանափակումներից բացի, այլ բացառություն չի նախատեսել, հետևաբար ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքային զանգվածի կազմում կարող են ներառվել նաև **դրամական միջոցները**:

ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, որի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտ է **գույքը**՝ ներառյալ **դրամական միջոցները**, արժեթղթերը և գույքային իրավունքները:

Դրամը՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, մի դեպքում դրամը կարող է հանդիսանալ քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնուրույն, մեկ այլ դեպքում՝ որպես այդ հարաբերությունների համարժեքային (էկվիվալենտային) օբյեկտ: (տես ըստ Սամվել Մելիքյանի հայցի ընդդեմ Առեթ Ավաքյանի՝ թիվ ԵԿԴ/1418/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մուշեղ Դավթյանը և Սրբուհի Խարբուլյանն ամուսնացել են 22.08.2000 թվականին:

Ամուսնության ընթացքում՝ 19.07.2008 թվականին կնքված մի իրատվության պայմանագրով Մուշեղ Դավթյանը Բորիս Դավիդյանից որպես նվեր է ընդունել Երևանի Դավիթ Բեկի փողոցի թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույքը:

Վերը նշված անշարժ գույքը **02.03.2010 թվականին** կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Մուշեղ Դավթյանը վաճառել է Լարիսա Նիկոյանին: Պայմանագրի գինը կազմել է 32.680.000 ՀՀ դրամ:

18.03.2010 թվականին կնքված առուվաճառքի պայմանագրով Մուշեղ Դավթյանը Ռոբերտ Կարապետյանից և Սիլվա Հակոբյանից 21.400.000 ՀՀ դրամով գնել է Երևանի Նոր Արեշի 34-րդ փողոցի թիվ 34 հասցեում գտնվող անշարժ գույքը: Նշված պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով, իսկ այդ պայմանագրից բխող իրավունքը գրանցվել է, որի հիման վրա Մուշեղ Դավթյանին 22.03.2010 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2426338 վկայականը:

Սույն գործով դիմելով դատարան՝ Սրբուհի Խարբուլյանը պահանջել է ճանաչել իր համատեղ սեփականության իրավունքը Երևանի Նոր Արեշի 34-րդ փողոցի թիվ 34 տան նկատմամբ և այդ տնից առանձնացնել իրեն պատկանող 1/2-րդ բաժինը, իսկ այն առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության ու պատասխանող Մուշեղ Դավթյանի կողմից իրեն պատկանող բաժնի շուկայական արժեքը վճարելուց հրաժարվելու դեպքում այդ տունը վաճառել հրապարակային սակարկություններով և ստացված գումարը բաշխել իրենց միջև՝ իրենց բաժիններին համաչափ:

Դատարանի 29.09.2022 թվականի վճռով Սրբուհի Խարբուլյանի հայցը բավարարվել է այն պատճառաբանությամբ, որ՝

«(...) ՀՀ, քաղաք Երևան, Նոր Արեշ 34 փողոց, 34 փուն հասցեում գտնվող անշարժ գույքն ընդգրկված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված

բացառությունների շարքում, քանի որ նշված անշարժ գույքը, (...), ձեռք է բերվել կողմերի գրանցված ամուսնության ընթացքում՝ հատուցելի գործարքի միջոցով, այսինքն՝ չի հանդիսանում ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույք», և (...) նշանակություն չունի այն փաստը, թե այն ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով»:

Վերաքննիչ դատարանի 23.03.2023 թվականի որոշմամբ Մուշեղ Դավթյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 29.09.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ՝ «*Բողոքաբերը, վաճառելով անձնապես իրեն պատկանող անշարժ գույքը և համատեղ ամուսնական կյանքի ընթացքում իրեն պատկանող դրամական միջոցներով ձեռք բերելով նոր գույք, ըստ էության, դադարեցրել է իր սեփականության իրավունքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով միայն իրեն պատկանող գույքի նկատմամբ և ձեռք է բերել նոր գույք, որի նկատմամբ արդեն իսկ տարածվում է ամուսինների համատեղ սեփականության ռեժիմը, քանի որ նոր ձեռք բերված գույքն այլևս չի հանդիսանում մինչև ամուսնությունն իրեն պատկանած գույք և (կամ) ամուսնության ընթացքում նվեր և (կամ) ժառանգություն ստացած գույք, իսկ գույքի ձեռքբերման նպատակով իր անձնական միջոցներն օգտագործած լինելու, ինչպես նաև կատարված գործարքների արդյունքում Բողոքաբերի գույքային դրության բարելավում տեղի չունենալու հանգամանքներն ինքնին հիմք չեն նոր գույքը ամուսինների համատեղ սեփականության ռեժիմից դուրս մղելու համար»:*

Բողոք բերած անձը վիճարկել է այն հանգամանքը, որ վիճելի անշարժ գույքն իր կողմից ձեռք է բերվել նվիրատվության պայմանագրով որպես նվեր ստացած և հետևապես միայն իրեն պատկանող անշարժ գույքն օտարելու արդյունքում ստացած դրամական միջոցների հաշվին՝ վերջիններիս մի մասը, ըստ էության, փոխակերպելով մեկ այլ անշարժ գույքի, որի նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունք ծագել չի կարող:

Վճռաբեկ դատարանի 26.06.2025 թվականի որոշմամբ Մուշեղ Դավթյանի բերած վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն, Վերաքննիչ դատարանի 23.03.2023 թվականի որոշումը բեկանվել է և գործն ուղարկվել է Դատարան՝ նոր քննության այն պատճառաբանությամբ, որ՝

«(...) ստորադաս դատարանները պարզաճ գնահատման առարկա չեն դարձրել Մուշեղ Դավթյանի առարկությունն առ այն, որ վեճի առարկա անշարժ գույքը ձեռք է բերվել միայն իրեն պատկանող գույքի իրացման արդյունքում գոյացած միջոցների հաշվին, որպիսի պայմաններում տեղի է ունեցել անձնական սեփականություն հանդիսացող դրամական միջոցների փոխակերպում անշարժ գույքի նկատմամբ նույնպիսի իրավունքի: (...):»:

Համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ գտնում ենք, որ նշված եզրահանգումը չի բխում ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումից, այնպես էլ նույն իրավական նորմի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախկինում կայացված որոշումներով արտահայտված դիրքորոշումներից հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանի 26.06.2025 թվականի որոշմամբ իրավացիորեն արձանագրվել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ 02.03.2010 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Մուշեղ Դավթյանի սեփականության իրավունքը նվիրատվությամբ ձեռքբերված Երևանի Դավիթ Բեկի փողոցի թիվ 22 հասցեում

գտնվող անշարժ գույքի նկատմամբ դադարել է: Ինչպես վերը նշվեց դրամը՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, մի դեպքում կարող է հանդիսանալ քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնուրույն, մեկ այլ դեպքում՝ որպես այդ հարաբերությունների համարժեքային (էկվիվալենտային) օբյեկտ: Տվյալ դեպքում, գույքի օտարման արդյուքում, այն է՝ 02.03.2010 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի արդյունքում Մուշեղ Դավթյանի ձեռք բերված դրամական միջոցները հանդիսանալով քաղաքացիական իրավահարաբերությունների համարժեքային (էկվիվալենտային) օբյեկտ, համարվել են վերջինիս միանձնյա սեփականությունը: Սակայն համատեղ ամուսնական կյանքի ընթացքում նոր գույքի ձեռքբերման հիմքով, նշված դրամն արդեն իսկ վերածվել է քաղաքացիական իրավահարաբերությունների շրջանառության ինքնուրույն օբյեկտի, քանի որ նշված գումարն ուղղվել է այլ գույքի ձեռքբերմանը: Հետևաբար նոր ձեռքբերված գույքի նկատմամբ ծագել է ամուսինների համատեղ սեփականության իրավունքը, նկատի ունենալով, որ այդ գույքի նկատմամբ գնորդի իրավունքը ծագել է գրանցված ամուսնության ընթացքում կնքված հաստուցելի գործարքի արդյունքում և այն չի կարող հանդիսանալ մինչև ամուսնությունը Մուշեղ Դավթյանին պատկանող գույք, ինչպես նաև ամուսնության ընթացքում նվեր կամ ժառանգություն ստացած գույք:

Վերը նշված եզրահանգման համար հիմք է հանդիսանում նաև այն փաստը, որ Մուշեղ Դավթյանն իր կողմից նվիրատվությամբ ձեռք բերված գույքը վաճառել է 32.680.000 ՀՀ դրամով, իսկ սույն գործով վեճի առարկա հանդիսացող գույքը ձեռք է բերել առուվաճառքի պայմանագրի հիմքով՝ արդեն 21.400.000 ՀՀ դրամով, ինչը որևէ կերպ չի համարվել դրամական միավորի փոխակերպված 19.07.2008 թվականին կնքված նվիրատվության պայմանագրով ձեռք բերված միևնույն գույքը՝ հենց միայն այն պատճառով, որ էկվիվալենտային և ինքնուրույն օբյեկտների տարբերությունը ավելի քան 10.000.000 ՀՀ դրամ է կազմել:

Անգամ վիճելի անշարժ գույքը Մուշեղ Դավթյանի անձնական սեփականություն հանդիսացող գույքի օտարման արդյունքում գոյացած դրամական միջոցների հաշվին ձեռք բերված լինելու փաստը հաստատվելու պայմաններում գտնում ենք, որ ամուսինների միջև կնքված համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե այն որ ամուսինն է ձեռք բերել, ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված, միևնույնն է, հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը: Նշվածից բացառություն է կազմում այն գույքը, որն ամուսիններից յուրաքանչյուրն ունեցել է մինչև ամուսնությունը, ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը, անհատական օգտագործման առարկաները, ինչպես նաև սեփականաշնորհմամբ ձեռք բերված գույքը, ինչը տվյալ դեպքում առկա չէ:

Այսպիսով գտնում ենք, որ արդեն իսկ դրամի փոխակերպված գույքը կրկին անշարժ գույքի վերափոխվելուց հետո չի կարող պահպանել միևնույն իրավական ռեժիմը, նաև նկատի ունենալով դրանց ձեռքբերման իրավական տարբեր հիմքերը: Մասնավորապես՝ ՀՀ օրենսդրությամբ միանգամայն այլ իրավական կարգավորումներ են սահմանված նվիրատվության և առուվաճառքի գործարքների կնքման, դրանց լուծման և անվավեր ճանաչման, ինչպես նաև անվավերության հետևանքների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը սույն գործը նոր քննության ուղարկելով արձանագրել է, «(...) որ ստորադաս դատարանները պարզաճ գնահատման առարկա չեն դարձրել Մուշեղ Դավթյանի առարկությունն առ այն, որ վեճի առարկա անշարժ գույքը ձեռք է բերվել միայն իրեն պատկանող

գույքի իրացման արդյունքում գոյացած միջոցների հաշվին, որպիսի պայմաններում տեղի է ունեցել անձնական սեփականություն հանդիսացող դրամական միջոցների փոխակերպում անշարժ գույքի նկատմամբ նույնպիսի իրավունքի: Դատարանը գործի լուծման համար նշանակություն ունեցող և ապացուցման կարիք ունեցող փաստերի կազմում չի ներառել Մուշեղ Դավթյանի կողմից վիճելի անշարժ գույքն անձնական սեփականություն հանդիսացող գույքի օտարման արդյունքում գոյացած դրամական միջոցների հաշվին ձեռք բերված լինելու փաստը, վերջինիս վրա չի դրել այն ապացուցելու պարտականությունը, ավելին՝ նշված փաստը համարվել է գործի համար նշանակություն չունեցող, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից (...):»:

Վերը նշվածի հիման վրա գտնում ենք, որ սույն գործով Վճռաբեկ դատարանի 26.06.2025 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն ապացուցման ենթակա փաստերի վերաբերյալ գործի նոր քննություն իրականացնելու մասով ևս անհիմն է, քանի որ որոշմամբ արձանագրված հանգամանքների պարզումը, տվյալ վեճի լուծման համար որևէ էական նշանակություն ունենալ չի կարող: Այսպես. Սրբուհի Խարբուլյանը դիմելով Դատարան պահանջել է ճանաչել իր համատեղ սեփականության իրավունքը Մուշեղ Դավթյանի հետ համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված Երևանի Նոր Արեշի 34-րդ փողոցի թիվ 34 տան նկատմամբ և այդ տնից առանձնացնել իրեն պատկանող 1/2-րդ բաժինը, հետևաբար սույն գործով ապացուցման առարկան կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշումներով բազմիցս արձանագրված երկու փաստ, այն է՝ վիճելի գույքը ձեռք է բերվել համատեղ ամուսնության ընթացքում և վիճելի գույքը ձեռք է բերվել հատուցմամբ:

Հետևաբար սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վճռաբեկ բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտը օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ նկատի ունենալով, որ առկա չեն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.03.2023 թվականի որոշումը բեկանելու հիմքեր:

Դատավորներ՝

ԷԴ. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՎԴ/1012/05/23

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՇԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)**

2025 թվականի հուլիսի 09-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 03.05.2024 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանի ընդդեմ Կոմիտեի՝ 14.11.2022 թվականի թիվ 1518373 վարչական ակտն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ 11.01.2023 թվականի թիվ 2/4 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 14.11.2022 թվականի թիվ 1518373 վարչական ակտը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել Կոմիտեի 11.01.2023 թվականի թիվ 2/4 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Մաքեյան) (այսուհետ՝ Դատարան) 26.07.2023 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.05.2024 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 26.07.2023 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանը (ներկայացուցիչ՝ Մարիամ Մանուկյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցվորի կողմից իրականացվել է դեղերի մեծածախ իրացում, քանի որ վերջինս՝ որպես մատակարար իրացրել է դեղամիջոց, ոչ թե սպառողի, այլ՝ իրավաբանական անձի, ինչը դեղերի մեծածախ իրացմանը բնորոշ գործունեություն է, և որն էլ համարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն: Եվ օրենսդիրը դեղերի մատակարարումը չի համարում դեղերի մեծածախ իրացում բացառապես այն դեպքում, երբ դեղերն իրացվում են սպառողներին՝ քաղաքացիներին, որպեսի դեպքը սույն գործով չի հաստատվում, այլ ընդհակառակը՝ հաստատվում է իրավաբանական անձին իրացման փաստ, ինչը միանշանակորեն պետք է դիտարկել որպես դեղերի մեծածախ իրացում:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վարչական ակտը ձևակերպված է հստակ և հասկանալի, վարչական ակտի բովանդակությունը շարադրված է այնպես, որ դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իր վրա ինչ պարտականություն է դրվում:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.05.2024 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի վերաբերյալ Ընկերության պատասխանի հիմնավորումները.

Կոմիտեի ներկայացրած փաստարկները չեն բխում ՀՀ օրենսդրության համապատասխան կարգավորումներից հետևյալ հիմնավորումներով՝

Դեղերի մանրածախ իրացման հասցեատերը միայն սպառողն է, որը դեղը ձեռք է բերում անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար և առկա չէ նրա մոտ դեղի ձեռքբերման ձեռնարկատիրական գործունեության հետ կապված մտադրություն կամ նպատակ, իսկ մեծածախ իրացումը բացառում է դեղերի իրացումը սպառողներին, քանի որ այն իր մեջ ներառում է մատակարարի կողմից դեղ արտադրողից կամ դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջից կամ այլ մատակարարից դեղերի ձեռքբերում, ներմուծում, արտահանում, պահպանում, իրացում (բաշխում):

Տվյալ պարագայում դեղերը ձեռք են բերվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից, որոնք ՊՈԱԿ կամ ՀՈԱԿ-ներ են և չեն կարող ձեռնարկատիրական գործունեություն ծավալել, և տվյալ դեղերը գնվել են երեխաների առողջության պահպանման համար:

Բացի այդ, ըստ պատասխանողի՝ հայցվորը գործարքներ է իրականացրել «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերության և «Հայբիզնեսբանկ» ԲԲ ընկերության հետ, սակայն բողոքարկվող վարչական ակտում բացակայում է նման գործարքի առկայության փաստը, ուստի այդ փաստը քննարկման ընդհանրապես ենթակա չէ:

Ըստ այդմ՝ Վերաքննիչ դատարանը եկել է իրավաչափ եզրահանգման «սպառող» եզրույթի մեկնաբանման ժամանակ և կայացրել է իրավաչափ դատական ակտ:

Բացի այդ, բողոքաբերը խախտել է վճռաբեկ բողոք բերելու դատավարական ժամկետները:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ առողջապահության նախարարության կողմից 13.08.2019 թվականին տրված թիվ Ա-ԴԳ-001486 լիցենզիայի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանին

մարզ Արագածոտն, համայնք Աշտարակ, Տիգրան Մեծի փողոց 1 առևտրի սրահ հասցեում դեղատնային գործունեություն իրականացնելու համար տրվել է անժամկետ լիցենզիա **(հատոր 1-ին, գ.թ. 62):**

2) Կոմիտեի հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության պետի 21.10.2022 թվականի թիվ 1518373 որոշման քաղվածքի համաձայն՝ Կոմիտեի հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության թիվ 16 բաժնի գլխավոր օպերիվազորներ Գուրգեն Առաքելյանին, ավագ օպերիվազոր Ռաֆայել Ռաֆայելյանին, օպերիվազորներ Հմայակ Շտոյանին և Ռոբերտ Խաչատրյանին, ՀՕՀՎ ոլորտային թիվ 10 և աշխատանքների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ Գարիկ Բարսեղյանին թույլատրվել է իրականացնելու «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա նույն հոդվածի 1-ին մասով և որոշմամբ նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանի նկատմամբ **(հատոր 1-ին, գ.թ. 65):**

3) Կոմիտեի հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության 01.11.2022 թվականի թիվ 1518373 արձանագրության համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանի գործունեության նկատմամբ իրականացվել են համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանը մեծածախ իրացման լիցենզիայի պարտադիր պայմանի ուժի մեջ մտնելուց հետո (15.08.2020 թվականից) 20.06.2022 թվականի թիվ Բ9544007802, Բ7159271344, Բ8535403460, Բ8455912400, Բ1237497929, Բ12947330656, Բ0615182630, Բ5327023443, Բ7240466314, Բ5803188486, Բ7645906914 և Բ5729605881, 05.10.2020 թվականի թիվ Բ3872227204 հաշիվ-վավերագրերով իրականացրել է դեղերի մեծածախ իրացում՝ չունենալով ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված համապատասխան տեսակի լիցենզիան: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում 31.10.2023 թվականին այցելել են Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ Տիգրան Մեծի 1 հասցեում գործող, անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանին պատկանող դեղատուն, որտեղ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանը ներկայացրել է ՀՀ առողջապահության նախարարությունից 13.08.2019 թվականին ստացված թիվ Ա-ԴԳ-001486 լիցենզիան և տվել գրավոր հայտարարություն այն մասին, որ 13.08.2019 թվականից Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ Տիգրան Մեծի 1 հասցեում զբաղվում է դեղատնային գործունեությամբ, գործում է շրջանառության հարկով հարկման դաշտում, ունի տեղադրված թվով մեկ ՀԴՄ և երկու վարձու աշխատող: Անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանը հայտնել է, որ ապրանքների վաճառքն իրականացնում է ինչպես ՀԴՄ-ի, այնպես էլ հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման միջոցով: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների ժամանակ հետազոտելով (pharm.cals.am) կայքը՝ պարզվել է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից դուրս գրված հաշիվ-վավերագրերում նշված անվանումներով՝ Սուպրաստին, Պարացետամոլ, Նոշպա, Վալերիանկա (կոճակ, հեղուկ), Կառվալոլ, Վալիդոլ N10 ապրանքները հանդիսանում են դեղամիջոցներ: Իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանը ՀՀ առողջապահության նախարարությունից ստացել է միայն դեղատնային գործունեության համար նախատեսված լիցենզիա: Կատարված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանը իրականացրել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի աղյուսակում ներառված գործունեություն՝ դեղերի մեծածախ իրացում,

առանց համապատասխան լիցենզիայի: Մարիամ Բաղդասարյանը 01.11.2022 թվականին ստորագրությամբ ստացել է արձանագրության մեկ օրինակը (**հատոր 1-ին, գ.թ. 56-58**):

4) Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 14.11.2022 թվականի թիվ 1518373 վարչական ակտի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանին գանձման է առաջադրվել 1.000.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ որպես հարկային պարտավորություն և 100.000 ՀՀ դրամ՝ օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վսասի հատուցում (**հատոր 1-ին, գ.թ. 16-17**):

5) Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 11.01.2023 թվականի թիվ 2/4 որոշման համաձայն՝ 14.11.2022 թվականի թիվ 1518373 վարչական ակտի դեմ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանի դիմում-բողոքը մերժվել է (**հատոր 1-ին, գ.թ. 19-21**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, ինչը, սակայն, հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն գործով վճռաբեկ բողոքի քննության շրջանակում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ արդյո՞ք դեղերի իրացման ժամանակ գնորդի իրավաբանական անձ լինելն ինքնին հանգեցնում է դեղերի համապատասխան իրացումը մեծաձախ որակելուն:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Հայաստանի Հանրապետության սահմանադիրը ՀՀ Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 2-րդ գլխում՝ 60-րդ հոդվածում, ամրագրել է, որ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Վերոնշյալի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքը ներառված է հիմնական իրավունքների շարքում, և դրա սահմանափակումների հիմքերը և ծավալները պետք է լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերջինս ցուցիչն է իրավական որոշակիության սկզբունքի, որին անդրադարձել են ՀՀ սահմանադրական դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), ինչպես նաև Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով):

Այսպես, իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը (*տես, ՀՀ սահմանադրական դատարանի 13.05.2008 թվականի ՍԴՈ-753 որոշումը*):

Եվրոպական դատարանը, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, նշել է, որ ներպետական իրավունքում իրավական հիմքի առկայությունն ինքնին բավարար չէ օրինականության սկզբունքը բավարարելու համար: Իրավական հիմքը պետք է ունենա որոշակի որակ՝ այն պետք է համապատասխանի իրավունքի գերակայությանը և պետք է ապահովի կամայականություններից ազատություն (*տես, East West Alliance Limited v. Ukraine, թիվ 19336/04 գանգադով Եվրոպական դատարանի 23.01.2014 թվականի վճիռը, կետ 167*): Օրինականության սկզբունքը ենթադրում է, որ ներպետական իրավունքի կիրառելի դրույթները բավականաչափ մատչելի, ճշգրիտ և կանխատեսելի պետք է լինեն իրենց կիրառության մեջ (*տես, Օրինակ՝ Lekić v. Slovenia, թիվ 36480/07 գանգադով Եվրոպական դատարանի մեծ պալատի 11.12.2018 թվականի վճիռը, կետ 95*):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակող իրավական նորմերը պետք է բավարարեն որոշակիության պահանջներին, որը հնարավորություն կտա անձանց հստակորեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները: Ըստ այդմ՝ վարչական մարմինների իրականացրած գործունեության հիմքում նախ անհրաժեշտ է, որ առկա լինի համապատասխան իրավական հիմք: Այդուհանդերձ զուտ իրավական հիմքի առկայությունը դեռ բավարար չէ, քանի որ այն պետք է ունենա որոշակի որակ՝ պետք է համապատասխանի իրավունքի գերակայությանը և պետք է ապահովի կամայականություններից ազատություն:

Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում իրականացվող քաղաքականության բաղկացուցիչ մաս է կազմում դեղային քաղաքականությունը, որի նպատակը բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով, ինչպես նաև դրանց ռացիոնալ կիրառումն ապահովելն է («Դեղերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետ): Առողջապահության բնագավառում դեղային քաղաքականության մշակումն ու իրականացումը դեղերի շրջանառության պետական կարգավորման ուղղություններից մեկն է (Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) (*տես, «ԱՌԳՈ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության թիվ ՎԴ/9898/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.12.2024 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի մատչելիության ապահովման կարևորությունը և առանձնահատուկ դերը բնակչության համար՝ օրենսդիրը կարգավորել է Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառությունը, որն ընդգրկում է, ի թիվս այլնի, դեղերի մեծածախ և մանրածախ իրացումը և մեծածախ կամ մանրածախ իրացման համար լիցենզիայի տրամադրման պարտադիրությունն

ու լիցենզիա ստանալու կարգը, ինչպես նաև՝ առանց համապատասխան լիցենզիայի դեղերի մեծածախ կամ մանրածախ իրացում իրականացնելու համար պատասխանատվությունը:

Այսպես. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է առանց լիցենզիայի զբաղվել նույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով, բացառությամբ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18.1-ին հոդվածով սահմանված դեպքերի: Առանց լիցենզիայի նույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն և լիցենզավորման համար գանձվող պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակը, որի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսվել է դեղատնային գործունեության, իսկ 6-րդ ենթակետով՝ դեղերի մեծածախ իրացման տեսակները:

ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համալիր հարկային ստուգումների ընթացքում և (կամ) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ծանուցման ենթակա գործունեությունն առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու (այդ թվում՝ լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքն օրենքով սահմանված կարգով կասեցված լինելու) դեպքում գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս 500 հազար դրամից:

Վերոգրյալից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում լիցենզավորման ինստիտուտը գործում է որպես անվտանգության, վերահսկողության ապահովման և հանրային շահի պաշտպանության կարևոր միջոց: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է այն գործունեության տեսակները, որոնց իրականացումն առանց համապատասխան լիցենզիայի արգելվում է, և դրանց թվում է նաև դեղերի մեծածախ իրացումը: Այս կարգավորումները միտված են կանխել անօրինական և չվերահսկվող գործունեությունն այն ոլորտներում, որոնք կարող են ազդել հասարակության առողջության, կյանքի և տնտեսական կայունության վրա: Հետևաբար, առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու արարքի համար օրենքը նախատեսում է պատասխանատվություն. համապատասխանաբար առանց լիցենզիայի դեղերի մեծածախ իրացումը հանգեցնում է ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված պատասխանատվության և լիցենզավորման համար գանձվող պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցման:

Օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառության հետ

կապված հարաբերությունները՝ բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով և դրանց մասին հավաստի տեղեկատվությամբ ապահովելու նպատակով, ինչպես նաև սահմանում է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների և դեղերի շրջանառության սուբյեկտների լիազորություններն այդ ոլորտում (Օրենքի 1-ի հոդված):

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

20) **դեղերի շրջանառություն**՝ դեղի ստեղծում կամ նախակլինիկական հետազոտություն կամ կլինիկական փորձարկում կամ ստանդարտացում կամ արտադրություն կամ պատրաստում կամ դեղաբուսական հումքի մշակում կամ որակի հսկողություն կամ գրանցում կամ ներմուծում կամ արտահանում կամ փոխադրում, պահպանում կամ իրացում կամ բաշխում կամ կիրառում կամ արդյունավետության, անվտանգության և կողմնակի ազդեցությունների դիտարկում կամ տեղեկատվության կամ գովազդի տարածում կամ ոչնչացում.

(...)

41) **դեղերի մեծածախ իրացում**՝ գործունեության տեսակ, որը ներառում է մատակարարի կողմից դեղ արտադրողից կամ դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջից կամ այլ մատակարարից դեղեր ձեռք բերելը կամ ներմուծելը կամ արտահանելը կամ պահպանելը կամ իրացնելը (բաշխելը), բացառությամբ սպառողներին դեղերի իրացման.

42) **մատակարար**՝ սահմանված կարգով մեծածախ իրացման լիցենզիա ստացած իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

43) **դեղերի մանրածախ իրացում**՝ դեղերի իրացում կամ բաց թողնում սպառողներին:

Օրենքի 25-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող անձը չի կարող իրականացնել դեղերի մեծածախ իրացում՝ դեղատնային գործունեության լիցենզիայի գործողության ժամանակահատվածում (այդ թվում՝ լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում):

Վերը նշված իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդրությամբ սահմանվել են լիցենզավորման ենթակա գործունեության առանձին տեսակներ, որոնց շարքին են դասվում դեղատնային գործունեությունը և դեղերի մեծածախ իրացումը: Ընդ որում, օրենսդրությամբ հատուկ սահմանվել է դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող սուբյեկտի՝ դեղերի մեծածախ իրացում իրականացնելու արգելք: Մինևույն ժամանակ օրենսդրությամբ բացահայտվել է նաև դեղերի մեծածախ և մանրածախ իրացման հասկացությունների բովանդակությունը, և սպառողին դեղերի իրացման հանգամանքն օրենսդիրը դասել է դեղերի իրացումը մեծածախ որակելու բացառությունների շարքին՝ այն դիտարկելով որպես դեղերի մանրածախ իրացում:

Այլ կերպ ասած՝ դեղերի մանրածախ և մեծածախ իրացման էական տարբերակիչ հատկանիշը դեղերի իրացումը կամ բաց թողումն է սպառողներին, ուստի յուրաքանչյուր դեպքում պարզելու համար, թե դեղերի իրացումն արդյո՞ք համարվում է մանրածախ, թե մեծածախ, կարևոր է բացահայտել դեղը ձեռք բերողի՝ սպառող լինելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է «սպառող» հասկացությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրա եզրույթաբանական բովանդակությունը Օրենքում բացահայտված չէ, իսկ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում առկա են տվյալ եզրույթի տարաբնույթ սահմանումներ:

Մասնավորապես՝ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝ *սպառող*՝ բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման

համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացի:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սպառող հասկացությունը բացահայտվել է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, ըստ որի՝ **սպառողը** սպառման նպատակով ապրանք ձեռք բերող կամ հնարավոր ձեռք բերող իրավաբանական կամ ֆիզիկական անձը կամ պետական մարմինն է:

Այսպիսով պարզ է դառնում, որ՝

- դեղերի մեծածախ իրացման սահմանումը նախատեսող, առանց համապատասխան լիցենզիայի դեղերի մեծածախ իրացման գործունեության արգելք և այդ արգելքը չպահպանելու հետևանքով պատասխանատվության միջոց սահմանող նորմատիվ իրավական ակտերը չեն սահմանում «սպառող» հասկացությունը,

- տարբեր նորմատիվ իրավական ակտեր նախատեսում են «սպառող» հասկացության տարբեր բնորոշումներ, մի դեպքում՝ սպառող է համարվում միայն քաղաքացին (ֆիզիկական անձը), մեկ այլ դեպքում՝ նաև իրավաբանական անձը կամ պետական մարմինը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը ընդգծում է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե հարկային հարաբերությունները կարգավորող՝ հավասար իրավական ուժ ունեցող իրավական ակտերի դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարրնթերցումներ, ապա դրանք մեկնաբանվում և կիրառվում են հարկ վճարողի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի ու «Դեղերի մասին» ՀՀ օրենքի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու համար ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված պատասխանատվությունը վրա է հասնում նաև դեղերի մեծածախ իրացումն առանց համապատասխան լիցենզիայի առկայության իրականացնելու համար, որպիսի լիցենզիայի առկայության պահանջը գնահատելու համար կարևորվում է «սպառող» հասկացության բացահայտումը: Վերոնշյալ իրավական ակտերով «սպառող» հասկացության սահմանումը չկա, իսկ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում «սպառող» հասկացության տարբեր սահմանումներ են նախատեսված, հետևաբար՝ իրավական որոշակիության սկզբունքը և հարկ վճարողի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը պահանջում են սույն հարաբերությունների մեկնաբանումը հոգուտ հարկ վճարողի:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դեղերի առուվաճառքի գործարքի գնորդի՝ սպառող չհանդիսանալու վերաբերյալ եզրահանգման գալու համար զուտ գնորդի իրավաբանական անձ լինելը բավարար հանգամանք չէ, քանի որ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի ձևակերպումից պարզ չէ, թե՞ փոխյալ պարագայում ով կարող է համարվել սպառող՝ հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում «սպառող» հասկացության փարաբնույթ սահմանումների առկայությունը: Արդյունքում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա դեղերի առուվաճառքի գործարքի վաճառողին պատասխանատվության ենթարկելը և ըստ այդմ՝ փոխյալ անձի սեփականության իրավունքը սահմանափակելը նրա համար, որ դեղերի վաճառք է

իրականացրել իրավաբանական անձանց առանց դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի, հակասում է իրավական որոշակիության պահանջին, քանի որ տվյալ անորոշության պատճառով համապատասխան սուբյեկտի, այն է՝ դեղերի վաճառք իրականացնող սուբյեկտի համար կանխատեսելի չեն իր վարքագծի հնարավոր հետևանքները:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն վարչական գործը հարուցվել է անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանի կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 14.11.2022 թվականի թիվ 1518373 վարչական ակտը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել Կոմիտեի 11.01.2023 թվականի թիվ 2/4 որոշումը:

Դատարանը հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ «(...) Պատասխանողը վարչական վարույթի ընթացքում հաստատված է համարել այն, որ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանն առանց լիցենզիայի առկայության իրականացրել է լիցենզավորման ենթակա՝ դեղերի մեծածախ իրացում՝ հիմք ընդունելով այն փաստը, որ 20.06.2022 թվականի թիվ Բ9544007802, Բ7159271344, Բ8535403460, Բ8455912400, Բ1237497929, Բ12947330656, Բ0615182630, Բ5327023443, Բ7240466314, Բ5803188486, Բ7645906914 և Բ5729605881, 05.10.2020 թվականի թիվ Բ3872227204 հաշիվ-վավերագրերով իրացվել են դեղեր: Մինչդեռ դատարանը գտնում է, որ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանի կողմից 20.06.2022 թվականի թիվ Բ9544007802, Բ7159271344, Բ8535403460, Բ8455912400, Բ1237497929, Բ12947330656, Բ0615182630, Բ5327023443, Բ7240466314, Բ5803188486, Բ7645906914 և Բ5729605881, 05.10.2020 թվականի թիվ Բ3872227204 հաշիվ-վավերագրերով դեղերի իրացումը չի կարող որակվել որպես դեղերի մեծածախ իրացում, քանի որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց, որով կհաստատվեր այն փաստը, որ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանից դեղերը ձեռք են բերվել ոչ թե ներքին սպառման, այլ՝ դրանց հետագա արտահանման կամ պահպանման կամ իրացման համար: Ավելին՝ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ղեկավարը 03.04.2023 թվականի թիվ 1803 գրությամբ հայտնել է, որ 20.06.2022 թվականի թիվ Բ9544007802, Բ7159271344, Բ8535403460, Բ8455912400, Բ1237497929, Բ12947330656, Բ0615182630, Բ5327023443, Բ7240466314, Բ5803188486, Բ7645906914, Բ5729605881 և 05.10.2020 թվականի թիվ Բ3872227204 հաշիվ-վավերագրերի համաձայն անհատ ձեռնարկատեր «Մարիամ Բաղդասարյան Ռուբենի»-ի կողմից իրականացվել է դեղորայքի իրացում Աշտարակ համայնքի մանկապարտեզներին, որոնք նախատեսված են եղել մանկապարտեզների շահառուների (երեխաների, աշխատակիցների) անձնական օգտագործման համար, որպիսի փաստարկը հերքող որևէ ապացույց վարչական մարմնի կողմից դատարանին չի ներկայացվել: Ինչ վերաբերում է Պատասխանողի կողմից գրավոր առարկությամբ նշված այն հիմնավորմանը, որ «սպառող» հասկացությունը սահմանված է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, որի համաձայն՝ սպառողը բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացին է, հետևաբար դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող սուբյեկտը կարող է դեղեր իրացնել կամ բաց թողնել միայն քաղաքացիներին՝ ապահովելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջներն, ապա դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում դեղերի

շրջանառության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Դեղերի մասին» ՀՀ օրենքով, իսկ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով կարգավորում է սպառողների և արտադրողների (կադրողների, վաճառողների) միջև ապրանքների վաճառքի (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) ժամանակ ծագող հարաբերությունները, ուստի դատարանի գնահատմամբ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի իմաստով «սպառող» կարող է հանդիսանալ ինչպես ֆիզիկական անձը, այնպես էլ իրավաբանական անձը, եթե ձեռք բերված դեղն օգտագործվում է վերջինիս կարիքների համար:»:

Վերաքննիչ դատարանը մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը, և Դատարանի 26.07.2023 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ՝ հետևյալ հիմնավորմամբ. «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալը.

- դեղերի մեծածախ իրացման բնորոշումը պայմանավորված է սպառողներին դեղերի իրացման հանգամանքի բացառման հետ,

- դեղերի մեծածախ իրացման գործունեության արգելք և այդ արգելքը չպահպանելու հետևանքով պատասխանատվության միջոց սահմանող նորմատիվ իրավական ակտերը չեն սահմանում սպառող հասկացությունը,

- տարբեր նորմատիվ իրավական ակտեր նախատեսում են սպառող հասկացության տարբեր բնորոշումներ, մի դեպքում՝ սպառող է համարվում միայն քաղաքացին (ֆիզիկական անձը), մեկ այլ դեպքում՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձը կամ պետական մարմինը:

Ամփոփելով վերոշարադրյալը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող սուբյեկտի համար գործող իրավակարգավորումները չէին կարող համարվել այն աստիճանի որոշակի, որպեսզի անձը հնարավորություն ունենա նման կարգավորումների հետ համատեղելու իր վարքագիծը և կանխատեսել համապատասխան վարքագծի՝ դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի բացակայության պայմաններում իրավաբանական անձին դեղեր օտարելու դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածով նախատեսված իրավական հետևանքները: Նշվածի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը նաև գտնում է, որ վիճարկվող վարչական ակտում նշված կազմակերպություններին դեղերի վաճառքն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոց կիրառելու համար:»:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով Կոմիտեի հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության 01.11.2022 թվականի թիվ 1518373 արձանագրության համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանի գործունեության նկատմամբ իրականացվել են համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանը մեծածախ իրացման լիցենզիայի պարտադիր պայմանի ուժի մեջ մտնելուց հետո (15.08.2020 թվականին) 20.06.2022 թվականի թիվ Բ9544007802, Բ7159271344, Բ8535403460, Բ8455912400, Բ1237497929, Բ12947330656, Բ0615182630, Բ5327023443, Բ7240466314, Բ5803188486, Բ7645906914 և Բ5729605881, 05.10.2020 թվականի թիվ Բ3872227204 հաշիվ-վավերագրերով իրականացրել է դեղերի մեծածախ իրացում՝ չունենալով ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված համապատասխան տեսակի լիցենզիան:

Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 14.11.2022 թվականի թիվ 1518373 վարչական ակտի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանին գանձման է առաջադրվել 1.000.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ որպես հարկային պարտավորություն և 100.000 ՀՀ դրամ՝ օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

Վճռաբեկ դատարանը նկատում է, որ Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 14.11.2022 թվականի թիվ 1518373 վարչական ակտի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում անհատ ձեռնարկատեր Մարիամ Բաղդասարյանի կողմից 20.06.2022 թվականի թիվ Բ9544007802, Բ7159271344, Բ8535403460, Բ8455912400, Բ1237497929, Բ12947330656, Բ0615182630, Բ5327023443, Բ7240466314, Բ5803188486, Բ7645906914 և Բ5729605881, 05.10.2020 թվականի թիվ Բ3872227204 հաշիվ-վավերագրերով իրականացրած դեղերի իրացման գործարքի մյուս կողմում՝ այսինքն՝ գնորդի կարգավիճակում, եղել են իրավաբանական անձինք, մասնավորապես՝ Աշտարակ համայնքի մի քանի մանկապարտեզներ, և իրավաբանական անձի՝ գործարքի գնորդի կարգավիճակում հանդես գալու հանգամանքը բավարար է եղել Կոմիտեի համար համապատասխան գործարքը որակելու որպես մեծածախ իրացում:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո վարչական մարմնի այն դիրքորոշումը, որ դեղերի իրացման գործարքների գնորդի ֆիզիկական անձ չլինելը բավարար հանգամանք է ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սանկցիան կիրառելու համար, խախտում է ինչպես իրավական որոշակիության պահանջը, այդպես էլ վարչական ակտի հիմնավորված լինելու պահանջը հետևյալ հիմնավորմամբ՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է վարչական ակտի հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ օրենսդիրը սահմանել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտերը պետք է հիմնավորված լինեն: Օրենսդիրը սահմանել է, որ վարչական ակտի հիմնավորումներում պետք է անպայման նշվեն համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը, այսինքն՝ վարչական մարմինը վարչական ակտն ընդունելիս պարտավոր է վարչական ակտում նշել այն բոլոր փաստական հանգամանքները և իրավական հիմքերը, որոնք հիմք են հանդիսացել տվյալ վարչական ակտն ընդունելու համար (*տե՛ս, Գիթա Հեյդարիմարանջեհն ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ օրենսդրի կողմից վարչական ակտի հիմնավորում պարունակելու պահանջն ինքնանպատակ չէ, այն հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց, ովքեր համաձայն չեն ընդունված վարչական ակտի հետ, վարչական բողոք կամ դատարան հայց ներկայացնելով՝ գործնականում իրացնել իրենց արդյունավետ իրավական պաշտպանության և դատարան դիմելու հիմնարար իրավունքները: Միաժամանակ վարչական մարմնի կողմից ընդունված հիմնավորված վարչական ակտը գործնականում իրական հնարավորություն է տալիս վարչական բողոքը քննարկող վարչական մարմնին կամ

այն քննող դատարանին պարզելու այն փաստական և իրավական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում (*տես*, «Ինտելոքուալ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, երրորդ անձ Իզաբելլա Վանյանի թիվ ՎԴ/03/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավական նորմում առկա ամրագրված իրավական հետևանքներն անձի նկատմամբ կիրառելու նախապայման է հանդիսանում իրավական նորմում առկա փաստակազմի առկայության բացահայտումը, որպիսի հանգամանքը պետք է նաև արտացոլվի համապատասխան վարչական ակտում:

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը, սույն գործի շրջանակներում ձեռնամուխ լինելով գնահատելու վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը, ստուգելով դրա համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն իրավաչափ են, և Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 14.11.2022 թվականի թիվ 1518373 վարչական ակտն անվավեր է՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում «սպառող» եզրույթի միասնական սահմանման բացակայության պայմաններում դեղերի իրացումը մեծածախ որակելու և այն համապատասխան լիցենզիա պահանջող գործարք համարելու, ու ըստ այդմ՝ առանց լիցենզիայի համապատասխան գործունեությունն իրականացնելու դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու համար բավարար չէ միայն այն հանգամանքը, որ դեղն իրացվել է իրավաբանական անձանց առանց դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի առկայության:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը և Դատարանի 26.07.2023 թվականի վճիռը թողնելով անփոփոխ, կայացրել է իրավաչափ դատական ակտ: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որն իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ

Կողմի օգտին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 03.05.2024 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ԵԴ/1157/01/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

11 հուլիսի 2025 թվականի ք. Երևան
գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Ռուստամ Ռաֆայելի Շավալյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի հունիսի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Լ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Չ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի հունիսի 6-ին ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրք) 131-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 11197619 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հունիսի 12-ի որոշմամբ Էռնա Ազոյանը ճանաչվել է տուժող:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հոկտեմբերի 7-ի որոշմամբ Ռուստամ Շավալյանը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 7-ի որոշմամբ Ռուստամ Շավալյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամանակով:

2019 թվականի հոկտեմբերի 14-ին Ռ.Շավալյանը հայտնաբերվել է, ձերբակալվել, և վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով:

2019 թվականի հոկտեմբերի 14-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, բավարարելով նախաքննական մարմնի միջնորդությունը, վերահաստատել է Ռուստամ Շավալյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը, որի ժամկետը հետագայում երկարացվել է:

2019 թվականի դեկտեմբերի 25-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ

ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, 2022 թվականի օգոստոսի 24-ի դատավճռով, Ռուստամ Շավալյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով մեղսագրվող արարքը վերաորակել է և վերջինիս մեղավոր է ճանաչել 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ գործող քրեական օրենսգրք) 191-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքում՝ նրա նկատմամբ պատիժ նշանակելով ազատազրկում՝ 2 (երկու) տարի 10 (տասը) ամիս ժամկետով:

Նույն դատական ակտով ամբաստանյալ Ռ.Շավալյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխվել է, որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը, և նա ազատ է արձակվել արգելանքից:

3. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Հ.Ղազարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2023 թվականի հունիսի 15-ի որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի օգոստոսի 24-ի դատավճիռը թողնելով անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Լ.Գրիգորյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել դատական սխալ, նյութական իրավունքի խախտում, որն ազդել է վարույթի ելքի վրա:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանի կողմից սխալ է մեկնաբանվել և կիրառվել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածը, ինչի արդյունքում հանցանք կատարած անձը դատապարտվել է նվազ ծանրության հանցանքի կատարման համար, ուստի վիճարկվող որոշումը ենթակա է բեկանման:

Բողոքի հեղինակը, անդրադառնալով ՀՀ գործող քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված արարքը որակյալ դարձնող հատկանիշին, նշել է, որ «մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկա կամ միջոց» հասկացության ներքո պետք է հասկանալ այն կենցաղային նշանակության առարկաները, որոնց կիրառմամբ հանցավորը կարող է վնաս պատճառել տուժողի առողջությանը, ինչպես նաև այն առարկաները, որոնք զենք չեն հանդիսանում արտադրման կամ պատրաստման պահին կամ ի սկզբանե առողջությանը վնաս պատճառելու հատկություն չունեն, բայց նախապես՝ մինչև հանցանք կատարելը, հարմարեցվել են այդպիսի հատկանիշ ձեռք բերելու համար:

Բողոքաբերը, անդրադառնալով դանակի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի իմաստով մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկա հանդիսանալու հարցին, նշել է, որ այն, ի սկզբանե, ունի անձին մարմնական վնասվածք պատճառելու հատկություն, և հանցավորի կողմից այն նախապես

հարմարեցնելու կամ պատրաստելու անհրաժեշտությունը բացակայում է: Հետևաբար, եթե հանցավորն արարքը կատարում է դանակի գործադրմամբ, արդեն իսկ ենթադրվում է, որ անձն օգտագործում է մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված առարկա, և դանակը նախապես պատրաստելը կամ հարմարեցնելը չի նույնանում հանցավորի կողմից այն նախապես վերցնելու հետ:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով սահմանված ծանրացնող հանգամանքը: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ առանց վկաներ Ստյոպա Խուդոյանի և Արտյոմ Սարգսյանի նախաքննական ցուցմունքների՝ չի հաստատվում այն հանգամանքը, որ ամբաստանյալ Ռուստամ Շավալյանը դանակը նախապես վերցրել է, այսինքն՝ նախապես այն պատրաստել է կամ հարմարեցրել, որպիսի պարագայում եկել է այն եզրահանգման, որ վկաների հիշյալ նախաքննական ցուցմունքներն ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի հիմքում չդնելու պայմաններում, ամբաստանյալ Ռուստամ Շավալյանին մեղսագրվող արարքը չի կարող որակվել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված ծանրացնող հանգամանքով:

Մինչդեռ, ըստ բողոքաբերի, ամբաստանյալ Ռուստամ Շավալյանի արարքը ծանրացնող հանգամանքով որակելու համար ամենևին էլ պարտադիր չէ, որ հաստատվեր գործադրված դանակն ամբաստանյալի կողմից նախապես վերցված լինելու հանգամանքը: Բացի այդ, բացի վկաներ Ստյոպա Խուդոյանի և Արտյոմ Սարգսյանի կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքների, Ռուստամ Շավալյանի կողմից որպես զենք օգտագործվող առարկա հանդիսացող դանակի գործադրմամբ մարդուն առևանգելու մասին հայտնել են նաև տուժող Է.Ազոյանը և վկա Ա.Ավդալյանը: Այսինքն՝ ամբաստանյալ Ռուստամ Շավալյանի արարքում ՀՀ գործող քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված ծանրացնող հանգամանքի առկայությունը փաստվում է վիճարկվող իրադարձություններին անմիջականորեն ակնատես վկա Ա.Ավդալյանի և տուժողի ցուցմունքներով, որոնք բավարար են հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու Ռուստամ Շավալյանի արարքում մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված առարկայի՝ դանակի գործադրմամբ առևանգման հանցակազմի առկայությունը:

6. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի հունիսի 15-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության կամ կայացնել դրան փոխարինող դատական ակտ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Ռուստամ Շավալյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «[Ն]ա, առևանգում կատարելու դիտարկությամբ, 2019 մայիսի 31-ին, ժամը 11-ի սահմաններում քննությամբ չպարզված տաքսի ավտոմեքենայով իր ընկերներ Ստյոպա Խուդոյանի և ոմն Արտյոմի հետ միասին գնացել է Երևան քաղաքի Բագրատունյաց փողոցի 70 հասցեի մոտ, խնդրել վարորդին կայանել նշված հասցեի մոտակայքում կանգնած մարմնավաճառությամբ զբաղվող Էռնա Ազոյանի և Աստղիկ Ավդալյանի մոտ, որից հետո միայնակ իջնելով ավտոմեքենայից և իր մոտ գտնվող որպես զենք օգտագործվող առարկա հանդիսացող դանակը ցուցադրելով՝

Է.Ազոյանի առողջության համար վրանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով, այն դրել է վերջինիս երիկամի շրջանին, այնուհետև միմյանց հետ զվարճանալու նպատակով հրահանգել է նրան նստել տաքսի ավտոմեքենան և գնալ իր մարնանշած վայր: Այդ ամենից դրդված էոնա Ազոյանն իր կամքին հակառակ նստել է տաքսի ավտոմեքենան, որից հետո Ռուստամ Շավալյանն ուղղորդելով վարորդին վարել դեպի Երևան քաղաքի Հին Երևանցի փողոց՝ Է.Ազոյանին կտրել է իր միկրոսոցիալական վայրից և տեղափոխել նշված վայր՝ այդ կերպ բացահայտ առևանգելով նրան (...):»¹:

8. Առաջին ատյանի դատարանի դատավճռով արձանագրվել է հետևյալը. «(...) Դատաքննությամբ հետազոտվել են հետևյալ ապացույցները. (...) Վկա Ա.Ավդալյանի դատաքննական ցուցմունքն այն մասին, որ «(...) Դեպքի օրն ինքը և էոնա Ազոյանը կանգնած են եղել, երբ տաքսիով երեք հոգի եկել են իրենց մոտ, ինչից հետո Ռուստամ Շավալյանը մոտեցել է իրեն: Այդ ժամանակ էոնա Ազոյանն իրենից մի քիչ հեռու է կանգնած եղել, այնուհետև մոտեցել է իրենց և հանդիմանել Ռուստամ Շավալյանին, թե ինչու է իր հետ այդպես խոսում: Ինչից հետո նկատվել է, թե ինչպես է Ռուստամ Շավալյանն իր վերնաշապակի ներսից էոնա Ազոյանի երիկամի հարվածում դանակի նմանվող իր պահում և ստիպում, որպեսզի վերջինս նստի ավտոմեքենան: Ռուստամ Շավալյանն էոնա Ազոյանին նստեցրել է ավտոմեքենան և տարել: (...):»:

Ամբաստանյալը միջնորդեց հրապարակել վկա Ա.Ավդալյանի նախաքննական ցուցմունքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված կարգի պահպանմամբ հրապարակվել է վկա Ա.Ավդալյանի նախաքննական ցուցմունքները, որոնց համաձայն՝ «(...) 2019 թվականի մայիսի 31-ին՝ առավոտյան, էոնա Ազոյանի հետ գտնվել է Երևան քաղաքի Բագրատունյաց փողոցում գտնվող «Նաիրի» գործարանի մոտ: Այդ ժամանակ իրենց մոտ է կայանվել «Օպել» մակնիշի ավտոմեքենա, որից իջել է Ռուստամը և մոտեցել իրեն ու հայիոյանքներ հնչեցրել իր հասցեին: Այդ պահին էոնա Ազոյանը, ով փոքր ինչ հեռու է կանգնած եղել, մոտեցել է Ռուստամին և վերջինիս հորդորել իրեն հանգիստ թողնել: Նրանք լեզվակոխվել են ունեցել, որի ժամանակ Ռուստամն իր մոտ գտնվող դանակը դրել է Է.Ազոյանի երիկամի հարվածին և ասել, որ որտեղ հրահանգի վերջինս պետք է գնա, հակառակ պարագայում կվնասի նրան: Է.Ազոյանը վախենալով այդ ամենից՝ նստել է նշված ավտոմեքենան ու վերջիններս հեռացել են: Հետագայում Է.Ազոյանից տեղեկացել է, որ Ռուստամը նրան տարել է Հին Երևանցու փողոց, որտեղից նա մի կերպ զանգահարել է դստերը և տեղեկացրել, որ առևանգվել է, ով իր հերթին այդ մասին հայտնել է ոստիկանությանը (...):»:

Վկա Ա.Ավդալյանը հայտնեց, որ նախաքննության ընթացքում որևէ մեկը չի ազդել իր կողմից տրվող ցուցմունքի ճշմարտացիության վրա:

Մահվան փաստի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված կարգի պահպանմամբ հրապարակվեցին վկաներ Սյրոպա Խուրդյանի և Արտյոմ Սարգսյանի նախաքննական ցուցմունքները: Սյրոպա Խուրդյանի նախաքննական ցուցմունքն այն մասին, որ «(...) շուրջ 6 ամիս է ինչ ճանաչում է Ռուստամ Շավալյանին, նրա հետ ունի մտերիմ հարաբերություններ: 2019 թվականի մայիսի 31-ին հանդիպել է Ռուստամ Շավալյանին, որից հետո վերջինիս հետ գնացել է Դավիթ Անհաղթ փողոցում գտնվող իր բնակության վայր, որտեղ ալկոհոլ են օգտագործել: Իր բնակության վայրից պատահական տաքսի ավտոմեքենայով գնացել են Երևան քաղաքի Բագրատունյաց փողոց, որտեղից իրենց

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 116-122:

է միացել Ռուստամի ընկեր Արտյոմը: Նախքան այդ Ռուստամի խնդրանքի համաձայն նրան է Կոլել իր մոտ գտնվող դանակը: Ռուստամը վարորդին հրահանգել է վարել «Տեցի Կոուզ» կոչվող վայր: Հասնելով նշված վայր՝ դանակը ձեռքին Ռուստամն իջել է ավտոմեքենայից և մոտեցել է փողոցում կանգնած երկու մարմնավաճառների: Ինքը և Արտյոմը ավտոմեքենայից չեն իջել: Քիչ անց մարմնավաճառ էռնան Ռուստամի հետ նստել է ավտոմեքենան, որի ժամանակ դանակը եղել է Ռուստամի ձեռքում: Վերջինս հրահանգել է վարորդին գնալ դեպի Հին Երևանցու փողոց: Հասնելով նշված փողոց՝ ինքը, Ռուստամը և էռնան իջել են ավտոմեքենայից, իսկ վարորդը և Արտյոմը հեռացել են: Ինքը փոքր ինչ հեռու է գնացել էռնայից և Ռուստամից, որից քիչ հետո եկել են ոստիկանները, որի ժամանակ Ռուստամը դանակը Կոլել է իրեն, ինչից հետո էլ իրենց փարել են ոստիկանության բաժին (...):

Արտյոմ Սարգսյանի նախաքննական ցուցմունքն այն մասին, որ «(...) շուրջ երկու տարի է ինչ ճանաչել է Ռուստամ Շավալյանին, նրա հետ ունեցել է մոտ հարաբերություններ: Ճանաչել է նաև Ստյոպին: 2019 թվականի մայիսի վերջերին՝ սրույգ օրը չի հիշում, առավոտյան կողմերը գտնվել է առաջին մասի փարածքում: Այդ ժամանակ իրեն է զանգահարել Ռուստամը և հարցրել, թե որտեղ է: Նրան հայտնել է, որ գտնվում է առաջին մասում և պատրաստվում է գնալ աշխատանքի, ով հայտնել է, որ քիչ հետո կգան փարածքի ավտոմեքենայով իրեն վերցնելու, իրեն կտանեն աշխատանքի վայր, բացի այդ, ասել է նաև, որ փարածքի ծառայության գումարն էլ վճարել է: Քիչ անց «Օպել» մակնիշի ավտոմեքենայով եկել են իր գտնվելու վայր: Ռուստամն իջել է առջևից և նստել հետևը, իսկ ինքը նստել է վարորդի կողմին: Դրանից հետո Ռուստամը վարորդին ասել է, որ գնան «Տեցի կոուզ» կոչվող վայրի կողմ: Այնտեղ գնալու ժամանակ Ռուստամը Ստյոպի ձեռքում գտնվող դանակը վերցրել է իր մոտ: Երբ հասել են նշված վայր, Ռուստամն իջել է ավտոմեքենայից և գնացել: Քիչ հետո մի մարմնավաճառի հետ եկել նստել են մեքենայի հետնամասում: Ռուստամը վարորդին հրահանգել է վարել դեպի «Օպերայի» կողմ: Այնտեղ գնալու ճանապարհին Ռուստամի ձեռքում է գտնվել Ստյոպի դանակը, որը թափահարելիս է եղել: Դրանից հետո հասել են Հին Երևանցի փողոց, որտեղ Ռուստամը, Ստյոպան և մարմնավաճառը իջել են ավտոմեքենայից, որից հետո ինքն այդ նույն փարածքի ավտոմեքենայով գնացել է Մոսկովյան փողոց (...):

(...)

Հաշվի առնելով, որ սպառվել էին տուժողին դատական նիստին ներկայացնելու միջոցները (Դատարանի կողմից կայացվել էին նաև բերման ենթարկելու մի շարք որոշումներ), հրապարակվեց տուժող էռնա Ազոյանի նախաքննական ցուցմունքն այն մասին, որ «(...) 2019 թվականի մայիսի 31-ին՝ ժամը 10-ից 11-ի սահմաններում, Աստղիկ Ավդալյանի հետ գտնվել է Երևան քաղաքի Բագրատունյաց փողոցում գտնվող «Նաիրի» գործարանի մոտակայքում: Այդ ժամանակ իրենց մոտ կայանվել է «Օպել» մակնիշի ավտոմեքենա, որից իջել է մի տղամարդ, ում անունը Ռուստամ է: Վերջինս մոտեցել է Ա.Ավդալյանին, զրույց վարել նրա հետ, որի ժամանակ հայտնել է նրան: Ինքը մոտեցել է Ռուստամին և հորդորել, որ չհայտնի Ա.Ավդալյանին: Դրանից հետո Ռուստամը մոտեցել է իրեն, և դանակի շեղբը դնելով երկամի շրջանին՝ ասել է, որ նստի ավտոմեքենան, հակառակ դեպքում կվնասի: Վախենալով այդ ամենից՝ նստել է ավտոմեքենայի հետնամասի նստատեղին, որտեղ նստած է եղել մի տղամարդ: Ռուստամը նույնպես նստել է հետնամասում, իսկ առջևում նստած է եղել ևս մի տղամարդ: Դրանից հետո Ռուստամը վարորդին հրահանգել է վարել դեպի Հին Երևանցու փողոց, որտեղ հասնելուն պես ինքը, Ռուստամը և հետնամասում նստած տղամարդն իջել են մեքենայից, իսկ վարորդն ու առջևում նստած տղամարդը հեռացել են: Ռուստամի ձեռքին դանակ է եղել, որից վախենալով փախուստի փորձ չի կատարել, բացի այդ էլ հագին եղել

է բարձրակրունկներով կոշիկներ և հասկացել է, որ դրանցով չի կարող վազել և փախչել: Թաքուն զանգահարել է դստերը և հայտնել, որ վերջինս զանգահարի ոստիկանություն և հայտնի, որ իրեն առևանգել են: Երբ եկել են ոստիկանության աշխատակիցները, Ռուսթամն իր մոտ գտնվող դանակը փակել է ընկերոջը, որից հետո նրանց տարել են ոստիկանության բաժին (...):»:

(...) [Վ]կաներ Սյոյոպա Խուդոյանի և Արսյոմ Սարգսյանի նախաքննական ցուցմունքները չեն կարող դրվել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի հիմքում: Դատարանի նշված դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ սույն դեպքում վկաների ցուցմունքները վճռորոշ են առևանգման ծանրացնող հանգամանքը (հատկապես հանցագործության գործիքի նախապես հարմարեցված կամ պատրաստված լինելու առումով) փաստելու համար, բացի այդ, ամբաստանյալ Ռ.Շավալյանը նախաքննության ընթացքում հնարավորություն չի ունեցել հարցեր ուղղել իր դեմ ցուցմունք փոխելու վկաների (առերեսումներ չեն կատարվել): Հետևաբար Դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի՝ հակընդդեմ հարցման իրավունքի ապահովված չլինելու պայմաններում վճռորոշ փաստական փյույակները (Ս.Խուդոյանի և Ա.Սարգսյանի ցուցմունքները) չեն կարող դրվել առաջադրված մեղադրանքի հիմքում:

Անդրադառնալով մյուս վկաների ցուցմունքներին՝ մեղադրանքի հիմքում դնելու հարցին, Դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալը հրաժարվել է Հ.Մաթևոսյանի, Ա. Ղազարյանի և վկաների հակընդդեմ հարցման իրավունքից, գտնում է, որ դրանք կարող են դրվել մեղադրանքի հիմքում:

Անդրադառնալով վկա Աստղիկ Ավդալյանի ցուցմունքին, Դատարանն արժանափաստ է համարում վկայի նախաքննական ցուցմունքը, քանզի այն հնարավոր է հավաստել նաև փուժողի ցուցմունքով:

Անդրադառնալով փուժող Է.Ազոյանի նախաքննական ցուցմունքը մեղադրանքի հիմքում դնելու հարցին, Դատարանն արձանագրում է, որ նախ՝ առևանգման փաստի վերաբերյալ փուժողի ցուցմունքը միակը չէ, բացի այդ, ամբաստանյալի կոնֆրոնտացիայի իրավունքը մասամբ իրացվել է առերեսման ժամանակ, հետևաբար փուժողի ցուցմունքը կարող է դրվել մեղադրանքի հիմքում:

(...) Դատարանը, (...) արձանագրում է, որ Ռ.Շավալյանին մեղսագրվող արարքը ենթակա է վերատրակման (...)

[Ի] փարբերություն նախորդ կարգավորումների՝ կյանքի կամ առողջության համար վրանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարելը, նոր նյութական օրենսգրքով առհասարակ նախատեսված չէ որպես առևանգման ծանրացնող հանգամանք, բացի այդ, նոր Քրեական օրենսգրքով միայն առարկայի կամ միջոցի գործադրումը դեռևս բավարար չէ արարքն այդ ծանրացնող հանգամանքով որակելու համար, քանզի նոր օրենսգրքի պայմաններում արարքը քննարկվող ծանրացնող հանգամանքով որակելու համար բացի գործադրման փաստից, անհրաժեշտ են նաև այլ փաստեր հանցավորի կողմից դրանք մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստելու կամ հարմարացնելու վերաբերյալ: Այլ կերպ՝ [ՀՀ գործող քրեական օրենսգրքը], որպես արարքի հանցավորությունը մասնակի վերացնող օրենքը, հետևադարձ ուժ ունի և կիրառելի է Ռ.Շավալյանի մեղսագրվող արարքին իրավական գնահատական փոխելու:

Դատարանը հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետազոտված ապացույցները բավարար չեն արձանագրելու ամբաստանյալի կողմից օգտագործվող առարկայի մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու

մասին, իսկ մյուս ծանրացնող հանգամանքը բացակայում է նոր օրենսգրքով, արձանագրում է, որ Ռ. Շավալյանի արարքը ենթակա է վերաորակման [ՀՀ գործող քրեական օրենսգրքի] 191-րդ հոդվածի 1-ին մասով (...)»²:

9. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, արձանագրել է հետևյալը. «(...) Առաջին ատյանի դատարանի արձանագրումը, որ վկաների ցուցմունք[ներ]ը վճռորոշ են առևանգման ծանրացնող հանգամանքը (հատկապես հանցագործության գործիքի նախապես հարմարեցված կամ պատրաստված լինելու առումով) փաստելու համար, բացի այդ, ամբաստանյալ Ռ.Շավալյանը նախաքննության ընթացքում հնարավորություն չի ունեցել հարցեր ուղղել իր դեմ ցուցմունք տվող վկաների (առերեսումներ չեն կատարվել) և հետևությունն առ այն, որ ամբաստանյալի՝ հակընդդեմ հարցման իրավունքի ապահովված չլինելու պայմաններում վճռորոշ փաստական տվյալները՝ Ս.Խուդոյանի և Ա.Սարգսյանի ցուցմունքները չեն կարող դրվել առաջադրված մեղադրանքի հիմքում, հիմնավոր է, բխում է քրեական վարույթի նյութերով ու Եվրոպական և Վճռաբեկ դատարանների վերաբերելի իրավական դիրքորոշումներից:

(...)

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ նոր ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված զենքի գործադրմամբ կատարվող առևանգման հետ: Մասնավորապես, ի տարբերություն նախորդ կարգավորումների՝ միայն առարկայի կամ միջոցի գործադրումը դեռևս բավարար չէ արարքը ծանրացնող հանգամանքով որակելու համար, անհրաժեշտ են նաև այլ փաստեր հանցավորի կողմից այդ առարկան կամ գործիքը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստելու կամ հարմարեցնելու վերաբերյալ:

Այլ կերպ՝ արարքը նշված ծանրացնող հատկանիշով որակելու համար պետք է հաստատվի, որ հանցավորն այն վերցրել՝ նախապես պատրաստել է տվյալ հանցագործությունը կատարելու դիտարկությամբ: Մինչդեռ նման հետևության կարելի է հանգել միայն վկաներ Ս.Խուդոյանի և Ա.Սարգսյանի նախաքննական ցուցմունքներով, հետևաբար Առաջին ատյանի դատարանի հետևությունը՝ հակընդդեմ հարցման իրավունքով չապահովված վկաների ցուցմունքները՝ Ռ.Շավալյանի արարքը որակյալ՝ ծանրացնող հատկանիշով որակելու համար վճռորոշ լինելու և ըստ էության՝ քրեական գործում դրանց հակակշռող բավարար գործոնների բացակայության վերաբերյալ հիմնավոր է:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ Առաջին ատյանի դատարանի հետևությունը՝ Ռ.Շավալյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասով որակելու և նրան նշված արարքում մեղավոր ճանաչելու մասին, հիմնավոր է, բավարար չափով պատճառաբանված»³:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրք) անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Մինչև սույն օրենսգրքն ուժի մեջ մտնելը կայացված դատական ակտերով վերաքննիչ և վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով»:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 146-151:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 96-103:

Վերոգրյալից հետևում է, որ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո կայացված դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են 2022 թվականի հուլիսի 1-ից գործող քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Հետևաբար, սույն բողոքի քննությունն իրականացնելիս, որպես Վճռաբեկ դատարանում բողոքի քննության ընթացակարգ, հիմք է ընդունվում 2022 թվականի հուլիսի 1-ից գործող կարգը: Մինչույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ռուստամ Շավալյանի վերաբերյալ քրեական գործը քննության է առել, իսկ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտի իրավաչափությունը գնահատել է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների շրջանակներում, ուստի ստորադաս դատարանների հետևությունների իրավաչափության գնահատման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները (այսուհետ՝ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգիրք):

10. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված՝ *զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ մարդուն առևանգելու հանցակազմի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման խնդիր*: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղենիշային նշանակություն ունենալ նույնաբնույթ գործերով միասնական դատական պրակտիկայի ձևավորման համար:

Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյոք Ռուստամ Շավալյանի արարքում առևանգման հանցակազմի՝ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելու ծանրացնող հանգամանքի բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝ *«Խարբերության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 218-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝*

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

(...)

2. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

(...)

3) *զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ (...):*

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի համաձայն՝ *«Մարդուն առևանգելը՝ անձին իր կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով կամ անօգնական վիճակն օգտագործելով այլ վայր տեղափոխելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները՝*

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

(...)

7) *զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ (...):*

ՀՀ գործող և նախկին քրեական օրենսգրքերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ նախկին օրենսգրքի բազմաթիվ հանցակազմերում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված՝ հանցանքը **որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ** կատարելու որակյալ հատկանիշն էական բովանդակային փոփոխության է ենթարկվել: Մասնավորապես, ՀՀ գործող քրեական օրենսդրության շրջանակներում կարևորվել է առարկայի կամ միջոցի՝ **մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու հանգամանքը:**

12. Հարկ է նկատել, որ համանման կարգավորում էր նախատեսված նաև 1961 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 4-րդ մասով, որն ուժը կորցրել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքն ուժի մեջ մտնելու պահից: Մասնավորապես, վերոնշյալ նորմով որպես խուլիգանության ծանրացնող հանգամանք էր նախատեսված խուլիգանությունը **հրազենի կամ դանակի, կասսետի կամ այլ սառը զենքի, ինչպես նաև մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաների** գործադրմամբ կամ դրանց գործադրման փորձով կատարելու:

Խուլիգանության վերոնշյալ ծանրացնող հանգամանքը համեմատական վերլուծության ենթարկելով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ խուլիգանությունը **որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ** կատարելու որակյալ տեսակի հետ՝ Վճռաբեկ դատարանը *Սերյոժա Հովակիմյանի* գործով արձանագրել է հետևյալը. «[2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված] ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշ է արարքը «զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ» կատարելը:

Մինչ այդ գործող օրենսդրությամբ, այն է՝ ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքով ստեղծված հանցակազմի ձևակերպումն այլ էր: Այդ օրենսգրքի 222-րդ հոդվածի 4-րդ մասում (վերջին խմբագրություն) օգտագործվում էր «հրազենի կամ դանակի, կասսետի կամ սառը զենքի, ինչպես նաև մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաների գործադրում» արտահայտությունը:

Ինչպես երևում է, գործող և նախկին քրեական օրենսգրքերը ծանրացնող հանգամանքներում կատարված խուլիգանության հանցակազմի քննարկվող հատկանիշը նկարագրելիս օգտագործում են տարբեր ձևակերպումներ. մեկը՝ «որպես զենք օգտագործվող առարկաների գործադրում» (ՀՀ գործող քրեական օրենսգրքի 258-րդ հոդված), իսկ մյուսը՝ «մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված առարկաների գործադրում» (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 222-րդ հոդված):

Դատարանը գտնում է, որ նշված ձևակերպումների միջև առկա է ոչ միայն խմբագրական (ոչ նորմատիվային), այլև նորմատիվային տարբերություն. ՀՀ նոր քրեական օրենսգրքի 258 հոդվածի տեքստից բացակայում է մարմնական վնասվածքներ հասցնելու (կենդանի նշանակետ խոցելու) համար օգտագործվող առարկայի այն հատկանիշը, որ դա պետք է հատուկ հարմարեցված լինի մարմնական վնասվածքներ հասցնելու համար:

Հետևաբար 2003 թվականի օգոստոսի 1-ից՝ նոր քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո, արարքը որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանության հանցակազմով որակելու համար անհրաժեշտ չէ, որ այդ առարկաները հատուկ հարմարեցված լինեն. դրանք կարող են վերցված լինել նաև դեպքի վայրում:

Քննարկվող իրավանորմի դիսպոզիցիայի կառուցվածքից որպես զենք օգտագործվող առարկաների՝ հատուկ հարմարեցված լինելու հատկանիշի դուրս բերումը պետք է գնահատել որպես խնդրո առարկայի վերաբերյալ օրենսդրի մոտեցման ակնհայտ փոփոխություն՝

պայմանավորված դեպքի վայրում վերցված առարկաները որպես զենք օգտագործելու հետ զուգորդված խուլիգանության հանրային վրանգավորության վերագնահատմամբ: Եթե նախկինում դրա աստիճանը գնահատելիս օրենսդիրն էական նշանակություն էր տալիս որպես զենք օգտագործվող առարկայի գործադրման վաղօրոք ծագած դիտարկությանը, ապա ներկայում առավել էական է հինքնին գործադրման փաստը: Այսպիսով, օրենսդրի դիրքորոշման փոփոխության հիմքում ընկած է այն մոտեցումը, որ խուլիգանության արդյունքում խաթարվող հասարակական հարաբերությունների բնույթը, ինչպես նաև տուժողին հասցվող վնասի աստիճանը էապես պայմանավորված չէ այն հանգամանքով, թե հանցագործության գործիքը՝ որպես զենք օգտագործվող առարկան, հատուկ հարմարեցված է, թե ոչ, և այն հանցավորի կողմից բերվել է, թե վերցվել է դեպքի վայրից (...)⁴:

13. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետերում իրականացված վերլուծությունը և մեջբերված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, ՀՀ գործող քրեական օրենսդրության շրջանակներում որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք դիտարկելով կոնկրետ հանցանքը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելը, ի համեմատություն ՀՀ նախկին քրեական օրենսդրության, նեղացրել է վերոնշյալ որակյալ հանգամանքի բովանդակությունը: Մասնավորապես, եթե նախկինում արարքը ծանրացնող հանգամանքով որակելու համար հինքնին բավարար էր որպես զենք օգտագործվող առարկաների գործադրման փաստը, ապա կատարված փոփոխության պայմաններում, անհրաժեշտ է ոչ միայն հավաստել անձի կողմից համապատասխան առարկան կամ միջոցը գործադրելու, այլև դրանք մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստելու կամ հարմարեցնելու հանգամանքը:

Օրենսդրի վերոնշյալ մոտեցման հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ հանցանքը նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելն է իրականում վկայում հանցավորի անձի բարձր վտանգավորության մասին, այլ ոչ թե պարզապես որպես զենք օգտագործվող առարկաների գործադրումը, երբ համապատասխան առարկան կարող է վերցվել նաև դեպքի վայրից⁵:

14. Ընդհանրացնելով վերոշարադրյալը, ինչպես նաև վերհանելով կատարված փոփոխության բովանդակությունը և օրենսդրի նպատակը, ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **որակյալ է համարվում ոչ թե առարկայի կամ միջոցի պարզապես օգտագործումը, այլ մարմնական վնասվածք պատճառելու համար որոշակի նախապատրաստական գործողությունների իրականացումը, այն է՝ առարկան կամ միջոցը նախապես պատրաստելը կամ հարմարեցնելը**: Այլ կերպ՝ արարքը քննարկվող ծանրացնող հանգամանքով որակելու համար, անհրաժեշտ է նախևառաջ ուշադրություն դարձնել հանցավորի սուբյեկտիվ ընկալմանը և վերջինիս կողմից օբյեկտիվորեն իրականացված գործողությունների բնույթին:

Մասնավորապես, վերոնշյալ որակյալ հանգամանքն անձին մեղսագրելու համար, կարևոր է, որ վերջինս մարմնական վնասվածք պատճառելու համար **նախապես որոշակի ակտիվ գործողություններ իրականացնի**, այն է՝ **պատրաստի կամ հարմարեցնի** համապատասխան առարկան կամ միջոցը: Հաշվի առնելով «պատրաստել» կամ

⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սերյոժա Հովակիմյանի գործով 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-125/07 որոշումը:

⁵ Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույցը, 2022 թվական:

«հարմարեցնել» արտահայտությունների լեզվաբացատրական նշանակությունը, ինչպես նաև դրանց վերաբերյալ առկա դոկտրինալ մեկնաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առարկան կամ միջոցը **պատրաստել** ասելով պետք է հասկանալ ցանկացած գործողություն, որի արդյունքում մարմնական վնասվածք պատճառելու համար պատրաստի առարկա կամ միջոց է ստացվում կամ ստեղծվում: Ինչ վերաբերում է առարկան կամ միջոցը **հարմարեցնելուն**, ապա այն ենթադրում է հանցավորի կողմից **արդեն իսկ գոյություն ունեցող առարկայի կամ միջոցի նկատմամբ որևէ ներգործության իրականացում՝ լրիվ կամ մասնակի կառուցվածքային փոփոխության ենթարկում, կարգավորում կամ ձևափոխում, որպեսզի դրանք առավել արդյունավետ կամ հարմար լինեն օգտագործման համար** (օրինակ՝ մետաղյա ձողը կամ խոհանոցային դանակը սրելը, մետաղական մալուխը ընդհանուր զանգվածից կտրելով առանձնացնելը և այլն):

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հանցագործության նախապատրաստության ինստիտուտի վերլուծության շրջանակներում համանման դիրքորոշում է արտահայտել հանցագործության գործիքները կամ միջոցները հարմարեցնելու հասկացության վերաբերյալ՝ փաստելով, որ **հանցագործության գործիքները և միջոցները հարմարեցնել է համարվում դրանց կառուցվածքի և ձևի այնպիսի փոփոխությունը, որն անհրաժեշտ է հանցավոր ուրնձգությունն իրականացնելու համար**⁶:

14.1. Այսպիսով, ընդհանրացնելով սույն որոշման 11-14-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված որակյալ տեսակն անձին մեղսագրելու համար անհրաժեշտ է հաստատված համարել, որ առևանգումը կատարվել է մարմնական վնասվածք պատճառելու համար **նախապես պատրաստված կամ հարմարեցված** առարկայի կամ միջոցի գործադրմամբ:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Ռուստամ Շավալյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, իր մոտ գտնվող՝ որպես զենք օգտագործվող առարկա հանդիսացող դանակը ցուցադրելով, է.Ազոյանի առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով, դրել է այն տուժողի երկկամի շրջանին, այնուհետև միմյանց հետ զվարճանալու նպատակով հրահանգել է նրան նստել տաքսի ավտոմեքենան և գնալ իր մատնանշած վայր, ինչի արդյունքում է.Ազոյանին իր կամքին հակառակ կտրել է իր միկրոսոցիալական միջավայրից և տեղափոխել Երևան քաղաքի Հին Երևանցի փողոց՝ այդ կերպ բացահայտ առևանգելով նրան⁷:

- Առաջին ատյանի դատարանը Ռուստամ Շավալյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով մեղսագրված արարքը համապատասխանեցրել է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասին՝ արձանագրելով, որ նշված օրենսգրքով կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով առևանգում կատարելն առհասարակ նախատեսված չէ որպես ծանրացնող հանգամանք, իսկ ինչ վերաբերում է որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ առևանգմանը, ապա ՀՀ գործող քրեական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների պայմաններում միայն առարկայի կամ միջոցի գործադրումը դեռևս բավարար չէ արարքն այդ ծանրացնող հանգամանքով որակելու համար, քանզի բացի գործադրման փաստից, պետք է լինեն նաև տվյալներ հանցավորի

⁶ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Կարեն Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12 որոշումը:

⁷ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

կողմից դրանք մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստելու կամ հարմարեցնելու վերաբերյալ: Մինչդեռ, հետազոտված ապացույցները բավարար չեն արձանագրելու ամբաստանյալի կողմից գործադրված առարկայի՝ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու մասին⁸:

- Վերաքննիչ դատարանն իր հերթին ընդգծել է, որ ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի կարգավորումների, ՀՀ գործող քրեական օրենսդրությամբ միայն առարկայի կամ միջոցի գործադրումը դեռևս բավարար չէ արարքը ծանրացնող հանգամանքով որակելու համար, անհրաժեշտ են նաև փաստեր՝ հանցավորի կողմից այդ առարկան կամ գործիքը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստելու կամ հարմարեցնելու վերաբերյալ, այսինքն՝ տվյալներ առ այն, որ անձն առարկան կամ գործիքը նախապես պատրաստել է տվյալ հանցագործությունը կատարելու դիտավորությամբ: Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ սույն գործով նման հետևության կարելի էր հանգել միայն վկաներ Ս.Խուդոյանի և Ա.Սարգսյանի նախաքննական ցուցմունքներով, մինչդեռ ամբաստանյալի՝ հակընդդեմ հարցման իրավունքի ապահովված չլինելու պայմաններում վերոնշյալ վճռորոշ փաստական տվյալները չեն կարող դրվել առաջադրված մեղադրանքի հիմքում, հետևաբար Առաջին ատյանի դատարանի հետևությունները՝ հակընդդեմ հարցման իրավունքով չապահովված վկաների ցուցմունքները՝ Ռուստամ Շավալյանի արարքը որակյալ՝ ծանրացնող հատկանիշով որակելու համար վճռորոշ լինելու և ըստ էության՝ քրեական գործում դրանց հակակշռող բավարար գործոնների բացակայության վերաբերյալ, հիմնավոր են⁹:

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները դիտարկելով սույն որոշման 11-14.1-րդ կետերում մեջբերված իրավանորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Ռուստամ Շավալյանի արարքում մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի գործադրմամբ առևանգման ծանրացնող հանգամանքի բացակայության և կատարված արարքը ՀՀ գործող քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասով որակելու հարցում եկել են ճիշտ հետևության: Մասնավորապես, ստորադաս դատարաններն իրավաչափորեն փաստել են, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքում կատարված փոփոխության պայմաններում համապատասխան առարկայի կամ միջոցի գործադրման փաստը դեռևս բավարար չէ անձի արարքում ծանրացնող հանգամանքի առկայությունը հավաստելու համար, այլ նաև անհրաժեշտ են տվյալներ առ այն, որ անձն առարկան կամ միջոցը նախապես պատրաստել կամ հարմարեցրել է տվյալ հանցանքը կատարելու դիտավորությամբ:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ առևանգման հանցակազմի քննարկվող որակյալ տեսակն անձին մեղսագրելու համար անհրաժեշտ է գործում առկա փաստական տվյալներով հաստատված համարել, որ առևանգումը կատարվել է մարմնական վնասվածք պատճառելու համար **նախապես պատրաստված կամ հարմարեցված** առարկայի կամ միջոցի գործադրմամբ: Մինչդեռ, սույն գործում առկա չէ որևէ տվյալ առ այն, որ ամբաստանյալ Ռուստամ Շավալյանը նախապես պատրաստել կամ հարմարեցրել է համապատասխան առարկան՝ հանցանքը կատարելու համար:

Վերոնշյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում բողոքաբերի այն փաստարկին, որ *դանակն ի սկզբանե ունի անձին*

⁸ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

մարմնական վնասվածք պատճառելու հատկություն, և հանցավորի կողմից այն նախապես հարմարեցնելու կամ պատրաստելու անհրաժեշտությունը բացակայում է, հետևաբար, եթե հանցավորն արարքը կատարում է դանակի գործադրմամբ, արդեն իսկ ենթադրվում է, որ անձն օգտագործում է մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված առարկա: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ մեկնաբանությունը չի բխում ինչպես քննարկվող ծանրացնող հանգամանքի բովանդակությունից, այնպես էլ այդ հարցում օրենսդրի դրսևորած կամքից: Մասնավորապես, կատարված օրենսդրական փոփոխության հիմքում ընկած է այն գաղափարը, որ հանցանք կատարած անձի առավել բարձր վտանգավորության մասին է վկայում այն, որ վերջինս որոշակի քայլեր է ձեռնարկում՝ նախապես պատրաստում կամ հարմարեցնում է համապատասխան առարկան կամ միջոցը՝ մարմնական վնասվածք պատճառելու համար: Այլ կերպ՝ սույն ծանրացնող հանգամանքի դեպքում խոսք է գնում ոչ թե **ընդհանրապես** առարկայի կամ միջոցի՝ ի սկզբանե անձին մարմնական վնասվածք պատճառելու հատկություն ունենալու, այլ անձի կողմից **այդ նպատակով՝ մարմնական վնասվածք պատճառելու համար, կոնկրետ գործողություններ իրականացնելու՝ նախապես պատրաստելու կամ հարմարացնելու մասին**: Հակառակ մեկնաբանությունը, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, ողջամտորեն կվտանգի «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (*nullum crimen, nulla poena sine lege*) հանրահայտ սկզբունքը, որից, ի թիվս այլնի, բխում է, որ քրեական օրենքը չպետք է ի վնաս անձի տարածական մեկնաբանության ենթարկվի: Անձը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի այլ կերպ, քան օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, կարգով և չափով: Վերոնշյալ կանոնը բացարձակ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում և իրավունքի գերակայության կարևորագույն տարր է, հետևաբար նշված սկզբունքից որևէ շեղումն անթույլատրելի է¹⁰:

17. Այսպիսով, ամփոփելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռուստամ Շավալյանի արարքում առևանգման հանցակազմի՝ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելու ծանրացնող հանգամանքի բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված են:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին աստիճանի դատարանը, Ռուստամ Շավալյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով մեղսագրվող արարքը ՀՀ գործող քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանեցնելով, իսկ Վերաքննիչ դատարանը, Առաջին աստիճանի դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելով, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր, հետևաբար ներկայացված բողոքը ենթակա է մերժման:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռուստամ Շավալյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունն անհրաժեշտ է վերացնել:

21. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

¹⁰ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Ավետիսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴՅ/0013/01/11, Դավիթ Սիմիոյանի գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0122/01/13, Վարդան Դազարյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՎԴ/0002/01/14 որոշումները:

ՈՐՈՇԵՑ

1. Ռուստամ Ռաֆայելի Շավալյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի օգոստոսի 24-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի հունիսի 15-ի որոշումը թողնել անփոփոխ:

2. Ռուստամ Ռաֆայելի Շավալյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

ԵԴ1/0372/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

12 օգոստոսի 2025 թվականի ք.Երևան
գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 29-ի որոշման դեմ մեղադրյալ Տիգրան Գնեյի Հայրապետյանի պաշտպան Տ.Ղազարյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2023 թվականի օգոստոսի 31-ին, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, նախաձեռնվել է թիվ 60259623 քրեական վարույթը:

2024 թվականի փետրվարի 23-ին Տիգրան Գնեյի Հայրապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

Նույն օրը Տիգրան Հայրապետյանին մեղադրանք է ներկայացվել, և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

2. 2024 թվականի փետրվարի 27-ին քրեական վարույթի նյութերը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2024 թվականի հունիսի 3-ին Տիգրան Հայրապետյանի նկատմամբ կայացրել է արդարացման վերոհիկտ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի հունիսի 4-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Տիգրան Հայրապետյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում՝ իրեն մեղսագրվող արարքը կատարած չլինելու հիմքով:

4. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ դատախազ Ա.Դավթյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 29-ի

որոշմամբ բավարարվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի հունիսի 4-ի դատավճիռը՝ բեկանվել, և վարույթը փոխանցվել է ստորադաս դատարան՝ նոր քննության:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 29-ի որոշման դեմ պաշտպան Տ.Ղազարյանը վճռաբեկ բողոք է բերել, որը վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի հունվարի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, և սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

6. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, չի կատարել գործում եղած փաստական տվյալների բազմակողմանի հետազոտություն, ինչը հանգեցրել է ոչ իրավաչափ որոշման կայացման:

Մասնավորապես, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը հիմնարար նշանակություն է տվել այն փաստարկին, որ Տ.Հայրապետյանը տեղյակ է եղել տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված լինելու մասին, և վարել է այն, ուստի առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմը՝ ուղղակի դիտավորությունը, ինչի հաշվառմամբ գտել է, որ Տ.Հայրապետյանի արարքում առկա են նշված հանցանքի հատկանիշները: Մինչդեռ, անդրադարձ չի կատարվել և բոլոր փաստական տվյալների հետ համակցության մեջ չի գնահատվել այն հանգամանքը, որ Տ.Հայրապետյանին տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելու վերաբերյալ վարչական որոշումը եղել է ոչ իրավաչափ, ապօրինի, որպիսի պայմաններում վերջինս չի կարող համարվել իրեն մեղսագրված հանցանքի սուբյեկտ, քանի որ Տ.Հայրապետյանն այլևս չի համարվում տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված անձ, որը պարտադիր է սույն հանցագործության սուբյեկտի կարգավիճակի համար:

Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի դատողություններով ստացվել է իրավիճակ, որ ապօրինի որոշման հիման վրա Տիգրան Հայրապետյանն իր կամքից անկախ հանգամանքներով ձեռք է բերել հատուկ սուբյեկտի կարգավիճակ, և փաստացի ապօրինի որոշումը պետք է դրվի անձի դատապարտման հիմքում, ինչն իրավաչափ համարվել չի կարող:

7. Վերոշարադրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է **ա մ բ ո ջ ու թ յ ա մ բ** բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 29-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի հունիսի 4-ի դատավճիռին:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Տիգրան Հայրապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել և նրան մեղադրանք է ներկայացվել այն բանի համար, որ *«(...) [Նա], տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից մեկ տարի ժամկետով՝ 2023 թվականի հունվարի 13-ից մինչև 2024 թվականի հունվարի 15-ը զրկված լինելու և այդ մասին նախապես տեղյակ լինելու պայմաններում, 2023 թվականի մարտի 4-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Ա.Բաբաջանյան փողոցում վարել է «Նիսսան» մակնիշի 01 TI 020 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, ինչը հայտնաբերվել է փոխալ տարածքում ծառայություն իրականացնող ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության*

Երևան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի 2-րդ վաշտի պարել Գրիշա Պողոսյանի կողմից, և ինչի կապակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 8180244204 արձանագրությունը»¹:

9. Վերաքննիչ վարչական դատարանի՝ 2024 թվականի մարտի 14-ի թիվ ՎԴ5/0069/05/23 որոշմամբ՝ Տիգրան Հայրապետյանին տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 1 (մեկ) տարի ժամկետով զրկելու վերաբերյալ 2023 թվականի հունվարի 13-ի որոշումը ճանաչվել է անվավեր: Դատական ակտն օրինական ուժի մեջ է մտել 2024 թվականի ապրիլի 16-ին²:

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի հունիսի 4-ի դատավճռով արձանագրվել է հետևյալը. «(...) [Հ]իմնական դատախազի ընթացքում հետազոտված ապացույցներով հաստատված է, որ Տիգրան Հայրապետյանը 2023 թվականի հունվարի 13-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 8180240495 արձանագրության հիման վրա տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 1 տարի ժամկետով զրկվել է օրենքով սահմանված կարգի խախտմամբ:

Մասնավորապես, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի մարտի 14-ի թիվ ՎԴ5/0069/05/23 որոշմամբ՝ Տիգրան Հայրապետյանին տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 1 տարի ժամկետով զրկելու վերաբերյալ 2023 թվականի հունվարի 13-ի որոշումը ճանաչվել է անվավեր և նշված դատական ակտն օրինական ուժի մեջ է մտել 2024 թվականի ապրիլի 16-ին:

(...)

Դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են: Ընդ որում, չի կարող անվավեր ճանաչվել այն ոչ իրավաչափ վարչական ակտեր, որը չի կարող խախտել որևէ անձի, Հայաստանի Հանրապետության կամ որևէ համայնքի իրավունք (...):

(...) [Ս]ույն վարույթի հիմնական դատախազի ընթացքում հետազոտված ապացույցներով հաստատվել է, որ Տիգրան Հայրապետյանին տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 1 տարի ժամկետով զրկելու մասին 2023 թվականի հունվարի 13-ի վարչական ակտը եղել է ոչ իրավաչափ, այն է՝ վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ և դրանով խախտվել են Տիգրան Հայրապետյանի՝ օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատությունները: Առկա պայմաններում, հնարավոր չէ հաստատված համարել, որ 2023 թվականի մարտի 4-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Ա.Բաբաջանյան փողոցում «Նիսսան» մակնիշի 01 TI 020 հաշվառման համարանիշի ավտոմեքենան վարելիս Տիգրան Հայրապետյանը ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով հանդիսացել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից օրենքով սահմանված կարգով զրկված անձ:

Այսինքն՝ Տիգրան Հայրապետյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը, որպիսի պայմաններում նրա նկատմամբ պետք է կայացվի արդարացման դատավճիռ:

¹ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթ 43:

² Տե՛ս www.datalex.am դատական տեղեկատվական համակարգ, գործ թիվ ՎԴ5/0069/05/23:

Դատարանը հարկ է համարում նաև իր անհամաձայնությունը հայտնել եզրափակիչ ելույթի ընթացքում հանրային մեղադրողի արտահայտած այն դիրքորոշման հետ, որ Տիգրան Հայրապետյանի արարքում առկա են նրան մեղսագրվող հանցակազմի հատկանիշները, քանի որ արարքը կատարելու պահի դրությամբ վերջինին տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու մասին վարչական ակտն անվավեր ճանաչված չի եղել:

Այդ առնչությամբ Դատարանը կրկնում է, որ անձի դատապարտման հիմքում չի կարող դրվել ոչ իրավաչափ՝ օրենքի խախտմամբ ընդունված և անձի իրավունքները խախտող վարչական ակտի պահանջները չկատարելու հանգամանքը՝ անկախ նրանից, որ կոնկրետ գործողությունը կատարելու պահի դրությամբ նշված վարչական ակտի ապօրինի լինելու հանգամանքը դեռևս հաստատված չի եղել (...)»³:

11. Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «(...) Հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է վարորդական իրավունքից զրկված կամ նման իրավունքը կասեցված վիճակում անձի կողմից տրանսպորտային միջոց վարելով: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածում նկարագրված՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքն օրենքով սահմանված կարգով լինի կասեցված, և միաժամանակ կասեցման ժամկետը չլինի լրացած:

Սուբյեկտիվ կողմից արարքը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ տրանսպորտային միջոց է վարում դրա իրավունքից զրկված կամ նման իրավունքի գործողությունը կասեցված լինելու պայմաններում: Վերաքննիչ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ այս պարագայում էական է անձի դիտավորության ուղղվածության գնահատումը, այն է՝ տրանսպորտային միջոց վարելիս անձը տեղեկացված է կամ գիտի, որ ինքը վարորդական իրավունքից զրկված է կամ այն կասեցված է: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ սույն հանցակազմի առկայությունը փաստելու համար առանցքային դերակատարություն չի կարող ունենալ ծագած վարչական իրավահարաբերության զարգացման գործընթացը, այլ էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք առկա են այն քրեաիրավական անհրաժեշտ չափանիշները, որոնք անձին թույլ են տալիս գիտակցել, որ տրանսպորտային միջոցը վարում է դրա իրավունքից զրկված կամ նման իրավունքի գործողությունը կասեցված լինելու պայմաններում:

Այն հանգամանքը, որ մեղադրյալ Տիգրան Հայրապետյանը տեղեկացված է եղել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից մեկ տարի ժամկետով՝ 2023 թվականի հունվարի 13-ից մինչև 2024 թվականի հունվարի 15-ը, զրկված լինելու մասին հաստատվում է ոչ միայն քրեական գործում առկա գրավոր ապացույցներով, այլ նաև մեղադրյալի հայտնածով այն մասին, որ ինքը գիտակցաբար շարունակել է ավտոմեքենա վարել կարիքից դրդված, քանի որ տաքսի ծառայության մատուցմամբ է հոգում իր ընտանիքի կարիքները: Դատախոսների ժամանակ մեղադրյալ Տիգրան Հայրապետյանը հայտարարել է, որ ինքը տեղեկացված է եղել, որ զրկվել է տրանսպորտային միջոց վարելու իրավունքից, սակայն վստահ է եղել, որ իրեն անօրինական են զրկել և այդ վարչական ակտը բողոքարկել է դատարան, որն էլ վարչական դատարանի որոշմամբ ճանաչվել է անվավեր: Ավելին՝ քրեական գործում առկա է Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի մարտի 14-ի որոշումը, որի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մեղադրյալ

³ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 41-49:

Տիգրան Հայրապետյանը միջնորդություններ է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության 2023 թվականի հունվարի 13-ի 8180240495 որոշման կատարումը կասեցնելու վերաբերյալ, սակայն ՀՀ վարչական դատարանի 2023 թվականի մարտի 13-ի և մարտի 24-ի որոշումներով մեղադրյալ Տիգրան Հայրապետյանի միջնորդությունները մերժվել են:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին աստիճանի դատարանը, ճանաչելով և հոչակելով Տիգրան Հայրապետյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում, թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, ուստի Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազ Ա.Դավթյանի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել, իսկ Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2024 թվականի հունիսի 04-ի ԵԴ1/0372/01/24 դատավճիռը բեկանել, վարույթը փոխանցել Առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության (...)»⁴:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ Առաջին աստիճանի դատարանը Տիգրան Հայրապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում արդարացնելու հարցում հանգել է սխալ հետևության:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի համաձայն՝ «1. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելը՝
(...)

3. Սույն օրենսգրքի իմաստով՝ անձը համարվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված, եթե նա օրենքով սահմանված կարգով զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, և զրկման ժամկետը չի լրացել:

4. Սույն օրենսգրքի իմաստով՝ անձի՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը համարվում է կասեցված, եթե նրա՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքն օրենքով սահմանված կարգով կասեցվել է, և կասեցման ժամկետը չի լրացել: (...)»:

13.1. Մեջբերված նորմը ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված է երթևեկության անվտանգության և տրանսպորտի շահագործման սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների շարքում: Հանցագործության հիմնական անմիջական օբյեկտը երթևեկության անվտանգության և տրանսպորտի շահագործման սահմանված կարգն ապահովող հասարակական հարաբերություններն են: Վերոնշյալ արարքն ամրագրված է ձևական հանցակազմով, իսկ հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ վարելու իրավունքը կասեցված լինելու պայմաններում տրանսպորտային միջոց վարելով:

Այլ կերպ, ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասի գործողության նախապայմանը և այդ հոդվածով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքը՝ նրա վարչական պատասխանատվության ենթարկված լինելն է՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկվելը կամ վարելու իրավունքը կասեցվելը: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ վարելու

⁴ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 32-36:

իրավունքից զրկելը կամ այդ իրավունքը կասեցնելը **պետք է լինի օրենքով սահմանված կարգով, այն է՝ իրավաչափ վարչական ակտի հիման վրա:** Հակառակ պարագայում, եթե վարչական ակտը կայացվել է օրենքով սահմանված կարգի խախտմամբ և վարչական կամ դատական կարգով անվավեր է ճանաչվել, ապա քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը բացակայում է, քանզի վերանում է քրեական պատասխանատվության ենթարկվելու պարտադիր նախապայմանը՝ օրենքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության ենթարկված լինելը:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է, քանի որ բացի ընդհանուր սուբյեկտի հատկանիշներից, անձը պետք է օժտված լինի նաև լրացուցիչ հատկանիշներով, այն է՝ **լինի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից օրենքով սահմանված կարգով զրկված կամ վարելու իրավունքը կասեցված, մեղսունակ ֆիզիկական անձ:**

Սուբյեկտիվ կողմից հանցագործությունը դրսևորվում է միայն **ուղղակի դիտավորությամբ**, մասնավորապես՝ անձը գիտակցում է, որ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ իրավունքը կասեցված լինելու պայմաններում վարում է տրանսպորտային միջոց:

14. Այսպիսով, ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի առկայությունն արձանագրելու համար անհրաժեշտ է հիմնավորել, որ անձը տրանսպորտային միջոցը վարել է՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված լինելու պայմաններում, որպիսի հանգամանքը հաստատվել է իրավաչափ վարչական ակտով:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Տիգրան Հայրապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել և նրան մեղադրանք է ներկայացվել այն բանի համար, որ վերջինս տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից մեկ տարի ժամկետով զրկված լինելու և այդ մասին նախապես տեղյակ լինելու պայմաններում, վարել է ավտոմեքենա, ինչը հայտնաբերվել է տվյալ տարածքում ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակցի կողմից, որի կապակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ համապատասխան արձանագրություն⁵:

- Վերաքննիչ վարչական դատարանի՝ 2024 թվականի մարտի 14-ի թիվ ՎԴ5/0069/05/23 որոշմամբ, Տիգրան Հայրապետյանին տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 1 (մեկ) տարի ժամկետով զրկելու վերաբերյալ 2023 թվականի հունվարի 13-ի որոշումը ճանաչվել է անվավեր, և նշված դատական ակտն օրինական ուժի մեջ է մտել 2024 թվականի ապրիլի 16-ին⁶:

- Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ Տիգրան Հայրապետյանին տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 1 (մեկ) տարի ժամկետով զրկելու մասին վարչական ակտի անվավերության պայմաններում, անհնար է հաստատված համարել, որ 2023 թվականի մարտի 4-ին ավտոմեքենան վարելիս վերջինս ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով հանդիսացել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից օրենքով սահմանված կարգով զրկված անձ, ուստի այդ հանգամանքներում մեղսագրված արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը:

⁵ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
⁶ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

Միաժամանակ, դատարանը նշել է, որ անձի դատապարտման հիմքում չի կարող դրվել ոչ իրավաչափ՝ օրենքի խախտմամբ ընդունված և անձի իրավունքները խախտող վարչական ակտի պահանջները չկատարելու հանգամանքը՝ անկախ նրանից, որ կոնկրետ գործողությունը կատարելու պահի դրությամբ նշված վարչական ակտի ապօրինի լինելու հանգամանքը դեռևս հաստատված չի եղել⁷:

- Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, փաստել է, որ Տիգրան Հայրապետյանը տեղեկացված է եղել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից մեկ տարի ժամկետով զրկված լինելու մասին և գիտակցաբար շարունակել է ավտոմեքենա վարել, ինչպես նաև վերջինս միջնորդություններ է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության 2023 թվականի հունվարի 13-ի թիվ 8180240495 որոշման կատարումը կասեցնելու վերաբերյալ, սակայն ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի մարտի 13-ի և մարտի 24-ի որոշումներով նրա միջնորդությունները մերժվել են:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, ճանաչելով և հոչակելով Տիգրան Հայրապետյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում, թույլ է տվել նյութական իրավունքի խախտում⁸:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները դիտարկելով սույն որոշման 13-14-րդ կետերում մեջբերված իրավանորմի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն առ այն, որ սույն հանցակազմի պարագայում էական է անձի դիտավորության ուղղվածության գնահատումը՝ այն, որ տրանսպորտային միջոց վարելիս անձը տեղեկացված է եղել իր՝ վարորդական իրավունքից զրկված կամ այն կասեցված լինելու մասին և առանցքային դերակատարություն չի կարող ունենալ ծագած վարչական իրավահարաբերության զարգացման գործընթացը, չի կարող հիմնավոր համարվել: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քննարկվող հանցակազմի առկայության տեսանկյունից տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելը կամ այդ իրավունքը կասեցնելը պետք է լինի օրենքով սահմանված կարգով, այն է՝ իրավաչափ վարչական ակտի հիման վրա, հակառակ պարագայում քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը բացակայում է:

Այս առումով Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում Առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշմանը, որ անձի դատապարտման հիմքում չի կարող դրվել ոչ իրավաչափ՝ օրենքի խախտմամբ ընդունված և անձի իրավունքները խախտող վարչական ակտի պայմանները չկատարելու հանգամանքը՝ անկախ նրանից, որ կոնկրետ գործողությունը կատարելու պահի դրությամբ նշված վարչական ակտի ոչ օրինական լինելու հանգամանքը դեռևս հաստատված չի եղել: Առաջին ատյանի դատարանն իրավաչափորեն փաստել է, որ վարչական ակտի անվավերության պայմաններում հնարավոր չէ հաստատված համարել, որ տրանսպորտային միջոց վարելիս մեղադրյալը հանդիսացել է **տրանսպորտային միջոց վարելու իրավունքից օրենքով սահմանված կարգով զրկված անձ**, այսինքն՝ տվյալ դեպքում բացակայել է ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը: Վերոնշյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ տվյալ դեպքում հնարավոր չէ հիմնավոր հետևության հանգել նաև հանցագործության սուբյեկտի առկայության հարցում, քանի որ օրենքով սահմանված

⁷ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

⁸ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

կարգով տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված լինելու կամ այդ իրավունքը կասեցված լինելու ուժով է անձը ձեռք բերում տվյալ հանցագործության սուբյեկտին ներհատուկ հատկանիշները:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, գալով այն հետևության, որ **այս պարագայում էական է անձի դիտարկության ուղղվածության գնահատումը, այն է՝ տրանսպորտային միջոց վարելիս անձը տեղեկացված է եղել, որ ինքը վարորդական իրավունքից զրկված է կամ այն կասեցված է, և սույն հանցակազմի առկայությունը փաստելու համար առանցքային դերակատարություն չի կարող ունենալ ծագած վարչական իրավահարաբերության զարգացման գործընթացը**, ըստ էության շեշտը դրել է բացառապես հանցագործության սուբյեկտիվ կողմի գնահատման վրա՝ անտեսելով հանցագործության օբյեկտիվ կողմի և սուբյեկտի բացակայության վերաբերյալ գործում առկա փաստական տվյալների ամբողջությունը:

Այս տեսանկյունից հիմքեր չկան չհամաձայնելու բողոքաբերի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանի հետևությունները հանգեցնում են մի իրավիճակի, որ ոչ իրավաչափ որոշման հիման վրա Տիգրան Հայրապետյանին իր կամքից անկախ հանգամանքներով ձեռք է բերում հատուկ սուբյեկտի կարգավիճակ, և այդ որոշումը պետք է դրվի անձի դատապարտման հիմքում, ինչն իրավաչափ համարվել չի կարող⁹:

17. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ Առաջին ատյանի դատարանը Տիգրան Հայրապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում արդարացնելու հարցում հանգել է սխալ հետևության, հիմնավոր չէ:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը, թույլ է տվել նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառում, հետևաբար անհրաժեշտ է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի արդարացման դատական ակտին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից ու ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Մեղադրյալ Տիգրան Գնելի Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 29-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի հունիսի 4-ի արդարացման դատավճիռն՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

⁹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ՀԿԴ/0058/02/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ ՆԱԵՎ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

«24» սեպտեմբերի 2025թ.

քաղաք Երևան

գրավոր ընթացակարգով քննելով ըստ ՀՀ Լոռու մարզի դատախազության հայցի ընդդեմ Վրույր Սիմոնի Հովակիմյանի՝ պետությանը պատճառված վնասը բռնագանձելու պահանջի մասին, հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 15.04.2025 թվականի որոշման դեմ ՀՀ Լոռու մարզի դատախազության կողմից բերված վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1.1. 29.04.2024 թվականին ՀՀ Լոռու մարզի դատախազությունը (այսուհետ նաև՝ Բողոքաբեր), փոստային ծառայության միջոցով, հայցադիմում է ներկայացրել ՀՀ հակակոռուպցիոն դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ Վրույր Սիմոնի Հովակիմյանի՝ որպես պետությանը պատճառված 1.144.500 ՀՀ դրամ վնասը բռնագանձելու պահանջի մասին, որը 03.05.2024 թվականին մակագրվել է դատավոր Լ. Դրմեյանին:

1.2. 30.05.2024 թվականին Դատարանը (դատավոր՝ Լ. Դրմեյան) հայցադիմումն ընդունել է վարույթ:

1.3. 23.12.2024 թվականին Դատարանը վճռել է.

«1. Լոռու մարզի դատախազության հայցն ընդդեմ Վրույր Սիմոնի Հովակիմյանի՝ հոգույր Հայաստանի Հանրապետության որպես պետությանը պատճառված վնասի հատուցում 1.144.500 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին, բավարարել մասնակիորեն.

Վրույր Սիմոնի Հովակիմյանից հոգույր Հայաստանի Հանրապետության բռնագանձել 360.000 ՀՀ դրամ գումար՝ որպես պետությանը պատճառված վնասի հատուցում:

1.1. Հայցը մնացած մասով մերժել: (...):»:

1.4. 09.01.2025 թվականին Բողոքաբերը, փոստային ծառայության միջոցով, ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 27.01.2025 թվականին ընդունել է վարույթ:

1.5. 15.04.2025 թվականին Վերաքննիչ դատարանը որոշել է վերաքննիչ բողոքը մերժել և Դատարանի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

1.6. 23.04.2025 թվականին Բողոքաբերը, փոստային ծառայության միջոցով, ներկայացրել է վճռաբեկ բողոք:

1.7. 02.05.2025 թվականին գործը հանձնվել է Վճռաբեկ դատարանի աշխատակազմին:

1.8. 14.05.2025 թվականի որոշմամբ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

1.9. Պատասխանող Վրույր Սիմոնի Հովակիմյանը վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացրել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

2.1. Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել նյութական իրավունքի նորմերը, որը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Բողոքաբերը բողոքում ներկայացրել է հետևյալ փաստարկները.

2.2. Բողոքաբերն իրավաչափ չի համարել Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ Դատարանը ճիշտ է կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 238-րդ և 239-րդ հոդվածները, ինչպես նաև այն, որ Դատարանի պատճառաբանությունները եղել են օրինական և հիմնավոր:

2.3. Վկայակոչելով թիվ ՀԿԴ/0108/02/22 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած ՀՀ հակակոռուպցիոն դատարանի վճիռը՝ նշել է, որ սույն գործի փաստերին համանման այդ գործով առաջին ատյանի դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 17-րդ և 1058-րդ հոդվածները, ամբողջությամբ բավարարել է ՀՀ Լոռու մարզի դատախազության հայցը՝ վնասը բռնագանձելու պահանջով:

2.4. Բողոքաբերի կարծիքով, թեև Վրույր Սիմոնի Հովակիմյանը եղել է պետության կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության աշխատող, սակայն հաշվի առնելով, որ այդ կազմակերպությունն ունի առանձին գույք, առանձին իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվության իր առանձին շրջանակները, ուստի այդ աշխատողի կողմից «պետությանը վնաս պատճառելը» և «գործատուին (կազմակերպությանը) վնաս պատճառելը» նույնացնելն իրավաչափ չէ՝ անկախ նրանից, որ գործառույթային առանձնահատկություններից ելնելով՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ին վերապահված է եղել պետական անտառների պահպանությունը: «Հայանտառ» ՊՈԱԿ-ը թեև պետության կողմից ստեղծված կազմակերպություն է և իրականացնում է իրեն օրենքով վերապահված գործառույթները, սակայն այդ կազմակերպության ու պետության իրավասությունների շրջանակները պետական սեփականություն հանդիսացող գույքի առումով խիստ տարբեր են:

2.5. Սույն դեպքում պատասխանողը հանդես է եկել ոչ թե պետության (որպես առանձին սուբյեկտի), այլ՝ կոնկրետ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի աշխատող, հետևաբար քննարկվող իրադրությունում պետության հետ անմիջական քաղաքացիաիրավական փոխհարաբերությունների մեջ չի եղել, նրա փոխհարաբերություններն ու պատասխանատվությունը սահմանված են եղել աշխատանքի ընդունվելիս գործատուի արձակած հրամաններով (հետագայում նաև՝ աշխատանքային գործունեության ընթացքում այլ նորմատիվ-իրավական ակտերով) և նախատեսել են պարտականությունների ու պատասխանատվության առավել նեղ շրջանակ, որում ներառված չեն եղել պետական անտառների ապօրինի հատումների հետևանքով պետությանը պատճառված վնասի հատուցման հարցին վերաբերող դրույթներ, այսինքն՝ այդպիսի դեպքերում վնասի հատուցման

կարգի, չափերի ու այլ հարցերի շուրջ պատասխանողը և գործատուն («Հայանտառ» ՊՈԱԿ-ը) որևէ նորմատիվ-իրավական ակտով համաձայնություն չեն կնքել:

2.6. Ստորադաս դատարաններն օրենքին տվել են առավել լայն մեկնաբանում, ինչի հետևանքով եկել են ոչ արդարացի հետևության, որ քննարկվող իրադրությունում պատասխանողը պետության (ի դեմս «Հայանտառ» ՊՈԱԿ-ի) հետ եղել է աշխատանքային փոխհարաբերությունների մեջ, ուստի վնասի հատուցման չափի հարցը լուծելիս պետք է կիրառվեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 238-րդ և 239-րդ հոդվածները: Բողոքաբերը հանգել է հետևության, որ բողոքով բերվող փաստարկներով ու մեկնաբանություններով հնարավոր է հանգել հակառակ և առավել իրավաչափ հետևության:

2.7. Մասնավորապես, որ քննարկվող իրադրությունում կիրառման ենթակա են ոչ թե ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերը, այլ՝ վնասների հատուցման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող նորմերը, որոնք նախատեսված են Օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածներով: Գտել է, որ օրենքը սխալ մեկնաբանելու հետևանքով վիճարկվող դատական ակտերի կայացմամբ խախտվել ու սխալ են կիրառվել նյութական իրավունքի նորմերը, ինչն ուղղակիորեն և էական ազդեցություն է ունեցել գործի ելքի վրա, այն է՝ պատասխանողների դեմ ներկայացված հայցի մասնակի բավարարման պատճառով վտանգի տակ է դրվել պետության գույքային իրավունքների ու շահերի լիարժեք պաշտպանությունը:

2.8. Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքաբերը եզրահանգել է, որ բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ, ինչպես նշվել է, ստորադաս դատական ատյանները նույն փաստական հանգամանքների առնչությամբ կիրառել են նյութական իրավունքի տարբեր նորմեր՝ հակասական մեկնաբանությամբ:

2.9. Վերոգրյալի հիման վրա Բողոքաբերը պահանջել է մասնակիորեն՝ Օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների փոխարեն, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 238-րդ ու 239-րդ հոդվածների կիրառման ենթակա մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 15.04.2025 թվականի որոշումը՝ բեկանված մասով գործն ուղարկելով համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

3.1. 09.02.2021 թվականի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատանքի ընդունելու մասին N 62-Ա հրամանով Վրույր Սիմոնի Հովակիմյանը 10.02.2021 թվականից ընդունվել է աշխատանքի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Թումանյանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Դսեղի անտառպետության թիվ 2 պահաբաժնում՝ որպես անտառապահ (**հատոր 1-ին, գ.թ. 42-43**):

3.2. 23.09.2021 թվականի ՀՀ ոստիկանության Լոռու մարզի վարչության Թումանյանի բաժնի թիվ 003666 անտառխախտման արձանագրության համաձայն՝ 22.09.2021 թվականին «Թումանյանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Դսեղի անտառպետության թիվ 2 պահաբաժնի, թիվ 5 քառակուսու, թիվ 4.8 անտառամասերի 1-ին կարգի պաշտպանական նշանակության տեղամասում մոնիթորինգի կողմից հայտնաբերվել են ապօրինի հատված տարբեր տեսակի և տրամաչափերի 14 հատ ծառերի կոճղեր (**հատոր 1-ին, գ.թ. 22-23**):

3.3. 06.10.2021 թվականի Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի թիվ N ՎՀ-05/290 ապօրինի ծառահատումների մասին վնասի հաշվարկի համաձայն՝ «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի

3-րդ գլխի 6-րդ հոդվածի 10-րդ մասի թիվ 003666 անտառխախտման արձանագրությունում և հաշվեգնահատման ամփոփագրում ձայնագրված թվով 14 ծառերի ապօրինի հատման հետևանքով վնասի հատուցման չափը կազմել է 1.144.500 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 30-31**):

3.4. 18.10.2021 թվականի դեպքի վայրի զննություն կատարելու մասին արձանագրության համաձայն՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ից ստացված թիվ 318 գրության, թիվ 003666 անտառխախտման արձանագրության համաձայն՝ Թումանյանի անտառտնտեսության Դսեղի անտառապետության 2-րդ պահաբաժնում իրականացվել է դեպքի վայրի զննություն: Դեպքի վայրի զննության մասնակից՝ Դսեղի անտառապետության 2-րդ պահաբաժնի անտառապահ Վրույր Հովակիմյանը, մատնացույց է արել նշված տեղանքը, որն անանցանելի էր, և թվով 14 հատ տարբեր տեսակի և հատման տրամաչափերի ծառերի կոճղեր է հայտնաբերվել: Նշված ծառերը հատվել են ապօրինի կերպով՝ անհայտ անձի կամ անձանց կողմից, որոնք էլ ստուգման ժամանակ հայտնաբերվել են և անտառտնտեսության աշխատակիցների կողմից կնքվել և համարակալվել են: Կազմվել է համապատասխան արձանագրություն և ուղարկվել է ըստ ենթակայության: Ձննության ընթացքում այլ ապօրինի հատված ծառեր կամ ճյուղեր չեն հայտնաբերվել, չեն հայտնաբերվել նաև մոտակայքում և տարածքում տեսանկարահանող սարքեր (**հատոր 1-ին, գ.թ. 38-39**):

3.5. 11.11.2021 թվականի վկայի լրացուցիչ հարցաքննության արձանագրության համաձայն՝ Վրույր Սիմոնի Հովակիմյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 2021 թվականի մարտ ամսից աշխատում է Թումանյանի անտառտնտեսության թիվ 2 պահաբաժնի անտառապահ: 2021 թվականի սեպտեմբերին մոնիթորինգի ստուգումներով իր պահաբաժնի թիվ 5 քառակուսու թիվ 4 և 8 պահաբաժնի անտառամասերում հայտնաբերվել են ապօրինի հատված ծառերի կոճղեր: Վերջինս հայտնել է, որ չգիտի, թե ով է կատարել այդ ապօրինի հատումները, ոչ մեկի վրա չի կասկածում: Ինքը նորմալ շրջել է այդ տարածքներում, սակայն այդ արմատները չի գտել, քանի որ թփերը և խոտերը բարձր էին (**հատոր 1-ին, գ.թ. 44-47**):

3.6. 03.01.2022 թվականի քրեական գործ հարուցելու մասին որոշման համաձայն՝ պաշտոնատար անձանց կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքի առթիվ հարուցվել է թիվ 55200122 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով (**հատոր 1-ին, գ.թ. 14-17**):

3.7. Նույն որոշմամբ նշվել է, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ը ճանաչվել է տուժող (**հատոր 1-ին, գ.թ. 14**):

3.8. 22.03.2024 թվականին Վրույր Սիմոնի Հովակիմյանը որպես վկա լրացուցիչ ցուցմունք է տվել այն մասին, որ մոնիթորինգի կողմից 2021 թվականի սեպտեմբերին Դսեղի անտառապետության 2-րդ պահաբաժնի 5-րդ քառակուսում, որն ինքն էր սպասարկում, հայտնաբերվել է ապօրինի հատված 14 ծառ, մինչև այդ չի հայտնաբերել, աշխատել է շուրջ երկու տարի, մեղավորությունը ճանաչում է, իր աշխատանքում անփույթ է եղել, չի հայտնաբերել, զղջում է կատարվածի համար, վնասը չի կարող վերականգնել, քանի որ հնարավորություն չունի: Քանի որ վաղեմության ժամկետն անցել է, խնդրել է իր նկատմամբ կիրառել վաղեմություն և վարույթը կարճել (**հատոր 1-ին, գ.թ. 55-57**):

3.9. 26.03.2024 թվականի ՀՀ Լոռու մարզի դատախազի տեղակալի՝ հանրային քրեական հետապնդում չհարուցելու քննիչի միջնորդությունը բավարարելու մասին որոշման համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա. Ուլուխանյանի վարույթում քննվող թիվ 55200122 քրեական վարույթով հանրային քրեական

հետապնդում չհարուցելու մասին միջնորդությունը բավարարվել է և Վրոյր Հովակիմյանի նկատմամբ 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման կապակցությամբ հանրային քրեական հետապնդում չի հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով քրեական պատասխանատվությունից ազատման ենթակա լինելու հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 58-64**):

3.10. 31.03.2024 թվականի քրեական վարույթը կարճելու մասին որոշման համաձայն՝ թիվ 55200122 քրեական գործի վարույթը կարճվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթի ուժով քրեական պատասխանատվությունից ազատման՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 65-71**):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

4.1. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ առնվազն մեկ այլ գործով՝ ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտում Օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածները կիրառվել են հակասող մեկնաբանությամբ:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցադրմանը, թե ճյուղային իրավունքի ո՞ր նորմերն են կիրառելի պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատողի կողմից պետությանը ենթադրյալ վնաս պատճառելու իրավահարաբերությունների նկատմամբ՝ դրա շրջանակներում վերահաստատելով նաև նախկինում արտահայտված դիրքորոշումները:

Այս հարցադրման շրջանակներում, որոշման պարզության տեսանկյունից, Վճռաբեկ դատարանը հարցադրմանը կպատասխանի երեք ենթահարցադրմամբ՝ նախ, *արդյո՞ք պետական ոչ առևտրային կազմակերպությունն օժտված է քաղաքացի-իրավական գործունեության ինքնավարությամբ (Principium Autonomiae)*, երկրորդ, *ո՞վ է հանդիսանում պետական ոչ առևտրային կազմակերպությունում աշխատող աշխատակցի գործատուն, և երրորդ, Վճռաբեկ դատարանը կանդրադառնա վնաս պատճառելու հետևանքով առաջացած իրավահարաբերություններին (նյութական պատասխանատվություն, դելիկտային պարտավորություններ):*

Մինչ այդ, սակայն, Վճռաբեկ դատարանը՝ հիմքում ունենալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասը, ընդգծում է, որ սույն բողոքը քննում է բացառապես վճռաբեկ բողոքի հիմքերի՝ բողոքում նշված համապատասխան նյութական իրավունքի նորմերի խախտումների և դրանց վերաբերյալ հիմնավորումների սահմաններում:

Ա) Արդյո՞ք պետական ոչ առևտրային կազմակերպությունն օժտված է քաղաքացի-իրավական գործունեության ինքնավարությամբ (Principium Autonomiae).

¹ Թիվ ՀԿԴ/0108/02/22 հակակոռուպցիոն քաղաքացիական գործ:

4.2. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի² (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են՝ 1) **Պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող³ ոչ առևտրային կազմակերպություն է,** որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, շրջակա միջավայրի պահպանության և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով: 2) **Պետական կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Պետական կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:**

Օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է՝ 1) Պետական կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով: 2) Պետական կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

Օրենքի 17-րդ հոդվածի դ) կետի համաձայն՝ պետական կազմակերպության գործադիր մարմինը՝ **աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում պետական կազմակերպության աշխատակիցներին,** նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:

4.3. Վկայակոչված հոդվածներից ակնհայտ է, որ պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ նաև՝ ՊՈԱԿ) իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է, որն Օրենքի սահմաններում, օժտված է իրավաբանական անձին բնորոշ քաղաքացիա-իրավական գործունեության ինքնավարությամբ, կարող է կնքել պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային), իր աշխատակիցների նկատմամբ կարող է կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերով և այլ իրավական ակտերով սահմանված ներգործության միջոցները, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: ՊՈԱԿ-ն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքով, միաժամանակ, ՊՈԱԿ-ը պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների համար: Այլ կերպ ասած՝ ՊՈԱԿ-ը քաղաքացիա-իրավական հարաբերություններում հանդես է գալիս որպես ինքնուրույն սուբյեկտ և չի կարող նույնացվել իր հիմնադրի հետ: Թեև պետությունն է հիմնադրում ՊՈԱԿ-ին և անշուշտ՝ ՊՈԱԿ-ը, ի տարբերություն այլ ոչ առևտրային կազմակերպությունների, ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք սահմանված են Օրենքով, սակայն դա չի նվազեցնում ՊՈԱԿ-ի՝ քաղաքացիա-իրավական հարաբերություններում ինքնուրույն գործելու ունակությունը՝ Օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

Բ) Ո՞վ է հանդիսանում պետական ոչ առևտրային կազմակերպությունում աշխատող աշխատակցի գործատու.

4.4. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմերը պետք է մեկնաբանվեն**

² Ընդունված 23.10.2001 թվականին՝ թիվ ՀՕ-248 օրենք:

³ Այստեղ և այլուր ընդգծումներն ըստ Վճռաբեկ դատարանի:

դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի պահանջները: Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմի մեկնաբանումը չպետք է փոփոխի դրա իմաստը:

4.5. Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ **աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են**, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

4.6. Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են** աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով **կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով**:

4.7. Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն աշխատանքային հարաբերության այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը: **Գործատու կարող է լինել աշխատանքային իրավունակություն և գործունակություն ունեցող իրավաբանական անձը՝ անկախ կազմակերպական-իրավական և սեփականության ձևից, գործունեության բնույթից և տեսակից և ֆիզիկական անձը**: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որպես գործատու կարող է հանդես գալ աշխատանքային պայմանագիր կնքելու իրավունք ունեցող այլ սուբյեկտ (հիմնարկ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին և այլն):

4.8. Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

4.9. Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում օրենսդիրը սահմանել է, որ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում, աշխատանքային պայմանագրում, ի թիվս այլնի, նշվում են գործատուի անվանումը (...):

4.10. 22.10.2021 թվականի թիվ ԵԴ/0392/02/20 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ. «(...) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով «գործատու» հասկացությունը **պետք է մեկնաբանել փառացի նշանակությամբ՝ նույն օրենսգրքի ընդհանուր կարգավորման համարեքստում՝ չփոփոխելով փվյալ իրավանորմի իմաստը** (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ

հողված, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդված): Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ 1. Գործատուն աշխատանքային հարաբերության այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը: 2. Գործատու կարող է լինել աշխատանքային իրավունակություն և գործունակություն ունեցող իրավաբանական անձը՝ անկախ կազմակերպական-իրավական և սեփականության ձևից, գործունեության բնույթից և տեսակից, և ֆիզիկական անձը (...): Վկայակոչված իրավանորմերի բովանդակային համադրումից հետևում է, որ ՀՀ աշխատանքային օրենսդրության իմաստով գործատուն (ոչ ֆիզիկական անձ) այն իրավաբանական անձն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը (...):»:

4.11.02.09.2022 թվականի թիվ ԵԿԴ/1913/02/17 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով աշխատանքային պայմանագրի բովանդակությանը, նշել է. «Աշխատանքային իրավահարաբերությունների ծագման համար հիմք հանդիսացող՝ օրենքով նախատեսված իրավաբանական փաստի՝ աշխատանքային պայմանագրի բովանդակությունը բացահայտված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածում, որի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև: Աշխատանքային պայմանագիրը հանդիսանում է իրավաբանական փաստ, որը բավարար և անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում աշխատանքային իրավահարաբերությունների ծագման համար: Իսկ այս կամ այն իրավահարաբերությունների ծագման համար անհրաժեշտ և բավարար հիմքերի սահմանումն ընդհանրապես, իսկ կոնկրետ դեպքում՝ աշխատանքային իրավահարաբերությունների համար մասնավորապես, հետապնդում է որոշակիություն ապահովելու իրավաչափ նպատակ»:

4.12. Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է. «(...) աշխատանքային հարաբերություններն աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններ են, որոնց միջոցով աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ, իսկ գործատուն դրա համար ապահովում է որոշակի աշխատանքային պայմաններ: **Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:** Աշխատանքային պայմանագիրն աշխատողի և գործատուի միջև համաձայնություն է, որով աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել վերջինիս կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել ՀՀ օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ (տես Յուլյա Սալմասյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/7522/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.09.2023 թվականի որոշումը):»:

4.13. Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած վերը նշված դիրքորոշումները, հարկ է համարում ընդգծել, որ աշխատանքային հարաբերությունները ձևավորվում են երկու կողմերի՝ աշխատողի և գործատուի միջև: Այս հարաբերությունների հիմքում ընկած է ազատ կամաարտահայտման միջոցով փոխադարձ համաձայնությունը,

որը դրսևորվում է համապատասխան անհատական իրավական ակտի ընդունման կամ աշխատանքային պայմանագրի կնքման փաստով: Հետևաբար, «գործատու» հասկացությանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի ընդհանուր կարգավորման համատեքստում չպետք է տրվի տարածական մեկնաբանություն: Այլ կերպ ասած՝ աշխատանքային իրավահարաբերությունների տեսանկյունից «գործատուն» այն քաղաքացիա-իրավական հարաբերության սուբյեկտն է, որն աշխատանքային հարաբերությունների մեջ է մտնում աշխատողի հետ՝ աշխատանքային պայմանագրի կամ անհատական իրավական ակտի հիման վրա: Այս հարաբերություններում չի կարող լինել սովերային սուբյեկտ, որն աշխատանքային պայմանագրի կողմ չէ կամ անհատական իրավական ակտ ընդունող, սակայն հանդիսանում է աշխատողի գործատուն, կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկել աշխատակցին, կիրառել այլ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված ներգործության միջոցներ և այլն: Պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ լինելով իրավաբանական անձ, կարող է հանդես գալ որպես գործատու և իր իրավասությունների սահմաններում ունի լիարժեք ինքնավարություն՝ ընտրելու համապատասխան այն անձին, որի հետ ցանկանում է հաստատել աշխատանքային իրավահարաբերություններ, կիրառել իր աշխատակցի նկատմամբ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված ներգործության միջոցներ և այլն:

Գ) Վնաս պատճառելու հետևանքով առաջացած իրավահարաբերություններ (նյութական պատասխանատվություն, դելիկտային պարտավորություններ).

4.14. Հաջորդիվ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վնաս պատճառելու հետևանքով առաջացող պատասխանատվության հարցին՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված նյութական պատասխանատվության և Օրենսգրքով սահմանված դելիկտային պարտավորությունների լույսի ներքո:

4.15. Օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ (...) **աշխատանքային, (...) հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ (...) աշխատանքային, (...) և այլ հատուկ օրենսդրությամբ**:

4.16. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ **աշխատանքային օրենսդրությունը սահմանում է՝ նյութական պատասխանատվության պայմաններն ու չափերը (սահմանները)**:

4.17. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 231-րդ հոդվածի համաձայն՝ նյութական պատասխանատվությունն առաջանում է այն դեպքում, երբ աշխատանքային պայմանագրի կողմը (գործատուն կամ աշխատողը), չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով իր պարտականությունները, վնաս է պատճառում մյուս կողմին: Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, եթե աշխատանքային օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

4.18. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 232-րդ հոդվածի համաձայն՝ նյութական պատասխանատվություն առաջանում է հետևյալ բոլոր պայմանների առկայության դեպքում.

1) պատճառված է վնաս. 2) վնասը պատճառվել է անօրինական գործունեության հետևանքով. 3) առկա է պատճառահետևանքային կապ անօրինական գործունեության և վնասի առաջացման միջև. 4) առկա է խախտողի մեղքը. 5) խախտում թույլ տված և տուժած

Կողմերն իրավունքի խախտման պահին եղել են աշխատանքային հարաբերությունների մեջ. 6) վնասի առաջացումը կապված է աշխատանքային գործունեության հետ:

4.19. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 237-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է հատուցել **գործատուին պատճառած** նյութական վնասը, որն առաջացել է՝ 1) գործատուի գույքը փչացնելու կամ կորցնելու հետևանքով. 2) նյութերի գերաժախս թույլ տալու հետևանքով. 3) աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունները կատարելիս այլ անձանց պատճառված վնասը գործատուի կողմից հատուցելու դեպքերում. 4) գործատուին պատկանող գույքը փչացնելու պատճառով կատարված ծախսերից. 5) նյութական արժեքների ոչ պատշաճ պահպանության հետևանքով. 6) անորակ արտադրանքի թողարկումը կանխելու համար դիտավորյալ կերպով միջոցառումներ չձեռնարկելու, նյութական կամ դրամական արժեքները հափշտակելու հետևանքով:

4.20. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 238-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառված վնասը լրիվ ծավալով, բայց ոչ ավելի նրա երեք ամսվա միջին աշխատավարձի չափից, բացառությամբ նույն օրենսգրքի 239-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

4.21. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 239-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերը, որի պարագայում **գործատուին պատճառված վնասն** աշխատողի կողմից լրիվ ծավալով ենթակա է հատուցման: Դրանք են՝ 1) վնասը պատճառվել է դիտավորությամբ. 2) վնասը պատճառվել է աշխատողի հանցավոր գործունեության հետևանքով. 3) աշխատողի հետ կնքվել էր լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագիր. 4) վնասը պատճառվել է աշխատանքի համար նրան տրված անհրաժեշտ գործիքների, սարքավորումների, հատուկ հագուստի և անհատական ու կոլեկտիվ պաշտպանության այլ միջոցների, ինչպես նաև նյութերի, կիսաֆաբրիկատների կամ արտադրանքի կորստի հետևանքով. 5) վնասը պատճառվել է այնպիսի եղանակով կամ այնպիսի գույքի, որի դեպքում օրենքով սահմանված է լիակատար գույքային պատասխանատվություն. 6) վնասը պատճառվել է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ:

4.22. Նախկինում ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է աշխատանքային իրավահարաբերություններից ծագող նյութական պատասխանատվության հարցերին, մասնավորապես՝ նշելով. «աշխատանքային հարաբերություններում վնասի ինստիտուտի առանձնահատկությունները հանգում են հետևյալին՝ պատճառված վնասի համար պատասխանատվության վերը շարադրված պայմաններին ավելանում են ևս երկու պայման, այն է՝ **վնաս պատճառողն ու փուժողն իրավունքների խախտման պահին եղել են աշխատանքային հարաբերությունների մեջ, և վնասի առաջացումը կապված է աշխատանքային գործունեության հետ:** Ընդ որում, պատճառված վնասի համար պատասխանատվության մյուս տարրերն աշխատողի նյութական պատասխանատվության դեպքում հարկ է դիտարկել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 237-րդ հոդվածի համարեքստում, որը թվարկում է աշխատողի նյութական պատասխանատվության դեպքերը՝ սպառիչ սահմանելով վնաս պատճառելուն ուղղված հակահրավակական վարքագծի դրսևորումները (տես Նելլի Մկրտչյանն ընդդեմ «Երևան հյուրանոց» բաց բաժնեպահական ընկերության թիվ ԵԿԴ/2600/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը)»:

4.23. Համալիր վերլուծության ենթարկելով վերը՝ 4.16.-4.22.-րդ կետերում վկայակոչված նորմերը, վերահաստատելով ՀՀ վճռաբեկ դատարանի վերը վկայակոչված դիրքորոշումը՝

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ աշխատանքային իրավահարաբերություններից ծագող նյութական պատասխանատվության նորմերը գործում են բացառապես գործատու-աշխատող իրավահարաբերություններում: Այլ կերպ ասած՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված նյութական պատասխանատվության կարգավորումներում առանցքային տարրն այն է, որ իրավակիրառ պրակտիկան, նախքան ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված՝ նյութական պատասխանատվության նորմերը կիրառելը, պետք է պարզի կողմերի՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու փաստը, որից հետո անդրադառնա մնացած հանգամանքներին: Աշխատանքային իրավահարաբերությունների բացակայությունը (երբ բացակայում է աշխատանքային իրավահարաբերությունների ծագման հիմքը) ինքնին նշանակում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված՝ նյութական պատասխանատվության իրավահարաբերություններ առկա չեն, և ենթադրյալ պատճառված վնասի իրավահարաբերությունների նկատմամբ պետք է կիրառվեն այլ նորմեր:

4.24. Գալով դելիկտային պարտավորություններին՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, **ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:** (...): Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է՝ (...) քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են **այլ անձին վնաս պատճառելու հետևանքով:**

4.25. Օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ **քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վնասներ հատուցելով:**

4.26. Օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն **պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:** Վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

Օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա: Վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ:

4.27. Դելիկտային պարտավորությունների շրջանակում ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր միջարքորոշումներում հետևողականորեն մեկնաբանել և զարգացրել է Օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետը, 17-րդ հոդվածի 2-րդ մասը և 1058-րդ հոդվածը: Այս համատեքստում անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է. «(...) վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի,

վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը (ի թիվս այլնի, Կեն Նատալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴ-3/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը)»:

4.28. Մեկ այլ գործով ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է. «(...) վնասը քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում վրա հասնող անբարենպաստ, բացասական հետևանքն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածից հետևում է, որ վնասը կարող է արտահայտվել չնախատեսված լրացուցիչ ծախսեր կատարելով կամ այդպիսի ծախսերի կատարման անհրաժեշտությամբ, գույքի կորստով կամ վնասվածքով, եկամուտների չստացմամբ (բաց թողնված օգուտ): Հակահրավակյան, ոչ օրինաչափ վարքագիծն այն գործողությունը կամ անգործությունն է, որը խախտում է օրենքի, այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը: Գործողությունն անձի նպատակաուղղված, կամային արարքն է, իսկ անգործությունն արտահայտվում է անհրաժեշտ և պարտադիր վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալով: **Ոչ օրինաչափ վարքագիծ և վնասի միջև պատճառահետևանքային կապը ենթադրում է, որ վնասը պետք է հանդիսանա ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք: Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ (անգործությամբ), կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա չէ:** Վնաս պատճառող անձի մեղքը նրա սուբյեկտիվ վերաբերմունքն է իր ոչ օրինաչափ գործողության (անգործության) և առաջացած հետևանքի՝ վնասի նկատմամբ, ինչը կարող է դրսևորվել թե՛ դիտավորության, և թե՛ անզուգույթյան ձևով (ի թիվս այլնի, Կեն Նելլի Սկրպչյանն ընդդեմ «Երևան հյուրանոց» բաց բաժնետիրական ընկերության թիվ ԵԿԴ/2600/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը)»:

4.29. Մեկ ուրիշ գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ. «**Դեյլիկային պարտավորությունների առաջացման համար պետք է վնասի և հակահրավակյան արարքի միջև պատճառական կապը լինի ուղղակի և հաստատված, հակառակ դեպքում անուղղակի պատճառական կապը չի կարող պատասխանարվության պայման դառնալ** (Կեն Ալբերտ Ղազարյանը, Արտավազ Սյրեփանյանն ընդդեմ «ԵԱԶ Երևանի ամրանների գործարան» ԲԲԸ-ի թիվ ԵԿԴ/5007/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2022 թվականի որոշումը)»:

4.30. Պատճառված վնասի հատուցմանը վերաբերող գործերով ապացուցման առարկայի ճիշտ որոշման հարցը լուծելիս՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է. «(...) պատճառված վնասի հատուցմանը վերաբերող գործերով դատարանները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն ապացուցման առարկայի ճիշտ որոշմանը: Մասնավորապես՝ դատարանները նախ և առաջ պետք է որոշեն այն իրավական փաստերի շրջանակը, որոնք էական նշանակություն ունեն քաղաքացիական գործի լուծման համար և ենթակա են պարզման գործի քննության ընթացքում: Իրավական նշանակություն ունեցող հենց այդ փաստերի համակցությունն էլ կկազմի ապացուցման առարկան: Ապացուցման առարկան որոշելուց հետո միայն դատարանները, գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, որոշում են ապացուցման առարկան կազմող իրավական փաստերի հաստատվելը կամ ժխտվելը և դրանից հետո միայն որոշում հայցը բավարարելու կամ մերժելու հարցը:

Վնասի հատուցման գործերով փաստերի իրավական նշանակություն ունենալու հարցը լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն Կոլյա իրավահարաբերությունը

կարգավորող նյութական և դատավարական իրավունքի նորմերով, որոնցում նշված են տվյալ իրավահարաբերությունը և կողմերի իրավունքներն ու պարտականությունները պայմանավորող իրավաբանական փաստերը: (...) նմանատիպ գործերով ապացուցման առարկան են կազմում իրավական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

- ոչ օրինաչափ վարքագիծը (գործողություն կամ անգործություն),
- վնաս պատճառող անձի առկայությունը,
- պատճառված վնասի առկայությունը,
- վնաս պատճառող անձի մեղքի առկայությունը,

- պատճառահետևանքային կապը ոչ օրինաչափ գործողության կամ անգործության և պատճառված վնասի միջև (տե՛ս ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Արթուր Մարդանյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՏԴ/0041/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը)»:

4.31. Վերահաստատելով վերը վկայակոչված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում նշել, որ ի տարբերություն ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված՝ նյութական պատասխանատվության իրավահարաբերություններին, որի առաջացման համար անհրաժեշտ է աշխատանքային իրավահարաբերությունների ծագման հիմքը (աշխատանքային պայմանագիր, անհատական իրավական ակտ) և որ այն ուղղված է կոնկրետ խնդիրների լուծմանը (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 237-րդ հոդված) ու, որպես կանոն, այն չի վերականգնում պատճառված վնասը լրիվ ծավալով (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 238-րդ հոդված), որոշակի հստակ բացառություններով (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 239-րդ հոդված) դելիկտային (*delictum-իրավախախտում*) պարտավորությունների դեպքում նման սահմանափակումներ չկան և պարտադիր չէ, որ վնաս պատճառողն ու տուժող կողմը գտնվեն պայմանագրային հարաբերությունների մեջ (*արտապայմանագրային իրավահարաբերություններ*) և որ պատճառված վնասը, որպես կանոն, ենթակա է հատուցման լրիվ ծավալով՝ որոշակի հստակ բացառություններով (Օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների 1-ին և 2-րդ մասեր):

4.32. Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը, հիմնվելով նախկինում հայտնած դիրքորոշումների վրա, արձանագրում է, որ դելիկտային իրավահարաբերությունների պարզման դեպքում դատարանները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն իրավահարաբերության համար անհրաժեշտ բոլոր տարրերի առկայությանը: Այս տեսակետից Վճռաբեկ դատարանն ավելորդ չի համարում նշել, որ դատարանները **ոչ օրինաչափ գործողության կամ անգործության և պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապը պարզելիս (*But for, Causa proxima* թեսթը կիրառելիս) պետք է դիտարկեն անմիջական պատճառը, ոչ թե հեռավորը (*Causa proxima non remota spectatur*):**

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

4.33. Վերը նշված վերլուծությունները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ Վրույր Սիմոնի Հովակիմյանի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև 10.02.2021 թվականին ծագել են աշխատանքային իրավահարաբերություններ, ըստ որի՝ Վրույր Սիմոնի Հովակիմյանն ընդունվել է աշխատանքի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Թումանյանի

անտառտնտեսություն» մասնաճյուղի Դսեղի անտառպետության թիվ 2 պահաբաժնում որպես անտառապահ (տե՛ս վերը 3.1.-ին կետը):

41.34. 22.09.2021 թվականին «Թումանյանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Դսեղի անտառպետության թիվ 2 պահաբաժնի, թիվ 5 քառակուսու, թիվ 4.8 անտառամասերի 1-ին կարգի պաշտպանական նշանակության տեղամասում հայտնաբերվել են անհայտ անձի (անձանց) կողմից ապօրինի հատված տարբեր տեսակի և տրամաչափերի 14 հատ ծառերի կոճղեր (տե՛ս վերը՝ 3.2.-րդ կետը), որի վնասի չափը կազմել է 1.144.500 ՀՀ դրամ (տե՛ս վերը՝ 3.3.-րդ կետը):

4.35. Դեպքի վայրի զննության մասնակից՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի աշխատակից Վրույր Սիմոնի Հովակիմյանը մատնացույց է արել նշված տեղանքը, որն անանցանելի է եղել (տե՛ս վերը՝ 3.4.-րդ կետը): Վերջինս հայտնել է, որ չգիտի, թե ով է կատարել այդ ապօրինի հատումները, ոչ մեկի վրա չի կասկածում և, որ ինքը նորմալ շրջել է այդ տարածքներում, սակայն այդ արմատները չի գտել, քանի որ թփերն ու խոտերը բարձր են եղել (տե՛ս վերը՝ 3.5.-րդ կետը):

4.36. Պաշտոնատար անձանց կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ, որի շրջանակներում «Հայանտառ» ՊՈԱԿ-ը ճանաչվել է որպես տուժող (տե՛ս վերը՝ 3.6.-3.7.-րդ կետերը):

4.37. Քրեական գործի շրջանակներում Վրույր Սիմոնի Հովակիմյանը լրացուցիչ ցուցմունք է տվել այն մասին, որ իրեն մեղավոր է ճանաչում իր աշխատանքում անփույթ լինելու համար, ժամանակին չի հայտնաբերել կտրված ծառերը, զղջում է կատարվածի համար, իսկ վնասը վերականգնելու հնարավորություն չունի: Միաժամանակ, քանի որ վաղեմության ժամկետն անցել է, խնդրել է իր նկատմամբ կիրառել վաղեմություն և վարույթը կարճել: Վրույր Սիմոնի Հովակիմյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում չի հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով քրեական պատասխանատվությունից ազատման ենթակա լինելու հիմքով, և քրեական գործի վարույթը կարճվել է (տե՛ս վերը՝ 3.8.-3.9.-րդ կետերը):

4.38. Նման ապացույցների առկայության պայմաններում Դատարանը նշել է, որ. «Տվյալ դեպքում, պետությունը հանդես է գալիս որպես տուժող, որի հետ վնաս պատճառող անձը «Հայանտառ» ՊՈԱ կազմակերպության միջոցով գործել է աշխատանքային հարաբերությունների մեջ, և վնասի առաջացումը կապված է եղել Պատասխանողի աշխատանքային գործունեության հետ: Նշված փաստերի համադրմամբ Դատարանը հանգում է հետևության, որ Պատասխանողի՝ «Հայանտառ» ՊՈԱ կազմակերպությունում աշխատանքային պարտականությունների ոչ պատշաճ կատարելով դրսևորված ոչ իրավաչափ վարքագիծը, պետությանը պատճառված վնասի առկայությունը, դրա չափը, ինչպես նաև Պատասխանողի ոչ իրավաչափ վարքագծի և պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապը և վնասի առաջացման Պատասխանողի մեղքի առկայությունը հիմնավորված են⁴»:

4.39. Իր հերթին, Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռն անփոփոխ թողնելով, արձանագրել է, որ. «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 239-րդ հոդվածը սույն հակակոռուպցիոն քաղաքացիական գործով կիրառելի չլինելու վերաբերյալ փաստարկ կամ առարկություն Դատարանում գործի քննության ժամանակ հայցվորի կողմից նույնպես չի ներկայացվել, ինչը, սակայն, ՀՀ վճռաբեկ դատարանի վերը մեջբերված նախադեպային դիրքորոշման լույսի

⁴ Տե՛ս վճռի 13-րդ էջը:

ներքո խոչընդոտ չէ կիրառելի իրավունքի մասին դատողությունները վերաքննիչ բողոքում վկայակոչելու և համապատասխանաբար՝ այդ մասով վերաքննություն իրականացնելու համար: Սակայն պետք է փաստել, որ կիրառելի իրավունքի նորմի դիսպոզիցիայից բխող պայմանների առկայության հանգամանքը Դատարանը ներառել է դեռևս ապացուցման առարկան սահմանող՝ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման մեջ, և նշված փաստերի շուրջ կատարել է ապացուցման պարտականության բաշխում: Այսպես, Դատարանը 26.08.2024 թվականի նախնական դատական նիստում հայցվորի հետ քննարկել է ապացուցման ենթակա փաստերը, և արդեն 02.09.2024 թվականի ապացուցման պարտականություն բաշխելու մասին որոշմամբ սահմանելով այդպիսիք՝ Դատարանը հայցվորի վրա, ի թիվս այլնի, դրել է հետևյալ փաստերի ապացուցման պարտականությունը. «(...) 4. Վերոնշյալ ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելիս Պատասխանողի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ և աշխատանքային պայմանագրի պայմանները (լրիվ կամ սահմանափակ նյութական պատասխանատվություն) (...): Նշված փաստի ապացուցման պարտականությունը հայցվորի վրա դնելու հետ կապված հայցվորը որևէ առարկություն չի ներկայացրել (...): (...) Դատարանի կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 239-րդ հոդվածի կիրառումն իրավաչափ է, քանի որ պատասխանող Վրոյր Հովակիմյանը վնաս պատճառելու պահին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ գտնվել է աշխատանքային իրավահարաբերությունների մեջ, որպիսի փաստը չի վիճարկվել գործի քննության ընթացքում, ինչպես նաև պատասխանողի կողմից ոչ իրավաչափ վարքագիծը դրսևորվել է աշխատանքային պարտականությունները ոչ պարզաձև կատարելու ձևով, ինչը դրվել է նաև թիվ 55200122 քրեական գործով պատասխանողին առաջադրված մեղադրանքի հիմքում: (...) «Հայանտառ» ՊՈԱԿ-ի աշխատողի՝ պատասխանողի կողմից իր աշխատանքային պարտականությունները կատարելիս «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից պահպանվող անտառներին, այսինքն՝ Հայաստանի Հանրապետությանը պատճառված վնասի հատուցման ժամանակ պետք է հաշվի առնվեն նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության՝ վնասի հատուցման կանոնները: Այն հանգամանքը, որ վնասը պատճառվել է պետությանը, այլ ոչ թե «Հայանտառ» ՊՈԱԿ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքին, սույն գործով չի կարող հիմք հանդիսանալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի կանոնակարգումները կիրառելի չհամարելու համար: Վերաքննիչ դատարանի նշված դիրքորոշումը հիմնվում է այն հանգամանքների վրա, որ մի կողմից «Հայանտառ» ՊՈԱԿ-ը պետական կազմակերպություն է, մյուս կողմից՝ պատասխանողի ոչ իրավաչափ վարքագիծը դրսևորվել է պետական կազմակերպության հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու ընթացքում իր աշխատանքային պարտականությունների ոչ պարզաձև կատարմամբ (չկատարմամբ), բացի այդ, պատասխանողի՝ որպես «Հայանտառ» ՊՈԱԿ-ի աշխատողի աշխատանքային պարտականությունների բնույթն ուղղված է հենց «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գործառնությունների, այդ թվում՝ պետական սեփականություն հանդիսացող անտառների պահպանությանը, իսկ վնասը պատճառվել է Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, սակայն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից պահպանվող անտառներին: Այս տեսանկյունից «գործատուին պատճառված վնաս» օրենսդրական ձևակերպումը սույն դեպքում չպետք է սահմանափակվել միայն գործատուին սեփականության իրավունքով պատկանող գույքին վնաս պատճառելու դեպքերով⁵:

4.40. Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սխալ են որոշել իրավահարաբերության բնույթը, որի պատճառով եկել են

⁵ Տե՛ս Որոշման 13-րդ և 15-16-րդ էջերը:

սխալ եզրահանգումների՝ հետևյալ պատճառաբանությամբ:

4.41. Սույն գործի փաստերից ակնհայտ է, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ը, որպես քաղաքացիա-իրավական ինքնավարություն ունեցող իրավաբանական անձ (*Principium Autonomiae*), աշխատանքային հարաբերությունների մեջ է մտել Վրույր Սիմոնի Հովակիմյանի հետ (տես վերը՝ 3.1.-ին կետը): Այլ կերպ ասած՝ Վրույր Սիմոնի Հովակիմյանի գործատուն եղել է ոչ թե Հայաստանի Հանրապետությունը, այլ՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ը, և ենթադրյալ վնասը պատճառվել է ոչ թե «Հայանտառ» ՊՈԱԿ-ին, այլ՝ Հայաստանի Հանրապետությանը: Վերը Վճռաբեկ դատարանը մանրամասն վերլուծել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերաբերելի նորմերը (տես վերը՝ 4.4.-4.13.-րդ կետերը), ուստի այստեղ դրանց վրա կանգ չի առնի:

4.42. Գալով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 22-րդ գլխով նախատեսված նյութական պատասխանատվության նորմերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք հիմնված են կողմերի աշխատանքային իրավահարաբերությունների (աշխատանքային պայմանագիր, անհատական իրավական ակտ) վրա և սկզբունքորեն տարբերվում են դելիկտային պարտավորություններից նրանով, որ դրանց հիմքում ընկած է աշխատանքային պայմանագիրը (անհատական իրավական ակտ): Բոլոր այն դեպքերում, երբ բացակայում է աշխատանքային իրավահարաբերությունների ծագման հիմքը (աշխատանքային պայմանագիր, անհատական իրավական ակտ), ապա խոսք չի կարող գնալ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված՝ նյութական պատասխանատվության մասին: Առավել պարզ ասած՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 22-րդ գլխով նախատեսված նորմերից բխող իրավունքների և պարտականությունների կրողներն ու հասցեատերերը հանդիսանում են գործատուն և աշխատողը:

4.43. Ասվածի լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը եկել է սխալ եզրահանգման առ այն, որ պատասխանողի աշխատանքային պարտականությունների բնույթն ուղղված է եղել այդ թվում՝ պետական սեփականություն հանդիսացող անտառների պահպանությանը, և անտառին վնաս պատճառելու պարագայում չպետք է սահմանափակվել միայն գործատուին սեփականության իրավունքով պատկանող գույքին վնաս պատճառելու դեպքերով (տես վերը՝ 4.39.-րդ կետը), մինչդեռ արդեն իսկ վերը նշվել է (տես վերը՝ 4.10.-4.11.-րդ, 4.13.-րդ կետերը), որ չպետք է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմն այնքան տարածական մեկնաբանվի, որի արդյունքում քաղաքացիա-իրավական հարաբերության այլ՝ երրորդ սուբյեկտ ևս հանդիսանա այդ իրավունքի կրողը: Նման պայմաններում առհասարակ չէր կարող կիրառվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերաբերելի նորմերը՝ պատճառված վնասի հատուցման իրավահարաբերության նկատմամբ:

4.44. Վճռաբեկ դատարանն ավելորդ չի համարում նաև անդրադառնալ Վերաքննիչ դատարանի այն փաստարկներին, որ Բողոքաբերն առարկություն չի ներկայացրել աշխատանքային օրենսդրության նորմերի կիրառման վերաբերյալ (տես վերը՝ 4.39.-րդ կետը):

4.45. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Դատարանը 02.09.2024 թվականի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման՝ «Վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական կարգավորումները, ապացուցման առարկան և ապացուցման պարտականության բաշխումը» բաժնում, որպես կիրառելի իրավական կարգավորումներ, նշել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասը, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 2-րդ մասը, Օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-2-րդ մասերը, 1058-րդ հոդվածի 1-2-րդ մասերը, ինչպես նաև վկայակոչել է վնասի հատուցման պահանջից բխող իրավահարաբերությունների

վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 13.02.2009 թվականի թիվ ՀՔԴ3/0016/02/08, 05.04.2013 թվականի թիվ ԵԿԴ/3058/02/11, 13.03.2009 թվականի թիվ ԵՔԴ/0036/02/08 քաղաքացիական գործերով արտահայտած դիրքորոշումները⁶: Ակնհայտ է, որ սույն որոշմամբ քննարկման առարկա չի դարձվել աշխատանքային օրենսդրության նորմերը, և հայցվորը չէր կարող ենթադրել, որ տվյալ իրավահարաբերության նկատմամբ պետք է կիրառելի լինեն դրանք: Այս տեսակետից Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ Բողոքաբերը Դատարանի որոշման 4-րդ կետում նշված ապացուցման ենթակա փաստից կարող էր ենթադրել, որ Դատարանը կիրառելու է աշխատանքային օրենսդրության նորմերը, և այն, որ ապացուցման ենթակա փաստը վերաբերել է աշխատողի նյութական պատասխանատվության սահմաններին (տե՛ս վերը՝ 4.39.-րդ կետը): Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործին մասնակցող անձինք չպետք է ենթադրեն, թե դատարանը ինչպե՞ս կիրառի հիմնական վրա է լուծելու վեճը, այդ հարցը, ի թիվս այլ հարցերի, հստակորեն ենթակա է քննարկման դատավարության մասնակիցների հետ (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ):

4.46. Ավելին, 26.08.2024 թվականի նախնական դատական նիստի ընթացքում Դատարանը Բողոքաբերի հետ առհասարակ չի քննարկել ապացուցման ենթակա փաստերի հարցը, որի տեղի ունենալու պարագայում Բողոքաբերին կարող էր հասկանալի լինել, որ Դատարանը վեճը լուծելու է նաև աշխատանքային օրենսդրության նորմերի հիման վրա և համապատասխանաբար կարող էր ներկայացնել իր դիրքորոշումը դրանց վերաբերյալ: Դատարանը տվյալ նիստում հայտնել է, որ. «*ապացուցման պարտականությունը բաշխելու մասին դատարանն առանձին ակտի ձևով որոշում կկայացնի, քանի որ պարտասխանողը չի ներկայացել*» (հիմք՝ 26.08.2024 թվականի դատական նիստի ձայնագրություն):

4.47. Ամփոփելով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բացի այն, որ Դատարանը, այնուհետև Վերաքննիչ դատարանը սխալ նորմեր են կիրառել սույն վեճի նկատմամբ, նաև հնարավորություն չեն տվել Բողոքաբերին իր դիրքորոշումը հայտնել դրանց կապակցությամբ:

4.48. Հաջորդիվ, Վճռաբեկ դատարանը գալիս է հետևության, որ սույն վեճի նկատմամբ կիրառելի են դելիկտային պարտավորություններին (արտապայմանագրային պարտավորություններ) վերաբերող նորմերը, որի շրջանակներում ստորադաս դատարանը պետք է անդրադարձ կատարի դրանով սահմանված **բոլոր տարրերին**, մասնավորապես՝

▪ Պատասխանողի իր վարքագիծն (գործողություն/անգործություն) է հանդիսացել ոչ օրինաչափ,

▪ որքան է կազմում Բողոքաբերին պատճառված վնասը,

▪ **արդյո՞ր առկա է Պատասխանողի մեղքը վնասի առաջացման համար,**

▪ **արդյո՞ր առկա է պատճառահետևանքային կապ ոչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև** (տե՛ս վերը՝ 4.27.-4.32.-րդ կետերը):

4.49. Նկատի ունենալով, որ սույն վեճը լուծվել է իրավունքի սխալ նորմերով, այլ կերպ ասած՝ սխալ է բնորոշվել վիճելի իրավահարաբերության բնույթը, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը ենթակա է ամբողջ ծավալով նոր քննության: Ասվածի համատեքստում Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասով, 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ըստ որոնց՝ Վճռաբեկ դատարանը կաշկանդված չէ Բողոքաբերի պահանջով, և որ սույն գործով Դատարանը՝ մասնակի (360.000 ՀՀ դրամի չափով) հայցը բավարարելով, իսկ Վերաքննիչ

⁶ Այս նախադեպային որոշումները չեն վերաբերել աշխատանքային իրավահարաբերություններին

դատարանը՝ Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, կիրառել են սխալ նյութական իրավունքի նորմեր (վնասի հիմքում դնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ նյութական պատասխանատվության նորմերը), այլ ելք չի տեսնում քան բեկանել Վերաքննիչ դատարանի 15.04.2025 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության՝ **հաշվի առնելով սույն որոշման պատճառաբանությունները**:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

5.1. Օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

5.2. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

5.3. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

5.4. Նկատի ունենալով, որ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 15.04.2025 թվականի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է

ՀՀ Արմավիրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի նախագահ
Հովհաննես ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի դատավոր
Արմենուհի ԲԱԴԻՐՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր
Գոռ ԹՈՐՈՍՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր
Հովիկ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի դատավոր
Գրիգորի ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր
Բորիս ԲԱԽՇԻՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Արտուր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Հրաչ ԴԱԶՈՒՆՑԻ ծննդյան 35-ամյակը,

*մաղթում նրանց առողջություն, անսպառ եռանդ
և մասնագիտական արդյունավետ գործունեություն:*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Դատական իշխանություն» գիտամեթոդական պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն չորս անգամ:

Պարբերականի գիտական խմբագրական խորհուրդը քննարկում է միայն այն նյութերը, որոնք ներկայացվում են գրախոսականի առկայությամբ:

Տպագրվող նյութը պետք է ունենա որոշակի կառուցվածք՝ **ներածություն, հիմնական հետազոտություն** (որը կարող է ունենալ բաժիններ և ենթաբաժիններ), **եզրակացություն**:

«Դատական իշխանություն» պարբերականում տպագրության ներկայացվող նյութերի տեխնիկական պահանջները.

1. նյութի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով),
2. հաջորդ տողում՝ հեղինակի անուն-ազգանունը (գլխատառերով), հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը,
3. տեքստի լուսանցքները. վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 20 մմ,
4. հայերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, անգլերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, ռուսերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
5. հիմնական տառաչափը՝ 12,
6. միջտողային հեռավորությունը՝ 1.5,
7. օգտագործված գրականության ցանկ՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջերի քանակը,
8. հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը,
9. նյութը կարող է ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն, այն պետք է ունենա երեք լեզուներով ամփոփագրեր (ընդ որում՝ եթե այն անգլերեն կամ ռուսերեն չէ, ամփոփագիրը պետք է լինի 150-250 բառի սահմաններում), որոնք պետք է պարունակեն որոշակի, հստակ և ընդգրկուն տեղեկատվություն նյութի վերաբերյալ: Նյութը երեք լեզվով պետք է ունենա մինչև 10 բանալի բառեր,
10. նյութն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստ՝ kchalabyan@gmail.com):

Պարբերականում հոդվածները տպագրվում են վճարովի հիմունքներով: Տպագրության վճարը կազմում է 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ: Բացառություն են կազմում ՀՀ դատավորների միության անդամ դատավորները (ինչպես նաև ՀՀ դատավորների միության անդամ նախկին դատավորները), ում համար հոդվածների տպագրությունն իրականացվում է անվճար հիմունքներով:

Թևապոր խոսքեր

Օրենքը պետք է գրվի ոչ թե հանուն օրենքի,
այլ հանուն արդարության:
Պլատոն



Լավ օրենքը վատ դատավորից էլ լավ է պաշտպանում:
Ջոն Լոք



Օրենքը բողոքին է պարտադրում, բայց առաջին հերթին
ներանց, ովքեր այն ստեղծում են:
Քոնստանտին Մոր



Ասարդար օրենքն ավելի վտանգավոր է,
քան բացահայտ անարդարությունը:
Շառլ Լուի Մոնտեսքյո



Իրավունքը չպետք է ծառայի ուժեղին,
այլ պետք է պաշտպանի թույլին:
Ջիզեպպե Մարտինի



Որքան բարձր է զարգացած իրավագիտակցությունը,
այնքան քիչ է հարկ լինում կիրառել ուժը:
Ալբերտ Էյնշտեյն



Արդարությունը պետք է սպրի ոչ թե թղթին գրված օրենքի
մեջ, այլ մարդու խղճի մեջ:
Հովհաննես Բոնամյան



Օրենքն ուժ է ստանում միայն այնտեղ,
որտեղ կա արդարություն, առանց արդարության այն թղթի
վրա գրված խոսք է միայն:
Հրանտ Մաթևոսյան

ԼՈՒՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ
1997 ԹՎԱԿԱՆԻՑ



819789541656562

copy print